891.99-09
Ч-34

Ե. Գ. Գալուստ

1904.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Ա. ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ



Encyclopédie
Encyclopédie

13 APR 2011

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Ի ՊԷՏՍ ՈՒՍՄԱՆ

ԱՋԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

Ա. ՀԻՆ ՄԱՏԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1865

ԳՐԱԴԱՐԱՆ Յ. Գ. ԱՇՃԵԱՆ

12 APR 2013



(1676-2005)
2736-2005



ՑԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԼԽՑԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ազգային գպրութեանց պատմութիւն մը՝ երկար առեն՝ ի վեր փափաքելի էր թէ համազգի և թէ օտար բանասիրաց։ Այս պէտքը օր օրուան վրայ աւելի զգալի կ՚ըլլար, քանի որ ուսումնասիրութեան եռանդը ծաւալելով, նախնեաց մատենագրութիւնք աւելի ընդհանուր կ՚ըլլային տպագրութեամբ, ու անոնց ստոյգ արժանիքն ու յարգը կը հաշակուէր, և գրուածքնին կը մեծարուէին։

Այսպիսի էական պակաս մը լեցընելու, ու ազգային գպրութեանց հարկաւոր ծառայութիւն մը ընելու դիտամբ ձեռք զարկինք այս երկասիրութեանս, և ուսումնասէր բարեկամաց խրախուսանօքը յօդորուեցանք տպագրութեամբ ի լոյս ընծայել։

Նմանօրինակ երկասիրութեան մը մեզմէ շատ տարի առաջ ձեռք զարկեր էր Մխիթարեան

ուխտս բարեյաջողատակ առաջնորդը Գէր. Սուքիաս արքեպիսկոպոս Յոմալեան: Իր ջանասէր փութոյնը այլ և այլ նախնեաց մատենագրութիւնք տպագրութեամբ հրատարակել տուած առնելը, անոնց հեղինակացը վրայ ալ կենսագրական ընտիր տեղեկութիւններ հաւաքելը, ու գրաբար լեզուով Ազգային դպրութեանց պատմութիւն մը յօրինելով, տպագրութեան պատրաստաւ էր. որուն խոստական Թարգմանութիւնը ծանօթ է բանասիրաց [1]:

Մեր ջանքն եղաւ ասիկա կերպով մը կատարելագործել իր գրուածքը, ու մեր ժամանակաց դիտութիւններուն և քննութեանց համեմատ՝ ընծայել ազգային ուսումնասիրաց:

Երեք գլխաւոր մաս բաժնեցինք այս գրուածքը.

Ա. Հին Մատենագրութիւն, զոր այս հատորին մէջ կ'ամփոփենք:

Բ. Հին Թարգմանութիւնք, հինգերորդ դարէն մինչև երեքտասաներորդ դար:

Գ. Նոր Մատենագրութիւն, չորեքտասաներորդ դարէն մինչև առ մեզ. յորում՝ ջանացեր ենք տպագրութեան սկիզբէն մինչև մեր օրերը հրատարակուած ամեն գրոց ցուցակը դնել, անոնց վրայ համառօտ ու կարեւոր տեղեկութիւններ ընծայելով:

1 Quadro della Letteratura armena. 1827.

Կը խոստովանինք Թէ ոչ գոյն աշխատանաց և քննութեանց արդիւնք է մեր այս գրուածքը· սակայն չենք կրնար ու չենք ուզեր պահանջել Թէ կատարելութեան ամէն մասունքը իր մէջը բովանդակէ : Այնիկայ մեր դիտած նպատակէն դուրս է· վասն զի դժուար վախճաննիս էր ընդհանուր պատմական տեղեկութիւն մը աւանդել մեր մատենագրաց և անոնց գրուածոց վրայ , առանց ուզելու քննադատական տեսութեամբը ծանրացընել այնպիսի գրուածք մը , որուն դժնաւորը կիրառութիւնը աւելի վարժարանաց մէջ տորվողներուն համար էր : Սակայն անով ալ յայնայեր ենք որ իւր համառօտութեանը մէջ բաւական ու յագեցուցիչ տեղեկութիւններ ամփոփէ մեր մատենագրաց և անոնց երկասիրութեանցը վրայ :

Ահա գրուածքիս հրատարակութեանը դժնաւոր առիթ ու խրախուսիչ եղաւ՝ ազնուատոհմ և ուսումնասէր Գրիգոր Յովհաննէս Ազան , որ ոչ միայն յորդորեց զմեզ դժնաւորել մեր արդէն սկսած և առաջ տարած գրուածքը , հապա խոստացաւ տպագրութեան կարևոր ծախքըն ալ հայթհայթել , ու այն վախճանաւ մասնաւոր ընկերութիւն ալ բացաւ : Սակայն երբ տարաժամ մահ մը ծաղիկ հասակին մէջ յափըշտակեց զինքը իւր ընտիր տոհմին և բոլոր ազգին դեղեցիկ ակնկալութիւններէն , Հանգուցեալը ինքնայօժար սիրով իւր կտակին մէջ մասնաւոր


դուռար մը ձգեր էր՝ այս գրոց տպագրութեանը համար։

Ա.յսպիսի բարեբարութեան մը փոխարէն, մեր ու բովանդակ ազգին շնորհակալեայ քազցր ու ախուր պարտքն հատուցանելով, անոր շիր. մին վայ՝ մեր ցաւալից արտասուացն հետ կը դնենք այս դուզնաքեայ աշխատութիւնն ալ, փա. փաքելով որ իր ուսումնասէնչ և ազգասէր բա. րուցը՝ եթէ ոչ արժանաւոր, գէթ տեւական յի. շատակ մը ըլլայ։

Հ. ԳԱՐ. Ջ.

ՊԱՏԿԵՐ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ԸՍՏ ԻՐԱՓԱՆՉԻՒՐ ԴԱՐՈՒՑ



ԱՆԴԻՐ ԺԱՄԱՆԱԿ

Հայկբէն լեզու · 24
Դպրեվանք երգեր · 43
Բէրնով՝ կամ գրասէր Ժամանակի մատենագրաց Հեռքով ինչուան առ մեզ հասած հին առակներ :

ԳՐԱՒՈՐ ՄԱՏԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Հայ լեզուով՝ քայլ օտար նշանագրով :

Մարիքաս Կաթինա · 63
Ախտաւորդ Ի Թագաւոր, որ յոյն լեզուով ողբերգուածներ շարադրեց · 73
Աբգար, որ Եդեսիոյ գիւանը կառոյց և զարդարեց · 74
Երուանդ Բ, որ նոյն գիւանը աւելի Ճոխացուց · 74
Արտաշէս Բ · 76
Վրոյր, բանաստեղծ · 76
Մաժան, վերակացու մեհենից · 77
Մինչև Ի Լուսաւորիչ երեցած մատենագիրք, որոց անուանքը միայն հասան առ մեզ :
Ոսկեթղ կամ Ոսկեմկաս քուրմ · 78

Բարգաման Եգնատյի • 79
Խոռհրդոս • 80
Ակաթիէոս • 81
Ղևրոսբնա • 82

ԴԱՐ Գ

Գրիգոր Լուսաւորիչ • 94
Յաճախասպասում • 95
Քանի մը մանր երկասիրութիւնք • 98
Տրդատ Թագաւոր • 92
Ժամանակին գործոցս մէջ նշանաւորք • Թագաւորական ու հասարակաց վարժարանք • 92
Ագաթանգեղոս • 99
Պատմութիւն սրբոյն Գրիգորի • 105
Դաշանց Թուղթ • 118
Ջենոբ ասորի Գլակ • 124
Կնեքսա Մեծն Պարթև • 129
Պատմութիւնը կ'ընծայէ իրեն հազարի չափ վանաց հիմնարկութիւն• աւանդութիւնն ալ քանի մը ազօթք և հանգամանան չափականներ :
Ռիւզանդ Փոստոս • 132
Պատմութիւն Հայոց :
Պրոկոբեսիոս կամ Պարոյր Հայկազն • 150

ԴԱՐ Ե

Դարուս մէջ նշանաւոր գործոցքն էին սրբոյն Սահակայ և Մեսրովպայ ձեռքով բացուածներն թէ բուն Հայաստանի և թէ Յունաց բաժինին մէջ հզածներն :

Սահակ Պարթև • 165
Կանոնական Թուղթ մը • 170

Թուղթ առ Աստիկոս և Պետիկ Հայրապետս Կոստանդնուպոլսի · 171
Թուղթ առ Փոքրն Թէոդոս կայսր · 171
Տեսիլ · 171
Շարականներ · 172
Մեսրովպ կամ Մաշտոց · 172
Նխաբանին մեկ մասը · 179
Շարականներ · 179
Քանի մը Համառօտ աղօթք · 179
Թարգմանիչք · 179
Առաջին աշակերտք ·
Յովսէփ ի Վայոց Ձորոյ · 186
Յովհան · 186
Դաւնդ Երէց ի Վանանդայ · 186
Եղնիկ Կողբացի · 188
Կորիւն · 188
Մուշէ Տարոնեցի · 188
Տիրայր Խորճենացի · 188
Յովսէփ Պաղնացի · 189
Յովհան Եկեղեցացի · 189
Ենովք · 191
Դանիէլ · 191
Երեմիա, սարկաւագապետ Սահակայ · 191
Թագիկ · 191
Գնիւճ, եպիսկոպոս Դերջանայ · 191
Աբգան արծրունի · 191
Սպան արծրունի · 191
Վազաբիկ կամ Վազրիկ · 192
Երկրորդ աշակերտք ·
Մովսէս Խորենացի · 192
Մամբրէ Վերծանող · 192
Դաւիթ Անյաղթ · 192
Գիւտ կաթուղիկոս 192
Յովհան Մանդակունի · 192
Եզնիկ · 192

Ղազար Փարպեցի · 192
Եղբաս Աղեքսացի · 193
Սահակ · 193
Յովհաննէս · 193
Աբրահամ կամ Աբէլ · 193
Անանիա · 193
Յովնաթան · 193
Խաչիկ կամ Խաչատուր · 193
Աղբէաս · 193
Թաթուլ · 193
Վարդա · 193
Եղնիկ Կողբացի · 193
Եղջ ազանդոց · 195
Եղնկայ Խրատք · 200
Ճառք · (անհարազատ) 200
Կորիւն · 201
Պատմութիւն վարուց Ս · Մեսրովպայ · 201
Դաւիթ Անյաղթ · 206
Ներբող խաչի · 209
Սահմանաց գիրք կամ Սահմանք Խառատսպրութեան · 211
Գիւտ · 214
Թուղթ առ Դաւիթ Անյաղթ · 217
Թուղթ առ վաչէ արքայ Աղուանից · 217
Աղօթք ի ժամագիրս · 217
Յովհան Մանդակունի · 218
Ճառք · 223
Ճառ խոսեցեալ յեկեղեցւոջ Դըբնայ · 225
Աղօթք ի ժամագիրս · 221
Եղիշէ · 225
Պատմութիւն վարդանանց · 226
Ճառ Միանձանց · 240
Մեհենութիւն Յեսուայ և Դատաւորաց · 241
Մեհենութիւն տէրունական տաղից · 241
Աբրահամ մեհենութիւն · 242

Ա՛լ և այլ Ճառք · 244
Մովսէս Խորենացի · 245
Պատմութիւն Հայոց · 247, 253
Աշխարհագրութիւն · 267
Պիտոյից գիրք · 268
Պատմութիւն սրբոյն Ներսիսեան Ա-
ռաւաձաձնի և պատկերի նորա · 272
Նկերզող՝ ի սուրբն Հռիփսիմէ · 274
Պատմութիւն Ճանապարհորդութեանն Հռ-
ռիփսիմեանց · 275
Ճառ վարդավառի · 275
Մեկնութիւն կարգաց եկեղեցւոյ · (անհա-
րազատ) 275
Քերականական երկասիրութիւնք · (անհա-
րազատ) 276
Մաշկոց · 277
Ճառ՝ի յարութիւնն Ղազարու · 278
Ի գալուստն Քրիստոսի Երուսաղէմ· 278
Պատմութիւն · (անյայտ) 279
Քերականական գրուածք·(անհարազատ)279
Ղազար Փարպեցի · 280
Պատմութիւն Հայոց · 283
Թուղթ առ Վահան Մամիկոնի · 280, 285

ԴԱՐ Զ

Ա՛յս դարուս մէջ հռչակաւոր էր ուսմամբ Սիւնեաց վարդապետարանը։

Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեանց · 293
Ան Վահագան արքայ՝ յաղագս ննջեցելոց ·
293
Պատմութիւն Ժողովոյն Եփեսոսի · 296
Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց · 297

Ներսես Ա. տէր Ասատուրեան · 297
Ի ծնունդն Քրիստոսի · 298
Առ Վաչագան արքայ՝ յաղագս մարդեղութեան Քրիստոսի · 298
Պատմութիւն · (անկայա) 298
Ներսէս Ե. Բաբիկ Սիւնի · (անկայա) 299
Մովսէս կաթողիկոս Նղիվարդեցի · 302
Կիւրիոն Վրաց կաթողիկոս · 303
Աբրահամ Հայոց կաթողիկոս · 303

ԴԱՐ Ե

Եօթնեբորդ դարուս նշանաւոր ուսումնասիրքն էին՝ Հայս՝ Վարդիկ Հայր կոչուած վարդապետարանը յԱրշարունիս, Դպրեվանք՝ ի Շիրակ, և Խաչէայ վանք՝ ի Կարին։

Կոմիտաս կաթողիկոս · 308
Անձնիք Հախխախմեանց · 309
Ճառք՝ (անհարազատ) · 310
Ղազիկ Երէց · 311
Եզր կաթողիկոս · 311
Մաթեւոսապատ · 312
Դրիգորատուր վարդապետ · 315
Յովհան Մայրագոմեցի · 315
Յովհան Մամիկոնեան · 316
Պատմութիւն Տարօնոյ · 318
Սեբէոս Եպիսկոպոս · 321
Պատմութիւն ի Հերակլ · 322 ·
Մովսէս Կաղանկատուացի · 329
Պատմութիւն · 331
Դաւիթ Բագրեւանդացի · 346
Անանիա Շիրակացի · 348
Առեղծուածաշունչ · 350

Ժամանակագրութիւնք · (անհարազատ) 356
Յաղագս չափուց և կշռոց · 356
Վէցհազարեակ կամ Ըօթնագրեանք · (անհարազատ) 357
Ընծանօթ գրուածներ · 357
Թէոդորոս Քռեթենաւոր · 359
Նկրզուկ ՚ի սուրբ խաչն ատաուածընկալ · 361
Գովեստ ՚ի սուրբ Աստուածածինն · 361
Մովսէս Սիւնեցի · 362 ·
Գրիգոր Արշարունի · 363
Մեկնութիւն ընթերցուածոց · 363
Փիլոն Տիրակացի · 365
Սահակ կաթուղիկոս · 366
Թուղթ առ Մոհմատ · 366
Ճառ ՚ի ծնեալ Աբուսահեանց · 367
Շարականք · 367

ԴԱՐ Ը

Դարուս նշանաւորութեան արժանի գործոցներն էին Մաքենոց կամ Մաքենոցաց վենասատանը ՚ի Գեղարքունիս, Ջրիսկ կոչուած սուրբ ուխտը ՚ի Շիրակ, Մինրներսեհի վանքը կամ Ջուլամիկ, Թանահատաք, Հերմոնավանք, Արաւնից վանք, Գնդայի վանք, ՚ի Վայոց Ձոր, Հոռոմայր կամ Հոռոմոսի վանք ՚ի Լոռի ։

Յովհան Իմաստասէր · 368
Առնախոսութիւն · 369
Ճառ ընդդէմ Երկութեականաց · 370
Ճառ ընդդէմ Պաւղիկիանց · 375
Յաղագս կարգաց եկեղեցւոյ · 376
Շարականք · 377
Անհարազատ կամ եկիպտական գրուածներ · 379

Սահմանաց Սիւնեցւոյ · 384
Ղեւոնդ Երէց · 389
Պատմութիւն Մահմետի և յաջորդաց նորա · 389

ԴԱՐ Թ

Ինչերորդ գարուս գլխաւոր վանորայքն և առաւելապատիւքն էին Աղթամարը, Խոտակերից վանք, Սևան, Տաթև։ Հռչակաւորագոյն էին վերջին երկուքը, յորոց Սևանայ հանար կը վերկայէ Առաղնիկ։ «Ի ծովեզն Գեղամայ զկղզին Սևանայ բնակութիւն իւր արարեալ (Մաշտոցի) չինէ զեկեղեցին ի նմա որ Առաքելոց անուանեցաւ։ Յոր միացեալ ժողովեցան եղբարց բազմութիւն կանոնագրութեամբ սահմանաւ սրբոյն Բարսղի, միաբնակ ի տան Առաւծոյ եղեալք, առանալով զբազմութիւն գրոց սրբոց»։ Իսկ Տաթևու կամ Սահմէի վանից համար որ ի Սիւնիս՝ կը գրուցէ Ուռպելեան Թէ Հայոց ՅԽԴ (895) Թուականին ի ժամանակս Յովհաննու եպիսկոպոսի Սիւնեաց լեցաւ եր այն մենաստանը «ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց։ Ոմն էր և վարժարան գպրոցացն վարդապետական կրթութեամբն։ Նաև արուեստաւորք նկարչացն և գրոց անհամեմատք»։

Ջաքարիա կաթուղիկոս · 392
Թուղթ առ փոտ · 394
Ճառագ գանազանք · 393
Ցանտ Ատրպ · 395
Մեկնութիւն Յովհաննու · 395
Հապուհ Խագբատունի · 396
Պատմութիւն · 396

Մաշտոց կաթուղիկոս · 398
Թուղթ առ Դրնենցիս · 399
Պատմութիւն · 401
Յովհան կաթուղիկոս · 402
Պատմութիւն Հայոց · 404
Թովմա Արծրունի · 414
Պատմութիւն Արծրունեաց · 417
Սահակ Մռուա կամ Ալիկուբեղ · 394
Յովհաննէս բժիշկ · 428
Դաւիթ Վանահայր՝ ի սուրբՍտեփանոս Բագրեւանդայ · 428
Ստեփանոս աշակերտ Մաշտոց կաթուղիկոսի · 429

ԴԱՐ Ժ

Տաճկերօրդ դարուս մէջ ծագիւեցան ուսմամբ յԱրշարունիս՝ կամրջաձորոյ վանքը, Հնձուց կամ Կարմիր վանք՝ Կարնոյ մօտ, Հռոմոց վանք՝ ի Հիրակ, այսպէս կոչուած Հոմանոս կայսերէն հալածուած միանձանց հոն ապաւինելուն համար. Նարեկայ վանք՝ ի Ոշտունիս, Մոկաց գաւառին մէջ Ապարանիկ եպիսկոպոսանիստ ուխտը, Յախաց քար Միհասանը, զոր Առողիկ «բարձրահռչակ սուրբ առաքելատան» կը կոչէ, Մարմարէին կամ Մարմարաշէն սուրբ ուխտը՝ ի Հիրակ։

Անանիա Նարեկացի · 430
Խոսրով Անձեւացի · 431
Յամագրոց Միհնուելիան · 432
Միհնուելիան խորհրդոյ սրբոյ պատարագին · 433
Գրիգոր Նարեկացի · 434
Ապարանիկ Խաչին պատմութիւնը · 436
Անբծական՝ ի սուրբ Կոյսն · 438

Ճառ 'ի գովեստ առաքելոց · 439
Գովեստ 'ի սուրբն Յակոբ Մծբնայ · 440
Երգ երգոցն մեկնութիւն · 441
Աղօթք կամ 'ևարեկ · 443
Մանր երկախրատութիւնք · 445
Անհարազատ գրուածներ · 446
Խաչիկ կաթուղիկոս · 448
Դաւիթ Վանահայր · 448
Պետրոս՝ մեկնիչ սուրբ գրոց · 448
Մովսէս Տարօնացի · 448
Սարգիս · 448
Ստեփանոս · 448
Դաւիթ Մաշկոտն · 448
Դաւիթ Եպիսկոպոս Մոկաց · 448
Ստեփանոս Ասողիկ · 449
Պատմութիւն Ժամանակաց · 450
Մեկնութիւն Երեմիայ · 452
Մուշեղ Բագրատունի · 455
Արտաւազդ Մազազունեաց տէր · 453
Տաճատ վարդապետ · 455

ԴԱՐ ԺԱ.

Նշանակութեան ալիժանի ուսումնասիրքն էին 'ի Զորոյգեա՝ Սանահին և Հաղբատ, զորոնք Աչոտ Ողորմած Թագաւորին կենակիցն Խոսրով անայր կանգնեց, ու Բագրատունի Աղուանից կոթիկէ Թագաւորը նորոգելով, եպիսկոպոսա. նիստ ըրաւ զՀաղբատ, որուն մատենադարանը՝ ամենաթանկագին գանձարան կը կոչէ յիշատակագիր մը: Աղուանի էին գարձեալ Խնտաի վանքը, Տրապիզոնի մօտ Ամենափրկիչ մենաստանը, և Արգինա՝ 'ի Շիրակ գաւառի Աշտարակու:

Յովհաննէս վարդապետ Կոզեռն Տարօնացի • 454
Դրիգոր Մագիստրոս • 456
Թուղթք առ այլ և այլ անձինս • 460
Վէրթողականք • — Թուղթք • 465
Նկերքող ի սուրբ խաչն աստուածընկալ • 466
Պետրոս Գետադարձ • 470
Ստեփանէ Սահակեցի • 470
Սարգիս Սևակեցի • 472
Սամուէլ Վարդապետ, ուսումնարան Խնասոյ • 473
Գէորգ վարդապետ • 473
Տիգրան Պահլաւունի • 473
Ներսիսակէս Լամբրոնացի • 474
Պատմութիւն Հայոց • 474
Ընդհանրագրութեան մեհենութեան ձառք • 478
Դրիգոր Վկայասէր • 478
Գործոց մեհենութիւն • 481
Թարգմանութիւնք • 483
Կիրակոս վարդապետ } օգնականք վկայասէրին
Մատթէոս վարդապետ } բին • 484, 485
Գէորգ Մեղրիկ • 483
Թէոդորոս վարդապետ Ասորեստիկ • 485
Սիսականոս • 486
Պօղոս Տարօնեցի • 486

ԴԱՐ ԺԲ

Գլխաւոր ուսմանց տեղիք՝ կարմիր վանք ի Փոքրն Հայս՝ Մարաշու մօտ • Սեաւ լեառն ի Մասիս • Գետակայ վանք յարեւելեան Հայս, Սկեւռայ վանք ի սահմանս Կիլիկիոյ, Գանձակ կամ Գանձասար յԱրցախ • Թող նահապետաց գարուն մէջ յիշատակուած վանորայք։

Յովհաննէս Սարկաւագ • 488
Պատմութիւն Հայոց • (անկատար) 490

Յաղագս քահանայութեան · 492
Նեբրոզեանք · 492
Աղօթագիրք · 493
Մանր գրուածք · 493
Ի Սարեակն · 493
Երեմիա Պաբելիկ · 493
Սամուէլ Երէց · 493
Ածանիա · 493
Սարգիս Կոնդ · 493
Սահիանոս Մանուկ · 493
Գրիգոր Պահլաւունի · 497
Ներսէս Շնորհալի · 500
Պատճառ խնդրոյ միաբանութեան : Թուղթք· 503
Թուղթք առ այլ և այլ անձինս · 503
Հրեշտակաց նեբրոզ · 511
Մեկնութիւն Բարձրացուցեայց · 511
Մեկնութիւն Մաղաքէի · 511
Մեկնութիւն Կամուրջկեայց · 512
Մանր երկասիրութիւնք · 513
Խրատ Ժամերգութեան · 514
Ողբ Եդեսիոյ · 516
Յիսուս որդի · 517
Բան հաւատոյ · 518
Յաղագս երկնից և զարդուց նոցա · 518
Վիպասանութիւն · 519
Իգնատիոս վարդապետ · 520
Մեկնութիւն Ղուկասու · 520
Սարգիս Շնորհալի · 522
Մեկնութիւն Կամուրջկեայց · 522
Ներսէս Լամբրոնացի · 525
Առնիաբանութիւն · 528
Մեկնութիւն Պատարագի · 530
Մեկնողականք · 533
Ճառք · 533

Գրիգոր Գանձակեցի • 554
Պաւլէ Գանձակեցի • 555
Գրիգոր խնամատաէր • 555
Մատթէոս Ուռհայեցի • 556
Պատմութիւն • 558
Գրիգոր, շարայարող պատմութեան նորա • 546
Սամուէլ Երէց • 547
Ժամանակագրութիւն • 547
Մխիթար Հէրացի • 550
Չէբմանց մխիթարութիւն • 551
Գրիգոր Տղայ • 555
Թուղթք • 556
Ողբք Երուսաղէմի • 558
Մխիթար Գոշ • 559
Դատաստանագիրքք • 564
Առակք • 566
Մեհնութիւն Երեմիայ • 567
Աղօթք • 567
Խաչատուր Տարօնացի • 568
Տաղք • 569
Պաւլէ Քրայրեցի • 572
Սամուէլ Ծերունի • 572
Դաւիթ վարդապետ, մեհնիչ Եսայեայ • 573
Արիստակէս վարդապետ • 573
Եփրեմ, աշակերտ նորա • 573
Ստեփանոս Տիրացու • 575

ԴԱՐ ԺԴ

Ա՛յս դարուս մէջ ծաղկած ուսումնարաններն՝ բաց ի նախայիշատակելոց, էին Սեպուհ վանն կամ Մանեայ այրք, Դարանաղիք, զոր ծաղկեցոյց Երզնկացին. Խորանաշատ՝ յԱրբոյան կամ յԱղուանս, զոր պայծառացոյց Վանական Սարբն

Դադի՝ յԱրցախ, Ծոիծոր՝ վասպուրականի աշխարհին մէջ. սուրբն Անդրէաս ի Գուգարս, մեծին վարդանայ սասունեաբանը, Ղազարու կամ Առաքելոյ վանք ի Տարօն։

Գրիգոր Սկեւռացի. 574
Ճառք. 575
Գէորգ Սկեւռացի. 576
Մեկնութիւն Եսայեայ. 577
Մխիթար Անեցի. 577
Պատմութիւն. (անկատար) 577
Կոստանդին Ա կաթուղիկոս. 579
Թուղթք. 579
Վահանան վարդապետ. 580
Յովբայ մեկնութիւն. 584
Պատմութիւն. (անկատար) 585
Մանր գրուածք. 585
Վարդան վարդապետ. 587
Պատմութիւն. 589
Դանիէլի մեկնութիւն. 592
Սաղմոսի մեկնութիւն. 592
Մեկնութիւն Հնգամատեան. 593
Մեկնութիւն երգոց երգոյն. 593
Ներբող ի սուրբ Լուսաւորիչն. 594
Քերականի մեկնութիւն. 595
Առակք. 595
Աշխարհագրութիւն. 596
Մանր գրուածներ. 594
Կիրակոս Գանձակեցի. 597
Պատմութիւն. 598
Վարդան կամ Վարդան վարդապետ. 602
Մխիթար Սկեւռացի. 605
Կիրակոս Արեւելցի. 604
Հաւաքումն Յայտնութեաց. 604
Յովհան Երզնկացի. 604

Մեհնութիւն Քէրականի · 610
Բանք յաղագս երկնային շարժմանց · 613
Ներքոզ ի սուրբ Լուսաւորչէն · 614
Մեհնութիւն Մատթէի · 615
Խրատական գրուածք · 616
Քնարերգականք · 616
Ներսէս Տարօնեցի · 618
Յովհան Արձնեցի կամ Ոսկիակեր
Եսայի Նչեցի
Մխիթար Սասունցի
աշակերտք Ներսիսի Տարօնեցւոյ 618
Սմբատ Գունդստաբլ · 619
Պատմութիւն · 622

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԳԱՆԻ ՄԸ ՄԱՆՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

Բարսեղ Կաթուղիկոս · 627
Գագիկ Ա Թագաւոր · 627
Թորոս, պարոն Կիլիկիոյ · 629
Մխսրովպ Երէց · 629
Յակոբ գիտնական · 629
Յակոբ Վարաւեցի կամ Սանահնեցի · 629
Ոսկանէս եպիսկոպոս Ուռհայի · 630
Սահակադուխտ · 631
Սամուէլ Կամրջաձորեցի · 631
Վահրամ պատմագիր · 632
Վահրամ վարդապետ · 632

2436-2005 (16 Ժ - 2006)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎՈՂՈՍՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՏԵՆԱԴԻՐՔ

ՈՐՈՑ ԳՐՈՒԱԾՔԸ ՁԵՒՇԱՏԱՊՈՒԻՐ

Ալթանաս • 634
Աճառատաս • 636
Գադիկ, Թագաւոր Կարուց • 634
Գէորգ վարդապետ • 634
Գրիգոր Մոնանիկ • 635
Գրիգոր Տաւէորդի • 635
Գրիգոր որդի Վասակայ • 636
Դաւիթ վարդապետ • 636
Եղիա Հաւուցթառեցի • 636
Եփրեմ վարդապետ • 636
Թէոդորոս • 637
Թորոս աշակերտ Մխ • Գոշի • 637
Թորոս վարդապետ • 638
Խաչիկ վարդապետ • 636
Մարտիրոս առաջնորդ Գէտկայ • 638
Յակոբ վարդապետ • 639
Յովհաննէս Գառնեցի • 639
Յովհաննէս Տաւուշեցի • 640
Յովսէփ եպիսկոպոս • 640
Ներսէս իշխան • 640
Սամուէլ • 641
Սողոմոն կաթուղիկոս • 641
Ստեփանոս դպրան երէց • 642
Տուքթիկ վարդապետ • 642

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ



ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ազգային Դպրութեանց պատմութիւնն նոյն ազգին սիրտն ունեցող ամէն անձին մտանուռ մտագրութեան արժանի է. վասն զի ինչպէս իրեն քաղաքական պատմութիւնը՝ ընտանի կենացը պատկերն է, սոյնպէս ալ մտաւորականը մտաւորականին. և թէ որ առջինը դինուց և նիւթական ուժոյն զօրութիւնը կը ցուցընէ, երկրորդը՝ ազգի մը անցելոյն մէջ ունեցած մտաւորական ուժին նկարագիրն է, որ ապագային համար՝ մեծ ազդեցութիւն ունի։

Դպրութիւնն կամ մտաւորականութիւնն երկու կերպով կրնայ մտածուիլ. մէյմը՝ իբրև գրաւոր երկասիրութիւնք՝ զանոնք առանձին քննելով, մէյմըն ալ՝ նոյն երկասիրութեանց առիթ կամ հեղինակ եղող

ներուն վրայ՝ պատմական ու կենսագրական ծանօթութիւններ աւանդելով։

Այս երկու նկատմամբ ալ՝ մեր մատենագրական պատմութիւնը կրնայ ազդակ ենթադրուիլ։ Քաղաքական ու եկեղեցական պատմութիւններս ճոխ է, իրաւամբ հետաքրքրական ու ընդարձակ դէպքերով, բայց ոչ նոյնպէս և ազգին մտաւորական պատմութիւնն։

Հայերէն դպրութեանց այս աղբատութիւնը աւելի զգալի կ'ըլլայ՝ թէ որ բոլոր աշխարհի պարծանքը յաճախող յոյն ու լատինական մատենագրութեանց հետ ուղենանք բաղդատել. վասն զի անոնց մէջ երեւցած հանճարը, հմտութիւնն ու կիրթ ախորժակը ընդունայն է փնտռել մեր մէջ. այլ ընդհակառակն պիտի տեսնենք մերոնց մէջ՝ որ որոնք անոնց հետևողութեամբն բրած են իրենց ուսումը՝ անոնք աւելի ընտիր երկասիրութիւններ թողած են. Թարգմանչաց դարը՝ որ ազգային պատմութեան դարագլուխ կազմած է՝ ապացուցանել ու եղծանել Յունաստանին մէջ իրեն ուսումն առած, դաստիարակութիւնն ընդունած և հմտացած է։

Ուրիշ մեզի դրացի ժողովուրդներ ալ ունեցած ենք, որոնց հետ քիչ կամ շատ վերաբերութիւններ ունեցած է ազգերնիս. անոնց հետ ալ թէ որ ուզենանք համեմատել մեր դրականութիւնը, այլ և այլ մատենագրութեան ճիւղեր կրնանք նկա-

տել՝ որոնց մէջ մերոնք աւելի յառաջադէմ կը սեպուին. անանկ ճիւղեր ալ՝ յորս անոնք քան զմեզ կը գերազանցեն: Օրինակ իմն, պատմագրական մասով՝ ուրիշ աւելի չատերէն վեր կրնանք սեպուիլ. ուր բանաստեղծականին մէջ արաբացին, պարսիկը, և այլն, բուն բանաստեղծութեան անուան արժանաւոր նիւթեր արտադրած են, որոնց նմանը կամ՝ ամենեւին և կամ խիստ քիչ կրնայ տեսնուիլ մեր քովը:

Ի՞նչ է արդեօք մեր գրաւորական և մտաւորական զարգացման պատճառը: Ո՞մանք այս պատաւութիւնը առթող այլ և այլ դէպքեր մէջ կը բերեն. Նիհոս մը կը յիշատակէն, որ իրմէ առաջ եղեւցած բոլոր քաջերուն պատմութիւնը ջնջել կուտայ, որպէս զի ինքը միայն անմահանայ. և իրեն այս փառասիրութեանը զոհ եղած կը համարին մեր հին գպրութիւնը. — Մերուժան մը՝ որ բոլոր Հայաստանի մէջ եղած գրքերը այրել կը հրամայէ. — Բարբարոսներ, որ պատերազմօք մատենադարաններ կը քանդեն, կ'այրեն, կը փճացընեն. և անոնցմէ ամենէն աւելի ահաւորագոյն թշնամի մը, տգիտութիւնն՝ որ դարերով ծանրացած է Հայաստանի վրայ:

Ասոնք, տարակոյս չկայ որ մեծամեծ պատճառներ են. բայց մատենագրական աշխատութիւններս բոլորովին անոնցմէ առաջ եկած չէ: Նոյնպիսի և թերեւս ա-

ելի դժնդակ հալածանք կրած են յոյն և լատինական դպրութիւնք. և սակայն այսօր բոլոր աշխարհք իրենց սքանչելի գրուածներովը լեցուցած են. միայն փոռայ Մատենադարան գիրքն այնչափ երկասիրութեանց կորուստ կը դնէ մեր առջեւը՝ որ արժանաւոր ցաւոց հետ մեծագոյն զարմանք մը կ'ազդէ:

Ուսմանց և դիտութեանց՝ Հայաստանի մէջ պէտք եղած բարգաւաճանքը չունենալուն պատճառը, ոչ այնքան անոնց անյաջողութիւնն՝ որքան անսիրելութիւնն մը եղած է. և այս անսիրելութիւնը՝ անոնց յառաջադիմութիւնը արգիլած: Պէտք է խոստովանիլ, որ չունինք մեր պատմութեանց մէջ այնպիսի թագաւորներ՝ որ ուսմանց, դիտութեան և կրթութեան հալածիչը եղած ըլլան. սակայն քիչ ունինք այնպիսի իշխաններ ալ՝ որ անոնց յառաջադիմութեանը պէտք եղած միջոցն ու մըտադրութիւնը երեւցուցած ըլլան:

Գանձք են ուսումն և դիտութիւնք. բայց անոնցմով հարստանալու համար պէտք է զանոնք մեզի մօտեցընել. իրենք իրենցմէ մեզի չեն մօտենար: Վ ամչապուհ՝ որ մեր պատմութեանց մէջ Պերիկլէս ու Մեկենաս է, այս հնարքս գտաւ՝ իւր հայրենիքը բարգաւաճանաց և յառաջադիմութեան ճամբուն մէջ մտցընելու: Ա.րաջ դպրոցներ բանալ տուաւ Հայաստանի մէջ, ու սպասած արդիւնքը չտեսաւ անոնցմէ. ա-

նոր համար հարկ սեպեց ճանապարհորդութիւններ ընել տալ, և ուր աւելի կը տեսնուէր մասնաւորական զարգացումն՝ հոն աւելի կեցընել և աշխատցընել տուաւ թարգմանչաց դասը։

Այս գլխաւոր պատճառէն զատ՝ մեր աշխարհիս նիւթական դիրքն ալ ուսմանց յառաջադիմութեանը նպաստաւոր եղած չէ։ Զորս կողմէն թշնամի ազգաց յարձակմանը նչաւակ ազգ մը՝ ի հարկէ ինքզինքը պաշտպանելէն բիչ տաեն կ'ունենար նաև միտքը զարգացընելու. և չզարգանալու սովրած միտք մը՝ միշտ յետսադարձ ընթացք կ'ունենայ։ Այդ ընթացքն՝ կամաց կամաց տգիտութիւնը կ'ընդելացընէ, և ուսմանց օգուտն ու յարգը մոռցընել տալով՝ ինչուան զանոնք անօգուտ կամ վնասակար երևցընելու վտանգին կը տանի։

Որ և իցէ յառաջադիմութիւն՝ քաջալերութիւն կը սիրէ. խրախոյսը՝ հանճարոյ գլխաւոր սնունդ տուող տարրն է. անոր համար Եղիազա և Հռոմ՝ սովրած էին իրենց իմաստասիրքը ժողովրդոց առջև հանելու, և անոնց խրախուսանօքը՝ ձեռք զարկած տապարիզին մէջ ալ աւելի յառաջադէմ ընելու։ Կը տեսնենք բոլոր Յունաստան ժողուած՝ Հերոդոտեայ պատմութեան դիրքը մոխիկ ընելու, պինդը գովելու և քաջալերելու. և այն գովութեանց ու քաջալերութեանց արդիւնք կ'ըլլայ Թուկիդիտէս։ Եպիկեայ ոգերգութեանց

յաջող ձեռնարկութիւնները Սոփակլէս ու Եւրիպիդէս մը կ'երեւցընեն : Կը թողունք ասոնց նման ուրիշ օրինակները :

Ուրիշ պատճառ մըն ալ կը գտնենք ուսմանց մեր մէջը ևս մնալուն : Հին ազգաց շատին մէջ ուսումը մենամաճառի մը պէս էր կրօնից պաշտօնեաներուն . և ինչպէս հաւատոց վարդապետութիւնք՝ ասանկ ալ ուսումը անոնցմէ կը ծառայէր ժողովրդեան մէջ : Այս մը՝ չէր համարձակեցընէր դիրենք առատ ըլլալ այդ մտաւորականութեանը մէջ, իբր թէ չըլլայ որ կիսկատար ուսումը՝ կրօնից անտարբեր կամ թոյլ ընէ ժողովուրդը : Այս դրութեան հետևող կ'երեւնայ նաեւ մեր ազգը . և անոր արգասիք կը սեպենք մեր մտաւորականաց շատին՝ եկեղեցական դասուն վերաբերիլը :

Բայց դեռ իր ազգասութեամբն ալ՝ պատուական է մեզի համար մեր ազգային մտաւորականութիւնը : Նոյնիսկ իրեն նախնական վայելչութեան մէջ անոնց դրքերովը ինչուան մեզի ատանդուած է . պատմութիւններս անոնց պարտական ենք . և իմաստունն Եւրոպա մեզի հետ երախտագէտ է՝ անոնց համար գրչին արգիւնք ընծիր թարգմանութեանց համար :

Մտաւորական պատմութիւններս երկու գլխաւոր մասի բաժնած ենք . Հին և Նոր մտաւորութիւն :

Հինը՝ մեր Անգիր ժամանակաց մա-

տենագրութիւն, քանի որ աղգը իրեն
մասնաւոր գիր, կամ հիմակուան գործա-
ծուած գրերը չունէր. մէյմըն ալ Գրա-
բար: Գրաբար մատենագրութիւննիս ալ
երկուքի կրնանք բաժնել. մէյմը սրբոյն
Մեսրովպայ ձեռքով աղգային գրոց գիւ-
րը չեղած, մէյմըն ալ անկէ ետքը: Ա-
յինքն կը վերաբերին չորրորդ դարուն մէջ
երեւցած մատենագիրք, և երկրորդին
սրբոյն Մեսրովպայ գիւտէն մինչեւ ի յոյն
հանդէս երգնկացի:

Երգնկացիէն ետքը լեզուիս մէջ մեծ կերպարանափոխութիւն մը կը կրէ. անանկ որ եթէ նոր մատենագրութիւնը իր ամէն փոյթն ու ջանքը գործածած չըլլար՝ հայերէնը իր նախկին վիճակին մէջ մնացընելու, բոլորովին պիտի աղաւաղեր, և թերեւս անհետանար՝ ուրիշ լեզուաց մէջ ընկղմելով: Անոր համար եթէ նոր մատենագրութիւնը հնոյն պարտքեան է իր գոյութիւնը, հնոյն ալ պահպանութիւնը նորոյն ջանիցը արդիւնք է:

Բայց հին գրաւոր մատենագրութիւններէն ալ՝ ամէն ժամանակ նոյն կերպարանքը ունեցած չէ. երբեմն ծագկած՝ ու երբեմն ալ անչքութեան գարեր ունի: Մեր գրուածքը աւելի պատմական ըլլալով, ընթերցողաց և սորվողներու դիւրութեանն համար դատ դատ գարերու բաժնեցինք, և ամէն մէկ մատենագիր՝ ինչ գարու որ կը վերաբերի, հոն դրինք իրեն վրայ ամփոփուած տեղեկութիւնները:

ԳԻՐ

Խօսքը՝ որով մարդուս խորհուրդները ուրիշի մը կը հաղորդուին, հեռաւոր անձի մը չենք կրնար հասնիլ. խօսուած վայրկենին կը սահին կ'երթան, ու խօսողին և ականջ եկողներուն կամ չլսողներուն համար աննշմարելի անօգուտ կամ անպիտան կը մնան։ Այս երկուքին ալ դարմանը գիրը միայն կրնայ ընել։ Գիրը՝ թէ մատենադրութեան, և թէ անոր պատմութեանը կեանք ու անունդ տուողն է. ուստի և մենք ալ՝ Ազգային մատենագրութեան պատմութիւնը ըրած առեններիս՝ ամէն բանէ առաջ պէտք է որ մեր գրերուն վրայ խօսինք։

Հայոց հին պատմութիւնը կ'աւանդէ թէ ազգերնիս՝ ազգ ձեւանալէն ու կարգաւորեալ լեզու մը առանալէն շատ առքը հնարած ըլլայ իր գիրը։ Բայց որովհետեւ անկարելի է անգիր քաղաքականութիւն մը հնթադրել՝ մեր պատմութեանը այն ընդարձակ միջոցին մէջ յառաջ քան զգիւտ գրոյն, հաւանականաբար մերոնք ալ իրենց գրացի ազգաց գրերը գործածելու սովորութիւնն ունէին։ Մեր այս կարծեաց ևթաչխաւորութիւնը՝ կրնանք կերպով մը հին պատմութեանց և արձանագրութեանց մէջ փնտռել։

Ասիոյ պատմութիւնը, և մեր ժամանա-

կաց հմուտ հետազոտութիւնքը կը սովրե-
ցընեն թէ նոյն ընդարձակ գաւառները
գրաւող ազգերը՝ գրեթէ Եգիպտացւոց
նման խորհրդաւոր գիր մը կը բանեցընէին,
որոնց՝ միր տաճարի գիտնականները՝ սե-
պաձեւ կամ բեւեռագիր անունը կու տան:
Հայք ալ՝ որ գրեթէ անոնց նման քաղա-
քականութիւն մը ունէին, անշուշտ նոյն
բեւեռաձեւ գրերը գործածած պիտի ըլ-
լան: Այս կարծեաց առաջութեանը նշան
մը՝ միր հին պատմութեանցը մէջ կը գըտ-
նենք: Խորենացին, միր առաջին հետախոս և հմուտ պատմագիրը, կ'ատե-
լէ թէ երբ Շամիրամ Ասորի յաղթեց ու
Հայաստան մուտ, վանայ բերդին վրայ՝
մեզի անթիմանալի լեզուով մը արձանա-
գրութիւններ քանդակեց. նոյնպէս ուրիշ
շատ տեղեաց նման տաճարով արձան-
ներ հաստատեց: Այս գրուածները՝ Շա-
միրամայ պատերազմայ ու յաղթանակաց
պատմութիւններն էին, ինչպէս որ Խորե-
նացւոյն հետևեալ խօսքերը կը հաստատե-
ցընեն. «Զամենայն երեսս քարին իբ-
րեւ գրչաւ գմամ հարթեալ, բազում գիրս
ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն՝
զամենայն որ ի գարմանս ածէ: Եւ ոչ
միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշ-
խարհին Հայոց արձանս հաստատեալ, նո-
ւիրեն գրով յիշատակ ինչ հրամայէ գրել.
և ի բազում տեղիս սահմանս նոյնի գրով
հաստատեր»: Հայաստանի մէջ՝ Հայոց

համար գրուած արձանագրութիւնք՝ պէտք էր որ իմանալի ըլլային նաեւ Հայոց. ապա թէ ոչ՝ ընդունայն պարծանք մը կ'ըլլար Շամիրամայ գործը, անանկ միջոց մը գործածելով՝ որով անկարելի կ'ըլլար իրեն վախճանին հասնիլ։

Բնեւռաձեւ տառերը իրեք ցեղ կը բաժնուին։

1. Ասորական–բաբելոնեան,

2. Ախեմենեան կամ Մարա–պարսիկ.

3. Շամիրամեան՝ կամ Վանայ բերդին վրայ եւ Ադիամարայ մէջ գտնուած բնեւռագիրները։

Ասոնց մէջ՝ երկրորդ տեսակին կամ մարա–պարսկին ստոյգ ընթերցման բանալին գտած են Եւրոպացի հնագէտք չատ աշխատանքներէ ետքը. իսկ առաջինը՝ կամ մանաւանդ երրորդ տեսակը թէ եւ հմայ կը կարդացուի յամանդ՝ բայց չատ տարակուսական է։ Հինգ անգրիացի անուանի բնագէտը՝ ասկէ քիչ տարի առաջ Վանայ բերդին արձանագրութեանցը վրայ անխոնջ հետազօտութիւններ ընելով՝ կը հաստատեցնէ թէ հայերէն լեզուով գրուած պիտի ըլլան։ Իր այս կարծեաց պատճառը՝ անոնց մէջ ձայնաւոր տառեր գտնելը եղած է, որով յայտնի կ'երեւնայ, կ'ըսէ, թէ հնդիկ–եւրոպական կամ յարեթեական բոլոր լեզուներէն մէկուն կը վերաբերի. վասն զի միայն այն հին լեզուաց մէջ կը գտնուէր ձայնաւորի գործածութիւնը։

Սակայն բևեռակերպ տառից դործա-
ծութիւնը երկար առեն չդիմացաւ. և ինչ-
պէս ուրիշ ազգեր՝ տասնկ ալ Հայերը ձգե-
ցին զայն. Ասիոյ հարաւային բնակիչք՝
սկսան փիւնիկեցւոց տառերը դործածել.
ուսկից կամաց կամաց Սամարացւոց, Քաղ-
դէացւոց, Հրէից, Ասորւոց, Յունաց և
Արաբացւոց գրերը ձեւացան: Իսկ Ասիոյ
հիւսիսային բնակիչք, որոնց հետ մեր ազգն
ալ, Ձննաի գրերով սկսան վարուիլ:

Նոյն գրոց կիրառութիւնը ինչուան սըր-
բոյն Գրիգորի Լուսաւորչի ժամանակ դի-
մացաւ, ու անկէց ալ մինչեւ սրբոյն Մես-
րովպայ օրը. այս տարբերութեամբ որ ե-
կեղեցական բաներու մէջ յունարէն ու
ասորերէնը կը դործածէին, քաղաքական
իրաց կիրառութեան համար պահելով զեն-
տի գիրը՝ և կամ պարսկական տառերը:

Սակայն յաւուրկ և ազգային գրոց պէտ-
քը՝ աւելի կերպով մը սկսեր էր զդալի ըլ-
լալ Հայաստանի մէջ, և հայրենեաց այս
մեծ ծառայութիւնը իւր վրայ առաւ սուրբն
Մեսրովպ: Լսենք նոյն իսկ ժամանակակից
բներէն այս ցանկալի դիւտին հետաքննա-
կան պատմութիւնը:

Վռամշապհոյ թագաւորութեան օրերը
սուրբն Մեսրովպ՝ Ս. Սահակայ հայրապե-
տին քով երկար առեն կենալով խորհուրդ
ըրաւ հայերէն լեզուի գիր առնդելու հը-
նարքներուն վրայ. և յորդորեց զինքը որ
այս վախճանաւ մասնաւոր ժողովը դու-

մարէ, որպէս զի կարենայ այլ և այլ խմաստուն անձանց խորհրդակցութեամբը փափաքին հասանիլ։ Սուրբն Սահակ վաղարշապատ քաղաքին մէջ մասնաւոր ժողով մը գումարեց. հոն այլ և այլ խօսակցութիւններէ ետքը փափաքեցան որ վերամշակուի Թագաւորն ալ այս ժողովոյն ներկայ գտնուի։ Թագաւորն ալ ժողովականաց փափաքը կատարեց, ու իմանալով թէ ինչ վախճանաւ ցանկացեր էին իր ներկայութիւնը՝ պատմեց անոնց Հաբէլ անունով քահանայէ մը լսածը, թէ Դանիէլ կոչուած ասորի եպիսկոպոսի մը քով կը գտնուէին հայերէն լեզուի նշանագիրը։ Ժողովրդ խնդրեց Թագաւորէն որ մէկը ղրկէ առ Դանիէլ, որպէս զի այն նշանագրաց կարևորութիւնը ստանայ։ Այս վախճանաւ ահրիճ անունով իմաստուն եպիսկոպոսի մը ղրկեցին Թագաւորական տունէ. որ և Թագաւորէն ու եպիսկոպոսներէն յանձնարարական թղթեր առնելով՝ Միջագետք անցաւ ու հոն տեսաւ զՀաբէլ քահանայն. ու անոր հետ մէկտեղ գնաց առ Դանիէլ։ Սա իր քովը եղած նշանագրերը ցըցուց անոնց, ու սովրեցուց թէ ինչ կերպով հնգելու է այն տառերը։ Լաւ մը տեղեկանալէն ետքը՝ Հաբէլ և Ահրիճ դարձան ի Հայաստան, ու Թագաւորին և սրբոյն Սահակայ և Մեսրոպայ առջև դրին թէ Դանիէլեան նշանագիրը և թէ անոնց հնչմունքը։

վ ուսմասդուէ՝ Սահակայ ու Մեսրոպայ յանձնեց այն տառերը, որպէս զի զանոնք ընդհանուր ազգին օգտակար ընելու եղա- նակին վրայ մտածեն։ Անոնք ալ չատ աշ- խատեցան որ այն տառերը մեր լեզուին հնչմանը յարմարցընեն, ու տղաքներ ժող- վեցին զանոնք կրթելու և անոնց սորվե- ցընելու համար այն տառերը։ Երկու տա- րի անընդհատ այս վարձանին հասնելու համար աշխատեցան. ու այն գործարին վատնակը ու երկայն փորձը իմացուց ի- րենց թէ ընդունայն էր աշխատանքը. վասն զի այն տառից հեզը մեր լեզուին չէր յար- մարեր. ուստի դարձեալ նոր աշխատանքի և հին մտածութեանց մէջ ինկան, ու թա- զաւորին հետ միաբան խորհեցան որ ինքը սուրբն Մեսրոպ անձամբ երթայ առ Դա- նիէլ որով թերևս կարենայ աւելի բան մը իմանալ։ Ուստի Մեսրոպ իր մտավարժ աշակերտներէն մէկ քանի հոգի հետն ա- ռած՝ Մինջաղետ գնաց Դանիէլ եպիսկո- պոսին քով. և բաւական առեն հոն կե- նալէն ետքը՝ նոր բան մը չկրցաւ սովրիլ. և ասոր համար կարգէ դուրս տրտմու- թիւն և մտատանջ հոգ ունեցաւ։ Բայց որպէս զի բոլորովին անպտուղ չըլլայ իր աշխատութիւնը, երկու դաս բաժնեց հե- ռը բերած աշակերտները, ու գալոց մը դրաւ զիրենք, որպէս զի անոնցմէ ոմանք ասորի՝ մեկնողք ալ յունական գպրու- թիւն սորվին։ Իսկ ինքը հետն առնելով

ընտրելագոյն աշակերտքը՝ գՅովհան Եկե-
ղեցացի և գՅովսէփ Պաղնացի, ճամբայ
ելաւ Հայաստան դառնալու։

Երբոր Մեսրովպ այս մտքին վրայ էր,
լսեց թէ Եդեսիա քաղաքին մէջ Պղատոս
անունով հանճարեղ ու ճարտարամիտ
մարդ մը կայ, որ միանգամայն նոյն քա-
ղաքին դիւանին վերակացուն է. և չատե-
րը կ՚ապահովցընէին թէ անիկայ իր հան-
ճարովը կրնայ Մեսրովպայ առաջնորդու-
թիւն մը ընել։ Մեսրովպ այս բանիս վրայ
ուրախանալով, չուտով մը անոր գնաց,
ու իր մտացը խորհուրդը ծանոյց։ Պղա-
տոս քննեց հարցուց ու իմացաւ իրմէ
Հայոց լեզուին հանգամանքը, և չատ աշ-
խատեցաւ որ զերանելին գոհ ընէ. բայց
իր վախճանին չկարենալով հասնիլ՝ խոս-
տովանեցաւ թէ այդ փափաքելի խնդրոյն
կարողութիւնը իրմէ վեր է. բայց միան-
գամայն իմացուց թէ Եպիփանիոս իր վար-
դապետը կայ. Անիկայ, ըսաւ, թերևս
կարենայ քու փափաքանացդ լրումը շնոր-
հել։ Այս վախճանաւ յանձնարարական
թղթեր առաւ Մեսրովպ թէ իրմէ, և թէ
տեղւոյն Ռաբուլա կամ Բաբելաս եպիս-
կոպոսէն, ու փիւնիկաստան ինջաւ. հոն
լսեց որ քիչ առաջ վախճաներ է Եպիփա-
նիոս, չատ տրտմեցաւ. բայց որովհետև
մեծ համբաւ ստացեր էր Եպիփանիոսի ա-
շակերտը Հռոփանոս, իրեև իր վարդապե-
տին հանճարոյն և ճարտարմտութեանը

ժառանգ, և Սամոսատցոց քաղաքին մէջ առանձնացեր նստեր էր, չուտով մը ա-նոր գնաց։ Բայց հոս ալ ընդունայն եղաւ իր աշխատութիւնը։

Ա՛լ անկէ ետքը մարդկային հնարագի-տութենէ իր ամէն յոյսը կտրեց Մեսրոպ, ու միայն աստուածային օգնական-նութեան վրայ դրաւ ակնկալութիւնը։ Ես յիրաւի, այս անգամ տարակարծ չեղայ-նեցաւ։ Ժամանակակից ու տուգանա-տում պատմագիրը կ՚աւանդէ թէ օր մը յանկարծ տեսիլքով յայտնեցաւ. աչքին առջևը քար մը տեսաւ, ու անե-ւոյթ թաթ մը՝ որ այլևայլ տառեր կը դրէր այն վիմին վրայ, ու անոնց ձևը՝ ի նմին ժամանակի կը կերպացընէր նաև Մեսրովպայ սրտին վրայ։ Մէկէնիմէկ ա-ղօթքէն ելլելով՝ իմացաւ Մեսրովպ թէ աստուածային էր այն տեսիլքը. իրեն և-րեւութացած գրերուն ձևը ու նմանու-թիւնը՝ դեռ իր մտաց մէջ տպաւորուած էին. ուստի մէկէն գնաց առ Հռոփանոս, և պատմեց իրեն տեսիլքը՝ ու կերպերը բացատրեց. որ իր ճարտար գրչովն՝ վայե-լուչ ու գեղեցիկ ձևեր տուաւ նոյն տա-ռերուն։

Այս է ահաւասիկ հայերէն գրոց գիւ-տին պատմութիւնը, զոր ժամանակակից մատենագիրք աւանդած են մեզի։ Բայց նոյն՝ և մանաւանդ անոնցմէ հետը եկող պատմագրաց խօսքերէն կարևոր խնդիր

մը կ'ելլէ, որուն վրայ Հարկ կը սեպենք մենք ալ քանի մը խօսք ընել. այսինքն՝ թէ արդեօք սուրբն Մեսրովպ բոլոր մեր գրերը նորէն հնարեց, չէ նէ կային հին հայկական տառեր, ու զանոնք կատարելագործեց:

Խորենացւոյ պատմութեան մէկ քանի դրչագրացը մէջ հայերէն գրոց գիւտին պատմութիւնը յաւելուածով՝ կամ թէ ըսենք՝ տարբերութեամբ մը կը պատմուի: Սրբոյն Մեսրովպայ չանքն ու փոյթը պատմիչն ու օգուտը չտեսնելէն եաքը՝ կը յաւելու. «Աղօթքի կ'ապաւինի, ու կը տեսնէ չէ թէ քունի մէջ երազ, և ոչ թէ յարթնութեան տեսիլ, այլ սրտին զործարանին մէջ երեւութանալով հոգւոյն աչ ձեռին թաթ մը՝ որ կը գրէր, Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ»: Այս խօսքերով՝ զանազանութիւն կամ մտանաւորութիւն մը կը դրուի սրբոյն Մեսրովպայ հնարած գրերուն: Այս կարծեաց՝ կերպով մը ձայնակից կ'ըլլան յետին դարուց պատմագիրներէն Ասողիկ և Վարդան: Ասողիկ կ'ըսէ. «Հայոց Սահակ Հայրապետին օրը՝ հայկական գպրութիւնն եղաւ. քսանըօթը գիր՝ ասորւոց Դանիէլ փիլիսոփայն ստեղծեց. իսկ ութն գրոյն (կամ ձայնաւորաց) պակասութիւնը՝ Մեսրովբ տաբտնացի խնդրուածով կ'առնու յԱստուծոյ»: Վարդան կը գրէ. «Սուրբն Մեսրովպ հայերէն գպրութիւնը կը յօրինէ. քսանուերկու գիր՝ Դանիէլի աստ-

բույն քով գանելով հին ժամանակներէ, որոնք մեր լեզուին ընդարձակութիւնը պարզել չկարենալնուն համար՝ նախնիք անհոգութեամբ երեսի վրայ ձգեր էին, ու յոյն, ասորի և պարսիկ գրերը կը գործածէին. և որովհետև սուրբն Մեսրովպ չէր կրնար անոնցմով աստուածաշունչ գրոց թարգմանութեան ձեռք զարնել, անոր համար սրբոյն Սահակայ գործակցութեամբը ազօթքի դիմեց, և տատնուչորս գիր տուաւ Աստուած իր ձեռքովը դրոշմուած»: Նոյն Վարդան պատմիչը իր կարծեաց աստուածութեանն համար դէպք մըն ալ մէջ կը բերէ. «Լևոն Թագաւորին օրերը, կ'ըսէ, վկայուեցաւ թէ Հայք հին տառնէն գիր ունէին. վասն զի Կիլիկիայի մէջ գրամ գտնուեցաւ մեր հին կռապաշտ թագաւորաց օրէն Հեացած՝ հայերէն տառերով. բայց նոյն գրոց պակասութիւնը՝ մեր նոր Եզրաւոր (կամ՝ Մեսրովպ) լեցուց»:

Սրբոյն Մեսրովպայ ժամանակակից իրեր գլխաւոր մտաենագիրք՝ Կորիւն, Խորենացի և Փարպեցի, այս խնդրոյն վրայ յայտնի և որոշ կերպով խօսք մը չեն ըներ: Սակայն անոնց ալ քանի մը մութ խօսքերէն կրնայ գուշակուիլ թէ առաջուց ալ գիր կար մեր ազգին մէջ, բայց անկատար ըլլալուն պատճառաւ՝ կիրառութիւնը դժուարին, ուստի և երեսի վրայ ձգուած էր. «Դի ոչ էին, կ'ըսէ Կորիւն, բաւական նշանագիրքն ոչՀ ածել զսիրտս և զդ-

կապա հայերէն լեզուին»։ Խորենացին ալ կ'ըսէ. «Զոր առեալ, (Վահրիճ՝ դՀարեվ), և երթեալ նոքա հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիելէ, կարգեալ ըստ ձևոյ օրինակի յունականին զվաղնջուց գտեալ նշանագիր տառից, եկեալ նոքուն ցմեծն Սահակ և Մեսրոպ։ Որոց ուսեալ, և թեւաձևով ընդ նոսա տղայոց զամն սակաւս, տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հղովել ըզհնչեցեալ բառից հայկականաց հաղներգաբար՝ մուրացածոյին այնուիկ գծագրութեամբ»։ Փարպեցին ալ կ'աւանդէ թէ սուրբն Մեսրովպ՝ դեռ առ Սահակ կաթուղիկոս և առ վ՚ռամշապուհ թագաւորն չդնացած, և դանիէլեան նշանագրոց գրնուիլը չիմացած, շատ եաւէվ կ'ըլլար հայերէն գիր հնարելու. «Մանաւանդ թէ գոն, կ'ըսէ, նշանագիրք հայերէն լեզույս»։ Եւքն ալ կ'աւանդէ թէ, «Զարթոյց աստուածայինն շնորհ ի ցանկութիւնս յոյս (զՄեսրովպ), կարգել զվաղնջուցն գտեալ չարագիրս տառիցն՝ զորս ոչ ուրուք էր հոգացեալ՝ արկանել ի կիր»։ Այս խօսքին կը համաձայնի և Խորենացին՝ յաւելեր. «կարգեալ ըստ ձևոյ օրինակի յունականին զվաղնջուց գտեալ նշանագիր տառից»։ Դարձեալ Կորիւն՝ դանիէլեան նշանագրոց վրայ խօսելու առեներ առանկ կը գրուցէ. «Մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց գպրութեանց Թողեալք, և յա-

բուցեալ գիպեցան» . որով անշուշտ կ'ուզէ իմացընել թէ այն գանխելեան կոչուած նշանագիրքը նոր հնարուած չէին , այլ հին՝ բայց անկատար . ուստի և առջիններէն երեսի վրայ թողուած , ու ետքը Դանիելի ատորոյն քով գտնուեցան . ու թէ որ առջիններն , կ'ըսէ , գտնուք երեսէ ճգելին , որովհետև պէտք եղած դիւրութիւնը չունէին վանկերը հնգելու , ինչու համար մինք գարձեալ պիտի աշխատինք ու յղենինք՝ նոյն անկատար նշանագիրներով :

Ցետոյ պատմչաց ալ վկայութիւն ունինք՝ որ կերպով մը կ'իմացընեն մեզի թէ սրբոյն Մեսրովպայ ժամանակէն առաջ՝ հայերէն գիր կար . վասն զի կարակալլա կայսեր ժամանակը ծագիդոց Փիլոստրատոս մատենագիրը կ'ատանդէ թէ ժամանակաւ Պամփիլիոյ մէջ յովսէփ մը բռներ էին , պարտնոյը ոսկեզէն մանեակով , ու բուն վրայ հայկական տառերով այս խօսքերս գրուած էին . « Աբրակ Թագաւոր՝ աստուածոյն Նիւսեայ » :

Ասանկով՝ մեր պատմագրաց ոմանց յայտնի ու այլոց մութ խօսքերուն վկայութեամբ կը հաստատուի թէ հին նշանագիրք գտնուեցան Դանիելի ատորոյն քով , ու թէ նոյն նշանագիրքն էին գորոնք լրացուց Մեսրովպ , ու Միջագետաց մէջ կարգի գրուեցան՝ կամ Դանիելի և կամ Հաբակկի և այլոց ձեռքով , բան ձեռք օրինակի յունականին , ինչպէս կ'ատանդէ Թորենա-

յին։ Կորիւն՝ այս կարգադրութիւնը Հռոմիանոսի կուտայ՝ երբոր կը գրուցէ. «Ընդրութիւնս նշանագրոյն՝ զնորբագոյնսն, զգեղարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ»։ Իրեն համաձայն է և Թորևնացին. միայն աւելի կերպով մը սրբոյն Սահակայ կ'ուզէ ընծայել այս պարծանքը՝ երբոր Հռոմիանոսին համար նախ առանկ կը գրուցէ. «Առեղծ զնշանագիրս մեր Հանդերձ Հռոմիանոսիս, կերպաձեւեալ զդիրն առձեռն պատրաստ Մեսրովբայ. փոխադրելով զհայերէն ածութեայն ըստ անսայթաքութեան սիւդրայիցն ի հելլենացւոցն»։ ու նորը անմիջապէս կը յաւելու. «Զհոն ի գործ առնէր երանելին Մաշտոց, յերբեմնէ զնոսա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրենոյս և հեղինակին ուղղաճայնութեան»։ Նորը գարձեալ. «Հանդիպեցուցանէր Մեսրովպ զհայերէն ածութեայն ըստ կարգման սալոմէայիցն Յունաց, առեալ հարցմամբ և ուսանելով ի սրբոյն Սահակայ զթուութեայիցն գաղափար ըստ անսայթաքութեան յունին. վասն զի ոչ լինէին բաւական ի վճարել անսխալ ուղղակի առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ հայրապետին Սահակայ, որ յոյժ աւելցեալ անցուցանէր վարժիւք զգաղումն դիտնովք Յունաց»։

Մեր հին ու նոր պատմագրաց այսչափ

և այսպիսի խօսքերէն զանազան կարծիք-
ներ ելած են բանասիրաց մէջ, զորոնք
գժուարին ալ է իրարու հետ միաբանել։
Այս կարծիքներն գլխաւորաբար իրերի
կրնան վերաձուիլ։

Ոմանք կ՚ըսեան, խորհնաւոյն ու փար-
պետական խօսքերէն այս հետեւութիւնը կ՚ու-
զեն հանել՝ թէ սրբոյն Մեսրովպայ օգնու-
թիւն մը բրած չըլլան ոչ Դանիելեան և ոչ
ուրիշ ոք և իսկ նշանագիրք որ կը գտնուէին
կամ՝ կրնային գտնուիլ ազգին մէջ, ուստի
և բոլորովին նորէն հնարած է Մեսրովպ
հայկական գրերը։ Ասիկայ է ընդհանրա-
պէս չատ բանասիրաց կարծիքը. որոց կը
դուգընթանայ և Շնորհալի՝ որ իր վիպա-
սանութեանը մէջ ամբողջ երեսուն և մեց
հայկական տառից գիւտը Մեսրովպայ կ՚ընծայէ.

« Ըստ Մովսեսի արժանացեալ
Ջատաւածագիծ տառս ընկալեալ,
Երիւք տասամեք վեցիւք յանգեալ
Աբեգական եղիւք չափեալ »։

Բայց ինչպէս վերը ցըցուցինք՝ նոյն իսկ
ամենէն աւելի հին ու մերձաւոր ժամանա-
կաւ՝ որով և արժանահաւատ պատմիչներ-
նուս մէջ՝ անանկ խօսքեր ալ կան, որովք
կրնանք գուշակել թէ մեր լեզուին մէջ
կային յառաջ մանաւանդ նշանագիրք, բայց
անոնք՝ լեզուին սէնք եղած դիւրութիւնը

չմատուցանելնուն համար՝ հարկ եղաւ որ Մեսրովպայ Ջանթուվրկատարելագործուին։

Ասկից ելած է երկրորդ կարծիք մը, զոր նախ յայտնապէս բացատրած են իրենց դրուածոցը մէջ Վարդան և Ասողիկ, և ուրիշ անոնց հետևողք, որոնց խօսքը վերը դրինք։ Ասոնք կ'ըսեն թէ Մեսրովպ Դանիելի ասորւոյն քով քահանաներկու գիր գտաւ, որոնք բաւական չէին առ՝ պարզել ընդարձակութիւն լեզուին. ու այն պատճառաւ յոյն, ասորի ու պարսիկ գրերը կը գործածէին. ուստի և Մեսրովպ աղօթքի ապաւինելով, Աստուած տասնըչորս գիր տուաւ իրեն, երկնային թաթով մը գրուած։ Այս կարծիքը իր կուսակիցքը գտած է նաև մեր ժամանակի բանասիրաց մէջ. և յորոց չատերը կ'ըսեն թէ Մեսրովպայ Ջանքը դիւրաւորապար մեր այբուբենին կրկնակ գրերը հնարելուն համար եղած է. այն գրերը՝ որոնք ուրիշ լեզուաց մէջ չեն գտնուիր, և մեր լեզուին հնչմանց ճոխութիւնը կը կազմեն։

Երրորդ կարծիք մըն ալ կայ թէ Մեսրովպ միայն ձայնաւոր տառերը հնարած ըլլայ։ Ասոնց կարծեաց հիմն ու ամենամեծ վկայութիւնն ալ՝ Խորենացւոյն գրչագրաց մէկէն առնուած է, զոր վերը յիշատակեցինք։

Մեսրովպեան նշանագիրք այլ և այլ ժամանակ մեծամեծ կերպարանափոխու-

թիւններ կրած են իրենց ձեւին մէջ։ Բայց այս փոփոխութիւնն ալ ընդհանրապէս իրենի կը վերաձուին, և են երկարագիր, Բոլորգիր և Նօտրգիր կոչուած տառերն։ Յայտնի է որ սրբոյն Մեսրոպայ հնարած գրերը երկաթագիր ըսուածներն էին, ո՞րոնց գործածութիւնը հինգ վեց դար տևեց (406էն ինչուան Ժ դար), առանց երեւելի փոփոխութեան կերպարանք մը առնելու։ Այս գիրերուն երկաթագիր ըսուելուն պատճառը՝ հաւանական կ'երեւնայ թէ մէյմը երկրքէ գրչով գրուելնուն համար ըլլայ, մէյմըն ալ այն առնուան գործածուած թանաքին պատճառաւ, զոր երկաթի օքսիտով կամ ժանգով կը պատրաստէին։

Բայց իններորդ դարուն մէջ ինչպէս հաւանական կը կարծուի, գրչութիւնը գիւրացընելու համար սկսան գրերուն վերին ու ստորին կողմերը չիտակ գրել, որոնք դատ ձև մը ունեցան. և քանի երկաթագիրը սկսան գլխագրի տեղ բանեցընել։ Այսինքն է Միջին երկարագիր ըսուածը, որ մինչև ԺԲ դար տևեց քիչ փոփոխութեամբ։ Այս գրերը թէպէտ աւելի համեմատ ձև ունին, բայց ընթերցումը դժուարին ըլլալուն՝ այս կերպն ալ փոխեցին, ու սկսան Բոլորգիր տառերը գործածել, որ կամաց կամաց կատարելագործուելով ու կանոնաւորուելով՝ հիմակուան տպագրութեանց մէջ գործածուղ սովորական գիր եղան։

Բոլորգրոյն աւելի դիւրացուցած կերպն է նոտարացի կամ նոտր գիրը, որ ինչուան հիմայ հասարակ գրութեանց մէջ կը գործածուի։

Այս գրոց փոփոխմանը մէջ դիտելու արժանի է՝ որ Մէջին Երկաթագիրը հնարեալէն ու հասարակ ըլլալէն ետքը՝ բուն Երկաթագրին գործածութիւնը գրեթէ բոլորովին դադրեցաւ. նոյնպէս բոլորգրոյն գտնուելէն ետքը՝ Մէջին Երկաթագիրը խափանուեցաւ։ Բայց նոտր գիրը հնարեալէն ետքն ալ՝ բոլորգիրը չվերցաւ, այլ ընտիր ձեռագրաց մէջ կը գործածուէր։

ՀԱՅՑԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Հայերէն լեզուին պատմութիւնը՝ նոյն լեզուն խօսող ազգին պատմութենէն շատ աւելի մթին է։ Այս մթութեան պատճառաներն այլ և այլ կարծիք, որոնք իրարմէ քիչ կամ շատ հաւանականութիւն՝ որով և ընդունելութիւն գտած են հմուխց ու բանասիրաց առջև։

Լեզու մը չկրնար ձևանալ՝ ինչուան որ իրմէ առաջ ձևացած չըլլայ նոյն լեզուն գործածող ժողովուրդը. ուստի և հայ լեզուին սկզբնաւորելուն պատմութիւնը՝ գա-

նիկայ խօսող ժողովրդեան մէջ փնտռելու ենք։ Քաղաքական պատմութիւննիս մեզի անանկ հնութիւն մը կու տայ՝ զոր քիչ ազգ, մանաւանդ թէ աւելիորոշ խօսելով՝ թերևս ուրիշ մը ունեցած չէ, բայց յետբայեցւոց։ Հնութիւն մը՝ որուն սկիզբը առասպելներով մթացած չէ. քաղաքականութիւն մը՝ որուն սկզբնաւորելը ծառոց և անտառաց մէջ չփնտռուիր, ու կրօնք մը՝ զոր սուտ աստուածոց մոլորութիւնը չպղտորեր։ Այդպէս ու անտարակուսելի կերպով կ'ապացուցէ մեզի մեր սկզբնաւորութիւնն՝ այն համաչխարհական աւերմանէն ետքը, զոր առաջ դիրք կ'ապահովէն, և ուսկից ետքը Աստուած կրկին լինելութիւն տուաւ բոլոր աշխարհի։

Աստուածաշունչ դիրք կը պատմէն թէ տապանը Հայաստանի մէջ Արարատ լերան վրայ նստաւ։ Հոն Նոյ՝ աշխարհի երկրորդ ստեղծման նախահայրը՝ բնակեցաւ. հոն արդիք ունեցաւ ու արդեօք արդիք. հոն սկսաւ բազմանալ ժողովուրդը, և անկէց տարածուեցան մարդիկ իրարմէ բաժնուիլ, այլ և այլ ազգերու քաղաքականութիւնը սահմանելու համար։

Տարակոյս չկայ որ ինչպէս այն առեն ամէնքը Նոյայ լեզուն կը խօսէին, և մէջերնին այլ և այլ տարբերութիւն չէր կրնար ըլլալ բնականապէս, ինչպէս չկար ալ. որովհետև Մովսէս մարգարէ Ծննդոց գրքին մէջ կը զրուցէ թէ ամենուն լեզուն

ժկ էր. և այն լեզուի միութիւնը չարեաց պատճառ ըլլալուն համար՝ Աստուած Ա-նաարայ դաշտին մէջ ամենուն լեզուն խառնակեց. ու այն նորակերպ պատժով՝ ամէն ազգայ սկզբնաւորութիւնն ըրաւ։

Հոս պէտք է զանազանենք նախ, թէ ինչ պատճառաւ մարդիկ սկսան Հայաստանէն ցրուիլ։ — Այս ցրման պատճառը՝ եթէ մեր հին պատմութեանցը մէջ փընտռենք, կը գտնենք որ ոչ ընտանի պատերազմայ և ոչ ուրիշ մասնաւոր առթով մը եղած է. այլ ժողովրդեան բազմանալուն ու տեղւոյն նեղութեանը համար։ Ըսել է թէ Հայաստանի մէջ մնացին այնչափ ժողովուրդ՝ որ իրենց բաւական սնպեցին երկրին ընդարձակութիւնը։ Ուստի և հետեւաբար ատոնց լեզուն անփոփոխ մնաց Ա-նաարայ դաշտին խառնակութեանը մէջ. այն պատիժը՝ յանցանաց պատիժ էր, ու այն յանցանքին մէջ մաս չունեցողները՝ ի հարկէ պատժէն ալ ազատ կ'ըլլային։

Մեր Հայկ նահապետը՝ Ա-նաար դացողներուն հետ էր, ու անոնց կրած պատուհասին կցորդ. բայց երբ աշտարակը կործանեցաւ, Հայկ մէկէնմէկ դարձաւ ի Հայաստան. ու անտարակոյս հոն փոխանակ ինքը ուրիշներուն իր լեզուն սովրեցընելու, ինքը անոնց լեզուն կրկին սովրեցաւ։

Այս դէպքէն ետքը պատմութիւննիս

այլ և այլ պարագաներ մեր առջևը կը դնէ, որոնք լեզուներնուս հնութեանը մեծամեծ ու անտարակուսելի հատատոյք են։ Լեռնագաշտակի մը վրայ տեղ մը կը չինէ Հայկ իր բնակութեանը համար, ու անունը Հարք կը կոչուի. դիւղ մը կը չինէ՝ ու Հայկաշէն կը մնայ այն տեղույն անունը։ Բերայ հետ կը պատերազմի, ու այն առաջին յաղթութեան յիշատակը մինչեւ ցայսօր համար՝ քաղաք մը կը չինէ ու Հայք կը կոչէ։ Բերայ իննած տեղույն ալ՝ Գերեզմանք անունը կու տայ։

Նոյն հին և հաւատարիմ պատմութիւնեն՝ որ Խորենացւոյն կամ Մարիբասայ ձեռքով մեզի հասած է, Հայկայ յաջորդաց նկատմամբ ալ առանկ նման օրինակներ մեզի կ'ընծայէ. Արագած (լեռը) Հայկայ Արմենակ որդւոյն անունէն ելած. Արմաւիր՝ Հայկազնց հին ու նշանաւոր քաղաքը՝ Արամայիսէն. Մասիս լերան անունը՝ Ամասիա նահապետէն, Միւռնաց կամ Միսական նահանգին անունը Միսակէն, Շիրակ գաւառին անունը Շարայէն. Գառնի՝ Գառնիկ նահապետէն, Գեղամէն՝ Գեղ լեռը ու Գեղարքունի գաւառն ու ծովը, նմանապէս Փառափառ ու Յոլակերտ աւաններուն անուանքը՝ Փառոս ու Յոլակ նահապետաց անուններէն. Այրարատ անունն ալ Արա գեղեցիկ նահապետին անունէն առնուեցաւ, ուզելով նշանակել անշուշտ թէ այն գեղեցիկ ու ծաղկաւէտ

դաշտերը՝ Ա.բայլ անպարտ արեամբը ա-
բատաւորեցան։

Ասոնց կարդէն են նաև մեր ուրիշ նա-
հապետաց անուանքը, որոնց անուանք
հետ է նաև իրենց նշանակութիւնը. ինչ-
պէս Հաւանակ, Վաչտակ, Ազնակ, Նոր-
այր, Ջարմայր, Պերճ, Բազուկ, Կայսր-
դի, Հրաչեայ, Պաճոյճ, Տիգրան, Վահան,
Վահէ, և այլն։ Եւ ասոնց անուանքը նշա-
նակութիւնը իրենց վրայ ըլլալուն վկայ է
Դր. Մագիստրոս. «Ո՛ր Վեղամայն գեղեց-
կութիւն... ո՛ւր վառնակ վիրաւոցի, ո՛ւր
Հաւանակ դիւրահաւան... ո՛ւր Նորայր՝
վասն զի նոր արիութիւն ցուցանէր... ո՛ւր
Հրանտ հրատեսակ. ո՛ւր Ջուանակ՝ յուսա-
ցեալ զօրութեամբ»։

Ա.յս ամէն օրինակները՝ բաւականէն և
ւել կը ցուցընեն թէ Հայկազանց օրերը,
մեր նախնեացը ժամանակ, հայերէն լե-
զուին գործածութիւնը կար։ Ա.յս խօսքին
երաշխաւորութիւնը՝ անոնց խօսած լե-
զուին՝ մեզի իմանալի լեզու ըլլալն է. կամ
թէ ըսենք՝ նոյն նշանակութեամբ հասկը-
նալնին այն բառերը՝ ինչպէս որ մենք հի-
մայ կը հասկընանք։

Ասկէ աւելի ապացոյց մը չկրնար ըլլալ
ձեռուընիս՝ թէ մեզի հասած հայկական լե-
զուն մայր լեզու է. այն լեզուն՝ որ ջրհեղե-
ղի ժամանակ կը խօսուէր, և որ անպարտ
մնաց Եննաարայ դաշտին խառնակութեա-
նը ժամանակ։ Ուստի և ըստ մեզ ինքնի-

բեն կ'իյնան քանի մը նոր բանասիրաց այլ և այլ կարծիքները՝ որ կ'ուզեն մեր լեզուն ուրիշ երկրորդական լեզուներէ առաջ եկած սեպել, ու անոնց լեզուին մէջ փնտռել մեր լեզուին ծագումը։

Ընդ ուզեր մերժել՝ թէ կրնայ կամ ունի մեր լեզուն այլ և այլ նմանութիւն ուրիշ լեզուաց հետ. բայց նմանութիւնք՝ չատ անգամ ուրիշ երկրորդական ու մերձաւոր պարագաներէն ալ առաջ կու գան։ Ինչպէս մերձաւոր ազգի մը տիրապետութիւն՝ կրնայ նոյն ազգին հետքը ձգել ընկճած ժողովրդեան լեզուին մէջ. ուսումնասիրական գրաւում մը՝ անկարելի է որ առանց իր նշմարանքը թողու՝ բոլորովին ելլէ այն երկրէն. վաճառականութիւնը՝ որ չատ անգամ այլ և այլ յարաբերութեամբը երկու կամ այլ և այլ ազգեր իրարու հետ կը միացընէ, կրնայ իր ազդեցութիւնը ունենալ նաև լեզուին վրայ։ Այս նմանութիւնքը՝ ունեցած են իրենց պատճառները նաև մեր լեզուին նկատմամբ, ինչպէս քիչ հետը պիտի տեսնենք։

Հայկական լեզուն այլ և այլ վիճակներ ունեցած է։ Երբեմն պարզապէս խօսուած լեզու մը եղած, առանց գրաւոր մատենագրութեան, երբեմն ալ գրաւոր մատենագրութիւն ունեցող։

Այդ վիճակը՝ ի Նոյայ և՝ ի Հայկայ՝ մինչև՝ ի Վաղարշակ եղած է. վասն զի անոր օրը երևցաւ Մարիբաս, ու հայկական մա-

տենագրութեան չրջանը իրմով սկսաւ։ Ըսել է թէ ամբողջ Հայկազանց, նահապետական ու թագաւորական իշխանութեան ժամանակ՝ բուն դրաւոր մատենագրութիւնը պակասած է մեր մէջը։ Սակայն կարելի է այնպիսի երկարատեւ թագաւորութիւն մը անգիր քաղաքականութեամբ են թադրել։ Աբգևօք պարզ մտքի յիշողութեան աւանդուած օրէնքը՝ կրնար այնպիսի երկայն իշխանութեան մը տևողութիւն տալ։ Անիկա ալ մութ խնդիր՝ ու իրաւամբ տարակոյս վերցընող հարցում մըն է։ Բայց Պատմութիւնը՝ կարծես թէ կերպով մը երաշխաւորութիւն կու տայ այս կարծեաց։ Վասն զի Վաղարշակայ հասար կը պատմէ՝ թէ Հայաստան եկած ատեն ամէն բան տակնուվրայ դտաւ, և ոչ իսկ կրցաւ այն հին ու մեծ ազգին պատմութեան հետքը գտնել, ու տոխպուեցաւ ուրիշ մատենագրաններու յիշատակաց մէջ փնտռել։

Վաղարշակայ հետ գպրութիւնը ալ կը սկսին երևնալ։ Անոր ջանից և հետազօտութեանց արգասիք է մեր ամենէն հին ու պատուական՝ ու իրաւամբ թագաւորական կոչուած պատմիչը Մարիբաս։ Անոր պատմութեան հատուածներն են՝ զորոնք Խորենացին իր գրոցը մէջ կը յիշատակէ, և որոնց վրայ կրկին խօսելու առիթ պիտի ունենանք. ինչպէս նաև այն երգոց վրայ՝ զոր պատմութիւնը մեր Գողթան գաւա-

ուին երգողաց ու քնարին կ'ընծայէ, և ա-
րանք հայկական Մուսային առաջին և գե-
ղեցիկ արտադրութիւնքն են։

Ասոնցմէ ետքը կու գան Լուսաւորիչ և Ագաթանգեղոս, և իրենք կը բանան հայ գրաւոր մատենագրութեան ասպարէզը։

Ագաթանգեղոսի ինչ լեզուով գրած ըլլալը թէպէտ և անստոյգ սեպուած է, բայց մենք որովհետև պիտի ցուցընենք թէ հայերէն լեզուաւ յօրինեց իր Պատմութիւնը, անոր համար անոր լեզուն ալ կրնանք հայկական լեզուի պատմութեանը մէջ դասաւորել. մանաւանդ թէ անով սկսիլ մեր խօսքը, ինչպէս որ իրաւամբը ինքն եղած է առաջին հայ պատմագիր։

Ընաիր՝ բայց մութ լեզու մը կը գործածէ Ագաթանգեղոս. իր գրոցը մէջ հայերէն լեզուն՝ դեռ իր պատանեկութեան հասակին մէջն է. եռանդուն ու աշխոյժ պատանի մը որ իրեն գեղեցիկ ապագայ մը կը խոստանայ. մթութիւն մը կ'երևնայ, որ միանգամայն կ'իմացընէ թէ ժամանակաւ իր պայծառութիւնը պիտի ունենայ։ Ցրուցածնիս՝ բուն իսկ Ագաթանգեղեայ խօսքերովը հաւատարմացընենք։ Կարգանք անոր յառաջաբանին հետևեալ կտորները։

« Ի մէջ ըմբռնելոցն խորացն անգնդոցն լցեալ խռովայեալ խոխոջելովն ահագին կրեալ զօրհասն գուշակեն. Թէպէտև զինքեանս շարժուն տեսանիցեն ի վերայ յորձի ջուրցն բազմութեան

սասանելոյն սարսափելոյն, սակայն զկարողն առաջի ածեալ ընդ միս, քանան դիմագրաւեալք ընդ խռովութիւն ահագին ծովուն, զի թեւս դարձեալ օգտութեամբ զգիւտս իւրեանց ինդուԹեամբ ցուցանէն առ իւրաքանչիւր ընտանիս, և զպարծանս վաստակոցն իւրեանց դրացեացն. զի ուր հարկ է զաղքատութեան անուն յանձանց Թափեալ, և զառատապէալ ընտանեան Թափել ՚ի դրաւհարկ իշխանացն բռնութենէ, և յիւրեանց շահիցն բերելոցն հաՃել զպարտս վառանին ՚ի ծով ծառայութեան Թագաւորացն ազատացեալ դատարկացն »։

Նոյն ոճը կը տեսնուի նաև Մծբնացւոյն Ջգօն գրոցը մէջ, փաւստոսի Բիւզանդացւոյն պատմութեանը, և աւելի յայտնի և ստորին ոճով՝ Ղեւոնդեայ Վարդանոյն երկասիրութեանը։

Բայց ինչպէս կրթուած երիտասարդութիւնը՝ մէկ նիմէկ իր մտաւոր բարգաւաճանքը կ՚առնու, և իր ախորժակը կը կրթէ, ասանկ ալ կը տեսնենք նաև մեր մատենագրութեանը մէջ։ Զորրորդ դարէն հինգերորդ դարը՝ հսկայաքայլ անցք մըն է, որ մեծապէս կը զարմացընէ. սակայն ժամանակին կրթուԹեանը արգասիքն էր այն անցքը։ Հայկական դիտութիւնը իր մով միայն չբաւականանալով՝ իր սահմանը կ՚ուզէր ընդարձակել. և այն վախճանաւ ուսումնական գաղթականութիւններ դրկեց ԱԹէնս, ՚ի Բիւզանդիոն, ՚ի Հռոմ և յԵգեսիա։ Այս գաղթականութիւնքը՝

մանաւանդ՝ ի Բիզանդիոն և յԱթէնս ճա-
նապարհորդութիւնները՝ առանց իրենց
ազդեցութեան չէին կրնար մնալ. յունա-
կան ուսումը ու կիրթ ախորժակը իր ապա-
ւորութիւնը ըրեր էր հայկական մտքերու
վրայ: Նոյն ապաւորութիւնը ազգին ընդ-
հանուր օգտակար ընելու համար՝ անոնց
ընտիր օրինակագիրքը հայերէն թարգմա-
նելու եաեէ եղան: Կրթուած հանճարն ու
միտքը՝ կիրթ լեզու մը երևցուց ազգին
մէջ:

Այս ընտիր և պեղեցիկ լեզուն յայտնա-
պէս կը տեսնենք նոյն ժամանակին թէ
ինքնագիր և թէ թարգմանեալ երկասի-
րութեանց վրայ: Նոյն լեզուն աւելի գե-
ղեցկութիւն մը տուած է մեր հոգևոր
հայրապետաց սրտին բղխած ու գրչովը
մեզի ատենդուած եկեղեցական ու մաղ-
թոզական գրոց մէջ, Ատուածաշնչին,
Եւսեբեայ Քրոնիկոնին կամ ժամանակա-
գրութեան ու եկեղեցական պատմութեան
մէջ, Կիւրղի Երուսաղեմացւոյ Ընծայու-
թեան կոչման գրոցը, Յովհաննու Ոսկե-
բերանի, Բարսղի Հայրապետին գանազան
գրուածոց թարգմանութեանցը, և այլն.
և ինքնագիր երկասիրութեանց մէջ Ագա-
թանգեղոս, Եղիշէ կողբացի, Կորիւն, Ե-
ղիշէ, և անոնց վարդապետքը Սահակ և
Մեսրովպ:

Թէ՛ ի թարգմանութեանց և թէ յինքնա-
գիր գրուածոց քանի մը ընտիր օրինակ-

Նէր՝ մեր խօսքին հաւատարմութիւն ըլ-
լան։

Ի Ներփանոնէանց. « Աբրահամ ծերացեալ էր և անցեալ զաւուրբք, և տէր օրհնեաց զԱբրահամ ամենայնիւ։ Եւ ասէ Աբրահամ ցծառայն իւր ցերէց տան իւրոյ՝ ցկշռան ամենայն ընչից նորա։ Երդմնեցուցից զքեզ 'ի Տէր՝ յԱծ երկինից և յԱծ երկրի, զի մի առցես կին որդւոյ իմոյ Խահակայ 'ի դստերաց Քանանացւոց յորոց միջի ես բնակեալ. այլ յերկիրն իմ՝ ուստի ելեալ եմ՝ երթիցես, և 'ի տուն իմ. և առցես դու անտի կին որդւոյ իմոյ Խահակայ։ Ասէ ցնա ծառայն. Գուցէ կինն ոչ կամիցի գալ ընդ իս յերկիրս յայս, զարձուցա՞նելո՞ զարձուցից զորդի քոյ յերկիրն ուստի եկեր։ Եւ ասէ Աբրահամ. Զգոյշ լեր, մի զարձուցանիցես զորդի իմ անդր։ Տէր Աստուած երկինից և Աստուած երկրի՝ որ առ զիս 'ի տանէ հօր իմոյ, և յերկրէն ուստի ծնեալ էի, որ խօսեցաւ ընդ իս, և երդուաւ ինձ և ասէ. Ցաւակի քում տաց զերկիրդ զայդ, նա առաքեսցէ զհրեշտակ իւր առաջի քոյ, և առցես անտի կին որդւոյ իմում Խահակայ։ Եպա թէ ոչ կամիցի կինն գալ ընդ քեզ յերկիրս յայս, քաւեալ լիցիր դու յերդմանէդ յայդմանէ. բայց միայն զորդեակդ իմ մի զարձուցաներ անդր։ . . . Եւ յարեաւ գնաց 'ի Միջագետս 'ի քաղաքն Նաքովրայ, և հանայց զուղտսն արտաքոյ քաղաքին առ ջրհորոյ ջրոյն ընդ երեկս՝ յորժամ ջրուհիքն ելանէին, և ասէ. Տէր Աստուած տեառն իմոյ Աբրահամու, յաջողեա ինձ այսօր, և արա ողորմութիւն ընդ տեառն իմում Աբրահամու »։

« Բայց Խահակ սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն որդիսն իւր. քանզի որդի ծերութեան

էր նորա: Եւ որպէս նմա պատմուձան ծաղկեայ: Իբրև տեսին եղբարքն նորա, թէ սիրէ զնա հայրն քան զամենայն որդիս իւր, ատեցին զնա. և ոչ կարէին խօսել ընդ նմա խաղաղութեամբ: Եւ հասեալ երազ Յովսէփ, և պատմեաց եղբարց իւրոց. և յաւելին ևս ատել զնա վասն երազոյն նորա և վասն բանիցն նորա»: ԾՆՆԴՈՑ ԳԻՐՔ:

«Եթէ ուղղագործացն կարևոր են նեղութիւնք, որչափ ևս առաւել մեզուցելոցն: Տէս՝ յորչափ երկայնմտութիւնս վայելեաց Փարաւոն, և յետ այդ զանհնարինն ընդ ամենեցուն եհաս վրէժս: Ո՞րչափ ինչ յանցեաւ և նաբուգոդոնոսոր, և մեծ՝ի վախճանն ընդ բնաւին մանկեցաւ: Եւ մեծամուծն քանզի ոչ ինչ կրեաց ատելն կարես, վասն այնորիկ առաւել թշուառացաւ. զի փափկանայր՝ի կեանս աշխարհիս, չոքաւ անդր ընդ ամենայնի տալ տոկոսս. ուր և մխիթարութիւն ինչ չգոյր գտանել: Սակայն են ոմանք այնպէս ցուրաք և անմիտք, մինչև ատելն միայն միշտ խնդրել՝ թէ առ այժմ ատելն վայելեացուք, և ապա սիրացուք զանյայտին. ընտրհեացուք որովայնի, ծառայեացուք ցանկութեանց, համարձակ կացցուք ատելն յաշխարհի. տուր ինձ զայս օր, և առ քեզ զվաղիւ: Եւ զինչ՝ի քոյէ և՝ի խաղից ընդհատ լցեն որ զայսպիսի բանս խօսիցեն»: ՈՍԿԵՐԵՐԱՆ:

«Ա՛յնչափ ինչ չար՝ի դաշանացն բնութեամբ ոչ գոյր, մինչև առեալ զնորաստան առ նորա ատելծն՝ նմա նոցա անուանս հրամայէր դնել. և եթէ մեռ ոչ գայիւն, զինքրդ միոյ միոյ ըստ իւրաքանչիւր ազգաց անուանս յօրինէր. ապա եթէ մեռ գայիւն, և ընտելութիւնն ընդ մարդոյն ունէին, յայտ է թէ ոչ չարք էին, և ոչ մար-

դոյն վերատակարք. այլ յետ յանդանելոյ մար-
դոյն զԱստուծոյ պատուիրանսն առաւն նմա
զարհուրեցուցիչք. առ ՚ի չհպատրանալոյ հալ-
ղենին՝ որ ՚ի հողոյ եղև և ՚ի հող դառնալոց էր:
Եւ առաջնոյ չվերատակարութեան գազանացն
մարգոյ՝ այժմու համբոյրս և ընտելութիւնս վե-
կայեն: Զի ոմն զգայլոյ կորիւն սնուցանէ, և իբր
զշան կորիւնս՝ առ ընդելութեան ընդ անձն ան-
կանին: Եւ միւսն զարիւծու կորիւն սնուցեալ՝
ածէ ՚ի համբոյր և ՚ի քծինս, մինչև պատել զնու-
ցեալսն. և եթէ այլ ոք ՚ի նա հատ գայցէ,
չմոռացեալ զբարս գազանութեանն՝ ՚ի վերայ
յարձակի»: ԵՋնիկ:

Սակայն սրբոյն Սահակայ ու Մեսրովպայ աշակերտաց Բիւզանդիոն, Աթէնք ու Ալեքսանդրիա երթալը թէպէտ և մեծ օգուտ ըրաւ անոնց ախորժակը կրթելու համար, բայց անոնց լեզուին մէջ քիչ շատ փոփոխութիւն մտուց: Խորենացին՝ որ դարս գրկուած աշակերտաց մէջ գլխաւորներէն մէկն էր, իր վարդապետացը վրայ խօսելուն առեն՝ ասանկ կը գրուցէ. «Որովհետև, կ՚ըսէ, անոնք մեր արուեստին տեղեկութիւն չունէին, անոր համար գործերնին ալ շատ կերպով թերի էր. ուստի մեծն Սահակ ու Մեսրովպ գրկեցին զմեզ յԱլեքսանդրիա, «ի լեզու պանծալի ՚ի սոյգ յօգտանալ ճեմարանին վերաբանութեան»: Ողբոցը մէջն ալ կ՚ըսէ. Երբոր անոնք մեր դառնալուն կը սպասէին ու իմ ամենմեսոտ արուեստովս և առաւելապոյն յարմարութեամբս պատուասիրել,

բոլորովին թէ մեր և թէ անոնց չկարծած դէպքը հանդիպեցաւ։

Տեսանենք լեզուին փոփոխութիւնը՝ զոր կրեց այն ուսմամբը և ճանապարհորդութեամբ։

Այն ուսմանց, հետազօտութեանց և ճանապարհորդութեանց գլխաւոր արդիւնքը եղաւ, եթէ կարելի է այս բացատրութիւնս բանեցընել, լեզուին աւելի փիլիսոփայութիւն մը և իմաստասիրական ճըշդութիւն տալ, բայց միանգամայն հայերէն լեզուին ալ ուրիշ կերպարանափոխութիւն։ Հելլենաբանութիւնը՝ որ մեր հինգերորդ դարուն շատ մատենագրաց գըրուածոց մէջ այնչափ յաճախած է, այս ժամանակէս սկսաւ։ Հելլենաբանութիւնը՝ կամ յոյն լեզուին նմանութիւնը իրեք կերպով կը տեսնուի՝ մեր նոյն ժամանակին մատենագրաց գրուածոց մէջ։ Ուրիշ հելլենաբանութիւն ունի Խորենացին, ուրիշ Գիւտ և ուրիշ Դաւիթ Անյաղթ։ Ետսակ մը հելլենաբանութիւն կայ, անանկ նոյն լեզուովը զանգուած՝ որ հայու համար անհասկանալի կ'ըլլայ։ Ուրիշ տեսակ հելլենաբանութիւն մըն ալ՝ որ թէպէտ և յունաբան է, բայց հայերէն լեզուի կատարեալ տեղեկութիւն ունեցողը կրնայ աշխատանքով հասկընալ։ Իսկ երրորդ տեսակը աւելի մօտ է ազգային ոճի, և դիւրաւ հասկընալի. թէպէտ և մեծապէս հեռու բուն ազգային մատենագրաց ոճոյն յատկութենէն։

Ա. յս իրեք դաս հելլենարանութեանց ալ օրինակները մէջ բերենք։

« Ելոյր հարկաւորի փրիաւորիէ, և յ՚առա Ա-
բիատոռելի սուորգոութեցն վարդապետութիւն,
գիտել՝ գինչ սեռ և գինչ տարբերութիւն և գինչ տե-
սակ· գինչ յատուկ, և գինչ պատահումն ի սահ-
մանացն բացատրութիւն, և բոլորովին՝ յաղագս
բաժանման և ապացուցի պիտանացուի ելոյ սո-
ցայցն տեսութիւն, համառօտ քեզ ընձեռութիւն
առնելով՝ փորձեցայց ի ձեռն սակաւուց իբր
ներքածութեան յեզանակի զառ ծերունեացն ան-
ցանել բանիս, ի խորագունիցն ի բաց կալ ի
ինդրոց, և պարզագունիցն՝ չափաւորապէս հան-
գիպելով »։ . . .

« Տեսակ ասի և ի վերայ իւրաքանչիւրոյ կեր-
պի՝ ըստ որում ասի, նախ տեսակ արժանի գո-
ւոզութեան։ Եւ ասի տեսակ և այս՝ որ ընդ բա-
ցատուեալ սեռիւս է, ըստ որում սովորեցաք ա-
սել զմարդ տեսակ կենդանւոյ՝ սեռոյր, ելոյր,
կենդանւոյր· և սպիտակն գունոյ տեսակ, և ե-
ռանգիւնին ձեոյ տեսակ։ Եւ եթէ զսեռն բացա-
տուելով՝ զտեսակն յիշեցաք, ասելով զյոլովիցն
և զաւարբերեցելոց տեսակաւ ի ներքում գինչէն
սուորգեալ, և զտեսակն ասեմք զայն որ ընդ բա-
ցատուեալ սեռիւն է։ Դիտել պարտ է, վասն զի
սեռն՝ որումն է սեռ, և տեսակն՝ որումն է տե-
սակ, երկաքանչիւր՝ երկաքանչիւրոյր, հարկ է և
ներկոցունց՝ բանս վարել երկոքումբք[1] »։

Ա.սանկ անխմանալի հելլենարանութիւն մը գործածող Դաւիթ Անյաղթը՝ Սահմա-

[1] Դաւիթ Անյաղթ իւր թարգմանութեանց մէջ։

նոց դրբին մէջ չատ աւելի պարզ և իմաստալի լեզու մը կը գործածէ, թէպէտ և ոչ անխառն ի հելլենարանութենէ։

« Կատարեալն փիլիսոփոս՝ երեքութեամբ այսքիւք կերպարանի. բարեաւն, աստ, և գիտնական և կարելեաւն։ Եւ բարեաւն՝ թէ որպէս Աստուած ինամ տանի ամենեցունց, նոյնպէս և խնամատարն ինամ տանի անկատար ոգւոց ի կատարեալ գիտութիւն ածելով զնոսա։ Իսկ գիտնականն՝ թէ որպէս Աստուած զամենայն ինչ գիտէ, նոյն և կատարեալ խնամատարն զամենայն ինչ խոստանայ գիտել, և գիտէ զօգտակարն։ Իսկ կարելեաւն՝ թէ որպէս Աստուած զամենայն ինչ կարէ զպատշաճագոյնս և կամի, նոյնպէս և կատարեալ խնամատարն՝ որչափ ինչ կարող գոյ ըստ կարելոյն և կամի, և ոչ երբէք կամի զոր ոչն կարէ »։

Նոյնպէս ալ փիլոն.

« Սա (հանճար գիտութեան) է որ զԹանէթրա-հոյն արգաւանդ և զառաքինի երկրի զեռնային և զգաշտային սերմանեաց և անկեաց, և զինոցա-զոյս զօգտակարագոյն մշակութիւնն կարաց գատնել։ Սա է որ նաւ կազմեաց, և զդամաքին բնութիւնն ընդ միս ածելով, հնարս գտեալ՝ որ քան զամենայն բան ի վեր է, զուսակ գործեաց ըզմարդ. և ձանապարհս ի ծովս բազմահերձս և բազմահեաս մինչև ի նաւահանգիստն, որք ըստ բաղաքաց բաղաքաց, և ընթացից աշխարհատոզուտայս եհատ ձանապարհ. և ծանոյց ցամաքայնոցս զկղզեայինս (որք) ոչ երբէք ի մի վայր եկեալ լինէին, եթէ ոչ մակոյկ նաւակ առեալ էր։ Սա է որ ձեռագիտացն և պայծառագոյն արուես-

սիցն ասացելոց գառակ: Սա գիրս և երաժշտութիւն, և գներկրչանական ամենայն իրաստս հանճարոյ հնարեալ խմացաւ, և առնոյց և հած 'ի կատարած: Սա և զհնձ բարի՝ զնմանատսկրութիւնն ծնաւ, և 'ի ձեռն իւրաքանչիւրոցն մարդկային կենացս »:

Օրինակ մ'ալ Անանիոսի Առաջաւելիաց մեկնութենէն մէջ բերինք:

« Աճաքարքոս խմաստասէր էր. սա ըմբռնեալ յԱրքելայոս խմաստասիրէ, և արկեալ 'ի սանգ հարեալ լինէր նգով փայտեղինաւ և 'ի սանդահարիչն՝ մանրել և փոճոկել 'ի նմանութիւն հնդոյ ինչ, այլ սանդահարելով սորա ազազակէր և ասէր. Սանդահարեա, սանդահարեա զարկս Աճաքարքեայ. քանզի ոչ կարես զԱճաքարքոս սանդահարել: Զայս ասէր, նշանակեալ թէ ի մաստասէր գոլով, մարմնոյն և ոչ մի ինչ փոյթ առնէ »:

Երրորդ աւետարկ հելլենաբանութեանն ալ օրինակ մը մէջ բերինք:

« Արդ զիա գեռ ևս տղայոյն (Բեթզեհեմի) հնչեցուցանէ գոչումն. և աեսեալ զնոսա՝ կարծեմ ՀՀել անդուշակս զարհուրելով. և 'ի նշոյլս սրոյն կափուչեալս, և երկիւղիս խոնարհեալք 'ի գիրկս մարդ իւրեանց իբրև յատաւնիս, այլ և 'ի ծոցս խաւսափեալս: Ապա և զմարան կարծեմ աեսանել, այլ զոմն աս այլաբրս փախուցեալս 'ի քաղաքէն՝ այնու ազգրանել և քաղցր բառիքք, և ինդրոյս աեղն ապաստանել. և զոմն 'ի նոցանէ՝ ոչ ծածկելք բարեշուք զնբեաւ առեալ 'ի գառնութենէն. իսկ ոմն և զոր ուներ՝ 'ի բաց

ընկեցեալ՝ ի շփոթական փախստեանէն։ Եւ զայլ ոմն զմնացեալսն անկեալ՝ յայնպիսի ծածկութիւն զաղայն վանդեր, գողանալ յուսալով։ և զմիւս ևս այլ՝ հասեալ՝ ի հալածչացն ուժգնակի, և ա֊պա պահասեալ՝ ի գնացիցն, և պարաւանդեալ յերկիւղէն, և արտասուալից աչօք հայեցեալ՝ ի փայլուն սրոյն, և զհայեցուածսն յերկուս բա֊ժանեալս, և զանձն առաջի եդեալ փութապէս ի֊ջմամբ սրոյն։ Եւ գթաձեալ միւս այլ ոմն ոչ կա֊րացեալ շարժել ոտիւք, կապեալ ոտիցն՝ ի զար֊հուրմանցն՝ այլ յառաջ կորուսեալ՝ ի սպանմա֊նէ իւրոյ զաւակին, և սպեռոլին՝ առաղ ինչ ան֊ացեալ հառաչմանն, և ոտիւք ձեռաքն լուծեալք և յոյժ սաստանելովք անգիտացեալք, և զմտանէն՝ ի գերկան սառակեալ։ և կանխեալ զմահուանն դիա֊կոյս՝ նախ քան զորոյն կորուսա։ Ո՛վ Հերովդէ մոլեգնութեանն։ ԳՐԻԳ. ՆԻՒՍԱՑԻ։

Ա֊ս օրինակներուն մէջ կը տեսնուին յայտնապէս իրեր դաս յունարանութեանց ոճը և յատկութիւնները, որ մեր մատե֊նագրաց՝ կամ անոնց ձեռքով եղած թարգ֊մանութեանց մէջ կ՚երևնան։ Անոնցմէ՝ ոմանք այն աստիճանի սիրող երևցան այս տեսակ ոճոյն՝ որ ինչուան ուղեցին հայկա֊կան լեզուին կարգն ալ փոխել, և մեր լե֊զուին կանոն տալ Դիոնեսիոսի Թրակա֊ցւոյն քերականութիւնը։ Անոր համար կը տեսնենք որ նոյն գրքին մէջ նոր ու այլա֊կերպ բարդութիւնք կան՝ բոլորովին օտար ու հակառակ մեր լեզուին կանոններուն ու խոնարհմանցը, որուն օրինակ կրնայ ըլլալ կոտեմ բայը, զոր հետևեալ կերպով կը լծոր֊

դէն երկրորդ թարգմանիչը. կոփեմ, կոփես, կոփէ. կոփեմք, կոփէրք, կոփեն. – էկոփոցիւր, էկոփոցիւ, էկոփոցեր. էկոփոցիւք, էկոփոցիւրք, էկոփոցիւն, և այլն: Ասանկ ալ դերանունաց իգական սեռը զատեցին ու ըսին. Նա, նոյա արական. Նէ, հոգիա իգական:

Թարգմանչաց այս նորաձեւութիւնը հաճոյ անցաւ ժամանակակցաց առջեւը: — Խնդիր մըն է՝ որուն վրայ մեր ազգային գրականութեան պատմութիւնը բան մը չի դրուցեր: Սակայն ազգին մէջ ընդհանուր չըլլալէն՝ հաւանական կ'երեւնայ գրուցելը թէ իրեւ անսովոր բան մը մերժուեցաւ. ուստի և կերպով մը խորհուցին կը զանգրաի թէ մեր արուեստին վրայ կը ծիծաղին՝ ու անօգուտ և անպիտան կը սեպեն մեր գիտութիւնը. Խորհուցուցին կրած հալածանքներն ալ մեր այս խօսքին երաշխաւորութիւն են: Իրենցմէ ետքը եկող մատենագիրք ալ ամենեւին չհետեւեցան նոյն ոճոյն. և ասիկայ ալ մեծ հաւաստիք մըն է՝ թէ ընդունելի չեղաւ այն գրութեան կերպը՝ որուն յառաջադիմութեանը համար այսչափ աշխատեցան:

Այս ժամանակ մտած են մեր ազգին մէջ շատ յունական բառեր, կամ յունարէն բառերու հայկական թարգմանութիւնք՝ որոնցմէ ոմանք մեր լեզուին պարզութեանը վնասակար եղած են, և ոմանք ալ իրեւ բնաիր զարդեր արժանապէս գործածուած:

Թարգմանչաց գործէն եաքը՝ անակընկալ կերպով մը կ'իյնայ ազգային գրութեան հետ նաև լեզուն։ Հարիւր տարուան երկայն շրջան մը՝ քանի մը անձնական մատենագիրներ կընծայէ մեզի, որոնք իրենց գրուածոցը վրայ ժամանակին կնիքը կը կրեն, ազգասութիւն խմսափից և լեզուի։

Ասոր նման՝ կամ քիչ տարբերութեամբ է եօթնեերորդ գարը։ Միայն Շիրակացւոյն ջանքով՝ հայկական բարբառը ուսումնական բառերով և բացատրութեամբը կը ճոխանայ։

Ութերորդ գարուն մէջ Հայաստանի քաղաքական դիրքը նոր կերպարանք մը կ'առնու։ Նոր սերնդապետութիւն մը՝ իր իշխող և զօրաւոր ձեռուընները կը տարածէ մեր հայրենեացը վրայ. դէպքերուն հետ՝ լեզուին կնիքը ու բացատրութեան կերպերը կը մտնեն մեր բարբառին մէջ։ Արաբացին կը սկսի մերթ յաղթական՝ անգութ զօրաց բանակներ, ու մերթ ալ իր ստիկանները դրկել Հայաստանի վրայ, երբեմն զարնելու և աւարելու, երբեմն ալ նոյն աւերակաց վրայ իր իշխանութեան սիմոռը դնելու։ Ասիական մատենագրութեանց մէջ նոր՝ ու գրեթէ իրեն յատուկ ոճ մը ունի արաբականը։ Գուրցուածքի մէջ ապաբանական ու նկարագրական լեզու մը, բացատրութեանց մէջ երկայնաբանութիւն մը։ Այս ոճը յայնապէս կը սկսի երևնալ մեր նոյն ժամանակի մատե-

նագրաց մէջ. Յովհաննու Օձնեցւոյն կամ Խաստատսիրին գրուածոցը մէջ աւելի ընտիր կերպով, իսկ Յովհաննու Պատմաբանի ու Թովմայի Արծրունւոյ երկասիրութեանց մէջ աւելի սառրին ոճով։ Այն ազդեցութեամբն է որ ժամանակին մատենագիրքը կը սկսին կերպով մը անխմանալի լեզու գործածել. խմաստից յորդութեան կամ առատութեան հետ՝ բառից յորդութիւնք և առատութիւնք կը մտնեն. և կը սկսի լեզուն աղաւաղիլ։ Այս աղաւաղութիւնը աւելի կերպով մը զգալի կ'ըլլայ Գրիգորի Մագիստրոսին գրուածոցը մէջ։

Իսկ երկոտասաներորդ դարը՝ Ներսէսի Կլայեցւոյ, Սարգսի և Իգնատիոսի ու իրենց ոճոյն հետևող ընտիր մատենագրաց ձեռքովը՝ արծաթի դար մըն է մեր մատենագրութեանը։ Անոնց գործածած վայելուչ լեզուն չկրցաւ երկար աատեն դիմանալ, ու կամաց կամաց անչքանալով՝ բոլորովին նոր կերպարանք մը սկսաւ առնուլ։ Այնպիսի կերպարանք մը՝ որ հայերէն գրագիտութիւնն ու լեզուն երկուքի բաժնեց. խտրոց մը դրաւ ընդ հին և ընդ նոր մատենագրութիւն։

Այս նորութեանը և իր ոճոյն վրայ՝ մենք ալ ազդային նոր Մատենագրութեան պատմութեանը մէջ ընթերցողաց մատրութիւնը պիտի դարձընենք։

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ *

Հայկական անգիր մատենագրութիւնը, մեզի ուրիշ նշանակութեան արժանի ա-ւանդ մը հասուցած չէ, բայց եթէ քանի մը Գողթան երգեր։ Ինչպէս Յունաց մէջ Հազներգուք, ասանկ ալ Հայաստան ու-նեցեր է իր երգիչները, մանաւանդ Գող-թան բարբեր ու գինաւէտ գաւառին մէջ, որք իրենց բանաստեղծական աշխատիւքով հին աւանդէն՝ ի վեր համբաւ ստացան։ Ա-նոնց հանճարոյն արգասիքն են այն երգերը,

* Ահա հին երգերուն վրայ՝ գրեթէ մի և նոյն ժամանակի մէջ, և առանց իրարու գրուածները տեսնելու, երկու մատագրութեան արժանի և գեղ-նական երկասիրութիւնք հրատարակուեցան։ Մէկն է Մկրտչի Լմին, Մոսկուայի Լազարեանց Դպրոցին ուսուցչի Վէրպ հնոյ Հայապանի գրուած-քը, տպագրեալ՝ի Մոսկուա (1850)· միւսն Վիէն-նայի Մխիթարեանց Ուխտին միաբան՝ Գաթըր-ճեան Հ· Յովսեփայ՝ Հայոց Տաղնապգրութեան պատ-մութիւնը (Վիէննա, 1851)։ Նոյն տարւոյն մէջ այս երգերուն վրայ հմտական հատուած մ՚ալ հրա-տարակուեցաւ Բազմավէպ Օրագրին մէջ· (1850 դեկտեմբեր, և 1851 յունուար)։ Ահա երկք հե-ղինակաց հետևութեամբ յօրինած ենք մեր յօ-դուածը, շատ տեղ ոչ միայն իրենց կարծիքը՝ այլ նաև խօսքերնին փոխ առնելով։

կամ երգոց քանի մը կտորուանքը՝ որ մեր ձեռքը հասած են։ Ա.յս երգերը՝ այլ և այլ ժամանակաց դէպքեր ու անցքեր մեզի յիշատակելնուն համար, այլ և այլ ժամանակ ունեցած են իրենց յօրինմանը։ Ջանազան ժամանակ յօրինուած երգեր, տարակոյս չկայ որ զանազան երգիչներ ու հեղինակներ ունեցած են։ Բայց որովհետև ասոնց բուն անուանքը՝ պատմութիւնը ինչուան մեզի հասուցած չէ, ուստի և ընդունայն աշխատանք է անոնց բուն հեղինակը փնտռելու համար յոգնիլ։

Սակայն այս երգերուն նիւթը յայտնի կը ցուցընէ որ ոչ քուրմերէ, և ոչ անոնց ազգեցութեան տակ անձինքներէ՝ կրօնական հանդէսներու մէջ կամ բագիններու առջև երգեցուելու համար չինուած են, այլ այնպիսի անձինքներէ յօրինուած՝ որոնց առջև արքունիք անգամ դոց չեն. և թերևս ազատաց ցեղէն վարձուած քերթողներ են, որոնց պարտքն էր նոյն ցեղին մէջ հռչակուած քաջութեանց և առաքինութեանց գովաբան ըլլալ։

Որչափ ալ ազգերնուս հնութեանութիւնը ժամանակ յօրինուած են այս երգերը, բայց անոնց գործածութիւնը՝ դեռ ինչուան քրիստոնէութեան հինգերորդ դարը կը տեւէր։ Ա.յս կարծեաց ստուգութեան և բաշխաւորութիւնը՝ Խորենացւոյն խօսքերուն մէջ ունինք, որ նոյն երգերը մէջ բերելուն ժամանակ միանգամայն կը գրու-

ցէ թէ անոնց գործածութիւնը դեռ ևս կը լսուի Հայոց Ղողթան գաւառին բնակչացը բով։ Բիւզանդ ալ՝ չորրորդ դարուն քրիստոնեայ՝ բայց իրեն աստուածաւանդ կրօնիքը անհաւատարիմ Հայաստանին համար կը գրուցէ մեղադրելով թէ «Զիւրեանց երգս առասպելայց զվիպասանութեան սիրեցեալք և նմին հաւատացեալք և՛ ի նոյն հանապազորդեալք»։ Ինչուան Մաշիտոցոսի ժամանակ՝ դեռ այս երգոց գործածութիւնը կար. և ինքը մէկ հատուած մը մէջ կը բերէ զոր իր ժամանակին գիւղականացը բերնէն լսած էր։

Բանաստեղծական քնարը թէպէտև այլ և այլ ձայներ ունի, սակայն մեր ազգին մէջ երևցած երգերը՝ պարզապէս պատմական երգեր են. և մեր նախնեաց լեզուովը վէպք, վիպասանութիւն, վիպագործութիւն և բուելոց երգեր կը կոչուին։

Համառօտիւ մը քննենք այս բառերուն նշանակութիւնը։

Էմինեանը՝ և Բազմավիպին մէջ հրատարակեալ յօդուածին հեղինակն կը համարին թէ Խորենացւոյն Երգ վիպասանաց կոչածը՝ ամբողջ բանաստեղծութեան գիրք մըն էր Պարսից Շահ-Նամէ վիպասանութեան գրքին նման, և յօրում մեր հին ազգային քերթողքը՝ Հայոց թագաւորաց պատմութիւնը աւանդած էին։ Ինչուան Քրիստոսի վեցերորդ դարը՝ այս երգերը պահուած էին, և ժամանակին մարդկան-

ցը մէջ՝ ի կիր առնուած։ Կը վկայէ Խորենացին. «Զայս մեզ սատուգապէս պատմէ Ուղիւպ . . . որում և Պաբսիոց մատեանքն վկայեն և երգն վիպասանաց»։ Ուրիշ տեղ մըն ալ. «Արտաշիսի վերջնոյ գործք բազում՝ ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան»։ Երրորդ տեղ մըն ալ. «Այս ամենայն յայտնի են քեզ յերգս վիպասանաց»։ Այս խօսքերը աժենևին տարակոյս չեն ձգեր, թէ կային այնպիսի երգեր, և անոնց կիրառութիւնը յաճախած մինչև յաւուրս Խորենացւոյն։

Բայց իրեն պատմութեանը մէջ յիշուածները միայն մէկ քանի մը կտոր բան ըլլալով, կրնանք տարակուսիլ. ուստի ասելի հաստատութեան համար հարկ է որ մէջ բերենք Խորենացւոյն գրոց մէկ հատուածը՝ որով ամէն տարակոյս կը վերցուի։ Ասոնց դի Խորենացին՝ Մարաց աշխարհէն բերուած գերեացը ստորագրութիւնն ընելէն ետքը կ'ասելացընէ. «Զայսոսիկ զայս ճշմարտապէս և թուելեացն երգք, զոր պահեցին ախտժելով, որպէս լսեմ, մարդիկ կողման գինաւէտ գաւառին Գողթան, յորս պատմին բանք զԱրտաշիսէ և զորդւոց նորա, յիշելով այլաբանաբար և զզարմիցն Ա.ժգահակայ, վիշապազնեա զնոսա կոչելով։ Ա.յլ և ճաշ, ասեն, գործել Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի, և խարդաւանակ լեալ նախ ի տաճարին վիշապաց։ Ա.յլ և Արտաւազ-

գայ ոչ գտեալ, ասեն, քանի որդւոյն Ա.Ր-
տաշիսի՝ տեզի ազատարանից՝ ի հիմնադնէն
Ա.րտաշատու նա անց, ասէ, գնաց և շի-
նեաց ի մէջ Մարաց գՄարակերտ, որ է
ի գաշտին՝ որ անուանեալ կոչի Շարու-
բայ։ Ա.յլ և տենչայ, ասեն, Աթենիկ
տիկին տենչանա՝ զարտախուր խաւարտ և
զսից խաւարծի ի բարձից Ա.րգաւա-
նայ »։

Խորենացւոյն այս հատուածին մէջ այլ
և այլ գործողութիւնք
կան, որոնք այլ և այլ անձանց և ժամա-
նակներու կը վերաբերին։ Հոն Ա.ժդա-
հակայ Ա.նոյշ կնիկը և անոնց սերունդը
կը յիշատակուին, որոնք ինչպէս յայտնի
է՝ Բրիտասոի թուականէն գրեթէ վեց դար
առաջ կ'ինկան. կը յիշատակուի Ա.րգաւան
Մնգացի՝ որ Ա.րտաշիսի պատուոյն համար
ճաշ մը տուաւ, և միտք ունէր այն ճա-
շուն ժամանակ՝ գաւառանուէնամբ գարա-
նիլ անոր կենացը։ Ա.ոչի դէպքին և ասոր
մէջ՝ գրեթէ եօթն հարիւր տարուայ տարբե-
րութիւն կայ։ Կը յիշուի Ա.րտաշիսի Ա.ր-
տաւազդ որդին, ու նոյն թագաւորին Աա-
թենիկ կնկան վրայ զրոյցը կ'ըլլան։

Ա.յսչափ իրարմէ հեռու ժամանակաց և
անձանց պատմութիւնները ամփոփող եր-
գերը՝ տարակոյս չկայ որ չէին կրնար հա-
մառօտ բաներ ըլլալ։ Ա.սիկայ որչափ ալ
ենթագրուած ճշմարտութիւն մը սեպուի,
սակայն ճշմարտանման ըլլալովը՝ իրաւամբ

քննութեան առիթ եղած, ու գրեթէ ստոյգ սեպուած է։

Երկու տեսակ ազգային պատմական երգեր կային. ոմանք վիպասանաց երգք կը կոչուէին, ոմանք ալ երգք բռնկաց։ Ասոնք այլ և այլ տեսակ նիւթեր բովանդակելով, ոչ միայն մեր երկրին՝ այլ նաև Մարաց ու Պարսից և Ասորեստանեայց աշխարհին յատուկ աւանդութիւններ կը բովանդակէին։

Անոնց մէջ առաջին կը սեպուին այն երգերը՝ որոնց մէջ մեր քաջ թագաւորաց ու զօրավարաց արութեան ու նշանաւոր գործոց յիշատակութիւնը կ'ըլլայ. երկրորդ այն երգերը՝ յորս Մարաց և Պարսից վրայ խօսք կ'ըլլայ. և երրորդ անոնք՝ որոց մէջ Ասորեստանեայց աւանդութիւնները կը տեսնուին։

Առաջիններուն կարգէն է՝ Երուանդեան Տիգրանայ վրայ երգուածները, որ Հայկազն թագաւորաց մէջ ամենէն աւելի սիրելացեալն էր, ու ոչ միայն արտաքին ու ներքին բարեմասնութեամբ՝ այլ և իր քաջութիւններովն իր ժամանակին ազգային քերթողացը երգերուն և աշխուժին առիթ տուած։ Խորենացին՝ որ նոյն թագաւորին վրայ աքանչացողներէն մէկն է, կը պատմէ անոր ձեռքով Հայաստանի մէջ եղած տեսակ տեսակ բարեկարգութիւնները, Ցունաց ազգը հարկատու ընելը, Ադգամակայ հետ խնամեանալը, ու եարը անոր

քննութեան առիթ եղած, ու գրեթէ ստոյգ սեպուած է։

Երկու տեսակ ազգային պատմական երգեր կային. ոմանք վիպասանաց երգք կը կոչուէին, ոմանք ալ երգք դուկնաց։ Ասոնք այլ և այլ տեսակ նիւթեր բովանդակելով, ոչ միայն մեր երկրին՝ այլ նաև Մարաց ու Պարսից և Ասորեստանեայց աշխարհին յատուկ աւանդութիւններ կը բովանդակէին։

Անոնց մէջ առաջին կը սեպուին այն երգերը՝ որոնց մէջ մեր քաջ թագաւորաց ու զօրավարաց արութեան ու նշանաւոր գործոց յիշատակութիւնը կ'ըլլայ. երկրորդ այն երգերը՝ յորս Մարաց և Պարսից վրայ խօսք կ'ըլլայ. և երրորդ անոնք՝ որոց մէջ Ասորեստանեայց աւանդութիւնները կը տեսնուին։

Առաջիններուն կարգէն է՝ երուանդեան Տիգրանայ վրայ երգուածները, որ Հայկազն թագաւորաց մէջ ամենէն աւելի սիրելացեալն էր, ու ոչ միայն արտաքին ու ներքին բարեմասնութեամբ՝ այլ և իր քաջութիւններովն իր ժամանակին ազգային քերթողացը երգերուն և աշխուժին առիթ տուած։ Խորենացին՝ որ նոյն թագաւորին վրայ աքանչացողներէն մէկն է, կը պատմէ անոր ձեռքով Հայաստանի մէջ եղած տեսակ տեսակ բարեկարգութիւնները, Յունաց ազգը հարկատու ընելը, Ասժդահակայ հետ խնամենալը, ու եղբը անոր

բը եղաւ վահագն. և իր արուեստանոցը վրայ զարմացող Հայաստան աշխարհը և անոր դրացին Վրաստան՝ աստուածոց կարգը դասեցին պինդը։ Գողթան երգողաց ալ իր յիշատակին ընծայած գովաբանութիւններէն՝ հետևեալ տողերը պահած է խորենացին.

« Երիներ երկին եւ երկիր.
Երիներ եւ ծիրանի ծով.
Երին ի ծովուն ուներ զկարմրիկ եղեգնին։
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելաներ.
Ընդ եղեգան փող՝ բոց ելաներ.
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազեր.
Կա հուր հեր ուներ.
Ապա թէ բոց ուներ մեբոա,
Եւ աչկունքն էին արեգակունք »։

Այս երգը՝ իր ականջովը լսած է նոյն ինքն խորենացին, ինչպէս պատմութեանը մէջ կ՚աւանդէ։

Վահագնէն առաջ՝ Գողթան երգողաց քնարին ու քերթողական ոգւոյն առիթ տուած է Արտաշէս Ա։ Այս քաջ ու սիրելի թագաւորին կենաց այլ և այլ պարագաները՝ առատ նիւթ կրնային մատակարարել, ինչպէս արգեամբը ալ մատակարարած են նոյն ազգային քերթողաց։ Հետևեալ տողերը՝ պատառիկ կրնան սեպուիլ այն քերթուածոց, և որոնք մա-

սունք են անշուշտ ընդարձակ ոճով գրուած գեղեցիկ երկասիրութեան մը.

« Հեծաւ արի ալքայն Արտաշէս
Ի սեաւբն գեղեցիկ.
Եւ հանեալ զսակեօղ
Շիկափոկ պարանն,
Եւ անցեալ՝ որպէս զարծուի
Սըրաթեւ՝ ընդ դեան,
Եւ ձըգեալ զսակեօղ
Շիկափոկ պարանն՝
Ընկէց ի մէջք
Օրիորդին Ալանաց.
Եւ շատ ցաւեցոյց
Ըզմէջք փափուկ օրիորդին,
Արագ հատուցեալ
Ի բանակըն իւր »:

Այս գեղեցիկ ու ընտիր երգը՝ բանաստեղծական այլաբանութիւն մըն է այն դէպքին՝ զոր Խորենացին իր Պատմութեան գրոցը մէջ կ'աւանդէ: Արտաշէս հատաւ իր փափաքին. Ալանաց աշագեղ դուստրը՝ Սաթենիկ, որ իր երեսաց վայելչութեամբը՝ արիւնլուայ պատերազմաց մէջ գրաւեր էր քաջին Արտաշիսի սիրտը, Հայաստանի թագուհի եղաւ. ու արքայն՝ իր սիրոյն ու մեծութեանը և հարստութեան արժանի հարնիք մը ընել տուաւ անոր պատուոյն: Այս մեր խօսքին հաւաստարիմ

վկայութիւն են Գողթան երգողաց հետեւեալ տողերն.

« Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշէսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթենկան » :

Սակայն այսչափ փառքով, ու մարգըրտի ու ոսկւոյ վրայ կոխելով Արտաշէսի արքունիքը մտնող Սաթենիկը՝ նոյն արքունեաց մէջ միշտ բարեբաստութիւն չկրցաւ գտնել, ու ինչպէս պատմութենէն կ'երեւնայ, իր հասակը, դեղեցկութիւնն ու բարքը այլ և այլ հակառակամարտ կրից խաղալիկ եղան: Իր քաջութեամբը մերձակայ ու դրացի ազգաց սրտին մէջ վախ ձգող Արտաշէսը՝ չկրցաւ իր արքունեացը մէջ եղած խռովութեանց դէմն առնուլ: Նոյն ինքն Սաթենիկ՝ աւելի իր ներքին բերմանցը քան պարտուցը հնազանդելով, իր փեսային տանը մէջ Արտաշէսին դուրս անձի խնդիր ելլելով, քաջին Արգամայ, թէ զԱրտաշէս թագաւոր և թէ անոր որդիքը նախանձորդ ու թշնամի կը յարուցանէր ոչ միայն իր անձին՝ հապա նաև Արգամայ. ու մէկ կրթի մը պատճառաւ՝ բոլոր արքունեաց և աշխարհին խաղաղութիւնը տակնուվրայ կ'ըլլայ: Անշուշտ այս կիրքն ու սէրը կ'ակնարկէին՝ վիպասանաց երգերէն ծնացած այս տողերը.

« Տէնչայ Սաթինիկ տիկին տենչանս
Ջարտախայը խաւարտ եւ զմից հաւարծի
Ի բարձից Աղթամարայ » :

Այս երգին մէջ յիշուած Աղթաւանը՝ էր նա ինքն Աղթամ, որ իր իմաստութեանն ու քաջութեանը համար՝ Հայոց թագաւորներուն երկրորդը սեպուած էր, ու ատոնցմէ այլ և այլ պատիւներով և արտուներով փառաւորուած : Այսիկայ օր մը գթագաւորն Աբասէս իր կոչնոցը հրաւիրեց. և այն ուրախութիւնը՝ թշնամութեան առիթ կարծուելով՝ սպաննուեցաւ, ու թագաւորական հրամանով տունը տեղը այրեցաւ, և ընտանիքն ալ ջնջուեցան :

Աբասէս՝ Մարաց տղին գործութիւնը խորտակելէն ետքը, Հռոմմայեցւոց հարկ տալը դադրեցուց. Դոմիտիանոս կայսրն ալ զօրք ժողվելով՝ եկաւ Հայաստան. Բասեն գաւառին հովտացը մէջ երկու բանակներն իրարու զարնուեցան. և յաղթութեան պարծանքը Հայերը ժառանգեցին : Այն պատերազմին մէջ քաջութեամբը անուանի հանդիսացաւ Սմբատ, որուն համար կը գրուի Խորենացին, թէ ծերութեանը հասակին մէջ՝ պատերազմական արուեստին մատուցած փորձառութեամբը « երիտասարդապէս յարդարեաց և մղեաց զճակատն » :

Ասանկ քաջ պատերազմող մը իր արութեանցն ու սրտին արժանի դրուատան-

քը գտած կը ազգային երգոց մէջ, որոնք զարմանքով կը յիշատակէին իր տուած պատերազմները, ու հնացեալ հասակին մէջ՝ նոր զէնքերով Հայաստանի փրկութեան առիթ ըլլալը։

Մահը՝ որ աշխարհի տեսարանաց մէջ ամենուն վարագոյրը կը գոցէ, Արտաշիսի բազմափորձ կենաց տեսարանն ալ ալիսի գոցէր։ Վերջին անգամ աչուընները փակելուն ժամանակ՝ դեռ ևս կարօտ կը քաշէր իր հայրենեացը. կը փափաքէր կրկին տեսնել իր հայրենեաց վայելչութիւնը, ու այս սրտառուչ տողերը կ'արտասանէր, զոր Մագիսարոս իր ժամանակցացը բերնէն լսած է, և որ հնութեան ամէն հետքը կը կրէ իր վրան.

« Ո՛ տայր ինձ զծուխս ծխանէն
Եւ զառաւօտն նաւասարդի.
Զվազէն եղանց եւ զվագէն եղջերուաց.
Մէք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք»։

Անանկ մեռաւ Արտաշէս։ Սակայն իր քաջութեանցն ու հայրենասիրական ջանից երախտապարտ երևցաւ Հայաստան։ Անոնման թագաւորին մահը ազի արտասուօք լալէն ետքը, չատերը ժամանակին հեթանոսական սովորութեանը համեմատ չուզեցին իրմէն բաժնուիլ նաև ի մահուանն. ու ազէ ազէ ինքզինքնին կը թաղէին։ Արտաշիսին Արտաւազդ որդին՝ որ հօրը յաջորդեցաւ թագաւորութեան ներկայ էր, ու

Հոգը անոր թագաւորական աթոռը պիտի ժառանգէր, հօրը եղած այդչափ փառաց ու պատուոյն վրայ նախանձեցաւ. անոր դիակնացեալ մարմնոյն եղած պատիւն իրեն իշխանութեանը պզտիկութիւն մը ներ թադրեց, ու գժկամակելով մը բսաւ հօրը.

« Մինչ դու գնացեր, եւ վերկիցս ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակաց թագաւորեմ » :

Այս նախանձու արգասիք խօսքերուն վրայ նեզանալով Աբսաղէս՝ անիծեց զինքն ու բսաւ.

« Դու յորս հեծցես Ազատ ի վեր ի Մասիս,
Չքեզ կալցին քաջք, տարցին Ազատ ի վեր ի Մասիս.
Ընդ կացցես, եւ զլոյս մի տեսցես » :

Այս անէծքին հետեւանք կը սեպուին Աբսաւազդայ մահուան պարագաները, զոր ա ւանդած է մեզի պատմութիւնը :

Աբսաւազդայ ոչ միայն մահը՝ այլ նաեւ ծնունդն ալ առասպելեօք լի կը ներկայացընեն մեզի Գողթան երգիչը : Անոր անհանգարտ ու խռովայոյզ բարքը տեսնելով, որ անարժան էր արքունեաց, եւ մանաւանդ Աբսաղիսի արքունեացը, այլաբանելով կը գրուցէին թէ « վիշապազունք գողացան զմանուկն Աբսաւազդ, եւ զեւ փոխանակ եդին » :

Կարծես թէ Աբսաւազդայ կենաց այլ

և այլ հանգամանքը՝ կ'արդարացընեն վ-
պասանից այս քերթողական ենթադրու-
թիւնը։ Իր անձնահաճ ու նախանձոտ բար-
քովը բոլոր թագաւորական տունը տակն-
ուվրայ ըրաւ. իր հօրը սիրտը ցրտացուց
ԱՒՐգամայ, ու անոր պատիւը ինքը յա-
փըշտակեց, թագաւորութեան երկրորդա-
կան աթոռը։ Նախանձեցաւ նաև Սմբատ
սպարապետին վրայ, ու անոր եղած ար-
ժանաւոր պատուոյն չկարենալով համբե-
րել, եաեւէ եղաւ զինքն սպաննելու. բայց
իրեն վախճանին չկրցաւ հասնիլ։ Վասն
զի Սմբատ իմանալով անոր միտքը, թո-
ղուց Հայոց սպարապետութիւնը, ու Ա-
րեւտանեայց կողմերը գնաց իր բնակու-
թիւնը հաստատելու։

Ա.յսպիսի բարուց տէր Ա.րտաւազդը՝ չկրցաւ երկար ատեն վայելել իր թագա-
ւորական իշխանութիւնը։ Երկու տարիէն
ետքը Մասիս լերան վրայ որսալու ժամա-
նակ՝ մեծ ու խոր վհի մը մէջ ինկաւ։ Ա-
ռաջնէն ու երեւակայութիւնը՝ իրենց ա-
տելի թագաւորին անակնկալ կորուստը
ուրիշ կերպով մեկնաբանելով, զրուց-
ցին թէ Արտաշիսի անէծքը՝ որդւոյն վրայ
իրենց արդիւնքն ունեցան. վասն զի ա-
զատ Մասեաց քաջերը հասան, բռնեցին,
ու երկաթի շղթաներով կապկպելով, այ-
րի մը մէջ փակեցին զինքը. միայն իր
երկու հաւատարիմ շները չկրցան բաժ-
նուիլ իրմէն. այլ միշտ շղթաները կը կըր-

ձեն, զանիկայ բանտէն ազատելու համար։

Գողթան երգողաց հատուածներէն է նաև հետևեալ երգը՝ Վարդգեսի վրայ երգուած, որ առաջին Տիգրանայ քեռայրն էր, Աբրահմէդ քաղաքին հինուածքին համար։

«Հատուած գնացեալ Վարդգես մանուկն ի Տուհայ գաւառէն ըզՔասաղ գետով,
Եկեալ նըստեալ ՀՀրէշ բըլլով, զԱբրահմէդ քաղաքաւ, ըզՔասաղ գետով,
Կռիւ կոփել զդուռն Երուանդայ արքայի»։

Ասոնք են ահաւասիկ այն սակաւիկ՝ բայց մտադրութեան արժանի Գողթան երգողաց հատուածներն, զորս խորենացի աւանդած է մեզի իր ընտիր պատմական երկասիրութեամբը։

Քննենք ասոնց արուեստը։

Տարակոյս չկայ որ ասոնք արձակ գրութիւններ չեն. բայց միանգամայն և ոչ այն չափը ունին՝ որ ընդհանրապէս մեր շատ քերթող հեղինակաց յատուկ էր ու գործածական։ Ոչ յունական կամ լատինական արուեստին հետևած են մեր երգիչքը, որուն թերևս ծանօթութիւն ալ չունէին, և ոչ պարսիկ կամ արաբացի նմանաձայն չափուն՝ որ դեռ երևցած չէր. այլ հին ազգայ մէջ գործածական համեմատութեամբ ու թուականութեամբ վարուած, իրենց այս երգերուն մէջ։ Ասանկ

ևն ընդհանրապէս երբայեցւոց բանաստեղծական սքանչելի հատուածներն՝ որ սուրբ գրոց մէջ կը տեսնուին։ Եւ թէ որ այս երկու աղգաց մէջ ինչուան հիմայ մնացած բանաստեղծական հատուածները քննութեան առնունք, խիստ մեծ նմանութիւն մը կը տեսնենք արուեստի. այն արուեստին՝ զոր բնութիւնը սորվեցուցած է այս աղգերուն։ Անոնց քերթուածոցը մէջ գործածուած Զուգականութիւնն ու Համեմատութիւնը կը տեսնուի նաև մեր քերթողաց երգերուն մէջ։ Մեր այս խօսքին ապացոյցը յայտնապէս պիտի նկատենք եթէ ուշնանք այս երկու աղգաց մէ մնացած բանաստեղծական հատուածները իրարու հետ համեմատել։ Պիտի լսենք մեր Գողթան երգերը որ կը զրուցեն.

« Երկնէր՝ երկին եւ երկիր,
Երկնէր եւ ծիրանի ծով...
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր »։

ու գիսապելացիս՝ որ կարմիր ծովուն վրա տանգէն ազատած, թմբուկներով ու պարերով կ'երգեն.

« Ա՛ղ քոյ ջաեր՝ փառաւորեալ է՝ զօրութեամբ իւրով.
Ա՛ղ քոյ տերո՝ խորտակեաց զթշնամին...
Պաղեցան որպէս պարիսպք՝ ջուրք,
Պաղեցան ալիք ի մէջ ծովուն »։

Յարձակալ Դերեվրայ օրհնութիւնը մէջ.

« Տէր, յերանեալ քոյ ի Սիբոյ,
Եւ ի չուել քումմ յանդաստանացն Եդոմ-
մայ,
Երկիր շարժեցաւ, եւ երկինք խոռվեցան.
Լերինք շարժեցան յերեսաց Տեառն Ելոհայ
Սինայի,
Յերեսաց Տեառն Աստուծոյ Իսրայէլի » :
Կապուտ երանգոյն Սիսարայ,
Կապոյտ երանգոյն դոյնագոյն նկարուց,
Նարօտ պէսպէս նկարուց,
Աչն էր պարանոցին նորա կապուտ » :

*Այս երգոյը չափուն մէջ թէպէտ եւ կա-
տարեալ ազատութիւն մը կը տեսնուի,
բայց տարակոյս չկայ որ այն ազատու-
թիւնն ալ իւր քերթողական չափուն մէջ
մնալու համար սահման մը ունեցաւ, որ
մեզի համար դեռ բացայայտ չէ :*

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ԴՐԱՒՈՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԲԱՍ ԿԱՏԻՆԱ

(149 Քրիստոսէ առաջ)։

Մեր գրաւոր մատենագրութեան հայրը՝ Մարիբաս Կատինա Աստրին կը սեպուի։ Հայկազանց թագաւորութեան վերջ ուելէն ետքը, Հայաստան իր բնիկ իշխաններէն զրկուած՝ բարեկարգութիւնը կը կորսընցընէ, ինչուան որ անոր թագաւորական գահոյից վրայ կ'ելլէ Վաղարշակ Արշակունին՝ եղբայր մեծին Արշակայ Պարթեւի, որ իր իշխանութեան գործաւոր բազուկը ինչուան եփրատ և Աստրեստան տարածելով՝ տիրեց նաև Հայոց աշխարհին, և յանձնեց Վաղարշակայ, պատուիրելով որ ամէն փոյթ և խնամք աներնայ այն երկրին բարօրութեանը համար։

Վաղարշակ իր եղբօրը խրատուցը հետեւելով՝ սկսաւ մէկ կողմանէ իր զէնքերովը Հայաստանի սահմաններն ընդարձակել, մէկալ կողմանէ անոր վրայ երբեմն վազող թշնամիքը հալածել։ Անոր բարեկարգութեանն համար ունեցած փափաքովը ուզեց միանգամայն գիտնալ Հայոց ազգին սկիզբը՝ որուն վրայ կը թագաւորէր. ու հրամայեց որ փնտռուի հին ազգային պատմութիւն մը նոյն իսկ Հայաստանի մէջ։ Սակայն իր ջանքն ընդունայն եղաւ. այն աշխարհին մեծ և երկայն յեղափոխութեանց համար՝ հարկ էր որ օտար ազգաց գիւաններուն մէջ փնտռել տայ իր ուզածը. ու այս վախճանաւ գտաւ Մարիբաս կամ Մար Աբաս Կատինա անունով խմաստուն և սրամիտ ասորի մը, քաղդէական և յոյն լեզուաց հմուտ, և ղրկեց ՚ի Նինուէ ընծայութեան նամակաւ մը՝ իր Աբջակ եղբօրը, որպէս զի հրամայ տայ բանալու անոր հետախոյզ աչացն առջև Նինուէի մատենադարանը, որպէս զի կարենայ իր փափաքելին գտնել։

Կարդաց Աբջակ իր եղբօրը գրած թուղթը, և զուարճ անոր խնդիրքը։ Հրամայեց բանալ Մարիբասայ առջև Նինուէին արքունական մատենադարանը. ուր գտաւ Մարիբաս գիրք մը յունարէն գրով ու այսպիսի վերնագրով. «Ա յս մատեան՝ հրամանաւ Աղեքսանդրի ՚ի Քաղդէացւոց բարբառոյ փոխեալ ՚ի յոյն, որ ունի ըզբուն հնոյն և զնախնեացն բանս»։

Այն գրքին մէջ գտաւ Մարիբասն՝ վաղարշակայ փափաքանօք խնդրած պատմութիւնը, Հայկայ օրերէն գրեթէ ինչուան Աղբասանդրի ժամանակ. և գրելով յոյն և ասորի լեզուով՝ բերաւ ի Մծբին, վաղարշակայ յանձնեց։ Թագաւորն ալ չափէն աւելի ուրախանալով՝ հրամայեց որ իր գանձարանին մէջ պահուի ամենայն զգուշութեամբ. և անոր մէկ մասն ալ՝ արձանի վրայ գրուի։

Մարիբասայ գիրքը ձեռուընիս հասած չէ։ Սակայն բարեբաղդաբար՝ մեր հինգերորդ դարու մատենագիրն Մովսէս Խորենացի Հայոց պատմութիւն մը չարադրելու առնեը կարգայ գայն, և ոչ միայն անոր հետևեցաւ, հապա նաև քանի մը եւրևելի հատուածներ թարգմանելով՝ մեզի հասուց։ Այս հատուածներն ընտիր ու հնագոյն գանձեր սեպելով ազգային գրականութեան՝ կ'արժէ որ ամբողջ օրինակենք։

Խորենացին Մարիբասայ ջանիցը անօգուտ չըլլալը ու գտած արքունի գրոց մէջէն քաղածը՝ վաղարշակայ յանձնելուն պատմութիւնն ընդհէն եաբը, կ'աւելցընէ նաև գրքին սկզբնաւորութիւնը, որ էր այսպէս.

« Ահեղք և երեւելիք առաջինքն'ի գիցն, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդութեան։ Եւ'ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն, անհեղեղք, յորմէ

անգամ մարմնով և վիճաբանք. որք յղացեալ ամբարտաւանութեամբ ծնան զամբարիշտ խոր. հուրդ աշտարակաշինութեանն, և՝ ի նոյն լինէին՝ ի գործ անկեալք. յոր հողմ ահագին խն և տա. տուածային շնչեցեալ՝ ի դիմի ցամաքեն, ցրէ զամ. բարտաւն, և մարգկանն անլուր բարբառս խա. քանչիւր ումք բաշխեալ, տմտուկ չիմանի՝ ի մէջ արկանէին: Յորոց մի էր և յապետութենէն Հայկ, անուանի և քաջ նախարարն, կորովագին և հասա. ստղեղն »:

Գրքին սկզբնաւորութիւնը գնելէն ետ. քը, խորենացին խօսքը կը դադրեցընէ. որովհետև, կ'ըսէ, մեր կամքը ամբողջ պատմութիւն մը չարագրել չէ, հապա միայն ցուցընել մեր բուն նախնեաց ծա. գումը, զոր նոյն գիրքն կը ցուցընէ այս. պէս. Յապետոսէ, Մկրտդ, Սիրաթ, Թակկադ, որ է՝ Յաբեթ, Դամեր, Թիրաս, Թորգոմ: Ետքը, նոյն ժամանակագիրը խօսքը առաջ տանելով՝ կը գրուցէ. Հայկ, Արմենակ, և անոնցմէ ետքը եկողները վերջէն Հայկայ գեղեցիկ պատմութիւնը բուն իսկ Մարիբասայ խօսքերով մէջ կը բերէ.

« Ա՛յս, ասէ, Հայկ գեղապատշաճ և անճնեայ, քաջագանդուր, խայտաին և հասատաբաղուկ. սա՝ ի մէջ սկսանիցն քաջ և երեւելի լեալ, ընդդիմա. կաց ամենեցուն, որ ամբառնային զձեռն՝ միապե. տել՝ ի վերայ ամենայն սկսանիցն և դիւցազանց: Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բըռ. նաւորութեանն Բելայ, ՝ի տապածանել ազգի

Մարդկան ընդ լռնութիւն տմենայն երկրի, ի մէջ բազմակոյս սկսեցին, անհուն խօսել և ուժաւորաց: Քանզի անդ մոլեգնեալ այր խրաքանչիւր սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով, չանային տիրել ի վերայ միմեանց. ուր պատահմունք ի գետ ելանէին Բելայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր: Որում ոչ կամեցեալ Հայկայ՝ հնազանդ լինել Բելայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ ի Բաբելոնի, չուս արարեալ գնայ յերկիրն Արարատայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դաւերօք և որդւոց որդւովք, աբամիք զօրաւորօք՝ Թուով իբրև երիքհարիւր, և այլովք ընդոծնօք, և եկաք յարեցելովք ի նա, և բոլոր աղխիւ: Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ անդ աւան բնակութեան կալուածոց, և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արմանեկայ»:

Խորենացին այս հատուածը մէջ բերելէն ետքը՝ կը յաւելու. «Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ գրոցս»: Որով անշուշտ կ'ակնարկէ կամ Ղեմպիոդոր փիլիսոփային ազատմած աւանդութեանց, (զորս ինքն նախ կը յիշատակէ), և կամ ուրիշ հին աւանդութիւններու, որ բերնէ բերան անցնելով մինչև Խորենացւոյն ժամանակ հասած էին: Ետքը դարձեալ Մարիրասայ զրածը կը թարգմանէ.

«Եւ ինքն խաղայ այլով աղխիւն ընդ արեւմուտս հիւսիսոյ. գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտակին

Հալիք, այս ինքն, ասասին բնակեալքս՝ ազգի տանն Թորգոմայ: Ընկեր և գիւղ մի, և անուանի յիւր անուն Հայկաշէն:

« Ի հասատատել տիտանեանն Բելոյ զԼեռատաւրուԹիւն իւր առ ամենեսեան, առաքէ՛ի կոչին հիւսիսոյ զմի ումն յորդւոց իւրոց առ Հայկ՝ արամբք հատատարմօք գալնմա՛ի հնազանդուԹիւն և կեալ խաղաղուԹեամբ: Բնակեցեր, ասէ, ՛ի մէջ ցրտուԹեան սառնամանեաց. այլ ջեռուցեալ մեղիկս գցրտուԹիւն սառուցեալ քո հալատացեալ բարուդդ, և հնազանդեալ ինձ՝ կեաց՛ի հանգարտուԹեան, ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակուԹեան: Եւ ՛ի բաց գարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բելոյ, խոստուԹեամբ պատասխանեաց: Դառնայ առաքեալն անդրէն ՛ի Բաբելոնէն:

« Ապա զօրաժողով լինի ՛ի վերայ նորա տիտանեանն Բել ամբոխիւ հեռաւակ զօրաց, գայ հասանէ ՛ի հիւսիսի յերկիրն Արարատայ մերձ ՛ի տունն Կադմեայ: Փախստական լինի Կադմոս առ Հայկ, քաջընԹացիկս առաջի իւր առաքէ. Դիտեա, ասէ, ով մեծդ գիւցազանց, զի դիմեալ գայ ՛ի վերայ քոյ Բէլ յաւերժիւք քաջօք, և երկայնադիզօք հասակօք սկայիւք մրցողօք. և խնացեալ իմ զմերձ լինելն նորա ՛ի տուն իմ, փախեայ, և գամ աւասիկ տագնապաւ: Արդ աճապարեա խորհել որ ինչ գործելոց ես:

« Իսկ Բէլն՝ յանդուգն և անձնանի զօրուԹեամբ ամբոխին՝ որպէս յորձան ինչ տատասիկ ընդ գառիվայր հեղեալ, փուԹայր հասանել ՛ի տահմանս բնակուԹեան Հայկին, ՛ի սերտ և ՛ի մարմին վըրտահացեալ արանց զօրաւորաց: Առտ ուշիմ և խոհեմ սկայն, քաջագանգուր և խայտակն, աճապարեալ հաւաքէ զօրգիս իւր և զԹոռունս, որս քաջս և ազեղնաւորս, Թուով յոյժ նուազունս, և զայլ ևս որ ընդ իւրով ձեռամբ. հասա-

նէ յեկաւ ծովակի միոյ, որոյ ազի էին ջուրքն, մա-
նուանս ունէլով Գիւնէսաթ։ Եւ կոչեցեալ
զզօրս իւր ասէ ցնոսա. Յելանեմք մեր հանդէպ
ամբոխին Բէլայ, պիտեալ զանասցուք տեղւոյն՝
ուր անցեալ կայ ի մէջ խառն քաշացն Բէլ։ Ջի
համ մեռցուք, և ապն մեր ի ծառայութիւն Բե-
լայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց
ի նա ցուցեալ, ցրուեսցի ամբոխն, և մեք եղից-
ուք յաղթութիւն տասցեալք։

« Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ տասա-
բէզս՝ հասանէին ի միջոց էնչ դաշտաձև լերանց
բարձրագունից. և յայմմէ ջուրքն հոսանաց ի
բարձրաւանդակութեն կուռ կալով ի տեղւոջ. ի
վեր վերելս ամբարձեալ, երևեցաւ նոցա բաղ-
մութիւն անկարգ հրոսակի ամբոխին Բէլայ ցան
և ցիր յանդուդն յարձակմամբ ընդ երեսս եր-
կրին սուրալով. իսկ Բէլ հեզ և հանդարտ ամբո-
խիս մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ոտոյ միոյ
էրդև ի գետանցին։ Ծանեաւ Հայկ զնուագիր վա-
ւելոյ ջնկատին, յորում Բէլ առաջի ամբոխին
եկեալ հասեալ ընտրելոք և վաւելովք ամմէքք. և
երկար միջոց ձանապարհին ընդ նա և ընդ ամ-
բոխն. և ինքն զվանոց ազուցեալ երկաթի, նա-
նաւորաք վերջօք, և սախատակս պղնձիս թիկանց
և լանջաց, և պահպանակս բարձից և բազկաց.
զօսեւորեալ զմէքն, և յահեկէ զաւնին՝ երկայ-
րի. և նիզակին արի ի ձեռին իւրում աջոյ, և յա-
հեկեանն վահան, և ընտիրք յամմէ և ի ձախմէ։
Եւ սեպեալ Հայկին զսիսաձեռանն կուռ վառեալ,
և զարս ընտիրս ընդ նմա, աջմէս և ահեկինս, կար-
գէ զԱրմինակ երկու եղբարբք ընդ աջմէ, և ըզ-
Կադմոս և զայլս երկուս յորգւոց իւրոց ի ձախ-
մէ, զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր. և
ինքն առաջի, և զայլս հրոսակին զինի իւր կար-
գեաց. երեքհարիւրեակն իմն կարգեաց ձեռ, հան-
դարտ յառաջ մատուցանելով։

« Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ՚ի միմեանս, ահագին զղրդիւն ՚ի վերայ երկրի առնէին շահասահելովն, և ահս սպառնացանոցս տալոյ զարձակմանցն զմիմեամբք արկանէին։ Այլ ոչ սակաւք յերկոցունց կողմանց սկայիցն ալք յաղթանգամք բերանոյ սրոյ դիպեալք, տապալ յերկիր կործանէին. և մարտն յերկոցունց կողմանց մեայր անպարտելի։ Զայսպիսի անակնկալ դիպուած տարակուսանաց սեպեալ արքայն Տիտանեան՝ զարհուրեցաւ, և ՚ի նոյն բլուր՝ ուստի էջն՝ վերջանեալ էանէ. քանզի խորհէր ՚ի միջոցի ամրանալ ամբոխին, մինչև հասցէ բովանդակ զօրն, ղի միաբանգամ Ճակատ յօրինեսցէ։ Զայս իմացեալ ապերնատորին Հայկայ, յառաջ վարէ զինքն, մեծ հասանէ յարքային, լի քարշէ պինդ զայնալիճն, դիպեցուցանէ վերիքթևեանն կրծից տախտակին. և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն. և այսպէս Ճոխացեալն տիտանեան կործանի՝ յերկիր զարկուցեալ, և փշէ զոգին։ Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեանն, փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց։ Եւ վասն այսորիկ այսչափ բովանդակ լինի ասել։

« Բայց զտեղն Ճակատուն շինէ գաւառակերա, և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ տղագաւ և գաւառն այժմ անուանի Հայոց ձոր։ Իսկ բլուրն, ուր քաջամարտ կռքն անկաւ Բէլ, անուանեաց Հայկ Գերեզմանս. որ այժմ ասին Գերեզմանք։ Բայց զղեակն Բէլայ պաճուճեալ իմն դեղովք, հրամայէ Հայկ տապնել՚ի Հալք, և թաղել՚ի բարձրաւանդակ տեղւոջ ՚ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց »։

Հայկայ պատերազմին ետքը՝ ուրիշ զանազան բաներ ալ կը պատմուին, կ՚ըսէ

Խորենացին այն գրքին մէջ. բայց մենք մեր հաւաքմանը հարկաւոր եղածները մէջ բերենք. ու կը սկսի իրեն համառօտ ոճովը քաղել Մարիբասայ գրոցը մէջէն կարևոր և մտադրութեան արժանի սեպածները։

Խորենացւոյն պատմութիւնը՝ այլ և այլ արևմտեան լեզուներով եւրոպական գիտնոց ծանօթանալէն ետքը, անոնց երկար և խուզարկու հետազօտութեանց նիթ եղաւ. մէջերնէն չատերը՝ Ֆրերէի օրուընէն ինչուան մեր ժամանակս Գագրըմէր հմուտ արևելագէտը՝ Մարիբասայ պատմութիւնը սուտ հաններու աշխատեցան. ինչուան ոմանք անոր գոյութիւնն ալ ժխտեցին. և թէպէտ ազգային բանասէրք, և մանաւանդ հմուտ հայագէտն Տիլլորիէ, անոնց կարծեացը դէմ մաքառեցան, բայց անոնց տարակոյսները բոլորովին ցրելու բաւական չեղաւ բերած պատճառնին։

Մենք հակառակորդաց քանի մը պատճառներն յիշատակենք, որոնցմով կ'ուզեն Մարիբասայ գոյութիւնը ժխտել կամ տարակուսի տակ ձգել։ Նախ կ'ըսեն թէ հին Նինուէ կործանած էր, և հաւատալի չերևնար որ Պարթևաց և Սելևկեանց պատերազմին առեն Ասորեստանեայց նոր տէրութեան մը մայրաքաղաք ձևացած ըլլայ։ Դարձեալ կ'ըսեն թէ Ալեքսանդր ոչ ժամանակ և ոչ ալ կամք ունեցած ըլլայ

քաղդէականէն՝ իւրոյն Թարգմանելու պատմական վիրք մը. Մար Իւսա Կատինային անունն ալ՝ Աբրահամ ժամանակին չվերադարձիր, կ՚ըսեն, այլ բառերուն կազմութենէն կ՚երևնայ Աստուծոյ քրիստոնեական ժամանակի անուն: Այս պատճառներով՝ զՄովսէս Խորենացի խաբեայ կամ խաբուած կը համարին այս եւրոպացիք, և թէ կարծեցեալ Մարիբասեան վիրքը՝ Բիւրոսոսի գրուածին մէկ օրինակը պիտի ըլլայ անշուշտ: Գագրըմէրի հեաւոդք ալ կը համարին թէ եդեսական գպրոցին վերաբերող Աստուծ մը գրուածք է Մարիբասայ պատմութիւնն, որ Խորենացւոյն ձեռքն անցած է, և իբրև հաւատարիմ պատմիչ մը կարծուեր է:

Առանց կարծեացը դէմ ելած է Ֆիլըրիէ, ցուցընելու թէ Մարիբասայ գրուածքը՝ յիրաւի ըստ աւանդութեան Խորենացւոյն՝ վաղարշակայ առեն գրուած են, և թէ անկարելի չէ՝ որ Նինուէի դիւաններն Սեղեւկիացւոց ձեռքէն Պարթեւաց թագաւորներուն ձեռքն անցած ըլլան, և հոն իմաստուն ասորին հանգիպած ըլլայ այդ գրքին: Եւ ցուցընելու համար թէ Մարիբասայ անունը կրնար Քրիստոսէ առաջ ալ գործածուած ըլլալ, Աբգարու և Քրիստոսի ժամանակակից Մար Իհաբ անուն մը կը յիշատակէ. վասն զի Մար՝ Տէր բան է, որ ամէն պատուաւոր անձանց ալ կը տրուի:

ՄԱՐԻԲԱՍԻՆ ԻՆՁՈՒԱՆ ՁՈՐՐՈՐԴ ԴԱՐ

Վաղարշակ՝ որ Հայաստանի թէ քաղաքական թէ ուսումնական բարգաւաճանացը վոյթ ունեննալով՝ Հայոց առաջին և ընտիր պատմիչը երևցուց, յամենայնի իրեն արժանի յաջորդ չունեցաւ. Արշակ, Արտաշէս, Տիգրան, իրենց վարքն ու վճռութիւնը՝ աւելի հարստութեան և երկրակալութեան վրայ դրած ըլլալով, անոնց համար յոգնեցան. և իրենց զէնքերուն ուժովը համբաւնին բոլոր աշխարհը, ու վախերնին մերձակայ ազգաց վրայ տարածնցին։

Տիգրանայ յաջորդն Արտաւազդ Ա., և թէ իր նախնեացը պատերազմասէր աշխոյժն ալ ունէր՝ բայց ոչ յաջող բազդը, Հայոց պատմութեան մէջ գրեթէ անօրինակ դէպքով մը՝ ոսկի չղթաներով կապկըպած Հռովմայեցւոց ձեռքը գերի կ'իյնայ. Թագաւորկ գլուխը՝ իր օտարութեան ու ամօթոյն ցաւերը մեղմացընելու միակ հնարք՝ բանասիրութիւնը կը գտնէր, անոր անոյշ զբաղմանցը մէջ իր ձախող բազդին վիշտերը թաղելով։ Պլուտարքոս կ'աւանդէ թէ իր գերութեանը մէջ այլ և այլ թատերական քերթուածներ չա-

բագրած է Աբուսաղդ, որոնք ժամանակցացը առջև մեծապէս յարգի եղած են։

Աբգար՝ Աբուսաղդայ յաջորդ Աբջարին որդին՝ արքունական աթոռը նստած օրէն Աշագ այր կոչուեցաւ, ու իր խելքովն ու իմաստութեամբ այնչափ հաճոյացաւ Օգոստոս կայսեր, որ չէր ուզեր զանիկայ Թողուլ քովէն։

Աբգարու Հռովմ եղած ատենը՝ այն համբաւաւոր քաղաքը ոչ միայն քաղաքական, այլ նաև ուսումնական փառաց լըրման մէջ էր։ Հռովմէական մատենագրութեան ոսկեդարն էր այն ժամանակը. ու Աբգարու սուր և թափանցող միտքը տեսաւ ու նախանձեցաւ վրանին, ու զՀայաստան ջանաց հետևող ընել անոնց։ Անոր համար իր թագաւորական աթոռը դառնալէն ետքը՝ Եդեսիա քաղքին մէջ տիեզերահռչակ դիւան մը բանալ տուաւ. հոն փոխադրել տուաւ Մծբին քաղաքին ամէն դիւանական մատեաններն. նոյնպէս ալ Պոնտացւոց Ամինոպ քաղաքին ամենահին պատմութեանց գրքերը։

Այս դիւանը՝ Երուանդայ երկրորդի օրով ալ աւելի ճոխացաւ, երբոր Հայք Հռովմայեցւոց հարկատու եղան, ու անոնց կողմանէ գրուած կուսակալներն ջանացին զարգարել զայն. որովհետև Յեդեսիա՝ իբրև 'ի միջավայրի հաստատած էին 'ի Հայոց, 'ի Միջագետաց և յԱսորւոց ժողովելիք հարկերը. ուստի հոն ժողվել

տուին ուրիշ գլխաւոր քաղաքաց հարկե-
րուն գիւաններն ալ։ Եդեսիոյ գիւանը՝
ինչուան Քրիստոսի հինգերորդ դարը սըր-
բավայր մը սեպուած էր ամենայն ազգաց
խմաստնոց. գիտութեանց մէջ ծերանալու
փափաքող մտքեր՝ կ'ախորժէին հոն անցը-
նել իրենց օրերը։ Հոն Յուլիոս Ափրիկա-
նոս մեծանուն ժամանակագիրն կ'երթար
« գաղափարել որ ինչ՝ ի քարտէզս այնր
գիւանին յաղագս Թագաւորացն առաջին
ժամանակաց և գործոց նոցա »։ Հոն Սե-
բերիանոս եմեսացի և Պրոտոգենէս քա-
հանայն վարժուող և վարժիչ կ'ըլլային։
Հոն կ'երթար նաև Եւսեբի կեսարացի, որ
և կը վկայէ Եկեղեցական պատմութեանը
մէջ թէ ինչ որ Աբգարու վրայ գրած է,
բոլորն ալ Եդեսիոյ գիւանէն քաղած է։
Հոն սուրբն Մեսրոպ ալ՝ հայ գրոց գիւտէն
ետքը՝ իւր աշակերտացը մէջ երկու գլխա-
ւորներն կը ղրկէր, զԵզնիկ և զԳովսէփ
պաղնացի, որ օտար գրով գրուծուած դըր-
քերը հայերէնի դարձընեն։

Հոս միայն չսահմանուիր Աբգարու ու-
սումնասիրական եռանդը։ Քրիստոսական
լուսոյն ճշմարտութիւնն ընդունելէն ետքն
ալ՝ նոյն սուրբ կրօնքը հաստատուն դոր-
ծելու համար՝ ուրիշ հնարքներէն զատ՝
սուրբ գրոց ասորի թարգմանութիւն մըն
ալ ընել տուաւ, զոր մեր յետագայ պատ-
միչք, և մասնաւոր կերպով Վարդան, կը
յիշատակեն։

Սակայն Աբգարու մահուընէն ետքը՝ կրօնական ու քաղաքական յեղափոխութիւնք տակնուվրայ ըրին զՀայաստան։ Անանէ ու Սանատրուկ իրենց հօրն ու մօրեղբօրը հաւատքը արհամարհելէն ետքը՝ զէնքերնին ալ իրարու դէմ կը դարձընեն. Սանատրուկ իր հակառակորդէն զօրաւոր և երկարակեաց բլլալով, բոլորովին քաղաքական չինութեանց ու Մծբին աբգունի քաղաքը զարգարելու զբաղեցաւ։ — Իր որդւոյն Բ. Աբտաշիսի ատեն՝ բոլոր Հայաստան կերպարանափոխ բլլալու վիճակի մը մէջ կը մտնէ. այդ մեծ և սիրելի թագաւորը՝ Հայաստանը ելլադա, Լատին մը դարձընելու փափաքով վառուած անձ մըն է. «Թէպէտ և կարգք և սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան ի վաղարշակայ և յայլոց առաջնոց թագաւորացն, այլ ի մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին, կ'ըսէ Խորենացին. զբարթուց ասեմ և զամանց և զտարեաց բոլորմանց։ Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Աբտաշիսի»։ Իրեն խաղաղական իշխանութեանը ժամանակ՝ ազգային ոգին մեր մատենագրութեանը մէջ առաջին տեղը բռնեց. բանաստեղծութիւնն՝ միւսանգամ իր աչքառնչն ու թռուիչքը թագաւորական գահէն կ'առնուր։ Թագաւորին որդւոցը մէկը, աբգունի հարսպետեան վրայ, նշանաւոր բանաստեղծ մըն էր. և թերևս հայկական վիպասա-

նութեան չարագրոզաց մէկն, որ երգից Աբրաշխի երջանիկ օրերն, և անոր հըռչակաւոր Սմբատ սպարապետին քաջութիւններն։ Ասանկ ալ Աբրաշխի միւս որդւոց մէկը՝ Մաժան, որ մեհենաց վրայ վրակոյս դրուած էր, և Անի քաղաքին մէջ եղած Աբամազդայ մեհենին քրմապետը՝ հաւանականաբար չարագրող է նաև մեհենական պատմութեանց։

Աբրաշխի յաջորդաց առնէն ինչուան Տրդատայ ժամանակը, հեթանոսութիւնն՝ քրիստոսական կրօնից դէմ վերջին ուժով պատերազմել կ'երևայ։ Հայաստան՝ անոր երկնաւոր լուսոյն առջև արդէն սաստնակ՝ իր հին կրօնքը հաստատուն պահելու համար ունայն աշխատանքներէ վերջը կը յաղթուի, ու այն երջանիկ յաղթուելուն պարտական է իր փառքն ու մեծութիւնը։

ՔԱՆԻ ՄԸ ՄԱՏԵՆԱԴԻՐՔ

Ա.բգարէն ինչուան Լուսաւորիչ, երկար դարու միջոց, քանի մը մատենագիրք ե. րեւցան Հայոց մէջ. կամ թէ աւելի ճիշդ խօսելով, հաւանաբար այնպիսի բարե. կարգ թագաւորութեան մը մէջ ծաղկող մատենագրաց՝ միայն մէկքանիին անուան. քը հասան մինչեւ առ մեզ։

Ա.սոնց մէջ գլխաւոր է

ՈՒԼԻՒՍ կամ Ուլիմպիոս քուրմ, Պար. սից Դարեհ Վողոգէսի ու մեր Ա.րտաշիսի թագաւորութեան առեն ծաղկած։ Հանի կամ Անի ամրոցին մեհենական պատ. մութիւնը չարագրեց Ուղիւս, յորում աւանդած էին Դարեհի և Ա.րտաշիսի թա. գաւորութեան ժամանակաց դէպքերը. և կ'երեւնայ թէ անոր գրուածներէն քա. զած է Խորենացին՝ ինչ որ Ա.րտաշիսի վրայ կը պատմէ. վասն զի անոր պատ. մութիւնն ըրած ժամանակ՝ կը յաւելու. «Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ու. լիւս քուրմ Հանւոյ, գրող մեհենական պատմութեանց, և զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի»։ Նոյնպէս Հա. ւանական կ'երեւնայ թէ Եւսեբիոս ալ Ե. զնիոյ գիւանին մէջ հանդիպեր է ասոր գրուածքին։

ԲԱՐԴԱՃԱՆ ԵԴԵՍԱՑԻ. Անտոնինոս կարակալլա կայսեր առենն էր Բարդաճան, որ ինքզինքը ուսումնական զբաղմանց տուաւ, ու եղաւ՝ ինչպէս կը վկայէ Եւսեբիոս, այր կորովի բանիւք, յաջողակ ի գրուածս, և հայկական ուսմանց և գիտութեանց ալ ոչ անտեղեակ։

Առաջ՝ հաւատարիմ եկեղեցւոյ վարդապետութեանցը, իր զօրաւոր լեզուն ու ճարտասանութիւնը անոր պաշտպանութեանը գործածած էր. և այն գրչով ու սրտով՝ որոնց վրայ կը զարմանային սուրբն Հերոնիմոս, Ագոսթինոս և Նիկեփոր, ամբչցուցած էր Ասորւոց աշխարհին մէջ իր ժամանակին բազմաթիւ հերետիկոսները։ Բայց կենացը վերջի տարիները՝ ինքն ալ մոլորական վարդապետութեանց մէջ ինկաւ, վաղենտինեանց աշակերտելով։ Հայաստան ալ եկաւ Բարդածան, յոյս ունենալով զոմանս աշակերտելու իրեն. բայց տեսնելով թէ ընդունայն է աշխատանքը, Անի ամրոցը գնաց, ու հոն մեր ազգին մեհենական պատմութիւններն ու առաջին թագաւորաց գործերն կարդալով, յաստրի լեզու թարգմանեց զանոնք. ու այլ և այլ թագաւորական դիւաններէ զանազան տեղեկութիւններ ժողվելով, պատմական գործ մը շարադրեց, զոր ետքը իրեն աշակերտեալքը՝ յունարէնի դարձուցին, և Եդեսիոյ դիւանին մէջ պահուեցաւ։

Թէ Եւսեբիոս և թէ ուր խորենացին՝ իրեն գրուածներէն կը քաղեն այլ և այլ ժամանակակից դիպուածոց յիշատակութիւններ. ինչպէս ինքը Մովսէս ալ կը վկայէ թէ անկէ առած է Ս. Պատարագի օրուընէն՝ ինչուան խոսրովու Տրդատայ հօրն ժամանակի եղած դէպքերը:

ԽՈՒՈՀԲՈՒՏ. Նոյնպէս՝ի խորենացւոյ յիշատակուած, ու միայն անուամբը միայն ծանօթ մատենագրաց կարգէն է նաև խուոհբուտ, Պարսից Շապուհ Թագաւորին դպիրը, որ Քրիստոսի 362 Թուականին Յուլիանոս Ուրացողին ձեռքը դերի ինկաւ, ու անոր ուրիշ արքունի պաշտօնակալացը հետ Յունաստան անցնելով՝ քրիստոնէութիւն ընդունեցաւ, ու եղիազար կոչուեցաւ: Հոն Բարսումա անունով Ասորւոյ մը, զոր Պարսիկք Ռաւսոսհուն կը կոչէին, մէկ դիրքը՝ի յոյն Թարգմանեց:

Պատմական գրուածք մըն ալ չարագրած է խուոհբուտ, որուն համար կը վկայէ խորենացին թէ Շապհոյ, Յուլիանոսի և խոսրովու գործերը ուանդոզ ուրիշ պատմադիրներէն աւելի ստուգապատում է, թէ պէտ և գոնուին իր գրոցը մէջն ալ այլ և այլ առասպելներ թէ Պարսից և թէ Հայոց վրայ: Այս առասպելներէն մէկ քանին կը յիշէ խորենացին իր պատմութեանը մէջ. «Անհաղի է մեզ, կ'ըսէ, այժմ երկրորդել զառասպելսն յաղագս երազոյն փոփագոյ, և արտադատութեան հրոյն

մանուածոյ՝ որ ի Սասանայ, և պատուոյն դէօսիւն, և լուսնակն, և ախտարմոզացն յառաջասացումն, որ են քաւեցայք. և որ ինչ զկնի այսորիկ. և պռոնկական խորհուրդն Աբրասէրի հանդերձ սպանութեամբք, և անմիտ հանճարաբանութիւն մոգին դասեր վասն նոխազին, և որ ինչ այլն ամենայն։ Նաև այծին գիւեցումն մանկանն ընդ հովանեաւ արձոյն, և գուշակումն ագռաւուն, և զերապանծին պահպանութիւն առիւծուն հանդերձ արբանեկութեամբ գայլուն, և միայնամարտութեանն առաքինութիւն, և որ ինչ այլ բանութեանն բնիկ կարգ »։

ԱՐՏԻՒԼՈՍ · Հայ քրմի որդի էր · բայց սրբոյն Գրիգորի ձեռքովն ու ջանիւք՝ ձըշմարտութեան քարոզ եղաւ, և ուսումնական ընթացքը կատարելով՝ իր արժանաւորութեամբը ինչուան եպիսկոպոսական աստիճանը բարձրացաւ։

Աբրեհէս՝ Մարկոս անունով միայնակեցի մը խնդրանօքը, որ Աղուանից ըստած կղզին առանձնացած էր, Լուսաւորչայ վարուց պատմութիւնը չարագրեց նամակի ձեւով. և իրմէն առած է խորհնացին ինչ որ նոյն սրբոյն մանկութեան և երիտասարդութեանը վրայ կ'ուանդէ, ինչուան անոր Տրդատայ ծառայութեան քով մանելը։

ՂԵՐՈՒԲՆԱ

Աբգարու ժամանակակից պատմիչ մը կը յիշատակէ Խորենացին՝ Ղերուբնա անունով, Ափշադարայ քրմի որդի, մեհենական պատմութեանց հմուտ, որ Աբգարու և անոր որդւոյն Սանատրկոյ պատմութիւնը չարագրած է. «Ղերուբնա, կ'ըսէ, որդի Ափշադարայ գալիլ՝ գրեաց զամենայն գործս՝ որ ինչ յաւուրս Աբգարու և Սանատրկոյ, և եգ ի դիւանին՝ յԵդեսիայ»։

Այս գրուածը կորսուած կը համարուի ընդհանրապէս. որովհետև միայն Խորենացին կը յիշէ այն երկասիրութիւնը, առանց յայտնապէս ըսելու թէ արդեօք ինքը տեսած էր այն գրուածը. իսկ իրմէ ետքը եկող պատմագիրներէն ոչ ոք՝ ոչ անունը կը յիշէ, և ոչ ալ անոր իրաւամբ հետաքրքրական երկասիրութեան վրայ տեղեկութիւն մը կու տայ։

Բայց ետքի տարիներս՝ փարիզու կայսերական մատենադարանին մէջ՝ Հայաստանի հին քրիստոնէութեանը վրայ համառօտ բայց ընտիր գրուածք մը գտնուեցաւ՝ այսպիսի մակագրութեամբ. «Թուղթ Աբգարու Թագաւորի Եդեսիայ քաղաքի՝ որ է յաստրի լեզու Ուռհայ, որդւոյ Մանոյ»։ Այս թէ մեր լեզուին և թէ եկե-

ղնցական պատմութեան համար ծանրա-
կշիռ գրուածին հեղինակ՝ նոյն ինքն Ղե-
րուբնա կարծուեցաւ ոմանց համից. և կամ
աւելի հաւանականաբար՝ անոր երկասի-
րութեան մէկ մասը. որովհետև նոյն գը-
րուածքին վերջերը հեղինակին անունն ալ
կը յիշատակուի հետևեալ խօսքերով. «Ջա-
մենայն ինչ զոր հրամայեն թագաւորք, և
զամենայն որ ինչ միանգամ լինի առաջի
նոցա, գրի և դնի ի տունս յիշատակաց.
սոյնպէս և յԱեւհա քաղաքի՝ Ղըրուբնա
որդի Ա.նակայ, որդւոյ Ա.բդաշարագայ,
գալրի թագաւորին. գրեաց զամենայն ինչ
որ միանգամ իրք եղեն Ադէի առաքելոյ,
ի սկզբանէ մինչև ցկատարած. միաբա-
նութեամբ ձեռն արկանելով և Ա.ննա (Ա-
նան) հաւատարիմ թագաւորին. և եդին
ի տանն յիշատակաց քարտիսից, ուր դնին
մատեանք և օրէնք արքունականք. և որք
դնեն և վաճառեն և գրին ի մէջ նոցա
մուրհակք հաստատութեան, անդ պահին
հաստատութեամբ առանց արհամարհա-
նաց»:

Գրուածքիս հաւատարմութեան գլխա-
ւոր նշանը՝ յամենայնի ընդ խորենացւոյն
զուգընթացութիւնն է. և յայլուստ գի-
տենք թէ խորենացին՝ Ղերուբնայէն քա-
ղած է Ա.բգարու պատմութիւնը: Եւ գը-
րուածքիս մէջ անանկ դիպաց յիշատակու-
թիւնք կան և մանր պարագաներ՝ որոնք
երկասիրութեանս սկզբնագիր ըլլալուն ա-

պայոյցներ են։ Քանի մը օրինակով հաստատուացընենք խօսքերնիս։

Թորենացին պատճառ մը չիտար թէ ինչո՞ւ Աբգար չկրցաւ անձամբ Պաղեստին երթալ, ու Քրիստոսէ բժշկութիւն խընդրել. կամ դէթ կ՚իմացընէ թէ հիւանդութիւնն էր պատճառ որ զինքը այն ճամբորդութենէն ետ կը կեցընէր։ Իսկ զրուածքիս հեղինակը քաղաքական բարակ տեսութիւն մը մէջ կը բերէ. «Կամեցաւ, կ՚ըսէ, ինքնին երթալ ի Պաղեստին, զի աչօք իւրովք տեսցէ զՔրիստոս և զամենայն սքանչելիս զոր առնէր. և վասն զի չէր իւր իշխանութիւն աշխարհն Հռոմոյ՝ ընդ որ ինքն երթալոց էր, զհետզի կալաւ, զի մի պատճառք ինչ լինիցին Քշնամութեան»։

Մանր զանազանութիւններ ալ կ՚ընէ որ աւելի ժամանակակից անձի և զրչի յատուկ են։ Աւանկ են թուահամարոց մանր իմնելներն, որ Թորենացւոյն գրոցը մէջ չեն երևնար. ինչպէս Մարիհաբ, Շամշադրամ և Անան իշխանաց առ Սարինոս Լեստորբեայ զրկուելնուն ժամանակը որոշելը՝ Աբգարու թագաւորութեան երեսունեւերկուերորդ տարին, Տրէ ամսոյն տասուերկուքին։ Դարձեալ Անանայ հաստատին ձեռքով առ Քրիստոս թղթելը, ու անոր՝ արեգ ամսոյն չորեքտասաներորդ օրը Աւհայէն ելլելը, ու ահկի ամսոյն երկոտասաներորդ՝ չորեքշաբթի օ-

րը Երուսաղէմ մտնելը, ու զԲրիստոս՝ Հրէից Գամալիէլ քահանայապետի տան մէջ տեսնելը։ Նոյնպէս Թագէոսի Ուռհա քաղաքէն ելլելը հինգշաբթի օրը մարերի ամսոյն տասնուչորսին։

Աբգարու առ Քրիստոս Թղթոյն օրինակը՝ նման է ըստ ամենայնի խորենացւոյն մէջ գտնուածին, բայց՝ ի քանի մը մանրամունր տարբերութիւններէ. միայն թէ խորենացւոյն մէջ Յիսուսի փրկիչ անունը կը տրուի յԱբգարէ. իսկ հոս՝ բժիշկ մեծ կ'անուանի, որ թերևս աւելի վայելուչ է տակաւին հեթանոս թագաւորի մը բերանը՝ որ միայն անոր բժշկութիւններէն գուշակած է անոր մեծ ու երկնաւոր անձ ըլլալը։

Աբբունի գերդաստանին նկատմամբ ալ ծանօթութիւններ կուտայ՝ որ ուրիշ պատմիչ չայ մէջ չեն երևնար, և ըստ մեզ ապացոյցք են անոր հնութեանը. վասն զի կը յիշէ զԱզոստինէ՝ Աբգարու մայրը, ու անոր կինը Շղամաթէ՝ զոր Մխիթարեայ դուստր կը կոչէ։ Դարձեալ իրեն պաշտօնեայքը յանուանէ կը յիշատակուին Փոկրէ, Արևթէմէ, Շամշագրամ, Աբդիու, Աղի և Բարքազարա, Պաբբու, Խափէա, Խոսրով և Պուբնիա, Շաւիթա, Պերոզ, Դանկով, և այլ ուրիշ նախարարք։

Խորենացին կը պրուցէ թէ երբ Քրիստոս Աբգարու կողմանէ գրուած նամակը ընդունեցաւ, Թովմայի առաքելոյն պատուիրեց որ այն Թղթոյն պատասխանը

տայ. իսկ գրուածիս հեղինակը կ'աւանդէ թէ « Ընկալեալ Յիսուսի զթուղթն ի տան քահանայապետին Հրէից, ասէ ցԱնան հաւատարիմ արքային. Երթ և տես տեա՛ր քում որ առաքեացն զքեզ առ իս. Երանի է քեզ զի հաւատացեր յիս, մինչ չև տեսեալ քոյ զիս. զի այսպէս գրեալ է վասն իմ: Եւ զի գրեցեր դու առ իս՝ զալ ինձ առ քեզ. վասն որոյ առաքեցայ ես յաչխարհ, կատարեալ ամենայն.» և այլն:

Խորենացին կը յաւելու. « Զայս Թուղթ երեր Աբգար ուրհանդակ Աբգարու. ընդ որում և դիւենդանագրութիւն փրկչական պատկերին ». ու չինչանակեր թէ ինչպէս նկարեցաւ այն պատկերը. ուստի և ո՛մանք ետքէն յարմարցուցած կ'աւանդեն, թէ Փրիստոս տեսնելով որ Աբգարու կողմանէ զրկուած նկարիչը չկրցաւ իր աստուածային դէմքը պաստառի վրայ առնուլ, ձեռքն առաւ պաստառը, երեսացը վրայ դրաւ, և աստուածային դիմացը նըկարագիրը տպաւորեցաւ այն պաստառին վրայ: Այս պարագային չյիշատակեր ընաւ գրուածքիս հեղինակը, այլ կ'ըսէ յայտնապէս, թէ « (Անան) առեալ նկարեաց զպատկերն Յիսուսի ընտիր դեղով. քանզի ապրեստաւոր թագաւորին էր. և բերեալ մատոյց Աբգարու թագաւորի տեառն իւրում »:

Գրուածքին զլխաւոր նիւթը Թադէոս առաքելոյն քարոզութիւնն է, զոր ինքը

Աղէ կ'առնուանէ, հանդերձ այն հրաշքներով՝ զոր արդէն ազգային եկեղեցական պատմութիւնիս մեզի կ'աւանդէ։ «Եւ ոչ միայն Հայք, կ'ըսէ պատմիչը, այլ բազումք յարևելից 'ի նմանութիւն վաճառականաց յիշխանութենէ Հոռոմոց գային տեսանել զնշանն զոր առնէր Աղէ առաքեալ. և աշակերտեալքն 'ի նմանէ ընդունէին զձեռնադրութիւն քահանայութեան. և յաշխարհին իւրեանց Յ.սորեստանի զպաւառականս իւրեանց աշակերտէին. և տունս աղօթանոցս չինէին 'ի ծածուկ վասն երկիւղի այնոցիկ՝ որ երկիր պագանէին կրակի և պատուէին զՔուրս»։

Խորենացւոյն պատմութեան մէջ Թուղթ մը կը կարդանք գրուած Յ.Աբգարէ առ Ա.սորեստանեայց մանուկ թագաւորն Ներսեհ։ Թղթոյս հեղինակը այն նամակը մէջ չբերեր, այլ պարզապէս նոյն պատմութիւնը կ'աւանդէ. «Ներսեհ թագաւոր Ա.սորեստանեայց, կ'ըսէ, յորժամ լուաւ զգործսն զոր առնէր Աղէ առաքեալ, յղեաց նա առ Աբգար թագաւոր և ասէ. Կամ տուր ածել ինձ զայրդ որ զնշանդ առնէ առ քեզ, զի տեսից զգա և լուայց զբանս դորա, և կամ տուր գիտել ինձ զամենայն ինչ որ միանգամ արարեալ է դորա 'ի քաղաքիդ քում *։ Ապա գրեալ Աբգա-

* Այլ վասն այնր զի գրեցեր առ իս Թէ տուր ածել զայրդ բժիշկ՝ որ զնշանդ առնէ և քարոզէ

րու Ներսեհի Թագաւորի Աւորեսանեայց և խնացուցեալ նմա զամենայն պատմութիւն իրացն՝ զոր արար Աղէ առաքեալ ի սկզբանէ մինչև ցկատարած. և ոչ կթող ինչ զոր ոչ խնացոյց նմա գրով: Եւ իբրև լուաւ Ներսեհ զգրեալսն առ նա՝ հիացեալ զարմանայր. և մեծապէս ցանկութեամբ կամէր տեսանել զնա »:

Աբգարու մահը ու անոր Մանաւորակ որդւոյն Թագաւորելը և կրկին ի պաշտօն կոչ դառնալը՝ համառօտիւ կը յիշատակուի Խորենացւոյն մէջ. և պատճառը մէջ կը բերէ. « Ջայս, կ'ըսէ, ծայրաքաղ արարեալ համառօտ յիշատակեցաք, որպէս զառ ի յայլոց պատմեալ նախկին », որով անտարակոյս զՆերուբնա կ'ակնարկէ, ինչպէս առաջ ալ ըսինք: Ներուբնա՝ կամ իրեն ենթադրուած գրուածիս հեղինակը՝ ասանկ մանրապատում կընէ նոյն ժամանակաց դէպքերը.

« Ցետ ամաց ինչ մեռաւ Աբգար Թագաւոր, և եկաց ի Թագաւորութեան մի յորդւոց իւրոց, այր չար և ապստամբող, ի ամենայն անօրէնութեամբ, որ առեր զիշաղաղութիւն և ոչ ընդունէր զվարդապե-

այլ Աառուած ի վեր քան զհուր և զջուր, զի տեսից և լուայց դմա, նա ոչ էր բժիշկ ըստ առաքեալն մարգկան. այլ աշակերտ էր Որդւոյն Աառուծոյ՝ արարչի հրոյ և ջրոյ.» և այլն: Աբգար՝ առ Յսուհննաջոյ:

տուքիւն քարոզութեան աւետարանին. յղեաց առ Ադէ եպիսկոպոս մինչդեռ նըստէր յեկեղեցւոջ, և խօսէր զպատգամս դրոց սրբոց յականջս ժողովրդեան, և ասէ. «Արա ինձ խոյրս ոսկեղէնս զոր օրինակ առնէիր յառաջ հօրն իմոյ»: Եւ ոչ առ յանձն Ադէ. առաքեաց անդրէն և ասէ. «Ոչ թողում ես զպաշտօնս Քրիստոսի որ աւանդեցաւ ինձ յԱդէէ առաքելոյ, և առնեմ խոյրս անխրատութեան»: Եւ իբրև եաես նա եթէ ոչ հաւանի նա կատարել զկամս նորա, յղեաց և խորտակեաց զսրունս նորա՝ մինչդեռ նստէր յեկեղեցւոջ և քարգմանէր ի մէջ ժողովրդեանն: Եւ ի մեռանելն իւրում երդմնեցոյց զՓղոտ և զԱրշդամայ՝ եթէ ասասէն իսկ ի տանս յայսմիկ ուր մեռանիմս վասն ճըշմարտութեան սորա՝ դիք զիս, և ասասէն թաղեցէք: Եւ որպէս երդմնեցոյց զՓղոտ և զԱրշդամայ՝ նոյնպէս արարին. թաղեցին զնա անդէն ի ներքոյ քան զմիջին դուռն եկեղեցւոյն, ի միջի՝ ընդ արս և ընդ կանայս: Եւ եղև սուգ մեծ և դառն յեկեղեցւոջն և յամենայն քաղաքն վասն իրացն եղելոցն. որպէս եղև սուգ և տրտմութիւն՝ յորժամ վախճանեցաւ բարիւք վկայութեամբ Ադէ առաքեալ վարդապետն նորա ի ձեռաց ամպարշտաց՝ ի կողմանս արեւելից»:

Ա. յաչափ խօսելնէս եաեն ալ չենք ուղեր իբրև սպոյգ Ղ. երուբնայի երկասիրութիւն

սեպել այս գրուածքը, որ այլ և այլ հաւատիք ունենալովին ալ՝ ունի նաև զանազան ընդդիմադրութիւնք, զորոնք քննելն ու լուծելը՝ աւելի երկար քննութեան կը կարօտի։

ԴԱՐԴ

Չորրորդ դարուն մէջ նշանաւոր կերպարանափոխութիւն մը կրեց Հայաստան։ Սուրբ աւետարանին քարոզութիւնը՝ որ դեռ գրուած չգրուած՝ Հայաստանի մէջ ալ պատմուեցաւ, երկար տեւողութիւն մը չունեցաւ հոն, բայց հիմայ կրկին հաստատութիւն առաւ այն նշանաւոր անձին ձեռքով՝ որ արժանապէս Լուսաւորիչ կոչուած է տասնեհինգ երկայն դարերէ վեր։ Տրդատ Թագաւորը՝ որ նոյն սուրբ կրօնից քարոզիչը մեռցընելու համար իր ամէն ոյժը բանեցուց, անոր երկնաւոր զօրութենէն յաղթուեցաւ. այն երկնաւոր լուսոյն դէմ երկար տաեն մարտնչէն ետքը՝ ինքը նոյն լուսով լուսաւորուեցաւ. ու հրաման հանեց որ Հայաստանի հին կրօնից մնհեաններն կործանին, ու անոնց վրայ՝ Աստուծոյ անուանը փառաւորութեան տաճարներ կանգնին։

Ա.սանկ կրօնական մեծ կերպարանափո-
խութիւն մը՝ ինչպէս քաղաքականին վրայ
իր զօրաւոր ազդեցութիւնն ունեցաւ, ա-
սանկ ալ ուսումնականին վրայ: Հաւատ-
քը քարոզելը բաւական չէր. այն հաւատ-
քը ընդունելի և տեւական ընել տալու հա-
մար՝ հարկ էր նաև մտքերն ընդելացընել
և կրթել. ու այս կրթութիւնը անհրաժեշտ
կը պահանջէր դուսումն: Տարակոյս չկայ
որ նոյն ուսումը առաջ տանելու համար
ամենազօրաւոր միջոց մը կը պակսէր, գի-
րը. որով կարելի չէր թէ՛ կրթութիւնը և
թէ ուսումը ընդհանուր ընել այնպիսի
ընդարձակածաւալ աշխարհի մը մէջ. և
սակայն ոչ գրոյն պակսութիւնը և ոչ աշ-
խարհին ընդարձակութիւնը յուսահատե-
ցուցին գԳրիգոր և գՏրդատ: Ագաթան-
գեղոս կ'ասանդէ թէ Տրդատ երկու ազդ
գալոցաց կանդնեց. յորոց մէկը Թագա-
ւորական կը կոչուէր, արքունի և իշխա-
նական տոհմէ եղողներուն կրթութեանը
համար, և որոց գլուխ կ'ըլլար ինքն Տըր-
դատ. «Ա.ռնոյր այնուհետև սուրբն Գրի-
գոր գԱ.րիստոնեաց տոհմի որեարն, ի
վարժս վարդապետութեան պարապեցու-
ցանէր. որոց առաջնոյն Տրդատ անուն,
որ և Թագաւոր իսկ էր, ամենայն տամբ
իւրով»: Աշխարհին այլ և այլ կողմերը
կը բանար նաև հաւատակից կրթութեանը
պատշաճեալ ուսումնարաններ, ինչպէս
կը վկայէ նոյն ինքն Ագաթանգեղոս. «ի

անդեսաց տեղեաց սահմանացն Հայոց տայր
տրամանի թագաւորն Տրդատ իւրոյ իշխանու-
թեանն՝ յաշխարհացն Ի գաւառաց բազմու-
թիւն մանկաւոյ ածել յարուեստս զպրու-
թեան, և կարգել Ի վերայ հաւատարիմ
զպրապետս. առաւել զաղգս պղծագործ
բրմացն, զմանկունս նոցա Ի նոյն ժողո-
վել զումարել յարժանաւոր տեղիս դասս
դասս, և դարման ոճակաց կարգել: Եւ
զնոսա յերկուս բաժանեալ, զոմանս յա-
սորի զպրութիւն կարգեալ և զոմանս Ի
հելլէն. և անդէն յականի թօթափել՝ վայրե-
նամիտն և գաւառկաուն և անասնա-
բարոյ աշխարհն մարգարէագէտ և ա-
ռաքելածանօթ և աւետարանաժառանգ
լինելին, և ամենայն աւանդելոյն Աստու-
ծոյ ոչ իսիք անտեղեակք »:

Զորրորդ դարուն Հայերը սովորութիւն
ունէին Աթէնք, Կեսարիա, Բիւզանդիան,
Եղեսիա և Աղեքսանդրիա երթալ, և հոն
ոչ միայն կրօնական, այլ և արտաքին
ուսանոց համար ըլլալ: Ակնհայ է որ նոյն
դարուն մէջ ուսման պարագաներն հա-
ւասարապէս կը ճանչնային թէ իրենց
հայրենական լեզուն, և թէ յոյն և ասորի
լեզուները. ուր հասարակ ժողովուրդը
այն լեզուաց կատարեալ անգիտութիւնը
չունենալով, որով եկեղեցական պաշտա-
մունքը կը կատարուէին, պէտք կ'ունե-
նար երբեմն նաև թարգմանի: Ծանօթ էր
շատերուն նաև պարսկերէն լեզուն, Ի

պատճառս քաղաքական այլ և այլ յարաբերութեանց։

Աչսպիսի ուսումնական դրից մէջ էր Հայաստան՝ ի չորրորդ դարու։ Փիլ մաենագրաց անուանք կը յիշատակուին՝ որ այն ժամանակին ծաղկած ըլլան. կամ հընութիւնը՝ անոնց անուանքը ինչուան մեզի չհասցց, և կամ ընդհանուր և բստ արժանւոյն չծաղկած ուսումնականութիւն մը՝ չկրցաւ անկէ աւելին երևցընել։

Ցետնենք հիմայ նոյն աւտենը ծաղկող մատենագրաց ուսումնական արդիւնքը։

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Ինչպէս հաւատոց՝ սասնկ ալ գպրութեանց նորոգմանը հայր և հնդինակ է սուրբն Գրիգոր Լուսաւորիչ։ Եկեղեցական պատմութեան կ'ինայ այս անզուգական անձին արդիւնքը հռչակել՝ զոր ունեցաւ հաւատոց նկատմամբ։ Ան՝նք պարզապէս իբրև մատենագիր պիտի նկատենք զինքը հոս։

Լաւ գիտնալով սուրբ Լուսաւորիչն թէ ուղիղ գիտութիւնը ոչ միայն չհակառակիր հաւատոց, այլ նաև մեծապէս նպաստաւոր է անոր, առջի ջանքն եղաւ հաւատքով աղբը լուսաւորելէն ետքը, այն

հաւատոց մշտնջենաւորութիւնը ապահովելնէ՝ դիտութեամբ. անոր համար դպրոցներ հաստատելու եռեւ եղաւ։ Ինչպէս հաւատոց քարոզութիւնը՝ ասանկ ալ ուսումնական կրթութիւնը իշխաններէն սկսաւ. ամենէն առաջ բացած վարժարանը՝ թագաւորական դպրոց մը եղաւ, և հոն կրթեց իշխանները, ու նաև զնոյն ինքն Տրդատ թագաւորը, ինչպէս քիչ մ՚առաջ ալ յիշեցինք։ Ասկէ զատ համոզեց Դերդատ թագաւոր՝ որ այլ և այլ տեղուանք հաստատէ դպրոցներ հաստատէ. «Հաւանեցուցանէր, կ՚ըսէ պատմիչը, զթագաւորն զի՝ի գաւառաց գաւառաց, և կողմանց կողմանց՝ի տեղիս տեղիս ժողովեսցին բազմութիւն մանկտւոյ առ՝ի նիւթ վարդապետութեան. և այլն։ Ազաթանգեղոսի խօսքերէն առնելով կ՚աւանդէ և Վ.արդան. «Դպրոցս յօրինէր, մանկունս հաւաքէր, վարդապետս յոյն և ասորի գրոց և լեզուի գիտակս կացուցանէր, առճիկս կարգէր յարքունուստ»։ Ասյս արդիւնքը՝ Տրդատայ կու տայ Բիւզանդ. «Կարգէր, կ՚ըսէ, և՝ի տեղիս տեղիս դպրոցս յուսնարէն և ասորերէն՝ յամենայն գաւառս Հայոց»։

Ասյս դպրոցաց հիմնարկութենէն զատ՝ մանաւոր դրուած մըն ալ հասած է ձեռքերնիս՝ սրբոյն Գրիգորի աշխատասիրութեանը արդիւնք, ճառախրատում կոչուած։ Ասյս գրքին հաւատարմութեանը

կը վկայեն ոչ միայն յետին ժամանակի մատենագրաց մէջ թոսրով Անձևացեաց եպիսկոպոսն, իր որդին Նարեկացին Գրիգոր, Մագիստրոս, Գրիգոր Մարկաւագապետ, հապա նոյն իսկ իրեն ժամանակակից պատմիչն Ստեփանոս Տարաւնեցի խօսքերով. «Ապա յետ այսպիսի գործոց՝ առաւել բարձրագոյն վարդապետութիւն սկսեալ երանելւոյն Գրիգորի՝ ի ձառս յաճախագոյնս, գժուարապատում, առակս խորհրդոցս, դիւրալուծս, բազմադիմիս, չնորհագիրս, յարդարեալս ի զօրութենէ և ի հիթոյ գրոց մարգարէականաց, լի ամենայն ճաշակօք կարգելոյ և յօրինեալ՝ առ տարանական հաւատոյն ճշմարտութեան. յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորաց անտի՝ առաւել վասն յարուցեան յուսոյն ի հանդերձելոցն՝ յորդորեալ. զի հեչաընկալ և դիւրահաս՝ տրամադրանիցն և մարմնաւոր իրօք զբաղելոց լինիցին առ ի սթափել, զուարթացուցանել, զօրացուցանել և հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել»։ Յովհան իմաստասէր Հայրապետեան ալ Ստեփանոսեայ այս խօսքերուն հետևողութեամբ կ'ըսէ եկեղեցւոյ վրայ յօրինած ճառին մէջ. «Ըստ նմին օրինակի և իմ պատկառելոյն և Հայրապետեան տուրքն Գրիգոր՝ ըստ տերունական առակին՝ զյարութիւն մեռելոց բուսոց և տնկոց օրինակեր ի գարուն բուսաբեր, և ի գալարանալ մարդկան ի գերեզմանէ»։

Քանուիրեք ճառով կը բաղկանայ սրբոյն Գրիգորի այս երիսասիրութիւնը. որոնց մէջ նախ սուրբը երկրորդութեան խորհրդոյն և աստուածածանօթութեան վրայ խօսելով, անկէց արարչին՝ իր արարածոց վրայ ունեցած մարդասէր խնամոց վրայ կը ճառէ: Ապա իւր խնամոցը ու դրեթէ իւր արեանը դին՝ սիրելի հօտին՝ ամենուն վիճակին յարմար յորդորական, ամէն ու ողջմիչ խրատներ կ'աւանդէ, որ գեսէր հօր մը սրտովն ու լեզուով: Վերջը միակեցականց կենաց եւեէ եղողներուն յարմար պատուիրաններ ու խրատներ մէջ կը բերէ:

Այս ճառերուն մէջ՝ աստուածային սրբոյ ու սիրով լեցուն հոգիէ գաս, յունական հարց նմանողութիւն և անոնց լեզուն կը բանեցընէ Գրիգոր: Անոնց վարդապետութիւնը՝ զոր դիցապաշտ Հայաստանին կ'ուզէր ծանօթացընել, անոնց լեզուովը կ'աւանդէ, ցուցընելով իր կրթուած միտքը ու հանճարը: Մեր ազգին մէջ քիչ հայրապետք կրցած են աստուածաբանական վրայ խօսած առեններին այն վարժ գրիչը և լեզուն գործածել, որուն առաջին հնդիկնակն է ինքն սուրբն Գրիգոր:

Խնդիր է թէ ինչ լեզուով չարագրած է այս գիրքս Ուսումնասիրիչ: Ոմանք կը համարին թէ հայերէն չարագրած ըլլայ, այլ յունարէն. և պատճառ կը բերեն թէ այն ժամանակ հայերէն գիր չըլլալուն՝ հարկ էր որ յունարէն գրեր:

Սակայն մեղի առջի կարծիքը հաւանական կ'երեւնայ. որովհետեւ Հայոց համար էր այս աշխատութիւնը՝ բնականաբար պէտք էր որ Լուսաւորիչ այն լեզուով գրեր՝ որ իր ազգին մեծագոյն մասին հասկընալի ըլլար. ապա թէ ոչ՝ գրեթէ ընդունայն աշխատութիւն և անպատճառ յոգնիլ կ'ըլլար: Հայերէն գիր չըլլալուն՝ անշուշտ ինքն ալ իր ժամանակակիցք ալ յոյն տառերը գործածած են, հայկական բառեր արտագրելու համար:

Լուսաւորչին մահը երկասիրութիւններուն. — Յաճախապատում գրչէն զատ Լուսաւորչայ կ'ընծայուին նաև քանի մը ուրիշ մանր երկասիրութիւնք: Աստոնց մէջ գլխաւոր է երեսուն Թուով կանոններ, որոնք կանոնագրոց մէջ Լուսաւորչի անունը կը կրեն, և թերևս յաւելուած են Դիկիոնոսի մէջ սահմանուած կանոններուն. զորոնք բերաբեր՝ Հայաստան սուրբն Աբրահամ կը, և զորս ընդունեց իր և Հայաստանեայց սուրբ հայրն՝ Լուսաւորիչ, ասոնց ընդունած հանգանակին վրայ աւելցընելով « իսկ մեք փառաւորեսցուք » ազօթքը: Կը վկայէ և Խորենացին. « Ընդ որ ուրախացեալ, կ'ըսէ, սրբոյն Գրիգորի, սուղ ինչ կանոնս յինքենէ՝ ի կանոնս ժողովոյն (Նիկիոյ) յաւելու, վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին »:

Լուսաւորչին է նաև ժամագրոց մէջի մաղթանքը « Աստուած մեծ, հզօր և փառա-

տրեալ». որուն համար աւանդութիւնը կը պրուցէ թէ երգած ըլլայ Հռիփսիմեանց ու Գայիանեանց մարմինները ամփոփելու ժամանակ։ Ակն զատ ուրիշ երկու աղօթք ալ իր անուամբն. «Որհնեալ է մարգարէրութիւն քոյ տէր իմ». և միւսը՝ «Աղաչեմ զքեզ»։

Վերջի տարիներս գտնուեցաւ Լուսաւորչայ անուամբ նաև Պատարագամատոյց գիրք մը, որուն վրայ նոյն նուիրական գրոց վրայ խօսելու առիթներս մասնաւոր յիշատակութիւն պիտի ընենք։

Լուսաւորչայ Յովհաննու գիրքը կրկին անգամ տպագրութեամբ հրատարակուած է. մէկը 1737ին ի Կոստանդնուպոլիս՝ Պաղտասար դպրին ջանիքը. միւսը՝ 1858ին ի Վենետիկ՝ Մխիթարեանց վանքը, ձեռագրաց բաղդատութեամբ և հատատարիմ ընթերցուածով։

ԱԳԱԹԱՆԳԵԼՈՍ

Ագաթանգեղոսի վարքը. — Լուսաւորչի ձեռքով Հայաստանի մէջ գործուած զարմանալի դէպքերը ու առաուածային նախախնամութեան սքանչելիքը՝ արժան էր որ յետագային մարդին մէջ հաստատուն մնալու համար գրով մշտնջենաւորուէին։ Այս փափաքը ունեցաւ նաև Տրդատ Թագաւոր, ու յանձնեց Ագաթանգեղոսի որ

աղգաւ Հռովմայեցի էր, ու Տրդատայ հետ մէկտեղ՝ իբրև արքունի քարտուղար՝ Հռովմէն Հայաստան եկած։ Ասկէ աւելի տեղեկութիւն մը չենք աւանդեր մեզի ոչ ինքը և ոչ պատմութիւնն՝ իր կենացը առաջին կամ վերջին հանգամանացը վրայ։ Միայն ինքն իր անձին համար այս վկայութիւնը կու տայ, զոր Թողած Պատմութեան դիրքն ալ կ'երաշխաւորէ, թէ հռոմարէն և յունարէն գրագիտութիւն տոկրած էր։

Որչափ ալ ժամանակակից, ու գրեթէ ժամանակակից դիպաց պատմող սիրի ըլլար Ագաթանգեղոս, սակայն զանազան հին դիպաց յիշատակութիւնք ալ մէջ մբանելով, պէտք էր որ իրմէն առաջ եղող պատմագրաց գրուածներէն քաղէր զանոնք։ Այս վախճանաւ ինչուան իր օրերը գոնուած՝ ու ցրիւ աւանդուած պատմութիւնները մէկտեղ բերաւ, անոնցմով կազմելու իր պատմութեան դրքին յառաջաբանը. «Հասեալ առ իս, կ'ըսէ, հրամանի 'ի մեծ արքայէն Տրդատայ, կարգել ինձ 'ի ձեռնարկութենէ նշանագիւտ ժամանակագրաց՝ գՀայրենականացն գործս քաջութեան»։

Տարակոյս չկայ որ պատմութիւնը անկենդան դիակ մըն է, ու զանիկայ ախորժելի ընծայելու համար՝ բաւական չէ դոյն դոյն ու գեղեցիկ պատմուճան մը ձգել անոր վրայ. այլ պէտք է կենդանութեան շունչ աղդել այն դիակին, որպէս զի պատ-

մութիւնն ըլլայ խօսողը՝ չէ թէ պատմողը։ Այս յատկութիւնը կարգ մը դուրս կելլով մը ունի Ագաթանգեղոս։ Իրաւ է որ պատմութիւնը ինքիրմէն զեղչելիք է ու զարմանալի, բայց գրողին ճարտարութիւնն ալ մեծապէս օժանդակած է այն զեղչումներուն։ Անկասկած կարգաբանութիւն մը ունի գրուածը, որ յայտնապէս կ'երեւցնէ թէ Հռոմայ մէջ ծնած ու դաստիարակուած հանճար մըն է. այն քաղաքին՝ որ հաւատարմապէս գիտցաւ գործածել ըղձենս և զգրիչ։

Իր այս ամէն յատկութեանցը համար՝ մեծապէս յարգի էր թէ ինքը և թէ իր գրուածը, ոչ միայն իրմէն ետքը եկող՝ հապա նաև իրեն ժամանակակից մատենագրաց առջև։ Խորենացին՝ որ իր գրուածոյը մէջ ընդհանրապէս համառօտաբոյս ոճ մը կը բանեցընէ, երբոր կ'ուզէ որ ընթերցողք աւելի կատարեալ տեղեկութիւն մը ստանան՝ Ագաթանգեղոսի կը դրկէ, ու աջող քարտուղար Տրգատայ կը կոչէ դինքը։ Փարպեցին ալ իր Պատմութեան դրբին սկիզբը ասանկ կը խօսի անոր վրայ. «Ընդ բազում ճառս մատենից աւանդեալոց պատմագրացն Հայոց անցի. յորոց ըստ երկար ընթերցողութեան գտի ի նոցանէ ժամանակաց և զգարուց աշխարհիս Հայոց զյեղափոխութիւնս, յաստղ և յանսխալ կարգաւորութենէ առաջին դրոցն, զոր յարմարապէս պատմեալ ծա-

նոյց մեզ երանելին Ագաթանգեղոս. այր բանիբուն գիտութեամբ և յիւ ամենայն հրաշանգիւ, ստուգաբան ի կարգադրութիւն ճառից, և յարմարագիր ի պատմութիւնս առասպածի իւրոյ։ Սա զնուազումն թագաւորութեան արշակունւոյն Տրդատայ և զդօրանալն Սասանեայ Արտաշրի որդւոյ Սասանայ՝ ստուգապէս յօրինուածով կարգեալ դրոշմեաց, զբինախնդրութիւնն խոսրովու... Զայս ամենայն, և առաւել քան զայն գիտութիւն յիւրում անսխալ կարգաւորութիւնն պատմեաց մեզ երանելի այրն Ագաթանգեղոս»։ Ժամանակս կրտսեր պատմիչք ալ՝ նոյնպիսի դովութեամբը զԱգաթանգեղոս կը մեծարեն. որոյմէ Ազգանից և Սիւնեաց պատմիչքն նոր դէպք մը կ'աւանդեն. Շապուհ Պարսից թագաւորն ուզելով Հայոց նախարարներուն աղնուականութեան կարգը ստուգել, հարցուց անոնց թէ ունի՞ն այնպիսի գիրք մը՝ յորում անտարակուսելի հաւաստեօք ազգագրուած ըլլայ այս բանս։ Այն ատեն Հայոց նախարարներն մէջերնին խորհուրդ ընելով, թագաւորին առջևը գրին «զգանկալին ամենայն ստուից՝ զհրաշաբանականն ստուգութիւն, զգրաւորական զգիրս ցանկալւոյն սրբոյն Գրիգորի՝ որ Ագաթանգեղն կոչի»։ Թագաւորը հրամայեց որ իր ընդունելը թարգմանեն այն գիրքը. և խմանալով թէ իր նախնւոյն Արտաշիսի օրի-

րէն կը սկսի, Պարսից աշխարհաժողով զնդին առջև կարգէ դուրս ուրախութիւն ըլլալուց։ Երբը ձեռքն առնելով այն գիրքը, կը համբուրէր ու Պարսից լեզուով այլ և այլ դովութիւններ կու տար։ Անկէց տեղևկանալով Հայոց առաջին կարգի ազնուական ցեղերը, սկսաւ նոյն կերպով նախապատիւ ու գահերէց բազմեցընել զանոնք արքունական տաճարին մէջ։

Ագաթանգեղոսի պատմութիւնն. — Ագաթանգեղեայ պատմութեան հայկական օրինակները՝ Պարսից թագաւորութեան նուազելէն կը սկսին. բայց որովհետև նոյն գրոց յունական օրինակ մըն ալ կայ, ինչպէս երբը պիտի տեսնենք, անոր մէջ քանի մը էջ աւելի կը գտնենք, որ հետաքրքրական ըլլալուն՝ հարկ սեպեցինք թարգմանել զայն ի յունէ, և դնել հոս։

Ա. Ըղձիւք ըղձացեալքն յօժարութեամբ ընդ ծով նաւարկութեան, ինքնակամ մերն ի ջուրցն վտանգ. զուարթամիտք ձեռն միեն ի շնաւած նաւուց, և ախորժին ծովային անցուցանել կեանս. կայմն կանգնեն, և թիւք ուղղեկոյց՝ զաւեցան խորտակին զբռնութիւն. և ընդ որ կոյս կամք լցեն՝ զնաւն ուղղեն. զհատատիրոջ՝ զծոցաւոր զոսխատակն՝ խրթև զկրմուղ բան կամի սանձաւորեալ։ Որոց ոչ ինչ ահ արկանէ, ոչ կոհակացն ուժգնութիւն, և ոչ քարաժայռիցն ընդ առաջ ելք կատեցուցանեն. վասն զի ի վտանգս յաձախեալ զկենցաղական ընթացս՝ ի հպատրան մահու դեգերել ցանկան, զի կարող լինիցին ըզկարևորն անձանց մատակարարել։ Են որ ի սակս

քաղաքացն տպրանաց Ճարակէն՝ ուղի Հատանէն. և են որ 'ի սկսա զարդու սկՃնուԼեան արանց և կանանց՝ մինչև ցՀնդկայինն նաւարկեալ ծով, և զաղնուագիծ ականց ինդուԼիենս՝ բաղձացեալցն բերեալ մատուցանէն: Յայսպիսիս գոգցես անդունդս խորոց և իմ միջամուխ լեալ, 'ի տաբառաս Հայաստան աշխարհի, բուռն հարից 'ի գիր արձանացուցանել զեղեալսն, զգործեցեալս յաշխարհին Պարսից և 'ի Հայոց, և զմարտս պատերազմանց զոր եառն ընդ միմեանս:

Բ. Պարթեւք՝ երբև դէպք 'ի բարի յաջողէին նոցա, զիագաւառութիւն Պարսից, զՀայոց և զՀնդկաց՝ որ սահմանակից են արեւելեայ Պարսից, նա և զնաստալուծ զազգն Մասքեթաց՝ յինքեանս կորզեալ Ժառանգէին, այսպիսի իմն կարգաւ. երկոցունցն 'ի Պարթեւաց սահմ, որ ասպա զարշակունի ընկալան անուն, Հատակաւ բարգաւաՃ և արութեամբ չքեղ, գեր 'ի վերոյ քան զայլս երեւեալ, նա կալաւ զիշխանութիւն արքայութեանն Պարսից: Եւ որ երկրորդն էր զինի նորա, զՀայասատանեայց տունդը յինքն զիագաւառութիւն. իսկ որ երրորդն էր՝ զՀնդկացն կալաւ զտէրութիւն, զՀպաւորն սահմանաց Պարսից: Իսկ չորրորդն 'ի նոցանէ՝ զՄասքեթացն ընկալաւ զիշխանութիւն Թագաւորութեան: Ա՛յս կարգ էր սահմին Պարթեւաց, և սովին զբաղմամ Ժամանակս յերկարելոյն յաջողութեամբ:

Գ. Ա՛նսակ սկիզբն արարից՝ ուստի զիարոյ զերմանն ծագ եղոյց Պարթեւն: Ա՛րտաւան որդի Վաղարշայ 'ի Պարթեւական ծննդոց, քաղդէից գոլով դիտութեամբ ներհուն, և զընթացս և զՀոլովմունս աստեղացն Համարեալ, և իբրեւն Հանդիպեալց կանխագէտ, երբև յառագաստ էր ընդ կնոջն, ամբառնայր զաչն յառաստս 'ի վեր, և խորհրդոց լեալ Հասու, ասէ առ Թագուհին. Տե-

սի զընթացս ասաեղ. և այս Թուի ինձ նշանակ, զի լեիք ոք վատարկեալ ի տեառնէ իւրմէ՝ էլցէ ընդդէմ նոցա մարտիս պատերազմաւ, յաջողեսցի նմա տանել ի գլուխս զյաղթութիւնն և նիւծն առնել զայր իւր: Զայս ասացեալ՝ ի քուն լինէր: Եւ որպէս զնարդ օրէնք են, մի ի նաժշտաց Թագուհւոյն ի նմին սենեկի առագաստին ունէր իւր գագար անկողնոյ առ ի պէտս կարեւոր հարկի ազատարկութեան առ ի նմանէ հրամայելոյն: Դուստր էր սա ուրուսն յաւագ ծառայից, և ընտանի մերձաւոր ումեմն ի գլխաւորս իշխանաց, որոյ անուն Աբրատչիր, ի գաւառէն Ասորեստան Նեայ, յորոյ ի ցանկութիւն ատրփանաց ըմբռնեալ իսկ էր: Վասն որոյ ի լսել անդ զբանս Թագաւորին, էլ ի սենեկի անտի զանխռով յարքայէն և ի սիրելոյէն, ընթացաւ առ Աբրատչիր որդի Սասանայ, յորմէ Սասանականքն՝ որ ի նմանէ և ի Թագաւորացն Պարսից ընկալան զծագումն:

Դ. Մտեալ սորա ի խորանն՝ քանզի և ոչ զբ ի սպասաւորաց կարէր արդելուլ զնա, գիտելով զառ միմեանս սիրելութիւնն, այսպէս խօսէր ընդ նմա. Սիրեցեալդ իմ Աբրատչիր, ի բաց արա զքեզ քոյդ յարաւանանց քոյ, և բուռն հարցես զխորհուրդն զոր խորհեցար երթալոյ. զօրացիր և քաջ լեր ի վերայ հասանել գուշակութեան ալքային. քանզի ժամ է արդ գնդակիկ զնուռութեան, արդ ընդ խնամառնս խորհրդակցութեան, արդ գէպ ժամանակ ի ձակատ գումարելոյ զբազմութեան գնդից. վասն զի քննեաց Թագաւորն զնն Թագս ասանգաց և ասէ. Եթէ զբ ի ծառայից ընդդէմ գարձցի տեառն իւրում, յաղթեսցէ. և արդ երթ ի խորհուրդ ժողովեա, և կարկառեա զնս առ ինս զբ քոյ, և հաստատեսցես երդմամբ զբանս իմ. և եթէ յաջողեսցի քեզ բերել ի ձեռս զալքայութիւն Պարսից, և զնս մի որոշեսցես յան-

կողնոյդ. զի զգոյն հանապազ ասէիր, յորմէ հեռ եղև ի սրտի քումմ խորհուրդդ այդ և ինձ պատմեցաւ: Ջայսոսիկ Արտաղուխտ:

Իսկ Արտաշէս շնորհս կալաւ զնմանէ. և աջողեաց ի վեր յերկինս բարձրացուցեալ զձեռս կնոջն, ասէ. Ահաւադիկ տեսցեն յանդիման դիցն զորուքիւնք, արև և հուր, օդ և հող, զի յայսմ և ի յոյն աւուր խորհուրդ արարեալ ընդ աւազաց Պարսից, և նշխահեալ զարքայն, վաղվաղակի ի պատիւ սիկնուքեան ամբարձից զքէզ:

Ե. Եւ զայս լուեալ Արտաղուխտայ ասէ. Արդ ես ձեզմէ փուքամ ի խորան թագաւորին, զի պարտ է ինձ այսօր զանցելոց աւուրց տանել ի գլուխ զսպասաւորութիւն. զի թէ և յաջողեսցի մեզ հնարագէտ ձարտարութեամբ բերել ի ձեռս զազատութիւն, բայց հարկ ի վերայ կայ սպառ տանել ի պէտս արքունի: Եւ զայս առացեալ՝ երթայր ի խորան արքային, և գաղտ ի մահճէնն ընկողմանէր: Իսկ Արտաշէս յարուցեալ Ժողովեաց զմեծամեծս ի Պարսից և յԱսորեստանեայց, ընդ որս և զառաջինն ի խորհուրդ մտեալ էր. եկաց ի մէջ նոցա և ասէ. Ո՛ քաջդ Պարսիկք և Ասորեստանեայք, զգոյշ ըղձութիւն Պարթեւաց ի վաղ ժամանակաց գիտեմք, և թէ զնմանէ զայլոցն վատագոյն յափշտակեն՝ ձանձրանամք. պարծին յանիրաւել խրեանց, ոչ գաղտ բեն տարապարտ սպանանել. գարշին ի Պարսից և յԱսորեստանեայց՝ Պարթեւքդ հնամտաբար ի մեր աշխարհ յերկրէ բարբարոսաց: Եւ արդ զի՞նչ ունիք ասել. եթէ արդարև տուա խցեն բանք իմ, կացցէ ձեռացէ նա որ թագաւորին անկրաւութեամբ ապա եթէ խօսեցայ ձշմարտութեամբ, զինու զարդու վառեսցուք. զի լաւ է մեզ մեռանել, քան եթէ ծառայել թագաւորի անիրաւի: Ջայսոսիկ Արտաշէս:

Զ. Իսկ իշխանքն Պարսից զառացեալն խնդամիա ընդունէին, քանզի ցանկային Թօխարիւ ըզլուծ աէրութեանն Պարթեւաց, և յիւրեանց ի քնիկ ազգատոհմէն Պարսից ունել զոք Թագաւոր. որոյ վասն ասեն առ Արտաշէր. Դու լինիր առաջնորդ տացուածոց և տրգնանց գործոց ընդ բեալ առ ի մէնջ. որոց զնմանատուն խորհրդոց քոց առեալ է զփորձ, և գիտեմք զհրամանատարութիւն քոյ առաքինի ուղղութեամբ ի վեր եւ բևել. և արդ զոր կամիպ արա. և առաջնորդ ըզքեզ ընծայեցո. ասադիկ մեք պատրաստ եմք հետևել զնի բանից քոց, առնել որ ինչ միանգամ յօգուտ երկաքանչիւր կողմանց իցէ: Ապա ի ծաղել առաւօտուն ի մարտ պատրաստեալ Պարսից, հանդերձ Արտաշրատ առաջնորդաւ իւրեանց, դեսպանա արձակեցին նախ առ արքայ Արտաւան ղՋիկ և զԿարէն, զառնուաւեարս գըԼխաւոր նահապետութեանց և զզօրավարս զօրաց: Երթեալ սոցա յանդիման եղեն մեծի արքային. և այսպէս խօսել սկսան ընդ նմա և ասեն. «Հրեշտակութեամբ եկեալ հասեալ եմք յաշխարհէն Պարսից. եթէ հանդարտեսցէն միտք քոյ ի լուր պատգամացն Պարսից, խօսեացուք և մեք զբանս հրեշտակութեան մերոյ աներկիւղ և անվտանգ. քանզի և այս հրամանք օրինաց են՝ կարգեալ յառաջնում աեբանց, որ ազատ կացուցին զդեսպանս յամենայն վնասուս. և արդ եթէ ասցես հրաման, արքայ, խօսեացուք:

Եւ Թագաւորն Արտաւան հրամայեաց նոցա ասել զոր կամէին:

Է. Յայնժամ խօսել սկսան և ասեն. Փոյթ պնդութեան է արքայ առ մեզ Պարսիկս՝ ծառայից հպատակ կալ արքայի, իբրու զդրօվ նըւրան ամենայնի աէր. և Թագաւորին՝ հաւատարութեամբ և արդարութեամբ լինել իրացն խնա-

մատաղ, և հետ ի խժդժագոյն բարուց կառավարել. ահարկու առ Թշնամիսն երևել և մարդասէր առ հպատակս: Քանզի զիարդ իցէ նմա վանիցաս պատուհասել, եթէ ինքն ինքեանմէ յանիրաւութիւնս հատեալ իցէ. սրպէս զեղեռնադործս ընդ տանջանօք արկանել, եթէ ինքն ի չարս ինասակարս իցէ յոժարեալ: Արդ մեր ի վերայ հասեալ ծանր ծանր ինասուց քրոջդ յանցանաց, ի բաց որոշեցաք զմեզ ի քումմէ հնազանդութենէդ. ոչ ի հպատակութենէն տաղտկացեալք, այլ յայսպիսոյ Թագաւորէն խուսափեալք. ոչ զբանաւորութենէ բուռն հարեալք, այլ անազդորոյն մտաց բանաւորի տանել չկարացեալք »:

Զայս խօսեցան Պարսիկք ընդ ալքայլին:

Իսկ Թագաւորն Պրատաան զաչս ի խոնարհ ունելով՝ զմեծ ժամն դյատակս տանն Նշմարելը, իրագէտ, կանխագէտ կործանման Թագաւորութեան իւրոյ: Հայեցեալ ասա առ պատգամաւորսն ասէ. Ես ինքն եմ պատճառք չարեացս, զի զոմանս ի ձէնջ իշխանութեամբ և աւագութեամբ մեծարեցի, զայլս ընչիւք ճոխացուցի, և զյոլովս ալքունի պարգևօք ագահակաց և կալուածոց տէրս կացուցի: Հապա դուք փութասջիք ի կառաւարութիւն խորհրդոց ձերոց, և զիս ինքն տեսանիջիք ի ձերդ խորհուրդ պատշաճեալ. տաց ձեզ զիտել չվնեալ ընդդիմակաց Թագաւորի. իսկ դուք որ առաքեալքդ էք ի բաց գնացէք. և մի՛ևս յաւելուցուք այսպիսեաց բանից լինել ապառաւորք, զոյգ արդեօք ի ձէնջ սկսայց զվնասջարեաց յիս անիրաւելոց:

Ը. Զայսոսիկ լսեալ լսան Չինի և Կարին՝ զոհան յասեան խորհրդոյ Պարսից, և պատմիչին պատենայն Արտաչրի և աւագանւոյն Պարսից. և յաւելին ի կարգի բանիցն՝ զանդուդն սլսոնաու-

Թիւն յիմաթուԹեան Թագաւորին, որ ոչ ևս այնուհետև ապատեալ ինայր պատգամաց, այլ ընդխորհուրդս իւր զինեալ էր ընդդէմ իշխանացն։ Իսկ Արտաշիր յղեալ առ Արտաւազտ՝ 'ի բաց կորզեաց զնա. և արգել փակեաց զնա ազխիւքն հանդերձ յամուր դղեկի. և ինքն միաբանուԹեամբ ընդ Պարսից և ընդ Ասորեստանեայց վառեալ կազմեր ընդդէմ Արտաւանայ արքային մեծի։ Եւ 'ի վերայ հասեալ Արտաւանայ իրացն, եԹէ պատրաստեն 'ի մարտ ընդդէմ իւր, պատրաստէր և ինքն միաբանուԹեամբ ՊարԹեւաց, ուՆեղով և 'ի Պարսից ոչ սակաւս՝ համակամս և հաւանս։ Եւ յառաջնում յարձակման անդ՝ յորում հարան ընդ միմեանս, բազումք յերկաքանչիւր կողմանց Թաւալգլոր անկանէին 'ի Պարսից և 'ի ՊարԹեւաց. այլ զօրանայր կողմն Արտաշրի՝ 'ի լքանել Թոզուլ և այլոց ևս բազմաց զԱրտաւան, և գալ յենուլ յինքն յԱրտաշիր։ Ապա իբրև յերկրորդում նետադին անդ հարան ընդ միմեանս, բազումք անկանէին 'ի ՊարԹեւաց, և ինքն Արտաւան աճապարէր 'ի փախուստ. բայց ապա գոՀաւ միւսանգամ 'ի տեղի մարտին։ Արդ իբրև զամիսս երկուասան Ձակատեալ կային ընդդէմ միմեանց, երբեմն 'ի մարտ մարտուցեալք և երբեմն դադարեալք, ապա միւսանգամ բուռն հարեալ զմարտ, իբրև այն ինչ առ միմեանս մերձեցեալ կամէին յիրեարս խառնել, ձայնեաց առ արքայ Արտաւան, և ասէ...

Բ. Թագաւորեաց 'ի վերայ ինացելոցն ՊարԹեւաց և Պարսից և Ասորեստանեայց. զամենայն ինչ բարեկարգուԹեամբ ուզղեալ, սիրով երևեալ արդարուԹեան և հաւասարապատ իշխանուԹեան. քանզի դուն գործէր արժանի երևել գուԹեան, որ կորզեաց յանձն զարքայուԹիւնն Պարսից։

Ահա ամենայն անցք որ գործեցան ըստ եղեն յահանդէս խոսրովու արշակունւոյ, թագաւորին Հայոց մեծաց, եթէ որդին Սասանայ Արտաշէր զօրացեալ բռնացաւ ի վերայ թագաւորութեան Պարսից, և կորոյս զեղբայր նորա զԱրտաւան։ Յաւելցին գործք կանքն և ասեն թէ և Պարթեւք հաճեալ հաւանեալ են յոյժ ընդ թագաւորութիւն Արտաշրի, քան ընդ համազգւոյն նորա և արեան հարազատին. և զի վաղվաղակի լքքին խոտեցին....

Ահա հատուածք եկամուտ կամ անհարազատ պէտք չէ սեպել, ու մեր ձեռքը եղած Ագաթանգեղոսի պատմութեան գրչագրացը մէջ չգտնուելուն համար՝ մերժել. այլ անտարակոյս կորսուած, ու միայն յունական թարգմանութեան մէջ մնացած։ Վասն զի խորենացին ալ՝ մեր մեծն խոսրով թագաւորին վրայ խօսելու առեն, այսպէս կը զրուցէ. «Յաղագս որոյ և համառօտիցին Ագաթանգեղեայ պատմել փորք ի շատէ զմահն Արտաւանայ Պարսից արքայի և զբառնալ տէրութեան Պարթեւաց Արտաշրէ որդւոյ Սասանայ»։ Ուստի և հաւանական կ՚երեւնայ թէ Մովսէսի խորենացւոյն ձեռքն եղած օրինակին մէջ այս հատուածը կը գտնուէր, որովհետև հիմայ հայերէնին մէջ Արտաւանայ մահը չկայ։

Ահա վերը յիշուած հատուածէն ետքը՝ կը սկսի Ագաթանգեղոս իր սիրելի պատմութիւնը։ Պատմութիւն մը՝ որուն առջի երեսէն կ՚երեւնայ թէ ինչպէս Աստուծոյ միայնոյ հնարաւոր է՝ մահկանացու աչաց աղէտք ու չարիք կարծուածներէն՝ բարութիւն առաջ բերել։ Հայաստանի երջանկութեան և հաւատոյ լուսաւորութեան դարը հասեր էր. Աստուծոյ՝ մէկ բարե-

բար նայուածքովը՝ Թագէի ու Բարթուղիմեայ առաքելութեանց պտուղը կ'երևնար. ու անոնց արեան արդասաւորութիւնը։

Ա.յն ժամանակներըը՝ արևելից իշխանութիւնը կարգէ դուրս ցնցում մը կ'իմանար. Պարթեւք չկարենալով Սասանեանց դէմ դնել, կը խոնարհէին անոնց առջև, ու մեր Խոսրով Թագաւորը իր չինանիստ քաղաքներն ու ամարաստան տեղուանքը Թողով՝ ինչուան այն օրերը իմաստութեամբ գործածած խաղաղարար վարչութեան գաւազանը կը Թողուր, ու անոր տեղ զէնք առնելով՝ Պարսից վրայ պատերազմի կ'ելլէր, ու յաղթական վարքով իր հայրենիքը կը դառնար։ Բայց որով հետև իր կեանքը յարատև տագնապ էր Սասանեանց, ու անոր զէնքին վախովը միշտ ահուդողի մէջ էին, բնական էր որ եռանդ ըլլային այն կեանքը վերցնելու հնարք մը փնտռել։ Ա.յս սեռ խորհրդոյն գործադրութիւնը իր վրայ առաւ Ա.նակ, ու բարեկամութիւն կեղծելով՝ Խոսրովու հետ ընտանեցաւ. և այն մոեռմութեան առած համարձակութեամբը՝ որսի մէջ զինքն սպաննեց։ Թագաւորը դեռ բոլորովին մահուամբ չձանրացած աչուըները զինքը սպաննող Ա.նակայ վրայ դարձընելով, կխոսակցուր ձայնովը հրամայեց որ այն անօրինին տունը տեղն ու ցեղը չնջուի։ Ա.յն ընդհանուր մահուան մէջէն միայն սուրբն Գրիգոր և իր Սուրէն եղբայրը կ'ազատին։

Գրիգոր՝ կեսարիոյ օտարութեանը մէջ սրտի ու մտայ կրթութիւն մը ընդունելով, իր հօրը Անակայ յանցանքը քաւելու համար՝ յանձն կ'առնու խոսրովու որդւոյն Տրդատայ ծառայութեան մէջ մնալ։ Այն հաւատարիմ սպասաւորութեան ժամանակ՝ կ'իմանայ Տրդատ Գրիգորի հաւատարմութիւնը նաև առ Աստուած, ու չարաչար տանջանքներով անոր հաւատոյ հաստատութիւնը փորձելէն ետքը, երբոր կ'իմանայ ալ թէ իր հօրը սպանչին որդին է, արեւու անարժան սեպելով այնպիսի կեանք մը, կը դատապարտէ որ Աթռաշատ խոր վիրապին մէջ դժնդակ մահուամբ իր հօրը յանցանքը քաւէ։

Երբոր Աստուծոյ կամքը՝ Գրիգոր վիրապին մթութեան մէջ տասն և հինգ տարի անյուսալի կենդանութեամբ կ'ապրէր, ուրիշ սրտաշարժ անսարանի մըն ալ ականատես կ'ըլլար Հայաստան։ Հռոմայեցի Գիոկղետիանոս կառավարչա կայսեր ձեռքէն կը փախչէին Գայիանէ և իրեն հետևող կուսանաց խումբ մը. որոնց մէջ ամենէն ազնիւ կը փայլէր Հռիփսիմէ, որ իր գեղեցկութիւնը երկնքի ընծայած, Դիոկղետիանոսի հարստութենէն փախած ժամանակ, Տրդատայ աչքն ու սիրտը իր վրայ կը դարձընէր։ Սակայն Տրդատ իր ամէն ուժովը՝ չէր կրնար սակայն կուսի մը դէմ դրնել. անոր հետ պատերազմած ժամանակ կը յաղթուի իրմէն. ու դեռ անոր դի-

ղեցկութեամբը կուբացած չիկրնար ուրիշ կերպով մը յագթել, բայց եթէ դինքն ալ իր ընկերներն ալ սպաննել տալով։

Դեռ անոնց մարմինը անթաղ՝ բայց անապական մնացած առեն, աստուածային բարկութեան գաւազանը թէ ղՏրդատեսգաւոր և թէ դրովանդակ նախարարները կը զարնէր։ Նարուզոդոնոսորայ պատիժը կը կրկնուէր Տրդատայ վրայ։ Ա.յս անակնկալ ու սաստիկ պատուհասը այնպիսի չփոթութիւն մը կը ձգէր նախարարաց մէջ, որ հնարք կը փնտռէին այն պատուհասէն ազատելու։ Դոյն հնարքը՝ աստուածային տեսլեամբ կը յայտնուէր Խոսրովիդխատոյ, որ կը հրամայէր ղԳրիգորիոս հանել վիրապէն, ու իրմէն փնտռել այն բժշկութիւնը։ Հնազանդեցան տեսիլքին, ու անկէց՝ դոր աշխարհի մեսսակար ու կենաց անգամ արժանի չէին սեպեր, կը խնդրէին իրենց բժշկութիւնը։ Սուրբն Գրիգոր ալ, չէ թէ միայն անոնց մարմնոյն՝ հապա նաև հոգւոյն բժշկութիւնը կը պարգևէր՝ աստուածատուոյց խրատներով ու բանիւք։ Ա.յս քարոզութիւնը՝ Ագաթանգեղոսյ գրոցը մեծ մասն է։

Ա.նկէ նոքը կը պատմէ Ագաթանգեղոս՝ Գրիգորի և Տրդատայ ձեռքով եղած բարեկարգութիւնները ի Հայաստան. անոնց ի Հռոմ ճանապարհորդելը, նորէն դառնալը, Վիկիոյ ժողովոյն հրաւէրը առ Լուսաւորիչն Հայաստանի, ու ասոր՝ իր որ-

դին փոխանակ գրկելը ու առանձնութիւնը։ Հոս կը լսենայ Ագաթանգեղոսի պատմութիւնը։

Ինչ լեզուով գրեց Ագաթանգեղոս իր Պատմութիւնը։ — Խնդիր է թէ ինչ լեզուով շարադրեր է Ագաթանգեղոս իր Պատմութիւնը։ Վասն զի ոմանք տեսնելով թէ անիկայ Հռովմայեցի էր, օտարազգւոյ համար անկարելի սեպեցին անանկ ճշդիւտ ու ընտիր հայկաբանելը. ուստի և ըսին թէ ինքը յունարէն չարադրած է այս գիրքը, ու եթէ՛ թարգմանչաց՛ ի հայ լեզու փոխուած։ Իրենց այս կարծեացը հաւաստիք մէջ կը բերեն թէ Ագաթանգեղոսի յունարէն օրինակը կը գտնուի առ Ամէնոն Մետափրաստեայ, որ ուրիշ սրբոց վարուցը և վկայաբանութեանց հետ՝ սրբոյն Գրիգորի վարքն ալ կ'աւանդէ Ագաթանգեղեայ խօսքերն մէջ բերելով, բայց՛ ի երկար վարգապետութենէն։

Այս կարծեաց հերքումը, ըստ մեզ, իր մէջն է։ Ագաթանգեղոս Հռովմայեցի էր, իսկ գրուածքը՝ յունարէն. պէտք էր որ լսաին կամ Հռովմայեցի լեզուով շարադրած ըլլար երկասիրութիւնը՝ որպէս զի այս տարակոյսը իր վրան չբլլար։ Իսկ եթէ յունարէն գիտութեանը համար ինքը Ագաթանգեղոս կը վկայէ, ինչ զարմանք թէ հայերէն ալ սորված ըլլայ, որ այնչափ առեն Հայոց արքունիքը կեցաւ, ու նախարարաց ու պաշտօնէից հետ խօսակից ու կենակից։

Երկրորդ՝ Ագաթանգեղոս կ'աւանդէ թէ Տրդատայ հրամանաւ ձեռք զարկաւ այս երկասիրութեան, ու Տրդատայ կամքն էր որ մեր թագաւորաց և արքունի դիւաններ մէջ մնայ. որպէս դի ըլլայ «յօրինակ քաջալերիչ հոգևոր ծննդոց իւրեանց». «դի և որդիք, կ'ըսէ, որ ծնանին՝ յարիցեն և պատմեսցեն որդւոց իւրեանց. դի դիցեն առ Աստուած դյոյս իւրեանց, և մի մոռասցին զգործս Աստուծոյ. խնդրելով խնդրեսցեն՝ դի մի եղիցին իբրև զհարս իւրեանց»: Ուրեմն Հայոց համար գրուած երկասիրութիւն մը՝ հարկ էր որ անոնց լեզուով գրուէր. և որչափ ալ ենթադրենք թէ յունական լեզուին ուսումը հասարակ էր մեր մէջը, սակայն տարակոյս չկայ որ ամենուն հասկընալի լեզու չէր: Փարպեցւոյն խօսքը՝ իր ժամանակի Հայոց համար, երաշխաւորութիւն է մեր այս կարծեացը. «Ոչ ինչ էին, կ'ըսէ, կարող՝ լսել և օգտել ժողովուրդքն այնպիսի մեծ աշխարհի»: Ագաթանգեղոսի սկզբնագրին յունական սեպհականուն գլխաւոր պատճառ, ինչպէս ըսինք, նոյն լեզուով իր երկասիրութեան գոնուիլն է: Բայց այս պատճառը նթէ զօրելու ըլլար՝ հաւասարապէս պիտի գրուցուէր նաև հայկականին համար: Ուստի այս խնդրոյն վրայ ստուգութեամբ դատաստան ընելու համար՝ հարկ է երկուքն ալ իրարու հետ բաղդատել, և անանկով խնդրոյն լուծումը դիւրացընել: Մենք ալ այս հնարքին ձեռք զարնենք:

Ա. « Զի գետն Երասխ (Ἔρασχ) յարուցեալ գայր դարձս և դարձս »։

Թէ որ սկզբնադիրը յունաբէն ըլլար, Երասխ գետին անունը Ἐρασχ չէր դներ, հապա ըստ յունին Ἀράξης.

Բ. « Երթեալ հասանէր յամուր տեղին Անի, ի Թագաւորաբնակ կայանս հանդստանոցացն գերեզմանաց Թագաւորաց Հայոց. և անդ կործանեցեալ զբազինս զիցն Աբամազդայ՝ հօրն անուանեալ զիցն ամենայնի. (τοῦ Κρονοῦ του πατρὸς Διὸς παντοδαίμονος)։

Ահաւասիկ յայտնի նշան մըն ալ թէ յոյնը Հայերենէն թարգմանուած է. վասն զի Հայերենին մէջ կ՚ըսուի բառը չկայ, ու զԱբրամազդ Հայր կը սեպէ ուրիշ ամենատուածոց. իսկ յոյն թարգմանիչը առանկ կարդացեր է. «զբազինս գիցն՝ Աբամազդայ հօրն՝ (Κρονοῦ), անուանեալ զԴիւցն ամենայնէ. ու այս վերջին երկու բառերը Դիոսի ածական ըրեր է παντοδαίμονος բառով։

Գ. « Գայր հասանէր ի Մրհական մեհենանն առնուանեալ որդւոյն Աբամազդայ (ἐν τοῦ ἱερῷ Ηφοιστοῦ) ի գիւղն զոր Բագաւայիձն կոչեն ի պարթեւարէն լեզուէն »։

Մհէր առուածը՝ ըստ արեւելեան առասպելաց՝ արեւն է, չէ թէ կրակը կամ Հեփեստոս։ Հոս ալ թարգմանչին՝ արեւելքի գիցաբանութեան անհմտութիւնը կ՚երեւնայ։

Դ. « Ի կոմանս Կապադովկացւոց ի քաղաքն Կեսարացւոց՝ (εἰς πόλιν Καισαρείων) զոր ըստ Հայերէն լեզուի Մաճաք (Μασακ) կոչեն, զի տարեալ զՆերիգոս՝ քահանայապետ կացուսցէն իւրեանց աշխարհին »։

Յունականին՝ հայերէն առնելը՝ դնելը՝ է +ա-ղաչ կ՚ուզուածոց, փոխանակ ըսելու իրենց յատուկ ածուը εἰς Καισαρειαν կամ εἰς πολιν Καισαρειαν. յայտնի քննադատական նշան է թէ հայերէնէ թարգմանուած է յունականը։

Ե. « Եւ հրամայեաց կատարել անդ ամ յամէ՚ի նմին տեղւոջ Ժողովել ամենեցուն՚ի յիշատակ սրբոյն, որ օր եօթն էր սահմի ամսոյ. (τοῦ μηνὸς σαομὴ κατὰ χωραν λεγομενοῦ, κατα δὲ ρωμαίους οκτωβριοῦ)։

Սահմի ամսոյն մեկնութեան այս յաւելուածը, կամ յունին « ըստ հռոմայեցւոց հոկտեմբերի » ըսելը, հաւանական փաստ մըն է մեր կարծեաց առուգութեանը։

Զ. « Եւ դիւրատակ վկայիցն բերելոց Ժամադրեաց՚ի տօն մեծ հռչակեալ յառաջագոյն կարծեցեալ մեռանացն պաշտամանն, ՚ի Ժամանակի դիցն ամենօրեաբեր նոր պատոյց տօնին՝ հիւրընկալ դիցն վանատրի. զոր յառաջագոյն իսկ ՚ի նմին տեղւոջ պաշտեին յօր ուրախութեան նաւատարգ աւուր »։

Այս հատուածին մէջ հիւրընկալ դէպի վանատրի կոչուած տօնը՝ յատուկ էր Աթամազդայ. որովհետև այս աստուածը միայն թէ յունաց և թէ լատին առասպելաբանութեանց մէջ վանատր կոչուած է։ Արդ մէկ աստուածոյն տեղ՝ յունին բազմաստուածական ξενοδέκτων Θεῶν վանատր Աթանասիոյ ըսելը՝ զօրաւոր ապացոյց մըն ալ է անոր ակզբնագիր չըլլալուն. վասն զի մեր լեզուին դէպ ձայնը՝ բազմաստուածութեան վրայ առած է՝ փոխանակ միայն Աթամազդայ։

Է. « Ապա եկեալ գտանէին՚ի Դարանաղեաց գաւառին, ՚ի լերինն որ կոչի Մանեայ այրը »։

Ցոյնը հոս ալ փոխանակ դնելու σπήλαιον Մա-
ռին, հայերէն ձայնով կը դնէ Մանարբ.

Ը. « Չեհասարն Շահապիվանի և զիշխանն ըս-
պասակապետութեան » · (πασκαπετέων) :

Անհաւասիկ ուրիշ փաստ մըն ալ. Սպասակապե-
տութիւն բառին նշանակութիւնը ձանօթ է
մեզի. իսկ նոյն ձայնով յունական բառը՝ թէ մե-
զի և թէ ցուներց անձանօթ :

Թ. « Առնոյր (Դրիգոր) զԱրշակունեաց տոհմի
որբերն » : Ցոյնը՝ Սոսիննաց կը դնէ :

Մեր ևնթադրութեանը ստուգութեան համար այսչափ օրինակներ մէջ բերելը բաւական սեպելով, անցնինք ուրիշ խօսքի :

Դաշանց թուղթ.—Ագաթանգեղեայ գրոց մասն կը սեպեն ոմանք նաև Դաշանց կոչուած թուղթը :

Պատմութիւննիս կ'աւանդէ թէ երբոր Տրդատ թագաւոր և Գրիգոր Լուսաւորիչ լսեցին Կոստանդիանոսի հաւատալը ի Քրիստոս, այն հրաշալի փոփոխմանը համակից ըլլալու համար՝ անձամբ նման ի Հռոմ գնացին, և այն առթով՝ իրարու հետ բարեկամական դաշինք դրին :

Այս դէպքին ստուգութիւնը՝ Ագաթանգեղոսի խօսքերուն մէջ յայտնի կը տեսնուի. « (Կոստանդիանոս), կ'ըսէ, և արքային Տրդատայ իբրև եղբօր սիրելոյ սէր ցուցնել ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուածածանօթութեանն նո-

Յոյնը հոս ալ փոխանակ գնելու σπήλαιον Μα-
νῆς, հայերէն ձայնով կը գնէ Մանարհ.

Ը. « ՋՇահասպն Շահապիվանի և զիշխանն ըս-
պասպապետութեան » • (πασκαπετέων) :

Ահաւասիկ ուրիշ փաստ մըն ալ. Սպասակա-
պետութիւն բառին նշանակութիւնը ծանօթ է
մեզի. իսկ նոյն ձայնով յունական բառը՝ թէ մե-
զի և թէ Յունաց անծանօթ :

Թ. « Առնոյր (Գրիգոր) զԱրշակունեաց տոհմի
որբն » : Յոյնը՝ Սφαῖνοσα կը գնէ :

Մեր ենթադրութեանը տուղութեան համար այսչափ օրինակներ մէջ բերելը բաւական սեպելով, անցնինք ուրիշ խօսքի :

Դաշանց Թուղթ.—Ադաթանգեղեայ գրոց մասն կը սեպեն ամանք նաև Դաշանց կոչուած Թուղթը :

Պատմութիւնիս կ'աւանդէ թէ երբոր Տրդատ Թագաւոր և Գրիգոր Լուսաւորիչ լսեցին Կոստանդիանոսի հաւատալը ի Քրիստոս, այն հրաշալի փոփոխմանը խըն-դակից ըլլալու համար՝ անձամբ եկան ի Հռոմ գնացին, և այն առթով՝ իրարու հետ բարեկամական դաշինք դրին :

Այս դէպքին տուղութիւնը՝ Ադաթան-գեղոսի խօսքերուն մէջ յայտնի կը տես-նուի. « (Կոստանդիանոս), կ'ըսէ, և արքային Տրդատայ իբրև եղբօր սիրելւոյ սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանա-ւանդ վասն աստուածածանօթութեանն նո-

բենց առիթ առնելով՝ թշնամիք վրան կը վազէին անոր առացուածքներովն ու կոդոպուտով ճոխանալու, ինքզինքը պաշտպանելու անկարող Հայաստան՝ այն դաշանց թղթոյն զօրութեամբը կայսերաց օգնութիւնը կը խընդրէր։ Նոյն դաշինքը և ուխտերը կը յիշեցընէր սուրբն Վրթանէս՝ Կոստանդ կայսեր գրած թղթին մէջ, երբոր Տրդատայ Խոսրով որդին՝ անոր իշխանական աթոռոյն վրայ կ'ուզէր նստեցընել։ Ջնոյն և սուրբն Ցովհէփ կաթուղիկոս Թէոդոս կայսեր կ'երկրորդէր, երբոր Պարսիկք՝ մոգութեան կրօնքը կ'ուզէին Հայաստան մտցընել. «Նոքա, կ'ըսէ եղիշէ, ընթերցան զդիր պաշտաւնացդ Հայոց աշխարհին և զյիշատակարանս նախնեացն. բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին»։

Այսպէս ստուգապատում վկայութեանց առջև տարակոյս չմնար թէ Տրդատայ ու Կոստանդիանոսի, Սեղբեստրոսի ու Գրիգորի մէջ դաշինք դրուեցան. և հաւանական ալ է թէ այն առեն գրուած դաշանց թղթոյն յօրինողն Ագաթանգեղոս եղած ըլլայ։ Այսիկայ ոչ միայն իր ատենադպրութեան պաշտամանը յատուկ ծառայութիւն մըն էր, այլ նաև խորհնայցոյն մէկ խօսքէն կրնայ դուշակուիլ։ Որովհետև վրաց աշխարհին առաքելուհի սրբուհւոյն Նունեայ վրայ խօսելուն ա-

տեն, Ա.գաթանգեղոս քեզի կը սովրեցը-
նէ, կ'ըսէ, թէ ինչպէս քարոզից, « Ի կը-
զարչից սկսեալ, առ դրամբք Աշխատաց և
կասրից մինչև ի սահմանս Մաղքեաց »։
Բայց Ա.գաթանգեղոսի պատմագրութեա-
նը մէջ Նուննայ և ոչ անունը կը տես-
նուի, այլ միայն ի Դաշանց թղթին. որով-
կամ պիտի ըսենք թէ Ա.գաթանգեղոսի
երկասիրութիւնը ամբողջ մեր ձեռքը հա-
սած չէ, և կամ թէ անոն է նաև Դա-
շանց թղթոյն յօրինուածը։

Բայց թէ որ Ա.գաթանգեղոսի պատմու-
թեան ոճը՝ Դաշանց թղթոյն հետ բաղդա-
տենք, թէ գրութիւնը և թէ լեզուն յայտ-
նի կ'ազազակեն թէ կամ բոլորովին ան-
հարազատ է այս գրուածքը, և կամ այն-
չափ ձեռնամուխ եղած՝ որ անհարազա-
տութեան վիճակի մէջ ընկեր է։

Նախ լեզուին անտեղութիւններէն սկը-
սինք։

Ոչ միայն Ա.գաթանգեղոսի յատուկ
վայելուչ ու հայկաբան ոճ չերևնար այս
թղթոյս մէջ, այլ զանգուած մըն է զանա-
զան նոր ազգաց լեզուացը բառերուն։
Ասսո և տաճկական սիրի և սանձախ բա-
ւերը կը գործածէ. արաբական վէհափ բա-
ւը, գաղղիացի ֆրէր (frère) ու շամբռ (cham-
bre) ձայնները. յօսիթայ կամ դրբիբայ կը
կոչէ գլօսորիդուխա, որ է տիչես (du-
chesse) կամ տուքեսսա (duchessa). նոյնպէս
լատինական օֆրանդ (offrand) նուէր բառը։

կը թողունք ուրիշ ատոնց նման անհարա-
զատ բառերը, որոնցմով յայտնի կ'երև-
նայ թէ Կիլիկեցւոց կամ Խաչակրաց ժա-
մանակակից էր այս Թղթոյն յօրինողը՝ կամ
անոր սկզբնագրին խանգարիչը։

Լեզուին խամուճութիւնը հաւասար աչքի
կը զարնէ նաև այնպիսի դիպուածոց յի-
շատակութիւնք՝ զորոնք անկարելի էր որ
Ագաթանգեղոսի պէս կիրթ ու հմուտ միար
մը մտածէր ու գրի վրայ առնուր։ Ատոնց
կարգէն է այն վիշապին պատմութիւնը որ
կ'ահաբեկէր բոլոր Հռոմմայեցւոց քաղա-
քը, ու Տրդատ սպաննեց զանիկայ. և ինչ-
պէս յետին ու տխմար գրիչ մը կը յաւե-
լու՝ այն յաղթամարմին վիշապին գլուխը
մինչև ի դուռն քաղաքին բերաւ, զոր հա-
քէն յիսունաւերկու եղինք հազիւ կրցան
ձգել։

Սրբոյն Անդրեասեան այնչափ ինքզին-
քը մեծցընելն ալ՝ ոչ իրեն սրբութեանը և
ոչ վիճակին բարձրութեանը կրնանք պատ-
շաճեցընել։ Իրեն աթոռը նստող հայրա-
պետներէն ոչ ոք այն լեզուն գործածած
է։ Ու անիկայ որ ինքզինքն այնչափ կը
մեծցընէ՝ գրեթէ հաւասարապատիւ իշ-
խանութիւն կու տայ նաև սրբոյն Գրիգո-
րի. բոլոր արևմտից և արևելից եպիսկոպո-
սաց, եպիսկոպոսապետաց և պատրիար-
քաց կ'արգելու որ չըլլայ թէ համարձակին
Գրիգորի վրայ ձեռք դնել. այլ Հայոց կա-
թուղիկոսը միայն իրեն եպիսկոպոսներէն

կարևնայ ձեռնադրութիւն առնուլ, և թէ սրբոյն Գրիգորի և յաջորդաց հաւանութեամբ պիտի դրուին երուսաղէմի, Անտիոքայ և Աղեքսանդրիոյ մետրապոլիտք. և թէ յարևելս՝ առաքելական գահուն փոխանորդ սեպուին Հայոց քահանայապետք։

Դարձեալ՝ ռամկական առասպելներ ալ կը տեսնուին թղթոյս մէջ։ Ասոնց կարգէն են՝ թէ Նոյ փոխուգիոյ մէջ չիներ է իր տապանը. թէ կոստանդիանոս՝ Բեթղեհէմ քաղաքը ընծայեր է Տրդատայ, և թէ Տրդատ՝ իր հետ եղող կտրիճներէն իրեք-հարիւր հոգի Կոստանդիանոսի արքունեաց մէջ ձգեր է անոր խնդրանօքը, որ եօքը կայսեր անձնապահապետներն եղեր են՝ի պատերազմունս, և այլն։

Ասոնցմէ զատ ժամանակագրական այլ և այլ սխալներ ալ կան։ Ինչպէս, կ'ըսէ թէ Կոստանդիանոս իր մօրը Հեղինէի ձեռքով գտնուած կենաց փայտին մէկ մասը չնորհեր է Տրդատայ. ուր ճշմարիտ պատմութիւնն կ'աւանդէ թէ Կոստանդիանոսի դարձէն չատ տարի եօքը եղաւ խաչին գիւտը Հեղինէի ձեռքով։ Կը թողունք ուրիշ ատուգութեան կարօտ խօսքերը. ինչպէս Կոստանդիանոսին՝ իրեն մօրաքեռորդի կոչելը զՀոխփսիմէ, ու զՏրդատէս փեսայ։

Այս ամէն հաւաստիք չայտնի կը ցուցընեն թէ հիմակուան մեր ձեռքն եղած Դաչանց Թուղթը անհարազատ գործ մըն է յետին ժամանակաց, կամ ինչպէս վերն

ըսինք, Ագաթանգեղեայ ձեռքով յօրինուածին՝ չէ թէ մատենաւոր՝ հապա ամբողջական խանգարումն։

Այլ և այլ անգամ տպագրուած է Ագաթանգեղոսի գիրքը. ասոնց մէջ առաջին է ի Կոստանդնուպոլիս եղածը 1709ին Իջմիածնի նուիրակ Աստուածատուր վարդապետի մը ձեռքով։ Վերջի երկու տպագրութիւնքն եղած են ի Վենետիկ, Մխիթարեանց վանքը, ի 1835 և ի 1862, ընտիր և հարազատ ընդհերքուածով. որոց ինամքով թարգմանուած է նաև խաչերէն և տպագրած հոն, ի 1843։

ՋԵՆՈՒ ԳԼԱԿ

Ասորի էր Ջենոբ, ու սրբոյն Գրիգորի հետ Կեսարիայէն ի Հայաստան եկած, կրօնաւորական կենաց կարգերը՝ որուն նուիրած էր ինքզինքը, նորահաստատ աշխարհին մէջ ծաւալելու։ Այս վախճանաւ Լուսաւորիչ Տարօնոյ մօտ իննակնեան՝ կամ սրբոյն Կարապետի վանքը հաստատելով, հոն առաջնորդ և վանահայր կարգեց զՋենոբ։

Այսչափ է Ջենոբայ վրայ ունեցած տեղեկութիւննիս։ Քանի մը խօսք ալ իր երկասիրութեանը վրայ ըրուցենք, յորում պիտի տեսնուի թէ ինչ պատճառաւ և երբ գրից իր պատմութեան դիրքը։ Իր և Ա-

գաթանգեղոսի դրոց մէջ երևցած տարբերութեանց վրայ պէտք չէ զարմանալ. որովհետև ինչպէս ինքն ալ կ'ըսէ, ինքն Ագաթանգեղոսէն առաջ չարադրած է իւր գիրքը։

Ջևնոբայ Պատմութեան գիրքը. — Ջևնոբ իր պատմութեան գիրքը քանի մը նամակներով կը սկսի։ Առնցմէ առջինը՝ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ կը գրէ առ Վեհանդիոս Հայրապետ կեսարու. յորում՝ նախ ընորհակալ կ'ըլլայ սրբոյն Յովհաննու Մկրտչի նշխարքը իրեն զրկելուն համար, և անոր ձեռքով Հայաստանի մէջ եղած հրաշալիքը կը պատմէ Գիսանեայ կոոց պատկերին կործանմամբը։ Ընորհակալ կ'ըլլայ դարձեալ Աննոն և Կրօնիդէս ճգնաւորաց համար, զորոնք նոյն սուրբ Հայրապետը զրկած էր ի Հայաստան, և կը խնդրէ որ անոնց նման ուրիշներ ալ յուզարկէ, մանաւանդ զՑիմոթէոս և զՂեվիաղար՝ սրբութեամբ նշանաւոր անձինքը։

Վեհանդիոս այս թղթոյն փոխարէնը կը գարձընէ առ Լուսաւորիչն։ Ուրախակից կ'ըլլայ այն աստուածահրաշ փոփոխութեանց համար՝ որոց հանդիսարան եղած էր Հայաստան. ու այլ և այլ զգուշութիւններ կը պատուիրէ սրբոյն Գրիգորի։ Իսկ այն կրօնաւորաց համար՝ զորոնք կը խնդրէր իրմէ, կը ծանուցանէ որ ուրիշ տեղ են։ Սուրբն Գրիգոր այս թուղթն առնե-

լով շատ ցաւեցաւ, ու թագաւորին և իշխանաց հետ մէկտեղ թուղթ մը գրեց առ Եղիազար և առ Տիմոթէոս։ Ասոնց գործակից ու վաստակակիցը Բևկտոր, Անաստաս, Աբիւդաս և Մարկեղիոս նոյն ժամանակները Բիւզանդիոն քաղաքը եկեր էին. հոն հանդիպեցան իրենց քանի մը անձինք որ Տարօնոյ Աշտիշատ քաղաքէն եկած էին, ու պատմեցին թէ ինչ զարմանալի գործեր կատարեց Աստուած սրբոյն Գրիգորի ձեռքովը. և փափաքելով այս դիպաց մանրամասն տեղեկութիւնը ունենալ, մանաւոր թղթով մը աղաչեցին զսուրբն Գրիգոր որ իրեն պաշտօնէիցմէ մէկուն պատուիրէ՝ որպէս զի այդ ամէն հանդիպած դէպքերը՝ գրով մը իրենց ծանօթացընէ։ Սուրբն Գրիգոր երբոր այս թուղթն առաւ, Ջենոբայ Աստուծոյ հրամայեց որ առջի ու երկրորդ պատերազմաց պատմութիւնը նամակով մը անոնց իմացընէ։ Ջենոր ուղեց որ Խոսրովու մահուընէն սկսի պատմութիւնը. բայց սուրբն Գրիգոր չանձն չառաւ. հապա միայն անոնց խնդրածը գրել պատուիրեց։

Ա. յս առթով շարագրեց Ջենոր իր Պատմութիւնը։ Համառօտիւ կ'աւանդէ սրբոյն Գրիգորի լուսաւորչին պատմութիւնը, Խոսրովու մահը Անակայ ձեռքով, անոր ազգատոհմին բոլորովին ջնջուիլը, ու միայն երկու հոգւոյ ազատիլը, ու անոնցմէ մէկուն՝ Ժամանակ անցնելէն ետքը Տրդատայ

բով ծառայութեան մտնելը, ու կոոց պաշտօն չմատուցանելուն համար այլ և այլ տանջանաց մատնուիլը, վիրապը իջնելը, անկէց դուրս ելլելով՝ զամէնքն աշակերտելը քրիստոսական հաւատոց, եպիսկոպոս ձեռնադրիլը՝ի Ղեւոնդեայ։ Դարձեալ կը պատմէ թէ ինչպէս սուրբն Գրիգոր կնաբարեաչն դառնալու առնն ամէն ջանքը բանեցուց կռապաշտներն ու մեհեանները կործանելու, և այն պատճառաւ կռապաշտ Արձան ու Դեմետր իշխաններն և իրենց համախոհքն՝ Գրիգորի ու Տրդատայ հետ մեկ եղող հաւատարիմ ու քրիստոնեայ բանակին հետ պատերազմեցան։ Ասով կը լմընայ Ջենոբայ դրոց առջի պատճէնը։

Երկրորդ պատճէնին խորագիրն է «Վասն պատերազմին որ յԱրձանն եղև»։ Յորում նոյնպէս Տրդատայ ըրած պատերազմները և քաջութեանց պատմութիւնն ընդլով կը լմընցնէ երկրորդ թուղթը, որ միանգամայն իր գրոցն ալ լրումն է։

Ասյ և այլ աղբիւրներ ունեցած է Ջենոբ այս գիրքը շարադրելու համար. ու ասնանկ պատմագիրներ կը յիշատակէ որ բոլորովին անծանօթ են մեզի։ Ասոնց կարգէն են Բարգա կամ Բարդեծան և Պիսիդոն Թարգմանիչ։ Ուր որ ինքը սոսկալած է համառօտ ոճով անցնիլ, հոն երբեմն այս պատմագրաց կը դրկէ իր ընթերցողը. «Ընթերցիր, կ'ըսէ տեղ մը, զվարգաւո-

բութիւն Հնփթադիննկայ հելլենացի գրով, և կամ զթագաւորութիւնն Հնոց գոր գըտանես յԱրևմտեայ քաղաքի առ Բարգայ պատմագրի»։ Ուրիշ տեղ մըն ալ. «Ցոր եթէ առուգիւ կամիք իմանալ, զՊիսիդոն Թարգմանիչ ասորի՝ հարցէք»։

Ինչպէս որ և իցէ հին երկասիրութիւնք՝ ասանկ ալ Հնոցայ գրուածքը չատ տղաւաղութիւն կրած է անհմուտ և ճեռնամուխ գրիչներէ, որով թէ լեզուին և թէ պատմութեան մէջ այլ և այլ կերպարանափոխութիւնք մտած։ Աւակէց առաջ եկած է լեզուին խառնութիւնը, բառից և դարձուածոց սխալ կամ անհարազատ իմաստներով ու եղանակաւ գործածուիլը, երբեմն ալ ամբողջ խօսքերուն մէջ և անխմանալի ընելը։

Հնոցայ ինչ լեզուով գրելուն վրայ տարակոյս կայ. Հաւանականաբար հայերէն լեզուով գրած չէ, որովհետև Թուղթը ասորւոց համար ըլլալով՝ հարկ էր որ անոնց լեզուովը չարադրէր։ Ոմանք կը համարին թէ նախ ասորերէն գրած ըլլայ, ու ետքը Թարգմանած ՚ի հայ. որովհետև ՚ի գրչագրաց ոմանք այս խորագիրը կը դնեն նոյն գրքին. Պատմութիւն Տարսոնոյ՝ զոր բարգմանեաց Հնոց ասորի։ Բայց եթէ մէկը՝ բարգմանիչ բառը չարագրելու տեղ գործածուած հասկընայ՝ խօսքին իմաստն այլայլած չըլլար։ Կարելի է որ հայերէն Թարգմանութիւնը ժամանակաւ ետքը եղած ըլլայ. և

որովհետև Ձէննոբայ և անոր պատմութիւ-
նը չարայարտղին՝ Յովհաննու Մամիկոնե-
նի գրոցը մէջ շատ նմանութիւն կը տես-
նեն ոմանք, հաւանական կը սեպեն որ
նոյն իսկ Մամիկոնեանն եղած ըլլայ Թարգ-
մանիչը։

Ձէննոբայ գրոցը առաջին տպագրութիւնն եղած է ի Կոստանդնուպոլիս 1719ին, ջանիւք և սրբագրութեամբ Պաղտասար դպրի. իսկ երկրորդ և ընտրելագոյն տպագրութիւնն ի Վենետիկ, Մխիթարեանց վանքը 1836ին, այլ և այլ ձեռագրաց բաղդատութեամբ. յետ որոց ա-
ւելի հին և ընտիր օրինակ ալ գտուած է։

ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ

Այս նուիրական անուան առջևը՝ մեր
քաղաքական պատմութիւնը նոր կերպա-
րանք մը կ'առնու. Հայաստանի արքունա-
կան սահանեալ գահոյքը՝ մէկ երկու ան-
գամ իրեն պարտական է իր հաստատու-
թիւնը. թագաւորաց սահմանիչ, նախարա-
րաց ու ժողովրդեան խրատող ու քարոզ,
ամենուն հաւասար հայր եղած, և ազգին
անմահական երախտագիտութեանը ար-
ժանի։ Սակայն ոչ ժամանակն իրեն, և ոչ
ինքը ժամանակին արժանաւոր կ'երևնայ.
իր ամէն ջանքովը՝ դՀայաստան վերանո-

բոգելու, գրելէ աչքովը կը տեսնէ անոր անկումը, և հոգեխառն գմայլմանցը մէջ՝ արցունքով կը նկատէ անոր գլուխը գա-լիք փորձանքները. անանկ թշուառութիւն-ներ՝ երկնից կամքովը սահմանուած, ո-րոնց առջևն առնելու համար՝ բաւական չըլլար իւր մեծ հոգին և անխոնջ եռանդը։ Մանաւանդ թէ պատմութեանց մէջ քիչ անգամ լրեն նմաններն ունեցող դէպ-քով մը՝ անօրէնութիւնը դժնդակ յաղ-թանակ մը կը կանգնէ, և այն լեզուն և սիրտը՝ որուն խրատուց չկրնար հանդուր-ժել, և որուն առաքինութեանց նմանիլը վատութիւն կը սեպէ, բոլորովին կը համ-բացընէ, թոյն խմցընելով անոր՝ որ իւր հայրենեացը անմահութեան բաժակը մատ-ուակելէն չէր յոգնած։

Ա՛յս է մեծին Ներսէսի վարուց համա-ռօտ ուրուագիծը։ Տխուր դէպք մը, ո-րուն ամէնը՝ դարուց հեռաւորութիւնն չէ կրցած փարատել։

Ինչպէս ազգին քաղաքական կեանցը, ասանկ ալ բանասիրականին վրայ մեծ ազ-դեցութիւն ունեցած է Ներսէս. թէպէտ և պատմութիւններս՝ այս նկատմամբ խիստ քիչ տեղեկութիւն կ՚աւանդէ։

Տղայութեան հասակին կեսարիա գնա-ցած է Ներսէս, և հոն իմաստասիրական ուսմանց մէջ ունեցած յառաջադիմու-թեամբը՝ աշակերտակցացը սիրելի, վար-դապետաց ալ զարմանալի երեցած, ինչ-

պէս կը վկայէ Բիւզանդ։ Անկէց Կոստանդնուպոլիս անցնելով, հոն Յունաց երեւելի իշխաններուն մէկուն դուստրն իրեն ամուսնացուց, և այն զուգութեան միակ պտուղն եղաւ սուրբն Սահակ պարթեւ։

Հայաստան դառնալէն ետքը՝ փառնեւսեհի յաջորդ եղաւ ի կաթուղիկոսութեան։ Այն պաշտամանը մէջ մտանց տեսնելով հայրենեաց խեղճութիւնը, անոր միակ դարման սեպեց ժառանգաւորաց կրթութիւնը. անոր համար բոլոր Հայաստանի մէջ վանքերը չատցուց. որոնց թիւը, ոմանք ինչուան երկու հազարի կը հանեն, և անոնց բարեկարգութեանն համար կարգեր ու կանոններ սահմանեց, ինչպէս որ տեսած և սովրած էր առ Յոյնս։ Ասոնց մասունք են անչուշտ այն քանի մը խրատներն՝ որ կանոնագրոց մէջ իւր անուամբը կը յիշատակուին։ Ազանդութեամբ իրեն կ'ընծայուին քանի մը աղօթք և Շարականներ Հանդստեան։

ԲԻԶԱՆԴ

Չորրորդ դարուն գլխաւոր մատենագրաց մէկն է Բիւզանդ Փաստոս, նշանաւոր իր ընտիր և գեղեցիկ երկասիրութեամբը, և դարձեալ իր վրայ եղած զանազան կարծիքներովը։ Մենք իրեքի կրնանք վերածել այս կարծիքները. նախ թէ ով է Բիւզանդ և ինչ ազգէ. երկրորդ թէ ինչ ըեղուով պատմագրեց, և երրորդ թէ արդեօք իր գրուածքը ամբողջ հասած է մեր ձեռքը։

Բիւզանդայ համար ոմանք կը գրուցեն թէ Յոյն էր ազգաւ, և այլք թէ Հայ։ Երկու կարծեաց հետեւողներուն ալ պէտք եղած հաստատուն պատճառները կը պակսին իրենց գրութիւնը հաւաստելու կամ այլոց կարծիքը հերքելու համար։ Այն վախճանաւ հարկ է որ այս խնդրոյս լուծումը հիներուն գրոցը՝ կամ աւելի լաւ՝ Բիւզանդայ գրոցը մէջ փնտռենք։ Բայց նախ անոր վերջաբոյր գործերուն ցանկը. և հոն կը տեսնենք մատենաւոր գլխոյ մը նշանագրութիւն հետեւեալ խօսքերով. «Սորոտա սմենայն պատմութեանց՝ յաղագս իմ տեղեկութեան, որ միանգամ զմատեանս ընթեռնոյք, տուէք տալ՝ համարական թուղք»։ Սակայն գրուածքին

մէջ այս նշանաւոր և հետաքրքրական գլուխը պակաս կը գտնենք։ Միայն նոյն գրոց հինգերորդ և վեցերորդ գլուխներուն մէջ Փաւստոս անունով եպիսկոպոս մը կը յիշատակուի, որբոյն Ներսէսի եպիսկոպոսապետին ժամանակ, և անոր տանը թելադակ կամ հոգաբարձու, և իր Աստուծոյ եղբայրը, որոնց համար յայտնապէս կ'ըսէ պատմագիրն թէ «էին սոքա լեալ ազգաւ հռոմ»։ Թէ որ հոս յիշուած Փաւստոսը՝ նոյն է պատմութեան գրոց հեղինակին հետ, ամեն տարակոյս կը վերցուի, և իր ազգութիւնը կը յայտնուի։ Ուրիշ վկայութիւն մըն ալ այս կարծեաց կրնանք սեպել Փաւստոսի պատմութեան երրորդ գպրութեան վերջին գլխոյն այս խօսքերը. «Կատարեցաւ երրորդ դարք, քսան և մի պատմութեանց գպրութիւնք, (այսինքն նոյնչափ գլուխք) ժամանակագիր կանոնք Փաւստեայ Բիւզանդեայ ժամանակագիր մեծի պատմագրի, որ էր ժամանակագիր Յունաց։

Սակայն ոմանք այս վկայութիւնները բաւական չհասկնալով, և տեսնելով որ Բիւզանդ Հայերէն յօրիներ է իր պատմութեան գիրքը, կարծեցին թէ մեր ազգէն ըլլայ, և միայն Բիւզանդիոնի մէջ իր ուսմունքը կատարած ըլլալուն համար Բիւզանդ կամ Բիւզանդացի կոչուած. ինչպէս նաև ոմանք մեր Թարգմանիչներէն Աթենքի մէջ իրենց ուսման ընթացքը ըրած ըլ-

լալնուն համար Աբեղացի կոչուած են։ Բայց մեզի այս կարծիքը անընդունելի կ'երեւնայ. եւ՝ի հաւաստիս՝ մէջ կը բերենք նախ վերի յիշուած երկու վկայութիւնները. երկրորդ՝ ուրիշ թէ ժամանակակից եւ թէ իր մէն եղբը եկող պատմագրաց խօսքերը, եւ երրորդ՝ ասոնցմէ ամենէն աւելի իր պատմութեան գիրքը։

Այս երկրորդ ու երրորդ հաւաստեաց վրայ քիչ մը երկընկնիլ խօսինք։

Բիւզանդաց վրայ խօսող պատմագրաց մէջ գլխաւոր է Ղազար Փարպեցի՝ որ ժամանակաւ իրմէն քիչ եղբը կ'ինկնայ։ Ասիկայ Ագաթանգեղեայ վրայ գովութեամբ խօսելէն եղբը կը յաւելու. «Երկրորդ գրոցն անուանեն զմեզ պատմագիր կոչեցեալ՝ Փաւստոս Բիւզանդացի. և վասն զի կարգելոցն առ՝ի նմանէ՝ի տեղիս ուրեք, կարծեցին ոմանք բանք ինչ ոչ յարմարք և դիպողք, յերկուացեալ հարկաւորին՝ չասել զայնպիսի անպատշաճ կարգումն Բիւզանդացւոյ ուսելոյ»։ Ետքը Բիւզանդիան քաղաքին վրայ մեծ համարմամբ խօսելէն վերջը, կը գրուցէ. «Յայնպիսումն քաղաքի, և՝ի մէջ այնչափ բազմութեան ուսելոյ վարժեալ այրն Փաւստոս, այնպիսի ինչ արդեօք անհաճոյս լսողաց կարգէր՝ի պատմութեան իւրում. քան և մի լիցի. ուստի և անհաւատալի խնամ տկարամտութեանն կարծեցեալ գործն, ասեմ թէ այլ որ յանդուգն

և անհրահանգ բանիւ լրբաբար ձեռն արկնալ յիւրեան գրեաց դինչ պէտս ըստ կամի . . . և անուամբ փոստոսին դիւրոյ յանդգնութեան սխալանս համարեցաւ ծածկել . և այն յայտնի երևի ամենայն հայցողաց . քանզի ևս ոմանք ի Յոյնս , այլ մանաւանդ յԱսորիս » :

Փարպեցւոյն այս խօսքերը թէ որ մտադիր ու անաչառ քննութեան տակ ձգուին , մեզի կ'երևնայ թէ մեր կարծեացը զօրաւոր և անհակառակելի վկայութիւնք են : Իրաւ է որ ոչ հայ և ոչ յոյն ըլլալուն ոըոշ խօսք մը կայ աս հատուածիս մէջ , բայց յոյն ըլլալուն աւելի կրնան վերաբերիլ : Փարպեցւոյն պէս հմուտ անձի մը տգիտութիւնը այս խնդրոյս վրայ , աւելի մեծ տգիտութիւն մը կ'ենթադրէ ազգին մէջ . և թէպէտ իր պատմութեան գիրքը յունարէն գրուած էր , և իրմէ կամ ուրիշէ մը հայերէն թարգմանուած , բայց կ'երևնայ թէ ժողովրդեան մէջ Բիւզանդայ անունը կար , իսկ իր անձին վրայ ըստոյգ տեղեկութիւն մը պակաս էր : Փարպեցին ալ չափազանց խղճմտութեամբ՝ որ իրեն պատիւ է , ազգին մէջ նոյն հեղինակին համարումը չկոտրելու համար , քաղաքէն՝ քաղաքացին կը սկսի գովել . ուստի և անոր գրոցը մէջ եղած անտեղութիւնքը ուրիշ տգէտի մը կ'ուզէ ընծայել , որ յանդգնութեամբ , կ'ըսէ , ձեռք զարկաւ , ու անանկ խմաստուն մարդու մը

գրուածքը խանգարից. և թէ այս դէպքը զարմանալի կամ անօրինակ բան մը չէ. վասն զի կայ այդ սովորութիւնը Յունաց մէջ, բայց մանաւանդ Աստուց։

Սակայն փարպեցւոյն անորոշ խօսքերէն աւելի՝ Բիւզանդայ գիրքը անոր ազգութիւնը կը յայտնէ։ Կարդէ դուրս տգիտութիւն մը կը տեսնուի անոր գրոցը մէջ հայկական պատմութեանց, որ համազգ-ւոյ մը համար անկարելի էր. և ալ աւելի՝ չափազանց ատելութիւն մը ընդդէմ Հայոց։ Մէկ քանի օրինակ մէջ բերենք։

Սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետը՝ որ գրեթէ Բիւզանդայ ժամանակակից կը սեպուի, և զոր մեր ամէն՝ թէ հին և թէ յետին ժամանակաց պատմիչները՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին հօրաքեռորդին կը սեպեն, ազգաբանութիւնն ալ մէջ բերելով, ի Բիւզանդայ երկբայութեամբ մը կը յիշուի. «Որ փոխանակ ազգաւն պարսիկ կոչէր» կ'ըսէ։

Նոյն սուրբ հայրապետին համար խոհեմացին և իրմէ ետքը եկող ուրիշ պատմիչներ կ'աւանդեն, թէ Ներսեհայ Մահճիկեր իշխանը՝ Աստուց կողմի Բակուր բդեշխին վրայ պատերազմի ելլելով՝ զանիկայ կը մեռցընէր. ու թէ՝ ի դիւռուցաց և թէ ռամիկ մարդիկներէն չատերը գերելով, սրբոյն Յակոբայ ուխտը սարկաւագունքն ալ ծովը նետել կը հրամայէ։ Բիւզանդ այն ուխտ անձինքը ուխտհարիւրի կը

հանէ. «Եւ առ վայրենի բարուցն զոր ուներ, կ'ըսէ, յանձին իւրում, իբրև նմա հնճուկս առնելոյ, ութ հարիւր այր որ կային ի կապանս առանց յանցման, նա ածել առաջի նորա, և հրամայեաց ի դահճէ միոջէ ի ծով անդր հոսել, և զայնչափ հոգի առանց յանցման կորուսանել»։ Այս անգթութեան նախընթաց պատճառ եղող Բակուրայ պատերազմը և ոչ իսկ կը յիշէ. այլ Մանաճիհրի համար չար ու անզգամ մարդ մը ըլլալը կը զրուցէ, և թէ սուրբն ցակոբ գնաց առ նա, որպէս զի խրատելով ուղիղ ճամբու բերէ զինքը։ Այս խրատին հետևանք կ'ենթադրէ յիշուած անգթութեան գործը։

Դարձեալ թէ ի խորհնաւոյն և թէ ուրիշ պատմիչներէ գիտենք սրբոյ Յուսկան նահատակութեան պատճառը։ Յայտնի է մեզի թէ Տիրան թագաւորը ուղեց Յուլիանոսի պատկերը եկեղեցեաց մէջ դնել. և երբոր սուրբ հայրապետը այդ անօրէն գործը խափանելու եռանդ եղաւ, իր աստուածային նախանձուն մէջ գտաւ չարաչար մահը։ Բիւզանդ բոլորովին տարբեր կերպով կ'աւանդէ այս դէպքը. «Որ մի, կ'ըսէ, յաւուրց տարեկան՝ դիմեաց գալ թագաւորն Տիրան հանդերձ այլով աւազանովն մոռանել յեկեղեցին. իսկ նա ընդդէմ բարբառեալ ասէր. Ձես արժանի, հիմ գաս. մի գար'ի ներքս։ Վասն որոյ անդէն'ի ներքս քարշէին դնա յեկեղեց-

ւոջն. բրածնէ եղեալ քաղքաղեր քահանայապետն Աստուծոյ սուրբ երանելի մանուկն Յուսիկ, կիսամահ կոչկոճեալ ընկճեալ լինէր»։

Տիրանայ կուրանալուն պատմութիւնն ալ բոլորովին տարբեր կերպով կ'աւանդէ։ Ցայտնի է մեզի յայլոց պատմչաց թէ Տիրան՝ Ուրայող Յուլիանոս թագաւորին օգնականութեան ձեռք տուաւ Պարսից դէմ. ու երբ Պարսիկք յաղթող ելան՝ Շապուհ թագաւորը կուրցընել տուաւ զՏիրան։ Բիւզանդ այս պատժին տարբեր պատճառ մը մէջ կը բերէ. Տիրան թագաւորը, կ'ըսէ, ճարտուկ ճանճկէն երիվար մը ունէր. Շապուհ ուզեց իրմէ այս ձին. իսկ Տիրան յանձն չառնելով իրմէ օտարացընել բոլորովին անոր նման երիվար մը գտաւ ու դրկեց Շապհոյ։ Խնացաւ Շապուհ խարդախութիւնը, ու 'ի պատիժ հրամայեց զՏիրան կուրացընել։

Կը թողունք յիշատակել ուրիշ ասոնց նման զանազան դէպքերը, ինչպէս Գնելի ու փառանձեմայ պատմութիւններն, Արշակայ ու Պապայ, և այլն, որոնք բոլորովին կ'օտարանան յայլոց պատմչաց, և մանաւանդ 'ի խորենացւոյն։ Բայց այս յիշատած մէկ քանի օրինակներն ալ բաւական են հաւատարմացընելու թէ ազգային պատմչի մը համար անկարելի է այդպիսի անդիտութիւն, ու ան ալ՝ իրեն ասանկ մերձաւոր ժամանա-

կաւ մարդիկներու ու դէպքերու նկատմամբ։ Բայց ալ աւելի իրեն ազգը քարոզողը՝ այն հնոցած աւելութիւնն է, որով միշտ առիթ կը փնտռէ մեր ազգը վար դարնելու։

Ձմարիտ ու հայրենասէր Հայու մը համար՝ սրբոյն Գրիգորի ու Տրդատայ պատմութենէն աւելի սրատաչարժ դէպք մը չկայ։ Բոլոր Հայաստանին մէկ ծայրէն մէկայլ աւետարանին քարոզութիւնը անանկ մը տագնապութեամբ ընդունելը, մէկ օրուան մէջ հազարներով մարդիկներու մկրտութիւնը, բոլոր աշխարհին մէկ սիրտ մէկ հոգի ըլլալը, կռոց տաճարները քանդելու և անոնց աւերակաց վրայ Աստուծոյ տուներ բարձրացնելու, ասոնք անանկ դէպքեր են որ նոյն գործը կատարող ժողովրդեան վրայ թէ սէր և թէ զարմանք կը յառաջանեն։ Իսկ Բիւզանդ այն երջանիկ ժամանակաց համար ալ ասանկ կը խօսի. «Չի՛ վաղնջուց, կ'ըսէ, յորմէ հետէ աթին նոքա դՀաւատս քրիստոնէութեան, լոկ միայն իբրև պերճանս իմն մարդկութեան յանձինս իւրեանց և ոչ ջնջմնոանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրև զմոլորութիւն իմն մարդկութեան՝ ի հարկէ, ոչ երբէք որպէս պարտն էր դիտութեամբ, յուսով կամ՝ հաւատով... խառնաղանջ բազմութիւն մարդկան ժողովրդոցն, նախապարացն և կամ՝ չինականութեանն»։

Աւսր նման ուրիշ շատ օրինակներ ալ

կրնայինք մէջ բերել՝ թէ որ խօսքի երկա-
րութենէն չվհատէինք։

Տարակոյս չկայ որ ուրիշ աստուածա-
բեալ հարք ալ անաչառ և խիստ լեզու մը
կը բանեցընեն ազգին պակասութեանցը դէմ, և երբեմն ինչուան իրենց նուիրա-
կան չրթունքը յանէծս կը չարժեն. բայց
նոյն խստութեան և նոյն իսկ անիծից մէջ
ուրիշ գորովալիր սիրտ և ուրիշ հայրենի
խանդաղատանք մը կը նկատուի։

Բիւզանդայ օտարազգի ըլլալուն ուրիշ
փաստ մըն ալ այն կրնանք սեպել, որ ոչ
երբէք իր Պատմութեանը գրքին մէջ աշ-
խարհս Հայոց, թագաւորն մեր կը գրէ, այլ
պարզապար աշխարհին Հայոց, թագաւորն
Հայոց, և այլն։ Իսկ երբ Յունաց վրայ ըլ-
լայ խօսքը, ասանկ կը գրէ. «մեծ թագաւորն
Յունաց, մեծ Արեւելացւոց քաղաք», և այլն։

Իսկ որոնք որ զփաստս Բիւզանդ հայ
կը սեպեն, նոյն լեզուով պատմագրելէն
զատ ուրիշ մէկ քանի փաստեր մէջ կը
բերեն։ Նախ Բիւզանդացի կոչումին հայ-
րենեացը յայտարարութիւն չեն սեպեր,
այլ ուսմունքը հոն ըրած ըլլալուն համար
այնպէս անուանած, ինչպէս վերն ըսինք.
և ապացոյց մէջ կը բերեն թարգմանիչնե-
րէն ոմանց աթենացի կոչումը, ինչպէս
նոյն ինքն Ղազար փարպեցին ալ Սիմոն
ապարանեցիէն աթենացի կոչուած է*. և-

* «Ի յունական երկիր գնացեալ
Եւ զարուեստսն հանճարս ուսեալ,

դիչէ այլ սրբոյն Եպիփանու Վարսածոց գրոցըմեկնութեան Թարգմանչին Բիւզանդացի կը կոչուի Բայց անունց միտքը ոչ եթէ Եղիչէի կամ Վազարշ Հայրենիքը ցուցնել է, այլ անունց յատմանէս գերազանցութիւնը, ընդհակառակն փարպեցւոյն միտքը Բիւզանդայ համար բոլորովին տարբեր մտքով կը հասկըցուի, ինչպէս վերը ցցուցինք։

Ահա ասելի զօրաւոր ապացոյց մը կը սեպուի անունց առջև Բիւզանդայ Սահառունի կոչուիլը. որովհետև ինքը պատմիչը իւր գրոց երրորդ գլխութեան մէջ կ'ասանդէ «Եւ զմերոյ տոհմի ազգի իշխան Սահառունայց, և զՊարթ իշխան Դնունեայց»։

Բայց մենք կրնանք ենթադրել թէ կամ Սահառունեաց ցեղին հետ խնամեցած էր Բիւզանդայ տոհմը և կամ գրչի սխալ պիտի ըլլայ անշուշտ այս հատուածին մէջ։ Վասն զի ինչպէս խոստ լաւ կ'ասարկէ բանաէր մը, Բիւզանդ ուրիշ ամէն ցեղերուն նախարարաց անուանքը կը յիշատակէ այն գլխոյն մէջ, իրեն սեպհական ցեղին նախարարին անունը առանց յիշատակութեան կրնար թողուլ ուստի և հատանական կ'երևնայ ըսելը թէ Մերոհդ Ահզատ իշխանին անունը փոխուեր եղեր է «մերոյ տոհմի»։ Արտմէնաև նոյն իսկ Սահառուն

Ազգենացի զինքն առաձգեալ
Ի բան ըզնոսա այլ հըմտացեալ»։

նեաց տոհմին ալ այնչափ բարեկամ չէ Բիւզանդ, որուն վկայ կրնայ ըլլալ Բա-տայ Սահառունւոյ պատմութիւնը՝ հինգե-րորդ դպրութեանը մէջ։

Մէկ գլխաւոր պատճառ մը կրնայ ա-ռարկուիլ, վերը յիշուածներէն աւելնէն աւելի զօրաւոր. և է Բիւզանդայ հայերէն լեզուով մատենագրելը։ Թէպէտ և եղած են ոմանք որ կարծեցին թէ սկզբնագիրը յունարէն եղած ըլլայ, ու ետքը թարգմա-նուած՝ի հայ, բայց հայկական լեզուին քաջ տեղեակ բանասիրաց անհաճոյ է այդ կար-ծիքը։ Սակայն այս ալ բաւական պատ-ճառ չէ մատենագրի մը ազգը յայտնելու. ուր բազմանգամ մատենագիրք պակաս չեն թէ հին և թէ նոր ազգաց մէջ, որ հաւա-սարապէս կրցեր են գրել թէ իրենց և թէ օտար լեզուներով։ Ասանկ՝ մեր մատենա-գրութեան մէջ Ագաթանգեղոս, ինչպէս ցուցինք, և լատին դպրութեանց պատ-մութեանը մէջ կարբեդոնացին Տերեն-տիոս, որ լատին լեզուն իրրև իրեն յա-տուկ լեզուն դործածեց, և ընտիր օրինա-կագիր մը եղաւ*։

* Ահա կարծիքը ունեցողներուն մէջ առաջին ըլլալով մեր Ինճիճեան վարդապետը, իր պատ-մութեան ուզեցինք մէջ բերել, իւր ձեռագիր դրուածոց մեկուն մէջ գտնելով. «Փոստոսի ան-ձին համար՝ որովհետև ինքզինքը յայտնապէս Սահառունի կը կոչէ, ուստի Հայոց ազգէն կը սե-

կը մնայ երրորդ խնդիր մըն ալ թէ արդեօք Բիւզանդայ երկասիրութիւնը համբողջ հասած է մեր ձեռքը՝ թէ անկատար.

պեմ զինքը, բայց մնած և սորված առ Ցոյնս, և ինչպէս հաւանական կ'երեւի, ի Բիւզանդիա. ինչպէս ասանկ ուրիշ շատերն ալ եղած են մեր ազգին մէջ. եւքը Հայաստան գալով՝ հոն յօրինած ըլլայ այս Պատմութիւնը. և որովհետև Բիւզանդեայէն եկած ըլլալովը՝ յոռնական փոստոս անունը ընդունած էր, կարծուելցաւ թէ ինքն ըլլայ այն հռչակաւոր Փոստոսը՝ որուն վրայ կը խօսի Ղազար: Ինծի կ'երեւայ թէ զայս կ'ակնարկէն երրորդ Դպրութեանը վերջը գրուած մեծին խօսքերը. « Փախստեայք Բիւզանդեայ Ժամանակագիրը, մեծի պատմագրին որ էր Ժամանակագիր Ցունաց »: Զոր ես այս կերպով կը կարգամ. « Փախստեայք Բիւզանդեան Ժամանակագիրք, ըստ մեծի պատմագրին Փոստոսի Բիւզանդայ՝ որ էր Ժամանակագիր Ցունաց »: Բայց թէ որ այս մեր Փոստոսին համար զուրցուած սեպէն այս խօսքը՝ Ցունաց Ժամանակագիր կոչուած, մենք չենք հակառակիր. վասն զի թէպէտ ինքը հայկազուն էր, բայց որովհետև Ցունաց մէջ մեծցած էր՝ կրնար նաև Ցունաց պատմական Ժամանակագրութիւն մըն ալ գրած ըլլալ:

Իսկ ես այս Հայկական պատմութեանը համար՝ ես կը կարծեմ թէ Բիւզանդ շատ բան Հայոց մատեաններէն ու գիւաններէն քաղած է՝ որ այն ատեն կը գտնուէին. վասն զի ես գրոցը մէջ այնպիսի բազմազան պարագաներ կը նկատենք, որ կը յարմարին ու կը լուսաւորեն Խորենացւոյն պատմութիւնը. կը գտնենք նշանակուած գաւառաց ու գիւղորեից անուանքը՝ ուր որ այն գործքերը կատարուեցան. նոյնպէս ալ շատ անձանց ա-

որովհետև Բիւզանդացւոցն երրորդ դըպրութիւնէ կը սկսի, և ուրիշ երկու նախընթաց դպրութիւնք ալ ենթադրել կու տայ։

Նուանք, որոնց համար ինքնահնար ըսելը անկարելի է։ Թէ որ Խորենացին ընդարձակ գրած ըլլար իւր պատմութիւնը, և իւր 'ի համառօտն փութալը շատ տեղ չայտնած, այն ատեն կարելի էր տարակուսիլ և քննել թէ ինչ պատճառաւ զանցառութիւն ըրած է այն դէպքերը յիշելու։ Ինոր համար իմ դատմունս համեմատ՝ միշտ պէտք է այս երկուքը միաբանելու աշխատիլ. և զայն մերժել որ յայտնապէս կ'ընդդիմանայ Խորենացւոյն պատմութեանը։ Ահաւասիկ Բիւզանդաց աւանդած Դրասամանն նեղքինութեան պատմութիւնը՝ Արշակ Թագաւորին ինքնասպան ըլլալուն պատճառները ընդարձակ կը մեկնէ, ոչ ուստն վրայ Խորենացին բան մը չենչանակեր. նոյնպէս ալ Արշակաւանի չարաչար տոորագրութիւնը՝ Խորենացւոյն համառօտ խօսիլը բացատրութիւն է։ Ասոնք այսպիսի և ուրիշ նման դիպուածներէ խմաստասիրելով, պէտք չէ, կ'ըսեմ, 'ի Բիւզանդաց պատմուած այն ամէն դէպքերը մերժել, որ չեն գտնուիր առ Խորենացւոյն. զոր օրինակ Մուշեղի ու Մանուէլի զօրավարութիւնքը և անոնց քաջագործութիւնները, որոնց վրայ Խորենացին բան մը չաւանդեր. վասն զի չայտնի է թէ այն ատեն Հայերը քաջագործութեամբ անուանի զօրավարներ ունէին, որոց և ոչ անուանը յիշատակութիւնը կայ առ Խորենացւոյն։ Անշուշտ մեր այս կարծիքը ունեցան նաև Մեսրոպ Եպէց, Կիրակոս և Վարդան, որոնք այլ և այլ պատմութիւններ և դէպքեր քաղեցին Բիւզանդայ գրքէն՝ իրենց պատմական երկասիրութեանց մէջ»։

Բայց որովհետեւ ինքը մատենագիրը իր յա-
ռուկ յառաջաբանին մէջ հետեւեալ խօս-
քերը մէջ կը բերէ . « Ա՛յս ինչ է ի դպը-
րութիւնս երրորդ պատմութեանցս , ժա-
մանակագիր կանոնք մատենից , և առ նը-
մին դպրութիւնք երեք , այս ինքն են սեպհ
չորք մատեանք . և չորիցին միոյ իրաց յիշա-
տակարանք են » : Ա՛յս խօսքերը յայտնա-
պէս կը ցուցընեն թէ չորս գիրք կամ դպը-
րութիւն չարաչրած է Բիւզանդ . որով
ինքնիրեն կը լուծուի այս երկբայութիւնը .
և հաւանական կ'երեւնայ կարծելը թէ ա-
ռաջին և երկրորդ դպրութիւնք կ'ենթա-
դրէ հեղինակը իրմէ առաջ եղող ուրիշ եր-
կու պատմագրաց գրուածներն , որոնք սըր-
բոյն Թադէոսի և սրբոյն Դրիդորի Լու-
սաւորչին պատմութիւնքը կ'աւանդէին .
գուցէ Ղևրուբնայի ու Ագաթանգեղոսի
կամ Չենոբայ գրուածներն ակնարկելով :
Ասոնք և գրչադիրք ալ ընթերցողաց մըտ-
քէն ամէն տարակոյս վերցընելու համար
այս գրքին ամբողջութեանը նկատմամբ ,
սովոր են երրորդ դպրութեան վրայ Սկիզբ
բառը դնել :

Բիւզանդայ գրոց նիւթը . — Բուզանդա-
րանի նիւթն է 29 տարուան պատմութիւն .
և իրեն զլխաւոր նպատակն է Տրդատայ
որդւոյն Խոսրով երկրորդին իշխելէն , ին-
չուան Աբշակայ և Խոսրով երրորդի թա-
գաւորելուն , և Ասպուրակէսի կաթողի-
կոսութեան պատմութիւնն ընել :

Համառօտ ոճով մը կը նշանակէ Թադէի առաքելութենէն ինչուան Տրդատայ օրերուն անցքերը. վասն զի «այն ամենայն՝ ի ձեռն այլոց գրեցան» կ'ըսէ, ակնարկելով անուշտ Ղերուբնայի երկասիրութիւնը և Ագաթանգեղոսի պատմութիւնը: Բայց հոնկէ՝ ուր անոնց պատմութիւնը կը դադրի, կը սկսի ինքն ճոխաբար աւանդել. և Լուսաւորչայ նուիրական ցեղին վրայ՝ ուր այլք՝ ի պատմչաց համառօտ և ոչ գոհացուցիչ պատմութիւններ կ'աւանդեն, ինքը տեղեկութիւնները կ'աւանդէ՝ յիշատակութիւններ կ'ընէ: Ասանկ են սրբոյն Վրթանայ, անոր որդւոյը՝ Դրիգորիսի և Յուսկան, ու այս վերջնոյս անարժան որդւոց՝ Պապայ և Ակաքնագինէի, և սրբոյն Դանիելի ասորւոյ վարքերն. անանկ յիշատակութիւններ՝ որ մեր եկեղեցական պատմութիւնը փառաւորելով, քաղաքականին վրայ ալ մեծ լոյս մը կը ձգեն:

Ասոնց նուիրած կրնանք սեպել Բուզանդայ երրորդ գլուխը:

Բայց անոնց օրովը՝ Հայաստանի մէջ անցած քաղաքական դէպքերն ալ անյիշատակ չիթողուր փաւստոս: Հոն կը կարդանք Մանաւազեան և Որդունի նախարարութեանց իրարու դէմ տուած հակառակամարտ կռիւներն, ու իրենց սրովը մէկզմէկ անդադարելը: — Մասքթաց քաղաքին Հայաստանի վրայ վազելը, ու

ամօթապարտ յաղթուիլը, Բակուրդևչխին ապստամբութիւնը, Բդնունեաց ազգահատութիւնը, վաչէ մեծ զօրավարին առաջնորդութեամբը՝ Հայոց ու Պարսից իրարու դէմ տուած պատերազմները, ու իրեն և արքունեաց վրայ եկած հասած խեղճ դիպուածներն։ Անանկ տխուր դիպաց ու աղետից և չփոթութեանց մէջ կը դադրեցընէ Բիւզանդ իրեն երրորդ Դպրութիւնը։

Տիրանայ որդւոյն Արշակայ թագաւորութեամբը կը սկսի Բիւզանդ իր չորրորդ Դպրութիւնը. Հայաստանի նեղութեանց ու թշուառութեանցը մէջ՝ երկնաւոր աստուածախնամ տեսչութիւնը՝ Աթանագինէի անարժան՝ բայց երկնից արժանի ու Հայաստանի բազմավրդով տառապանացը սփոփանք ներսէս մը կ'ընծայէին. այն Պարթեւ հայրապետը՝ որուն նման և ոչ մէկն 'ի թագաւորաց՝ այնչափ ազդեցութիւն ունեցած է Հայաստանի քաղաքական իշխանութեանը վրայ, և որուն հաւասար անձ մը կրնանք ըսել թէ հին և նոր պատմութեանց մէջ սակաւագիւտ է։ Անոր պատմութիւնը Բիւզանդայ չորրորդ գրոց մեծ մասը գրաւած է. իր ծնունդը, կաթարիա երթալը, Հայոց հայրապետական գահը նստիլը, Հայաստանի արքունական սահանեալ աթոռը վերկենալու համար՝ մինչև առ վաղէս ճանապարհորդելը, հոն իր մէկ աքսորուիլը, կրկին կայսեր հետ տեսնուիլը, ու ընդ Արշակայ թագաւորի զա-

նիկա հաշտեցընելը, ու՝ ի հայրենիս վերադարձը։

Սակայն Ներսիսի սրտին, հոգւոյն ու հայրագութ թեւադրութեանցը անարժան անձ մըն էր Արշակ, որ այնպիսի բարեբար հօր մը ձայնին մտիկ չընելով՝ անօրէն գործքերովը բոլոր Հայաստանին ատելի կ'ըլլար. իսկն կրիցը միայն լսելով իր եղբօրորդին՝ զԴնէ՝ կը սպաննէր, ու անոր փառանձեմ կնիկը իրեն առնելով՝ Հայոց արքունի տանը բնտանի խաղաղութիւնը կը վրդովէր։ Վերջապէս ինքը Արշակ թագաւորն ալ՝ Շապհոյ Պարսից արքային ձեռքն իյնալով, Անյուշ բերդին մէջ յուսահատ կեանքէ մը ետքը՝ յուսահատ մահուամբ կը մեռնէր։ Ո՛րչափ սրբատաշարժ ու ճարտասան լեզուով կ'աւանդէ Բիւզանդ այս դէպքերը։ Արշակայ մահուամբը կը գադրի փաւստոսի չորրորդ Դպրութիւնը, մէջ բերելով նոյն միջոցին Հայաստանի մէջ եղած այլ և այլ դէպքերու յիշատակութիւնը, և մանաւանդ Շապուհ Պարսից թագաւորին՝ Հայոց հետ ունեցած վերաբերութիւններն։

Արշակայ յաջորդը եղաւ Պապ, հօրը արժանի որդի մը, որուն պատմութիւնը կ'ընէ Բիւզանդ իր հինգերորդ Դպրութեանը մէջ։ Կը պատմէ անոր Մուշեղ զօրավարին Պարսից թագաւորին դէմ տուած պատերազմները. ժամանակին այլ և այլ նախարարական տանց մէջ անցած դէպ-

քերը, Պապայ անօրէն ու անկարգ վար-
քը, ու զօսրբն Ներսէս մահադեղով ըս-
պաննելը. Թագաւորին՝ իր խառնակ կե-
նացը արժանի մահուամբ մը՝ Յունաց զօ-
րագլխէն սպաննուիլը. Վարազդատայ՝ ա-
նոր տեղ Թագաւորելը, ու մէկէնմէկ
Հայոց Մուշեղ զօրավարը սպաննելը, ու
եղբը Մանուէլ զօրավարին Պարսից գե-
րութենէն դառնալը, ու Մուշեղայ մա-
հուանը վրէժը խնդրելով, Վարազդատը՝
Հայաստանէն ու Թագաւորական աթոռէն
մերժելը: Դարձեալ նոյն Մանուէլ զօրա-
վարին Պարսից հետ միաբանիլը՝ի խաղա-
ղութիւն աշխարհին, ու եղբը Մերուժա-
նայ արձրունւոյ թէլագրութեամբ՝ պատե-
րազմայ յուզմունքը, ինչուան որ այս վեր-
ջինս Պարսից զօրացը հետ միաբան Մա-
նուելի վրայ գալով, յաղթուեցաւ ու սպա-
նուեցաւ. և այն առեն Մանուէլ Թագա-
ւորեցոյց զԱբշակ, և ինքն ալ մեռաւ: Իր
մահուամբը կը վերջացընէ Բիւզանդ հին-
գերորդ Դալրութիւնը:

Բուզանդարանի վեցերորդ գիրքը՝ ամե-
նեին անարժան կրնայ սեպուիլ առջի ի-
րենք Դալրութեանց. վասն զի ոչ առջիննե-
րուն մէջ երևցած հետաքննական դիպուա-
ծոց չարունակութիւնը են, և ոչ ալ անոնց
ոճովը գրուած. այլ ժամանակին Հայա-
տանի մէջ երևցած քանի մը եպիսկոպո-
սաց վրայ կենսագրական տեղեկութիւն-
ներ, բայց՝ի առջի գլխէն՝ յորում Հայոց թա-

գաւորութեան երկու բաժնուելուն պատմութիւնը կ'ընէ. այս ինքն Յունաց թագաւորին հրամանաւ Աբշակայ իշխելը ու Պարսից կողմանէ ալ Խոսրովու թագաւորելը, ու անով Հայաստանի թագաւորական իշխանութեան տկարանալը, ու իր նախկին մեծութիւնը կորսընցընելը։

Կրկին տպագրութիւն եղած է Բիւզանդայ գրոցը. Ամստ. 1721ին (՝ի կոստանդնուպոլիս). Ամստ՝ալ՝ի Վենետիկ 1832ին, ընտիր ընթերցուածով և Համառօտ յառաջաբանութեամբ։

ՊՐՈՑԵՐԵՍԻՈՍ

Այս Դ. գարուս մէջ կը յիշուին՝ի Յունաց շատ բանասէր Հայկազունք, որ ուսմունք սորվելու համար կ'երթային Աթէնք ու Հռոմ և ուրիշ գլխաւոր քաղաքներ. որոց մէջ գլխաւորն է Պրոյերեսիոս կամ Պարոյր Հայկազն, որ այնչափ անուանի եղաւ ճարտարախօսութեան ուսման և հրատհանգոյց մէջ՝ որ ինչուան Աթէնքի և Հռոմայ մէջ արձաններ կանգնեցին իրեն պատուոյն ու թագաւոր ճարտարախօսաց կոչեցին։

Սակայն գլուխին այն է որ այսպիսի հայկական դպրութեանց պարծանք անուանի անձին վրայ՝ մեր նախնիք տեղեկութիւն

մը չեն տար, ու կը ստիպեն որ օտար աղ-
բերաց դիմելով՝ ազգային ճոխութեան խե-
լամուտ ըլլանք։ Պարոյրի վարքը գրոզաց
մէջ գլխաւոր կ՚ենարիոս յոյն ու իրեն ժա-
մանակակից հեղինակ ըլլալով, հարկ է որ
իրմէ քաղենք այս հարկաւոր ու հետա-
քրքրական տեղեկութիւնները՝ մեր ամե-
նէն մեծ ճարտասան անձին վրայ։

Պարոյր, կ՚ըսէ պատմիչն, իրեն ձե-
րութեան առենն ալ այնպիսի դիմաց վայ-
ելչութիւն և գեղեցկութիւն ունէր, որով
յայտնի կ՚երևնար երիտասարդութեան
ժամանակ ունեցած կորովն ու համեմատ
կազմուածքը։ Հասակին բարձրութիւնն ալ
խելքէ մարթ ու սովորական կարգէ դուրս
բան մը կրնար սեպուիլ. վասն զի ութը
ոտք բարձրութիւն ունէր, և իրեն ժամա-
նակակից բարձրահասակ մարդիկներուն
քովն ալ՝ մեծ հսկայ մը կ՚երևնար։ Պատա-
նեկութեան առենը իրեն հայրենի Հայոց
աշխարհէն ելլելով՝ Անտիոք գնաց, որով-
հետև առջի բերան Աթէնք երթալու յօժա-
րութիւն մը չէր զգար. հոն յետին կարօ-
տութեան մէջ ինկաւ, որովհետև դիմացը
վայելչութեան հետ՝ աղքատութեան պար-
գևն ալ երկնքէն ունեցեր էր։ Ուստի Ուլ-
պիանոսի դիմաց, որ այն ժամանակներն
Անտիոքի մէջ ճարտարախօսութեան լսա-
րան սահմանած էր. և անոր աշակերտա-
ցը մէջ քիչ առենէն առնէն աւելի յա-
ռաջադիմներէն մէկն եղաւ Պարոյր։

Շատ ժամանակ իր քովը կենալէն ետք՝ Ա-
թէնք երթալով, հոն ալ մեծ պատիւ
և անուն ստացաւ։ Ա-թէնքի մէջ Հեփես-
տիոն անունով ընկեր մը ունեցաւ Պա-
րոյր, և մէկմէկու հետ մեծերիմ սիրով մը
կապուեցան. և ինչպէս աղքատութեամբ՝
ասանկ ալ ճարտարախօսական արուեստի
մէջ մէկմէկու հետ մրցանաց ելածի պէս՝
մէկզմէկ գերազանցել կը ջանային։ Մէկ
պատմուճանէ ու մէկ վերարկուէ զատ բան
մը չունէին. իրեք կամ չորս ալ կապերտի
կտորուանք, որոնք հնութենէ մաշեր ու
դունաթափ եղեր էին։ Ցարմանալի միա-
բանասիրութիւն մը ունէին այս երկու ան-
ձինքն իրարու հետ. անանկ որ կարծես
թէ մէկ հոգի էր երկու մարմնոց մէջ. երբ-
որ Պարոյր անէն դուրս կ'ելլէր, Հեփես-
տիոն ներսը քաշուած կը մնար, ճարտար-
խօսութեան հրահանգն առաջ տանելու.
նոյնպէս ալ Պարոյր՝ երբ Հեփեստիոն լսա-
բանը կ'երթար. վասն զի այն ատեանի
յետին աղքատութեան մէջ իննսած էին
խեղճերը, որ հագիւ մէկ դրսի զգեստ մը
ճարած էին և փոփոխակի կը հագնէին։ Ա-
թէնքի մէջ իրենց ճարտասանութեան վար-
պետը՝ Կապպադովկացին Ցուլիանոս՝ մեծ
համարում ունէր Պարոյրի սրամտութեան
ու հմտութեանը վրայ. և երբոր ինքն Ա-
թէնքէն հեռացաւ, շատերն եւեւէ եղան
իրեն ճարտարախօսութեան աթոռը ժա-
ռանգելու. բայց հմուտ՝ այն շատերուն

մէջէն Պարսյրը, Հեփեստիոնը, Եպիփանը ու Դիոմեդեսը առաջարկեցին. և ոչ բավեցաւ թիւը լրացած չէր, հարկ եղաւ որ Սոպոլիտէս ու Պառնասիոս անունով մարդիկն ալ առաջարկուին, թէպէտ և առջիններուն համբաւը չունէին։ Վասն զի Հռովմայեցիք Աքէնքի մէջ օրէնք մը հաստատեր էին՝ որ ինչպէս ունկնդիրք՝ սանկ ալ ճարտարախօսք բազմաթիւ ըլլան։

Երբոր ընտրուեցան՝ իրենց մէջէն նուագողները՝ վարժապետի միայն անունն ունէին, և իրենց կարողութիւնը զարդոցին պատերուն և առեանին մէջ էր միայն։ Իսկ աւելի համբաւ և իմաստութիւն ունեցողներուն համար՝ քաղաքը դանազան հերձուած բաժնուեցաւ. և չէ թէ միայն քաղաքը՝ հապա նաև բոլոր Հռովմայեցւոց հպատակ ազգերը։ Աբևելքի մեծ մասը զեպիփանիոս կ'ընտրէր. Աբարիա՝ զԴիոփանէս, Հեփեստիոն՝ Պրոյերեսեայ համար Աքէնքէն ալ եկաւ, ու նաև կեանքէն ալ. իսկ Պրոյերեսի՝ բոլոր Պոնտացիք և մերձակայ գաւառներն աչակերտներ կը զրկէին՝ իրրև ծանօթի և իրենց մէջ համբաւ ունեցող հռչակաւոր մարդու։ Անկեց դատ բոլոր Բիթանիա և Հելլեսպոնտոս, և Ասիոյ այն մասը որ Կարիայէն ինչուան Լիկիա և Պամիիւլիա և Տորոս լեռները կը տարածուի, ու Եգիպտոսէն ու Լիբիայէն՝ իրեն հանճարոյն վրայ զարմացողքը

դունդագունդ կը վազէին. որով Պրոյեբեսիոսի փառքը անանկ հայրինիք մը ունեցաւ՝ որուն սահմաններն դեռ եւս անծանօթ երկիրներ են։

Բայց փառաց դուզորդ է նախանձն. Պրոյերեսիոս ընկերակից ճարտարախօսութեան վարպետները չկրցան դիմանալ, եւ հնարք չմնաց որ չյանձնցընեն. ինչուան քաղքին իշխանն ալ կաշառելով իրենց կողմը ձգեցին, զՊրոյերեսիոս Ա.Քէնքէն աքսորել տուին։ Հայկազն ճարտարախօսին հեռանալովը՝ սկսան իրենք պատիւ ու մեծարանք գտնել. այն աստիճանի հասած էր առջինին փառքն ու համբաւը։

Խեղճ Պարոյրը աքսորանաց դառնութեան հետ՝ դառնագոյն ցաւ մըն ալ ունեցաւ աղքատութիւնը. բայց քիչ առնէն նորէն Ա.Քէնք դարձաւ։ Ուրիշներք ոսկւոյ զօրութեամբը կրնային դառնալ. իրեն համար լոկ ճարտարախօսութիւնը բաւական եղաւ. ինչպէս Հոմերոսի հաղնեցրուածը Աքիլլեայ վրանը կ'երթայ։ Պարոյր երբոր Ա.Քէնք դարձաւ, բաղդը իրեն ձեռնտու դառաւ. որովհետեւ քաղաքին իշխանը փոխուեր էր, որուն արդէն մեծ վիշտ ալ էին այնպիսի ճարտարախօսի մը քաշած նեղութիւնները. և Թէպէտ իրեն թշնամիքը դարձեալ եռեւ եղան դինքը նորէն աք-

սորելու, բայց ճար չեղաւ. Պարոյր՝ Ա.ֆէնք դարնալուն՝ ինչպէս նոր Ողիւսեւս մը իր ծանրատաղտուկ գերութենէն ետքը, բարեկամներէն ու ընկերակիցներէն քիչ հոգի գտաւ ողջ և առողջ. որոնց մէջ էր նաև Տուակիանոս, զոր Սուիդաս ամենազօր ճարտարախօս կ'անուանէ, և որուն համար Պարոյրի վարքն մեզի աւանդողն Եւնաբիոս՝ կ'ըսէր, թէ ինքը միայն արժանաւոր էր Պրոյերեսիոս ըլլալու՝ թէ որ ինքն Պրոյերեսիոս ողջ չըլլար։

Իշխանը երբոր Ա.ֆէնք դարձաւ, իմաստասէրները խորհրդի կանչեց և զանազան առաջարկութիւններ դրաւ առջևնին որ լուծեն։ Բայց որովհետև իրենց տուած պատասխաններովը չկրցան զիշխանը գոհ ընել, այն պատճառաւ Պարոյրի բարեկամներն ալ սրտաթափ եղան։ Բայց բոլորեալքը նորէն կանչեց զիրենք, ըսելով թէ առջի երախտաց փոյթանակը պիտի ընդունին. ամէնքը վազող վազողի եղան։ Պարոյրն ալ առանց իրենց գիտնալուն կանչուած էր։

Բոլորը դարձաւ՝ մէկ նոր առաջարկութիւն մըն ալ, ըսաւ, պիտի ընեմ ձեզի. գուք մէջերնիդ մէկն ընտրեցէք որ կարենայ լաւ ճառել. անկէ ետքն ալ Պրոյերեսիոս ճառէ։ Իմաստակքն զարհուրելով Պրոյերեսի անունէն, մինք առանց պատրաստութեան բան չենք խօսիր, ըսին։ Այն առեն բոլորին ակնարկեց Պրոյերես

սեայ, որ գովելով անոր առաջարկութիւնը, այսինքն յանպատրաստից բան խօսելը, առնին մէջ կեցաւ. և անվախ գըրգռեց իրեն թշնամեաց դլխաւորները՝ որ իրենք իրենց ուզած առակը իրեն առաջարկեն. անոնք ալ չարութեամբ անանկ գըժուար նիւթ մը ընտրեցին՝ որ ոչ միայն անյարմար էր պերճախօսութեան, այլ դրեթէ և անկարելի էր յանպատրաստից խօսելու: Սակայն Պրոյերեսիոս չհրաժարեցաւ. մանաւանդ թէ խնդրեց որ նշանագիրը դրի առնուն իր խօսելիքը՝ որ յետոյ վէճ չըլլայ բսածին չբսածին վրայ. գարձեալ խնդրեց ալ որ բոլոր առեանն լուռ կենայ և ծափահարութիւն չընէ՝ ինչուան որ ինքն խօսքը չվերջացընէ: Առեանը խօսութիւնն այն աստիճան զարմանալի, պերճաբան և իմաստալից եղաւ, որ ունկնդիրք կը նեղուէին ծափահարութիւն չընելնուն և լռութեան համար, նշանագիրք ալ հազիւ կը հասնէին խօսքին և տեւէն. որ մինչդեռ լլցած կարծուէր, Պրոյերեսիոս երկրորդ մաս մ'ալ սկսաւ ըսել՝ առջինէն աւելի զօրաւոր և գեղեցիկ. և երբ լմընցուց, կարելի է ըսաւ, սխալ բան մը ըսած եմ կամ սխալ դրած ըլլան. նայեցէք թէ չիտակ է. և նորէն սկսաւ բոլոր ճառը առջի բառէն ինչուան վերջինը անվոխոխ կարդաւ ըսել: Այս բանս ալ այնքան զարմացուց լսողները, որ երբ լսեց՝ ամէնքն վազեցին իրեն խնդակցելու, ոչ

ճարտասան մը՝ հապա նոր Հերմէս մը՝ առաջած մը անուանելով։ Իգնատիան պինուրական հանդիսիս հանդէս պՊրոյերեսիոս յատնեչն և իր արժանաւոր աթոռը տալու։ Բայց իմաստակաց նախանձն զարձեալ հնարք գտաւ՝ զայկերանները խաբելով անվայել հնարքներով՝ վարպետներին աթոռէն ձգել։ Պրոյերեսիոս անտրտունջ կը կենար յԱթէնս իբրև սոսկական մը, երբ Անատոլիոս Պերիթացի՝ որ իմաստութեամբ անուանի եղած եպարքոսութեան պատուոյ հասեր էր՝ եկաւ յԱթէնս. և իր նախորդին նման իմաստակները կանչելով՝ իրենց ճառի նիւթեր տուաւ. բայց զայնքն ալ արհամարհելով՝ աթոռէն եկաւ, միայն Պրոյերեսիոսը մեծարեց և իր սեղանը նստուց։

Այս միջոցներս, կամ քիչ մը յառաջ, Կոստանդ կայսր ի Գաղղիա հրաւիրեց զՊրոյերեսիոս, որ և դնաց և զարմացուց զԿոստանդ և բոլոր արքունիքը, ոչ միայն իր հանճարովն, այլ և իր վարքովն և կենաց անառեսութեամբն. վասն զի հակառակ և գեղապատաճաճ անձն էր մեր հռետորն և ամէն կերպերովն սիրելի. ապրուստն ալ ամենապարզ և զարմանալի. մինչև Գաղղիոյ ցուրտ ձմեռներուն մէջ ալ՝ միայն մէկ պարեգօտ կը հագնէր, գրեթէ բոպիկ կը պտրտէր, ոչ միայն ջուրը պաղ կը խմէր, այլ և տաք կերակուր ալ չէր ուտեր։ Կոստանդ չատ պատուով

խաւրեց զինքն 'ի Հռոմ. հոն ալ քաղքին մեծերն պատուելով զնա խնդրեցին որ գովեստ մը խօսի իրենց չնաշխարհիկ քաղքին վրայ։ Պրոյերեսիոս հոս այլ այն առիթեան զերազանց ճարտասանութեան երեւցաւ, որ թերեւս ինքնին կիկերոն՝ եթէ ողջ ըլլար՝ ինքն իր վրայ միայն չպարծէր. Հռովմայեցիք արժանաւոր վարձք ընծայեցին իրենց գովաբանին՝ պղնձէ ամբողջ անդրի մը կանգնելով Պրոյերեսիոյ, և վրան գրելով, թագուհին Հռոմ թագաւորի բանին։ Զգիտեմ թէ ուրիշի ալ տրուած է այսպիսի պատիւ։ Հռոմայեցիք, խնդրեցին 'ի Պրոյերեսիոյ որ գոնէ իրեն տեղը աշկերտներէն մէկը խաւրէ իրենց, ան ալ խաւրեց զԱնտերիոս Ա.զեքսանդրացին։

Պրոյերեսիոս զարձաւ նորէն յԱՔէնք՝ Ջինապետի պատուանուամբ՝ զոր իրեն տուեր էր Կոստանդ կայսր, և յորդորեր ալ էր որ ուրիշ բան մ'ալ խնդրէ իրմէ. իսկ նա իբրև փոխարէն երախտեաց և փառաց զոր իմաստութեան մայր սեպուած Աթէնքի մէջ գտեր էր, խնդրեց որ քաղաքը մուած ցորենին մաքսը վերցուի. և այս բանս կատարել տուաւ վերոյիշեալ Անատոլիոսի ձեռօք. որուն հրաւիրանաւն ալ ներբող մը խօսեցաւ 'ի պատիւ Կոստանդ կայսեր՝ այս ցորենին ազատութեան շրած չնորհաց համար։ Ասկէ ետև գարձեալ Աթէնքի ճարտասանութեան աթոռը նստաւ Պրոյերեսիոս, և հոն էր Յուլիա-

Նոսի ինքնակալ ընտրուելու առեն՝ ալ. աս խմաստակ կայսրս որ թէ զէնքով և թէ գիտութեամբ ու հռետորութեամբ մէկէ մը վար մնալ չէր ուզեր, իրեն նուաստութիւն չսեպեց զՊրոյերեսիոս պատուելն. և առ նա գրած նամակի մը մէջ կ'ա նուանէ զնա Յորդառատ և անարգել գետ պերճախօսութեան, և հզօր գրուցուածոյն՝ ամենեին Պերիկլեայ նման։ Յուլիանոս մեծ ակնկալութիւն մ'ալ ունէր ի Պրոյերեսեայ, որուն իր բռնած կարգէն դուրս չնորհք և բացառութիւն մ'ալ ըրաւ. կը փափագէր և կը յուսար որ Պրոյերեսիոս գրէ իր գինուորական գործոց պատմութիւնը, որոյ նա ականատես ալ էր մասամբ՝ ի Գաղղիա. և այս բանս թերևս իրեն յատուկեան պարծանք պիտի սեպէր, որոյ չէր արժանի. վասն զի ինքն Քրիստոսի հաւատոյ յայտնի ուրացող և հալածող մ'էր, իսկ Պրոյերեսիոս պատուաւոր և պատուելի քրիստոնեայ մը. Յուլիանոս թշնամաբար բոլոր քրիստոնեայ վարժապետները հեռացուց իրենց աթոռներէն, միայն զՊրոյերեսիոս թողուց իր սուտ յուսովը. բայց այն մեծ անձն որ ինքն իրեն և ամեն ճանչցողաց պատիւ էր, կամաւ և ազատաբար հրաժարեցաւ իր աթոռէն, այն սիրելի ճարտասանութեան աթոռէն՝ որով այնչափ բարձրացեր և ղոր այնչափ բարձրացուցեր էր, բայց անոնցմէ գերազոյն գասեց ճշմարիտ հաւատոյ փառքը։

Աբգէն այս առեն 90 տարու մօտ ծե-
րունի մ՚էր Պրոյեվեսիոս, և գեղեցիկ եր-
կայն արծաթափայլ ալիօք զարդարեալ.
բայց դեռ կայտառ երեսօք և երիտասար-
դական ուժով. այս առենս էր որ Կէնա-
բիոս՝ իր վարուց գրողն՝ 17 տարուան պա-
տանի մը, աշակերտեցաւ անոր տանը մէջ
հինգ տարի բովը կենալով, և տեղեկա-
նալով անոր դիպուածներուն՝ աւանդեց
մեզի: Իր բաժնուելէն քիչ վերջը մեռաւ
Պրոյեվեսիոս իբրև 93ամեայ, լի տարեօք
և փառօք:

Վերոյիշեալ քանի մը ճառերէն զատ
կը յիշուին թէ շատ ուրիշ հանուորական
ճառեր ալ գրեր էր, աւելի իբրև դամբա-
նական կամ՝ ներբողեան. որոց և ոչ մէկն
ալ մեզի հասած է, ժամանակին կամ՝ նա-
խանձու անգթութեամբ. թէպէտ և իր
փառաց և արժէից համար բաւական սե-
պուին իր վրայ պատմուածքն և բուռածքն,
և աշակերտքն. որոց մէջ գտուեցաւ և կե-
սարիոյ ախոռայն պարծանքն՝ մեծն Ս. Բար-
սեղ, և իր սիրելին ու համանման յունա-
նական մտաւնագրութեան և ընդհանուր
հեղեղեցոյ պարծանք՝ սուրբն Գրիգոր աս-
տուածաբան, որ իր խորունկ ու զարմա-
նալի իմաստութիւնը՝ կերպով մը Պրոյե-
բեսեայ Յանիէլն ու Հանճարոյն պարտական
կը ճանչնայ. ի մօտոյ դիներք ճանչցած ի
մանկութեան, Հասուն Հասակին մէջ յա-
տագայ տողերը իրեն կը նուիրէր.

Աբգէն այս առեն 90 տարու մօտ ծե-
րունի մ՚էր Պրոյերեսխոս, և գեղեցիկ եր-
կայն արծաթափայլ ալիօք զարդարեալ.
բայց դեռ կայտառ երեսօք և երիտասար-
դական ուժով. այս առենս էր որ Կէնա-
բիոս՝ իր վարուց գրողն՝ 17 տարուան պա-
տանի մը, աշակերտեցաւ անոր տանը մէջ
հինգ տարի բովը կենալով, և տեղեկա-
նալով անոր դիպուածներուն՝ աւանդեց
մեզի։ Իր բաժնուելէն քիչ վերջը մեռաւ
Պրոյերեսխոս իբրև 93ամեայ, մի տարւօք
և փառօք։

Վերոյիշեալ քանի մը ճառերէն զատ
կը յիշուին թէ չատ ուրիշ հռետորական
ճառեր ալ գրեր էր, աւելի իբրև դասբա-
նական կամ՝ ներբողեան. որոց և ոչ մէկն
ալ մեզի հասած է, ժամանակին կամ նա-
խանձու անգթութեամբ. թէպէտ և իր
փառաց և արժէից համար բաւական սե-
պուին իր վրայ պատմուածքն և ըսուածքն,
և աշակերտքն. որոց մէջ գտուեցաւ և կե-
սարիոյ աթոռոյն պարծանքն՝ մեծն Ս. Բար-
սեղ, և իր սիրելին ու համանման յունա-
նական մտաւնագրութեան և ընդհանուր
եկեղեցւոյ պարծանք՝ սուրբն Գրիգոր աս-
տուածաբան, որ իր խորունկ ու զարմա-
նալի իմաստութիւնը՝ կերպով մը Պրոյե-
րեսեայ Ջանիցն ու Հանճարոյն պարտական
կը ճանչնայ. ի մօտոյ դիները ճանչցած ի
մանկութեան, Հասուն Հասակին մէջ յի-
սուզայ տողերը իրեն կը նուիրէր.

դանի յիշատակներ ալ թողուց. տարիքն առնելէն և անգամ մը Ա.Թենքէն հետաքննելէն ետև՝ փոքր Ասիոյ Տրալլի քաղաքը գտնուած առենը՝ օրինաւոր ամուսնութեամբ Ամիկլէա անուամբ կին մ'առաւ և երկու դուստր ունեցաւ. զորոնք առենին հարսնացուց ալ, և բաժնուելուն վրայ շատ ցաւ քաշեր է կ'ըսեն։

ԴԱՐԵ

Հայկական գպրութեանց ամենէն աւելի նշանաւոր ժամանակն է հինգերորդ դարը։ Թագաւորական իշխանութիւնը և եկեղեցական նուիրապետութիւնը իրենց ամէն ազդեցութիւնն ու փոյթը կը բանեցընեն՝ ուսմանց և գիտութեանց մուտք, տեղագրութիւն և պահպանութիւն տալու Հայաստանի մէջ։ Իրենց ջանիցն արժանաւոր պատուղները կը տեսնուին։

Ուրիշ ազգերու մտաւորական զարգացմանց պատմութեանը մէջ՝ շատ անգամ զուտումն և գիրթութիւն՝ գաղթականութեանց արգասիք կը տեսնենք։ Աւանկ են՝ գիպտոս, փիւնիկէ, Յունաստան, Հռոմ և Իտալիա՝ իրարու պարտուրկան են. շահամառք, պատերազմունք և յաղթութիւնք՝ ուսմանց և գիտութեանց տեղափոխութեան պատճառ կ'ըլլան։ Հայաստան չունեցաւ այս բաղդը, անոր համար հարկ

սեպից իւր քայլ ուշիմ երիտասարդու-
թիւնը հոն ղրկել ուր դեռ և կը ծաղկէին
դպրութիւնք. և անոնց ջանքովը նոր կեր-
պարանափոխութիւն մը տալ իւր մտաւո-
րական դոյութեանը:

Ո՛րչափ զարմանալի է թարգմանչաց ժա-
մանակը, որ իրաւամբ մեր ուսումնակա-
նութեան ոսկեդարը կը սեպուի: Ազգաց
պատմութեանը մէջ նման դէպք մը փըն-
տռելու՝ ընդունայն պիտի աշխատինք. ինչ-
պէս նաև անոնց ջանքովն եղած ուսումնա-
կան արդեանցը հաւասարը նկատել, քիչ
առնուան մէջ՝ այնչափ ինքնագիր երկա-
սիրութիւն և բազմապատիկ թարգմանու-
թիւն, այնպիսի կիրթ ախորժակաւ և ըն-
տիր լեզուով:

Իրենց ազդեցութիւնն ալ մեծ եղած է
ժամանակակցաց վրայ: Հայաստան գրե-
թէ ուսմանց անճաշակ, մէկէն կ'իմանար
անոնց քաղցրութեան ճաշակը. դպրոց-
ներ կը յաճախէին, աշակերտք կը բազմա-
նային. գիտութիւնք կը ծաւալէին, և ինչ-
պէս ժամանակակիցն Կորիւն կը վկայէ,
« Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի
աշխարհն Հայոց անպայման սքանչելի լի-
նէր ». և կամ ինչպէս ուրիշ պատմիչ մը
կը զրուցէ, « Ակիզբն դպրութեանն Հայոց
լինէր սկիզբն մեծի գիտութեան »:

Վասն որ սկզբանը արժանաւոր չարու-
նակութիւնը պակսեցաւ. Հայաստանի քա-
ղաքական ու հայրապետական աթոռ-

Ներսէս մէկէն ի մէկ ինկան կամ իրենց նախկին պայծառութիւնը կորսընցուցին. արտաքին պատերազմունք և ընտանի երկպառակութիւնք՝ կարկառեալ փոթորիկով մը Հայաստանի գեղեցիկ ու ծաղկաղարդ գարունը կ'անապատացընէին։

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

Մինչեւ Ներսէսի օրդին էր սուրբն Սահակ Պարթեւ, որ իւր հօրը մահուանն ատեն՝ կոստանդնուպոլսի մէջ ուսանելու կը պարապէր։ Հոն սրբասէր ու մարդասէր հոգին՝ աշխարհի կեանք ընտրելը հարկ սեպց, որպէս զի Հայաստանեայց նուիրական ցեղը Հայաստանէն չվերցուի։ Բայց Աստուած՝ որ իւր բարեացն ու շնորհաց չճանչցող Հայաստանը խրատելու ազէտք սահմանած էր, ուզից որ նոյն ցեղին վերջին չառաւիղն ըլլայ սուրբն Սահակ. ուստի միայն գուարթ մը պարգեւից իրեն Սահականոյշ անունով։

Այս բանիս համար՝ կարգէ դուրս աշխատութեան մը մէջ ինկած էր սուրբն Սահակ, և անոր դարմանը յԱստուծոյ կը խնդրէր, վասն զարշապարտու եկեղեցւոյն

մէջ իւր սրտին ցաւերն ու վիշտերը՝ մխի-
թարիչ Աստուծոյ մը առջեւը ձգելով ար-
տասուօք, հոն տեսնելամբ մը յայտնեց Աս-
տուած քիչ առենէն Հայոց աշխարհին վե-
րայ հասնելու չարիքն, ու անոնց հետեւանք
թագաւորական ու հայրապետական իշխա-
նութեանց միանգամայն դադրիլը։

Գերագոյն կամաց հպատակելով Սա-
հակ, ինքզինքը բոլորովին Աստուծոյ ու
աղքին բարւոյն ընծայեց. մէկ կողմանէ
աղօթից ու ճգնութեանց պարապելով, և
մէկալ կողմանէ ալ իրեն արժանի աշա-
կերտներ բազմացընելով, և անոնց թէ հո-
գեւոր և թէ մտաւոր յառաջադիմութեան
համար ջանալով ու յոգնելով։

Անով աղքին մէջ ընդհանուր և սիրելի
համբաւ մը ստանալով, Աստուրակէս կա-
թուղիկոսին մահուընէն ետքը՝ բոլոր ժո-
ղովուրդն իր խոսրով թագաւորին հետ
մէկտեղ՝ անոր յանձնեց հայրապետական
աթոռը։ Բայց որովհետեւ այս բնտրու-
թեան մէջ՝ նախ Պարսից թագաւորին կամ
քը չէր հարցուած, ուստի Շապուհ՝ խոս-
րով թագաւորին վրայ բարկանալով, թէ
դինքը և թէ զսուրբն Սահակ զրկեց իրենց
իշխանութենէն. թէպէտ քիչ առենէն
նորէն հաստատեց դինքը իւր պատուոյն
մէջ, ու խոսրովու տեղն ալ թագաւորե-
ցուց անոր վրաստանի եղբայրը։

Այն միջոցին սուրբն Ներսէս եկաւ առ
Սահակ, և այս երեք նշանաւոր անձանց

ջանքովն ու աշխատութեամբ՝ հայերէն մատենագրութեան ոսկեդարին հիմունքը ձրդուեցան։ Վասն դի անոնց փութովն եղաւ հայերէն գրոց գիւտը, անոնք բացին այլ և այլ վարժարաններ՝ Հայաստանի մանկութիւննու երիտասարդութիւնը կրթելու, և այս երկուքին ձեռքովն եղաւ աստուածաշունչ գրոց թարգմանութիւնն։

Երբոր իրենք այս գործերուն զբաղած էին, Վռամշապուհ թագաւորն մեռաւ. ուստի և նախարարք՝ գտուրբն Սահակ զբրկեցին առ թագաւորն Պարսից Յազկերտ Ա, խնդրելով որ զԹոռոսով Գ՝ զոր Շապուհ արքայն իշխանութենէ գրկելով՝ բանտի մը մէջ փակեր էր, նորէն թագաւորեցընէ Հայոց վրայ. Յազկերտ ալ՝ սրբոյն խնդիրքը կատարեց։ Այսպէս քանի մը տարի վերջ ալ՝ երբոր նոյն Յազկերտ թագաւորը՝ Պարսկաստանի մէջ բնակող քրիստոնէից դէմ սաստիկ հալածանք մը հանեց, սուրբն Սահակ իւր իմաստուն խօսքերովն՝ անոր սիրտը քաղցրացուց քրիստոնէից վրայ։

Տարիէ մը ետքը երբոր Յազկերտ մեռաւ, և այն պատճառաւ այլ և այլ խռովութիւններ եղան Պարսից աշխարհին մէջ, Սահակ հետն առնելով իւր թոռները՝ Մեսրոպայ հետ մէկտեղ Հայաստանի այն մասը գնաց որ Յունաց իշխանութեան տակն էր. բայց որովհետև այն գաւառներն կեսարիոյ եպիսկոպոսին վիճակն էին, ուս-

ոմն տեղւոյն վերակացուքն չընդունեցան զսուրբն Սահակ. որ այս բանին վրայ վըշտանալով՝ զսուրբն Մեսրովպ իւր վարդան թոռանը հետ գրկից առ Թէոդոս փոքր. և խնդրեց իրմէ որ կարենայ իւր հայրապետական իշխանութիւնը բանեցընել Հայաստանի այն բաժնին վրայ ալ՝ որ Յունաց իշխանութեան տակն էր։ Կայսրը չնորհեց իրեն խնդիրը, և զսուրբն Վարդան՝ սարսափելատուբեան պատուով մեծարեց։

Բայց նախարարք դինքը նորէն Պարսից բաժնին մէջ հրաւիրեցին, որպէս զի վարմայ ձեռքովը թագաւորեցընէ զԱրտաշիր՝ զորդին Վռամշապհոյ։ Սուրբն Սահակ յանձն առաւ իրենց առաջարկութիւնը, և սկսաւ աւելի փութով մը եռանդ ըլլալ Հայաստանի բարեկարգութեանը։ Սակայն երբ Արտաշիր իր անառակ վարքովը՝ նախապարապ սիրաը իրմէն պաղեցուց, անոնք ուղեցին դինքը Վռամայ ձեռքով Հայոց թագաւորութենէն զրկել, և խնդրել իրմէ որ անկէ ետքը պարսիկ մարզպան մը զրկէ Հայաստանի վրայ. և այս իրենց խորհրդեանը կամակից կ՚ուղէին զսուրբն Սահակ։ Աստուածաբեալ հայրապետին ոչ արժանէին կակըղցան, և ոչ զօրաւոր խօսքերովը համոզուցան այն վնասակար խորհրդէն ետ կենալու. մանաւանդ թէ տեսնելով որ կը հակառակի իրենց կամացը, նախարարներ զրկեցին առ Վռամ, և միան-

զամսոյն ամբաստանեցին թէ զԱրտաշիր և թէ զԱհակ։ Թագաւորը երկուքն ալ դուրս կանչեց, և զրկեց՝ մէկը իւր արքունի և մէկալը հայրապետական իշխանութենէն։ Բայց երբ նաքը նորէն իւր հայրենիքը կը զրկէր զԱհակ, և միայն ձեռնադրութեան իշխանութիւնը տալով կը յորդորէր զինքը որ միամտաբար Պարսից ծառայութեան մէջ ըլլայ, և ըստնոյ հաւատակցութեամբը չխաբուի, հրաշալի սանեանախօսութիւն մը բրաւ հոն սուրբն Ահակ. ցուցընելով, կ'ըսէ Տօրենացին, «զերախտիս ծառայութեան և զասերախտն ի նոցանէ լինել. ընդ նմին և զկեղծաւոր քաղցրաբանութիւն նոցա յանդիմանելով և զդառնութիւն խորհրդոց, և զգործս չարաչարս. յարելով ի նոսին զընդդիմաբանել անմիտ հայհոյութեանցն արտաճառելոց, զոր ա֊սաց մեզար հաւատակցութիւն. և զնոցայն խայտառակելով պաշտամունս, կատա֊րեաց ի հրաշալի աստուածաբանութիւն, ըստ հանդուրժելոյ հեթանոսական լսե֊լեաց». անանկ որ մոգերուն բերանը խօսք չմնաց. Թագաւորն բոլոր անձնագիր Պար֊սից հրապարակին բազմութեամբ զարման֊քով մոխիկ ընելէն ետքը, հրաման տուաւ որ չատ ստակ տան իրեն՝ «իբրև քաջա֊բանի և ուժգնասրտի առն համաբձակա֊խօսողի առաջի այնքանոյ Թագաւորին»։ Բայց սուրբն Ահակ ոչ իրեն և ոչ իրեն֊ներուն զարմանքը բանի տեղ դրաւ, և ոչ ալ տուած ընծաներուն մօտեցաւ։

Ժամանակ անցնելէն ետքը՝ նախապարբ անոր աթոռը անարժանապէս գրաւողնե-րուն ձեռքէն ձանձրանալով, խնդրեցին իրմէ որ նորէն նոյն նուիրական գահուն վրայ նստի. բայց սուրբն Սահակ չկամեցաւ. «Ձահանայանալ՝ ի վերայ տիրա-նենդ ժողովրդոց ոչ կարեմ» ըսաւ. ու Դուին քաղքին քովերը քաշուեցաւ. յե-տոյ Բագրեւանդայ մէջ կնքեց իւր բազմար-դիւն կեանքը, գրելէ իննսնամեայ հասա-կի մէջ։

Սահակայ վրայ թէ ժամանակակից և թէ յետագայ պատմիչք՝ ամենքը գործնքով կը խօսին, հաւասար գովելով անոր սըր-բութիւնն և իմաստութիւնը։ Մենք բազ-մապատիկ վկայութեանց մէջէն՝ միայն Խո-րենացւոյն խօսքերը մէջ բերինք. «Մահ-կանացու ծնեալ՝ անմահ դիւրն յիշատակ եթող. պատուաց զպատակերն, պատակ-ռնաց՝ի կոշնականէն, փոխանորգնաց ըղ-կեանն»։

Սրբոյն Սահակայ գրաւոր երկասիրութիւն-ք. — Սահակայ գրաւոր երկասիրութեան-ցը մէջ նշանաւոր եղած են այլ և այլ թարգ-մանութիւնները, և մանաւանդ թարգմանութիւնն, ո-րուն վրայ գլխաւորապէս Ա-տուածաշունչ գրոց թարգմանութիւնն, ո-րուն վրայ գլխաւորապէս խօսինք։

Ինքնագիր գրուածոցը մէջ ամենէն ա-ւելի նշանաւոր կրնանք սեպել, դէթ ին-չուան հիմա մեր ձեռքը հասածներուն մէջ, կանոնական Թուղթ մը՝ վեց գլուխ բաժ-

նուած, զոր ի վ. ազարչապատ գումարած ժողովքէն վերջը գրկեց, գնդեցիկ և ընտիր չարագրութեամբ։ Ասկէ զատ քանի մը թուղթեր առ Ատիկոս և Պրոկղ հայրապետս Կոստանդնուպոլսի, և առ փոքրն Թէոդոս կայսր։

Փարպեցւոյն գրոցը մէջ՝ վ. ազարչապատու եկեղեցւոյն մէջ յայտնուած տեսլեան նկարագիրն ալ կայ՝ իրմէն պատմուած առ նախարարս. զոր յետին դարուց մատենագիրք ալ կը յիշատակեն, և մասնաւորաբար Մագիստրոս. նոյնպէս կը յիշէ զայն վ. ասիլ կայսեր Թոռն Կոստանդին Պորփիւրոժեն, ու կը յորմարցընէ զայն վ. ասլի թագաւորութեանը։ Ամբրոնացին որովհետև նոյն տեսլեան վկայութիւնը չիգտներ խորենացւոյն գրոցը մէջ, ուստի և անոր հարազատութեան վրայ տարակուսիլ կը ցուցընէ. « Տեսիլն այն, կ'ըսէ, ոչ հաստատի առ մեզ գոլ սրբոյն Սահակայ, այլ ի կարծիս ինոյ, վասն ոչ առնելոյ նմա ի գիրս իւր յիշատակ Մովսիսի խորենացւոյ »։

Աղուանից եկեղեցական գրոց կարգաւորութեանը մէջ ալ շատ աշխատանք ունի սուրբն Սահակ. բայց օրինաւորութեանբեր կոչուած ցուցակին մէջ՝ մասնաւորաբար իրեն կ'ընծայուին հետեւեալները. « Խակ ըզ-Քահանայօրհնէքն՝ սրբոյն Սահակայ դնել՝ յետ քառնեմի ամի արքեպիսկոպոսութեան իւրոյ՝ ի նաւասարդ ամսոյ որ օր

մի էր, և՝ ի Քահանայաթաղն այլ՝ յաւել եօթն աւետարան. նոյնպէս և զԱչխարհաթաղն, ի Քաղաքուղաչաի ի վկայարանս սրբոց Հռիփսիմեանց, յետ Տարեբերի և քան և մի ամին՝ սրբոյն Գրիգորի ի մինչև ցայն վայր հնումն վարէին։ Այսպէս սուրբն Սահակ և դչորս քարոզն զգիշերոյ և զնոցին աղօթսն»։ Յովհան Իմաստասէրն ալ կը յիշէ թէ ինքը սուրբն Սահակ յօրինած ըլլայ դիշերային ժամակարգութեան չորս աղօթքները. բայց իւր մէջ բերած աղօթքները կը զանազանուին հիմակուանններէն։

Ա.ադ չարաթուն մէջ երգուած չարականներն՝ Պարթեւ հայրապետաց կ'ընծայուին, որոնք իրենց պարզ ու մաքուր լեզուովը, բանաստեղծական հանճարով և ամփոփած գեղեցիկ խմաստներով՝ նոյն աբանչելի դրքին գերազանց կտորներն կըրնան սեպուիլ արժանապէս։

Ս. ՄԵՍՐՈՊ

Հայկական գպրութեանց ծադկելու նախկին առիթ ու բարգաւաճեցընող ան պուած անձը՝ երանելին Մեսրոպ կամ Մաշտոց՝ Տարոն գաւառին Հացեկաց գ

զէն էր, վարդան անունով մէկու մը որ զի։ Մանկութեան հասակէն հելլենական դպրութեամբ վարժած՝ Հայոց Աշխարհի թագաւորաց վաղարշապատ քաղաքը եկաւ, ու արքունական դիւանին պաշտօնէից մէկն եղաւ։ Ցեղական և հմուտ աշխարհական կարգերու, դինուորական արուեստովն ալ իր ձեռքին տակն եղած դինուորներուն սիրելի անձ մըն էր։

Բայց քիչ առնէն յաշխարհական մեծութեանց հրաժարելով՝ Թողուց արքունիքը, ու լերանց և անապատներու միայնութեան մէջ Աստուծոյ հաճոյ ըլլալու կը ջանար։ Իր սրբակաց վարուցը հետևողներ ալ ունեցաւ Մեսրոպ. ու անոնց հետ մէկտեղ գնաց Գողթն գաւառը. տեսաւ այն երկրին բնակչաց վայրենութիւնը, և թափանցող մտքովը խմացաւ թէ աւերիչ տգիտութիւնը իւր երկաթի ու ծանր ձեռքը տարածելով բոլոր Հայաստանի վրայ՝ այն նախանձելի աշխարհը անմարդի վայրենաց բնակարան մը պիտի դարձընէր։ Աչքակայ իր սրտին մեծ ցաւ եղաւ. և դարմանը գտնելու համար գնաց առ սուրբն Սահակ. և երկուքը միաբան առ Աստուած չաղուհ թագաւոր, ու հայերէն գրոց գիւտին համար կ'աշխատէին. որուն համար եղած ջանքը և յաջողութիւնը արդէն գրուցս պատմաստութեան մէջ պատմած ենք։

Երբ խմացան թագաւորն և սուրբն Սահակ՝ Մեսրոպայ եղած աստուածային յայտ-

նութիւնը, ու անոր գառնալն ի Հայաստան և թագաւորական քաղաքին մօտենալը, բոլոր նախարարներն իրենց հետ առած՝ Ախ գնային քովերը հանդիպելցան երանելւոյն, և կարգէ դուրս ուրախութիւն և աստուածային խնամոց չնորհակալութիւն մատուցին։

Այն ատեն թագաւորէն հրաման առաւ Մեսրոպ՝ Մարաց խուժադուժ կողմանքն ալ հրահանգելու. ու թէ անոնց և թէ բոլոր Հայաստանի օգտին համար ձեռք գարկաւ թարգմանելու Աստուածաչունչ գիրքը. և նախ քանի մը օգնական հետն առնելով, (որոնց առաջնոյն անունը Տիրայր Խորձենացի, և երկրորդին Մուշէ Տարոնացի, և ուրիշներ) անոնցմով Գողթն գաւառը իջաւ, ու Շարիթ անունով իշխանի մը ձեռնտուութեամբը սկսաւ քարոզել և ուսուցանել։

Անկէ՝ Գողթն գաւառին սահմանակից Սիւնեաց աշխարհը գնաց. ու տեղւոյն վաղինակ իշխանէն օգնականութիւն ըլլալով, դայեկաբար՝ կ'ըսէ պատմիչը, դաստանամիա, վայրենագոյն, և ճիւաղաբարոյ մարդիկը կը խրատէր. ու Անանիա անունով մէկը տեղւոյն եպիսկոպոս կարգելով, բոլոր աշխարհը վանականներով կը լեցընէր։

Քիչ ժամանակ անցնելէն ետքը՝ աստուածային տեսլեամբ նաև վերջապէս աշխարհին նշանագիրը ստեղծից։ Ետքը իր

ընտիր աշակերտներէն ոմանք իր հետն առնելով՝ ներկայացաւ վրաց Բակուր թագաւորին և Մովսէս եպիսկոպոսին, ու թէ անոնց ու թէ բոլոր աշխարհին գլխաւորներուն ընդունելի եղաւ։ Ջաղաքանութով մէկը դանելով՝ վրաց լեզուին թարգմանեն, գրագէտ ու ճշմարտահաւատ անձ մը, թագաւորին հրամանով աշակերտաց բաղմութիւն ժողվեց, ու յանձնեց անոնց դիտութեան խնամքը։

Երբեն աշակերտած գաւառացը կրկին այցելութիւն ընելէն ետքը՝ սուրբն Մեսրոպ սկսաւ մտածել Հայաստանի այն մասին վրայ՝ որ Յունաց թագաւորին իշխանութեան տակն էր. ու չատ աշակերտներ հետն առած հոն անցաւ. և որովհետև արդէն իր բարի համբաւն տարածուած էր, ուստի և մեծ սիրով կ՚ընդունէին զինքը աշխարհին եպիսկոպոսունքն և իշխաններն ու գաւառականները. և մանաւանդ Անաստոլիոս սպարապետն՝ որ Յունաց երկիրը մտնելուն պէս սիրով ընդունեցաւ զՄեսրոպ, և առ Թէոդոս կայսր մտնալու համակ մը գրեց սրբոյն համար. որով և թագաւորն ալ հրամայեց որ Ակռմիա պատուանունը տան սրբոյն։

Մեսրոպ իր աշակերտները Մելիտինէ քաղաքը տանելով՝ անդ ալ Ակակիոս եպիսկոպոսին յանձնեց զանոնք. ետքը ասոնցմէ գլխաւորներէն մէկը՝ զՂևոնդ հոն թողլով, ինքն առաւ հետը Դերջանայ և-

պիսկոպոսը՝ զՊիւնէ, և ուրիշ քանի մը հոգի և անոնցմով գնաց ի Բիւզանդիոն. թէ կայսերէն և թէ Պատրիկոս Հայրապետէն մեծարանք, պատիւ և ընդունելութիւն գտաւ։

Հոն քիչ մը առեն կենալէն ետքը՝ իմացուց կայսեր իր իշխանութեան տակ եղող Հայերուն խնդիր ու ցաւալի վիճակը. ու հրաման առաւ իրմէ՝ որ կարենայ զբօսրոցներ բանալ՝ ու պէտք եղած տեղերը նաև եկեղեցիներ հաստատել։ Մեծ պատուով և փառօք դարձաւ Մեսրովպ իրեն ներումն իր նպատակին տեղը, և հոն Հայոց սպարապետին պատահելով, կայսեր տուած հրամանագիրը ցըցուց. նա ալ՝ մէկէն մարդիկ զրկեց բոլոր այն գաւառները, չատ տզայոց բազմութիւն ժողվել տուաւ, և անոնց առջիկ սահմանից. սուրբն Մեսրոպ ալ իրեններովը մէկտեղ գանոնք սովրեցընելու եռանդ կ՚ընէր։

Անկէ ետքը, կ՚ըսէ պատմիչը, «երանելոյն զիւր վարդապետութեանն պայման արարեալ, սակեալ և վճարեալ, և բազում չնորհագիր մաանանս զՀարցն եկեղեցւոյ առացեալ, ծովացուցանէր զվարդապետութեանն զնորութիւն, և լցեալ զնզոյր ամենայն բարութեամբը»։

Այն օրերը Բննիամին անունով Աղուան մը եկաւ առ սուրբն Մեսրոպ, ուսկից տեղեկանալով Աղուանից լեզուին հանդամանքը, անոնց ալ նշանագիր առեղ-

ծեց ու խաւրեց հոն իւր աշակերտներէն զԴանիան և զԶինովբ։ Իսկ ինքը չատ աշակերտներով նորէն վերադարձաւ քաղաքը դարձաւ առ Ս. Ահակ և առ Թագաւորն, պատմելով անոնց աստուածային շնորհաց յաջողութիւններն։

Վերջը Ազուանից կողմերը անցաւ, ու տեսաւ անոնց եպիսկոպոսը զերեմիա, ու անոնց Արսաղէն թագաւորը. ու խնայելով անոնց իւր գթառատն պատճառը, յորդորեց իրենց յանձն առած գործութեանը խնամք տանիլ։ Անոնք ալ հրաման տուին բոլոր գաւառներէն և իրենց իշխանութեան տեղերէն դաս դաս ժողոյով գումարել, և դարմանել արբունի ծախքով։

Երբ այս հրամանը Թէ արդեամբը և Թէ գործով կը կատարուէր, Երեմիա եպիսկոպոսն աստուածաշունչ գրոց Թարգմանութեան նոր Թէ կ'ըլլար. որով նոյն աշխարհին չատ մեծ օգուտ առաջ կու գար։ Հոն սուրբն Մեսրոպ իւր Յովհաննէս աշակերտը ձգելով, վերց աշխարհը անցաւ. ու Տաչրաց Աշուշայ իշխանին ձեռնտուութեամբը Թէ գործութիւնը և Թէ հաւատոց ճշմարտութիւնը նորէն հաստատեց։

Անկէ Հայաստան դարձաւ Մեսրոպ, ու Ահակայ հետ մէկ տեղ սկսան Թարգմանութեան նոր Թէ ըլլալ. «Սկսեալ, կ'ըսէ Կորիւն, երանելոյն Մաշտոցի (Մեսրոպայ) ճառս յաճախագոյնս գիւրացաւտումս շնորհագիրս բազմագիմիս, ի լու-

աւետութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել, լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան. յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորաց աստի, առաւելագոյն վասն յարութեանն յուսոյն առ ի հանդերձեալսն յերիւրեալ կազմեալ, զի հեշտընկալք և դիւրահասոյցք ախմարադունիցն և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին. առ ի սթափել և զարթուցանել, և հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել»:

Ա յսպիսի արդիւնաւոր կեանք մը կընքեց Մեսրոպ, որոյն Յահակայ մահուընէն գրեթէ վեց ամիս ետքը. ու Օշական դիւղին մէջ ամփոփուեցաւ. «Գերազանցեալ, կ'ըսէ Խորենացին, քան զամենայն որ գայնու ժամանակաւ էին առաքինիք: Զանգի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն ի նորա վարս տեղի գտանել երբեք ոչ կարացին. այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ գոլով, և երկնաւոցն զարգարեալ սովորութեամբք զինքն ըստ բոլոր ցուցանէր: Վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, մեծօք ծննդական, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտաքայլեալ, սարսափ անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ»:

Մեսրոպայ գրաւոր երկասիրութիւնները.

— Մեսրովպ իր այնչափ աշխատանացը մէջ անգադար էր և՛ թարգմանութիւնս. ինքը առաջին եղաւ՝ որ իւր աշակերտացը ղկնաւորներուն հետ մէկտեղ՝ հայերէն գրոց գիւտը յԱատուծոյ ընդունածին պէս, սուրբ գրոց թարգմանութեան նուէր եղաւ. զարձեալ ինքն եղաւ ազգային եկեղեցական ծիսարանը կարգի դնող, այլ և այլ աղօթքներու թարգմանութեամբ կամ ինքնագիր յօրինմամբ, որ և իւր մահանուամբը Մաշտոց կոչուած է։ Գեղեցիկ, և իւր տեսակին մէջ անհամեմատ երկասիրութիւն մը, որուն մէջ հատատար կը փայլին յօրինողին աստուածապաշտ եռանդը, բնատուր հանճարը և մարդուս լեզուն։ Աստնցմէ զատ՝ առանդութիւնն իրեն կ'ընծայէ նաև մեծ պահոց չարաչարանքն և քանի մը համառօտ աղօթքներ։

ԹԱՐԳՄԱՆԻԶՔ

Հայերէն դպրութեանց սկզբ պատմութիւնը կ'ուսանինք, թէ սուրբն Սահակ և Մեսրոպ՝ մեր լեզուին գրոց գիւտը անմիջապէս կատարելէն ետքը՝ նուէր եղան աշակերտներ ժողվելու և դասնոնք կրթելու. լեզուն սովրեցընելու, և ազգին պիտոյ-

ցը յարմար ծառայութեան վիճակի մը մէջ դնելու։ Ասոնք են որ ընդհանուր անուամբ Թարգմանիչք կը կոչուին։

Ա. ի քանի տարուան միջոցին մէջ՝ որ ընդ գլուխ գրոյն և Արշակունեաց թագաւորութեան իյնալը և Հայաստանի Պարսից բռնութեանն ոտնակոխ ըլլալը, անտարակոյս բազմաթիւ աշակերտներ հասուցած պիտի ըլլան՝ Հայաստանի ամեն կողմերը հաստատուած վարժարաններն։ Բայց անոնց չատին՝ և ոչ իսկ անունը հասած է մեզի, ինչպէս այն գարուն արդիւնք և մեր գրաւորական պատմութեանց պարծանք՝ բազմապատիկ երկասիրութեանցն մնացածներուն ալ՝ որն որուն ըլլալը անծանօթ է մեզի։

Սակայն այնչափ երկար միջոցի մէջ վարժուած աշակերտաց թիւը՝ յերկուս դասակարգութիւնս կը բաժնենք, զոմանս առաջին թարգմանիչք կոչելով, և զայլս երկրորդ կամ կրտսեր թարգմանիչք։ Առաջին սեպուած են անոնք որ սրբոյն Մեսրովպայ հայերէն գիրը հնարած ժամանակ՝ բաւական հասակ ունէին, և կրնային իրենց վարդապետացը օգնական և գործակից ըլլալ ի թարգմանութիւնս. իսկ կրտսեր թարգմանիչք անոնք են՝ որոնց համար կ'ուսանգուի թէ առաջին թարգմանչաց աշակերտներ էին, և անոնց քով իրենց ուսումը կատարելէն ետքը՝ գրկուեցան իրենց վարդապետներէն յայլ և այլ

քաղաքս, աւելի հմտանալու այն արուեստին: Այս կարծեաց ստուգութեան երաշխաւորութիւն կրնանք տեսնել այլ և այլ ժամանակակից պատմագրաց խօսքերն:

Ասոնց վրայ՝ գրուածքիս տանելուն չափ՝ համառօտ տեղեկութիւն մը տանք:

Վռամշապուհ Թագաւոր ըստ խնդրոյ Ս. Սահակայ և Մեսրոպայ մանաւանդ արքունական հրամանով մը պատուիրեց որ բոլոր Հայոց աշխարհին մէջ ուշիմ և իրենց ազգայ յառաջադիմութեան վրայ յոյս տուող մանկունք ընտրուին ու ղրկուին առ Թագաւորն: Հրովարտակը՝ իբր ազդեցութիւնն ունեցաւ. ու Մեսրոպայ և Սահակայ պատրաստած վարժարանաց մէջ ցրուեցան մանկունքն՝ յունական, ասորի և պարսիկ լեզուաց գիտութեան ըղբաղելու, (որովհետև այն լեզուներն էին ժամանակին մեր մէջը գործածական բարբառները). ուստի մէկզմէկին իրենց վարդապետը հետ աշխատիլ՝ հայերէն գրոց գիւտին համար: Երբ Ս. Մեսրոպ իր փափաքած խնդրոյն հասաւ երկնայինս ելաւմը, Թագաւորն սուրբ հայրապետին հետ մէկտեղ հրաման տուաւ որ այն գրեթուն աշակերտող քաջավարժ մանկունքն առաջ անցնին, և անոնցմէ ընտրեցան վեցետուն հոգի, որոնց համար ժամանակին ամէն պատմիչքը՝ արամեախոհ, քաջուշեղ, փափկավանդք, երկարոգիք, կատարեալ և ամենայարմար անուններըը կուտան:

Թագաւորը՝ իբր ամէն արքունական դանձը, այծն ու ադղեցութիւնը՝ անոնց ու աշխարհին յառաջադիմութեանը կը գործածէր. անոնք ալ թագաւորին ջանիցն ու մտքէն արժանաւոր կ'երևնային. Հայաստանին ուսումնական յառաջադիմութեանը համար ամէն ջանք, ամէն աշխատութիւն դիւրին կ'երևնար իրենց աչքին. «Գումարէին, հանդերձէին, յաղթանակէին, երկայնամիտ ճանապարհ հորդէին, ի ծովս ընթանային, ի թևս թեթևս թըռչէին, յերիվարս փայտակերտս ելանէին, ի սաստանուտ դաշտս անհատատաս յածէին, զմահ քան զկեանս միշտ ընտրէին, աներևոյթ նպատակի ուշ ունէին»: Ան ատեններն էր որ յիդեսիա, ի կեսարիա, Աղեքսանդրիա, Աթենք, Հռոմ, Բիւզանդիոն ճանապարհորդութիւններ կ'ընէին. ու ամէն տեղ արժանաւոր պատիւ և մեծարանք դանելով, ժամանակին ուսումնական կեանցը մէջ համբաւաւոր, ու անոնցմէ չսաւերէն զերազանց երևնալով՝ ինչուան ոմանց նախանձու ալ առիթ տուած են: Իրենց հոն ունեցած ուսումնական աշխատութիւններն՝ այսպէս կը համառօտէ գրեթէ ժամանակակից անձ մը. «Թրանսային, արնէին, աշխատէին, ուսանելով, կրթելով, վարժելով, վաստակելով, պատրաստելով զանձինս յերկս օգտակարս և ի գործս չահաւէտս. ոմանք զտառից գծագրութիւնս չահաւորևալ, ոմանք զիմաստս

հաւաքեալ՝ զուսումնականն, զբնաւանականն, զերկրաչափականն, զհամարողականն, զերաժշտականն, զաստեղաբաշխականն, զբերականն և զբերթողական, զդործնականն և զռեհական իմաստասիրութիւն։ Որոնց հաւասարէին գիտութեամբք, քան զոմանս վեհագոյնք եւրէին, ոմանց զարմանալիք թուէին... ընդ ոմանս դասէին քննութեամբ, զոմանս պատասխանւոյ արժանի ոչ համարէին, հարցասէրք, բանասէրք, ընթերցասէրք»։

Ի Բիւզանդիոն՝ կայսրն Թէոդոս, ու Աստիկոս և Սիսիննիոս հայրապետք իրենց արժանաւոր առաստութեամբ մեծացեալին այն օտարական հանճարները, որոնք քիչ մը առեն Յունաստան կենալով, ոչ միայն յոյն եկեղեցւոյ բոլոր փառքը՝ ի Հայս փոխադրելու աշխատութիւնն վրանին առած էին, այլ և յունական լեզուին կատարեալ գիտութեամբը՝ դամնները կը զարմացընէին։ Անյագին Դաւիթ իւր յունական իմաստասիրութեամբը՝ յաղթութեան պարծանքը կը յափշտակէր. Խոսրով՝ յոյն եկեղեցւոյ մէջ՝ սրբոյն Բարսղի օրհնութիւնները կը կարդար. Մամբրէ՝ Ոսկերբանի ճառերը կ'արտասանէր. Վազար և ուրիշներն ալ այնչափ խորամուխ էին յունականին գիտութեանը մէջ՝ որ Աթենացի կոչուելու պարծանքը կը տանային։

Այն երկար ու դժուարին ճանապարհորդութիւնները լմնցընելու առնին՝ ի-

բենց բարերար վ ամէհպհոյ մահը լսե-
ցին. իմացան թէ իրենց Թոզած Հայա-
ստանը չէր որ կը սպասէր իրենց, և որուն
անձկանօքը կը մաչէին. պարսկական բըռ-
նութիւնն սկսած էր զօրանալ. հաւատք
իրենց նախկին մաքրութիւնն ու սրբու-
թիւնը՝ աշխարհային չահուց և փառաց զո-
հելու վտանգի մէջ էր. անոր համար կը
փութային ժամ մը առաջ դառնալ իրենց
հայրենիքը, տեսնել հոգևոր ծնողքնին,
և զէթ անոնց տեսութեամբը սրտերնուն
ցաւը մեղմացընել. իրենց գիտութեամբն
և յառաջադիմութեամբ՝ վրանին աչքա-
տող արդիւնաւոր հանճարները մխիթա-
րել:

Սակայն բոլորովին տխուր տեսարան մը
կը սպասէր իրենց Հայաստանին մէջ. կը
դառնային իրենց հայրենիքը, «հարսա-
նեաց երգեր նուագելու յուսով», կ'ըսէ
անոնցմէ մէկը. և ահաւասիկ տխուր մահն
հողոյ ասանդած էր իրենց սիրելի վարպա-
պետը՝ զուարթն Սահակ և զՄեսրոպ:
Այն ցաւին վրայ՝ ուրիշ դժնդակ տագնապ
մըն ալ կը հասնէր երանելի Թարգմանչաց
վրայ. բնաւանի երկպառակութիւն մը Հայա-
ստանին մէջ, ու անոր հետևանք կրօնա-
կան պատերազմն ընդ Պարսս:

Այնպիսի սպառնացող ահաւոր չարեաց
առջևն առնելու համար՝ Հայաստան աղի-
տից և թշուառութեանց Թատր կը դառ-
նար. մոգութիւնն այն ատեն ամբողջապէս

կ'ըլլար՝ երբ Հայաստանի որդիքը թէ՛ ի պինուորական և թէ յեկեղեցական դասուէ՝ իրենց արեամբը փրկութեան զոհ կ'ըլլային հայրենեաց համար։

Բայց երկիրը իր խաղաղութիւնը չէր կրնար ձեռք ձգել՝ ինչուան Վահանայ մարզպանութիւնը. և այն ատեն միայն պարսկական դրգռութեանց հանդիսարան եղող Հայաստանը՝ քիչ մը ատենուան համար իւր հանգստութիւնը գտնելու բաղդը կ'ունենար, որով և Թարգմանչաց ալ ժամանակ և պատեհ կու տար իրենց ուսուցչական դրաշմանց ետեւէ ըլլալու։

Թարգմանչաց գլխաւոր երկասիրութիւններն՝ Թարգմանութիւնք ըլլալով, անոնց վրայ զատ պիտի խօսինք։ Բայց ոմանք եւս գտնուած են մէջերնին այնպիսիք ալ՝ որ ինքնագիր երկասիրութիւններ թողուցած են, նախ կարգաւ մը անոնց վրայ խօսինք համառօտիւ։

Թարգմանչաց թիւը. — Թարգմանչաց թուոյն վրայ՝ որոշ տեղեկութիւն չենք կրնար ունենալ. բայց որովհետեւ այլ և այլ դպրոցներու մէջ և այլ և այլ ատեն կրթուեցան, մեզի կ'երեւնայ թէ սուրբն Մեսրովպ և Յահակ՝ բոլոր Հայաստանի մէջ եղող դպրոցներու մէջ իրենց արժանի բազմաթիւ աշակերտներ ունեցած պիտի ըլլան. որոնց չատին և ոչ անունը ինչուան մեզի հասած է։ Բայց ժամանակին առ մեզ հասուցած անուանքը ասոնք են։

Առաչին աշակերտք

ՅՈՎՍԷՓ ի վայոց Ջորոյ, որ կաթուղիկոսական աթոռոյ արժանի եղաւ, և Արտաշատու ժողովոյն մէջ նախագահ բազմեցաւ, ինչպէս իր ընկերակիցն Կորիւն վկայէ. «Գլխաւոր վերակացուս տեղապահ յայտ արարին, կ'ըսէ, հարցն կաթուղիկոս։ Որոց առաջին Յովսէփ՝ գլխաւոր ժողովոյն»։

Յովսեփայ հետ վերակացու և տեղապահ կարգեցաւ նաև

ՅՈՎՀԱՆ, որ սրբոց Ղևոնդեանց մանուքէն եաթը՝ Տիզրոն քաղաքին մէջ Քրիստոսի յուսոյն համար այլ և այլ չարչարանքներ քաշելով՝ խոստովանող կոչուեցաւ։ «Երկրորդն այլ աշակերտ, կ'ըսէ նոյն Կորիւն, Յովհան անուն, այր իսկ սուրբ, վարդապետասէր և ճշմարտապաշտամ. որ ըստ դէպ լինէր յետ վախճանի սրբոյն՝ բազում և ազգի ազգի փորձութեանց և կապանաւոր վշտաց մինամարտիկ երկպատական բանութեանն ի Տիզրոն քաղաքի՝ վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց»։

Ղեւոնդ երէց ի վանանդայ, որ իր երկնատուր ուժովը՝ պարսկական մոգութիւնը Հայաստանէն վռնտեց, և աս-

տուածադրելիկ խօսքերովը Վարդանայ բանակը քաջալերեց, փառաւոր մահուամբ մը՝ Քէ իրենց և Քէ հայրենեաց անմահ փրկութիւնը ստանալու։ Այս մեծ ու փըղ-կարար ծառայութենէն առաջ, այլ և այլ ուսումնասիրական սպասաւորութիւն ալ մատուցած է ազգին։ Ինքն էր գլխաւոր այն աշակերտաց՝ զորս Մեսրոպ մէկտեղ Մելիտինէ քաղաքը տարած էր, և Անա-տոլիս զօրավարին խնդրանօքը՝ քաղաքին Ա.կաց եպիսկոպոսին քով թողած էր։ Մեսրոպ Շաւղադոմ անապատին մէջ ա-ռաջին դասու աշակերտաց ուսումը բո-վանդակել տալէն ետքը, նոյն տեղւոյն վրակեցու կարգեց զՂեւոնդ. որ լսելով Քէ իւր ընկերներէն ոմանք՝ի Բիւզանդիոն գտնուելով՝ հոն Թարգմանութեանց և հնդ-լեն լեզուին ուսմանը կը պարապին, և վախնալով որ չըլլայ Քէ ինքն անոնցմէ վար մնայ, Կորեան հետ մէկտեղ՝ առանց իրենց վարդապետաց կամքը հարցընելու՝ ի Բիւզանդիոն գնաց և ուրիշներուն պէս մեծ պատիւ գտաւ քաղաքին Մարսիմինոս եպիսկոպոսէն։ Անկէց նիկիական և Եփե-սոսի տիեզերական ժողովոց կանոններով և Աստուածաշունչ գրոց ընտիր օրինակ-ներով՝ դարձաւ իւր վարդապետացը քով. «Ցետ ժամանակի՝ի մէջ անցանելոյ, կը-սէ Կորիւն, դէպ լինէր ոմանց եղբարց՝ի Հայաստան աշխարհէս դիմել՝ի կողմանս Յունաց, որ և Ղեւոնդէս առաջնոյն ա-

նուն էր, և երկրորդին Կորիւնս, և մա-
տուցեալ յարէին յեղնիկն, իբր առ ըն-
տանեզոյն աննդակից ի Կոստանդնեական
քաղաքին. և անդ միաբանութեամբ հա-
զեսր պիտոյից պնդիրն վճարէին։ Որոց
յետ այնորիկ հաստատուն օրինակօք աս-
տուածատուր զրոց և բազում չնորհա-
գիւտ հարց յետ այնր աւանդութեամբք,
և նիկիական և եփեսոսական կանոնօք
գային երևելով յաշխարհին Հայոց. և ա-
ռաջի գնէին հարցն՝ պրերեալ կտակա-
րանս եկեղեցւոյ սրբոյ»։

ԵԶՆԻԿ | որոնց վրայ մասնաւոր գըլ-
ԿՈՐԻՒՆ | խով պիտի խօսինք։

ՄՈՒՇԵ Տարոնեցի | Երբոր Մես-
ՏԻՐԱՑԻ Թորգնեացի | րոպ ուզեց
անձամբ ի սիւնիս հեթանոսաց երթալով
բարոզել ու սովրեցընել, հետն առաւ
նաև այս երկու անձինքը, զՄուշէ Տարո-
նեցի և զՏիրայր կամ Տէր Թորգնեացի,
որոնց համար պատմիչն կը վկայէ թէ էին
սուրբք և դուարթագոյնք. և թէ անոնց
հետ կային նաև շատ աշակերտներ, «զոր
չեմք բաւական ըստ անուանցն նշանակել»։
Փարպեցին ալ կը զրուցէ թէ սուրբն Սա-
հակ՝ Մեսրոպայ օգնական տուաւ «արս
բանիբունս և մտացիս ի քահանայից Հայ-
ոց, որք էին և նորա սակաւ մի մերձաւո-
րեալք ի յառնարէն հեզինեան, . . . որոց
անուն էր Տէր ի Թորգնոյ և Մուշէ ի Տա-
րանոյ. որոց օգնելով՝ զօրէր երանելին
Մաշթոց»։

ՅՈՎՍԷՓ Պաղնացի | Ա յս երկու ան-
ՅՈՎՀԱՆ Եկեղեցացի | ձինքը՝ Թարգ-
մանչաց մէջ գլխաւորներէն կը սեպուին
արժանապէս, և սրբոյն Մեսրովպայ հը-
զօր աջակից եղած՝ ի հրահանգել զաշա-
կերտս, և՝ ի թարգմանութիւնս գրոց սրբ-
բոց։ Կորիւն, Խորենացին և Ղազար՝ միա-
ձայն են այս վկայութիւնը տալու անոնց
համար։ Կորիւն կ'աւանդէ թէ Մեսրոպ
աստուածային օգնութեամբ՝ հայերէն տա-
ռից պակասութիւնը գտնելէն ետքը, հոն
մէկէն՝ ի Սամոս, «ի թարգմանութիւնս
դասնային հանդերձ արամբք՝ երկու աշա-
կերտօք իւրովք, որոց առաջնոյն Ցովհան
անուն կոչէին Եկեղեցաց դաւառէն, և
երկրորդին Ցովսէփ անուն՝ ի Պաղանական
տանէն. և եղեալ սկիզբն յառակացն Սո-
զոմենի»։ Նոյնը կը գրուի նաև Խորենա-
ցին. «Իսկոյն՝ ի թարգմանութիւն ձեռն
արկեալ, խորհրդաբար սկսանելով յա-
ռակաց, բովանդակ դպրանևևերկու յայտ-
նիսս, և զնոր կտակս յեզուս՝ ի հայ բան.
նաև աշակերտք նորա՝ Ցովհան Եկեղեցայ-
ին և Ցովսէփ պաղնացի»։

Վերջը երբ Մեսրոպ Գուգարաց աշ-
խարհէն դարձաւ, Եզնիկայ հետ մէկտեղ
Միջագետաց Եդեսիա քաղաքը գրկից ըզ-
Ցովսէփ պաղնացի, «պի որ միանդամ
զայի անդ զիրք ասացեալ հարցն առաջ-
նոց, թարգմանեալ՝ ի մեր լեզուս՝ բերցեն
փութով». որպէս պի ետքը նոյն վախճանաւ

նաև ՚ի Բիւզանդիոն գրկէ զանոնք : Որք եդեսիա երթալնէն ետքը՝ քանի մը առաքրոյցներէ լսելով թէ սուրբն Սահակ և Մեսրոպ կը պատրաստուին ուրիշները գրկել ՚ի Բիւզանդիոն, առանց հրամանի հոն գնացին. և « նախանձաւորս բարեաց եղեալ ուսմանց, և քաջ վարժեալ հելլէն դպրութեամբ՝ ձեռնարկեցին ՚ի թարգմանել և ՚ի գրել » : Սոյն դէպքը՝ հետեւեալ խօսքերով կ'աւանդէ Կորիւն. « Դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն յաղարկել ՚ի կողմանս Ասորւոց, ՚ի քաղաքն Եդեսացւոց. զՅովսէփ՝ զոր ՚ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէ ՚ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս, հայերէն գրեալս դարձուցանեն : Իսկ թարգմանչացն հասեալ ուր առաքեցանն, և կատարեալ զհրամանն, և առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնացին ՚ի կողմանս Ցունաց. ուր և ուսեալք և տեղեկացեալք՝ թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին » : Անկէց Հայաստան դառնալնէն ետքը՝ Տարոնոյ Աշտիշատ քաղաքին մէջ գտան իրենց վարդապետներն, ու Եփեսոսի ժողովոյն Պղպոյն ու կանոնաց հետ մէկտեղ՝ աստուածաշունչ գրոց ստոյգ օրինակ մըն ալ մատուցին անոնց. « Ջոր առեալ մեծին Սահակայ և Մեսրովբայ, դարձեալ թարգմանեցին զմիանգամ՝ թարգ-

մանեալն, փութանակի հանդերձ նոքօք վերստին յօրինել նորոգմամբ»:

ԵՆՈՎՔ | Երբոր Մեսրոպ՝ Աղուանից
ԴԱՆԱՆ | լեզուին գրերը գտանելով՝ ապ-
տի դառնար ի Հայաստան, հան անոնց վը-
րայ վերակացու թողուց իւր աշակերտնե-
րէն երկու հոգի՝ զԵնովք և զԴանան, որոնց
համար վկայէ կորիւն. «արք կրօնաւորք և
յառաջադէմք յաւետարանական սպասա-
ւորութեան»:

ԵՐԵՄԻԱ. *սրբոյն Սահակայ սարկաւա-*
գապետը. զոր կ'անուանէ կորիւն այր սուրբ
և բարեպաշտօն, որ և թաղեց իր սուրբ
հայրապետը ի Ցարոն գաւառը:

ԹԱԴԻԿ. *սրբոյն Մեսրովպայ աշակեր-*
տը. որ երջանիկ մահը մօտեցած տեսնելով,
իր աշակերտացը մէջէն գլխաւոր դաս մը
կը կազմէր. և այն ժողոված աշակերտնե-
րուն մէջէն երիցագոյններէն մէկն էր
Թադիկ «այր զգաստ՝ և զգուշագոյն հրամա-
նաց վարդապետութեան». որ վարդապե-
տին մահուընէն ետքն ալ՝ անոր տեղապա-
հութեանը պաշտօնը ըրաւ: Իրեն ընկերա-
կից էր նաև Յովհէփ անունով մէկը, որ
թերևս զատ չէ ի համանուն եպիսկոպո-
սէն՝ զոր վերը յիշեցինք:

ԳՆԻԹ՝ *Գերջանայ եպիսկոպոսը, որ ի*
Շաղագոմն իրենց ուսումը կատարող գլխ-
աւոր աշակերտաց մէկն էր:

ԱՐՁԱՆ *արծրունի, որ անշուշտ զատ է*
համանուն Արձան կամ Աղան արծրու-

նիէն, զոր անանուն պատմիչ մը՝ կրտսեր բազոյն Թարգմանչաց կարգէն կը սեպէ։ Այս հատակաւ երիցագոյն և ուսմամբ հմուտագոյն Աբրահամը՝ առաջին աշակերտաց մէկն է, որ Յովհաննու Եկեղեցացւոյն հետ Թարգմանութեան պատճառաւ գնաց ի Կեսարիա, որոնց համար կ'ըսէ Խորենացին. «Կանխագոյն առաքեալ էր (զնոսա) մեծին Սահակայ և Մեսրովպայ, որոց յուշադիր ուղևորեալ և ծուլաբար դեգերեալք՝ պարապեցան ի Կեսարիա»։

Անոնցմէ զատ առաջին աշակերտաց կարգէն կը սեպուի Ղազարիկ կամ Ղազրիկ անունով մէկը, որ այլ է ի Փարպեցւոյն։

Երկրորդ աշակերտք

Երկրորդ կարգի աշակերտաք, որոնց վրայ՝ մեր գրոց մէջ բաւական պատմական ծանօթութիւն և անուանի երկասիրութիւն ներ գտնելնուս համար՝ մանաւանդ պիտի խօսինք, ասոնք են.

Մովսէս Խորենացի.
Մամբրէ Վերծանող.
Դաւիթ Անյաղթ.
Գիւտ կաթուղիկոս.
Յովհան Մանդակունի.
Եղիշէ.
Ղազար Փարպեցի.

Եղբաս Աղեքսացի, զոր ոմանք ի պատմչաց Խորենացւոյ աշակերտ կը սեպեն, և որուն համար կ'ըսեն թէ «բազմացոյց զդպրս ճարտասանաց»։

Աստղիկ զատ կը յիշատակուին անորոշ ժամանակաւ, և առանց որ դասուն վերաբերելնուն,

Սահակ.
Յովհաննէս.
Աբրահամ կամ Արէլ.
Անանիա.
Յովնաթան.
Խաչիկ կամ Խաչատուր.
Անգրէաս.
Թաթուլ.
Վարոս։

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ

Սրբոյն Սահակայ ու Մեսրոպայ երկայագոյն աշակերտներէն էր Եզնիկ կողբացի, հմուտ՝ հայ, յոյն, պարսիկ և ասորի լեզուաց։ Անոր համար՝ ինչպէս նախընթաց դէմոյն մէջ տեսանք, հայկական գրոց դիւտէն ետքը՝ իր Յովսէփ աշակերտակցին հետ Ասորւոց Եդեսիա քաղաքը գրկուեցաւ ի սրբոյն Սահակայ, որպէս զի ասորի

լեզուով գտնուած գրքերը՝ հայերէն տա-
ռերով գրեն կամ փոխագրեն. անկէ ետքը
դիրենք Բիւզանդիոն զրկելու միտք ունէր
նոյն վախճանաւ. իրենք իրենցմէ գնացին
հան և սկսան թարգմանելու և գրելու և-
տեւէ ըլլալ. և իրենց ուրիշ աշակերտա-
կիցներուն պէս մեծ պատիւ գտան Բիւ-
զանդիոնի Մաքսիմինոս հայրապետէն։

Իւր ուսմունքը Բիւզանդիոնի մէջ գո-
վութեամբ կատարելէն ետքը՝ Հայաստան
դարձաւ Եղնիկ, միւս ընկերակցաց հետ
մէկտեղ, և Տարոնի Աշտիշատ քաղաքը
գալով, հոն գտաւ իւր վարդապետներն,
ու Եփեսոսի ժողովոյն կանոններն, ու
առաուաձաշունչ գրոց «ատոյգ և հաստա-
տուն» օրինակներն անոնց յանձնեց. և
տուրքն Սահակ Եղնկայ մասնաւոր գոր-
ծակցութեամբը՝ միանգամ թարգմանուա-
ծը նորէն կրկին թարգմանեց ի յունէ։

Եպիսկոպոսական աստիճանի ալ հասած
է Եղնիկ, և Բագրեւանդայ վիճակին հո-
վիւ կարգուած. ուստի և Յովսէփ կաթո-
ղիկոսին յԱշտիշատ գումարած ժողով-
քին մէջ ալ ներկայ գտնուեցաւ, ինչպէս
կը վկայեն Եղիշէ և Փարպեցին։

Այլ և այլ թարգմանութիւններէն զատ՝
որ կամ պատմագրաց ատոյգ վկայութեամ-
բը և կամ կարծեօք Եղնկայ կ'ընծայ-
ուին, ինքնագիր գեղեցիկ երկասիրու-
թիւն մըն ալ թողուցած է, որ թէ հեղի-
նակին և թէ իւր ժամանակին մեծ պատիւ

կ'ընէ. և այս է Լոյծ ազանդոց դիրքը։ Պարսկաստան սկսած էր այն առեններըը իր վրնասակար ազդեցութիւնը Հայաստանի վրայ տարածել. արքայից արքայք՝ իրենց կրօնական պարտք մը սեպած էին՝ անթագաւոր և իրենց հպատակ եղող Հայոց ազգը՝ Պարսից կրօնից աշակերտել. նախապարագ մէջն ալ կը գտնուէին ոմանք՝ որ երկրաւոր թագի մը ընծայած փառքը՝ աներևոյթ յոյսէ մը վեր դնելու սկսած էին։ Մէկալ կողմանէ ալ Յունական ուսումը սկսած էր մեր ազգին մէջ տարածուիլ. և այն պատճառաւ՝ ոչ միայն վարդապետական գրուածներ, այլ նաև հին գաղտական մատենագրութիւնք կը սկսէին ծանօթանալ Հայաստանի. և եպիսկոպոսաց և առաջնորդաց սիրտը իրաւացի վախ մը կը ձգէին՝ որ չըլլայ թէ ուսմանց հետ անանկ կարծիքներ ալ սպրդին՝ ի Հայաստան՝ որ կրօնից վնասակար ըլլան։ Այսոցմէ զատ՝ նաև քրիստոնական կրօնից ծոցէն ելեւցած Մարկիոն մըն ալ սկսեր էր իւր աղանդը տարածել. և այնպիսի համաճարակ կերպով մը, որ վախ կար տար Հայաստանի մէջ ալ մուտ գտնելու։

Այս ամէն վնասուց առջևն առնելու համար՝ շարադրեց Եղնիկ իւր Լոյծ ազանդոց դիրքը, շորս մասն բաժնուած. և առանձին կերպով մը խօսելով Հեթանոսաց, Պարսից, Յունաց խնամոնքը և Մարկիոնի աղանդն այն դէմ։ Հին խնամոնց դէմ

խմաստասէր լեզու, գրիչ և հանճար գործածելով. և անոնցմէ ամենէն աւելի զօրաւոր դէնքով մը, հաւատոյ ճշմարտութեամբ՝ անոնց մոլորամիտ դրութիւնները նզդանելով։

Իր խմաստասիրական հմտութիւնը ցուցընելու համար՝ իրեքի բաժնենք զ'ի Բնականս, յԱստուածականս և ի բուն խմաստասիրականս։ Բնական մակացութեանց մէջ՝ թերևս մեր նախնեաց մէջ մէկը չկայ որ եղնըկայ դիտութիւնն և հմտութիւնը ունենայ։ Մեր այս խօսքին վկայ կրնան ըլլալ իրեն ստոյգ վարդապետութիւնքը թէ տարերաց և թէ բնութեան երևութից վրայ, և թէ տարբեր կերպով մտածողնեբուն կարծիքը հերքելուն մէջ։ Բաւական սեպենք՝ չտեսնել մէկ քանի բան մէջ բիբել։ Թէ որ իրմէն ուզենանք պատճառը հասկընալ թէ ինչու արևուն ծագելուն և մտնելուն ժամանակ կը կարմրանան երկինք, պատասխան կու տայ մեզի. վասն զի, կ'ըսէ, արևուն ծագելուն առեն՝ օդը ջրոց խոնաւութիւնը առնելով՝ արևուն ճառագայթները վրան կը ձգէ. և որովհետև դեռ օդը թանձրացած ու ամպացած չէ, քիչ մը արևուն նշոյլքը արգիլելով՝ արևը կը կարմրացընէ ու չիմքընցընէ։ — Հարցընենք թէ առաւօտն ցօղը ինչ բանէ առաջ կու գայ. կը պատասխանէ. վասն զի, կ'ըսէ, օդը որ ինչուան առաւօտ կ'ուռի (կը ծանրանայ) ջրոյն խոնաւութե-

նէն, արեւուն ճառագայթից ջերմութիւնը վրայ հասնելով՝ թացութիւնը կը չքեցնէ. ուստի չէ թէ միայն այն տեղը՝ հապա ամէն տեղ արեւուն ծագելուն ժամանակ ցօղ կ'իջնայ։ — Լուանին չորս կողմը հրեւցած բաիին պատճառն ալ կու տայ. լուսինը, կ'ըսէ, օդին խոնաւութիւնն ինքզինքով՝ կ'ուզէ խոնաւութիւնը իր վրայէն վարատել. ուստի խոնաւութիւնը մօտենալով ու իրեն չհասնելով՝ չորս կողմը կը կենայ. որով յայտնի կ'ըլլայ անձրեւին նշանը։ Ցօղնը կ'ներկնայ, կ'ըսէ, նաև ձրագին վրայ. և այլն։

Եզնիկայ Աստղական համութեանցը վրայ չխօսած՝ պէտք է յիշեցընենք ընթերցողաց, թէ որովհետև դիտութեանց յառաջադիմութիւնը դարուց հոլովման ու չրջանին արդիւնք է, կը հանդիպի երբեմն որ ուղիղ կարծուած դրութիւնք սխալ կերպարանք կ'առնուն, և երբեմն սխալ երեւցածներուն ուղղութիւնը կ'ներկնայ։ Ուստի հին մատենագրաց դիտութիւնը քննելու առեն՝ մեր ժամանակաց դիտութիւնը պէտք չէ անոնց վրայ փնտռել, այլ մտքով երթալ անոնց դարը, ու այն առեն դիտութեանց չափովը դիրենք քննել։ Այս նկատմամբ այլ և այլ սխալ կարծիքներ ունի Եզնիկ, որ առնլի իր ժամանակին սխալները կրնան անպատիւ։ Որինակ իմն, առաջիկ կերպով կը հերքէ այն կարծիքը՝ որ դարեր անցնելէն առքը հաս-

տատուքիւն գտաւ, թէ երկիրս արեւուն վրայ իր ընթացքը կ'ընէ. այլ նոյն չրջանը արեւուն կու տայ, և իր կարծեաց հաստատուքիւն մէջ կը բերէ սուրբ գրոց այլ և այլ խօսքերը և դէպքերը, ինչպէս թե՝ սուայ՝ արեւը իր չրջանէն կեցընելը, եղեկիայի ժամանակ՝ Աքաղու արեւագէտ ժամացուցին ստուերին ետ դառնալը, և այլն։ — Երկրիս գրեթէ ու չարժմանը վրայ՝ Յոշուայ հին խմաստուքը կատարեալ տեղեկութիւն ունէին. անոնց կարծեացը հմուտ էր Եղնիկ, բայց ժամանակին նախապատշարմունքը անկարելի կ'ընէր թոյլ տալ իրեն՝ անոնց խօսիլը հաւանելու, և նոր բաական պարագայ մը կը սեպէր ամէն չանքը զէմ կենալ այն կարծեաց որ հնութեանցն պիտուքեանցն արգասիք կը սեպուէին։

Աստեղագիտաց կամ հմայից վրայ խօսելու առենը՝ մեծ ճարտարուքեամբ և հանճարով կը հերքէ անոնց բաջազանքը. ոչ միայն Պարսից օրինաց հետեւողը ըմբռնելով, այլ նաև ինչուան յետին դարուց ճակատագրականքը։

Ինքնանցականին մէջ ուրիշ ամէն մասերէն աւելի յայտնի և որոշ կ'երեւնայ Եղնիկայ հմուտքիւնը։ Կարդացողն կը տեսնէ թէ ինչ զօրաւոր ապացոյցներ ու հաւաստիք մէջ կը բերէ Աստուծոյ գոյութեան ու անոր տնորոշելութեան. չէ թէ միայն աստուածաբանական ցուցակու-

թեամբք հաւատարմացընելով իր խօսքե-
րը, այլ նաև բնական ու անհակառակելի
փաստեր մէջ բերելով, և երբեմն ալ նոյն
իսկ հերձանոտաց առաւելներովը՝ անոնց
կրօնքին սուտքիւնը, ու ասոնց ծածուկ
հաւատոց ճշմարտութիւնը հաչակելով։
Նոյնպէս երբոր Յունաց խմաստնոց և ա-
նոնց կարծեացը վրայ կը խօսի, կարդէ
դուրս հմտութիւն մը կը ցուցընէ անոնց
տեսակ տեսակ վարդապետութեանցը։
Համառօտ կերպով մը անոնց ուղիղ կամ
թիւր տեսութիւնքը կը դանազանէ, ու զօ-
րաւոր լեզուով մը անոնց պատասխանը
կու տայ։

Մատենագրական հմտութեանց նկատ-
մամբ՝ առաջինն է եղնկայ լեզուին գեղց-
կութիւնը։ Երեք աղգ գեղց կը նկատենք
եղնկայ գրոցը մէջ. նախ բառից ճշդիւտ
նշանակութեամբ. երկրորդ՝ դուրցուածքի
գեղեցիկ կերպովը, և երրորդ՝ ընտիր գա-
ւառաբանութեամբ։

Հնախօս գիտութեանց մէջ՝ յաղդային
մատենագիրս նշանաւորներէն մէկը կրնայ
սեպուիլ եղնիկ։ Հաւատար գիտութիւն կը
ցուցընէ թէ հայրենի և թէ օտար հնու-
թեանց։ Աղբիւրներուն կարգէն կրնան սե-
պուիլ՝ արուեստից սկզբանը, ցլու արեա-
նը, թևրիակէին, մանրագործին, հազարին,
և այլն, վրայ տուած տեղեկութիւններն։
Նոյնպէս Ալբալէդին, վիշապազանց, Ար-
տաւազդայ, ծովային նշանագաց վրայ խօ-

սելու, և մարմնոյ բնական ազգեցութեանց վրայ ազգային գուշակութիւններն մէջ բերելուն առեն։ Իսկ օտար ազգաց հնախօսութեանը մէջ ունեցած դիտութիւնը յայտնապէս կը ցուցընէ Եղնիկ՝ երբոր Պարսից առասպելացը, անոնց կրօնական արարողութեանցը, զանգիկ և մոգութեան կրօնից, նախնի Յունաց, Հերակլեան արձանաց և անոնց վրայ եղած գրուածոցը, Հեսիոտեայ, Հոմերոսի և Պղատոնի վրայ կը խօսի։

Եղերկայ խրատք. — Այս անուամբ ընտիր խրատներ կան, հեղինակին արժանի լեզուով ու սրտով գրուած. բայց որովհետև անոնք Նեղոսի սուրբ հօրն սկզբնական երկասիրութիւնը են, ուստի հաւանական թարգմանիչ է Եղնիկ այն խրատուց, և անոնց մէկ մասը իրեն ընծայուած։

Քանի մը անհարազատ երկասիրութիւններ ալ կան ճառընտիր գրոց մէջ Եղնկայ անուամբը, համառօտ և իրեն դիտութեանը և հանճարոյն ոչ այնչափ արժանաւոր, որոնց համար պիտի ըլլայ անչուշտ յետին պատմագրաց մէկուն, Կիրակոսի, ըսելը Եղնկայ համար, թէ «խօսս յոլովս եթող յօդուտ լսողաց»։

Եղնկայ Եղծ աղանդոցն նախ տպագրեցաւ ի կոստանդնուպոլիս յամին 1763. Երկրորդ և երրորդ անգամ ի Վենետիկ ի Մխիթարեանց (1827, 1863) ընտիր մատենագրաց կարգին մէջ։ Գաղղիարէն ալ թարգմանուած է այս գործը ի Լվովեան Ցերբիվալայ Հայկբէնի վարժապե-

տէ, և տպագրած ի Բաթիզ յամի 1853. քան մասին Թարգմանեալ է և անգլիարէն և հրատարակեալ քանասիրականն օրագրի մը մէջ։ — Խրոխենէն այլ տպագրուած են ի վենետիկ։

ԿՈՐԻՆ

Առաջին Թարգմանչաց գասէն էր նաև Կորիւն, որ էդնըկայ ու Յովսեփայ Պատրիարգաց Բիւզանդիոն եղած ատեն՝ Գևոնդեան հետ հոն ղրկուեցաւ Թարգմանութեանց պարապելու, ու ետքը Ընձակայ հետ Երուսաղէմ գնաց, ուսկից սրբոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ աշխատասիրած Ապաշխարող սրճըկելու կարգը բերաւ։

Սրբոյն Մեսրովպայ ձեռքով վրաց աշխարհը՝ գրով, դիտութեամբ և հաւատքով լուսաւորուելէն ետքը, Սահակ Հայրապետ գԿորիւն վրաց եպիսկոպոս ձեռնադրեց, և անոնց այն պատահման մէջ իր կեանքը կնքեց. որովհետև ատկէ ղկութիւն մը չեն ընծայեր մեզի ժամանակակիցք իր վարուցը և գրագմանց վրայ։

Զանազան թարգմանութիւններէն զատ՝ իր վարդապետին, սրբոյն Մեսրովպայ պատմութիւնը շարադրած է Կորիւն։ Այս աշխատասիրութեան՝ որ իր ժամանակին

դրաւորական պատմութեանը վրայ մեծ լոյս կը ծաւալէ, զինքն յորդորած են սուրբն Յովսէփ կաթուղիկոս և իւր ուրիշ աշակերտակիցներն. որոնք այլ և այլ աշխարհքներ իրենց ուսումը կատարելէն ետքը դարձան ի Հայաստան ու տեսան որ արդէն վախճանած էին իրենց և ընդհանուր հայրենեաց բարեբար վարդապետներն, ու զԿորիւն ազաչեցին՝ որ անչուչ անոնց կենաց վերջի տարիներն ի Հայաստան կը գտնուէր, սրբոյն Մեսրովպայ վարքը գրելու։

Կորիւն ալ յանձն առաւ ու չարադրեց, «ոչ եթէ, ինչպէս կ'ըսէ, ի հին համբաւոյ տեղեկացեալ, այլ որոյ մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն, և առընթերակաց հոգևոր գործոցն, և լսող չբնորհապատում վարդապետութեանն, և նոցին արբանեակք՝ըստ աւետարանական հրամանացն»։

Սրբոյն Մեսրովպայ ամբողջ կենսագրութիւնը չիկրնար սեպուիլ այս գրուածքը. վասն զի Մեսրովպ կրկին վիճակ կենաց ունեցած է. մէկը ի գրան արթունեացն Հայոց՝ պատուեալ իշխանական պաշտամամբ, մէյմ'ալ առ Ահակեայ Հայրապետի։ Կորիւն իւր վարդապետին կենացը առաջին մասին վրայ՝ ամենեին, կամ խիստ քիչ տեղեկութիւն կ'աւանդէ. և իւր այս դանդաղութեան պատճառը՝ ինքը մէջ կը բերէ. «Ոչ սուտասպասում, կ'ըսէ, ճար-

տարաձայն եղեալ, առ՝ի մերոց բանից ըզ-
հօրէն իմոյ կարգելոցաք, այլ զյաճախա-
զոյնն թողեալ, և՝ ի նշանադիմակացն քա-
ղելով զհամառուսան կարգելոցաք. որք ոչ
միայն մեզ՝ այլ և որք զատեանն ընթեռ-
նուն՝ յայտնի է։ Քանզի չէաք իսկ հան-
դուրժողք՝ զամենայն արարեալսն կոտա-
կաւ զիւրաքանչիւրսն, այլ՝ի դիւրագոյն
և՝ի հեշտագոյնս՝ յառաքելական անդր
զանձինս պատապարեցաք, որոց անցեալ
զրաղմանաւուն արգասեօք սրբոցն՝ առ՝ի
մանրակրկիտ առնելոյ զկարևորագոյնս
պատմելոյ զհանգամանս՝ ասացաք»։ Հեղի-
նակին այս մութ խօսքերը հետևեալ կեր-
պով կրնանք պարզել, թէ միայն սրբոյն
Աստուածայայ հոգևորական աշխատանացը
ու վարդապետութենանց վրայ խօսեցանք.
իսկ այն գործերուն վրայ՝ որ իւր աշխար-
հիկ կամ դիւնաւորական կենացը կը վերա-
բերին, և որոնք շատ են, լռեցինք. որով-
հետև այն գործերը չէ թէ միայն մեզի,
այլ նաև առեանը կարդացողաց յայտնի
են։

Իսկ սրբոյն կենացը երկրորդ մասին
վրայ՝ բաւական ընդարձակ ու յագեցու-
ցիչ կերպով կը խօսի Կորիւն, տեղն՝ի տե-
ղը և իրեն յատուկ ոճով մը պատմելով
այն մեծ մարդուն ձեռքովը Հայաստանի
մէջ եղած լուսաւորութեան արդիւնքը։

Իրեն յատուկ ոճով մը ըսինք, որովհե-
տև ընդհանրապէս ընտիր ու հայկական

լեզուի հետ՝ մութ ու խրթին դարձուած, ներ կը բանեցընէ, որոնցմով իր խօսքերը շատ տեղ անիմանալի կը մնան։ Այս թե. րութիւնը՝ թերևս գրչագրաց ալ թերու. րութիւն է, որոնք շատ տեղ, ինչպէս նաև ուրիշ զանազան գրուածներ, ասանկ ալ Կորեան այս երկասիրութիւնը՝ ուղած. նուն պէս համառօտեր են, առանց գիտ. նալու կամ ուզենալու մտադրութիւն ը. նել թէ պակասած կտորը՝ մնացածին հետ անմիջական վերաբերութիւն ունենալը. վը, այն պակասը մեծ վնաս կը բերէ մնա. ցածին։

Ասանկ Մեսրոպեայ ձեռքով եղած վը. րաց գալուստին պատմելէն ետքը կը յա. ւելու. «Եւ արդ զնոսա որ յայնչափ ի մատնատուր և ի բաժանեալ լեզուաց ժողո. վեցան, միով աստուածարբառ պատ. գամօքն մի ազգ կապեալ՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ յօրինէր. յորոց և իմ ա. նարժանիս եղեալ ի կարգ՝ եպիսկոպոսու. թեան վիճակ»։ Հոս խօսքին կարգը մէկ. զմէկ չբռնելով՝ պակասութիւն մը կ'ենթա. դրէ։ Այսպէս ուրիշ զանազան տեղուանք ալ զորս աւելորդ կը սեպենք մի առ մի նշանակել։

Ագաթանգեղոսի և Բիւզանդայ գրոց հետ շատ նմանութիւն ունի Կորեան այս գիրքը, մանաւանդ առջինին. ուսկից ամ. բողջ խօսքի հատուածներ մէջ կը բերէ։ Վասն որոյ ոմանք համարեցան թէ այն

զրոց Թարգմանիչն եղած ըլլայ Կորիւն, և այն է պատճառը այնչափ նմանութեան։ Բայց մենք որովհետև այն կարծիքն ունինք թէ Ագաթանգղոս և Բիւզանդ ըստ կըզրնագիր երկասիրութիւնք են, ուստի անոնց չատ ընթերցմանը արդիւնք կը սեպենք այն նմանութիւններն։

Այս հատուածներէն մէկ երկու զլխատորն մէջ բերենք։

« Եւ զի ըստ օրինակի գրեցելոցս առ 'ի մէնջ հարքն 'ի կափարումն գաթան, ոչ եթէ 'ի հին համբաւուց տեղեկացեալ և մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեզ իսկ ականատես եղեալ կերպարանացն, և առընթերակայ հոգեւոր գործոցն, և լսող շնորհապատում վարդապետութեանն »։ և այլն։

« Որոց անցեալ զբազմախուռն արգասեաց սրբոցն, առ 'ի մանրակրկիտ առնելոյ, զկարեւորագոյնն և զօգտակարագոյնն պատմել։ Ուստի և մեր առեալ հանգոյն ասացաք, ոչ 'ի պատիւ ընտրելոց Քրիստոսի, որք ամենապարծ և կենդանաւոր խաչին ծանուցեալք յարգեցան։ այլ յօրինակ քաջալերիչ հոգեւոր ծննդոց իւրեանց նոքա պատմելոց իցեն յաղգս ազգաց, ըստ բանի հոգեւորական երգչին՝ որպէս ասէ։ Չի զոր ինչ միանգամ պատուիրեաց Հարցն՝ ցուցանել զայս որգւոյն, զի ծանիցէ ազգ այլ։ որդիք որ ծնանիցին յարիցեն և պատմեցեն որգւոց իւրեանց, զի գիցեն առ Աստուած զոյս իւրեանց »։

Կորեան պատմութիւնն տպագրուած է 'ի Վենետիկ 'ի շաբս գրծոց նախնեաց. գրձեալ ուրիշ հին օրինակ 'ի կարգի Մովսէսից։

ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹ

Մովսեսի Խորենացւոյն քեռորդի էր Դաւիթ, Տարօնոյ մօտ Հարք գաւառին Հերիթ կամ Հերևան գիւղէն, և կամ ըստ այլոց՝ Ներգիւն աւանէն, ուստի և Ներգինացի կոչուած։

Սահակայ ու Մեսրովպայ ձեռքով ընտրուած վաթսուն փափկածայն, ուշիղ և երկարոգի աշակերտաց գասէն էր Դաւիթ, և կամ անոնց վերջիններէն մէկը. բայց իւր ուսմամբը անոնց հաւասարած, և մանաւանդ խնամատարութեամբը մէկերնէն ամենէն աւելի գերազանց երևցած. ուստի և իրեններէն, և անոնցմէ՝ ուր ուսմանցը ընթացքն կատարելագործելոց գովութեամբ, մերթ Ակոյպ կոչուած, իբրև թէ անհաւասար, և ամենէն վեր իւր գիտութեամբը, և մերթ ատուածատուր իւր բարեպաշտութեանը համար, և առհասարակ յամենեցուն խնամատուր կամ փիլիսոփայ կոչուած, և երբեմն նաև նամիծ փիլիսոփայ. որուն պատճառը կու տայ Շնորհալին հետևեալ խօսքերով. «Ընդմիմ սովորութիւն փիլիսոփայ ասել, որ յերաժըշտական արուեստի կատարեալք են. այսպէս և Դաւիթ՝ ոչ միայն փիլիսոփայ, այլ յաստուածեղէն և յարտաքին հրա-

Հանդս անթերի և լիապատար էր, նորին աղագաւ կոչի փիլիսոփայ, զպատիւն դիւրացանելով»։

Այնչափ մեծանուն Հանդիսացաւ Դաւիթ իւր իմաստասիրական ուսմամբքը, որ ինչուան Ցոյնք՝ այնպիսի պարծանք մը չունէին իրենցմէ օտարացընել, որովհետև Դաւիթ այլ և այլ երկասիրութիւն ունի յոյն լեզուով շարագրած, ուստի իրենցմէ մէկը ուզեցին սեպել զանիկայ։ Ազգային յիշատակարանք կ'աւանդեն (թէ և աւելի պարծենկոտութեամբ քան ստուգութեամբ) թէ Դաւիթ Կոստանդնուպոլիս գտնուած ժամանակը՝ այլ և այլ ընդդիմադրութիւն ունեցած է փիլիսոփայական. ոմանք կ'ըսեն նաև հաւատոյ խնդրոց վրայ, Մարկիանոս թագաւորին արբունեացն իմաստասիրաց հետ, որք իրենց գիտութեամբը նշանաւորք էին. այսինքն Ցոբնադայ, Մելիտոսի, Մամբրէի եպիսկոպոսի և անոնց նմանեցաց հետ. ու երբ իւր քեռւոյն Մովսէս խորենացւոյն հետ արբունական պալատը երթան, ամէնքը իրենց աչքը ասոնց վրայ դարձուցին. «վասն դի, կ'ըսէ պատմիչն, էին ձերացեալ, կերպարանքն և խօսքն աթենացիք. զի երևսուն տարի էին ՅԱԹԷնս». ու երբ Ցոբնադ անոնց իմաստութիւնը կ'արհամարհէր, Մովսէս իրացայն պարծանքով մը դինքն յանդիմանելով կը գրուցէր. «Ո՛վ Ցոբնադ, ճանաչէս զիս. Մովսէս եմ, և սա Դաւիթ բազում

դպրութեան ազգայ հմուտ և պարծանք Ա֊ինասիրաց, կենդանեայ և գերեզմանաց, և առաւել Հայոց աշխարհին »։

Մարկիանոս Թագաւորն հրամայեց որ իւր խնամառնոյը հետ խօսի Դաւիթ. « Եւ յարեաւ, կ'ըսէ պատմիչն, յաղթող և քաջ սպառազէնն Դաւիթ. եկաց յոտին առաջի բազմութեանն՝ որպէս զամենք լեան երկեալ »։ Ու երբ այնպիսի պատրաստութեան արժանի հանճարով ու լեզուով խօսեցաւ իւր բնդդիմադրին հետ, կարնթացոց Մամբրէ եպիսկոպոսը՝ խնամառնական ուսմամբքը ուղիղ դիրքը յաղթահարել. « Հպարտացեալ փիլիսոփայական արուեստիւ, յառաջ վազեաց ևի դիմի հաւատ քոյին Դաւթի և մեծ անյագիւն կոչեցեալ փիլիսոփայի, և ասէ. « Ձինչ անուն և զինչ մակածութիւն »։ Եւ այն բնդդիմամարտութեան մէջ ալ իրեն արժանաւոր պատասխաններն բնդունելով՝ լռեցին խնամառակներն, աւելի մեծ համարում առանալով անոր գիտութեանն վրայ։

Հայաստան գառնալէն ետքը՝ տեսնելով Դաւիթ իւր հայրենեաց խեղճութիւնը, և գիտութեանց անպատիւ մնալը, քաշուեցաւ, ապթիքը՝ արտասուաց, հանճարը՝ գրոց հետ խառնելու. և մեռնելով Թագուհեցւոյ Տարոնոյ մօտ Պ ազարաւ վանքը, ուր ինչուան հիմայ կը ցուցընեն իր գերեզմանը. և ուր գեռ ևս կը յաճախեն խնամա-

տութեան և ճարտարախօսութեան ձիրքը
խնդրելու և ընդունելու փափաքողը յու-
սով։

Ա. յաչափ է Դաւթի խնամատարին վա-
րուցը վրայ ունեցած տեղեկութիւննիս։
Քանի մը խօսք ալ իւր գրաւոր երկասի-
րութեանցը վրայ գրուցենք։ Ասոնք գլխա-
ւորաբար երկու դասակարգութիւն կըր-
նան բաժնուիլ. մէյմը ինքնագիր, մէյմըն
ալ թարգմանութիւնք։

Ա. ջիններուն մէջ ամենէն աւելի նշա-
նաւորն և մտագրութեան արժանին է,

Խափճ ներքոյդ. — Որուն մասնաւոր յա-
ռաջաբանութեանը մէջ՝ ուսանդուած է թէ
ինչ պատճառաւ երկասիրած է Դաւիթ
այս գրուածքը։ Հայոց Գիւտ կաթուղիկո-
սին իշխանութեան օրերը՝ Աչին գեղջէն
Կոստանդին, Պետրոս և Թէոդորոս անու-
նով երեք անձինք եկան, որ ժողովուրդը
խաբելու համար՝ ամէն արտաքին պատ-
րուակ ունէին. խաղողն կը հաղնէին, բո-
կաղնացք, պահոդք ու կեղծաւորք. որ
սուրբ Կուսին համար կը քարոզէին թէ
աստուածածին չէ, և Աստուծոյ մարդա-
յնելոյ խաչն ալ՝ փրկութեան փայտ չէին
սեպեր, այլ դողոյ պատժարան։

Գիւտ կաթուղիկոս երբոր լսեց թէ Դա-
ւիթ և իր ընկերներն Ա. քէնեքէն և ուրիշ
քաղաքներ ուսանելոյ համար ճանապար-
հորդելէն դարձեր են, նամակ մը գրեց ա-
նոնց, աղաչելով որ իւր խնամատուն գրիչը և

զօրաւոր լեզուն սուրբ խաչին գովութեան ու պաշտպանութեան գործածէ. որպէս զի «բարձցի, կ'ըսէր, հերձուածն, և խլեսցին յազարակաց փուչը, և որոմն սատանայական սերմանց, որ ի մարդ յուսան և ոչ յԱստուած»:

Դաւիթ պատասխան տուաւ կաթուղիկոսին, յօժարամիտ յանձն առնելով հրամանը, յորմէ թէպէտ իւր տկարութիւնն զինքը ետ կը նահանջէր, բայց միանգամայն հայրապետին աղօթքին վստահացած կը քաջալերուէր: Դաւթի առ Գիւտ գրած թղթին վերջը՝ այսպիսի ծանօթութիւն մը կ'աւելցընեն գրչագիրք. «Եղև այս ի ժամանակս մարզպանութեան և տոհմատիրութեան Վահանայ՝ որդւոյ Մամգնոսի, որդւոյ Վարդանայ, կամ որպէս ասեն՝ Եղբօր: Փորձողք և գիտողք սուտ ասեն զայլ պատճառան յԱթէնս կամ ի Բիւզանդիոն կամ յերուսաղէմ. կամ յորժամ ի Պարսից դարձաւ խաչն և խօսեցաւ»:

Այս ծանօթութեան մէկնութիւնը կու տայ Շնորհալին՝ Անյաղթին այս ճառին վրայ գրած բացատրութեանը մէջ: Կը պատմէն, կ'ըսէ, թէ սուրբն Սահակ և Մեսրովպ գոնանս իրենց աշակերտներէն՝ խմաստութիւն սովրելու համար, Յունաց աշխարհին կողմերն ու անոնց Աթէնք մայրաքաղաքը ղրկեցին. որոնք հեղինակութենին թարգմանիչ եղան. որովհետև նախ հարկաւոր էր որ անոնք խմաստասիրակա-

նաց Հմուտեան, բառերու և դարձուածներու, և ետքը համարձակին՝ի թարգմանութիւն։ Եւ ըսին ամենք թէ Ա.Թենացւոց մէջ սովորութիւն կար ետքը տարի աշակերտութիւն ընել. ու այն ետքը տարուան լրննալէն ետքը՝ բարձր տեղւոյ մը վրայ կ'ելլէր աշակերտը, ու ժամանակին և լսողաց պիտոյիցը յարմար բան մը կը խօսէր։ Դարձեալ՝ որ այն աշակերտաց մէկն էր, նոյն առաքեանին հասնելով, նշանին առջևը եղող աշտարակին կամ սեան վրայ ելաւ, և հոն գրուցից այս ճառը՝ յաւերժութիւն լսողաց և՝ի պատիւ խաչին։ Ուրիշներն ալ կ'ըսեն թէ Ա.Թենէքէն կոստանդնուպոլիս դարձած առենը՝ իր ընկերներն դինքը մեծարելին, ու վերացման խաչին օրը այս ներբողը զուրցրնել տուին։ Ամենք ալ թէ յերուսաղէմ սուրբ խաչին առջև, և այլք՝ թէ խաչը Պարսկաստանէն գառնալէն ետքը, և ամենք ալ թէ անապատաւ առաքինութեան մէջ յօրինուած է այս ճառը։ Բայց թէ Շնորհալին, և իրմէն աւելի Գիւտ կաթուղիկոսին ու Գաւթայ վարդապետին թղթերը ամէն տարակոյս կը վերցընեն, յայտնապէս ցուցընելով թէ ևրր և ինչ վախճանաւ յօրինուած է այս ճառը։

Ասմունգ գիրք կամ Ասմունք խնամատարութեան. — Հին Գունտաստանի մէջ ծագկող փիլիսոփաներէն մէկը, Պիհտոն, մանաւոր և անօրինակ ազանդ մը հնա-

բած էր, տվին բանի վրայ տարակուսիլ. և այն տարակոյսը և դեղեւնալ վարանքը իրեն առջեւը խմաստութիւն անպատած էր. որով և բազմաթիւ աշակերտներ ստացած, որք ժամանակ անցնելով՝ իրենց վարդապետին կարծեացը վրան ալ հաստատուն չկենալով, շատ աւելի անդին անցեր էին. և բոլոր մարդկութիւնն իրեն ամեն դիտութեամբը, ուսմամբը և կրօնքը՝ անէակ կը կարծէին, և ինչուան կենաց և մահուան մէջ խարութիւն չէին դներ. Այսպիսի սխալ և մոլորական գրութեան մը դէմ պիտեցաւ Դաւիթ իր այս գրուածքը, որ ինքն կամ գրչագիրը կը կոչեն «Ընդդէմ առարկութեանցն չորից Պիհանեն խմաստասիրութեան», և սահմանք և արամատութիւնք խմաստասիրութեան»:

Խմաստասիրական ուսմանց կարգէ դուրս փախաբով մը եւեւէ եղած էր Դաւիթ. և իրեն անանկ կ'երեւնար թէ «որք միանգամ խմաստասիրութեան տենչան բանից, և առ ի նմանէ հեշտութեանց ծայրիւ մատին միայն հանդիպին ճաշակելոյ, ամենայն կենցաղական հոգոց բարեաւ մեռեալ ասացեալք, ողջախոհ իմն մոլութեամբ առ այսոսիկ վարեալք բերին»: Այս փափաքին արժանաւոր դիտութիւն և լեզու բանեցուցած է Դաւիթ Սահմանաց գրքին մէջ: Հին յունական խմաստասիրութեան կատարեալ և ամբողջ տեղեկութիւն մը կը տեսնուի, ու խմաստասիրութիւնը՝ ի-

մասամասիրութեամբ կ'ապացուցանէ, մէջ բերելով խմաստակաց ամէն առարկութիւններն, և անոնց ամենուն պատասխանը տալով։ Ուստի և իրաւամբ կը գրուցէ Ստեփանոս Պիւզանդացի. «Արդ թէ գինչ է բնութիւնս մեր, յատկապէս ուսաք ի Դաւթայ եառաձէ. այն՝ որ ընդդէմ Ա-կայելմայցն և Պիւզհոնացեացն դիմակայէ քաջապէս, որք չանային եղծանել զդպրութիւն խմաստութեան»։

Հայերէն մատենագրութիւնը՝ ճիշդ իմաստասիրական բառերը գրուածք մը ինչուան այն ժամանակ արտադրած չէր. ուստի և ինքն Դաւիթ եղաւ առաջին՝ բուն իմաստասիրութեան պարապող, և անոր յատուկ լեզուն գործածող։ Ուստի ինչպէս ուսման, ասանկ ալ լեզուին, պէտք էր որ ինքն ըլլար հեղինակ։ Այս պարծանքը աւելի արժանապէս կրնայինք իրեն ընծայել՝ եթէ իմաստասիրական ուսմանը հաւասար՝ լեզուին կատարելութեանն ալ պարապելու եռանդ ըլլար, կամ թէ այնչափ յունականութեան եռանդ չըլլար, ուսմանը պէս՝ լեզուն ալ անոնցմէ փոխ առնելով։

Դաւթի այս գրուածքին յունարէնն ալ կը գտնուի, ուստի և ոմանք կարծեցին թէ Անյաղթ՝ իր մէկ քանի գրուածներն առաջ յունարէն լեզուով չարադրած է։ Յունաստանի մէջ գտնուած ասանք, անոնց կիրառութեանը կամ գիտութեան հա-

մար, ու նոքը զանոնք ի յունէ ի հայ թարգմաներ։ Ոմանք ալ համարեցան թէ Աահմանաց ամբողջ գիրքը՝ թարգմանութիւն ըլլայ և ոչ սկզբնագիր, որովհետև նոյն գրքին վերջին գլուխը՝ որ կը սկսի «Ամենայն չար տանջելի», Նիւսացւոյն Գրիգորի ընծայուած է՝ անոր անուամբը տպագրուած երկասիրութեանց հետ մէկտեղ։ Կարծիք ալ կայ թէ ուրիշ անձ մը թարգմաներ է Դաւթայ գործը ի հայերէն Չ դարուն մէջ։

Դաւթայ անուամբ գտուած ամենայն գործքն տպագրուած են ի Վենետիկ յամի 1833։

ԳԻԻՏ

Դաւթի Անյաղթին ժամանակակից էր Գիւտ, Տայոց գաւառին Աբահէզայ գիւղէն, կրասեր թարգմանչաց մէջ, ուսեալ և յիշատակարանի մը մէջ աշակերտ կոչուած սրբոյ քահանայից, այսինքն Վանդեանց, որոց ի Պարսկաստան նահատակուելէն տասը տարի նոքը՝ Հայոց կաթուղիկոսական աթոռը նստաւ։ Փարպեցին այս համառօտ խօսքերով՝ թէ անոր վարքը և թէ դիտութեան վկայութիւնը կուտայ. «Այր ի դիտութեամբ հայովև և ա-

աւելեալ յունիւն, յորդառատ բանիւ և առատաբուղխ վարդապետութեամբ, զոր ոչ երբէք արգելոյր անգիտութեանն վարդապետութիւն. այլ զծածուկս ատացեալ Հոգւոյն՝ նոյն սուրբ Հոգւոյն չնորհ յայտ արարեալ՝ նուաւ լուսաւորապէս ուսուցանէր բովանդակ ժողովրդոց. որոյ բանք իբր՝ նման յորդառատ անձրևի՝ զամենայն լսողի ծաղկեցուցեալ պտղաբերէր զոգիս։

Սակայն Պարսիկք այն առեններն իրենց բռնաւոր ազգեցութեամբն սկսեր էին ինչուան նախարարաց սիրտը հեռացընել ի սուրբ հաւատոց։ Ուստի սկսան ամենք ինչուան կրակատուններ ալ բանալ իրենց տակ եղած երկիրներուն մէջ. և անով քաղաքական պատիներու մէջ մեծնալով, ձեռնըտուն տակ եղած հպատակաց մոլորելու և դայթակղելու պատճառ ըլլալ։

Ասանկ առենի մը մէջ Հայրապետական աթոռոյն վրայ նստած Գիւտ կաթուղիկոսը՝ իր ամէն ջանքը կը բանեցընէր անաբառ պահելու հաւատոց գանձը՝ որուն աւանդապահն էր. ուր իրեն աշակերտակից՝ Եղիշէ, Խորենացի և այլք, գրեթէ յուսահատ ազգին բարելաւութենէն՝ անդադար ջանքերը քաշուելո առանձնացեր էին։

Երբ տեսաւ Գիւտ թէ իր ամէն ջանքովն ալ համաճարակ ազգէն առջևն առնելու բաւականութիւն չունի, սկսաւ խօսքովն ու գրով ուղղացողներն յանդիմանել, և իրենց հաւատոցը մէջ հաստատուն մնա-

ցողները պատուել։ Այս արդարադատ խորութեան վրայ դչարեցաւ Գադիշոյ Խորխոռունի, որ ուրացելոց մէջ ամենէն աւելի չարասէրն էր, և ամենէն աւելի իւր չանքն ու ազդեցութիւնը բանեցրնող՝ որ իրեն հետևող ընէ զաղգն։ Ու չկարենալով ուրիշ կերպով վրէժն առնուլ, Պարսկաստան գնաց, ու Պերոզ Թագաւորին առջև ամբաստանեց զԳիւտա։

Պերոզ՝ արքունի դուռը կանչեց զկաթուղիկոսն, որպէս զի իրմէն լսէ վրան եղած ամբաստանութեանց ջատագովութիւնը. բայց հոն՝ դինքն արհամարհող ու նախատող հերձանոսութիւնն անգամ իրմէ պատկառեցաւ, ինչպէս կը վկայէ Փարպեցին։

Թագաւորն իշխան մը զրկեց առ Գիւտա, և ամբաստանութեանց ստուգութիւնն անոր յանձնեց։ Գնդեցիկ առենախօսութեամբ մը Գիւտա արդարացուց ինքզինքն, և թէ ինչպէս իրեն համար նուիրական պարտք մըն է սիրել զքրիստոնէութիւն։ Եւ որովհետև ուրիշ ամբաստանութիւն մըն ալ գրած էին վրան, Հոռմոց հետ շատ վերաբերութիւն ունենալը, անոր ալ պատասխանը տուաւ համարձակ. « Իսկ որ ասէ թէ ունի հրեղէկ ի Հոռոմս, ոչ ըստ ամբաստանողին կարծեաց են իրդ, այլ վասն զի զգպրութիւն և զդիտութիւն և զամենայն իմաստս բանաւոր ուսմանց յաշխարհին Հոռոմոց ստացեալ եմք, և

են իմ անդ ծանօթք և բարեկամք բազումք և ուսումնակիցք »։ Աներկիւղ համարձակութեամբն Գիւտ զարմացուց զքահանն ալ, թագաւորն ալ, որ չկարենալով իւր չարութեան խորհուրդը անոր վրայ կատարել, զրկեց զինքը ի Հայրապետական պատուոյ։

Այն վիճակին մէջ վրայ հասաւ Գիւտայ մահը։

Գիւտայ երկասիրութիւնքը. — Իբրև թարգմանիչ՝ անչուշտ գլխաւոր մաս մը ունեցած պիտի ըլլայ Գիւտ իւր աշակերտացցոյը մէջ. որովհետև մեծ է իւր գիտութեան և խնամատարութեան գովութիւնը։ Բայց իբրև ինքնագիր մատենագրութիւնք՝ քիչ բան հասած է մեր ձեռքը. յորս գլխաւոր կրնայ սեպուիլ թուղթ մը առ Դաւիթ Անյաղթ, խաչին ճառը իրմէն խընդրելով, որուն վրայ առաջ խօսեցանք։

Կաղանկատուացին կը յիշատակէ Գիւտայ անուամբ թուղթ մը առ վաչէ արքայ Աղուանից, որ իւր թագն ու մոգութեան կրօնքը, միանգամայն նուիրելով աւետարանին ճշմարտութեանը, միանձնական կենօք փափաքած էր երկնաւոր թագաւորութիւն մը փնտռել. այսպիսի ընթացքի մը հարկաւոր և էական խրատները կը բովանդակէ Գիւտ թղթին մէջ։

Կ'երևնայ թէ ժամագրոյ և հասարակաց աղօթից կարգաւորութեանն ալ ձեռնտու եղած է Գիւտ, որովհետև նոյն գրքին

խորագրոցը վէջ իւր անունն ալ կը կարդանը, թէպէտ և առանց մասնաւոր ազդեցք մը իրեն յատկացընելու։

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Արշարունեաց Գաղանոտ գեղէն էր Յովհան Մանդակունի, սրբոյն Ահակայ ու Մեսրովպայ աշակերտաց կարգէն. ու եօթանասուն և հինգ տարուան հասակին՝ կաթուղիկոսական աթոռը նստաւ վ. Յհան Մամիկոնեանին յորդորանօքը։

Դժուարին դրից վէջ էր իր առնը Հայաստան։ Վ. Յհան Մամիկոնեան՝ իր կորուկ ու յաղթող սրոյն՝ ու Աստուծոյ անուանը վրայ երդուընցեր էր՝ խաղաղութիւն պարգևել Հայաստանի։ Բայց իր այս ջանիցը ոխերիմ թշնամի էին Պարսիկք, ու անոնց ընկեր եղած 'ի Հայոց ուրացելոց խումբ մը։ Միաբանելոց հաւատոն ու քաջութիւնը ամրացընող ու խրախուսող էր Մանդակունի՝ իրեն հայրենասէր սրտովն, ու հայրապետական բարձր աստիճանով։ Ինքը գանոնք՝ պատերազմին դաշտը չմտած, մտհոգուան արհաւիրքը չտեսած, սուրբ եկեղեցի կը մտցընէր, կ'օրհնէր անոնց զէնքերը, ու հայրենեաց փրկութեանը գօրաւոր

ախոյեաններ՝ վահանայ ձեռքը կը յանձ-
նէր։ Պատերազմաց մէջ ալ անոնց յաջո-
ղութեամբը կ'ուրախանար, դինուց ձա-
խողելուն առեն՝ ապօթքովը այն քաջե-
րուն օգնութիւն կը խնդրէր, որոնց յաղ-
թանակը՝ հաւատոց յաղթանակ պիտի ըլ-
լար։

Այս վախճանին հասնելու համար՝ ծե-
րութիւնն իրեն փոքր արգելք մը կ'երև-
նար, ինչուան պատերազմաց բանակներ-
ուն մէջ իր խրախուսիչ ձայնը բարձրա-
ցընելով, ու մարտից խառնուրդին մէջ
Պարսիկներէն մահառիթ վէրք մը ընդու-
նելով, մեռելոց դիակաց մէջ՝ իբրև մե-
ռեալ կ'ինար, ու Աստուծոյ մասնաւոր
հրաշքովը՝ կրկին կենդանութեամբ հայրե-
նեաց կը պարգևէր։

Բայց վերջապէս իր վախճանին հասաւ
Մանդակունին։ Վահան որ իր սրոյն և քա-
ջութեան վախովը զՊարսս սասանեցուցեր
էր, անոնց սիրելի կ'ըլլար՝ իր « խմաս-
տից յառաջատեսութեամբն, արդարախո-
հութեամբն, աշխարհագիտութեամբն ու
քաջութեամբ », ու՝ի Պարսկաստան կան-
չուելով՝ Հայոց աշխարհքին մարդպանու-
թեան իշխանութեամբը կը փառաւորուէր,
և արքունական հրովարտակով՝ կրկին իր
հայրենիքը կը դառնար։

Այն հրամանագիրն առնելով՝ մէկէն
Դուին քաղաքը հասաւ Վահան, ու սուրբ
կաթուղիկոսին դիմաց յանկղեցին։ Ուրա-

խալի լրոյն Համբաւը բոլոր քաղաքին մէջ կը տարածուէր. նախարարք և ազատք, իշխանք և ռամիկք, արք և կանայք, ծերք և տղայք, ամենքն Հոն կը վազէին, ա-նանկ որ ընդարձակ սրբավայրը՝ այդ բազմութիւնը չէր կրնար տանիլ. ու չորս կողմի փողոցներն ու հրապարակներն՝ բազմութեամբ կը լեցուէին: « Եղև օրն այն, կ'ըսէ ականատես պատմիչը, անյագ խընդութիւն և անսպառ ուրախութիւն առաւածասէր բարեսիրացն, և ողջախոհուրդ մտաց լաւահայեցից. և սուգ թախանձալից և տրտմութիւն անմխիթար՝ խօթամտացն »:

Ա.յն սրտաշարժ տեսարանին՝ չէր կրնար Մանդակունին իր ուրախութեան արցունքը բռնել. կ'ելլէր սուրբ բեմին վրայ, ու խաղաղութեան ողջոյնը՝ իբրև առհաւատչեայ աստուածաշնորհ խաղաղութեան իւր ժողովրդեանը տալով, ու այն զարմանալի փոփոխութեան վրայ՝ չկարենալով իր հիացումը բռնել, « Ցնկնդեցիս, կ'ըսէր, օրհնեցէք զԱստուած, և զաէր յաղթեցան Իսրայէլի: Ահա սիրեցէք զնկնդեցիս, և սիրեցայք յնկնդեցւոյ. զթագաւորս քաղցրացոյց նկնդեցի, զգազանս ընդելացոյց, զգայլս՝ գառինս արար, զնձիզ պայծառացոյց, զթշնամիս ճշմարտութեան ամաչեցոյց »: Եւ նոքը՝ հայրենեաց բարօրութեան համար հանապազատարած ձեռուընին երկինք վերցընելով, « Օրհ-

նեալ տէր աստուած Իսրայէլի, կ'ըսէր, որ ետ ինձ տեսանել զորդիս եկեղեցւոյս՝ որ ինձ հաւատացաւ, պատուով՝ չբնզուելեամբ պայծառացեալ ի Քրիստոսէ»։ Ու օրուանը գեղեցիկ հանդիսին և տեսարանին արժանի լեզուով մը, կորովով ու խմաստիւք լի ճառ մը կը խօսէր. անանկ որ իր աստուածազգեցիկ սիրելի լեզուին լսելէն ու անոյշ ձայնին գաղտնելէն ետքն ալ, դեռ ևս եկեղեցւոյն մէջ լալու և արտասուաց ձայնը կը չարունակուէր. ոմանց առ խնդութիան, այլոց առ զղջման, ուսմունքը միսթան զվ ահան ողջունելով և ի հայրապետէն օրհնուելով՝ նոր ջանքով մը հայրենեաց երջանիկ օրեր պարգևելու աշխատանքին երդմունքը կ'ընէին։

Վ եց տարի հայրապետական գահը արժանապէս գրաւելէն ետքը վախճանեցաւ Յովհան, ու Շիրակ գաւառին Բևռնոս բռւսած գիւղը թաղուեցաւ։

Մանդակունեաց երկասիրութիւնք. — Ա. Յ և այլ երկասիրութիւնք կ'ընծայեն Մանդակունեան մեր տասներորդ կամ մեհասաներորդ դարուց պատմիչք։ Ա. սողնիկ կ'ըսէ. «Երանելին Յովհան Մանդակունի՝ զՀայոց բազում կարգս ուղղութեան կատարեաց. գարոզս գիշերի և տուընջեան, գկարգս մկրտութեան և ըզսարկաւագի, գբահանայի և գեպիսկոպոսի, և գօրհնութիւնն եկեղեցւոյ, և գյաւիմբ գպատարագամատոյցն՝ զոր Ա.Քանա-

սի ասեն լինել »։ Յովհան կաթուղիկոս. « Մանդակունին առլցեալ ամենայն հոգևոր հանճարով, և կարգս յօրինեալ ճոխացուցանէ պայծառապէս զամենայն աղօթականն, ժամակարգութիւնս եկեղեցւոյ սրբոյ. և յարդարէր ևս ճառս զգուշացուցիչս դիտաւորական կենցաղոյս, որ բերէ զգուշոյն փրկութիւն »։ Կիրակոս. « Մանդակունի... բազում կարգաւորութիւնս եմոյծ յեկեղեցի, կարգեաց գրաբոց աղուհացին և զաղօթս նոցա. զերբորդ ժամին և զչորրորդին և զիններորդին, և զեկեղեցւոյն հիմնարկէքն և ժամահարի, սկիզբն զմաղթմային զիրք և բանք, խաչօրհնէք և պատկ »։ Վարդան պատմիչ. « Յաջորդէ զնա Մանդակունին, իմաստասէր և լի հոգւով Աստուծոյ, որ բարիւք յօրինեաց զկարգ ձեռնադրութեան և ճառս խրատուց։ Սա թարգմանեաց զերբորդ կորնթացի թուղթն, զՅովհաննու, և այլ բազում օգուտս գործեաց ի կեանս իւր »։

Ասոնք են ահաւասիկ յետին պատմչաց՝ Մանդակունւոյն ընծայած երկասիրութիւններն, և իրենց խօսքերը՝ որչափ ալ մթին և բան արժանւոյն զոհացուցիչ չեն պներ, յայտ կը միտանին թէ այլ և այլ ճառեր շարադրած է Յովհան, և թէ հինգերորդ դարուն մէջ նոյն եկեղեցական կարգաւորութեանց մեծապէս ձեռնտու եղած է, այլ և այլ աղօթից շարադրութեամբը և կամ թարգմանութեամբ։

Գվհասւոր երկասիրութիւնք կը սեպուին իր ձառերը, և որոնք արդէն տպագրութեամբ ի լոյս ընծայուած են. քսանևւութ խրատական կամ վարդապետական ճառեր, այլ և այլ բարոյական նիւթերու վրայ, ընտիր ոճով. և չորրորդ դարուն՝ յունական եկեղեցւոյ մէջ պայծառացած վարդապետներուն ոճոյն, արտին և լեզուին հետևողութեամբ։

Այս պարագիրի հետևողութիւնը՝ տարակոյս ձգած է ոմանց մտքին մէջ ասոնց հարազատութեանը վրայ. չէ թէ երկբայելով՝ որ Մանդակունւոյն պէս հանճար մը չկարենայ նման բան մը արտադրել, այլ քանի մը ձեռագրաց մէջ՝ Յովհաննէսի և Եփրեմի ընծայուելնուն համար։

Այս տարակոյսը՝ գրչագրաց և գաղափարողաց անհմուտ անհոգութեանը արդասիք կրնայ սեպուիլ, վասն զի յիշեալ երկու վարդապետաց յունական և ասորի սկզբնագրաց մէջ՝ այս ճառերուն և ոչ մէկը կը տեսնուի. և թէ որ կորսուած ալ համարինք անոնց սկզբնագիրը, ինչպէս նոյն սրբոց ուրիշ այլ և այլ ճառերը, բայց քսանևւութին ալ միանդամայն կորսուիլը իրաւամբ տարակոյս կը ձգէ մեր մտքին մէջ՝ թէ անոնց պիտի չըլլայ այդ երկասիրութիւնը։

Բայց Թատերաց վրայ, կ'ըսեն, կը խօսի Մանդակունին, և այն անանկ ժամանակի մը մէջ՝ յորում Հայաստան նեղքին

և արտաքին խռովութեանց նշաւակ, ա-
չուրնեքը բանալու առեն չունէր, թող թէ
պրօսանաց եռևէ ըլլալու. մանաւանդ որ
այն ժամանակին չի յիշատակուիր ի Հայա-
ստան Թատերաց գոյութիւնը: Տարակոյս
չկայ որ այս առարկութիւնը մեծ ոյժ կ'առ-
նուր՝ թէ որ յունական ծագկեալ ու բա-
րեկարգ Թատերքը ենթադրենք. բայց ա-
ժինեւին անպատեհ է կարծելը թէ պրօսա-
նաց տեղւոյնը չկային ի Հայաստան, և
թէ հոն պրօսանաց պատշաճը չպահուելով,
կը սոխպէին սուրբ հայրապետքն ու վար-
դապետք՝ եկեղեցւոյ բեմերուն վրայէն ի-
րենց ձայնը բարձրացընել: Թող որ մեր
ուրիշ հնդինակաց մէջ ալ չիպակսիր Թա-
տերաց յիշատակութիւն: Ա.յսպէս խոս-
րով. «ի խաղս և ի Թատերս և ի ժողովս
պյանդակաց»: Նարեկացին. «առ Թա-
տերս տեսարանաց»: Ուրիշ անանուն վար-
դապետ մը. «Յորժամ Թատերախաղքն
հարկանին՝ յայնժամ ողբայ եկեղեցի զկո-
րուստ ժողովրդեան»: Յարկաւագ. «ի
տեսարանի աշխարհիս կարգեաց կացոյց
տէր՝ իւր հանդիսականս անթուելիս»:

Ասոնցմէ զատ Մաշտոցին կարգաւորու-
թեանը մէջ՝ իրենն է Մկրտութեան կանո-
նը, խաչ օրհնելու, պսակի, եկեղեցւոյ
հիմնարկէից օրհնութիւնը, տաճարի սբր-
բութիւնն, ժամահարի, սկևոյ, մաղզմայի,
սպասու և աւազանի օրհնութիւնը: Պա-
տարագամատոյցին մէջ այլ և այլ քա-

բողներ ու աղօթքներ, ու՛ մանաւորի՛ սրբոյն Աթանասի կոչուած պատարագամատոյցը։ Ժամադրոց մէջ ալ գիշերային ժամուն՝ Ջարթուղնապը և Ջրհեղ գոհաւոյ աղօթքներն, և ճաշուժամուն երեք քառողներն ու աղօթքները։

Բայց՛ ի տեղեակ՝ Դրունայ եկեղեցւոյն մէջ խօսած ճարտասան ու գեղեցիկ առնաբանութիւնն, զոր վերը յիշեցինք, և զոր աւանդած է Փարպեցին իւր Պատմութեան գրոցը մէջ։

ԵՂԻՇԷ

Կրտսեր գոյն Թարգմանչաց՝ կամ երկրորդ աշակերտաց դասէն էր Եղիշէ, սըրբոյն Վարդանայ առնեղպէրն, և ինչպէս հաւանական կ'երեւնայ, նաև անոր մերձաւորն աղգականութեամբ։

Թէպէտ և ընդհանրապէս վարդապետ կը կոչուի Եղիշէ՝ թէ իւր գրոցը խորագիրներուն մէջ, և թէ ուրիշ պատմիչներէն, բայց յոմանց կարծուի թէ եպիսկոպոսութեան աստիճանին ալ բարձրացած է, և Աբրահամ գումարուած եպիսկոպոսաց ցուցակին մէջ նշանակուած Համանուն Ամատունեաց եպիսկոպոսն՝ ինքն ըլլայ։

Հայաստանի Թշուառ օրերուն ականա-
տես, երբոր սրբոյն Վարդանայ և իրեն
քաջ ընկերաց ինկնալը տեսաւ, ու այն
պատճառաւ՝ հայրենեաց դժնդակ ապի-
տից մէջ թաւալիլը, չկրցաւ դիմանալ, ու
այնպիսի կեանքը՝ մահուանէ մը դառնա-
գոյն սեպելով, մեծաւոր առանձնութեան
մէջ ուղեց իր կենաց մնացորդը աւարտել։
Ինքզինքը ծածկելով՝ ի մարդկանէ, քա-
շուեցաւ Մոկաց լեռներուն մէջ, ու խո-
տերով կ'ապրէր։ Ան լերանց վրայ պտը-
տող հովիւները՝ գոան անոր առանձնու-
թեան վայրը. տեսան խստակրօն վարքն
ու ճգնութիւնը, և բոլոր մերձակայ գա-
ւառներուն հռչակեցին։ Սահակեցիք ե-
ղիշէ Մոկաց լեռներէն հեռանալ, և Ուշ-
տունեաց գաւառը քաշուելով, հոն Ա-
ստուծոյ հաճոյական վարքը կնքեց։

Ա. յաչափ է Եղիշէի կենսագրութեանը
վրայ ունեցած տեղեկութիւնիս, աւելի
ծանօթ մնալով իւր անմահական երկասի-
րութեամբը, որոնց մէջ գլխաւոր կը սե-
պուի իրաւամբ Պատմութեան գիրքը։

Եղիշէի պատմութեան նիւթը. — Աւելի վի-
պասանական քերթուածի քան թէ պարզ
պատմագրութեան կը նմանի Եղիշէի սքան-
չելի երկասիրութիւնն։ Ընտիր նիւթ մը,
ընտիր հանճարոյ և գրչի հանդիսաւոր։

Եղիշէ համառօտ ընծայականէ կամ յա-
ռաջաբանէ մը ետքը՝ կը սկսի իր պատմու-
թիւնը։ Աբշակունեաց թագաւորութեան

վերցուելէն կը սկսի խօսիլ. այն դէպքէն՝ուր Խորենացի լալով դադրեցուցեր է իր Պատմութիւնը, և որ Հայաստանի դժբաղդութեանցն սկիզբն է: Մերձաւոր ուժով ազդմը՝ Սասանեանք կամ Պարսիկք՝ այլ և այլ կերպերով Հայոց Թագաւորութիւնը տկարացընելէն ետքը՝ կը մտածեն քրիստոնեական կրօնքն ալ անհետացընել. որովհետև անիկայ միայն մեծ արգելք էր իրենց ոտից տակ հաստատուն կառուցմը գտնելու Հայաստանի մէջ: Ասով կը սկսի Եղիշէի պատմութիւնը: Անհնարին ոխութիւն մը կը նկատենք Պարսից Յազկերտ Թագաւորին վրայ, մեծ առելութիւն մը ընդդէմ քրիստոնական կրօնից. յոր աւելի գրգռուած իր մոգերէն՝ Թուղթ մը կը գրէ իր ձեռքին տակն եղած հպատակ ազգաց. կ'իմացընէ իրենց թէ միտքը գրած ըլլալով Քուշանաց վրայ պատերազմի երթալ, իրենց օգնութեանը կը կարօտի. ուստի կը հրամայէ որ բոլոր ձիաւոր զօրքերնին հետերնին առած Ապար աշխարհը ժողվուին:

Հայաստան ալ կը հասնի այս հրամանը: Ոմանք միամտութեամբ, այլը՝ի հարկէ կը սիրտուին հնազանդիլ այնպիսի հրամանի մը՝ որուն հետևանաց դէշ ըլլալուն իրենց միտքն ալ կը վկայէր: Գուշակութիւններն ալ սուտ չելան: Թագաւորը հրաման տուաւ զիրենք չարչարել, ինչուան որ հաւատքնին ուրանան. անտէր Հայաստանին ալ ուրիշ խեղճութիւն մը պատրաստեր

էր։ Դևնչապուհ անունով մէկը գրկից որ երթայ Հայոց աշխարհքը նայի, և գիրենք խաբելու համար ամեն պատրուագական հնարք ի գործ դնէ։ Բայց աստուածապաշտ Հայաստանը այն նենգաւորին խօսքերէն չխաբուեցաւ. և իրեն տուրք հայրապետաց հետ միաբանած՝ քաջութեամբ ընդդէմ դարձաւ Դևնչապհոյ, ու Արտաշատ քաղաքին մէջ դումարուած եպիսկոպոսաց ձեռքովը՝ Միհրներսեհի հրապուրողական ու ամբարիշտ թղթոյն պատասխանը տուաւ։

Թագաւորն ու իրեն համախոհ մոգպետը՝ երբոր այն քրիստոնէական ոգւոյն թեւ լագրած անվեհեր թուղթը կարդացին, ալ աւելի զայրացան. մանաւանդ մոգպետը, այն դառնացնալ ծերը, որ կարծես թէ կը վախնար իր աչքովը տեսնել Հայաստանի կործանումը, ու իր ձեռքովը՝ տուրք և. կնդրեցաց աւերակներուն վրայ՝ տորուշանաց հիմունքը ձգել. խրատ տուաւ թագաւորին որ քաղցրութիւնը մէկդի դնէ, ու այնպիսի ապստամբ ազգը բռնութեամբ ընկճէ։ Հաւանեցաւ թագաւորը, ու կծու թղթով մը հրաման գրկից որ Հայոց գըլխաւորները արբունի դուռը գան։ Հնազանդեցան անոնք. Յովսէփ կաթուղիկոսին օրհնութիւնը և քաջալերութիւնն առնելէն ետքը՝ հասան ի Պարսկաստան. տեսան իրենց ընկերակցաց նենգութիւնը, արտասուեցին անոնց վշտացը վրայ. բայց

Թագաւորին սիրտը աւելի չգայրացնելու համար՝ հանդարտութիւն կը կեղծէին։

Բայց նա իր սրտին ծոյնը դուրս թափելու չուշացաւ. նոյն իսկ հասած օրերնին՝ ինչուան այն ատեն սովորական եղած ընդունելութեան օրէնքները չկատարելէն զատ՝ ալէկոծ ծովու մը պէս, ինչպէս դեղչիկ կը նկարագրէ պատմիչն, տակնուվրայ եղաւ. երդում՝ ըրաւ արեւուն վրայ՝ որ ամեն նեղութիւն իրենց գլուխը հասցընէ, եթէ երկրորդ օրը անոր առջեւը ինկած երկրպագութիւն չմատուցանեն արեգական։ Ի՜նչ դժնդակ հրաման աստուածասէր նախարարաց համար. այն օրն՝ յոյսի կ'ուզէր գիշերս արեւապաշտ ընել, գիրենք իր արեամբը փրկող ճշմարիտ Աստուծոյն հրաշափառ յարութեան օրն էր։ Այս բանիս յիշատակն ու մատուռները միայն գիրենք կը սարսափեցընէր. ուստի և քաջութեամբ դէմ կեցան թագաւորին, յիշեցուցին թէ ինչպէս իրենց կրօնքին վրայ հաստատուն են, և թէ առ ճշմարիտ Աստուածն ունեցած սէրերնին ամենևին արգելք չըլլար իրենց պարտքերնէն պակսելու զոր ունին առ երկրաւոր թագաւորս. ինչպէս իրօք ալ գովութեան արժանի սեպուհ են հին արքայից ատեն, և այլ և այլ պիտանի ծառայութիւններ մատուցած։

Բայց Յազկերտի առջև այն ամեն արդիւնքն ընդունայն էին։ Յաւիտ կը ցուցը-

նէր իրենց տգիտութեան վրայ ու թէ ինչպէս արեգական ու կրակի երկրպագութիւն չընելով՝ միաստակաղը են աչխարհի։ Ա՛լ չդիմացան նախարարքն. երբոր հաւատոց համար վկայելու տեղն եկաւ՝ ամենքը ձայներնին բարձրացուցին. խոստովանեցան թէ ինչպէս հաստատուն է իրենց հաւատքը, և անընկճելի սուրբ եկեղեցին։ Այսպիսի հաստատուն հիման մը վրայ կոթնած՝ չենք վախնար, ըսին, ոչ քու սպառնալիքներէդ և ոչ ալ տուած պատիժներէդ։

Պատմիչը հոս բառ չիկրնար գտնել թագաւորին սրամտութիւնը բացատրելու. կը ստորագրէ այնպիսի դառն սրտի մը մաղձերուն դուրս թափուիլը. և թէ ինչպէս անդարձ երդմամբը կը սպառնար՝ կատաղած վերցընել այն պատուական անձինքը։ Սակայն սպառնալեացն ալ արդիւնքը չտեսաւ. հրամայեց որ բանտի մէջ արգելուն զիրենք։

Հոս սխալ ու սրտաչարժ տեսարան մը կը բացուի առջևնիս։ Ամեն նեղութեանց, ամեն վշտաց ու դառնութեան համբերող սրտեր՝ հայրենեաց սիրով կը լքանին. այն սէրը կը յորդորէ զիրենք այնպիսի բանի մը ձեռք զարնելու՝ որ երբէք չէր կրնար արդարանալ, որուն եթէ նախ իրենց արցունքովը ու եղբը արեամբ քաւութիւնը չմնաէին։ Կը սխալուին դէթ առ երես, դէթ մէկ անգամուան համար արեւուն եր-

կըրպագութիւն ընել, որպէս զի Քրիստոսի հաւատքը անվտանգ պահուի Հայաստանի մէջ։

Հարկ չէ ըսելը թէ ուրչափ մեծ կ'ըլլայ Թագաւորին ուրախութիւնը. մտացը մէջ ալ ամենևին տարակոյս չմնար Հայաստանի վրայ տիրապետելու. ուրախութեամբ ամեն պատիւ ու մեծարանք կը հրամայէ որ ըլլուին նախարարաց. հետերնին մոգեր ու մոգպետներ դրած Հայաստան կը դրկէ։

Նոյն միջոցին այսպիսի դժնդակ լուր մը՝ բերնէ բերան, գաւառէ գաւառ անցնելով, ինչուան Հայոց մայրաքաղաքը՝ Վաղարշապատ, ու սուրբ Գրիգէսի կաթուղիկոսին ու իրեն համախոհիցն ականջը կը հասնի։ Ցաւ ու տագնապ կը պաշարէ զիրենք, ու միաբան ժողովք գումարելով՝ կը սահմանին արտասուօք երդնուլ սուրբ աւետարանին վրայ, որ չէ թէ միայն իրենց արիւնովն սուրբ հաւատքը պաշտպանեն, այլ չխնայեն նաև իրենց կարևորագոյն լեցան ալ, եթէ անոնք ուզենան Հայաստանի մէջ արևու պաշտօնը տարածել։ «Հայրը իր որդւոյն չխնայէ, ըսին, որդին ալ այդպիսի առթի մէջ հօրմէն չպատկառի. կինը՝ իր էրկանը հետ կուռի, ծառան ալ տիրոջը դէմ՝ ելլէ. աստուածային օրէնք թագաւորին ամենուն վրայ. և այն օրինաց համեմատ՝ ամեն յանցաւորը իրենց պատիժը գտնեն»։ Ի՜նչ սրտաշարժ դէպ-

քեր։ Հին Հռոմայ պատմութեանցը մէջ յիշատակուած Կարթագինէի պատերազմունքն՝ որչափ իրենց ուժէն կը կորսընցընեն։

Մինչդեռ Հայաստանի մէջ այս գործողութիւնները կը կատարուէին, մէկալ կողմանէ ալ ուրացեալ Հայոց բանակը մոգերով ու մոգպաններով Հայաստանի մօտ ցեր ու բանակած նաեւր էին. իրենք ալ կ'իմանային թէ ինչ դժուարին արգելք մը կար առջեւնին՝ թագաւորին անօրէն կամքը առաջ տանելու համար։ Իրենց ժողովուրդը անտերունչ չթողլու պատճառաւ հաւատքնին ձգող նախարարները կը տեսնէին որ նոյն ժողովուրդը դիրենք կը մերժէ։ Քանըհինգ օր այնպէս անգործ առքի կը սպասէին, չտեսնելն իրենց մտաց ուղղութիւնը կերպով մը անոնց իմացընելու համար, և սակաւ՝ թագաւորին սեւ խորհրդոցը արբանեկելու։ Ինչուան գըլխաւոր մոգպետը սիրտ ըրաւ, հետը խումբ մը զօրաց առնելով՝ կիրակի օր մը եկեղեցւոյն վրայ վազեց, ու դռները խորտակելով՝ կ'ուզէր ներս մտնել։ Չոն էր երանելին Ղեւոնդ երէց իր քանի մը խորհրդակիցներովը. աչքովը տեսաւ մոգպետին անօրէնութիւնը, չկրցաւ համբերել, և ոչ ալ սպասել եպիսկոպոսաց՝ որպէս զի անոնց խորհրդովը չարժի. հրամանատուաւ հաւատացեալոց որ կռուին անոնց հետ։ Անոնք՝ բայց հաւատով զինուորեալ

ժողովուրդը՝ քարերով վռնտելին թէ մոգ-պետը և թէ անոր համախոհը. և ինքը և-կեղեցին դառնալով՝ այն յաղթութիւնը պարգեւող Աստուծոյն շնորհակալութեան մաղթանքը շարունակեց։

Այն տագնապին ձայնը բոլոր Հայաստանի մէջ տարածուեցաւ. ամեն կողմանէ արք և կանայք նոյն տեղը կը դիմէին, ու եղածը լսելով՝ մէկ կողմանէ շնորհակալ կ'ըլլային Աստուծոյ, միւս կողմանէ ալ հաւատոց համար վերահաս վտանգ մը աչուքնուն առջև տեսնալով՝ արտասուաց գետեր աչուքներնէն կը վազցընէին. կը փափաքէին, կ'ըսէ պատմիչը, որ երկիրը պատռի ու իրենց գերեզմանն ըլլայ, որպէս զի չտեսնեն այն դժնդակ հրամանաց կատարումը։

Զարմացաւ մեծ մոգպետը, ու իրեն ամեն համախոհը. «Այնպիսի մարդկանց դիմաց, կ'ըսէր զարմանալով մը, որ զմահ նախամեծար կը համարին քան դիւանայ ով կրնայ դիմանալ»։ Ուստի որոշեց՝ ցաղկերտ թագաւորին գրելով՝ ամեն բան տեղնիտեղը խմացընել անոր, և յորդորել որ այսպիսի խորհրդոց մը գործադրութենէն ետ կենայ։

Սակայն Հայ նախարարաց մէջ անանկներ ալ կային որ ի սրտէ ուրացեր էին Քրիստոսի հաւատքը. և ասոնց մէջ գլխաւոր էր Վասակ Սիւնի, որուն հոգւոյ աչուքները փառասիրութեամբ կուրցած՝

կ'ուզէր քրիստոսական հաւատոց ջնջմամբը Հայոց թագաւորութիւնը ձեռք ձգել։ Տեսնելով վասակ թէ մոգպետը յուսահատեցաւ թագաւորին կամքը առաջ տանելէն, քաջալերել սկսաւ զինքը. այն ըսելով թէ ժուարին գործոյն կատարման յանձնառութիւնը իր վրայ առնելով՝ խոստացաւ զանազ որ եկեղեցւոյ ուխտին մէջ երկպառակութիւն ձգէ. և թէ որ այս բանս յաջողցնեմ՝ ալ այն աստեն, կ'ըսէր, ամենեւին չեմ տարակուսիր թէ թագաւորին կամքը պիտի կարենամ ի գլուխ հանել։ Սուրբ հաւատոց գնովը կ'ուզէր ստանալ այն երկրին թագաւորութիւնը՝ որուն անարժան էր։

Ծածուկ հնարագիտութեամբը կը սկսի վասակ մոբի դրած չարութեան խորհուրդը առաջ տանելու աշխատիլ։ Նախապատրաստ ու ազնուականաց տները մոգեր ու մոգպետներ կը ցրուէ. և այն կերպով կը ջանայ զանոնք մոլորցնել։ Բայց սուրբ եպիսկոպոսունքն ամենայն արթնութիւն կը բանեցընեն անոր հնարագիտութիւնները խափանելու։ Տեսնելով թէ սատանայական խորհուրդն առաջ կ'երթայ, սուրբ աւետարանը ձեռնուընին, Հայոց սպարապետին՝ սրբոյն Վարդանայ՝ տունը կը վազեն, իմանալու համար թէ արդեօք իր խորհրդովը այնպիսի անօրէնութիւնք կը կատարուին. «Թէ որ ատանկ է, կ'ըսէին, նախ մեր գլուխը կտրեցէք, ու ետքը եկէ-

զեցնաց վրայ ձեռուընիդ զարկէք »։ Ա.Ր-
դէն բոլորովին խռոված էր վարդան իւր
պատճառաւ Հայոց աշխարհքին վրայ հա-
սած աղետիցը համար, արդէն սրտովը
լացեր էր ուրացութեան ակամայ յանցան-
քը, ու առիթ կը փնտռէր թէ ինքն և թէ
իրեն հետ եղող հաւատարիմ նախարարքը՝
որ իրենք զիրենք յայտնեն։ Ա՛լ չկրցաւ
դիմանալ, անոնց ոտքն ինկաւ, իւր մե-
ռայն ուղղութիւնը լալով պատմեց ա-
նոնց, և թէ պատրաստ է նոյն սուրը հա-
ւատքին համար ինչուան արիւնն ալ թա-
փելու։ Մէկէն հրաման տուաւ որ համա-
խոհքը ժողվուին, ու եղածը դարմանելու
փութան։

Վասակ դարձեալ մէջ կը մտնէր՝ Հայոց
միաբանութիւնը ապրելու։ Սրտովը ՝ի հա-
ւատացելոց ուծացեալ, բերնով անոնց
հետ ինքզինքը մէկ կը ցուցընէր. կը խառ-
նուէր մէջերնին, ու անանկով կը ջանար
զանոնք իրարմէ երկպառակել։ Այնչափ
և այնպիսի վստահութիւն կ'ազդէր իւր
վրան, որ Պարսից դէմ պատերազմել ու-
զած ժամանակնին, անոր ձեռքը կը յանձ-
նէին զօրաց մէկ գունդը։ Երբոր բաւա-
կան վստահութիւն գտաւ Վասակ, ալ ան-
կէ ետքը իր երկպառակութեան և անմիա-
բանութեան խորհուրդը սկսաւ յայտնել։
Ասով կը սկսի Եղիշէ իր չորրորդ գիրքը։

Միհրներսեհ Պարսից մեծ հազարապե-
տը՝ տեսնելով թէ իրեն դժուարին պիտի

ըլլայ Հայոց միաբանութեան դէմ դնել, ու միանգամայն գիտնալով վ. ասակայ՝ ի սերտ սրտէ ուրացութիւնը, քովը կը կանչէ դինքը, ու խմանալով իրմէ թէ ուշացած ջանացեր է Հայաստանին մէջէն վերցնել սուրբ կրօնքը, ու անով թագաւորին կամացը գործակատար ըլլալ, սիրտ առած, մեծամեծ պարգևներ կը խոստանայ՝ միայն թէ կարենայ իր միտքը դրած խորհուրդները առաջ տանիլ։ Անօրէն խոստումը ընդունեցաւ վ. ասակէն։ Մէկէն իրեն հետ միաբանեց վ. ասակ այլ և այլ ուխտադրուժ նախարարներն. և անոնցմով ու անոնց հպատակներով զօրաց բանակ մը պատրաստեց, ու սկսաւ իր հայրենեացն ու կրօնիքը դէմ պատերազմի պատրաստուիլ. «Մոռնալով, ինչպէս կ'ըսէ պատմիչը, որդւոյն Աստուծոյ գալուստը, ու սուրբ աւետարանին քարոզութիւնը չյիշելով. իր սուրբ հաւատոցը ոչ սպառնալիքներէն վախնալով, և ոչ աւետեօքը մխիթարուելով»։ Անոնցով Հայաստան երկու մասն բաժնուեցաւ, հաւատացեալ և ուրացող։

Եղիշէին հինգերորդ գիրքը կամ յեղանակը կը սկսի աքանչանալով աստուածայինն սիրոյ մեծութեանը վրայ, որուն արդիւնքը յայտնապէս կ'երևնար Հաւատարիմ հպատակաց ու անոնց զօրացը վրայ. որոնք ամենքը ժողվուեցան իրենց սպառնացեալ մեծին վարդանայ քովը՝ վաթ-

սունեւվեց հազար հոգի, և անոնց հետ Յով-
սէփ կաթուղիկոս և Ղևոնդ երէց և ու-
րիշ բազմութիւն քահանայից։ Ամբողջ
բանակը քաջալերուեցաւ նախ սրբոյն
Վարդանայ խրախուսական և պերճաբան
խօսքերովը, ու ետքը Ղևոնդեայ երիցու
սրտաշարժ յորդորանքներովն. և պատե-
բազմին նախընթաց դիշերը՝ հաղորդեցան
սուրբ խորհրդոյն, ու պատրաստուեցան
՝ի մարտ, փափաքանօք սպասելով այն ար-
շալուսոյն՝ որ իրենցմէ չատերուն համար
արքայութեան դռները պիտի բանար, ու
իրենց արեամբը՝ փրկութիւն պիտի պար-
գևէր Հայաստանեայց։ Ասով կը լմընցը-
նէ Եղիշէ իր հինգերորդ յեղանակը։

Կը սկսի վեցերորդը։ Փափաքելի առա-
ւօտը կը հասնի. Պարսիկ ու Հայ սպարա-
պետները փոփոխակի իրենց զօրքերը կը
սկսին քաջալերել. ու միանգամայն զօր-
քերնին պատերազմի կը պատրաստեն. ու
Տղմուտ գետին քով՝ ահաւոր ճակատա-
մարտ մը կը սկսի, և հոն Վարդան իր բազ-
մաթիւ քաջերովը կ'ինկնայ։

Մահուանէ ազատող Հայոց քաջերը
բերդերու մէջ կ'ամրանան. ու փափաքե-
լով մահակից ըլլալ իրենց նիղակակցացը՝
ամենևին չեն չարժիր՝ոչ՝ի խոստմանց և ոչ
՝ի սպառնալեաց։ Բայց երբ կ'իմանան թէ
Վասակ ամեն ջանք կ'ընէ որ զիրենք ալ
կորսընցընել տալով՝ բոլոր աշխարհին անկ-
մանը պատճառ ըլլայ, կ'իմացընեն Պար-

սից զօրապետին անոր ըրած ամէն չարու-
թիւններն, ու թէ ինչպէս թէ Պարսից և
թէ Հայոց աշխարհացը վնասակար է. ու
անօրէնութեամբ ստացած պատիւներէն
դինքը զրկել կու տան, որ իրենց հետ մէկ-
տեղ բանտակից կ'ըլլայ, առանց անոնց
մխիթարութիւնն և սփոփանքն ունենա-
լու: Նախանձեցաւ ուրացողն անոնց եր-
ջանկութեանը վրայ, ու ինքը չկրցաւ նմա-
նիլ, ու չարաչար կեանքով մը ապրելէն
ետքը, դժնդակ ու դառն մահուամբ ալ
մեռաւ:

Եղիշէ իր Յառաջաբանին մէջ խոստա-
ցած էր ևօթն յեղանակօք կամ դրքով ա-
ւարտել իր Պատմութիւնը, բայց ետքը
Արտաքոյ ևերև յեղանակին ոչխորդ մըն ալ
կ'աւելցընէ. որուն մէջ տեղնիտեղը կը
պատմէ թէ ինչ նեղութիւնք ու չարչա-
րանք կրեցին այն սուրբ քահանայք՝ որ
վարդանանց պատերազմէն ետքը ախոյ-
եան հանդիսացեր էին Հայաստանի մէջ
հաստատուն պահելու սուրբ հաւատքն ու
աղգութիւնը: Նոյնը աւանդած է և Ղա-
զար փարպեցի. բայց Եղիշէ աւելի ման-
րամասն կերպով ու աւելի յստակ և ըն-
տիր ոճով: Վերջն ալ մասնաւոր հատուած
մը կ'աւելցընէ այն սուրբ կանանց համար՝
որ իրենց արանցը արժանաւոր երևցան
սիրով ու սրտով, հաւասար քայլելով թէ
առաքինութեամբ և թէ քաջութեամբ:

Եղիշէի այս պատմութեան գիրքը՝ խար-

դահաճ կը համարի Թովմաս արծրունի, ու այլ և այլ հատուածներ անոնց մէջէն պակասած։ Արծրունին՝ որ իւր ցեղին պարծանքն ու փառքը նորոգելու և անմահացընելու նպատակաւ՝ ձեռք զարկած է իր գրոցը, կրնան, կ'ըսէ, զարմանալ ընթերցողք թէ ինչու եղիչէ իւր պատմութեան մէջ ամենևին չյիշատակեր Վահանայ Արծրունւոյ վկայական մահը. և այս բանիս՝ հետևեալ պատճառը մէջ կը բերէ։

Պարսից Պերոզ թագաւորին տանէր՝ Բարծումա նեստորական աղանդաւորն՝ Մոկաց աշխարհքը նկաւ իւր մոլորութիւնը սերմանելու. և որովհետև այն միջոցին Մոկաց աշխարհին մէջ կը բնակէր եղիչէ, Բարծումա իւր պատմութեան դիրքը խնդրոց իրմէ, ու խնդիրը ընդունեցաւ։ Բայց Արծրունեաց Մերշապուհ իշխանը՝ որ այն տաւննեն ցմորեաց բերդին մէջ ամրացած էր, լսելով Բարծումայի իւր սահմաններն մտնելը, ստիպաւ հրամայից հեռանալ անկէ, ու սաստիկ պատիժներ և աքսոր սպառնացաւ թէ որ իւր հրամանացը մտիկ ընելու չըլլայ։ Ան տաւնեն Բարծումա՝ վրէժխնդիր հոգւով՝ եղիչէի գրոցը մէջ եղած տանն Արծրունեաց տան վրայի յիշատակութիւններն հանեց, ու անոնց հետ նաև Վահանայ Արծրունւոյ մարտիրոսութեան պատմութիւնը։ Եղիչէ՝ Ռշտունեաց գաւառին ծովինզերքն առանձնացած ըլլալով՝ տաւն չունեցաւ իւր գը-

բուածքը միւսանգամ ուչքէ անցընելու, ո-
րովհետեւ Հոն եղաւ իւր երջանիկ փոխու-
մը։ Ա.յն պատճառաւ ոմանք կարծեցին թէ
անանկ անկատար թողուցած է իւր գործը
սուրբ վարդապետս։

Եղիշէի ուրիշ երկասիրութիւնները.—Պատ-
մութենէն զատ՝ որ Եղիշէի գլուխ գործո-
ցը կը սեպուի, ուրիշ գեղեցիկ երկասի-
րութիւններ ալ թողուցած է սուրբ վար-
դապետս, և որոնց մէջ գերազանց կը սե-
պուի իրաւամբ Լիսանձանց ճառը։ Պատ-
մութիւնեիս կ'աւանդէ թէ հինգերորդ դա-
րուն քաղաքական յեղափոխութեանցը
մէջ՝ երբ Թարգմանիչը գարձան իրենց
հայրենի երկիրը, ու Վռամշապհոյ օրովը
ծաղկած Հայաստանը՝ ներքին երկպառա-
կութեանց, արտաքին մարտից և պարս-
կական զօրութեան նշաւակ տեսան, և-
րիտասարդութիւնին՝ իրենց սիրելի երկ-
րին երջանկութեանը նուիրող սրտերն՝
անոր ապագայ բարօրութենէն յուսահա-
տածի պէս եղան, ու չատերնին՝ անանկ
թշուառ կեանքէ մը աւելի մահը նախա-
մեծար սեպելով՝ անապատներու լռութեա-
նը մէջ իրենց սրտին խաղաղութիւնը և
հոգւոյն փրկութիւնը փնտռել փութացին։
Առնցմէ մէկն էր նաև Եղիշէ։ Ա.յն ա-
ռանձնութեանը մէջ՝ խրատական ու գե-
ղեցիկ ճառ մը գրեց առ միանձունս իւ-
րոյ ժամանակին, հին անապատաւորաց
օրինակաւը՝ անոնց կատարելութեանը վա-

վաքողներն քաջալերելու նպատակաւ ։ Ո՛րչափ գնդեցիկ լեզու, քանի՛ ընտիր խ-մաստներ, և ինչ վշտահար սիրտ մը կը ցուցընէ Եղիշէ՝ իր այս գրուածքին մէջ. բայց ան էր այն ժամանակին Հայաստանին նկարագիրը՝ որ գինքը սիրող սրտերուն ըսել կու տար համարձակ, թէ «ամենայն չարիք եկին հասին ի վերայ մեր . . . կենդանեաւ մերով տեսաք զդիակունս անձանց մերոց » ։

Մեկնութիւն Բնաւոյ և Դատաւորաց . — Թէ՛ այս, և թէ ասկէ ետքը յիշատակելիք քանի մը ճառերնիս՝ ժամանակաւ երիցագոյն կ'երևնան քան զգրութիւն պատմութեան և ճառին Մխանձանց ։ Ունի մեծ զանազանութիւն մը կը տեսնուի ասոնց մէջ, և հարկաւ կ'ենթադրէ ժամանակի երիցութիւն մը, յորում հեղինակը դեռ չէր ընտացած ոչ այն հմտութիւնը և ոչ լեզուի մաքրութիւնը ։ Ասանկ են Տէրունական ածոյրից կամ Հայր մերի մեկնութիւնը, այլ և այլ ճառեր ու քանի մը աղօթքներ ։ Անոր համար ուզած են ոմանք տարակուսիլ անոնց հարազատութեանը վրայ . սակայն պատմիչը յայտնապէս անոր ուրիշ երկասիրութեանցը մէջ կը յիշատակէն այս ճառերն, և ի մասնաւորի՝ Կիրակոս . « Եղիշէ (գրեաց) զպատմութիւն սրբոց Վարդանանց և զդիւրս կանոնացն, և այլ մեկնութիւնս գրոց սրբոց և զչարչարանաց փրկչին » ։

Աբրահամոց մենհարիւն մըն ալ չարագրած էր Եղիշէ, որուն կորուստը՝ մեծ զրկում մըն է հայերէն դպրութեանց. և այս կորըստեան ցաւը աւելի զգալի կ'ընեն անոր հատուածները, զոր իւր համանուն երկասիրութեանը մէջ առած կը բերէ Վարդան յանուն Եղիշէի։

Ան և այլ անգամ տպագրուած է Եղիշէի Պատմութեան գիրքը։ Առնց մէջ առաջին կը սեպուի 1764ին ի Կաթանդնուպոլիս հրատարակուածը, զոր Իգմիածնի միաբան Աբրահամ վարդապետը տպագրել տուաւ։ Որուն կրկին տպագրութիւնն է ի փեթերպուրգ հրատարակուածը՝ ի ձեռն իլխանեան Յովսեփ Արղութեանց աբգեալիկասոսի։ Վերջը քանի մը անգամ տպագրուած է ի Վենետիկ (1825), և ի 1838 ամբողջ Մատենագրութեանցը հետ Մկոռեղ Նըգեալ տարիներ (1861)նոր տպագրութիւն մըն ալ եղաւ ի Թէոդոսիա, ջոփ Աղէքսէեան օբզնէի կոչուած, որ թէպէտ ըստ ընթերցուածին մեծ տարբերութիւն մը չունի իրմէն առաջ հրատարակուածներէն, բայց իր Նուիրեմանը և յիշատակներով պատուական։ Գրութեան թուական չունի, այլ մէջը գտնուած յիշատակութիւններէն՝ իններորդ դարու գրքուածք կրնայ սեպուիլ. վասն զի անոնց մէկուն մէջ կը յիշատակուի «տէրն Աղուանից Ասոմ», զոր հրատարակողը նոյն կը համարի ընդ Ասոմայ, որ կը յիշատակուի առ Յովհաննու կաթուղիկոսի, և որ Գուրգենայ որդի կը կոչուի։

Եղիշէի պատմութեան գիրքը՝ այլ և այլ եւրոպական լեզուներով ալ թարգմանուած է։ Առնց մէջ առաջին է անգղիականը, զոր ի 1830 տպագրեց ի Լանտան Կայմանն գերմանացի արեւելագէտն։ Անկէ եւրը ի 1840 իտալական թարգմանութիւն մը հրատարակուեցաւ ի Վենետիկ Գաբրիէլեդդի հայագէտ քահանային աշխատասիրութեամբը. և ի 1841 ի փարիզ գաղղիական լեզուով Գասպարաճեան Գրիգոր վարդապետի ձեռքով. առաջին թարգմանութիւն մըն ալ եղած է։

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Հայ պատմագրաց հայրը, ազգային ծա-
նօթ բանասիրութեան մէջ ամենէն բար-
գաւաճ միտքն և եւրոպական գիտութեանց
առջև ամենէն մեծ և ատոյգ պարծանք՝ կը
սեպուի արժանապէս Մովսէս Խորենացի։
Չորրորդ դարուն վերջերը Տարօնոյ Խորնի
կամ Խորօնք գեղը ծնած է Մովսէս և այն
պատճառաւ Խորենացի կոչուած։ Իր ման-
կութեան առեն վ. ռամշապհոյ և սրբոյն
Սահակայ և Մեսրովպայ ջանքով՝ Հայաս-
տան նոր կերպարանափոխութիւն մը
կ'առնուր ուսումնական զարգացմանց մէջ։
և Մեսրովպ՝ Հայերէն գրոց դիւտը հնարե-
լէն ետքը՝ ուրիշ փափկաձայն, ուշիմ և
հանճարեղ մանկանց հետ՝ ասոր ալ, որ
իր քեռորդին էր, դաստիարակութեանը
խնամք ունեցաւ, ու իր աշխատանաց ար-
դիւնքը յայտնապէս տեսաւ անոր գործուր
մտացն ու հանճարոյն վրայ։

Իր միւս աշակերտակցացը պէս՝ Մով-
սէս ալ իր անմիջական դաստիարակաց
ձեռքին տակ մեծ յառաջադիմութիւն ցու-
ցընելէն ետքը՝ անոնց հրամանաւը ճանա-
պարհորդութիւններ ըրաւ՝ ի Սիւնիս, ի Ե-
դեսիա, ի Բիւզանդիոն, ի Նտիոք, ի Ա-
թէնս, ի Հռոմ, ի Պաղեստին և ի Աղէք-

սանդրիա, մտացը գաղափարներուն ա-
ւելի ընդարձակութիւն տալու, և հայկա-
կան թարգմանութեանց արուեստին կա-
տարեալ հմտութիւն ունենալու համար.
քննեց մատենադարաններն ու գրքերը,
ու իր ժամանակին անուանի իմաստնոց
աշակերտելով՝ եղաւ գերագոյն և ամենա-
հմուտ բանագիտաց մէկն։ Թարգմանչաց
ու Աչեաղթին վրայ խօսելու առեններս՝
տեսանք թէ ինչ պատիւ ունեցաւ իր ընկե-
րակցացը պէս նաև Մովսէս՝ ի Խիզան-
դիոն, ուր Մարկիանոս կայսրն (ըստ ա-
ւանդութեան մը) զարմանալով անոր հմ-
տութեանն և իմաստութեան վրայ, և ճար-
տասան լեզուին գօրաւոր ազդեցութենէն
յաղթուելով, «Ո՛վ Մովսէս, կ'ըսէր, յաչս
ամենեցուն ընտրեալ են բանք բերանոյ
քոյ, որպէս զառաջինս ի հռետորաց. և
դու կարի քաջացար յոյժ»։

Սակայն միւս թարգմանչաց պէս՝ Մով-
սէս ալ չկրցաւ ոչ իւր հոգեւոր ծնողաց կըր-
կին տեսութեամբը մխիթարել և մխիթա-
րուիլ, և ոչ ալ ուզածին պէս օգտակար
ընել Հայաստանի՝ իւր այնչափ ջանքով և
յարատեւութեամբ ժողոված հմտութեանց
գանձը։ Դարձաւ ի Հայս յետ երկար ճա-
նապարհորդութեանց, և իր սակաւամեայ
պանդխտութեանը միջոցին՝ վերիվայր է-
զած տեսաւ իր հայրենիքը։ Վասն զի, ինչ-
պէս ուրիշ շատ անգամ յիշեցինք, կործա-
ներ ինկեր էր Հայաստանի թագաւորու-

թեան աթոռը, վախճաններ էին Սահակ ու Մեսրովպ, ու Հայաստանի վրայ սոսկալի ու դժնդակ ազետից նախագուշակութիւն մը ամեն կողմանէ յայտնի կը տեսնուէր։

Անանկ դժնդակ առեղի մը մէջ՝ ազգը ոչ միայն ժամանակ չունեցաւ, այլ նաև չուզեց ճանչնալ անոր արդիւնքը. ուստի հեռացաւ քաչուեցաւ Մովսէս ալ անծանօթ տեղուանք, թէ իւր վարդապետը՝ և թէ աւելի հայրենիքն արտասուելու. երիտասարդութեան աշխոյժ տարիները՝ հայրենեացը մտաւոր սնունդ պատրաստելու համար յոգնողն՝ ծերութեան հասակին մէջ օրուան հացին կարօտ եղաւ, ինչպէս տխուր առանդութիւն մը կը յիշատակէ, ու պարկը կռնակը զարկած՝ դռնէ դուռ կը քալէր, ու իրեն նախատիպ օրինակ Քրիստոսի պէս՝ գլուխը հանգչեցընելու տեղ մը չէր գտներ այն Հայաստանին մէջ՝ զոր պիտի անմահացընէր իւր երկասիրութեամբը։

Տասը տարի այսպիսի թշուառութեամբ անցուց իր կեանքը Մովսէս, ինչուան Հայաստանի վիճակը սկսաւ քիչ մը կերպարանափոխ ըլլալ. պարսկական բռնութիւնը այնչափ անհամար անմեղ արիւններ թափելէն ետքը յոգնեցաւ, ու կաթուղիկոսական աթոռոյն վրայ նստելով Գիւտ՝ անակնկալ կերպով մը ճանչցաւ իր հին և սիրելի աշակերտակիցն՝ Մովսէս, աղքատութեան տառապանացը և աղքատ

դրդեկին մէջ, մխիթարից դինըը, և Հայաստանի՝ իրեն աննման բարերարը ճանչցընելով, Եղնըկայ կողբացւոյն մահուընէն ետքը՝ Բագրեւանդայ և Աբշարունեաց եպիսկոպոս դրաւ, ուր վարժարաններ բանալով՝ կրթեց իւր նոր աշակերտաց դասերը. այս ալ կէս ըսած աւանդութեան։

Որոշ չենք կրնար դրուցել թէ երբ եղած է Մովսեսի մահը, այլ ժամանակագրութիւն մը կը յերկարաձգէ անոր կեանքը մինչև Ձենոնի կայսերութեան տարիները, կամ՝ ի 487. և դար մը կամ աւելի ապրած կը սեպէ։ Ցաջորդ դաւառին մէջ Հանդիպեցաւ անոր երջանիկ փոխուիմը, և մարմինն ալ նոյն դաւառին սուրբ Աստուածածնայ վանաց եկեղեցւոյն մէջ ամփոփեցաւ։

Խորենացւոյն երկասիրութիւնքը. — Մովսէսի երկար կեանքը՝ աստուածապաշտութեան և ուսմանց նուիրական եղած է. և ոչ երբէք ուզեր է ձգել ձեռքէն գրիչը։ Բայց կ'երեւնայ թէ իւր գրուածոց և երկասիրութեանց գլխաւոր մասն՝ Թարգմանութիւնք եղած ըլլան. ինչպէս ինքն ալ «այլ ձեր և անպարապ՝ ի Թարգմանութեանց» կը կոչէ ինքզինքը։ Որչափ ատոյգ է թէ հինգերորդ դարուն մէջ եղած Թարգմանութեանց մէջ մեծ մասն ունեցած պիտի ըլլայ Խորենացին՝ իր անխոով և բազմավաստակ գրչովը, այնչափ չենք կրնար ուրիշակի հաստատել թէ որոնք են իրեն հա-

բազատ թարգմանութիւնքը. միայն քանի մը գրոց վրայ եղած կարծիքները պիտի յիշատակենք՝ թարգմանութեանց վրայ խօսած առեններս։

Համայն իւր սկզբնագիր երկասիրութեանցը վրայ խօսինք։ Աստոց մէջ առեներն գերազոյն տեղը կը բռնէ իրատմբը իւր Պատմագրութիւնը, որ այսօրուան օրս այլ եւ այլ լեզուներ թարգմանուած, եւ գրեթէ աշխարհածանօթ գիրք մը եղած է։

Հեղինակին բուն նպատակն եղած է այս գրքիս մէջ՝ Հայոց պատմութիւն մը չափագրել, այն ազգին ծագմանէն ինչուան իւր օրերը։ Ասիկայ էր նաև Սահակայ Բագրատունեաց իշխանին փափաքը, որ դպրենացի աղաչեց այն երկասիրութեան ձեռք զարնելու։

Բայց Հայոց պէս հին ազգի մը պատմութիւնը՝ այլ եւ այլ վերաբերութիւններ ունեցած էր ուրիշ թէ գրացի եւ թէ մերձաւոր ազգաց եւ աշխարհաց հետ. որով բնականաբար Հայոց պատմութեան հետ այն ազգաց պատմութիւնն այլ իր մասը կ'ունենար այս գրուածքիս մէջ. եւ այս նկատմամբ աւելի սիրելի եւ հետաքննութեան արժանաւոր սեպուած է Եւրոպացւոց խորենացւոյն գրուածքը։ Այս վախճանին հասնելու համար՝ հարկ էր որ Մովսէս չէ թէ միայն ազգային՝ այլ նաև օտար աղբերաց դիմէ, և անոնց գրուածոց քննութեամբը աւելի հաւատարիմ և ախորժա-

կան ընէ իւր պատմութիւնը։ Ուստի և Մովսէս գլխաւորաբար հինգ գլխաւոր աղբերաց օժանդակութեանը վոյթ ունեցեր է. այսինքն 1. Յունական, 2. Ֆաղդէական, 3. Ասորական աղբերաց, 4. Աստուածաշունչ գրոց, և 5. Ազգային աղբերաց։

Բայց արտաքին պատմիչներէ, չէ ուզած ամենևին օտարանալ նաև ի սուրբ գրոց, ինչպէս իւր վիճակն, գիտութիւնը և սրբութիւնը կը պահանջէր. ուստի և ջանացած է սուրբ գրոց ծննդաբանութիւնքն համեմատել, և կարելի եղածին չափ յարմարցընել իւր ազգային աւանդութեանցը. և ի հարկէ ունեցած է ասոր մէջ իւր դժուարին աշխատանքը. և չկարենալով յամենայնի զուգընթանալ ոչ նուիրական և ոչ ալ ազգային, կամ արտաքին օտար աւանդութեանց և պատմութեանց հետ, հարկ եղեր է երբեմն որ այս վերջիններս հակառակի, և անով ոմանց առջևը կասկածելի եղեր է իր հաւատարմութիւնը։ Այս դժուարութեանց մէջ աւելի խոհեմութիւն և պարտ սեպեր է Մովսէս՝ սուրբ գրոց հետևիլ. և ամենէն աւելի իրեն գրուածքին նմանողութեան գաղափար առնուլ դիւրաբերիս. ինչպէս որ այլ և այլ տեղ, և ի մանաւանդ առաջին գրոց երրորդ գլխոյն մէջ կը գրուցէ։ Եւ սակայն պատմութեանցը մէջ՝ հին ժամանակաց վրայ խօսելու ատեն՝ քրիստոնեայ

հեղինակաց կարծիքները մէջ չիբերեր, այլ Բազմավէպ Ա.ղեքսանդրի, Աբիւդենեայ, Կեփալիոնի և այլոց, որոնց գրուածներն առիթ տուած են իրեն քննելու և վիճելու՝ սուրբ գրոց և հին հեթանոսութեան պատմական աւանդիցը մէջ եղած, և իրարու հակառակամարտ կարծիքները Ա.յսաշխատանաց մէջ ալ ընդհանրապէս հետեւողեղած է Խորենացւոյն Եւսեբիոսի. վասն զի անանկ արտաքին պատմիչներ կը չիշատակէ՝ որոնք իւր ժամանակը արդէն կորսուած էին, և որոնց միայն քանի մը հատուածքը՝ իրմէ ժամանակաւ երիցագոյն՝ Կեսարիոյ եպիսկոպոսին (Եւսեբիոսի) ձեռքըն անցած էին։

Տեսնենք հիմայ այն մատենագիրներն՝ որոնց գրուածոց օժանդակութեամբն և քննութեամբ շարագրեր է Մովսէս իր Պատմութիւնը։ Անոնց մէջ թէ կարգաւ՝ թէ մատուցած կարեւոր ծառայութեամբը առաջին է Մարիբաս, որուն վրայ արդէն խօսեցանք։ Իրմէ ետքը կու գայ Բերոսոս, կամ իւր շարագրողը՝ Ա.ղեքսանդր Բազմավէպ, որ Քրիստոսէ 100 տարի առաջ է, և որուն բազմաթիւ հեւտաքրքրական գրուածոց մեծ մասը կորսուած են։ Հնոց մէջ յարդի էին Բազմավիպին գրուածները, և որուն երկասիրութեանց միջնորդութեամբը այլ և այլ պատմական ընտիր հատուածներ հասած են ձեռնարկիս. ոչ ոքն ընդհանրապէս իւր քաղդէական կամ

Աստուածաշունչ գրքերէն առնուած են, և զոր Հրէից կոչուած գրուածէն։

Ա. Յ և այլ տեղուանք կը յիշատակէ Խորենացին գՅովսեպոս, և կ'երևնայ թէ հմուտ Հեբրայեցւոյն գրուածոցը կատարեալ տեղեկութիւն ունեցած ըլլայ։ Իր մէն առնելով կը յիշատակէ Սեթայ կանգնած երկու սիւները. Յուլիոս Աֆրիկանոս ժամանակագրական պատմութեան հին գերորդ գրոց մէջ աւանդուածներն՝ անոր խօսքերով կը հաստատէ. և դարձեալ քանի մը խօսքով հրէայ պատմչին մէկ հատուածը կը հաւաստարմացընէ՝ Միհրդատայ մահուանը նկատմամբ, զոր Պոմպէոս երիթովի քով լսեց։

Կը յիշատակէ դարձեալ Խորենացի և գՆեմպրովն՝ առնալ յԵսեբեայ, երբոր Շամիրամայ ի Հնդիկս ըրած արշաւանաց պատմութիւնը կ'ընէ։ Ու տարակուսելով անոնց հարազատութեանը վրայ, ստուգապէս կը սեպէ ի Մարիբասայ պատմուածները։

Սիբիլլայից ալ յիշատակութիւնը կ'ընէ Խորենացին։ Հինք Սիբիլլայից կամ մարգարէուհեաց գուշակութեանը մեծապէս հաւատք կ'ընծայէին, և բոլոր Յունաստանէն, Ասիայէն և Եգիպտոսէն կը հաւաքէին խնամով անոնց չատ անգամ անհաշան և անհաւատալի պատգամները։ Վարդան կ'աւանդէ իրեն ժամանակին համար՝ թէ տասնէն աւելի Սիբիլլայք կը համրե-

էին, և Թէ անոնց պատգամները խնամ-
քով պահուելով Հռոմայ մեհեանները-
մէջ, ինչուան իր ատենը հասած էին։ Ա-
սոնց մէջ նշանաւոր և աւելի համբաւեալ
սեպուածն էր Պարսկային կամ Քաղդէա-
կան սիբիլլան։ Ասիկայ է նաև Խորենա-
ցւոյն յիշատակածը, զոր Ներոսեան կը
կոչէր՝ անկէ յիշուած ըլլալուն համար։

Խորենացին՝ Ա.րշակայ առաջնոյ Թագա-
ւորութեանը վրայ խօսելու ատենը, այլ
և այլ յոյն հեղինակաց հատուածները
մէջ կը բերէ, որոց շատին՝ լոկ անուան-
քը, և այլոց ալ միայն գրուածոց քանի մը
հատուածներն հասած են ձեռնարկիս։

Ասոնց կարգէն է Հիւսպողիդոս մա-
տենագիր մը, որուն միայն անունը մեզի
հասած է, կամ Թէ ըսենք՝ նոյն իսկ ա-
նունն անծանօթ է շատ հմուտ բանասի-
րաց։ Վասն զի չենք կրնար կարծել Թէ Խո-
րենացին ուզենայ ակնարկել Հիւսպո-
ղիտոս եպիսկոպոս Բոստրացւոց, որուն
բարոյական քանի մը ճառերուն հատուած-
ները հասած են ինչուան մեր ձեռքը հին
թարգմանութեամբ։

Նիկատանեոսի վրայ խօսելուն ժամա-
նակ՝ կը յիշատակէ Մովսէս և զՄանե-
թոն. և զՆիկատանեոս՝ հայր կը համարի
մեծին Աղեքսանդրի։ Բայց որովհետև
աշխարհածանօթ է անուանի ինքնակալին
հայրը՝ փիլիպպոս Մակեդոնացի, հաւա-
նականաբար Աղեքսանդրի վրայ եղած ա-

ռասպելախառն պատմութիւններէն առած է Խորենացին։

Հինք՝ այլ և այլ երկպառակ կարծիքներ ունէին Կիւրոսի՝ կրնսոսի դէմ տուած պատերազմին վրայ. և այս նկատմամբ ալ այլ և այլ յոյն պատմագրաց հատուածները մէջ կը բերէ Խորենացին։ Իրեն քննած և ձեռքն ունեցած չատ պատմագրաց կարծիքին համեմատ, ոչ երէք Կիւրոս՝ այլ Աստիագես եղած է Լիւդացւոց թագաւորին հետ պատերազմողը, զինքը բռնողը և մահուան դատապարտողը։ Իւր այս կարծիքը հաւաստարմացընելու համար՝ Խորենացին մէջ կը բերէ Պողիկրատ, Եւագր, Կամադրոս և Փլեգոնիոս (Փլեգոն) պատմիչները։

Պողիկրատ այն մատենագիրներէն մէկն է՝ որոնց միայն անունը մեզի հասած է։ Աբենէոսի մէջ բերած մէկ հատուածէն՝ կրնայ ենթադրուիլ թէ այլ և այլ գրուածներ չարագրած ըլլայ այս մատենագիրը։ Աբենէոսի հատուածը՝ լակոնական ըսուած գրքէն է, ուր Խորենացւոյն յիշատակածը տարբեր գրքէ մը կ'երևնայ, որ հաւանաբար կ'աւանդէր Ասիոյ մէջ հին աւանդէն՝ ի վեր կատարուած դէպքերը։

Եւագրոս՝ նոյն է անշուշտ ընդ Եւագորայ՝ որ եգիպտական պատմութիւն մը շարագրած է, զոր կը յիշատակէ Սուիդաս, և որուն գրուածքը ծանօթ էին Պլինիոսի։

Կամադրոս հեղինակ է պատմական դըրքի մը՝ որ կորսուած է, և զոր միայն Խորենացին կը յիշէ։

Իսկ Փլեգոն՝ Տրալլացի պատմիչ մըն է, որուն հատուածները կը յիշեն Սուիդաս, Ստեփանոս բիւզանդացի, Յուլիոս Ափրիկանոս, և զոր կը յիշեն Եւսեբիոս, Փոտ, Որոդինէս, Միւնկլոս, Կոստանդին Պորփիւրոժեն, և այլք։

Յոյն պատմագիր մըն է նաև Արիստոն Փելլացի, որուն գրուածքէն առած կ՚երևնայ Խորենացին Հրէից ապստամբութեան դէպքը, Ադրաշէս երկրորդի մահուընէն ետքը։

Խորենացին երբ կը հասնի Պարթեւաց հարստութեան ժամանակը, և Սասանեանց՝ Պարսից աթոռոյն տիրապետելը, ուրիշ աղբերաց դիմելու հարկ կը տեսնէ։ Եւ թէպէտ ընդհանրապէս խոռոհրուտի հետևող կը ցուցընէ ինքզինքը այն ժամանակաց դէպքերուն գրութեանը մէջ, սակայն զրեթէ բոլորովին անծանօթ քանի մը յոյն պատմիչներ ալ մէջ կը բերէ։ Ասոնք են Պաղնփատ, Պորփիւր և Փիլեմոն։ Պաղնփատ կը յիշատակեն Սուիդաս և Ստեփան Բիւզանդացի։ Սակայն կը կարծուի թէ այլ և այլ հատուածներ պատմիչներ եղած ըլլան։ Պորփիւր Տիւրացի պատմիչ մըն է, որուն գրուածոցը այլ և այլ հատուածները հասած են մինչև առ մեզ։ Իսկ Փիլեմոն՝ բոլորովին անծանօթ

անուն մըն է. և անտարակոյս զատ է այն համանուն մատենագրէն՝ զոր Պլինիոս կը յիշատակէ։

Կը թողունք յիշել զԵւսեբիոս, զՓիլոմ-լիանոս և զայլս։

Բայց ի յունական աղբերաց՝ ուրիշ պատմական հարուստ բովք մըն ալ հետազոտեր է խորհնացին. այս ինքն արամայական դպրութեան աղբերքը, որ հնթանոս ժամանակաց մէջ՝ քաղդէական դպրութիւն կը կոչուէր, և քրիստոնէական դարուց մէջ ասորականի փոխուեցաւ։ Այս դպրութեանս կը վերաբերին Բերոսոս, Մանբոնիատոն, Աբիւդենոս, և վերջին ժամանակաց մէջ՝ Բարդածան, և այլք։

Բերոսոսի անունը՝ մեծապէս յարգի ու ծանօթ էր հնոց, և մանաւանդ Յունաց մէջ, որոնք ընդհանրապէս իրեն կ'ընծայէին այն ամէն քաղդէական դպրութեան վերաբերեալ գրուածներն, որոնց տեղեկութիւնը ինչուան իրենց հասած էր։ Խոհնացին ալ՝ հաւանականաբար առանց տեսած ըլլալու անոր գրուածներն, զինքը ի վկայութիւն կը կոչէ, յԵւսեբեայ առնելով, ինչպէս որ Եւսեբիոս ալ Բազմավէպ Աղեքսանդրէն։ Կ'երևնայ թէ ինքն Բերոսոս ժամանակաւ մերձաւոր էր Աղեքսանդրի, և ըստ յունական աւանդութեանց՝ ոչ միայն այլ և այլ պատմական գրուածներ շարադրած էր, հապա նաև աստեղաբաշխութեան և աստեղագիտութեան վրայ գրուածներ։

Ասոնցմէ զատ աչքին առջև ունեցած էր Խորենացին Ղևրուբնա, Ուղիւզ, Բարդածան և Խոռոհրուտ պատմչաց գրուածները, որոնց վրայ արդէն խօսած ենք համառօտիւ։ Պարձակալ ազգային դիւանական գրուածներ, որոնք բազմաթիւ էին իւր ժամանակներըը, այլ և այլ ազգային աւանդութիւններ և երգեր։

Ասոնք են Խորենացւոյն հետազօտած օտար, արտաքին և ազգային աղբերքը։ Հիմայ տեսնենք իւր պատմութեան ընթացքը, և անոր համառօտ քննութիւնն ընենք։

Խորենացւոյն Հայոց Պատմութիւնը. — Եր֊կը գիրք բաժնուած է այս երկասիրութիւնը։ Առաջին գիրքը՝ զոր ինքն Ցիւնդրանաւորիւն Հայոց մեծաց կը կոչէ, Հայկազանց թէ նահապետական և թէ թագաւորական պատմութիւնը կը բովանդակէ. ու կը սկսի մանուածոր թղթով մը կամ ընծայականաւ առ Սահակ ասպետ Բագրատունի՝ որ նոյն պատմութեան չարագրութիւնը յանգրած էր իրմէ։ Երբը իւր աշխատասիրած գրքին աղբերացը վրայ խօսելով, կը ցուցընէ թէ առնի Ցունաց հետևող եղած է քան թէ Քաղդէացւոց և Ասորւոց. որոնք առնի կերպով մը մեր ազգային յատուկ յիշատակներն ամփոփելուն համար՝ առնի յարմարագոյն կրնային՝ կամ պէտք էին սեպուիլ նմանողութեան. սակայն Խորենացին իւր բըն֊

նած ընթացքն արդարացընելու համար՝ Յունաց ազգին ուսումնական գերազանցութիւնը, պատմութեանց ճշդութիւնը, և հետազօտութեանց փոյթը մէջ կը բերէ, որով իրաւամբ «մայր և դայեակ ամենայն իմաստից» կոչուած են, և մեծարուած։

Բայց որովհետև արտաքին ազգերը բաւական չէին ազգային պատմութիւն մը ամբողջ կազմելու համար, հարկ էր որ նոյն ազգին մէջ գտնուած պատմագրաց հետ ալ խորհրդակցի. և ահա հոս էր Խորենացւոյն համար ամենամեծ դժուարութիւն մը. որովհետև ինքը պիտի ըլլար ամբողջ ազգային պատմութիւն մը առաջին չարազրողը, և այն պատմութեան յօրինմանը համար պէտք եղած նիւթերը մատակարարող ազգային պատմիչներ կը պակսէին։

Ինչէ՞ն առաջ կու գար այս պակասութիւնը։ Խորենացին ազգին նախարարացը և թագաւորաց անիմաստասէր բարուցը կու տայ. «Իրաւ, կ'ըսէ, պղտիկ, սակաւաթիւ, քիչ զօրութիւն ունեցող և շատ անգամ ուրիշ զօրաւոր ազգաց հպատակ ժողովուրդ մը եղած ենք, բայց մեր մէջն ալ քաջութեան անուանի գործեր շատ հանդիպած են. որոնք կրնային պատմչի մը արժանաւոր նիւթ պատրաստել, ինչպէս նման դէպքեր մատակարարած են քաղդէացի, ասորի, եգիպտացի և յոյն պատմչաց։ Սակայն մեր իշխաններն չունէին, կ'ըսէ, այն իրաւացի փառասիրու-

Քիւնը, իրենց անուանքը և քաղաքեանց և գործոց յիշատակը աւանդելու յիշատակ. ուսոի և իրաւամբ կը զարմանայ Բագրատունեաց վրայ, զոր ազգին մէջ առաջին և միակ կը գտնէ այսպիսի բանի մը փափաքող. և այդ փափաքը արդիւնացընելու համար՝ ամեն դժուարութիւն յանձն կ'առնէ պատմիչը։

Եւ որովհետև, ինչպէս առաջ ալ յիշատակեցինք, Մովսէս իրեն գլխաւոր աղբիւր հետևողութեան ուղեր էր բռնել ըզսուրբ գիրս, և արտաքին պատմչաց խօսքերն և աւանդութիւններն կարելի եղածին չափ անոր հետ ընդհատացընել, այս աշխատանքը Ադամէն և նահապետներէն կը սկսի, որոց վրայ ուրիշ կերպով կը խօսին սուրբ գիրք, և բոլորովին տարբեր լոյս մը կը բանեցընեն Բերոսոս, Բազմավէպ և Աբիդենոս, թէ անոնց անուանքը նկատմամբ և թէ այն գործերուն զոր Աստուածաշունչը կը տայ անոնց. և կը ջանայ սուրբ գրոց ժամանակագրութիւնը՝ արտաքին պատմչաց հետ համաձայնեցընել։ Այս դժուարին՝ բայց հետաքննական աշխատանքին նուիրուած են Խորենացւոյն պատմութեան առաջին գրոցը՝ ինչուան ութերորդ գլուխները։

Այն գլխէն կը սկսի Մարիբասայ արգէն ծանօթ պատմութիւնն ընել, վաղարշակայ հրամանաւ մինչև ի Նինուէ երթալը, հոն արքունի մատենադարանին մէջ

ընդհանուր ազգաց պատմութիւն մը գրա-
նելը, և անկէց Հայոց աշխարհին և պատ-
մութեան վերաբերեալ տեղեկութիւնները
՝ի մի հաւաքելը, և անոր առաջնորդու-
թեամբը՝ ու շատ անգամ նաև խօսքերով
ալ կը բերէ Հայկայ, անոր որդւոցը՝ Ա-
րամենակայ, Հարմայի, Արամայ, Արայի,
և այլն, պատմութիւնները: Այս յետին
նահապետը՝ որովհետև պատերազմ ու-
նեցաւ Նինուէի հռչակաւոր Շամիրամ
թագուհւոյն հետ, և վճռաւոր մահ մը,
և այն մահուամբ Շամիրամ կրցաւ ին-
չուան Հայաստան մտնել և հոն իրեն բնա-
կութեան քաղաք հաստատել, Խորենա-
ցին նոյն թագուհւոյն իւր որդիքը կտրե-
լը, Ձրուան մոգէն՝ի Հայաստան փախուս-
տը, և Նինուասայ իւր որդւոյն ձեռքով
մեռնիլը՝ կը յիշատակէ, Կնփագիոնի հե-
ւեւողութեամբ. բայց աւելի հաւանակա-
նագոյն կը սեպէ Մարաբայ պատմութիւ-
նը՝ որ Շամիրամայ ինչուան՝ի Հնդիկս ը-
րած արշաւանքը պատմելէն ետքը՝ անոր
մահը կը դնէ՝ի Հայաստան, զոր և ազգին
քանի մը հանճարեղ առակներովն ալ կը
հաւաստումացընէ:

Շամիրամայ մահուընէն ետքը պատա-
հած դէպքերը, և Հայոց վրայ իշխող նա-
հապետաց և թագաւորաց ժամանակա-
գրութիւնը նորէն հարկ կը սեպէ Խորենա-
ցին միաբանել սուրբ գրոց և Քաղդէա-
ցւոց ժամանակագրութեանը հետ, Ա-

բայէ մինչև ՚ի Ջարմայր, որոնց համառօտ պատմութիւնը կ՚ընէ, յերկարելով իրեն ախորժական ու սիրելի Երուանդեան Տիգրանայ վրայ։

Վ՚ահէիւ՝ որ Ալեքսանդրի հետ պատերազմեցաւ, ու կեանքն և թագաւորութիւնը կորսընցուց, կը վերջացընէ Խորենացին իր Պատմութեան առաջին գիրքը, մասնաւոր յաւելուած մ՚ընելով՝ այն գրոց մէջ չատ անգամ յիշատակուած Բիւրասպի Ազդահակայ վրայ, և այն անձին նը կատմամբ պարսկական առասպելայց մէջ գտնուած դէպքերու։

Մովսէս իր երկրորդ գիրքը՝ բան միշտ պատմութեան Հայոց կոչած է. և կը բովանդակէ միջոցը՝ որ ՚ի մահէն Ալեքսանդրէ մինչև ՚ի Տրդատ, Հայոց պատմութեան ճոխագոյն և ընտիր մասը։ Որովհետև Արշակունեաց թագաւորութեան ծագումը՝ Ալեքսանդրի մահուամբ և անոր ընդարձակ տէրութեան բաժանմամբ եղած է, հարկ կը սեպէ պատմիչն այն հռչակաւոր աշխարհակալին մահը, և թագաւորութեանը բաժնուելուն յիշատակութիւնն ընել. որուն մահուընէն ետքը Սելևկոս կը թագաւորէ ՚ի Բաբելոն, կը նուաճէ զՊարթևս, ու երեսունևմէկ տարի թագաւորելէն ետքը իրեն յաջորդ կը ձգէ զԱնտիոքոս, որուն իշխանութեան ժամանակին որդի տարին՝ Պարթևք Մակեդոնացւոց լուծը կը թօթափեն, և որոց վրայ կը թա-

գաւորէ Ա.րշակ, և բոլոր արևելքը իր իշխանութեան տակ ձգելով՝ Մակեդոնացիքը Բաբելոնէն կը մերժէ, Հռովմայեցւոց հետ ալ կը կռուի, և իր քաջութեանը և համբաւոյն արհաւրօքը բոլոր տիեզերքը կը լեցընէ։ Իրեն կը յաջորդէ Ա.րտաշէս, և Ա.րտաշիսի՝ մեծն Ա.րշակ, որ Դեմետրեայ ու անոր որդւոյն Անտիպոնոսի հետ կը կռուի, որուն չիկրնար դէմ դնել Անտիգոնոս, ու զէնքերը ակամայ ձգելով՝ շղթայիւք կը բերուի ի Պարթեւս։ Ա.յսպէս աշխարհի երրորդ մասին տիրից, կ'ըսէ, Ա.րշակ։ Ա.յն փառաց և յաջողութեանը մէջ՝ իր վաղարշակ եղբայրը Հայոց վրայ թագաւոր կը դնէ Ա.րշակ. և աշխարհքը անոր յանձնելով, անոր սահմաններն ընդարձակելը իր զինուցը յաջողութեան և քաջութեան կը յանձնէ։ Իրեն վստահութեանը արժանի կ'երևնայ վաղարշակ. ոչ միայն աշխարհքին ներքին բարեկարգութիւնը հոգալով, այլ նաև տարածելով իր իշխանութիւնը. մինչև Պոնտոսի բնակչացը վրայ և մինչև ի Փռիւգաստան. զորոնք ոճով և մանրապատում կ'աւանդէ Խորենացին։ Վաղարշակ տարի կը թագաւորէ վաղարշակ, ու իրեն յաջորդ կը թողու զԱ.րշակ։

Անոր թագաւորութեան պատմութեամբը՝ Մարիբասայ երկասիրութիւնն ալ կը լրանար. ուստի և ուրիշ աղբիւրներէ հարկ էր հաւաքել հետևեալ դէպքերը։ Խորե-

նացի Եգեսիոյ դիւանացը մէջ՝ Ագիրիկա-
նոսի պատմութեան գրոցը հանդիպած էր,
որ մեր պատմութեանց վերաբերեալ ամեն
դէպքերը՝ նոյն դիւաններէն համառօտեր
էր։ Իրմէ և ուրիշ պատմագիրներէ կը
սկսի շարադրել Խորենացին իր երկասի-
րութիւնը, սկսանելով Արտաշէսէ առաջ-
նոյ՝ որ ի Պարսից նախագահութեան ի-
րաւունքը յափշտակեց, և անուանի և-
զաւ յազգանակաց բազմութեամբ, և հըր-
չակաւոր նաև յոյն պատմագրաց գրուա-
ծոց մէջ. որոց այլ և այլ վկայութիւններն
ալ մէջ կը բերէ Խորենացին. ու Իւդա-
ցւոց թագաւորութեան կործանումը, և
Կրեսոսի մահը, զոր Հերոդոտ, Պլուտար-
քոս, Յուստինոս և Վաղերիոս Մաքսիմոս
Կիւրոսի կ'ընծայեն, այն այլ և այլ յոյն
պատմչաց յատուկ խօսքերովը Խորենա-
ցին Արտաշիսի կու տայ։ Թէպէտ և նախ
ինքն ալ կը տարակուսի. «Ընդ որ տարա-
կուսեալ մեր՝ բազում խոյզ խնդրոյ ա-
րարաք, քանզի լսէաք ի պատմութեանց
ոմանց՝ Կիւրոսի սպանեալ զԿրիւսոս».
և այս է ստոյգն. իսկ այն Ցոյն պատմչաց
բսածն Արտաշիսի վրայօք՝ դեռ մեզի ալ
տարակուսելի և անլոյծ կը մնայ։

Անկէ առաջ կը տանի Մովսէս իւր պատ-
մութիւնը, Տիգրանայ հետաքննական և
մտադրութեան արժանի դիպուածոց վը-
րայ, և վերջը յաջորդաբար մինչև Տրդա-
տայ թագաւորելը և անոր մահը։ Հայց

այն դէպքերը՝ զոր արդէն այլք իրմէ առաջ ուսանած էին, ինչպէս Վերուբնա, Ա. Թանգեղոս, Գլակ և ուրիշները, ինքը համառօտ կերպով մը կը յիշատակէ։

Խորենացւոյն երրորդ գիրքը՝ Աբգարոս թագաւորին մերոց Հայրենեաց կը կոչուի, և որուն նպատակն է՝ ի սրբոյն Տրդատայ մինչև իւր օրերը հանդիպած դիպուածները յիշատակել. մինչև այն թշուառ առնները՝ յորս աչքովը տեսաւ Հայոց հայրապետական և արքունի աթոռոց ընկնալն. և այնպիսի փառաւոր լեցուն պատմութիւն մը դառն և արտաչարժ ողբերովը կը լմընցնէ։ Ողբ մը՝ որ նթէ գրողին սրտին արժանի ընթերցողներ ունենար՝ անշուշտ աղգին ապագային վրայ մեծ տարբերութիւն պիտի տեսնուէր։

Խորենացիէն քիչ առաջ՝ նման դէպքի և գրկման մը մէջ գտնուելով Գրիգոր Աստուածաբան, սրտաչարժ արձանական մը յօրիներ էր ի սուրբն Մկրտիտս Անտիոքայ հայրապետ. այն ճառին ընթերցուածը այնպիսի տպաւորութիւն մը ըրած էր Խորենացւոյն սրտին վրայ՝ որ գրեթէ չատ անգամ անոր խմաստները և խօսքերը կը գործածէ այս ողբին մէջ։ Նման ցաւոց հանդիպած ու հանգուանատիպ աղետից ականատես, զուգակից հանճարներ՝ նման լեզու ալ կը գործածէին։ Վասն զի Աստուածաբան՝ զՄկրտիտս կ'ողբար, որ առաւ ապաւէնն էր Քրիստոսի հաւատոցը,

ուսկից կ'ակնածէր և ուրացողն Յուլիա-
նոս. իսկ Մովսէս՝ զԱհակ և զՄեսրոպ՝
որ հաստատութիւն էին Հայաստանի հա-
ւատոյն և քաղաքականութեան, և որոնց
մահը՝ բոլոր աշխարհին կործանումը կըր-
նար ըլլալ: Անոր համար հառաչանօք կ'ա-
ղաղակէր Գրիգորիոս, «Ողորմիմ քեզ,
ով եկեղեցիդ. առ քեզ է բանս Անթո-
քոս քաղաքդ. ողորմիմ քեզ յանկարծա-
կի փոփոխմանդ այդմիկ»: Եւ Խորենա-
ցին. «Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայա-
ստանեայց»: Աստուածաբանն. «Նահա-
տակէր յաղագս ճշմարտութեանն քըր-
տամբք. իսկ Հարսն համբերէր՝ ողջախո-
հութեամբք զամուսնութիւնն չահելով. ժա-
մանակ էր ի մէջ յոլով, և ոմն սեղեխա-
բար յանդգնէր յանարատ առագաստն,
այլ Հարսն ոչ աղտեղանայր»: Ու Խորե-
նացին. «Երանի՛ առաջնոյ և երկրորդի
փոփոխմանն. դի էր ինչ ժամանակ հեռա-
նալոյ փեսային և փեսաւիրին, և Հարսնդ
համբերէր՝ ողջախոհութեամբ զամուսնու-
թիւն պահելով»: Կը թողունք յիշատա-
կել ուրիշ քանի մը նմանութիւններն ալ:

Խորենացւոյն այս ընտիր և անզուգա-
կան երկասիրութիւնը՝ գտած է իւր արժա-
նաւոր յարգն ալ ոչ միայն ազգայնոցն
առջև, այլ նաև բուն դիտութիւնն և ի-
մաստութիւնը յարգող Եւրոպայի դիմաց:
Աղբին մէջ այնչափ մեծ էր իր համբաւը՝
որ ինչպէս Յունաց մէջ պատմագրաց Հայր

սեպուած էր Հերոդոտ, և իր հեղինակութեամբն ամենուն առջև պատկառելի, այսպէս ալ Խորենացին՝ իր ազգային պատմութեան ունեցած հմտութեամբը, և հասուն անկողմնապահ քննադատութեամբ. անոր համար Ասողիկ՝ լոկ պատմագիր ըսելով դինքը կը հասկընայ. և ուրիշ տեղ մըն ալ իր պատմութեան գրոցը մէջ կը կոչէ զնա «Մեծն Մովսէս Հանդոյն Եւսեբեայ, որ քերթողացն անուանի Հայր»։ Կը թողունք յիշել ուրիշ վկայութիւնները՝ որոնցմով լեցուն են Խորենացիին ետքը եկող պատմագրաց երկասիրութիւնները։ Բայց ամենէն աւելի իրենց առ Խորենացին ունեցած մեծարանքը անուղ կը յայտնուի՝ որ իրենք ալ իրենց կողմանէ ազգային պատմութիւն մը շարադրելու ձեռք զարկած ատենին՝ կը ջանային յամենայնի իրեն հետեւող ըլլալ, ու երբեմն գրեթէ ընդօրինակող։ Այսպէս վարուած են Յովհաննէս կաթուղիկոս, Ուխտանէս, և ինքն իսկ Ներսէս Շնորհալի իր վիպասանականին մէջ։

Արեմտեայց մէջ ունեցած յարգն ու մեծարանքն ալ, իր Պատմութեան գրոցը բազմապատիկ թարգմանութիւններէն, ու գրեթէ եւրոպական դիրք մը ըլլալէն կը յայտնուի։

Անոր առաջին թարգմանիչն եղած է Պրէննէր անունով շուէտացի մը, որ նշանաւոր անձ մըն է իր ազգային մատենագրութեանը մէջ, և չիգիտցուիր թէ ինչ պատճա-

ռաւ Ռուսաց Մոսկուա քաղաքին մէջ արգիլուած էր ի բանտի։ Չոն իրեն քով բանտակից և կնակից ունեցաւ զՁովհաննէս Բարթուղիմէոս Յակինթեան Դոմինիկեան կրօնաւորը, սեղակ Հայերէն լեզուի. ուր Ձեռնարկեն ի՛նքնալով Խորենացւոյն այս պատմական երկասիրութիւնը, Հայագէտ կրօնաւորը քաղելով կամ համառօտելով կը թարգմաներ ի լատին, և Պրէններ ծանօթութեամբք կը ճոխացընէր, և զոր եղբը ապագրեց Ագոբհոլմ քաղաքին մէջ յամի 1723։ Իրմէ եղբը երկու անգիտացի եղբարք, Գաւրիէլեմս և Գէորգ Վիտսեն, թարգմանեցին ի լատին թէ Խորենացւոյն պատմութիւնը և թէ աշխարհագրութիւնը, և 1726ին ապագրեցին ի Լոնդրա։ Ասոնց Հայրը՝ Գաւրիէլեմս Վիտսեն Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ անգլիական լեզուի ուսուցիչ էր՝ Հայազգի Աղափիրեան Գրիգորի որդւոցը. ասոնցմէ սորվեցաւ Գաւրիէլեմս Հայերէն լեզուն, ու Լոնդրա դառնալով՝ սորվեցուց իր երկու որդւոցը։

Վիտսենեանցմէ զար մը եղբը գաղղիական թարգմանութիւն մը ըրաւ Լըվայեան, դասատու Հայկական լեզուի ի կայսերական Մատենադարանին փարիզու. և երկու անգամ ապագրեց, նախ ի փարիզ (1836) և ապա ի վիէնեակ (1841) բնագրին հետ, և զոր եղբը Ճոխացուց խորենացւոյն գրոցը մէջ եղած այլ և այլ անուանց երկար և հետախոյզ ծանօթութեամբք։ Ընտիր խմբագիրն թարգմանութիւն մըն ալ հրատարակեցաւ ի վիէնեակ ի Ս. Ղազար, ու երկու անգամ ապագրեցաւ (1841, 1850) Հմուտ ծանօթութեամբք։ 1841ին նոյն քաղքին մէջ հրատարակեցաւ ուրիշ իտալական թարգմանութիւն մը Գաբրիէլեդի Հայագէտ երիցուն աշխատասիրութեամբք։ Երկին ունա թարգմանութիւնք ալ եղած են այս դրբիս, առաջինը Յովհաննեսեան սարկաւագին Ձեռքով, որ և ապագրուած է ի Բեզրպուրկ. իսկ երկրորդը Լմմինեան Հմուտ բանասիրին Ջանիքը, ապագրեալ ի Մոսկուա ի 1858։

Ա. յօդուածի երկար և մթին ժամանակագրական և դանազան տղայոց ու դիպուածոց պատմիչն՝ նիթ հիմնական բանագատութեան

առջև տեղ տեղ սխալած երևնայ զար-
մանը չէ. բայց յիրաւի զարմանալի է խո-
բենացւոյն քիչ սխալիլն և անչափ աչխա-
տանքն ու քննութիւնն ստուգութեանց
համար, մանաւանդ 'ի ժամանակագրա-
կանս, որոց համար կ'երևայ թէ ՅաւելՀաած
կամ չորրորդ գիրք մ'ալ գրած էր։ Այս
Չորրորդ գիրքը կը յիշէ Թովմա Արծրու-
նի, և կ'իմացընէ որ անոր մէջ կ'ուան-
դուէին այն ամեն անցքերը՝ որ 'ի բարձմա-
նէ թագաւորութեանն Արշակունեաց՝ մին-
չև Զենոն կայսեր ինքնակալութիւնը. «Սա-
հակ այս, կ'ըսէ Արծրունին, այն Սահակ
է՝որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետան
Մովսէս, տիեզերահռչակեալ քերթողն,
զգիրս պատմութեան Հայոց մեծաց, հրա-
շաշաղան յօրինուածով, սկսեալ յԱդամայ
մինչ 'ի կայսրն Զենոն։ Որոյ ժամանակ
կենացն ձգեալ տեւեալ ամն հարիւր և
քսան, յի և պարարտ ծերութեամբ. որ-
պէս գրեալ ուանդեցաւ մեզ այս 'ի չոր-
րորդ գրուագի խոստաբանեալ պատմու-
թեանն Մովսիսի Խորենացւոյ՝ վերագար-
ձութեան 'ի վերայ երկցունց գրուագեալ
Հատուածին»։ Բայց այս չորրորդ գիրքը
ձեռուընիս հասած չէ, գէթ ամբողջ[1]. ինչ-
պէս նաև երրորդ գրոցը ցանկին վերջը յի-
շուածը «Տաղք չափաւ յինք և 'ի Սահակ
Բագրատունի»։

1 Տես Բազմավէպ, 1851, Մարտ։

Աշխարհագրութիւն. — Պատմութենէն ետքը՝ խորենացւոյն նշանաւոր և հետաքննական երկասիրութիւնը՝ իր Աշխարհագրութիւնն է. ասիկա թարգմանութիւն՝ քան թէ ինքնագիր երկասիրութիւն մը. վասն զի ընդհանրապէս պապայաղեքսանդրացւոյն և Պաղոմէոսի համանուն գրոցը համառօտ քաղուածն է: Ինչուան մեզի հասած ազատաղ ու խանգարեալ գրուածոյ օրինակները քննագատութեան տակ ձգող բանասէրք՝ չուզեցին խորենացւոյ հարազատ սեպել այս Աշխարհագրութիւնը. որովհետև անանկ անուանք և անզգուշութիւնք գտան ասոր մէջ՝ որ ժամանակաւ չատ կրտսեր են քան զխորենացին: Այս կարծեաց վրայ էր նաև Ենմարգէն գաղղիացի հայերէնագէտը, որ Աշխարհագրութեան գաղղիական թարգմանութիւնը հրատարակեց, բայց չընդունելով անոր հարազատութիւնը, ու կոչելով զայն «Աշխարհագրութիւն ստոյ Մովսիսի խորենացւոյ»: Սակայն հայկական հնախօսութեան գիտութեամբը պատկառելի անձ մը, Ինճիճեան վարդապետ, տուած է անոր պատասխանը, ուղղակի ընթերցուածներով սրբագրելով այն տարակոյսները որով կասկածելի երևցած էր խորենացւոյն այս աշխատասիրութիւնը[1]:

1 Հնախօսութիւն Հայաստանի Գ. 303—14:

Պիտոյից գիրք.—Այս անունով գրուած մը կ'ընծայուի Խորենացւոյն։ Հեղինակը՝ Թէոդորոս անունով աշակերտ մը ունեցած է, որուն ճարտասանականին ուսուցմը աւանդելէն ետքը, նոյն ուսման հրահանգացը մէջ գինքը վարժեցընելու համար, հարկ սեպեր է վարդապետին ինք իր կողմանէ օրինակներ ալ ընծայել, և անոնց նմանողութեանը փութաջան և յորդորամիտ ընել գինքը. և յունական ձայնով Պետք կամ Պիտոյից (χρῆα) կոչեր է այն գիրքը։

Տասն Ճառ կամ Գիրք կը բովանդակէ այս երկասիրութիւնը, և որոնց վերնագիրքն են Պէտք, Խրատ, Եղծումն, Համարակ տեղի, Ներբողեան, Պարսաւ, Բաղդատութիւն, Բարառնութիւն, Արտասանութիւն և Դրութիւն։ Ասոնք, ինչպէս ընթերցողը գիտէ, ճարտասանական ձևեր են. և այն ձևերուն վրայ վարժելու համար՝ այլ և այլ օրինակներ մէջ կը բերէ։ Բայց այն օրինակներըը ընդհանրապէս շատ հեռու կը մնան ճարտասանականին ուսումը աւանդող՝ կամ իրենց գրուածներուն անոր կանոնները սահմանող յոյն և լատին մատենագիրներէն. և աւելի մեծաւոր կրնան սեպուիլ թէ ոճով և թէ գրուածքի կերպով այն ճարտասաններուն երկասիրութեանցը՝ զորոնք Եպիսկոպոս աւետրիչ և խանգարիչ կը սեպէր բուն և հարազատ ճարտասանութեան, և ընդհան-

բապէս սոփեստէս կամ իմաստակ անուն նը կու տար անոնց։ Անոնց կարգէն կըր նային սեպուիլ Հերմոգենէս տարսոնացի, Թէոնի, Աքիոնիոս դրամատրիկոս, Լիբանիոս՝ Բարսղի բարեկամը և Ոսկեբերանի վարժապետը, և այլք։

Այս պատճառաւ ոմանք խորհեցուցին այս երկասիրութիւնը անհարազատ կը սեպեն և կամ թարգմանութիւն. և իրենց տարակուսանացը գլխաւոր պատճառ կը համարին այն ոճոյ զանազանութիւնը՝ որ յայտնապէս կը տեսնուի Պիտոյից գրոց և Պատմագրութեանը մէջ։

Բայց ազգային ընդհանուր աւանդութիւն մը գէմ կ'ելլէ այս կարծեաց, որ Պէտքը՝ Մովսիսի հարազատ կը համարի. և որուն կրնայ երաշխաւորել ժամանակաւ կրասեր պատմչի մը, Կիրակոս Գանձակեցւոյն վկայութիւնը, որ յայտնապէս կը գրուցէ. «Աքանչելին Մովսէս (չարադրեաց) զՀայոց պատմութիւնն ի խնդրոյ Սահակայ Բազրատունեաց... և զՊետքն ի խնդրոյ Թէոդորոսի ուղեին»։ Իրեն ձայնակից է Ասողիկ. «Ի ժամանակս (Դիւտայ կաթուղիկոսին) էր մեծ փիլիսոփոսն Հայոց Մովսէս, որ զնաթարատականան կան արուեստ ի գործ առնու ի Հայս»։ Նոյնպէս ալ, թէպէտ աւելի անորոշ խօսքերով, Արծրունին, Դրիգոր Մարկաւագապետ, և այլք, որք միաբան անուանի փիլիսոփոս և քաջ հռետոր կը կոչեն զինքը,

և քերրող և քերրողանապ[1],

Մեղի հաւանական կ'երեւնայ ազգային աւանդութեան և անոր պատմչաց ձայնակցիլը, անոր դէմ հակառակող քանի մը պատճառները ցրելու աշխատելով։ Այս պատճառներուն մէջ գլխաւոր կրնայ սեպուիլ զրքին հելլենաբանութիւնը։ Այդ թերութիւնը, եթէ հաճոյ երեւնայ մէկուն առանկ անուանել, Մովսէսի ուրիշ գրուածոցը, և նոյն իսկ Պատմութեանը մէջ ալ կը տեսնուի. և ասիկայ արդիւնք է այն լեզուին ուսմանցը մէջ անխոնջ պարապմանը, և քիչ մըն ալ հելլենասիրութեանը, որուն մէջ ընկած կրնան սեպուիլ ոչ միայն խորենացին, այլ իւր աշակերտակիցներէն ալ մէկ քանին, և այն պատճառաւ իրրև նորութեան մը հեղինակք՝ ազգին մէջ բաւական հակառակութիւն և ընդդիմութիւն ալ կրեցին։

Երկրորդ պատճառ, ոճոյ և մտածմանց տարբերութիւն, որ մեծ խոչիր մը կը դնէ Պատմութիւնը և այս երկասիրութիւնը արտադրող հանճարոյն մէջ։ Սակայն նոյն

[1] Միայն յետին գարուց հեղինակ մը, Աբաքէլ վարդապետ, Աշխարհին կ'ընծայէ Պատմից գիրքը. « Դաւիթ Աշխարհ հինգ գիրք գրեաց. զԱհմանեան, զԲարձրացուցեալն, զԳիւռն, զՄիհրնուէթեան քերականին և Արիստոտէլի »։ Բայց ուրիշ անանուն մատենագիր մը՝ Պատմից տեղ Աշխարհին երրորդ երկասիրութիւնը կը տեսնէ իրրև գիրքը։

ոճը և դրիչը կրնանք նկատել յայտնապէս նաև այն ճառին մէջ՝ զոր Խորենացին յօրինած է ի գովեստ սրբուհւոյն Հռիփսիմեայ, և որուն վերջերը՝ զօրաւոր պատճառ մը ինքը կու տայ՝ արդարացընելու իր ոճը. այսինքն հասակին մանկութիւնը։ Նման պատճառ մը թերևս առիթ եղած է Խորենացւոյն՝ Պիտոյից դրոցը մէջ այդպիսի ոճ մը բռնելու. իր ժամանակին ճարտասանական արուեստին տղայութիւնը, որ չէր ուզեր իրեն նմանողութեան գաղափար ընտրել նուիրական բեմերու վրայէն ըսուող սուրբ հայրապետաց աննման լեզուն, այլ լատրանաց մէջ գործածուած, ու փիլիսոփայութիւնը ճարտասանութեան հետ խառնել կարծող վարժապետաց լեզուն և ոճը։

Ուրիշ պատճառ մըն ալ՝ որով կը հաւանինք Պիտոյից դիրքը Խորենացւոյն ընծայել՝ այս կ'երևնայ՝ որ ինչպէս ի Պատմութեան, ասանկ ալ ասոր մէջ չատ անգամ վկայութիւն կը բերէ Փիլոնի խօսքերէն, նման շարադրութեամբ։

Բայց եթէ յունական մատենագրաց ուսման հմտութիւն մը երևնալով այն գրքին մէջ, այն պատճառաւ ուզենայ մէկը թարգմանութիւն սեպել Պիտոյիցը, կրնանք ալ կարծել թէ թարգմանաբար յօրինած ըլլայ Խորենացին այս երկասիրութիւնը. թէպէտև յունական մատենագրութեան հմտութիւնն ալ կրնանք ընծայել համար-

ձակ՝ իր կենաց մեծ մասը անոնց դրուա-
ծոցը ու մատենադարանաց և ճեմարա-
նաց մէջ անցընող անձի մը։

Միայն թէ կրնայ ալ ենթադրուիլ թէ դաղափարադրի չէ լոկ չարագրութեան և լեզուին մէջ մտահաճոյ յատկութիւնները ըլած ըլլան, այլ նաև նիւթոյն մէջ փոփոխութիւն մտցընելով ու ճառերէն մէկ քանին աւելցընելով։ Աւանկ կրնան համարուիլ Պիտոյից դրքին վերջը եղող երեք Բարառնութեան օրինակները, որ անջատուած անձի, և կամ թերևս աշակերտի արտադրութիւնք են։ — Հին ձեռագրի մը մէջ ալ Գաւթի և Գողիադայ մենամարտութեան նկարագրութիւնը՝ կ'ընծայուի Խորովոյ Թարգմանչի։

Ա.յսչափը բաւէնէս հոգն ալ, աւելի ու մանրախոյզ քննութիւնը՝ ժամանակին կը յանձնենք։

Պիտոյից գիրքը առաջին անգամ տպագրուած է օրինակաց բազմաւութեամբ և հմուտ ծանօթութեամբ (Հ. Յովհաննէս Վ. Զոհրապ.) ի 1796. որուն համեմատ եղած է նոր տպագրութիւնն ի 1841։

Խորենացւոյն մանր գրուածներուն. — Խորենացւոյն մանր գրուածոցը մէջ առաջին է Պատմութիւն սրբոյն Աստուածածնի և պատկերի նորա կոչուածը։ Ազգային եկեղեցական պատմութիւնը կ'ուսանի՝ թէ Հոգւոյ վանացը մէջ՝ յերկրին Աղձեացոց, կիսպարիս փայտէ յօրինուած սրբոյ կուսին

պատկերը կը մեծարուէր, Յովհաննու ա-
ւետարանչին ձեռագործ սեպուելով։ Ա-
տուածածնայ մահուանը ժամանակ՝ երբ
մեռնելու հրաշքով մը ամէն առաքեալք
իրեն քովը գտնուեցան, Բարթուղիմէոս՝
որ 'ի Հայս առաքելութեամբ սուրբ աւե-
տարանը կը քարոզէր, չկրցաւ անոնց հետ
միասին գտնուիլ. ու Սրբուհւոյն մեռնե-
լէն ու մարմնոյն 'ի գերեզման ամփոփուե-
լէն ետքը հասնելով, միւս առաքեալք ա-
նոր սրտին ցաւը մեղմացընելու համար՝
այն պատկերը իրեն պարգևեցին։ Բար-
թուղիմէոս ալ դառնալով 'ի Հայս՝ եկե-
ղեցւոյ մը մէջ դրաւ զայն 'ի յարգութիւն,
թուին ալ վանք չինեց, որ կոչեցաւ Հոգեաց
վանք։ Աբգարեանաց իշխանը Սահակ՝ որ իւր
համանուն Բագրատունեայն խնդրանքը՝
Խորենացւոյն յօրինած Պատմութեան գիր-
քը կարդացեր էր, աղաչանաց նամակ մը
գրեց առ Մովսէս՝ խնդրելով իրմէ որ Հոգ-
ւոց վանքին մէջ եղած պատկերին վաւե-
րական պատմութիւնն ընէ ու իրեն ղրկէ։
Ան թղթին մէջ՝ «հրեշտակ և սպասաւոր
մեծութեանցն Քրիստոսի, կը կոչէ զնա,
և այր երկնակենցաղ և լուսաւորիչ հա-
ւատոյ... երկրորդ Սահակ և Մեսրովբ՝
յետ գնալոյ նոցա առ Աստուած»։ Խորե-
նացին ալ կատարեց անոր փափաքը։

Մեսրոպեանները դարու գրչագիրը մը՝ հեռևեալ
հետաքրքրական տեղեկութիւնը կու տայ Խոր-

նացեալն այս երկասիրութեանը վրայ. « Զայս ցանկալի պատմութիւնս՝ բազում՝ ըղձիւ և ցանկական յուզմամբ գտեալ մեծ հաւատոյն Մովսէս՝ որ կոչի Խորենացի. և էր ընդալօտացեալ՝ ի մեզոց յարկաց, և ուր ուրեք գտանէին. մինչև՝ ի ձեռն կրօնաւորի միոջ գտեալ՝ որ էր յերկրէն Խոր Հայոց, ՝ի գաւառէն որ կոչի Ձորոյ գետ, ՝ի համբաւեալ ուխտէն Սանահին անուանեալ, պատահումն բարի ինն եղև. և հրամայեաց մեծն և բնաւն ՝ի լաւ՝ Աստուած, որդի Սենեքարիմայ, Հայոց նահանգի վասպուրական կոչեցեալ. ոըոյ ժամն փրկութեան հաւատացեալ էր Աստուած՝ պատկեր մեր տեառն ՝ի բաժին Աշտատացեաց. հրամայեաց գրել մեծաւ յուսով և խընդութեամբ բազմաւ. որոյ անուամբ պարսպեալ եղեցի մեծաշուք խիտանութիւն նոցա, ջրից հաբազատ եղբարց՝ Դաւթի և Աստոյ, Կոռանանդեայ և Համազասպայ, գեղեցիկ և չքեղազարդ Բագրատունեաց »:

Ներբող ՝ի սուրբն Հռիփսիմէ. — Երիտասարդութեան առոյգ հասակին մէջ շարագրեց Խորենացին այս ներբողը, դրատելով այն հրաշագեղ կուսանը և իր ընկերակիցքը, որոնք՝ ի Հայաստան՝ իրենց աբեամբը աստուածանդիմութեանն խաչը փարատելու նախակին առիթ եղան: Այսպիսի սրտաշարժ պատմութիւն մը, և անանկ արգասաւոր վկայութիւն, նոր հոգեդ մը ազդած են ՝ի Մովսէս, վարդապետն և աշխոյժ խմբատներով և բացատրութեամբք՝ իր սրտին զգացմունքը, և իրեն օգտոյն առաջին քրտունքը նուիրելու

անոր որ «զբեղ սիրէ՝ սիրեցեալդ յիսկա-
պէս բարւոյն»։ Այսկէ զատ է Հռիփսի-
մեանց ճանապարհորդութեան պատմու-
թիւնը։

Ճառ վարդապետի. — Զոր Խորենացւոյն
ուրիշ գրուածոցը հետ կը յիշատակէ կի-
րակոս. բայց իմաստներուն և ոճոյ անհա-
մեմատ տարբերութիւնը կարծել կու տայ
թէ ուրիշ համանուն Մովսիսի մը գրուածքն
ըլլայ։

Աճառագատ կամ երկբայական գրուած-
ներ. — Մովսէս անուամբ այլ և այլ վար-
դապետներ երևցած են մեր ազգային եկե-
ղեցական նուիրապետութեան մէջ, յո-
րոց և ոմանք քերթող ալ կոչուած, ինչ-
պէս Սիւնեաց եպիսկոպոսը. զոր նորը
սիրտ յիշատակենք. սոցա գրուածքը եր-
բեմն իրարու ընծայուած են. և ինչպէս
երբեմն Խորենացւոյն երկասիրութիւնքը՝
սոցանմէ մէկուն, այսպէս ալ անոնց գը-
րուածքը՝ Խորենացւոյն կարծուելր և այն-
պէս աւանդուելր են։ Այսպիսւոց կար-
գէն է նաև Մեկնութիւն կարգաց եկեղեցւոյ,
որուն մէկքանի հատուածքը Խոսրովու
համանուն երկասիրութեանը մէջ կը տես-
նուին այսպիսի մակագրով. «Մովսեսի
քերթողի». և Աշարանւոյն ընթերցուա-
ծոց մեկնութեան հնագիր օրինակին մէջ.
«Մովսիսի քերթողահօր Հայոց վարդա-
պետի և իմաստասիրի յաղագս կարգաց ե-
կեղեցւոյ»։

Ա. յս անհարազատ գրուածոց կարգէն կրնան սեպուիլ նաև քերականական երկասիրութիւնք։ Որչափ ստոյգ է թէ մեծ հմտութիւն ունեցած էր Մովսէս յայսմ դիտութեան, և թէ այն պատճառաւ ալ եղած է իւր Վերծողաց կամ Վերծողահայր կոչումը, այնչափ ալ անստոյգ կամ անհարազատ՝ քերականական գրուածոց մէջ իրեն ընծայուած քանի մը հատուկոտորները, թէպէտ և որոշ և բացայայտ խոստովանութեամբ։ Ասոնցմէ կրնան սեպուիլ,

1. «Մովսիսի Խորենացւոյ բան իմաստութեան» կոչուածը. որ ընդհանրապէս քերականական արուեստին վրայ համառօտ տեղեկութիւն մըն է։

2. «Յորդ երջանիկ հօրն Մովսիսի Թարգմանչի և վերծողի՝ մեկնութիւն քերականի». որ Դիոնեսիոսի Թրակացւոյ յոյն լեզուի քերականութեան մեկնութիւնը կրնայ սեպուիլ. և որուն հետևողութեամբ վարուած են իրենց համառուն երկասիրութեանցը մէջ՝ Խորենացիէն ետքը եկող գրեթէ ուրիշ ամեն քերականները։

3. «Մովսիսի Վերծողի յաղագս քերականութեանց»։ Ա. յս գրուածքը՝ քերականութենէ բարձր նպատակ մը ունի, լեզուի ուսմանէն աւելի հաւատոց և աստուածաբանական ճշմարտութեանց տեղեկութիւնը աւանդելու։ Մանաւանդ ան. ձի մը գրուածք չէ ասիկա, այլ՝ ի զանա-

զան հեղինակաց հաւատեալ. որոնց և ա-
նուանքը նշանակուած են գրոց լուսանցի-
ցը մէջ. և են բաց ի Մովսէսէ քերթողէ,
Դաւիթ անյաղթ, Սահմանոս սիւնեցի, Մա-
դիսարաս, Համամ, Աբիստակէս, Գէորգ,
և այլք։

Համառօտ մատենիք մըն ալ կը գտնենք
յԱղթամարայ՝ խորենացւոյն ընծայուած։

ՄԱՄԲՐԷ

Խորենացւոյն կրտսեր եղբայրն էր Մամ-
բրէ, ու Սահակայ և Մեսրոպայ աշա-
կերտներէն մէկը, վերջանող կոչուած.
որուն վրայ մեծ յարգութեամբ կը խօսին
թէ ժամանակակից և թէ յետագայ ազ-
գային մատենագիրք, փիլիսոփայից մէջ
երրորդ կամ երկրորդ դասելով, անշուշտ
Խորենացիէն ու Դաւիթ Անյաղթէն ետքը։
Իր ուրիշ աշակերտակցաց պէս ճանա-
պարհորդեց Մամբրէ յԱղեքսանդրիա
յԱթէնս և ի Բիւզանդիոն, ու ամէն տեղ
իր հանճարովն մեծ պատիւ գտաւ։

Կ'երևինայ թէ այլ և այլ երկասիրու-
թիւններ ալ թողուցած ըլլայ, բայց մեր
ձեռքը հասածներն են երկու ճառ, մէկը

Ղազարու յարութեան վրայ, և միւսը Քրիստոսի երուսաղէմ մտնելուն։

Նկեղեցւոյ հին վարդապետներէն շատին անունովը Ղազարու յարութեան վրայ այլ և այլ ընտիր ճառեր կը գտնուին. որոնցմէ մէկ քանին թարգմանութեամբ աւանդած է մեզի հայկական դպրութիւնը։ Այս պատճառաւ՝ անհմուտ գրչագիրք մէկուն գրուածքը մէկալին կ'ընծայեն։ Նոյնը հանդիպած է նաև Մամբրէի այս երկասիրութեանը. վասն զի գրչագիրներէն ոմանք Մամբրէի վերնագրին կ'ընծայեն զայն, «Յովհաննու աւետարանին մեկնութենէն առացեալ» կոչելով. որով կամ կարծել կու տան թէ Մամբրէ Յովհաննու աւետարանին մեկնութիւն մը շարադրած ըլլայ, որ գէթ ձեռագրիս հասած չէ, և կամ նոյն դիպուածը Յովհաննու աւետարանին մէջ պատմուած ըլլալը կը նշանակեն։ Ոմանք ալ Ոսկեբերանի կ'ընծայեն զայն, որուն պերճախօս գրչին արժանաւոր երկասիրութիւն է. բայց անոր գրուածոցը մէջ չիգտնուելով, հաւանական կը կարծուէր թէ սխալմամբ իրեն կ'ընծայուի այս ճառը, այլ իրեն հանճարոյն նախանձորդ և հետևող Մամբրէի գրչին և սրտին արդիւնք է։ Եղիշէի անուամբ ալ գրուած կայ այս ճառս։

Ոչ նոյն գեղեցկութիւնը և ոչ լեզուի ընտրութիւնն ունի Մամբրէի միւս ճառը ի Գալուստն Քրիստոսի յերուսաղէմ. ա-

նոր համար ունանք ուղած են երկբայութեան տակ ձգել անոր հարազատութիւնը։ Բայց կիրակոս յայտնապէս իրեն կ'ընծայէ. «Մամբրէ վերծանող, կ'ըսէ, ասաց ներբողեան 'ի յօրն սրմաւենեաց՝ 'ի գաւառսն Փրիատոսի յերուսաղէմ յաւանական »։

Աբծրունին՝ պատմական գրուածք մըն ալ կ'ընծայէ Մամբրէի որ մեր ձեռքը հասած չէ. իր Աբծրունեաց ցեղին սկզբնատրութեանը վրայ խօսելով կ'աւանդէ. « Իակ առ մեզ հասին զրոյցքս այս բստ մըննացորդաց պատմագրացն առաջնոց, 'ի Մամբրէէ վերծանողէ և 'ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ . . . որ հրամանաւ վահանայ արծրունւոց փոյթ յանձին կալեալ խուզել, քննել, կարգել 'ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց, ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աչխատասիրաբար անցանել պատմութիւնս »։

Հին թերականաց մէջ ալ քանի մը հատուածներ կան Մամբրէի անուամբը։

Մամբրէի ճառերը հրատարակուած են 'ի վենետիկ 1853ին, Նախնեաց մատենագրութեան շարին մէջ։

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Հինգերորդ դարուն վերջերը ու վեցերորդին սկիզբները ծաղկեցաւ Ղազար Փարպեցի, Թշուառ տանն մը, յորում Արշակունեաց թագաւորութիւնը վերցուած, մարզպանաց ձեռքն էր Հայաստանի քաղաքական իշխանութիւնը. նախարարաց մէջ անմիաբանութիւնն սկսած էր իր աւերիչ գործը վերջնել և աշխարհը կործանման վտանգի մէջ ձգել. «Եւ էր տեսանել յաշխարհին Հայոց, կ'ըսէ ինքն հեղինակն, ըզլաւութիւն հեռացեալ, զխմաստութիւն կորուսեալ, զքաջութիւն հեռացեալ և մեռեալ, զբռիստոնէութիւն թաքուցեալ»։

Ղազար կ'երևնայ թէ ընտիր և ազնուական ցեղէ էր. վասն զի առ Վահան Մամիկոնեան գրած թղթին մէջ՝ պարծանքով մը կը գրուցէ թէ «Դու յայց ելեալ խընդրել զիս, և զտեալ յաշխարհին յայնմ՝ ածեր ի տուն, ոչ իբրև զաղքատ զոք ի կազմածէն և ի մանկտոյն, և ոչ իբրև օտար զոք ի քէն, և կամ ծառայ ուրուք»։ Տղայութեան հասակին՝ իր նախնական կրթութիւնն առաւ Ղազար վրաց Աշուշայ բդեչխին տանը մէջ, որ Վահանայ Մամիկոնենոյ Անոյշ-վառամ հօրաքրոջը հետ ամուսնացած էր։ Ղազար ինքզինքն

վահանայ աննդակից և խաղակից կը կո-
չէ, և թէ դրօսանաց ժամանակ՝ ինքն կը
կրէր անոր արկանելիքը։

Նոյն ժամանակներըն՝ Հայաստանի մէջ
անուանի էր Վասակ Աբծրունւոց որ-
դին Ադան։ Վասակ Մեհրուժանայ՝ հայ-
բնեաց կրօնքին և անկախութեանը թշ-
նամի նենգաւորին հետ՝ սէր և բարեկա-
մութիւն կը ցուցընէր. անով ոմանց կաս-
կածելի, ու չատերուն խիթալի կ'ըլլայ։
Ադան՝ իր հօրը այս բանած կերպին վրայ
նեղացած՝ զնաց առ սուրբն Սահակ հայ-
րապետ, և իր դիմումութեան դգետը
Թողով, սուրբ կաթուղիկոսէն կրօնաւո-
րութեան աբեմը խնդրեց, ու Գողթն գա-
ւառը առանձնանալով՝ եղաւ, ինչպէս կ'ը-
սէ Թովմա արծրունի, «երանելի մարդկան,
ահարկու դիւաց»։

Ադանայ քով աշակերտեցաւ Ղազար,
և երկար աւեն ուսմանց պարապելէն ետ-
քը, իր վարդապետացը՝ Սահակայ և Մես-
րովպայ հրամանաւը՝ Յունաստան գնաց,
ու հոն հելլենական ուսմանց և խմաստու-
թեան հետևելով, ամեն բանէ աւելի հոգ-
տարական արուեստի տուաւ ինքզինքը, և
անշուշտ այն պատճառաւ ձարտասան կո-
չուած է։ Անկէց իր հայրենիքը դառնա-
լով՝ Մամիկոնենաց աղգական կամարա-
կանաց տիրոջ քով կնցաւ։

Անկէց ալ աչքովը տեսնելով Հայա-
տանի վրայ եկած տեսակ տեսակ թշուա-

ռութիւններէն, ու չկարենալով հանդուրժել, ելաւ Սիւնեաց աշխարհէն գնաց, ու երկու տարի հոն կեցաւ, «անցուցանելով, ինչպէս ինքը կ'ըսէ, զձմեռն ի քարայրի առ առն միում հուչակելոյ ի բնակչաց գաւառին՝ յամենայն կրօնաւորութիւնս, որում անուն էր Մովսէս, և տէրն անճուկ. և զամառն՝ յաղագս ոսթոյ տեղւոյն՝ քահանայապետ աշխարհին տէր Մուշէ՝ տանէր զնա առ ինքն, ուր և լինէր ի հովս»:

Երբոր վ.ահան՝ Պարսից վ.աղարշ թագաւորէն Հայաստանի մարզպանութիւնն առաւ, ու անով Հայաստան՝ քիչ մը ժամանակ ի չիոթմանց և ի պատերազմաց հանգարտեցաւ, նոր մարզպանն՝ իր հայրենիքը բարեկարգելու եռանդ եղաւ. ու դանազան վկայարաններ, եկեղեցիներ ու վանքեր չինելէն կամ նորոգելէն եաքը, շատ ծախքով՝ Լ.ջմիածնայ կաթուղիկէն զարդարեց: Անկէ եաքը իր հին բարեկամը՝ զՎ.ազար, փիւռնակալու եռանդ եղաւ, որ մէկէն ձգեց Սիւնեաց աշխարհը, ու եկաւ գտաւ զվ.ահան. հոն տեսաւ փարպեցին նաև վ.ահանայ վարդ եղբայրը և ուրիշները, և Գիւտ կաթուղիկոսին եղբօրորդին՝ Յովհան Մանդակունին, որ այն առեններն Հայոց կաթուղիկոսական աթոռը կը նստէր: Հոն խօսք բացուելով նորաշէն կաթուղիկէին համար՝ կը մտածէին որուն յանձնել անոր կառավարու-

քիւնը։ Յովհան կաթուղիկոս, – ասանկ կ'աւանդէ Ղազար, – ուրիշ քանի մը անձինք առաջարկեց այն պաշտօնին. բայց Վահան Ղազարու յանձնել տուաւ սուրբ կաթուղիկէին հոգաբարձութիւնը։

Մարզպանին վատահութեանը արժանացուցին երեւելիները փարպեցին. քիչ առնի մէջ՝ մեծ բարեկարգութեան ու պայծառութեան հասուց ան վանքը։ Հայաստանի ամեն կողմերէն հոն կը վազէին՝ ուսանելու, կամ արդէն սովրածնին զլիաւորելու համար. և ժամանակին ուսումնասէր ու բարեպաշտ իշխաններէն ալ՝ Վահանայ եղբարքն, Ներսեհ և Հրահատ կամսարականներն, Համազասպ Մամիկոնեան, Վահանայ եղբօրորդիքը, և Արեղնից իշխանը Գաղրիկ՝ սէտք եղած օգնութիւնն ընելէն ետ չէին կենար։

Վանքին բարեկարգութիւնը, արդէն Ղազարայ դէմ եղող արեղաներու նախանձը ալ աւելի չարժեց. դինքը վար զարնելու և իր հաւքաւոր աղօտացընելու համար՝ ամեն ջանքերնին բանեցուցին. անոր ուսմանցն ու դիտութեանը հետ՝ հատուցոյ վարդապետութիւնն ալ կը պախարակէին։ Իրենց ամբաստանութիւնքն ինչուան Վահանայ ականջն ալ հասուցին. և այնչափ պղտորեցին մարզպանին միտքը՝ որ երբեմն սպառնացաւ ոչ միայն զՂազար՝ այլ և ոչ իրեններէն մէկը թողուլ այն վանքին մէջ։

Խոռվեցաւ Փարպեցին, ու չէր գիտեր ինչ կերպով իրեն դէմ բացուած անդունդն բերանները լեցընել. իր հակառակորդացը հետ խօսիլ ու զանոնք համոզելն՝ իրեն համար ընդունայն աշխատանք մը կ'երեւնար. այնչափ ատելութեամբ իրեն դէմ պինուած էին, որ Փարպեցին իր աժան գիտութեամբն ու սրբութեամբն ալ՝ պիտի չկարենար իր անմեղութիւնը ցուցընել։

Ասոր հարկ սեպից դիմել առ քահանայապետն Յովհան Մանդակունի, և իրմէն խնդրել իր նեղութեանը մէջ այնօգնութիւնը՝ որուն կարօտ էր։ Ընտիր տոհմէ սեպուհ մը ղրկից առ քահանայապետն, ու ցաւօք և տագնապով կ'իմացընէր, իր ինչ վիճակի մէջ ըլլալը. «Փութա, կ'ըսէր, հաս յօգնել. խոցոտեցայ թշնամիէն՝ անթիւ նետերով. կարելէր եմ ու մահուան մօտեցած. ասկէ ետքը քեզի հարկ է դնդը տալ ու բժշկել։ Իսկ թէ որ մեռնելու ըլլամ՝ գերեզման տանիլ ու թաղել»։ Երբոր պատգամաւորին բերնովը իր ուզած պատասխանը չառաւ Ղազար, հարկ սեպից անձամբ երթալ առ Մանդակունին։ Քահանայապետն անհաւատալի սրբակարութեամբ մը, զոր պատմութիւնը ուրիշ առիթներու մէջ չիտար իրեն, չուզեց և ոչ իսկ տեսնել զինքը, թող թէ լսել և իրաւացի դատաստանը կարել։

Ղազարու թշնամիքը երբոր տեսան թէ

ամենէն երեսի վրայ ձգուած է, սէր չվախ-
ցան. անդթութեամբ դինքը վանքէն վռնդ-
տեցին, ունեցածը չունեցածը յափշտակ-
կեցին, և ինչուան իր քովը եղած յոյն վա-
զրուով զրկերն ալ չտուին. «որ կան այդր,
կ'ըսէ զանգատելով, ընկեցեալ 'ի կերա-
կուր ցեղոյ. բայց արդեօք կարդացեալ
լուսաւորիցին 'ի զոցանէ բնակեալգ 'ի
տեղւոջգ, և կամ գոյլս լուսաւորեսցեն»:

Միրաք կոտրած և յուսահատած՝ եկաւ
վանքէն ու Ա.միթ քաղաքը գնաց. հոնկէց
ինքզինքը Վ.ահան Մամիկոնեանին առջևը
արդարացընելու համար թուղթ մը գրեց,
ու Համազասպ Մամիկոնեան նախարա-
րին ձեռքովը զրկեց անոր. յորում իրեն
վրայ եղած ամեն ամբաստանութիւնները
նշանակելով՝ անոնց ամենուն պատասխա-
նը կու տայ ճարտարութեամբ. և անմե-
ղութեան յաղթանակը կանգնելէն ետքը՝
դինքը բամբասողաց անկարգ վարքը և
ազիտութիւնը կը յանդիմանէ:

Կ'երևնայ թէ այս թուղթը՝ սէտք եղած
ազդեցութիւնն ըրած է Վահանայ վրայ,
որ մէկէն կանչեց դինքը իր քովը. և Հա-
ւանական կ'երևնայ թէ անկէց ետքը ա-
ռաջարկած է որ Պատմութեան գիրքը շա-
րադրէ: Եւ ահա թղթէն զատ իր երկասի-
րութիւններէն մեր ձեռքը հասածն է այս
պատմութիւնս:

Փարպեցւոյն Պատմութեան նիւթը. — Գրոց
սկիզբը կը յիշէ փարպեցին իրմէն առաջ

եղող պատմագիրքն, ու անոնց իրաւացի արժէքը կը ճանչցընէ։ Ասոնք են Ագաթանգեղոս ու Փաւստոս Բիւզանդ, որոնց չափաբերութիւն կը սեպէ իւր գրուածքը, առ որ զինքը յորդորեր էին իշխանաց հրամաններն ու սրբոց վարդապետաց խօսքերը. «Ցուսաք, կ'ըսէ, զանձինս յայսպիսի գործ կարևոր, չիշխեցեալք ընդդիմանալ, կարգել մի ըստ միոջէ զիրս և զգործս, զրազմայեղանակ դիպմունս Հայաստան աշխարհիս՝ բաժանմանց յերկու թագաւորութիւնս, և՝ի վիճակէ բաժնոյ օրինացն՝ արանց քաջաց՝ ի տոհմէ նախարարաց Հայոց՝ տալ զանձինս անհամարս՝ ի նահատակութիւնս, ՝ի վերայ ուխտին սուրբ եկեղեցւոյ, և կիսոյն համբերել կապանաց և բանտից... Հեղուլ քահանայից ընտրելոց Աստուծոյ և ճշմարիտ հովուաց՝ զարիւն՝ ի պարանոցաց իւրեանց՝ ի վերայ ընտրեալ բանաւոր հօտին Քրիստոսի. և ոմանց յընկերակցաց նախարարացս և յայլ ազատ մարդկանէ՝ դառնալ յետս յուխտէ սրբութեանն, և անչէջ յաւիտենից հրոյն լինել լուցկիք, պատրաստելոյն սատանայի և նորին արբանեկացն։ Եւ զրել զայս ամենայն մինչև ցօր սկզբան մարզպանութիւնն Հայոց Վահանայ Ամատունեից տեառն և մեծի զօրավարին Հայոց և մարզպանի. և դադարեալ հանգուցից յայնմ տեղւոջ զբան վասնակոյ պատմութեանցս այսոցիկ»։

Ասիկայ է Ղազարայ փարպեցւոյն պատմութեան նիւթն ու վախճանը։ Յորում կ'աւանդէ թէ ինչպէս Հայոց աշխարհին առ Աստուած գառնալէն ետքը՝ այն զարմանալի դէպքին, և անոր գործադիր սըրբոյն Գրիգորի պատմութեան արժանի գրիչ երևցաւ Ագաթանգեղոս։ Բայց իրմէ ետքը, կ'ըսէ, երբոր քաղաքական փոփոխութիւններ Հայաստանի մէջ տեսակ տեսակ չփոթութիւն յառաջեցին, տգէտ և յանդուգն մարդիկ իրենք իրենցմէ ընդունայն ու անպիտան գրուածներ չարադրեցին, ու պիտուն և իմաստուն անձանց երկասիրութեանցը հետ՝ իրենց գրուածները խառնեցին։ Այն անտեղութենէն զգուշանալու համար Վահան Մամիկոնէից իշխանը կը ստիպէ զՓարպեցին՝ որ իրեն ժամանակագ դէպքերը գրի վրայ առնու։ Վ.երը յիշուած դժբաղդութեան հանդիպած կը համարի նաև Բիւզանդայ դիրքը, ինչպէս ուրիշ տեղ ալ խօսեցանք։

Կը սկսի Ղազար իր պատմագրութիւնը Արշակունեաց թագաւորութեան երկուքի բաժնուելէն. երբոր քաղաքական կերպարանափոխութեանց համար՝ Հայաստանի արևմտեան մասը Յունաց կայսեր իշխանութեան տակն ընկաւ, ու արևելեան մասն ալ Պարսից թագաւորին։ Այն ատեններն՝ Պարսից վիճակին մէջ եղող Հայոց նախարարներն՝ թագաւորին երթալով խնդրեցին իրմէ՝ որ իրենց բնիկ

Ա.րշակունեաց ցեղէն թագաւոր մը դնէ վրանին։ Շապուհ թագաւորը կատարեց անոնց խնդրուածքը, ու Ա.րշակունեաց ցեղէն խոսրովը դրաւ. որովհետեւ անկէց առաջ Ա.րշակ թագաւորը տեսնելով Հայոց ազգին մէջ սիրած անմիաբանութիւնը, և ճանչնալով որ այն երկպառակութեանց վախճանը՝ բոլոր աշխարհին աւերումը պիտի ըլլայ, թողուց Ա.յրարատ գաւառը Պարսից ձեռքը, որ կարենայ խաղաղութիւն գտնել թէ իր անձին և թէ աշխարհին, ու դնաց Յունաց աշխարհին ժառանգութեան մէջ նստաւ։ Հոս արտաւզութիւն մը կ'ընէ փարպեցին, Ա.յրարատ գաւառին գովեստն ընելով, որ իր պատմագրութեանն ընտրելագոյն մասերէն մէկը կրնայ սեպուիլ։

Ժամանակ անցնելէն ետքը՝ Հայոց նախարարք թշնամացան իրենց թագաւորին հետ, ու Պարսից թագաւորին առջև ամբաստանեցին զինքը, որպէս զի չկարենայ խոսրովու արտաքին բարեկամութենէն զոր կը ցուցընէր իրեն, և թէ անոր միտքը ուրիշ բան չէ բայց եթէ Յունաց հետ միաբանիլ։ Շապուհ սիրով մտիկ ըրաւ անոնց ամբաստանութեանցը. իրեն կանչեց զխոսրով ու պատժեց զինքը. և Հայոց նախարարաց ժառնութիւնն ալ վարձատրելու համար՝ անոնց խօսքին գլխէ մէկ անդամ մը մտիկ ըրաւ, ու զվ.ռամշապուհ վրանին թագաւորեցուց։

Մեր գրականութեան պատմութեանը մէջ՝ մատենագրական դարագլուխ մը կը նայ անպուել Վռամշապհոյ Թագաւորութիւնն. ուստի և Ղազար ճոխաբար կ'ա-ւանդէ ինչ որ իրեն ժամանակ բարիք եղան ազգերնուս՝ Սահակայ Հայրապետի ու Մեսրոպայ վարդապետի ձեռնտուութեամբը: կը պատմէ նաև Վռամշապհոյ մեռնելէն ետքը Խոսրովու կրկին անգամ Թագաւորելը Վռամայ ձեռքով: Բայց երբոր Վռամայ մահուընէն վերջը՝ անոր եղբայրը Ցազկերտ Թագաւորեց Պարսից վրայ, չուզեց որ Արշակունեաց ցեղէն Թագաւոր նստի ի Հայաստան. ուստի իր Շապուհ որդին զրկեց հոն իշխան: Բայց երբ Հայերը զոհ չեղան անոր իշխանութենէն, Ցազկերտի որդւոյն Վռամայ Թագաւորութեան ժամանակ՝ խնդրեցին իրմէն ու Խոսրովու որդին Արտաշէսը Թագաւորեցուցին:

Արտաշէս անարժան վարքովը առելի եղաւ ամենուն. նախարարը մուտծեցին ձգել դինքը իշխանական պատուէն անոր ձեռքովը՝ որով դինքը այն մեծութեան հասուցեր էին: Ջանացին որ իրենց կամակից առնուն նաև զսուրբն Սահակ: Այս տուածարեալ անձը որչափ իրաւացի կը գտնէր անոնց բողոքը Թագաւորին անարժան վարուցը համար, յանձն չէր առնուր որ խորհրդոցն ալ կամակից երևնայ: Այս առթով զեղեցիկ խօսակցութիւն մըն ալ բրաւ անոնց, զոր մէջ կը բերէ պատմիչը.

բայց նախարարք մոխիկ չըրին, ու չէ թէ միայն իրենց ձեռքովը թագաւորը մատնելով՝ իշխանութիւնին վերուցին, այլ նաև իրենց խորհրդոցը դէմ կեցող սուրբ հայրապետն ալ՝ Պարսից դուռը բանտարկել տուին։

Ա.յս դէպքով Հայաստանի թշուառութիւնը սկսաւ։ Ու երբ նախարարք իրենց անմիտ գործոյն վրայ դղջալով՝ փութացան առ սուրբն Սահակ՝ որ իր աստուածատուր իմաստութեամբը դարման մը ընէ այն աղետից, ու կ'ուզէին միւսանգամ հայրապետական աթոռը նստեցընել զինքը, յանձն չառաւ Սահակ. ու արտասուալից աչքով մը՝ վազարշապատու եկեղեցւոյն մէջ եղած տախտակը պատուեց անոնց ու մեկնութիւնը տուաւ. իմացընելով թէ ինչպէս իրենք իրենց ձեռքովը, բայց միշտ աստուածային թոյլտուութեամբ, կորսընցուցին իրենց իշխանութիւնը և կործանումը փութացուցին։ Անկէ քիչ ետքը հանդիպեցաւ Սահակայ ու Մեսրոպայ մահը. որով աւելի կերպով մը համաձակութիւն առին անմխիթարանութիւնք և թուլահաւատութիւն. նախարարք իրարու հետ սկսան խնդալ, ու մէկմէկու ձեռքէ իշխանութիւնը յափշտակելու համար զիրար Պարսից դուռը ամբաստանել։ Անոնց մէջ գլխաւոր եղաւ վ.արազվազան, որ իր փեսային՝ վ.ասակայ՝ մեծնալը ու իշխանութեան հասնիլը տեսնելով՝ գնաց ուրացաւ իր հա-

աւտրը, ու սկսաւ իր փեսային վրայ ամ-
բաստանութիւններ ընել. կը ջանար անոր
տեղն անցնիլ, խոստանալով որ եթէ այս
մեծութիւնը իրեն արուի, ինքն ալ երախ-
տապարտ ըլլայ Պարսից, ու բոլոր Հայա-
ստանը անոնց աչակերտէ։

Այս խոստումը՝ մեծ ուրախութիւն ազ-
դեց Մխիթարեանէ, որ Յաղկերտի առա-
ջին հրամանատարն էր. սկսաւ յորդորել
դիմագաւորն որ փոխանակ դէնքերով իրեն
իշխանութեան սահմանը ընդարձակելու,
կրօնից ասպարէզը լայնցընէ. թագաւորին
կոչմանէ ու անոր հրամանաւ թուղթ մը
գրեց Հայոց՝ որ եւս կենան իրենց կրօն-
քէն, ու ընդունին այն հաւատքը զոր Պար-
սից թագաւորը կը դաւանի։ Երբոր Հայք
յանձն չառին, ու անոր թղթոյն անմիա
խօսքերը՝ իմաստութեամբ ըմբերանեցին,
իրեն քով կանչեց թագաւորը անոնց գըլ-
խաւոր նախարարներն, ու բանտերու մը-
թութեան դատապարտեց, որպէս զի տոհ-
պուին մահիկ ընելու իր հրամանին։ Երբ
անոնցմէ ոմանք առ երեսս, և այլք սրտի
մտօք ընդունեցան Պարսից կրօնքը, մեծա-
պատիւ փառօք գրկեց զանոնք ի Հայաս-
տան։

Հոս կ'աւանդէ Ղազար Վարդանանց
հրաշալի պատմութիւնն ու յաղթանակը.
անոնց միաբան նահատակութիւնն ու մա-
հը՝ զոր արդէն իրմէ առաջ ստորագրած
էր Եղիշէ։ Անկէց Ղևոնդեանց պատմու-

թեանը կ'անցնի, գրելէ եղիշէի կերպո-
վը, բայց աւելի համառօտ ոճով։ Եղիշէ
իր պատմութիւնը ինչուան Ցաղկերտի
մահը ու նախարարաց դարձը կը հասցը-
նէ. իսկ Ղազար անկէ ալ անդին կ'անց-
նի, սկսելով Գիւտ կաթուղիկոսին օրի-
րէն, կը պատմէ թէ ինչպէս անոր թշնա-
միքը Պարսից դուռը ամբաստանեցին զին-
քը, ու ինքն ալ հոն երթալով՝ արդարա-
ցաւ. բայց թագաւորը չուզեց միւսանգամ
հայրապետական աթոռոյ վրայ նստեցը-
նել զինքը, այլ ամենայն պատիւ տալով՝
սահմանեց որ ուզած տեղը նստի։ Գիւտ
ալ՝ երկար տարի Պարսից դուռը կեցնալէն
ետքը՝ նա դարձաւ։

Ղազն ժամանակները Մամիկոնեանն վա-
հան կը պայծառանար։ Գաղիչոյ Մալխա-
զը և իրեն հետ քանի մը ուրացող նախա-
րարք նախանձեցան վրան, ու ուղելով
զինքն իշխանութենէ ձգել, ամբաստանե-
ցին թէ ապստամբ է, և թէ անոր ձեռա-
գը տակ ամենևին ապահով չիկրնար ըլ-
լալ Պարսկաստան՝ իր Հայաստան աշխար-
հին ազարին վրայ։

Ինքզինքը արդարացընելու համար և-
լաւ Պարսկաստան դնաց վահան, ու տես-
նելով թէ անոնց նախանձը ամենևին պի-
տի չլըռէ, և իրեն ալ անկարելի պիտի ըլ-
լայ խաղաղութիւն գտնել, հաւատքին մէջ
ակարացաւ։ Ասնանկով մեծապատիւ դար-
ձաւ ի Հայաստան. հոն իւր ուրացութեան

վրայ ղղջալով, հետը միաբանից հաւատա-
ցեալ նախարարքը, ու Պարսից դէմ պա-
տերազմի սկսաւ. ու զանազան անգամ
անոնց դէնքերը փշրելէն և ոյժը խորտա-
կելէն ետքը՝ հետերնին հաշտութեան դա-
շինք դրաւ։ Հայաստանն ազատեց, անոր
կրօնքն ու ինչքը ապահովցուց, և ինքը
մեծ փառքով պատուեցաւ. ուստի և ի-
րաւամբք Մամիկոնէից տէր և Հայոց սպա-
րապետ ու մարզպան ընտրուեցաւ։

Այս հրաշալի ու անակնկալ փոփոխու-
թեան վրայ զարմացան Հայք, ու իրենց
արժանաւոր հայրապետն Յովհան Ման-
դակունի՝ առեանը ելլելով ու խաղաղու-
թեան ողջոյնը տալով՝ աւետից իր հաւա-
տացելոցը այս զարմանալի ազատութիւնն,
ու յորդորից զիրենք որ փառք տան Աս-
տուծոյ։

Այն գեղեցիկ ու պերճախօս առենաբա-
նութեամբը կը կնքէ Փարպեցին իր Պատ-
մութեան գիրքը։

ԴԱՐ Զ

Հայկական գպրութիւնք մէկէնմէկ մեծ ու զարմանալի յեղափոխութիւն մը կը կրեն վերջերորդ դարուս մէջ. և զարմանք չէ. որովհետև աշխարհին քաղաքական դիրքն ալ բոլորովին փոխուած էր։ Վարդանանց և Վահանեանց ջանքը՝ ուրիշ արդիւնք մը չէր ունեցած՝ բայց եթէ արգելուլ զՀասանեանս որ չկարենան իրենց մտքի դրած կերպով սիրել Հայոց վրայ։

Նոյն ժամանակները պատահած կրօնական դէպք մըն ալ՝ թէ ժամանակին և թէ անոնցմէ ետքը եկող մասնագրաց սբրտին ու մտքին վրայ մեծ ազդեցութիւն բրաւ, Քաղկեդոնի ժողովոյն գումարումը։ Ազգային եկեղեցական պատմութեան Թողով՝ այս նկատմամբ ազգին ունեցած գաղափարը, միայն յիշեցընենք թէ այն ժողովին պատճառաւ՝ արտաքին պատե-

բաղմներէ զատ՝ ներքին գժտութիւնք և հակառակութիւնք ալ սկսան մտնել մեր ազգին մէջ։ Այնով թշնամական ատելութիւն մը մնաւ Հայոց մէջ Յունաց ազգին հետ, ու անոնց կրօնքէն խորշելնուն պատճառաւ, սկսան դպրութիւնքն ու գրքերն ալ արհամարհել։ Ա՛լ խափանուեցաւ յունական լեզուին ուսումը, ու անոնց օգտակար կամ դասական գրոց թարգմանութիւնը։ Քանի մը սկզբնագիր գրիչք ալ՝ որ վեցերորդ դարուս մէջ երևցան, աննշան երկասիրութիւններ թողուցին. սոսկ հայ մատենագրութեան ամիսոի հորիզոնին մէջ անած ու մնծցած հանճարներն, առանցմէ աւելի նշանակութեան արժանի արտադրութիւն գժուարաւ կրնային թողուլ։

ԱԲՐԱՀԱՄ ԵՊ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ

Հինգերորդ դարուն վերջերը ու վեցերորդին սկիզբները կ'իմնայ Մամիկոնէից եպիսկոպոսը Աբրահամ, որ Աղուանից վաչագան թագաւորին խնդրանօքը՝ քանի մը խրատական գրուածներ յօրինեց. մանաւորապէս՝ սրբոց նշխարքը պատուելու և ննջեցելոց հոգւոց հանգստեանն համար աղօթք ընելու վրայ։ Այնպիսի համա-

ոօտ գրուած մըն է ասիկայ՝ որ մասնաւոր քննութեան ի՛ջնալուն չարժէր։

Աբրահամու անուամբը ուրիշ երկասիրութիւն մըն ալ կայ. Փրիստոսի 431 թուականին յԵփեսոս գումարուած տիեզերական սուրբ ժողովին պատմութիւնը, ընտիր ոճով և կարգաբանութեամբ գրուած. և որովհետև ձեռագրաց մէջ գտնուած օրինակներու վրայ՝ Վաչագանայ անունը կը յիշուէր, ուստի և կը կարծուէր հաւանականաբար թէ այս գրուածքըն ալ նոյն Թագաւորին ընծայած ըլլայ. բայց երբի տարիներս ուրիշ գրչագիր մըն ալ երևնալով՝ իմացուեցաւ թէ նոյն պատմութեան հեղինակն է Փիլաքսիանոս անունով մէկը՝ որ Նաբովկ քաղաքին եպիսկոպոսն էր, և Կոմիտասայ Հայոց կաթուղիկոսին խնդրանօքը չարագրեց այս գրուածքը, ինչպէս յայտնի կ'ելևնայ այն ընդարձակ յառաջաբանէն՝ որ Աբրահամու անուամբը յիշուած ձեռագրաց մէջ կը պակսի։ Հաւանականաբար Աբրահամ եպիսկոպոսն եղած է նոյն պատմութեան թարգմանիչ։

ՊԵՏՐՈՍ ԵՊ. ՍԻՒՆԵԱՅ

Նշանաւոր անուն մը մեր պատմագրաց շատերէն յիշուած և Սիւնեաց անուանի վարդապետանոցին մէջ կրթուած անձինք ներուն գլխաւորներէն մէկն է։ Որչափ ալ քիչ ըլլան իր համբաւոյն արժանաւոր երկասիրութիւնք, այս պակասութիւնս՝ անշուշտ աւելի ժամանակին տալու է, որ ուրիշ այնչափ հռչակաւոր իմաստնոց երկասիրութիւնը մեզմէ ծածկած է. ապա թէ ոչ, անտարակոյս առանց պատճառի չէր այն համարումն, և ոչ թէ միայն մեր ձեռքը հասած գրուածքներուն համար։

Մեր պատմիչներէն ոմանք, ինչպէս Ասողիկ և Մատթէոս Ուռհայեան՝ սրբոյն Մովսէսի Խորենացւոյ աշակերտ կը համարին զՊետրոս. բայց այս կենդանագրութեանս մէջ՝ ժամանակագրական սխալ կայ, և հաւանական կ'երեւնայ ըսելը թէ Խորենացւոյ աշակերտի մը աշակերտ եղած ըլլայ Պետրոս։

Պետրոսի անուանմբը մեզմէ հասած երկասիրութիւններն են.

1. Սուրբ Աստուածածնայ վրայ դովեստից ներբողեան մը, «Բազմութիւնք քրիստոսասէր ժողովրդոց». որ թէպէտ համառօտ գրուած մըն է, բայց նոյն իսկ համառօ-

տութեան մէջ հոգեւոր եռանդ մը ու վարժ գրիչ կ'երեւցընէ։

2. Քրիստոսի ծննդեան վրայ ճառ մը, որուն միայն մէկ հատուածը ձեռագրին հասած է. « Ծնեաւի Լամաւոյ՝ Ատուած մարդացեալ »։

3. Վաչագան արքային խնդրանօքը՝ ա նոր այլ և այլ հարցմանց պատասխանիք, այսպիսի մակագրութեամբ. « Պատասխանիք առ հարցմունս Վաչագանայ իշխանի». ընդհանրապէս Մարգեղութեան տուրք խորհրդոյն վրայ։ Բայց ինչպէս ասոր նման ուրիշ երկասիրութեանց մէջ, ա սանկ ալ ասոր մէջ, եթէ յիրաւի Պետրոսի երկասիրութիւնը սեպենք, օտարի ձեռք խառնուած է, որոնք իրեն լուսաւորեալ մտաց հարազատ ծնունդը չեն կըրնար ըլլալ, որ թէ գրութեան կերպէն և թէ ոճէն կը յայտնուի։

4. Ա.յս գրուածներէն զատ կը յիշատակուի նախնեաց մէջ իր անուամբը՝ Պատմական գրուածք մ'ալ. վասն զի Ուռայելեանը՝ սրբոյն Մեսրովբայ Աղուանից գրերը հնարելը, և Անանիա Սիւնեաց եպիսկոպոսին պատուիրը նչանակելէն ետքը՝ կը յաւելու. « Ահա ցուցանէ մեզ զայս սուղ ինչ՝ Մովսէս քերթողահայրն. և ըզբովանդակն ճշգրիտ՝ աչակերտնորա Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց»։ Ուռայելեանին խօսքին հաւատարմութեանը նչան կրնայ սեպուիլ՝ Մովսէսի կաղանկատուածոյն

գրոցը մէջ գտնուած Բաբկայ Աիւնեայ՝ Հո-
նագուր Հոնին դէմ տուած մենամարտու-
թեան պատմութիւնը, որ թէպէտ համա-
ռօտ գրուածք մըն է, բայց ընտիր գրչի
մը ամեն կատարելութիւնքը կը տեսնուին
վրան։

Նոյն Ուռպելեան պատմիչը կը յիշատա-
կէ թէ մանաւանդ գովեստ ալ շարագրած
ըլլայ Պետրոս՝ սոյն Բաբկայ վրայ, որ վա-
սակայ ուրացողին հայրն էր. «Յերանելի-
ոյն, կ'ըսէ, Պետրոսէ՝ Աիւնեայ եպիս-
կոպոսէ՝ ի ներբողմանէն առաք, զոր ա-
բար՝ի վնհն Բաբիկ, զոր և Պարսիկք՝ յիւ-
րեանց լեզուն լաւ կոչէին»։ Մեր վերը յի-
շատակած հատուածը՝ արդեօք այս ներ-
բողեանէն առնուած է, թէ իր անուամբը
յիշատակուած պատմութեան մասն ա-
պուած, որոշ չենք կրնար դրուցել։

Ուռպելեանին գովեստից խօսքերը խ-
րատամբ մեծ ցաւ զգալ կու տան այսպիսի
անձի մը գրաւոր երկասիրութեանց կոր-
սուելուն։ Մենք՝ հաւատարմութեան և
բաշխաւորութիւնը բոլորովին իր գովա-
բանին վրայ ձգած, միայն անոր վրայ զուր-
ցած խօսքերը մէջ բերինք. «Եւ ապա և
զև, կ'ըսէ, (Աիւնեայ իններորդ եպիս-
կոպոս), բազմերջանիկն և անհամեմա-
տըն՝ի մարդկանէ Պետրոս՝ աշակերտ
Մովսիսի քերթողահօրն, քաջ հռետորն
և անյաղթ փիլիսոփոսն, լի խմաստու-
թեամբ և կատարեալ առաքինութեամբ.

նախաթոռ վարդապետաց Հայոց, քեր-
թող և թարգմանիչ, որ արար բազում
թարգմանութիւնս, և արար ճառս իմաս-
տալից ի ծնունդն Քրիստոսի, և այլ
յոլովս, և մեկնեաց զմարթին և զդիւրիմաց
բանս հին և նոր կտակարանաց: Սա գնաց
ընդ այլոց վարդապետաց Հայոց՝ Մամբ-
րէի, Եղնկայ, Կորեան, Դաւթի՝ ի թա-
դաւորական քաղաքն Կոստանդնուպոլ-
սի... և կեցեալ յաթոռն ամս տասն՝ մե-
ռանի»*: Եղնկայ և Կորեան ընկերակից
ըլլալ՝ անկարելի է այս Պետրոսի:

* Ոսոպեզեանը՝ Պետրոսի Սիւնեցւոյն պատ-
մական գրուածքին՝ հետևեալ ամբողջ հատուած-
ները կը գաղափարէ:

Գ. Թ. Վասն Անդոկայ Սիւնեաց իշխանի թէ
զինչ գործ գործեաց. և թէ որպիսի անցք ան-
ցին ընդ աշխարհն Սիսական՝ ի Շապհոյ Պար-
սից արքայէ, և երթին նորա առ կայսրն Յունաց
առ մեծն Թէոդոս և անդ վախճանիլն. յատա-
ցուածոց սրբոյն Պետրոսի Սիւնեաց Եպիսկոպոսի:

Ծ. Վասն գալոյ Բաբկայ ի Հոռոմոց առ Շա-
պուհ, և քաջութեանն զոր եցոյց. և վերադարձ
տիրելոյն սեպհական հայրենեաց իւրոց աշխար-
հին Սիւնեաց և շնորհեալ նորա, և նախագահ
պատուելոյն ընդ Բագրատունիս. ի նոյն ճառիցն
առաւն Պետրոսի:

ԺԱ. Յայտնութիւն եկեղեցւոյն Շաղատայ, և
դիւա այնչափ սրբոցն որ ի նմա:

ԺԲ. Դարձեալ ի նոյն ճառից առաւն Պետրո-
սի, յետ բազում ժամանակաց զոյգք վանն գիւ-
սի եղեալսց սրբոց որ ի Շաղատայ եկեղեցին. և

Պետրոս Քերթողին ուրիշ մէկ գլխաւոր արդիւնքն ալ՝ Հայոց տումարը նորոգելն է, վասն զի երբոր Մովսէս կաթուղիկոս Եղիվարդեցի՝ Հայոց տումարը նորոգելու համար՝ ազգին ամէն գլխաւոր քաղաքաց իմաստունքը հաւաքեց ի Դուին՝ ժողովք ընելու համար, նոյն ժողովքին գլխաւորներէն մէկն էր, ինչպէս վարդան կը յիշատակէ, Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսը, Ներշապուհ տարոնացին և Անդիլոյ սասնեցի։ Բայց Ասողիկ նոյն պատմութիւնը ուրիշ կերպով աւանդելով՝ կը դրուագէ թէ Ներսէս աշտարակեցի կաթուղիկոսին օրովը դումարած ժողովոյն մէջ՝ Հայոց տումարին վրայ խօսք ըլլալով, Հայոց Թուականը հաստատեցին Պետրոս քերթողը և Ներշապուհ տարոնացին։ Սակայն ընդհանրապէս մեր ամէն պատմիչք այս նորոգութեան պարծանքը Մովսէս կաթուղիկոսին կու տան։

որ յաւուրս Յովակիմայ եպիսկոպոսի վիճմունք, և սակս նախադասութեան տանուտէրաց և գիւղից Սիւնեաց, և թէ ո՞ք նախապատիւ և գահակալութեան սահմանեցաւ։

ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ

Մովսէս՝ Աբրահամեան գաւառին եղիվարդ գեղէն էր, և կաթուղիկոսութեան աթոռը նստաւ Քրիստոսի 551 թուականին, և իրեն դլխաւոր գործն եղաւ Հայոց տումարին նորոգութիւն կամ հաստատութիւնն։ Հաւանական կ'երևնայ թէ Հայը 'ի սկզբանէ իրենց տումարը ունեցած ըլլան. կամ իրենց գործածած դլխաւոր տումարը՝ Նաբոնասարայ թուականը եղած ըլլայ, վասն դի այն առեն հաստատուեցաւ այս թուականը՝ երբ Վաբրակէս Մար և Ռեղիսիս–Նաբոնասար՝ Պարոյրի հետ միաբանելով՝ Ասորեստանեայց թագաւորութիւնը վերացին, և իրենք թագաւորութեան պսակ բնդունելով՝ սահմանեցին անկէ ետքը նոյն թուականը գործածել. (Քրիստոսէ 743 տարի առաջ)։

Արեգակնային էր այն ժամանակը Հայոց տարին, իրենց մերձաւոր ազգաց՝ Բաբելացւոց, Պարսից, Մարաց և Եգիպտացւոց նմանութեամբ։ Բայց որովհետև Յուլիան տումարին ճշդութիւնը չունէր, հարկ կ'ըլլար որ ամեն անգամ տարւոյն օրերը փոփոխութիւն կրեն։ Տասներկու ամիս բաժնուած էր տարին, ամեն մէկ ամիս երեսուն օրով. և հինգ օր ալ Աւելեաց, որ է

ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ

Մովսէս՝ Արագածոտն գաւառին եղիվարդ գեղէն էր, և կաթուղիկոսութեան աթոռը նստաւ Քրիստոսի 551 թուականին, և իրեն դլխաւոր գործն եղաւ Հայոց տումարին նորոգութիւն կամ հաստատութիւնն։ Հաւանական կ'երևնայ թէ Հայք ի սկզբանէ իրենց տումարը ունեցած ըլլան. կամ իրենց գործածած դլխաւոր տումարը՝ Կաբոնասարայ թուականը եղած ըլլայ, վասն զի այն առեն հաստատուեցաւ այս թուականը՝ երբ վաթսակէս Մար և Ներսիսես–Կաբոնասար՝ Պարոյրի հետ միաբանելով՝ Ասորեստանեայց թագաւորութիւնը վերացին, և իրենք թագաւորութեան պատկ ընդունելով՝ սահմանեցին անկէ ետքը նոյն թուականը գործածել. (Քրիստոսէ 743 տարի առաջ)։

Աւրեդակնայինէր այն ժամանակը Հայոց տարին, իրենց մերձաւոր ազգաց՝ Բաբելացւոց, Պարսից, Մարաց և Եգիպտացւոց նմանութեամբ։ Բայց որովհետև Յուլեան տումարին ճշդութիւնը չունէր, հարկ կ'ըլլար որ ամեն անգամ տարւոյն օրերը փոփոխութիւն կրեն։ Տասներկու ամիս բաժնուած էր տարին, ամեն մէկ ամիս երեսուն օրով. և հինգ օր ալ Աւելեաց, որ է

գած այս նորոգութեան մէջ ուրիշ բան չեն նկատեր՝ բայց միայն ուսումնական հետաքրքրութեան պարտք մը կատարած։

Մասնաւոր գրաւորական երկասիրութեանց յիշատակութիւն չկայ Մովսէսի վրայ։ Միայն իրեն յաջորդը Աբրահամ կաթուղիկոս՝ առ Կիւրիոն վրաց հայրապետ գրած թղթերուն մէջ կը յիշատակէ թէ մասնաւոր թուղթ մը գրած ըլլայ առ նոյն ինքն Կիւրիոն, զգուշացընելով զինքը որ չըլլայ թէ նեստորականաց հետ հաղորդակցութիւն ընէ։ «Ցառաջագոյն, կ'ըսէ, երանելի հայրապետն մեր Մովսէս՝ գրեաց առ ձեզ մեզադրութիւն, յաղագս հաղորդելոյն ձեր ընդ այնոսիկ՝ ընդ որս չէր պարտ»։ Նոյնը կը հաւատարմացընէ նաև վրթանէս քերթող՝ առ նոյն Կիւրիոն գրած թղթին մէջ. «Ցառաջագոյն առ պատուականութիւն ձեր գրեաց երանելի հայրապետն մեր Մովսէս՝ յաղագս խուժիկ չեպիսկոպոսին խաբէութեանց։

ԿԻՒՐԻՈՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԵՒ

ԱԲՐԱՀԱՄ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հինգերորդ դարուն մէջ պատահած կրօնական դէպք մը՝ առիթ տուաւ այս դարուս վերջերը այլ և այլ խօսակցութեանց և թղթակցութեանց և դատարման ժողովոց։ Քրիստոսի ԿՅԱ թուականին՝ Քաղկեդոնի մէջ ընդհանուր ժողովք մը դատարուեցաւ Եւտիքէսի մոլորութեանցը դէմ։ Անոր դատարուած երեք ժողովոց մէջ՝ Հայերն ալ իրենց կողմանէ պատգամաւորներ ունեցած էին, և անոր համեմատ ստոյգ տեղեկութիւն առած նոյն ժողովոց սահմանադրութեանցը վրայ. բայց այս չորրորդ ժողովոյն ժամանակ՝ որովհետև Հայաստան պատերազմաց և աւարառութեանց պատճառաւ ռառնակոխ եղած և նեղութեան մէջ էր, չկրցաւ իրեն կողմանէ մարդ ղրկել, և եղածին վրայ ճիշդ տեղեկութիւն մը ունենալ. այն պատճառաւ նոյն ժողովոյն թէնամիքն առիթ և համարձակութիւն ունեցան՝ իրենց հարցը հաստոցը վրայ հաստատուն կեցող Հայաստանի բնակիչքը օտարացընել նոյն ժողովքէն, մոլար վարդապետութեանց սահմա-

նագիր քարոզելով։ Բայց որովհետև ա-նոր ջատագովքն ալ պակաս չէին, Հայա-ստանն ալ ստիպուեցաւ՝ այս պատճառաւ գումարած ժողովքներուն մէջ՝ նրբեմն ըն-ունել զայն իբրև ուղղափառական, և եր-բեմն ալ մերժել իբրև մոլորամիտ։

Ա.յս ժամանակներս՝ վրաստանի կա-թուղիկոսական աթոռը կը նստէր Կիւրիոն արքեպիսկոպոս, որ Մովսէսի Եղիվարդե-ցւոյն աշակերտն էր, յոյն, հայ, պարսիկ և վրացի լեզուաց հմուտ։ Ճանչցաւ Կիւ-րիոն նոյն ժողովքին ուղղափառական սահմանադրութիւնները, և մտադիրու-թեամբ ընդունեցաւ. ու փափաքելով որ ուրիշներն ալ իրեն հետևող երևնան, կոստանդնուպոլսէն բերել տուաւ նոյն ժողովքին վաւերական պատմութիւնը, ու Ս. Լևոնի Հռոմայ հայրապետին տու-մարը. որոնց ընթերցմամբը ճանչցաւ բո-լոր վրացի ազգը նոյն ժողովքին ուղղու-թիւնը և ընդունեցաւ։

Իր այս գործոյն հակառակող երևցաւ Յուբաւ քաղքին Մովսէս եպիսկոպոսը. ու այլ և այլ ամբաստանութիւններ ըրաւ վրան առ Ջանաղանս, և մանաւորաբար առ Աբրահամ կաթուղիկոս Հայոց։ Կա-թուղիկոսն ալ մեզադրանաց թղթեր գրեց առ Կիւրիոն։

Ինքզինքը և իր գործը ջատագովելու համար նամակներ գրեց Կիւրիոն, ու՛ի կաթուղիկոսէն և՛ի ջանաղանից անոնց

պատասխաններն ընդունեցաւ։ Այս բոլոր թղթերը որ երեսնի չափ են՝ հաւաքած և պատմութեամբ աւանդած է Ուխտանէս պատմիչ ի գարուն մէջ, որ դեռ մօտ տալիներս մեր ձեռքը հասաւ։

ԴԱՐԷ

ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Աբրահամ կաթուղիկոսին յաջորդն էր Կոմիտաս՝ Տարոնոյ եպիսկոպոսը և Գագկայ վանից առաջնորդը։ Իր հայրապետութեանը ժամանակ՝ սրբոց Հռիփսիմեանց վկայարանները նորոգել ուղեց. և անոնց սուրբ մարմնոյն տապանակներն՝ հողէն դուրս հանելուն ժամանակ՝ տեսնելով որ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և Սահակայ Պարթև հայրապետին կնիքներովը վաւերացած են, չուզեց դպչիլ. այլ իր կնիքն ալ զարնելով՝ արժանաւոր պատուով ամփոփել հրամայեց անոնց սուրբ մարմինները։

Այս առթով սրբոց կուսանաց վրայ շատ բաներ չգրական մը այրուբենի կարգաւ, որ իր անուամբը մեզի հասած գլխաւոր երկասիրութիւնն է, և կ'ըսուի,

Հռիփսիմեանց ահեղիկը.—Գեղեցիկ քնարերգական բանաստեղծութիւն մըն է այն սուրբ կուսանաց յիշատակին և վճռացը նուիրուած, որոնց արեանը պարտական է Հայաստան իր լուսաւորութեան գլխաւոր մասը։ Հռիփսիմեանց սրտաշարժ պատմութիւնն՝ ազդած է Գևրգոզին այս անոնման և սիրելի երգը վրանին յօրինելու։ Պոպիսի՛ կորուկ և բանաստեղծական՝ միանգամայն պարզ լեզուով նկարագրուած են իրենց պատմութեան գլխաւոր մասերը, մանաւանդ սրբուհւոյն Հռիփսիմէի, այն հրաշագեղ կուսին՝ որուն գեղեցկութիւնը՝ կը յիմարեցընէ զթագաւորն. հետևանօք կը սթանչանան իրենց անմիտ իմաստութեանը մէջ՝ այնպիսի տեսքի մը արհամարհուելուն համար, և հրեշտակը՝ ուրախութեամբ կը տօնեն՝ փափուկ կուսի մը մահը և զաչխարհս արհամարհելը։ Իրար կ'անցնին բոլոր աշխարհք. մէկ պատուական մարգարտի մը (Հռիփսիմէի) վրայ խնդութեամբ կը վազեն ամենայն հետևանօք. արևմուտք և արևելք, Դիոկղետիանոս և Տրդատ, իրարու կ'իմացընեն այն հրաշալի գեղեցկութիւնը. և մինչդեռ խօսքով իրարու կը խաստանան, ծածուկ հնարքներով կը ջանան յափշտակել իրարմէ։ Աչխարհիս առջև զօրաւոր սեպուած մարդիկներուն զէնքերը կը թուլնան. ուր ընդհակառակն տկար կարծուած կանայք՝ աստուածազգեցիկ զօրութեամբ քաջալե-

բուած՝ զօրութեամբ և փառքով պերճա-
ցեալ թագաւորը՝ կուսական ձեռօք կը
յաղթահարեն։ Ո՛րչափ գեղեցիկ, պարզ
և բանաստեղծական են այն նմանութիւն-
քը, մերթ առ Աստուած, մերթ առ կու-
սանս և մերթ առ ոտնդոս գառնաձները։
որով իրաւամբք ազգային բանաստեղծու-
թեան գլխաւոր յիշատակներէն մէկը կը
սեպուի։

Կոմիտասայ անուանարքը յիշատակուած ու-
րիշ երկասիրութիւնք. — Ուռհայեան և Կա-
ղանկատուացին ուրիշ այլ և այլ ճառեր և
գրուածներ կ՚ընծայեն Կոմիտասայ։ Աստնց
մէջ գլխաւոր կրնան սեպուիլ առ պատ-
րիարքն Կոստանդնուպոլսոյ գրուած քա-
նի մը թղթերը՝ հաւատոյ դաւանութեան և
այլ և այլ ազգային ծիսից վրայ։ Այս թղթե-
րէն մէկ քանին Կաղանկատուացւոյն գրո-
ցը մէջ կը տեսնուին, ու արժանաւորք են
Կոմիտասայ հանճարոյն, սրտին ու գի-
տութեանը։ Իրեն կ՚ընծայուին ուրիշ քա-
նի մը քննաբանական կամ աստուածա-
բանական համառօտ գրուածներ, որ ի-
րենց իմաստներովն ու լեզուով շատ կը
հեռանան Կոմիտասայ գիտութենէն ու
ընտիր և կիրթ ախորժակէն. ուստի և հա-
ւանականաբար ուրիշ հակառակասէր ու
տգէտ անձանց գրուածներ են՝ իրեն ա-
նուամբը հրատարակուած։

ՆՉՆԻԿ ԵՐԷՑ

Ա յս առենեբս կը յիշատակուի Եղնիկ երէց կամ վարդապետ մը, որ Կոմիտաս կաթուղիկոսեն ժամանակ և անոր ձեռքովը եղած սրբոց Հռիփսիմեանց մարմնոյն փոխադրութեանը ակնատես, և այն դէպքին պատմութիւնն ըրած է, քանի մը խօսքով յիշատակելով տուրբ Թարգմանչիքը, և անոնց ձեռքովն եղած աղցային բարիքը։

ԵԶՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Կոմիտաս և Քրիստափոր կաթուղիկոսաց յաջորդն էր Եզր, նիգ գաւառին Փառաժնակերտ գեղջն. որ մեր եկեղեցական պատմութեանց մէջ նշանաւոր կարնոյ Ժողովքը գումարեց, Յունաց հերձուածը կայսեր յորդորելովն և սակսմամբ։ Եկեղեցական ուրիշ այլ և այլ բարեկարգութիւնք ալ ըրած է. մանաւորապէս Ժամակարգութեան և հաստարակաց աղօթից մէջ։ Ա յս խօսքիս սաւգութեան երաշխաւորութիւն կու տայ Յովհան Իմաստասէր, որ Աբեւագալի կարգը իրեն կ'ընծայէ։

Եզրի ժամանակակից ուրիշ քանի մը անուանի վարդապետք ալ կային, թէ բարեպաշտութեամբ և թէ գիտութեամբ նշանաւոր անձինք։ Անոնց մէջ անուանենեբէն կը սեպուէր,

ՄԱԹՈՒՍԱՂԱ

Ա.սոր գովեստը կ'ընէ Ուռպելեան, Միւնեցւոց վառաւոր և պատմութեան հանդիսասցընողը։ Կ'աւանդէ թէ Դաւիթ Միւնեցւոյ արքեպիսկոպոսին վախճանելէն ետքը՝ միաբան հաւանութեամբ տեղապահ ընտրուեցաւ Մաթուսաղա, զոր «մեծ քերթող և անյաղթ փիլիսոփայ կ'անուանէ. զարգացեալ ամենայն առաքինութեամբ, ուսեալ զքերթողութիւն և վարժեալ ճարտասանականաւն. հմտացեալ փիլիսոփայական արուեստից, յի ամենայն իմաստութեամբ և կատարեալ գիտութեամբ»։

Մաթուսաղայի այս համբաւը լսելց Կոմիտաս կաթուղիկոս. և թէպէտ կաթուղիկոսարանին մէջ ուրիշ այլ և այլ վարդապետք կային, բայց Ա.բշարունեաց գաւառին մէջի վարդապետարանը իրեն յանձնելց երասխաձոր կամ Վարդիկ հայր կոչուած անգը, ուր գիտութեանց եռանդ եղող և ուսումնասէր մանկունք կը կըրթուէին, և որոնց մէջ էր նաև իր թէոդորոս եղբօրորդին։ Կաթուղիկոսին վստահութեանը և համարման արժանաւոր երեցաւ Մաթուսաղա, կ'ըսէ պատմիչը. վասն

պի մեծաւ զգուշութեամբ ուսոյց և հաստոյց
ի գլուխ կատարման »։

Կամիտաս և Բրիտատփոր կաթուղիկոսաց մահուընէն ետքը՝ Եզրի հայրապետութեանը ժամանակ՝ Յունաց Հերակլ կայսրը հրաման հանից որ թէ Հայք և թէ Աստրիք ժողովին՝ի քաղաքն Կարնոյ՝ հաւատոյ խընդրոց քննութեան գրազելու, և նոյն ժամանակաց մէջ յուզուած հերձուածքը խափանելու համար։ Այս վախճանիս դիւրաւ հասնելու նպատակաւ՝ կայսրն հնաոք բեր էր Յունաց իմաստուններ։ Այս հրամանը առնելնուն պէս՝ Թէոդորոս ոչաուներ և ուրիշ նախարարք ժողովք գումարեցին Եզրի քով, և իրենք չուտով մը գէպ՝ի Կարին ճամբայ ելլելով, պատուիրեցին Հայոց կաթուղիկոսին որ ինքն ալ իր ազգին իմաստուններ ու եպիսկոպոսներն առնու, և անտակ երթայ ժողովքի. բայց աշակերտին որ չըլլայ թէ առանց Մաթուսաղայի երթայ ժողովքին մէջ։ Այսչափ մեծ էր ժամանակակից համարումը իր գիտութեանն և իմաստութեան վրայ։

Եկր մարդիկ գրկից առ Մաթուսաղա, թէ իր և թէ ուրիշ եպիսկոպոսաց և նախարարաց կամքն ու բաղձանքն անոր յայտնելու։ Բայց Մաթուսաղա որովհետև իր ամեն փոյթն ու խնամքը վարժարանին բարեկարգութեանը վրայ դարձուցեր, ու անոր յառաջադիմութեան համար գիշեր ցորեկ կ'աշխատէր, յանձն չա-

ուսաւ անոնց խնդրուածոցը դիջանել։ Կաթուղիկոսը երբոր կրկին անգամ մարդիկ դրկեց, Մաթուսաղա առջի պատճառները վրայ իր տկարութիւնն ալ աւելցնելով, անոնք դրկեց Կոմիտաս կաթուղիկոսին եղբօրորդին և իր աշակերտը՝ գիտնդորս, և անոր ձեռքը տուաւ հաւատոյ դաւանութեան թուղթ մը, պատուիրելով որ նոյն թուղթը կարգան ժողովքին մէջ։ Ժողովոյն լսննալէն ետքը՝ Մաթուսաղա եկաւ առ նեղը, և մեծ պատիւ գտնելով իրմէն, Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, ու նորէն իր վիճակը դառնալով, իր նախկին ջանքն ու փոյթը չարունակեց։

Ուռպելեանը իր պատմութեան մէջ ամբողջ կը դնէ Հաւատոյ դաւանութիւնը՝ զոր Մաթուսաղա տուաւ առ Հերակլ յանուն նեղրի։

Մաթուսաղա տասնեւութ տարի Սիւնեաց մետրապօլտութիւն ընդէն ետքը վախճանեցաւ։

Նոյն ժամանակներն ծաղկեցան նաև Դրիդորատուր և Յովհան Մայրագոմեցի վարդապետք։

ԳՐԻԳՈՐԱՑՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ

Անճախիկ ձոր կոչուած գաւառէն. ո՞րուն համար աւանդեր է Շապուհ Բագրատունի՝ թէ Մայրագոմեցւոյն և անոր մոլորամիտ վարդապետութեանցը դէմ կռուած ըլլայ երկար ժամանակ։ Բայց իր գրուածներէն բան մը ձեռնուբնիս հասած չէ։

ՅՈՎՀԱՆ ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻ՝ սրբոյն Գրիգորի եկեղեցւոյն վանականը էր, և նոյն աւանները ազդին մէջ յուզուած կրօնական խնդրոց մէջ՝ Յունաց և անոնց ընդունած վարդապետութեանց դէմ կը հակառակէր։ Այս վախճանաւ երեք գրուածք ալ շարադրեց, կ՚ըսեն Ասողիկ և Վարդան պատմիչները. բայց որովհետև զանազան մոլորական վարդապետութիւններ կը բովանդակէին այն գրքերը, չհամարձակեցաւ Յովհան իր անուամբն հրատարակել, այլ անձանօթ անուններ դրաւ վրանին, այսինքն Թրատ վարուց, Հաւատարմատ և Նոյեմակ։ Բայց ազգը չընդունեցաւ այս գրուածները, և անհետ ըրաւ. եգր կաթուղիկոսն ալ գրկելով դինքը ամէն իշխանութենէ, մանաւանդ տեղ մը վռնտեց։

Ուռպելեանը կ՚աւանդէ թէ Թէոդորոս Ռշտունեաց տէրն և իրեն հետ եղող նախ-

արարք ստիպած ըլլան զնոր՝ որ Մաթուսաղայի հետ կարնոյ ժողովրդը տանի նաև զՄայրագոմեցին, և անոնց աստուածաբանական անգլիկութեամբը Յունաց դէմ դնէ. և թէ նոր արհամարհելով զՄայրագոմեցի՝ անոր խօսքը մոխիկ ըրած չըլլայ, և թէ անով իր և Ներսէսեանց իշխանին մէջ գժտութիւն ինկած է։

Բայց այս դէպքը անհաւատարիմ կ'երեւնայ. նախ որ ինչպէս տեսանք, գրամանալի համարման արժանաւոր անձ մը սեպուած չէր Յովհան, և երկրորդ որ՝ փոխ կոստանդնուպոլսի հայրապետն՝ առ Յաքարիա կաթուղիկոս գրած թղթին մէջ՝ բոլորովին հակառակ վկայութիւն մը կուտայ, թէ Թէոդորոս Ներսեսեի բռնած ըլլայ զՅովհան, և աղուհաղրոշմ խարան մը դնելով անոր ճակտին վրայ, ինչուան՝ի կովկաս աքսորած ըլլայ։

ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Նկարագիր Շինող կաթուղիկոսին օրով էր Յովհան Մամիկոնէից եպիսկոպոսն, և նոյն հայրապետին հրամանաւ պատմական գրուածք մը շարադրեց, որ կերպով մը Չէնորայ ասորւոյն պատմութեան շարունակութիւնն ըլլալով, նոյն անուամբ Տարօնոյ պատմութիւն կը կոչուի։

Պատմութեանը Յիշատակարանին մէջ կը պատմէ թէ Զենոբայ ժամանակէն ի վեր հաճոյական բան մը տեսուած էր Տարօնոյ մէջ, որ իւրաքանչիւր առաջնորդ՝ իր ժամանակին իշխող գլխաւորին քաջութիւնները և պատերազմունքը և բարեկարգութիւնները գրէ, և Գլակայ վանայ եկեղեցւոյն յիշատակ թողու. ասանկով որ օրուան վրայ պատմութիւնը կը շատնար, և կը կոչուէր Աւորուց պատմութիւն. որովհետև ինչուան Թոդիկ վանահօր ժամանակ՝ վանքին առաջնորդն ասորի էին ազգաւ, և ինքն եղաւ որ թէ դիրենք և թէ իրենց կարգերն և լեզուն հայկական ըրաւ։ Բայց կա, կը յաւելու Մամիկոնեան, տեսայ որ Թոսրովու ժամանակէն վեր ինչուան Տրդատայ թագաւորութեան առենը Մամիկոնէից տան մէջ հանդիպածները՝ գրի վրայ առնուած չէին. նոքէն տեղեկացայ թէ Աւհայի կողմերը Մարմառա կոչուած կրօնաւոր մը կայ՝ որ այդպիսի գիրք մը ունի քովը. գնայի քննելու. և տեսայ որ նոյն Յննականեան վանքին մէջ գրուած էր, և հաւանակապաբար Թշնամեայ յարձակման կամ ապառաւութեանը պատճառաւ անոր ձեռքն ինկած։ Եւ որովհետև քովս արդէն տասը գլուխ բան կար գրուած, քանըրութ գլուխ ալ անկէ Թարգմանեցի, և բոլորը մէկէն երեսուն գլուխ՝ մէկ գրքի մէջ հաւաքելով, ինձմէ ետքը եկողներուն յիշատակ ձգեցի։

Բայց մատենագրին յիշատակած երևոյնևութ պատճեններէն միայն ութը ձեռուընիս հասած են. և սոսկայմէ հինգը Ջենորայ անուամբն են, միւս երեքն ալ Յովհաննու Մամիկոնենի։

Մամիկոնենի պատմութեան երթը. —Գլակայ վանից առաջնորդներուն չարաչարգութեամբը կը սկսի Մամիկոնեանն իր պատմագրութեան գիրքը, Ջենոր ասորւոյն օրուընէն ինչուան Թոդիկ վանահայր, որուն ժամանակ Գլակայ վանքը թէ չէնքերով և թէ բարեկարգութեամբ պայծառացաւ։

Անկէ ետքը կը պատմէ թէ ինչպէս Փոկաս զՄօրիկ հայկազն կայսրը սպաննեց, և անոր անպարտ մահուանը վրէժխնդիր եղաւ Խոսրով Պարսից թագաւորն. և ուզելով որ Տարօնոյ Մուշեղ իշխանն ալ հետը միաբանի, մարդ դրկեց իրեն այս փափաքը իմացընելու. ապա թէ ոչ՝ կը սպառնար որ Յունաց երկրէն դառնալու ժամանակ՝ Հայաստանէն և Տարօնոյ երկրէն անցնի աւերելով և քանդելով։ Մուշեղ և ոչ պատասխան առաւ. ու մէկալ կողմանէ սկսաւ երկիրը ամրացընել։

Խոսրով չատ զօրքով Յունաց երկիրը արշաւելէն ետքը, իր Մխհրան քեռորդւոյն ձեռք երեսուն հազար զօրք տալով՝ ի Տարօն դրկեց, որոնք մէկէն Մեղտի և Ասորեստանք կոչուած բերդերը սիրեցան. ամենք ալ Աբծան ըսուած տեղւոյն վրայ

դիմեցին։ Հոն տեղուանքը բնակող հօթն խոտաճարակ ճղնաւորները՝ մէկէն Տարօնոյ սուրբ Կարապետ վանքը վազեցին, և տեղւոյն միաբանից իմացընելով, սոսկալեցին զիրենք որ փախչին երթան, և իրենք մնացին նոյն տեղը. վրայ հասան Պարսիկք, և սպաննեցին սուրբ ճղնաւորները։ Աստուց սրեանը՝ և թշնամեաց ձեռքով Տարօնոյ երկրին մէջ եղած արիւնհեղութեանց վրէժն առնելու համար՝ Մուշեղ իր վահան որդին կանչեց, և յիշեցընելով իրեն թէ ինչպէս շատ տարիներէ՛ի վեր պատերազմի մէջ մնած և միշտ յաղթական եղած, հիմայ ծերութեան հասակին պատճառաւ ալ չիկրնար զէնք բռնել, իրեն յանձնեց որ Պարսից վրէժն առնու։

Մամիկոնեանն կը սկսի անկէ ետքը գալ վահանայ հնարագիտութիւնն և յաղթութիւնները պատմել, աշխոյժ և զուարճաբան ոճով մը. բայց շատ անգամ այնպիսի պարագաներով՝ որ տուգութենէ հեռանալով առաստկայ կերպարանք կ'առնուն։ Վահան գի երբեմն՝ հարիւր տարուան մէջ՝ հանգիպած դէպքերը՝ իբրև մէկ կամ երկու տարուան դիպուած կը յիշատակէ. երբեմն ալ անոր հակառակ՝ քանի մը տարուան դիպուածոց՝ երկայն ժամանակ կու տայ։ Անճիւնքը շատ անգամ իրարու հետ կը չփոթէ. անոր համար մէկուն ձեռքով եղած գործ մը՝ իբրև

ուրիշի ձեռքով եղած կ'աւանդէ։ Ա.ռանց յերկուանալու՝ առաւոպետառան դէպքեր՝ իրրև ճշմարիտ պատմութիւն կը գրուցէ. և ընդհակառակն առաւոպետաց կերպարանք կու տայ այնպիսի դէպքերու՝ որոնց ճշմարտութիւնն ուրիշ պատմագրաց գրուածներէն յայտնի է։ Իրրեւմն ալ իր գրոցը մէջ այնպիսի դիպուածոց յիշատակութիւնք կը գտնուին՝ որ իր մահուընէն նորը պատահած են։

Գլխաւոր մէկ պակասութիւնն ալ՝ չատ տեղերու և քաղաքաց առուգրանութիւններ են, որոնք ընդհանրապէս խմաստակական են, և ինքն իրրև իրական կ'աւանդէ։ Օրինակ իմն, երբոր վ ահան քանեւթ հազար հոգւով՝ Ա.ենհանայ դէմ պատերազմի կ'երթար, Հաշտենից իշխանը կաշառուելով՝ Ա.ենհանայ գլխոյն տեղ ե.բնաւն հազար գահեկան թշնամիներէն առած՝ ետ կը դառնար, վ ահան աստուածային նախանձով վառուած՝ թշնամեաց վրայ վազեց. անոնք ալ վ ահանայ դառնալով՝ ըսին. « Ա.ո ինչ դարձայք, ով աւելաւօսք ». և անոր համար, կ'ըսէ, տեղւոյն անունը Ա.ինչք կոչուեցաւ։ Նմանապէս երբոր վ արազայ և անոր համախոհ Պարսից դէմ դնաց պատերազմաւ, թշնամիքն ահաբեկելով սկսան գրուցել թէ կորսուեցանք՝ « Կորեաք ». և թէ այն պատճառաւ տեղւոյն անունը մնացած ըլլայ « Կորի »։

Ա.յսպիսի անտեղութեանց պատճառ կրնայ սեպուիլ նաև օտար անձանց ձեռք իառնելը Մամիկոնենի պատմութեան մէջ. մանաւանդ որ ինքը Ցիշատակարանին մէջ պատուիրեր տուած, կամ աւելի լաւ ըսենք՝ ստիպած է՝ որ իրենց ժամանակին դէպքերը աւելցընեն. և զարմանք չէ որ երբեմն ոգէտ և անգրագէտ անձինք ալ զնդած ըլլան իր այս թոյլտուութեամբը։ Խօսքերնուս ստուգութեանը դիմաւոր ապացոյց է ձեռագրաց մէջ եղած զանազան տարբերութիւնները։

Պարզ ու գրեթէ ռամկական ոճ մը ունի Մամիկոնեանն. և իր գիրքը աւելի յարգի կրնայ սեպուիլ իբրև պատմութիւն՝ քան թէ իբրև մատենագրութիւն։

Յովհաննու Մամիկոնենի պատմութեան գիրքը տպագրած է նախ ի Կոստանդնուպոլիս 1719ին, ու երկը ձեռագրաց բազմաւթեամբ ի Վենետիկ 1832ին, Զենոբայ ասորւոյն Տարօնոյ պատմութեանը հետ։

ՍԵԲԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մեր պատմչաց կարգին մէջ յետ ոսկեղէն դարու մատենագրաց՝ յետագայ պատմիչք կը դասեն զՍեբիոս եպիսկոպոս, յիշելով իր Պատմութիւնն Հերակլի, կամ Պատմութիւն Հերակլի կայսեր պատերազմաց ընդ

Պարսից. որ և չատոնց անծանօթ մնացած՝ հազիւ ասկէ քանի տարի մ՚առաջ յերևան ելաւ և հրատարակեցաւ։ Իր անձին և ուրիշ գործոց վրայ տեղեկութիւն չունինք, բայց միայն որ Բագրատունեաց ցեղի եպիսկոպոս էր, ինչպէս որ ստորագրած է անունն՝ի գործս ժողովոյն Դունայ՝ Գ Ներսէս կաթուղիկոսին առեն, ՚ի կէս Ը դարուս։

Ակբիսի Պատմութեան նիւթ. — Ցետ յաւերժայիշատակ դիպուածոց Վարդանայ և Վահանայ, զոր անմահացուցին ճարտար գրիչը Եղիշէի և Վազարու, գրեթէ ամբողջ դար ուկէս՝ոչ որ ոճով Հայոց պատմութիւն մը գրած էր, և թէ գրած ալ էր՝ ոչ միայն մեզի հասած չէ, այլ և ոչ Ակբիոսի, որ ՚ի դարուն սկիզբներն ծնած ըլլալու է. ինչպէս կը վկայէ և ինքն. թերևս Հայոց անիշխան ըլլալուն և թշուառութենէ զատ նշանաւոր գործ մը, մանաւանդ ազգային քաջագործութիւն մը չըլլալուն համար՝ յոգուտ հայրենի աշխարհին. բայց Ջ դարուն վերջերը և Ը կիսուն՝ ոչ միայն Պարսից և Յունաց մէջ նշանաւոր գործեր եղան՝ դաշանց և պատերազմաց, այլ և Հայք անոնցմէ նեղեալք կամ ձանձրացեալք կամ անհամբերք՝ թէ ապստամբութեան և թէ քաջութեան գործեր ըրին, որ երկու բնականալ պատութեանց մէջ ալ հրաշակերտեան և անոնց մատագրութիւնն արքունեացն։ Ակբիոս եպի և գլխաւոր դար-

ձերուն ականատես՝ ուզեց գանոնք գրով աւանդել, մանաւանդ ամենէն հռչակաւոր դիպուածն, որ էր Հերակլ կայսեր արշաւանքն ի վերայ Պարսից, անցնելով կրկին անգամ ընդ Հայաստան։ Ասոր պատերազմներն ընդ Պարսից, և այս եղբիննեբուս ազբութեան չխոթութիւնն Ապրուէզ խոսրով թագաւորին ատեն, և քիչ մ՚առաջ ու ետև, ու անոնց ազբութեան նախ տարանալն Հարուածովբ Հերակլի, ու յետոյ վերցուիլն ի ձեռն Նորահաստատ ազբութեան Մահմէտի, դլխաւոր նպատակն են մեր պատմչին. անոր համար ալ իր գլբուածն կ՚անուանի յոմանց Հերակլ՝ ի Սեբիոսէ եպիսկոպոսէ ասացեալ։

Իրմէ առաջ երկայն ատեն աղգային պատմիչ չըլլալն՝ բնական պատճառ մը պիտի սեպուէր Սեբիոսի՝ համառօտաբար յիշելու այն միջոցին կամ առաջին դիպուածներն. և յիրաւի իր նպատակած պատմութենէն առաջ՝ վ՚ահանոյ մնծին գործքն համառօտ կը յիշուին, և իրմէ վերջն եղածներն. բայց անկէ առաջ ալ Հայոց Սբշակունի թագաւորաց և իրենց ատենի Պարթևաց և Յունաց կայսերաց՝ համառօտ ժամանակագրականոցանի մը կայ, ի Մովսիսէ Խորենացւոյ և ի Սեբէոսեանոսէ Տարօնացւոյ առնուած, ըստ խորագրին, ինչպէս որ գրուած է տպագրելոյն մէջ ալ. և այլ աւելի առաջ՝ Հայոց աղգին ի Հայկայ սկզբնաւորութենան, և անոր պատերազմին

ու իր պայազատաց յիշատակութիւնք կ'ըլլան, հին ու վսեմ՝ ոճով. որ ոչ միայն Սեբիոսի դրածն չէ, այլ թերևս և ոչ իրեն դրածն՝ի սկիզբն պատմութեան իւրոյ. այլ այն հին և պատուական հատուածքն՝ Ագաթանգղոսի և Կաղարայ փարպեցւոյ ծանօթ պատմական դրքերէն դուրս գրուած գործերէն են. նոյնպէս ժամանակագրականքն ալ՝ անյարմար թուականներով՝ յետին և ոչ չատ հմտի գործ են: Երկուքն ալ անհարազատ սեպհականով Սերիոսի՝ աւելորդ կը սեպենք հոս քննել զանոնք: Իր հարազատ գործն կը սկսի ապագրին Գ. դպրութիւն ըսած տեղէն, որոյ երկու առաջին գլուխքն համառօտ յիշատակք են իրոյ, և Հայոց իշխանաց կամ մարզպանաց, ի մեծէն Վահանայ մինչև ցՔ. թուրով Թագաւորն Պարսից. և այս միջոցիս գլխաւոր դիպուածն է Վարդան Մամիկոնին (որ կարծի թոռն եղբօր Վահանայ) Պարսիկ Սուրէն մարզպանը սպանելն, և փախչիլն ի կողմն Յունաց, որոց օգնութեամբ դէմ կեցաւ և յաղթեց Ա. Խոսրովու Անուշռուանայ: Այս թագաւորիս համար կ'ըսէ պատմիչս՝ նման քանի մը ուրիշներու՝ թէ մահուան ատեն հատաւոյց ի Քրիստոս ու մկրտեցաւ:

Սակէ ետև ոճով կը պատմէ Սերիոս այնոր որդւոյն Որմզդի անխոհեմ՝ նախանձն ի վերայ քաջ զօրավարին Վահրամայ՝ որ յաղթեր էր Մաղքթայ. և ասոր ապըս-

տամբին, և առ Հայոց Մուշեղ մամիկո-
նեան սպարապետն ալ գրել ու յորդորէին
որ իր հետ միանայ. բայց Հայք, Յոյնք և
Պարսիկք միաբանին ընդ Թոսրովայ Ա-
բուէդի՝ որ կը թագաւորէ փոխանակ Հօրը՝
Որմզդի սպանելոյ. և միաբանութեամբ կը
յաղթեն ապստամբին և ահրամայ։ Թոսրով
չնորհակալութեամբ ինքզինքն որդեգիր
սեպէ կայսեր Յունաց (Մօրկայ)· բայց կաս-
կածանօք պատիւ չիտար Մուշեղի, որուն
երախտապարտ էր՝ իր թշնամւոյն հետ
չմիաբանելուն համար. Մուշեղ ալ դժա-
բած՝ կ'իմանայ Թոսրովայ թերհաւատու-
թիւնը և կը զուշակէ որ ժամանակաւ Յու-
նաց ալ ապերախտ ու վնասակար պիտի
ըլլայ. և խորհուրդ կու տայ որ վերցընեն
զան ալ. բայց Յոյնք չեն հաւանիր ու զգու-
շութեան համար Մուշեղ կը կանչուի կայ-
սեր քով։ Յունաց և Պարսից մէջ խաղա-
ղութիւն կ'ըլլայ. զոր և անխռով պահելու
համար՝ Հայոց կարիճ իշխանաց միջէն կաս-
կածաւորներըը և երբեմն անկասկածելի-
ներն ալ կը Յանան տեղերնէն հեռացընել։
Յոյնք կը խաբեն զանոնք ընդդէմ Բուլ-
ղարաց՝ ի պատերազմն։ Ամբաստ Բագրա-
տունի Բազմայազքն՝ Հայոց դիւցազանց
և հսկայից մէկն, այս վտանգին մէջ չընկ-
նալ ուզելով՝ աւելի մեծ վտանգներու կ'ինկ-
նայ Յունաց ձեռքը. և երկրորդ անգամ՝
մ'ալ բազդով ազատելով՝ կ'ապաւինի առ
Թոսրով, և մեծամեծ բաղութիւններով

անուանի եղած՝ Վրկան աշխարհին մարզպան կ'ըլլայ, Հայոց չինութեան և խաղաղութեան պատճառ, և Պարսից մէջ քաղաւորէն ետև երկրորդ մեծ իշխան, և մի փառաւոր կը մեռնի հոն. նոյն փառաց արժանի կը սեպուի իր Վարազաթրոյ որդին, որ յետոյ կ'անցնի ի Յունաց կողմն, և ուրիշ Հայ նախարարաց հետ կասկածելի կ'ըլլայ. որոց ոմանք յիրաւի նախանձու թեամբ ալ գործելով՝ կը պատժուին:

Խոսրով լսելով Մօրկայ սպանուիլն ի փոկասայ, իր հայրագրին վրէժն առնուլ կ'ուզէ. պատերազմ կը բանայ բնդդէմ Յունաց, ի ձեռն քաջ զօրավարին Լազման Խոռնմայ, որ երկայն տարիներ տագնապեցընէ զՅոյնս, չատ երկիրներու տիրելով և ինչուան զԵրուսաղէմ ալ առնելով, ու Քրիստոսի սուրբ խաչը գերելով և տանելով ի Պարսկաստան: Այս սրբազան գերութիւնը դարձնելու և Յունաց կորանքը կանգնելու համար՝ Հերակլ սպաննելով զՓոկաս և յաջորդելով, Պարսից դէմ կ'ելլայ՝ ինչուան իրենց մայրաքաղաքը դիմելու. ուր և կը հաւնի յետ երկար ու երագ յարձակմանց. Խոսրով կը սպանուի ի Պարսից, տեղը կը դրուի Կաւատ և յետոյ այլք. որոց հետ հաշտութիւն կ'ընեն Յոյնք. Հերակլ ետ կը դառնայ, սուրբ խաչն ալ կը դարձընէ իր տեղը:

Այս գլխաւոր գործքէն զատ Սերիոս կը պատմէ Պարսից վերջի տարբ ժամանա-

կը ու Սասանեանց 400 տարուան ահար-
կու տէրութեան վերջանալն՝ ասկէ զօրա-
ւոր տէրութեան ձեռքով, որ է Մահմէտի
հաստատածն. կը պատմէ ասոր ծագումն
և առաջին զօրավարաց ու յաջորդաց պա-
տերազմներն և աշխարհակալութիւնքն ի
Ցոյնս, ի Պարսս և ի Հայս, մինչև ցամ
Տեառն 660. յիշելով այն առեններուն
Հայ իշխանաց գործերն ալ, որոց գլխա-
ւորքն են նախայիշեալ Վարազտիրոցն,
իւր որդին Սմբատ, և Թէոդորոս Ռշտունի:

Քաղաքական դէպքերէ զատ կը պատ-
մէ Ակբիսա եկեղեցական խնդիրն ալ՝ Հայ-
ոց և Ցունաց հետ միաբանութեան հա-
մար, առիթմամբ Կոստանդ կայսեր, Հայ-
ոց ժողովն ի Դուին և պատասխանն առ
կայսրն: Իսկ Եզրի առեն հանդիպածը հա-
դիւ թէ կը յիշէ: Երբ առդէմի առմանէն
նաև ալ Հոն պատրիարքի տեղ գրուած
Մոզեսոսի թուղթ մը մէջ բերէ առ Կո-
միտաս կաթուղիկոս մեր և ասոր պատաս-
խանը. թէ ասոր և թէ ուրիշ կաթուղիկո-
սաց գործերն ալ համառօտիւ յիշէ պատ-
միչս:

Ակբիսա ոճն և պատմական արժէքն. —
Ակբիսա լեզուն մերձաւոր է մեր մատե-
նագրութեան ոսկի դարուն հեղինակաց.
դեռ կը պահէ այն նուիրական հնութեան
ոճն և պարզութիւնը, որ յաջորդ դարուն
մէջ կը խառնուի արաբական բազմաբա-
նութեան: Պատմելու եղանակին մէջ ալ

ընդհանրապէս համառօտ և ուժով երա-
գութիւն մ՚ունի, որ կարծես թէ իր դիւ-
ցապին՝ Հերակլ կայսեր՝ արագարագ ար-
շաւանացը կ՚ուզէ նմանցընել։ Ա.ռանց եր-
կար խորհրդածելու կամ նկարագրելու՝
իրաց և անձանց որոշ և ճշդիւթ կերպա-
րանքը կը յայտնէ, անկողմնաւէր կամ
անաչառ տեսութեամբ, որ ինչպէս ամեն
պատմչի կը վայլէ՝ մեր հին պատմչաց այլ
ձիրքն է, բայց դժբաղդաբար ոչ յետնոց
ալ։ Ի ժամանակագրութեան թէ և տեղ
տեղ կը յիշէ Յունաց կամ Պարսից թա-
գաւորին թագաւորութեան տարին, բայց
ոչ ամեն տեղ, և ոչ ալ Հայոց թուականը
կը բանեցընէ. որով ամեն պատմածին տա-
րին որոշ չգուշակուիր, և մութ կը մնայ.
մանաւանդ երբ այն դիպուածներն ուրիշ
պատմիչներէ յիշուած չըլլան։ կան ալ
այսպիսի դիպուածներ. և ատոնք են ըստ
պատմականին աւելի արժէք տուողն Ա-
բիսոսի պատմութեան, ուսկից առած են
շատ բան ի դարու պատմիչքն, Յովհան-
նէս կաթուղիկոս, Թոմա Արծրունի և այլք.
և կան քանի մը կարևոր ազգային դի-
պուածք՝ որ ուրիշներէ յիշուած չեն, և ոչ
ալ դեռ մեր ընդհանուր պատմութեան
մէջ անցած։ Հերակլ կայսեր արշաւանաց
մէջ ալ՝ թէ և շատ բան յիշուած է ի Բիւ-
զանդացւոց, բայց կան նոր և կարևոր դի-
տելիք՝ տեղեաց և գործոց, որ արևելեան
կայսերութեան և արևելից պատմութեան

այն ժամանակին պիտանի լոյս կ'ընծայեն, և պէտք է պատմասէրը յարգեն զանոնք։

Ներիոսի պատմութիւնը տպագրած է Վենետկոյ պոլիս յամին 1851 բանասէրն Թադէոս Մխիթարեանց, բազդատութեամբ երկուց օրինակաց, ո՛ւին գըրուած յամի 1568, միւսն 1672։ Ի ուսերէն ալ թարգմանած և տպագրած է Յանօթութեամբ Ի Բնդերպուրկ, յամի 1862, աշխատասիրութեամբ գիտնական ազգայնոյ Ռ. Պատկանեան։

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ

Դարուս մատենագրաց նշանաւորներէն մին և պատմչաց ամենէն նշանաւորն է Մովսէս Կաղանկատուացի, որ Ներիոսի նման՝ ինչուան ասկէ քսան կամ երեսուն տարի առաջ՝ չատոնց անծանօթ մնացած և կորսուած կը սեպուէր. և միայն Ի նախնեաց կը յիշուէր Ի շարս պատմչաց, թէպէտ և անոնց իսկ չատերուն ալ չատ ծանօթ եղած պիտի չըլլայ, որովհետև ոչ անկէ վկայութիւն մը կը բերեն, և ոչ ալ ստոյգ ժամանակը գիտեն. այլ ոմանք ճըշմարտապէս այս Ի դարուս կը ցուցընեն, և ոմանք տասներորդ դարուն. ինչու որ իր անուամբ ընծայուած գրոց պատմութիւնն՝ ինչուան Ց. դարուն վերջերը կը հասնի. յորմէ նաև հիմակուան բանասիրաց ոմանք ալ Ց. դարու հեղինակ կը սե-

պէն զսա, մասնաւորապէս Մխիթարայ Աբրիվանեցւոյ ժամանակագրութեանխօսքին նայելով, որ նկ և նծ (980–1000) Թուականաց մէջ կը դնէ, ըսելով. «Ասա Աղուանից պատմագիր Մովսէս Կաղանկատուացի, և Դրիգոր Նարեկացի», և այլն։ Թէ և նոյն ինքն Մխիթար ուրիշ տեղ՝ ի շարի պատմագրաց Հայոց, աւելի վեր կը դնէ զսա, յառաջ քան զԼևոնդ՝ և զՅովհաննէս կաթուղիկոս։ Արդ մենք անկերկայ ենք որ բուն Աղուանից պատմիչն Մովսէս էր ի Կաղանկատուք գեղէ բնիկ Ուտի գաւառին, և Պարտաւ մայրաքաղաքի ու Տրտու գեաղն մօտ (որ հիմա Թարթառ կ'ըսուի), իսկ գեղն ալ ըստ ծանօթից այն կողմերուն՝ հիմայ Պարունկաթաղ կամ Վարունկաթաղ կ'ըսուի եղեր. և հօթնեղորդ դարու մէջ մեռած է, հաւանօրէն և ծնած։ Աղուանից վիրոյ կաթուղիկոսին քով՝ փոքրաւորի պէս կ'երևի՝ անոր հետ Խաղրաց բանակը գացած տեղն յամի 629. վասն զի իբրև ականատես կը ստորագրէ և կ'ըսէ ալ. «Ինդ տեսաք զբազմոցս նոցա», և այլն։ Իսկ իր պատմութիւնը գադրեցուցած է 685–8 Թուականին մէջտեղ, ինչպէս կը յայտնուի պատմածէն և ոճէն և գրոց բաժանմունքէն, որ երեք գիրք են. երկուքն մեծաւ մասամբ իրենն է Հարապատ. երրորդն որ ետեի երկու կամ երեք հարիւր տարուան դէպքեր կը պատմէ կամ կը յիշէ համառօտաբար, ուրիշի գրած

է, որ և իրեն համանուն ըլլալով՝ նոյն մէկ անձն կարծուած է։

Կաթողիկոսարաց Պատմութիւն կ՚ըսէ. — Հին աուեն արևելեան իշխանութիւնքն ալ իրենց ցեղին և իշխանութեան գործոց առանձին յիշատակագիր և պատմիչ ունէին. մեր ազգին մէջ ալ ոչ միայն թագաւորն՝ այլ և գլխաւոր նախարարք իրենց ազգաբանութիւնը և ժամանակագրութիւնը խնամով գրել կու տային. և այսպէս ընդհանուր ազգային պատմութենէ զատ՝ կային այլ և այլ մնծամեծ ցեղերու մասնաւոր պատմութիւնք ալ, ինչպէս Սիւնեաց, Աղթբունեաց, Մամիկոնէից, Բագրատունեաց, և այլն. յորոց ոմանք ինչուան մեզի հասած են. սոնց մէջ ամենէն հինն է (բայց յանկատար պատմութենէն Մամիկոնէից կամ մանաւանդ Տարօնոյ) մեր հեղինակին Պատմութիւնն Աղուանից։ Այս ազգս որ հին կովկասեան ազգաց մէջ գօրաւորագոյնն էր, մինչև մեծին Պոմպէոսի զէնքերն իր վրայ դարձնել տուաւ, և ծանօթ Քունաց և Հռովմայեցւոց, կ՚արժէր իր առանձին պատմիչն ունենալ. բայց թէ ինչուան մեր հեղինակին ժամանակ ունեցեր էր ոճով ժամանակագիր մը, շատ հաւանական չէ. վասն զի կէս լեռնցի և բարբարոս խըսոսուիղու ազգ մ՚էր. ծագումն ալ ոչ շատ ծանօթ. սակայն մերձաւորութեամբ մեր ազգին և ազգախառնութեամբ՝ ընտե-

լացած քաղաքական օրինաց, եւս առա-
ւել քրիստոնէական կրօնից ընդունելու-
թեամբ. զոր թէպէտ եւ անվիջապէս առա-
քելոց աշակերտաց բարոզութեամբ ընդու-
նած էր, ըստ աւանդութեան Պատմչիս եւ
այլոց, այլ չուտով խափանուած էր սուրբ
կրօնքն, մինչեւ մեր Լուսաւորիչն Գրիգո-
րիոս անոնց ալ կրկին լուսաւոր եղաւ, եւ
իր համանուն Թոռը անոնց առաջին կաթո-
ղիկոս դրաւ. յետոյ մեր ուսմանց լուսա-
տու կամ դպրութեանց հայր Ս. Մես-
րովպն՝ նոյնպէս եղաւ անոնց ալ, գրեր ըս-
տեղծելով, թարգմանութիւն ընելով Ս.
Գրոց, և ալֆաղուր լեզուներն կանոնաւորե-
լով ըստ կարելւոյն: Ա՛յն առեներն մեր
ազգային տէրութիւնն ակարացած և վեր-
ջի չունչն հատած էր. իսկ Աղուանք՝ ի-
րենցմէ աւելի հիւսիսային և հեթանոս
կովկասաբնակներէն նեղուած՝ իրենց լե-
ներէն իջնելով անցեր էին գկուր գետ,
և Հայոց Աւար, Փայտակարան և Արցախ
նահանգաց՝ քիչ շատ տիրած, որոց վրայ
իշխելին նաև յետագայ դարուց մէջ՝ ի-
րենց այլ և այլ իշխանական հարստու-
թեամբք, մինչեւ գրեթէ յ՝ԺԲ և ԺԳ դար.
և բոլոր այս իշխանութեան այն հին հայ-
կական նահանգներն՝ կոչուեցան Աղուանք
կամ Աղհարք Աղուանից, փոխանակ լու-
սաւորչին և կովկասեան աղհարհին, ուր Քրիս-
տոսի գալստենէն դարերով առաջ ալ հին
Աղուանք թագաւորութիւն ունէին: Ե, Զ,

Ի դարերն են նոր Աղուանից ծագկած և վայելուչ ժամանակն. որոց վերջերը մեր հեղինակն՝ ականատես մեծամեծ քաղաքական դիպուածոց և իր դիւցազնացուցեալ Ջուանչէր իշխանապետին, չարժեցաւ գրելու իր ազգին պատմութիւնը. թէ և ճշդակի ըսելով՝ այն առեն Աղուանք կոչեցեալոց մեծ մասն Հայք էին, և Հայերէն կատարուէին կրօնական և քաղաքական մեծ պաշտամունք. իսկ Աղուան լեզուն երթալով կը նուազէր, թէ և ինչուան հիմայ կը լսուի քանի մը տեղ՝ կուր գետոյն երկու կողմն ալ, և Ուտիք կամ Ուտէացւոց լեզու կ'ըսուի: Ա. Մեսրովպայ քարոզութիւնը յիշող հեղինակաց անուանեալ Գարգարացւոց, Գարգմանաց, Ուտէացւոց և Աղուանից լեզուքն՝ ամենն ալ նոյն կը սեպուին, և հիմիկու մեացորդէն անտարակոյս կ'ըլլայ՝ որ անոնց վկայածին համեմատ՝ խեցգետկ, կոկորդախօս, սլիակզուբ լեզու մ'էր, և անարժան կերթի մը տաց գործածութեան: Այս պատճառնիւ գրեթէ հարկ էր որ Կաղանկատուացին ալ իր պատմութիւնը հայերէն գրէր. ինքն իսկ ազգաւ Հայ էր՝ Ուտացի ըլլալովն. իսկ Ուտիք և մերձակայ գաւառաց բնակիչք՝ ըստ մեր պատմչաց աւանդութեան, և նոյն իսկ հեղինակիս, սերեալ են յԱղանայ, զոր վաղարշակ առաջին Արշակունի թագաւոր մեր՝ կարգեց վերակացու կամ իշխանապետ Աղուանից. և առ-

կէ կը սկսի մեր հեղինակն ալ իր աշխարհին իշխանաց կամ թագաւորաց ազգաբանութիւնը կամ չարաբարգութիւնը. վերկայելով ընդ խորենացւոյն՝ որ յիշեալ Ա.ռանն այլ էր ի ցեղէ Սիսակայ Հայկազնոյ՝ յորմէ և Սիւնիք. իսկ անկէ (Ա.ռանէն) առջի Ա.զուանից պատմութեան համար, կը խոստովանի որ «չունիմ ինչ ասել զրաւոյգն ի պէտս լսողաց, մինչև ցվաղարշակ արքայն Հայոց»:

Թէպէտ անկեղծ և խոհեմական խոստովանութիւն, այլ և կը ցուցընէ թէ որչափ նուազ էր Ա.զուանից Մովսէս պատմչին հմտութիւնն քան զՀայոց պատմչին Մովսէսի խորենացւոյ, որ վաղարշակէ առաջ ալ իր ազգին պատմութիւնը գտեր էր մինչև ի նահապետաց դարն և ի ջրհեղեղն հանելով, և Հայկազանց առնն ալ կը յիշէ զԱ.զուանս: Կազանկատուացին յուսահատելով այս հին ժամանակներէն լոյս հանել իր պատմութեան (որ երկու գիրք բաժնած է) սկիզբը՝ երեք գլուխ համառօտիւ կը կարգէ նահապետաց անուանքն և թուականը, սկսեալ Ա.դամայ. յետոյ Նոյի երից որդւոց ցեղերը, և թէ որ ազգեր գիր ու գալութիւն ունին. այս կարճ և անկատար յիշատակներն ալ առած է իրմէ առաջ թարգմանուածներէ, և Յունաց գտակական ըսուած ժամանակագրութենէն: Զորրորդ գլխոյն մէջ կ'իմացընէ վերը բաժնիս վասն Ա.ռանայ, և թէ ի Սի-

սակայ էր, և սա ալ ի Յարևթայ։ Հինգե-
րորդ քանի մը տող կարճ դլխով՝ կ'իմա-
յցնէ Աղուանից աշխարհին բնական դիր-
քը և բևբրը. զոր արժան էր երկարօրէն
նկարագրել, և դժար ալ չէր իրեն։ Յա-
ջորդ դլխով կը խոստովանի զարձեալ թէ
նաև Այրանայ մինչև ի Վաչագան թա-
գաւոր ալ՝ «պատմութիւն ճշմարիտ . . .
այլ ինչ ոչ գոտաք». և չգանելուն պատ-
ճառն ալ կու տայ (եռևի դլխուն մէջ),
թէպէտ «յայժ ցանկալի էր ըստ կարգաց
դիտել զպատմածս որ ինչ Այրանայ նա-
խագահութենէն ցայսօր գործք, բայց ա-
բեւելեայցս բազմազգութիւն՝ ամբոխեալ
ցուցանէ զորպէսն, և կռակարանացն հրո-
կիզութիւնք։ Սակայն յայսմ վայրի նը-
պատաւորէ մեզ բերթողահայրն Մով-
սէս՝ զպատերազմին Աբասեազդայ (Ա.)
ընդ Հռոմայեցիսն», և այլն։ Եւ կարճ
խօսքով կը յիշէ որ Աղուանք ալ օգնա-
կան էին Հայոց այն պատերազմին մէջ։ Ցե-
տոյ ջանալով կը գտնէ ուրիշ պատմական
մանաւանդ կրօնական դիպուածներ ալ,
Քրիստոսի առաջին հինգ դարուց մէջ, և
նախ քան զՎաչագան եղած, և կարգաւ
կամ եռևի առաջ կը յիշէ զանոնք. շատ
տեղ իրմէ առաջ գտած յիշատակարգու-
թիւնքն օրինակելով։ Աւսպէս են Թադէոս
առաքելոյ աշակերտ Եղիշէի գարն և զՎ-
ղուանս լուսաւորչին քրիստոնէութեամբ,
իր նահատակին, և յետ ժամանակաց նոյն

խարացը յայտնուիլն. Ուռնայր Թագաւորի հաւատալն ի Քրիստոս, և մկրտիլն ի Ս. Լուսաւորչէն մերմէ. Տրգատայ և իր յաջորդացը գործերն յԱղուանս. Գրիգորիսի հայրապետա կարգիլն Աղուանից, և նահատակիլն ի Մասգթաց. և իր և իրեն բերած սրբոց նշխարաց ծածկուիլն ու վաչգանայ ատեն յայտնուիլն. ասոր հօր վաչէ Թագաւորին սկարանալն ի հաւատս և դարձեալ զօրանալն, և մեր Գիւտ կաթուղիկոսին առ նա գրած թուղթն, որոյ համար պարտական եմք հետևակիս։ Որ և հոս հասնելով՝ նորէն (գլ. ԺԵ.) Յաբեթէն սկսեալ Հայոց նահապետներ և Հայկազուն Թագաւորները կ'անուանէ. կը յիշէ զԱրան ի նոյն Հայկազանց. և ապա Աբշակունեաց ցեղէն Թագաւոր մը Աղուանից՝ վաչագան քաջ, որ իբրև Գ. դարուն կիսուն Թագաւորած կ'երևի, և անոր պատանները կը համրէ՝ մինչև յ'Գ. և մեծն վաչագան, որ կ'ըլլայ տաններորդ ի Թագաւորս, և ի դարուն վերջերն իշխանութեան հասած։ Ասոր գործերը մանրամասն կը պատմէ (ԺԶ–ԻԶ գլխոց մէջ), թէ քաղաքաշինութեան, թէ ուսմանց պարագայման և թէ մանաւանդ կրօնական բարեկարգութեանց, հեթանոսութեան հետքը ջընջելով, եկեղեցիներ շինելով, ժողովք ը՛ընելով ի Պարտաւ, Գրիգորիսի և ուրիշ սրբոց անյայտ եղած նշխարքները փնտռել տալով։ Շատ հետաքննական է Աղուանից

քրմայ մատնահատութեան հնթանուա-
կան և անգութ սովորութիւնն՝ զոր չնչեց
վ աչագան : Ա յս թագաւորիս գործերը յի-
շելէն ետև՝ կ'անցնի պատմիչն Ս . Մեսրով-
պայ քարոզութեանը յԱղուանս , և անոր
աշակերտաց բնակութեանն ի Ղազախ (Խա-
չենու կողմերը) , և նահատակութիւն ի Հո-
նաց՝ որ հոն արշաւեր էին , զորս և եղե-
կիել մարգարէին տուած անուամբ Խա-
մսորեան և Թորելական զօրք կ'անուա-
նէ . և ասոնց զօրավարին հաւատալն ի
Քրիստոս և նահատակիլն : Հոս կը լմընի
նայ Ա. գիրք պատմութեանն . Թէպէտ և
երկրորդին առջի գլխոց մէջ ալ գարձեալ
Մեսրովպայ յիշատակ կ'ըլլայ , և անկէ ա-
ռաջ վ արդանանց , զորս հարկ էր յիշել
նախ քան զգործս վ աչագանայ . յայտնա-
պէս չխոթութիւն կայ գլխակարգութեանց
մէջ , նաև պակասութիւն գրոցն . վասն զի
ոչ վ աչագանայ մահն և ոչ յաջորդն կը
յիշուին , այլ պատմութիւնն կ'անցնի ի կէս
Ջ դարու , ի սկիզբն Հայոց Թուականին ,
երբոր Ա բաս կաթուղիկոս նստաւ Ա-
զուանից և աթոռն ի Ղազայ փոխեց ի
Պարտաւ , ուր և ժողովով մերժից ազան-
գաւորները , որոց համար գրեր էր առ նա
կաթուղիկոսն Հայոց : Ա սկից ալ գարձեալ
75 տարուան միջոց մ'անցնելով՝ կու գայ
իր ժամանակ՝ գինքն ափշեցնող դէպքերը
պատմելու , ինչպէս ինքնին կը վե-
կայէ (գլ. ϐ.) խոստովանելով թէ « Ա ռաա-

ցայ գկարգ բանին » . և կը սկսի Քրիստոսի 625 թուականէն պատմել Պարսից Բ Խոսրովու և Հերակլ կայսեր պատերազմները , Յունաց տկարանալը և օգնութիւն խնդրելը ի Թագրաց , որք կ'արշաւեն ի Վիրս և Ա.ղուանս . երկու կողմէն նեղեալ Խոսրով՝ իր բնիկ ազգէն , ընտանիքէն և յորդւոցն ալ կը մերժուի ու կը սպանուի . այս ողբերգական դէպքը ճարտար կը պատմէ Հեղինակս (գլ. ԾԳ .) : Խոսրովայ սպանութեամբ իր բանութենէն գերեալ և կապեալքն կ'արձակին . ասոնցմէ է Ա.ղուանից կաթուղիկոսն ալ Վիրոյ , որ երկար տարիներու տառապանքէ ետև կը դառնայ իր նկեղեցին բարեկարգելու . բայց Թագրիք իր հայրենիքը պաշարած են , կը ստիպուի իրեւ գերի երթալու անոնց ահաւոր խաբանին որդւոյն բանակը , և պատիւ գտնելով կը դառնայ տեղը : Ա.յս ուղեգնացութեան ընկեր էր մեր պատմիչն այլ , որ շատ հետաքննական և պիտանի տեղեկութիւններ կու տայ այն առենուան ա.մենէն զօրաւոր ազգին՝ Թագրաց վրայօք :

Ա.սոնք յիշելէն ետև կը սկսի Ա.ղուանից նոր հարստութեան պատմութիւնը , որ նոյն վերոյիշեալ Խոսրովու Միհրան անուն ազգականաց մէկէն առաջ եկած է , անոր համար Միհրական ցեղ կ'ըսուի . որ և նախ փախչելով ի Խոսրովայ , վերջը անոր հաւանութեամբ կը բնակի մեր Գարգման գաւառը՝ 30000 տուն հետը բերած , որովք կը

զօրանայ. մինչև իր թոռնորդին վարդան՝ խարդախութեամբ կը ջնջէ Աղուանից թագաւորաց ցեղը՝ որ Առանշահիկ կ'ըսուէր, և ինքն կը տիրանայ. ասոր թոռն Վարազ կ'ընդունի դրբիտառնէութիւն մը, կըրտուելով ի վիրայէ, և կը կոչուի Վաղազ-Վրիգոր. ասոր որդին է Ջուանշէր քաջն և մեր պատմչին դիւցազնն, որոյ գործերը երկար կը պատմէ։ Ա.րժանի իսկ մտագրութեան. դժուար դրից և ժամանակի մէջ ըլլալով՝ յորում չորս մեծամեծ տէրութեանց հետ վարուելու էր, որ են Պարսիկք, Յոյնք, Խազիրք և նոր տիրապետող Ա.րաբացիք. որոց ամենուն հետ ալ ճարտարութեամբ կը յարմարի Ջուանշէր, ամենուն իշխողաց քով ալ կ'երթայ զանազան անգամ, ամենուն սիրտը կը շահի, ամենէն ալ մեծ պատիւ և ընծաներ առնելով կը դառնայ իր աշխարհը չհնազանդելու. եկեղեցեաց շինութեան և բարեկարգութեան ալ պարապելով՝ օգնական կ'ունենայ պաշտօնեաէր եպիսկոպոսներ և քահանաներ. որոց աղօթիւք և ջանիք կը յայտնուին Ս. Մեսրովպայ աշակերտաց ծածկած նշխարները և խաչը, որոց համար եկեղեցիք կը շինուին։ Բայց յամենայնի բարեբաղդն Ջուանշէր դժբաղդ վախճան մը կ'ունենայ՝ դաւաճանութեամբ սպանուելով, զոր ոչ միայն կենդանի կերպով նկարագրէ պատմիչն, այլ և մէջ կը բերէ քերթողական ոգի մը՝ զոր

երգից «ճարտասան ոմն ի մէջ անցեալ՝ որ տեղեակ էր արհեստական իմաստից, Դաւթակ անուն կոչեցեալ, հնարագիտական վարժութիւք յաջողակ, և վերծանական քերթութեամբ յառաջադէմ. . . . սկսաւ նա երգել ըստ ալիտեսաց զվիսակարգութեանց զողբս զայս», և այլն. զոր յետոյ առանձինն կը յիշենք։ Ջուանշէրի կը յաջորդէ եղբօրորդին՝ Վարազդատ, զոր կը նեղէն Հոնք արշաւանօք, իբր թէ ի վրէժ մահուան հօրեղբօրն. իսկ նա խորհրդակցութեամբ իշխանաց և կաթուղիկոսին՝ պատգամաւոր կը խաւրէ մինչև ի վառաչան մայրաքաղաք Հոնաց (Թարբուի մօտ) Վնծկունեաց գաւառին եպիսկոպոսը՝ խրատէլ, որ սրբութեամբ վարուց և ճգնութեամբ անուանի եղած էր շատոնց։ խրատէլ ոչ միայն հաշտութեան գալիք հաստատել կու տայ, այլ և դրազում ի Հոնաց գարձընէ ի քրիստոնէութիւն իրենց ծառապաշտութենէն և Թանգրի–խան հսկայ չաստուծոյ պաշտամանէն. մինչև թագաւորն Հոնաց ինքնին եկեղեցիներ կանգնել կու տայ, և կը խնդրէ յԱղուանից և ի Հայոց կաթուղիկոսէն՝ որ զիւրայէլ իրենց հովիւ տան։ Ագուանք չատ դժարութեամբ և վախով կը հաւանին, բայց խնդրելով որ երբեմն երբեմն իրենց ալ այցելութիւն ընէ սիրելի եպիսկոպոսն։

Հոս (գլ. ԽԵ.) կը լմննայ ըստ մեզ կա-

զանկատուացոյն պատմութիւնն. իսկ Բ գրոց եօթն գլուխներն (Ի՜Զ–Ը՜) որ կրօնական խնդրոց վրայ գրուածներ են, կամ կարգէ դուրս գրուած են, և կամ աւելի հատանօրէն՝ ուրիշէ աւելցուցած են. մանաւանդ որ մէկուն մէջ (Ի՜Ը՜) ինչուան Բ դարու վերջերուն յիշատակ կայ: Վերջին երկու գլուխներն (Ի՜Ա՜, Ի՜Բ՜) Երուսաղէմի եկեղեցաց և Աղուանից անուամբ հռն եզած վանաց յիշատակն են, որք անդէպ չեն մեր պատմիչն կարգած ըլլալ ի լրումն պատմութեան Աղուանից:

Կաղանկատուացոյն պատմական արժէքն, և ոճն. — Նախագրեալ համառօտութենէս կ'իմացուի որ պատմիչս մանաւանդ ազգի կամ ցեղի մը դիպուածներ պատմելով, և անոր հետ հիւսիսային կովկասեան ազգաց և մանաւանդ Հոնաց վրայ տեղեկութիւններ տալով, աներկբայապէս շատ հետաքննելի և պիտանի գրուած մը թողած է. և հարկ է ընդհանուր պատմչի մը՝ առ նա դիմել այս տեղեաց և ժամանակաց վրայ գրելու համար. զոր և ոչ ուրիշ մէկն գրած է, կամ մեզի հասուցած: Այս ծանօթութիւններս ալ աւելի յարգ մ'առնին հիմայ Ռուսաց տիրելովն Աղուանից և Հոնաց աշխարհաց վրայ, և Խեզըրպուրգի ճեմարանին քննասէր ուսումնականք չատլայս պիտի առնուն ի կաղանկատուացոյն, չնորհապարտ ըլլալով թէ հեղինակին և թէ անոր ուսուցչին Թարգմանչին,

վերադրի բանասիրի Ֆ. Պատկանեան։ Ան-
բիծոսի պէս ժամանակակից ըլլալով ի դա-
րուն կիսուն հանդիպած մեծ յեղափոխու-
թեանը, Պատանեանց տէրութեան կոր-
ծանելուն եւ Աբբասեանց կանգնելուն, կա-
րեւոր են Մովսիսի պատմածներն ալ դոնէ
իրեւ վստահանալի հաստատութիւն մը
ուրիշներուն պատմածին։ Մեր ազգային
պատմութեան գալով, աւելի ակնդետա-
կան դիպուածոց տեղեկութիւն կ'առնուի մք
հեղինակէս քան քաղաքական. և թերևս
երկուքէն աւելի՝ մատենագրական. վասն
դի ոչ միայն Ս. Մեսրովպայ և աշակեր-
տացն վրայնոր ծանօթութիւններ կու տայ,
այլ և ոչ սակաւ ե, Զ, ի դարուց Հայոց
հեղինակաց թղթեր և դրուածներ կ'աւան-
դէ մեզի, զոր ուրիշ տեղէ չունէինք. այս-
պիսիք են թուղթքն Գիւտայ, Աբրահա-
մու Մամիկոնէից եպիսկոպոսի, Մաշթէի
երիցու առ վաչագան, Յովհաննու կա-
թուղիկոսի Հայոց առ Աբաս կաթուղիկոս
Աղուանից, Աբրահամու կաթուղիկոսի
թուղթն, Յոհ. Մայրագոմեցւոյ գրուածն
վասն Պատկերաց պաշտամանն, և այլն։
Առանց կարգը, և թերևս աւելի վեր դնե-
լու է վասն նորութեանն և աշխուժին վե-
րոյիշեալ Դաւթակայ ազգն ի Ջուանչէր,
այսուբենիկ գլխակարգութեամբ տնա-
տեալ, ըստ ոճոյ Կոմիտաս կաթուղիկոսին
երգած Հռիփսիմեանց Անձինք չարաչա-
նին. քան զոր աւելի տգատ և տրձակ կ'ե-

բևի Դաւթակայ ողբերգս, բայց ոչ ինչ ընդհատ ներդաշնակաւոր և արուեստաւոր։ Աւժան է յիշել՝ որ ձեռագրաց ոմանց մէջ մինչև ՚ի ձ տառն կը հասնի ողբս, իսկ ոմանց մէջ մինչև ՚ի Ք հասուցած է. սակայն այս երկրորդ մասն առջինին չինմանիր, և յայտնապէս օտար և նոր գրչի հիւսուած է։ Հեղինակին հմտութեանը գալով՝ չատ ընդարձակ տեսարիզի տէր չէ, և ոչ յունական լեզուի և դպրութեանց հետամուտ. սակայ կարծեցոյց մէջ նշանեալի է Աքանաց և Աղուանից չփոթութիւնն (ա գիրք, ը գլ.) մեր Բ. Բուզանդի պատմագրէն և Աթինական խնամութիւնը պատմելու առն։ Ուրիշ կողմանէ՝ բառական անաչառ և ուղղական ոգի և լեզու կը բանեցընէ, առանց երկար և բարակ խելամտութեանց։

Ըստ ոճոյ մատենագրութեան՝ կաղանկատուցեալն լեզուն յստակ և հարուստ է, և գեռ առաջին ընտիր դարուց հայկաբանութիւնն կը փայլէ ՚ի նմա, բայց ոչ բոլորովին. վասն զի տեղ տեղ, թէ և քիչ, մթաբանութիւն ունի, և աւելի չատ տեղ ճոխաբանութիւն մը, որ թէպէտ իրմէ վերջիններուն պէս չափազանց չէ, բայց և ոչ առաջնոց չափ ճշդած և պարզելի պարզութեամբ։ Ի վերայ այսր ամենայնի՝ կենդանի և վաւերուն գրուցուածք մ՚ունի, և աշխոյժ ու գրեթէ բանաստեղծական նկարագրութիւններ՝ ուր որ նորանչան բան մը

տեանէ կամ երևակայութիւնն դրդի. ինչպէս Պարսից յետին և Հազարացւոց առաջին դիպուածները պատմել սկսելու առեն (ր. թ.) կամ Ջուանշէրի՝ խալիֆային առած ու բերած ընծաները տեսնելով, որ են պապկայն (թութակ,) փիղն ու տաճիկ երիվարները, ղորս զմայլմամբ և ճշդիւթ երևոյթներով կը նկարէ: Խոսրովու և Ջուանշէրի սպանութիւններն ալ ազէկ և պատառուշ պատմուած են, բայց երբիներն մէջ մթաբանութիւններ կան. Հոնաց և Թագրաց սովորութիւններն ալ թէ ըստ նորութեանն և թէ ըստ դրութեանն հասկայ են կարդալու:

Շարունակութիւն պատմութեանն Ղուտաճից. — Ինչպէս ի սկզբան ըսինք՝ Կաղանկատուացւոյն պատմութեանն հետ Գ. գիրք մ՚ալ աւելցուցած է 23 գլխով. որ համառօտ և աւելի ստորին ոճով՝ Ղուտաճից յետագայ դիպուածները կը պատմեն, ինչուան ի կէս ժ. դարու կամ աւելի անդին: Բայց առջի գլխոց մէջ հեղինակն Մահմէտի ծագման և անոր յաջորդաց պատմութիւնը կ՚բնէ. յետոյ կրօնական դէպքերու կ՚անցնի որ ի սկիզբն Ը դարու հանդիպեցան, պատճառաւ Ղուտաճից կաթուղիկոսին ընդունելուն զժողովն Քաղկեդոնի և Հայոց եղեալ կաթուղիկոսին զաւրն Ղուտաց ու ուրիշ կաթուղիկոս դնելը, և ասոնց բրած ժողովները: Ցետոյ կը պատմէ (ուսկից որ Կաղանկատուացին

լաներ էր) վ. արազտրդատ իշխանապետին երթալն և արգելուիլն ի Կոստանդնուպոլիս ու դառնալն հնարագիտութեամբ. նոյնպէս իրեն որդւոց դիպուածն ալ. ապա կը յիշէ Աբրահամեան արշաւանքն ի Հայս և յԱղուանս յԻ և Ը դարս. և դարձեալ 751 թուականէն ինչուան ի դարուն սկիզբները հանդիպածներն յԱղուանս: վերջընթեր գլխով մը կը համառօտէ Մխիթարեան Աղուան ցեղին յաջորդութիւնն և անոր խնամենալն ընդ Սիւնեաց, և առ սոսա անցնիլն Աղուանից իշխանութեան, որ և ի թագաւորութիւն փոխեցաւ յիշխանութեան Ցուվհաննու Աննէքերիմայ, յետ կիսոյ ի դարու: վ. երջին գլուխն է Աղուանից կաթուղիկոսաց կարգը, որ և կը հասնի մինչև ի վերջ ի դարու, յորում գնա կը թագաւորէր Ցովհ. Աննէքերիմն: Արդ թէ ասկից ալ, թէ Մխ. Այրիվանեցւոյն բաժէն յայտնի է՝ որ այս ժամանակս, այսինքն ի վերջ ի դարուն, գրած է զասունք՝ Աղուանից պատմութեան չարունակողն, որ է անշուշտ Մովսէս Դասխուրանցի, յիշեալ յԱ-Բ դարու հեղինակ մը:

Աղուանից Պատմութիւնն այլ և այլ օրինակաց բազդատութեամբ, ծանօթութեամբք և երկար յառաջաբանիւ՝ Աղուանից վեպք, հրատարակեց տպագրութեամբ ի Բաթիւմ՝ յամին 1860, Շահխազարեան Կարապետ վարդապետն, որ և իր գրչագրաց հետևելով կաղնէյպոռացի կ՚անուանէ: Ըստ սերին թարգմանութիւնն ալ յիշեցինք, տպագրեալ ի Վենետիկ:

ԴԱՒԻԹ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑԻ

Ներսիսի Շինող Հայրապետին կաթուղիկոսութեան օրովը Ծաղկած է նաև Դաւիթ անունով մէկը՝ Բագրեւանդ գաւառին Բագաւան գեղջէն, զոր մեծապէս կը գրուատէ Ասողիկ՝ իմաստասէր և մեծ փիլիսոփայ կոչելով։ Ասիկայ 648ին ժամանակները՝ Կոստանդ կայսեր կողմանէ դեսպանութեամբ գնաց՝ի Հայս, և անոր կողմանէ բերաբեր հրովարտակ մը առ Ներսէս կաթուղիկոս, և առ եպիսկոպոսունս և առ կիւրապաղատան Ամբատ վարազտիրոցեան, և ուրիշ իշխաններուն։ Անոնցմէ մէկն՝ Աշոտ պատրիկ, յորդորից զԴաւիթ՝ որ իւր գիտութեանը արժանաւոր գրուածով մը ցուցընէ թէ ինչ կերպով կամ ի մտաւով ուղղափառապէս կրնայ գրուցուիլ երկու բնութիւն՝ի Քրիստոս. Բագրեւանդացին ալ ճառ մը շարադրեց, որ մեր ձեռքն ալ հասած է։

Գրչագրաց մէջ ուրիշ գրուած մըն ալ կայ, Քրիստոսի ներգործութեանց վրայ, այսպիսի խորագրով. «Հարցումն Դաւթի իմաստասիրի», որ թերևս այս Դաւթի երկասիրութիւնն է և ոչ Անյաղթին. որուն թէ համբաւոյն և թէ գիտութեանը անարժան գրուած մը կրնայ անպուիլ։

Սրբոյն Բարսղի ճառերուն թարգմանութեանցը երկաթագիր օրինակի մը մէջ, Քրիստոսի ծննդեանը վրայ գրուած ճառին թարգմանութենէն ետքը՝ հետեւեալ ծանօթութիւնն գրուած է. «Դաւիթ թարգման տարօնացի՝ զճառս զայս յետոյ զարձոյց ի յունէն ի հայ բարբառ, ի Դամասկայսոյ քաղաքին, հրամանաւ Համազասպայ կուրապաղատի Մամիկոնէից տեառն»։ Ըստ ոմանց այս Դաւիթս ալ Բագրեւանդացին է։ Իսկ Համազասպ կիւրապաղատին համար մեր ազգային պատմիչք կ'ըսեն թէ ընթերցասէր և հմուտ մարդ մը եղած ըլլայ։

Ոմանք կը համարին թէ սրբոյն Բարսղի ուրիշ ճառերուն թարգմանութիւնքն ալ՝ որոն Բագրեւանդացւոյս ձեռքով եղած ըլլան, և ոչ առաջին թարգմանչաց երկասիրութիւն։ Բայց վերը յիշուած յիշատակարանին խօսքը՝ «յետոյ զարձոյց ի յունէն ի հայ բարբառ». ըսել կ'ուզէ թէ մէկալներն կամ չատերն առաջուց թարգմանուած էին։

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Ազգային հին մատենագրութեան պատմութեանը մէջ՝ համարձակական և թուաբանական գիտութեանց եռանէ եղող զբաղաւոր՝ և թերևս իրեն նման չունեցող անձը՝ Անանիա Շիրակացի կամ Անեցի՝ այս օթևներորդ դարուս մէջ ծաղկեցաւ։ Տղայութեան հասակէն ուսմանց և գիտութեանց չափէ դուրս սէր և եռանդ ունենալով՝ քիչ առնուան մէջ զարմանալի երևցաւ բարոյական և աստուածաշունչ գրոց գիտութեամբը։ «Բայց նոքը, կ'ըսէ ինքն Շիրակացին՝ իր վարուցը պատմութեան մէջ, հասկընալով թէ թուաբանական գիտութիւնն են մայր ամենայն իմաստից, անոնց եռանէն սկսաւ ըլլալ»։ Տեսնելով որ Հայաստանի մէջ ոչ վարդապետ և ոչ գրաւածք կայ այս ուսման՝ եղաւ Յունաստան երթալու. նախ Թէոդոսուպոլիս կամ Կարին քաղաքը գնաց. հոն Եղիազարոս անունով իմաստուն մարդ մը պատմեց իրեն, թէ Զորրորդ Հայոց մէջ Քրիստոսատուր անունով գիտնական մը կայ. մէկէն քովն երթալով՝ վեց ամիս աշակերտեցաւ անոր. և հասկընալով թէ համբաւն հաւնմատ չէր անոր գիտութիւնն, այլ ասպիէն անգիէն կգկատուր բան մը, եւաւ ան-

կէ Կոստանդնուպոլիս գնաց։ Ուր իրեն ծանօթ մարդիկ խրատեցին զինքը թէ «Որովհետև այդչափ գժուարութիւն և ճամբորդութիւններ յանձն առեր ես, գնա Տրապիզոն քաղաքը. հոն Տիւբիկոս անուանով մէկը կայ, որուն հզօր գիտութեանն համբաւը ինչուան թագաւորաց քով հասած է. և աչքովին ալ տեսանք որ Կոստանդնուպոլսոյ Հայրապետին Փիլագրոս սարկաւագը՝ բաղմաթիւ տղայք կը տանէր առնա յաշակերտութիւն։ Աս որ լսեց Անանիա, մեծ ուրախութեամբ եկաւ անոր քովը գնաց։ Սիրով և ուրախութեամբ ընդունեցաւ զինքը Տիւբիկոս, և ունեցած ուրիշ ամեն աշակերտներէն աւելի ուրախ եղաւ Շիրակացւոյն վրայ. վասն զի կ'ըսէր թէ «Ատենօք ես ալ չատ կեցեր եմ Հայոց մէջ, և աղէկ գիտեմ թէ ո՛րչափ մեծ կարօտութիւն ունին այսպիսի գիտութեան մը»։

Անանիա՝ իր վարդապետին սիրոյն և համարմանն արժանաւոր երևցաւ, կարգէ դուրս յառաջադիմութեամբը. անանկ որ աշակերտակիցքն սկսան նախանձիլ վրան։ Ութ տարի կեցաւ ի Տրապիզոն, և Տիւբիկոսի քով գտնուած ամեն տեսակ գրքերը, որոնց թարգմանութիւնը չկար մեր ազգին մէջ, կարդաց և համառաւ անոնց։

Մեծապէս կը գովէ Անանիա զՏիւբիկոս իր վարպետը. ոչ միայն համարոտականին մէջ ունեցած հմտութեանը նկատմամբ,

այլ նաև Հայկականին. անանկ որ, կ'ըսէ, ո՛ր և իցէ օտար լեզուով գրուած գիրք ձեռքը առնուր՝ իբրև թէ Հայերէն լեզուով գրուած ըլլար՝ անանկ կը կարդար։

Իրմէ Համարոզական ուսմանց ամէն մասունքը սորվեցաւ Շիրակացին, առանց ուրիշի մը ձեռնտուութեան, այլ միայն իր անխոնջ ջանքովը և անդադար յարատեւութեամբ։ Ետքը նոյն ուսումը բերաւ ի Հայաստան. «Թէպէտ և ոչ ոք եղև չնորհկալ իմոյ աշխատութեանս, կ'ըսէ. զի ոչ սիրեն Հայքս իմաստ կամ դիտութիւն, այլ ծոյլք են և ձանձրացողք»։ Վասն զի չատերն եկան իր քովը սովրելու համար. և հազիւ թէ քիչ մը բան վերիվերանց սովրելով, բաւական սեպեցին այնչափ դիտութիւնը, և սկսան մէկուն մէկալին սովրեցնել. և որ գԺնդակն էր, վար զարնելով թէ գԱնանիա և թէ իր դիտութիւնը։ Այս բանիս վրայ դառնապէս կը զանգատի Շիրակացին։ Սակայն ունեցաւ քանի մը աշակերտք ալ՝ որ մեծապէս օգտուեցան իր դիտութեամբը. և ասոնց մէջ յանուանէ նշանաւոր եղած են Հերման, Տըրդատ, Ազարիա, Եղեկիէլ և Ափրահատ։

Ահաւիկ գրուածները. — Շիրակացւոյն երկասիրութեանցը մէջ նշանաւորներն են Աստեղաբաշխութիւն կամ Աստեղագիտութիւն, որ մեծ պատիւ կ'ընէ հեղինակին։ Դժբագիրք ընդհանրապէս պարզ ճարտար երկնի կը կոչեն այս գիրքը, ոչ միայն անոր

համար որ աստեղաբաշխական ուսմանց գլխաւոր ասպարէզն երկինքն է, այլ նաև անով որ հեղինակը գրքին սկիզբը կը սկսի երկնքի վրայ խօսիլ, և թէ ինչ այլ և այլ կարծիք ունեցեր են հին խմաստասէրք՝ երկնից և անոր ձևակերպելուն վրայ։ Անկէ ետքը երկրիս վրայ կը խօսի, և ապա կարգաւ՝ ծովու, երկնային զարդուց, երկնի և երկրի մէջ եղած չարժմանց, ծիր կաթին, լուսնի, արեգական, կենդանատեսակաց, աստեղաբաշխութեան, կենդանատեսակ բոլորտաւութեանն կամ կենդանակերպից, և խառնարան աստեղաց վրայ։ Բայց մեր ձեռքը հասած գրչագրաց մէջ՝ պակասաւոր կը մնայ այս ընտիր և օգտակար երկասիրութեան չարայարութիւնը։

Շիրակուհւոյն աստղաբաշխական կարծիքը. — Անանիա հօքը պարունակ կը բաժնէ զերկինս, և սահմեռակ գօտիք կը կոչէ այն պարունակները։ Այս հօքն գօտինեը կամ պարունակքն են այրեցաւող գօտի կամ շարահիւսակ, մնծասիր գօտի, խառնարան գօտի կամ երէք, յորում կը դնէ զարեգակն, գնդագրական գօտի, յորում սակաւն կոչուած մոլորակներն են, և խառնարն գօտի՝ որ միւս գօտւոյն մօտ է, և անկէց կ'ըլլան հրացանութիւնք և փայլատակմունք, ամպոց խլրտմունք, անձրևք և բուռաց սնունդը։ Այս հօքն գօտինեը իրարու հակառակ կը համարի Շիրակա-

ցին։ Երկնից ու երկրի վրայ ընդհանրապէս ուղիղ և ուսումնական կարծիքներ ունի. թէպէտ և երբեմն հին յոյն իմաստասիրաց գրութիւնները պախարակելով, կը ստիպուի դէմ խօսիլ այն կարծիքներուն՝ որ բան ինքեան ուղիղ են, և սուրբ գրոց՝ միայն առ աստաբս դէմ երևնալ նոյն պատճառաւ՝ հին հարց առջև ստիպմարհելի սեպուած են։ Բայց ինքը Շիրակացին ընդհանրապէս սրբոյն Բարսղի հետևող է, որ ինչպէս յայտնի է իր գրուածներէն՝ սուրբ հարց մէջ ամենէն աւելի ուսումնական հանճարն է։

Ծովու վրայ խօսելով՝ վար կը զարնէ Անանիա հին իմաստասիրաց այն կարծիքը որ կ'ըսէին թէ երկրիս չորս կողմը պատած է ծովը, և ծովուն մէջ՝ իբրև կղզի մըն է երկիրս. անանկ որ չորս կողմերնիս՝ մինչդրաէն դուրս բոլոր ջուր է, և այն ջրոց անհուն և անսահման ընդարձակութեան մէջ՝ հաստատուած է երկիրս։ «Իակ ես, կ'ըսէ, բարի և ուղղախոհ իմաստասիրաց կարծեացը հետևող եմ որ կ'ըսէին թէ երկրիս դուրս ծով չկայ, այլ երկրիս մէջ եղած ծովերն են միայն, և իրարու հետ վերաբերութիւն կամ կցորդութիւն ունին, և այլ և այլ տեղեաց ու դրից նկատմամբ՝ զանազան անուանք ունին»։ Կը զանազանէ ծովակը ծովէն, և առջիններուն կարգը կը սեպէ Հրէաստանի մեռ եղող Ասփալտէս ծովակը (Մեռեալ

ծով), զՍերբինիտէս՝ որ Եգիպտոսի և Պա-
ղեստինի մէջ է, և Բզնունեաց ծովակը՝ որ
Հայաստանի մէջ է։

Խնդիր կը հանէ թէ ինչպէս կ'ըլլայ որ
ծովը միակերպ միակչիռ կը մնայ, որով-
հետև ամենայն գետք և ուղիք ի ծով կը
թափուին և չկուչուիր։ Եւ կը պատասխա-
նէ՝ թէ ասոր պատճառ՝ արեգական ջեր-
մութիւնը սեպուեցաւ յիմաստասիրաց,
որ իր գոլորշւոք կը ծծէ անոյշ, նուրբ և
թեթև նիւթերը ու վեր կը հանէ զանոնք,
իսկ թանձր և ծանր նիւթերը մէջը կը մը-
նան, և անոր համար է որ ծովը միշտ
դառն է։ Համոզիչ և դիւրմբռնելի օրի-
նակ մը մէջ կը բերէ՝ կրակի վրայ դրուած
ջրով լեցուն կաթսայն, և թէ ինչպէս ջու-
րը կը պակսի՝ գոլորշւոյն վեր ելլելովը. ա-
նանկ որ եթէ երկար ատեն կրակի վրայ
թողուս, և մէջը նորէն ջուր չդնես, բո-
լորովին կը սպառի և կը լմննայ։ Ծովու
վրայ ճամբորդութիւն ընողները կ'ըսէ՝ երբ-
որ ջրի նեղութիւն քաշեն, աղի և դառն
ջուրը կ'առնուն, և կաթսայի մէջ դնելով՝
կրակի վրայ կը դնեն. կաթսաներուն վրայ
ալ խուփի տեղ՝ սպունգներ կը դնեն. երբ-
որ սպունգները՝ ջրոյն գոլորշւաւը ծանր
բանան, կը քաշին և անոյշ ջրի տեղ կը
խմին։

Միր կաթին վրայ խօսելու ատեն՝ կը
մերժէ հին իմաստասիրաց այլ և այլ ա-
ռասպելախառն կարծիքները, թէ ինչպէս

ոմանք Պերսիփոնէի առագաստ կոչեցին, ոմանք հին արեգական ճամբուն հետքը համարեցան, ոմանք ալ ըսին թէ Հերակլէս նոյն ճամբէն վերնաց դԱնտէոզբիոն։ Կ'աւանդէ նաև հին Հայոց դիցաբանութեան ժամանակի առասպելը այր կաթին համար, թէ խիստ ձմրան ժամանակ՝ Վահագն՝ Բարշամայ Աստուց նախնոյն յարգը զոդցաւ, և ճամբան տանելու աւանդ՝ գետին թափթըփած յարդերէն ձևացաւ այն լուսեղէն ճանապարհը. և թէ այս պատճառաւ ձարդդոյի հետք կոչուեցաւ Հայոց մէջ այս ճամբան։ Շերակացին իր կոզմանէ հիմակուան աստեղաբաշխից ուղիղ կարծիքը մէջ բերելէն ետքը՝ թէ յարդոզը բազմութիւն է աստեղաց, որոնք մեզմէ հետու ըլլալնուն համար՝ իրարմէ մեկ լոյս մը կ'երևնան մեզի, մինչ, կ'ըսէ, ենկեզեցւոյ վարդապետաց կը հետևինք՝ որ կ'ըսեն թէ ամենայն «զգայութիւնքս վերինք և ներքինք՝ ունին խառնուած միաբանութեան առ իրեարս. և է դա անգայտութիւն գոտեացն վերնոց, զթաղկեալ հրոյն նշոյլս հեղգով ի վայր, երևումն զօրէ տեսողացն»։ Այլ և այլ տեղեկութիւն կու տայ նաև լուսնի, արեգական և կենդանատեսակաց վրայ խօսելուն առն, որոնց մէջ թէպէտ և վրիպական կարծիքներ ալ ունի, բայց կան և ուղիղ և ուսումնական տեսութիւնք։

Շերակացւոյն Աստեղագիտութիւնը մեծ

յարգ ունէր մեր նախնեաց առջև՝ թէ իրեն պարզ և դիւրըմբռնելի ոճովը՝ և թէ մեր մէջ ուրիշ նմանօրինակ երկասիրութիւն չգտնուելուն համար։ Մագիստրոս՝ առ Պետրոս Գետադարձ կաթուղիկոս գրած թղթին մէջ՝ այնպիսի թախանձանօք կը խնդրէ այս գիրքը՝ որ յայտնի նշանակ է ունեցած մեծարանքին առաւելութեանը. «Համարձակիմք, կ'ըսէ, միշտ սովորեալ յառաւտաձիր պարգեւս՝ զկարևորսն և ըղձալիսանացուս յարատևական բաշխելով քեզ, որ ոչդ երբէք դանդաղիս, հայցել ի քէն զդիւրս Անանիայի Շիրակայնւոյ, որ բազում աշխատութեամբ և յածաչուխնջմամբ հաւաքեալ ի բազմադան և յորնաբեղուն մատենից... յորում և ենթայացեալ են ոչ միայն քաւիցն արուեստք, այլ բոլոր էակացն խոկմունս... կայացեալ ամենայն արուեստք մակացութեան։ Եւ նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեան, որք են ի տարրոյ քանակէ տարակացեալք. նաև երկրաչափութեանն և աստեղաբաշխութեանն, որք են ի պարունակ քանակէ։ Եւ զկնի այսորիկ յարատևեալք արուեստք և մակացութիւնք և մատենագրութիւնք. և զրեթէ ամենայն բոլոր վարժումն հանատրական... Եւ արդ քանզի սակս մատենին Անանիայի եղև յիշատակ խմատասիրելոյս մեզ, բեր՝ ոչ ինչ խրթին և անյայտաբար կամիմք զհարցուած մեր ծա-

նուագանել մերոյ լուսաւորչիդ. ի լռամտաց անփոյթ եղելոյ այսպիսի գործառնութիւնք և հանդէսք. որ ոչ երբէք ի սուտ տին վարժելոց գրամարակոսաց և քերթողաց հնացեալ ի մոռացումն այսպիսւոյ մատենի եղև անկանել »:

Ժամանակագրութիւնք. — Ոչ այնչափ սուղութեամբ՝ որչափ կարծեաք կրնանք ընծայել Անանիայի՝ ժամանակագրական երկասիրութիւն մը, խորհնացեայն և անդրէաստ խօսքերով և չարայարութեամբ՝ մինչև ի ժամանակս Շիրակացւոյն: Ընտիր և օգտակար երկասիրութիւն մըն է սակայն, և մեր մէջ գտնուած համանուն երկասիրութեանց մէջ գլխաւոր, կամ գլխաւորներէն մէկը, թէ կարգաբանութեամբը, թէ ոճով և թէ հմտութեամբ: Անանիայի ընծայելնուս գլխաւոր պատճառն ալ մէկմէկ այն է՝ որ ինչուան իր ժամանակը կը հասնի և հոն կը դադրի, մէկմ՝ ալ որ գրչադիրք՝ անմիջապէս Անանիայի ուրիշ երկասիրութեանց նման էն սակայ ալ կը շարայարեն՝ առանց անուան մատենագրի:

Յաղագս չափուց և կշռոց. — Այս անուամբ համառօտ երկասիրութիւն մըն ալ հասած է ձեռագրեաց Անանիայի Շիրակացւոյ անուամբը. և որուն գլխաւորութիւնն է՝ տալ գրոց մէջ յիշատակուած և գործածուած չափուց և կշռոց համառօտ մեկնաբանութիւն, ընդհանրապէս սրբոյն Եպիփանու

կիպրացւոյն հետևողութեամբ։ Որչափ ալ իմաստուն երկասիրութիւն մը սեպենք այս գրուածքը, և հեղինակին քննութեանց և տեսութեանց արժանաւոր, սակայն կ'երևնայ մեզի խօսքերնիս երկրընդունել այնպիսի գրուածոց վրայ՝ որ ընդհանրապէս մատենագրութեան չեն վերաբերիր։ Յիշեցընենք միայն թէ Եպիփանու և Շիրակացւոյն այս գրուածները՝ հանդերձ կարևոր տեղեկութեամբք և դիտողութեամբք՝ տպագրուած է ի Վենետիկ՝ ի 1821, աշխատասիրութեամբ Հ· Յարութիւն Վ· Ալգերեան։

Վէպ կամ կեղծագրեալք. — Գրուածք մը՝ որուն յօրինողը ուզեր է Շիրակացւոյն անունով իր երկասիրութեան յարգ մը տալ· գիտնալով ազգին մէջ անոր վայելած համարումն և մեծարանքը։ Բայց այս գիրքը այնչափ հեռու է Շիրակացւոյն ընծայուելու հաւանականութենէն, որչափ որ լուսաւորեալ էր անոր միտքը, և անկարելի որ այսպիսի յիմարական և անոճ երկասիրութիւն արտադրէ։

Ալճաճօք գրուածներ. — Անանիայի անուամբը ուրիշ քանի մը գրուածք կամ ճառեր ալ գտնուած են, որոնցմէ ոմանք իրենց ոճովը և ոմանք ալ իրենց հոգւով՝ Շիրակացւոյն հոգիէն և ոճէն կը հեռանան, և անշուշտ ուրիշ համանուն վարդապետաց երկասիրութիւնք են։ Ասոնց կարգէն են Յաղագս զղջման և ապաստանուց

ճառ մը՝ ի խնդրոյ Գրիգորի միայնակեցի. ուրիշ ճառ մըն ալ Յարգաց խոնարհութեան Քրիստոսի ծննդեան և Յատկի տօներն վրայ հակաճառական գրուածներ՝ Յունաց և անոնց հաւատոց և վարդապետութեանց դէմ։

Յովհան կաթուղիկոս կ'աւանդէ թէ Անաստաս կաթուղիկոսը ուզելով որ Հայոց աղգին տումարն ալ՝ ուրիշ ազգաց տումարին պէս անշարժ ըլլայ, գլխաւորաբար սրբոց տօներուն դիւրութեանը համար, իրեն կանչեց զԱնանիա, և յորդորեց որ այս բանիս մէկ ճարը տեսնէ։ Եւթը երբ եպիսկոպոսաց մանաւանդ ժողովք ալ գումարելով՝ կը փափաքէր այս բանս յառաջ տանիլ, մահը վրայ հասաւ. ու թէ բազձանքը և թէ անոր գործադրութիւնը անկատար մնաց։

Խմաստասիրական և ուսումնական գրութեանց յաւուրց ոճ մը կը բանեցընէ Շիրակացին. և ինչպէս ուսանիք՝ ասանկ ալ լսդուին գլխաւոր հեղինակը սեպուած է արժանապէս։

ԹԷՈԴՈՐՈՍ ՔՈՔԵՆԱՒՈՐ

Իսրայէլ կաթուղիկոսին ժամանակ ծագ-
կիլ սկսաւ Թէոդորոս անուամբ խարազ-
նագնաց և սրբակրօն ճգնաւոր մը՝ Քրո-
թենաւոր կոչուած, թէ հայկական և հել-
լենական դիտութեամբքը և թէ աստուա-
ծային ուսմամբը նշանաւոր, որով թէ ի-
մաստութեամբ և թէ առաքինութեամբ ա-
նուանի։

Արդարեւ ընտրեալ սուրբ Աստուածածնին վանքին վանահայր
եղաւ, և հոն շատերը աշակերտեցան ի-
րեն, որոնք եւքը թէ իրենց վարդապե-
տին և թէ ազգային գրականութեան պար-
ծանք եղան։

Իր աշակերտաց մէջ յանուանէ նշանա-
ւոր եղան՝ Սահակ և Յովհաննէս Իմաստա-
սէր՝ որք յետոյ կաթուղիկոս եղան. այս
եւրինս մեծապէս կը գրուատէ իւր վար-
դապետը, և իբրև յԱստուծոյ իրեն եղած
մանաւանդ շնորհք կը համարի՝ այնպիսի
մարգու մը աշակերտիլը։ Ոմանք կ'ուզե-
դեն թէ այս Թէոդորոս ըլլայ Կոմիտաս
կաթուղիկոսին եղբօրորդին և Եզրի քե-
որդին, որ Սիւնեաց հռչակաւոր վար-
դապետանոցը գնաց սովրելու, և Մա-

թուասղայի աշակերտեցաւ՝ ինչպէս որ վերն յիշեցինք։

Թէոդորոսի ժամանակներն սկսան զօրանալ Մայրագոմեցւոյն աշակերտակքը, և իրենց մոլորական ու վնասակար վարդապետութիւնքը սերմանել. և ասիկա ցին զԲաթենաւոր՝ որ իր հանճարովն և աստուածպաշտութեամբ անոնց դէմ դնէ։ Այս վախճանաւ յօրինած է ընդդէմ Մայրագոմեցւոյն ճառը, որով անոր հետևողացը՝ սուրբ հաւատոց ծրչափ վնասակար ըլլալնին կը ցուցընէ, և թէ վարքերնին՝ իրենց արտաքին խոշոր ձևոյն և ճգնութեանը դէմ է բոլորովին։ Հակառակորդաց այլ և այլ առարկութիւնները ջնջելով՝ կը հերքէ զանոնք, և բանին Աստուծոյ մարդեղութեան հրաշալի խորհուրդը զօրաւոր փաստերով կ'ապացուցանէ. և զնոյն կը հաստատէ նաև Յունաց բազմաթիւ աստուածաբան հայրապետաց վկայութեամբը, ինչպէս Բարսղի, Գրիգորի աստուածաբանի, Ոսկեբերանի, Եպիփանու կիպրացւոյ, և այլն։ Վերջը առ մոլորեալն կը գարձընէ խօսքը, յորդորելով զիրենք որ դառնան ի ճանապարհն ուղղութեան։

Այս ճառով՝ Բաթենաւորը հանճարի տէր, և ճարտարախօսութեան ձիրքն ունեցող կ'երևնայ. հմուտ սուրբ գրոց և հարց, և արտաքին իմաստասիրութեանց ալ ոչ անտեղեակ. հայկական լեզուի հմտութեամբն

ալ ոչ աննչան, իրեն յատուկ ոճովն և բա-
ցատրութեամբ, մանաւանդ եթէ յունա-
բանութիւնը յաճախ չըլլային, և իմաստից
և բառից խրթնութիւնը և բարդութիւնը,
որոնցմով մեծապէս կը պակսեցընէ իր գը-
րուածոց յարգը։ Այս թերութիւնքն ա-
ռաւելապէս կ'երևնան հետագայ երկասի-
րութեանց մէջ.

Նկրտողական՝ ի տուրբ Թաչի աստուածընկալ.
— Ընտիր և գեղեցիկ իմաստներով, և
հետևողութեամբ Դաւիթ Անյաղթի հա-
մանուն գրուածքին։

Գովեստ՝ ի տուրբ Աստուածածինն և՝ ի կոչան
Մարիամ. — Թաչի ճառին գործածքէն
շատ աւելի խրթին լեզու մը կը բանեցընէ
Թէոդորոս այս գովասանութեան մէջ. ա-
նոր համար բանասէրներէն ոմանք կը տա-
րակուսին հարազատութեանը վրայ. այլ
կամ նոյն անունն ունեցող ուրիշ վարդա-
պետ մը կու տան, և կամ Թադէոս ա-
նունով մէկու մը, որուն ուրիշ քանի մը
ներբողական գրուածները ձեռագրներու հա-
սած են, նոյն անխմանալի լեզուով և խըր-
թին կամ աւելորդ բառերով։

Հարկ է յիշեցընել թէ Գաթենաւոր՝ որ-
չափ ալ պարծանք սեպուի մեր Հայկական
դպրութեանց իբրև ակընդադիր հեղինակ
մը, հետևողութիւնը զգուշալի է, որով-
հետև այսպիսի երկասիրութիւնք կրնան
ինչուան ախորժակը կրթելու տեղ՝ վնա-
սակար ըլլալ, և միանգամայն լեզուները-

նուս սկզբնական վայելչութիւնը խանգարել, որուն գեղեցկութիւնը և հոգին՝ իր պարզութեանը մէջ է։

Քրթենաւորի Ճառերը տպագրուած են ի Վենետիկ 1833ին, Նախնեաց մատենագրութեան դասակարգութեանը մէջ։

ՄՈՎՍԷՍ ՍԻՒՆԵՑԻ

Ա.յս դարուս մէջ ծագեցաւ Սիւնեաց եպիսկոպոս մը՝ Մովսէս անունով, որ յունական դպրութեանց, և մանաւանդ հայկական հանճարութեանց տեղեակ ըլլալուն համար՝ քերթող և քերթողահայր կոչուեցաւ։ Ձեռագրաց մէջ շատ քերականական և ճարտասանական դրուածներ կան՝ որ ասոր կ'ընծայուին։ Ոմանք Խորենացւոյն անուամբը ծանօթ Պիտոյից գիրքը՝ ասոր ուղեցին սեպել. բայց այս կարծիքս ընդհանրապէս անհաւանական կ'ըլլայ. մանաւանդ թէ ոմանք՝ ինչուան քերականի մեկնութեանց մէջ գտնուած երկասիրութիւնները Խորենացւոյն կ'ուզեն ընծայել. որովհետև ազգերնուս մէջ տիրապէս Մովսես քերթող միայն Խորենացին կոչուած է. ևս առաւել որ Կիրակոս յայտնապէս Խորենացւոյն կ'ընծայէ զա-

նոնք։ Ուսպեկեան՝ որ Սիւնեաց ամեն փա-
ռացը հանդիսացընող է, և պատեհ չփախ-
ցըներ զանոնք գովելու, այս Մովսէսը՝ որ
Սիւնեաց իննևտասաներորդ եպիսկոպոսն
է և Յովհաննոսի Սիւնեցւոյն ուսուցիչ՝
Քերթող անուամբ յիշած չէ։

Ա. յս խնդրոյս վրայ՝ պէտք եղածը դրու-
ցեր ենք՝ Խորենացւոյն վրայ խօսած ա-
տենին։

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Վահան Կամսարականին ժամանակ ա-
նուանի եղաւ Գրիգոր կամ Գրիգորիս ա-
նունով մէկը, որ 684ին Յահակ կաթո-
ղիկոսէն Աղբարունեաց եպիսկոպոս ձեռ-
նադրուեցաւ։ Եւթը նոյն Վահանայ Կամ-
սարականի խնդրանքովը՝ ընթերցուածոց
դէղեցիկ մեկնութիւն մը չարադրեց, երև-
սունևչորս կամ երեսունևհինգ գլխոց մէջ
ամփոփուած, ընտիր լեզուով և խմաստ-
ներով։ Չմոռաբար և վայելուչ ծանրու-
թեամբ կը խօսի Թէ ազգային և Թէ Ցու-
նաց ոճներուն վրայ, և հարկ սեպելով
ազգայիններն արդարացընել այնպիսի փո-
փոխութեանց համար՝ որ չեն մնան հաւա-
սոյ, կը պաշտպանէ իրենները, առանց

վար զարնելու կամ նախատելու դուրս-
նները։

Շարագրութիւնը հայկաբան և ընտիր, և հետևողութեան յարմար, մանաւանդ վարդապետական ոճոյ մէջ. յորում մերթ Մամբրէի և Եղիշէի կերպը փոխ կ'առնու, և մերթ Շնորհալւոյն համբոյր և քաղցր լեզուին նախագաղափարը կու տայ։ Ամուէլ Կամրջաձորեցի կ'աւանդէ թէ Յովհան Իմաստասիրին խնդրանօքը շարադրած ըլլայ այս դիրքը. Աղոթիկ ալ՝ Ներսեհ Կամսարականին հրամանաւը։ Յառաջաբանին մէջ՝ որ դեղեցիկ օրինակ է ընծայականի՝ մեծապէս կը դրուատէ Աբշարունին զվահան պատրիկ Կամսարական, թէ՛ հասակաւ և թէ իմաստութեամբ ձևրունի կոչելով զինքը, և իբրև թագաւոր մը՝ պարգևեալ յԱստուծոյ ազգերնուս. անոր համար չկրցայ, կ'ըսէ, քու հրամանիդ դէմ կենալ. և որչափ որ մտացս ազքաութիւնը ներեց՝ քու փութով պահանջած խնդիրքդ՝ յամր քեզի ընծայեցի։

Աղոթիկ՝ Ներսեհ Կամսարականին վրայ խօսած առեն, «ի սորա աւուրս, կ'ըսէ, պայծառանայր Գրիգորիս Աբշարունեաց քորեպիսկոպոս՝ փիլիսոփայական արուեստիւ», և կ'աւանդէ թէ Յովհաննու Օձնեցւոյն՝ի Մանազկերտ գումարած ժողովին վարդապետաց մէջ գտնուեցաւ նաև «Գրիգորիս փիլիսոփայ՝ քորեպիսկոպոս Աբշարունեաց»։

ՓԻԼՈՆ ՏԻՐԱԿԱՑԻ

Ա՛նաստաս կաթուղիկոսին ժամանակ ծաղկեցաւ Փիլոն Տիրակացի կամ Շիրակացի, որ Ներսէհ կամաբարականին խընդրանօքը՝ Սոկրատ Սկոլաստիկոս յոյն եկեղեցական պատմաբանին գրուածքը թարգմանեց ի հայ։ Ըօթը գիրք բաժնուած է այս երկասիրութիւնը. և Եւսեբիոսի համանուն գրոց շարայարութիւնը կրնայ սեպուիլ, Կոստանդիանոսի մահուընէն ինչուան փոքուն Թէոդոսի կայսերութիւնը հասցընելով, որուն ժամանակակից էր Սոկրատ։

Փիլոն այս աշխատասիրութեան մէջ որչափ ալ ջանացած է ընտիր լեզու և մանաւանդ բառական ոճ գործածել, հաւատարմութեան կողմանէ չէ կրցած անսպարտաւ մնալ. այլ հեղինակէն դուրս, և իրեն բերնով՝ այլ և այլ պատմութիւններ մէջ բերած է թէ ի հայ գրոց, և թէ մանաւանդ յաւորի պատմութեանց. Փլաբիանոսի, Եւաթիքէսի ու Եփեսոսի երկրորդ ժողովոյն վրայ խօսք ընելով՝ յորում ժամանակի արդէն մեռած էր Սոկրատ։ Կրնայ ըլլալ որ այս բանս գրչագրաց ազաւաղութենէն ալ առաջ եկած ըլլայ, և այն ատեն թարգմանիչը կ'արդարանայ։

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Ռոթենաւորին աշակերտ էր Սահակ Զո-
բաւորեցին, որ 677ին կաթուղիկոսու-
թեան աթոռը նստաւ. և իր խոհականու-
թեամբն և իմաստութեամբը ամենուն առ-
ջին յարգի և պատկառելի եղաւ։

Յայնհան կաթուղիկոս կ'աւանդէ թէ երբ
ի Դամասկոս գերի էր այս սուրբ հայրա-
պետը, Ամբատ իշխանն մանաւոր աղա-
չանաց թուղթ գրեց անոր, խնդրելով որ
երթայ Հազարացւոց Մոհմատ ոստիկանին
սիրտն իջեցնէ, որ բազմաթիւ զօրքով ի-
րենց վրայ պատերազմի կ'երթար։ Յանձն
առաւ Սահակ. բայց երբոր խառնն հա-
սաւ, հիւանդանալով՝ իմացաւ թէ ալ ի-
րեն համար բժշկութեան յոյս չկայ, ու Ա-
րաբացւոց լեզուով աղաչանաց գիր մը
գրեց առ նոյն ինքն Մոհմատ, և իրեն
մարդկանցն ալ պատուիրեց՝ որ երբ մեռ-
նի՝ նոյն թուղթը իր ձեռքին մէջ դնեն, և
երբոր ոստիկանը գայ՝ տան որ կարդայ։
Յայս ունէր թէ մեռելի մը ձեռքէն աղա-
չանաց գիր ընդունելովը՝ սիրտը չարժի,
ու միտքը գրաժէն եա կենայ։ Մոհմատ
երբոր լսեց թէ կաթուղիկոսն իրեն գալու
առնիր մեռած է, արգիլեց որ չթաղեն. ու
ինքն ի խառնն երթալով՝ երբ մտաւ այն

սենեակը՝ յորում Երանելւոյն մարմինը գրուած էր, իբրև կենդանւոյ ողջոյն տը-ւաւ իրեն. անիկայ ալ՝ կ'բսեն ոմանք, բա-րեւն ընդունելով՝ ձեռքն երկընցուց որ Թուղթը մատուցանէ: Ջարմացաւ ոտի-կանը, ու կարգալով անոր աղաչանքը, կատարեց խնդիրքը: Այս Թղթին Հարա-զատ Թարգմանութիւնը պահած է Վ. Եւոնդ երէց՝ իր Պատմութեան գրոցը մէջ:

Շարականաց հին գրչագիրք՝ ընդհան-րապէս իրեն կ'ընծայեն Դաւակատեաց և սուրբ խաչի Շարականներն, որոնք գե-ղարուեստական գործիւններ են, ինչ-պէս նոյն ատենաժողովին երգարանաց վը-րայ խօսելու առեններս՝ մանաւանդ կեր-պով պիտի ցուցընենք: Նոյնպէս իրեն կ'ընծայուի Աբեւեննաց կամ Ողոգոմեան (Ծաղկազարդի) տօնախմբութեան վրայ ճառ մը, ընտիր ոճով և չարագրութեամբ, տպագրած ի Վենետիկ 1834ին:

ԴԱՐ Ը

ՅՈՎՀԱՆ ԻՄԱՍՏԱՍԷՐ

Տաշրայ դաւառին Օձին կամ Օձուն գեղջէն էր Յովհան, և մանկութեան հասակէն աշակերտած Թէոդորոսի Քոթենաւորի, որ անոր մտադ և թարմ մտացը վրայ՝ ապագայ հանճարոյն և մեծութեան նշանակը դրոշմուած տեսնելով, ամեն ջանքն ըրաւ որ ընտիր դաստիարակութեամբ արդասաւոր ընէ այն միտքը՝ որ տարիքը առնելէն ետքը կրցաւ իբրև զնոր ոմն Սողոմոն պարծենալով դրուցել. «Մանուկ էի մտավարժ՝ և ոգւոյ բարւոյ դիպեցայ»: Ա.յնչափ մեծ էր Քոթենաւորին խանդը իր աշակերտին վրայ, որ ինքն Իմաստասէրն կը դրուցէ. «Ոչ զառ յինքենէն ևեթ բաւականանայր չտեմարանել յիմումն ոգւոյ զբարին, այլ և՛ ի յոլովից զպայծառագոյնսն ծաղկաթաղ առնելով զընծորհայ, լիացուցանել զգաղտնութեանն իւրոյ ինև ջանայր զուսումնասիրութիւն»: Ժամանակը՝ Յովհաննու մտացը վրայ իր

զօրաւոր ազդեցութիւնն ընելով, անոր հանճարոյն և իմաստութեանը վրայ ըսքանչացող ազգայինք՝ սրբոյն Գրիգորի ա-Թոռոյն ժառանգ ըրին զինքը, կաթուղիկոսական պատուով մեծարելով։

Ա.յն նուիրական պաշտօնն 'ի գործ դնել սկսաւ Յովհաննէս՝ ժողովրդեան մէջ մըտած անկարգութեանց դարմանը մատուցանելով։ Ա.յս վախճանաւ ժողով մը գումարեց 'ի Դուին, իր հայրապետութեանը երկրորդ տարին. ու ժողովոյն առջի գումարումը՝ սուրբ հայրապետաց գովելի սովրութեան համեմատ՝ առենախօսութեամբ մը սկսաւ, իմացընելով թէ ինչու՛ գումարեց զիրենք 'ի ժողով, և թէ անտնօրինելի էր այն գումարումը։

Վնզեցիկ և ընտիր ոճոյ յատկութիւններն ունի այս Ա.տենախօսութիւնը. խօսքի վսեմ ծանրութիւն մը, իմաստից առատութիւն և ընտրութիւն, աստուածաշունչ գրոց, սրբոց Հարց և հին առաքելոց հմտութիւն, և ամեն բանէ աւելի բարեյաջողութիւն մը։ Կը յիշեցընէ հին եկեղեցւոյ բարեզարդութիւնը, և թէ ինչպէս ժամանակը՝ իր ապականիչ և խանգարող ձեռքը՝ նաև այն սրբազան և աստուածային չէնքին վրայ ձգած է՝ ապականել զայն մերթ հերձուածոց երեւմամբ, մերթ ազգութեամբ, մերթ անհոգութեամբ։ Մարդկային հաւակին կը նմանցընէ՝ եկեղեցւոյ վիճակը. թէ ինչպէս անմեղ է մանկու-

թիւնը, անգէտ չարի, անհմուտ մեղայ. և թէ առեն անցնելով՝ նոյն անմեղութիւնը չարութեան կերպարանք կ'առնու: Իր անձին օրինակովը՝ այս բանս հաւատարմացընել կ'ուզէ Յովնեցին. առանց պարծելու ուղելու՝ կը յիշեցընէ իր այն մատաղ հասակին մէջ առած յոյսերը՝ թէ գինքը տեսնողաց և թէ իր վարդապետին Թէոդորի. և խորունկ սրտէ առաջ եկած հառաչանքով մը՝ Յովբայ խօսքերը կը կրկնէ. «Ո՛վ առնէր զիս ըստ աւուրցն առաջնոց»: Ակնէ առիթ կ'առնու Հայաստանեայց եկեղեցւոյն մէջ սպրդած անկարգութիւններն յիշեցընել, և թէ ինչ կերպով և կանոններով դէմ դնելու է անոնց, որպէս զի չըլլայ թէ հաւատացեալ ժողովրդոց մէջ ճարակելով՝ թէ հաւատոց, և թէ նոյն հաւատքը դաւանողաց բարօրութեանը վնասակար ըլլայ:

Ճոգ կողմանէ ընտիր հայկազանութիւն միանգամայն և մուխ հելլենաբանութիւն կ'երեւնայ այս ճառիս մէջ: Անանկ լեզու մը գործածել ուզած է Խոսրովանէշտ՝ որ նիւթոյն ծանրութեանը և մեծավայելչութեան արժանաւոր ըլլայ:

Ճառ ընդդէմ երեւութականաց. — Հեղինակին գլխաւոր դիտումն եղած է այս ճառովս ցուցընել՝ Քրիստոսի երկու բնութեանց վարդապետութիւնը, յատիպական ազանդաւորաց դէմ, թէ ինչպէս ի մի անձն Քրիստոսի անշփոթ միացեալ են

մարդկային և աստուածային բնութիւնք, և թէ սխալ է դրուցելն մի բնութիւն ի Քրիստոս՝ չխոթելով զերկուս բնութիւնս ի մի անձն նորա։ Այս աստուածաբանական խորհուրդ և գժուարին խնդիրը՝ իր մարին և հանճարոյն արժանաւոր պարզութեամբ ի՛ապացուցանէ երանելի վարդապետս, հին յոյն հարց լեզու և հմտութիւն գործածելով։

Որովհետև մեր հին պատմագիրներէն ամենք կը շփոթեն իրարու հետ զՅովհան Մանազկերտցի և զՅովհան Օձնեցի և զմեսրոպատաբեր, առջինին մեղրաբաթիները երկրորդիս ընծայելով, և երկրորդիս հմտութիւնն ու գրուածները առջինին սեպելով, Ղամխեան Հ. Միքայէլ վարդապետը՝ Հայոց պատմութեան մէջ երկար և անժխտելի փաստերով ցոյց կու տայ թէ սրչափ կը սխալին թէ նեստորականութեան և ժամանակագրութեան և թէ նկատմամբ ոճոյ և գրութեան, որոնք իրարու հետ այս երկու անձինքը կը շփոթեն, գուշակելէն զատ որ եթէ Յովհան Իմաստասիրին Երեւութականաց դէմ ճառը գըտնուի, ուղղափառական և ոսկեմիտ պիտի ըլլայ այն երկասիրութիւնը. իր խօսքին հաւատարիմ ապացուցութիւն սեպելով՝ Գրիգորի Վկայասիրի, Ներսէսի Կլայեցւոյն, Գրիգորի Տղայոյ և Ներսէսի Լամբրոնացւոյ գովութեան խօսքերը, որոնք անկարելի էր որ այսպիսի հայրապետ մը՝ անանձկ լեզուով մը գովէին, եթէ անոր կրօնական համզումքը՝ իրենց համոզմանէն տարբեր ըլլար՝ այսպիսի էական նիւթի մը մէջ։

Այս ճառը գտնուելուն պէս՝ ի գրատան Փարիզու, Աւգերեան Հ. Մկրտիչ վարդապետը մե-

կէն ծանօթութեամբք հրատարակեց (1807) Թէ Հեղինակին և Թէ անոր պաշտպանին ոգեմտութիւնն և արդիւնքը հանդիսացընելով զոր և լա՛ւ սաստուածաբանք՝ Թէ իրենց գիտութեամբը և Թէ հին Հայց գործածած լեզուին համառօտութեամբը նշանաւորք, լուռ վկայութեամբ հաստատեցին։

Երևութական կ'բառէին այն հերետիկոսները՝ որ Քրիստոսի անօրհնութիւնը ոչ իրական ճշմարտութիւն՝ այլ առաչօր կը համարէին. և ասոնց մոլորամիտ վարդապետութիւնքն ինչուան՝ի Հայաստան ալ տարածուելով, Յովհաննու Մայրագոմեցւոյն աշակերտներէն ոմանք հետևող երևոյթ էին անոնց, և իրենց դէմ գրգռած՝ Քոթինաւորին զօրաւոր և յաղթահարող գրիչը։ Բայց երբ իր մահուընէն ետքը՝ Մայրագոմեցւոյն աշակերտը Սարգիս, զոր Խմաստասէրս՝ խանգարիչ տանն Հայոց կը կոչէ, սկսաւ նորէն գլուխ վերցընել, և կրկին կենդանութիւն տալ մոհամմէդական վարդապետութեանցը, Քրիստոսի ուղղափառ հաւատոց դէնքը ձեռքն առած՝ երևցաւ Յովհաննէս յասպարիզի. «Ա՛ման նորա (Քրիստոսի) – իր գերազանց խօսքերը մէջ բերելով, կ'ըսէ. – գիր հաննեմ, և յանուն նորա իրախոյս բառնամք. յաղագս նորին ահաւասիկ և առեամք զառելիս նորա. դիատաբերգագոյնն գնոսին առնացուք զառելութիւն»։

Ա՛յսպիսի իրատոյն առելութեան մը՝ ա-

մեն էական յատկութիւններն ունի իմաստասիրին այս ճառը։ Նաւրը և խորունկ գիտութիւն աստուածաբանական ճշմարտութեանց, զօրաւոր և անհնարին ճարտարասութիւն՝ հակառակողաց բերանը անձկելու, և ընտիր լինդ մը՝ որուն նման մեր մէջ քիչ կը գտնենք, և որ ազգակից է յոյն եկեղեցական մատենագրաց գործածած լեզուին. Հայսմաօս Աստուածաբան մըն է կամ Կիւրեղ։ Ուսաի և իրաւամբք զմայլած էին այս գրուածքիս վրայ մեր հին հայրապետքն. և Գրիգորիս Վկայասէր՝ իրեն համար մատենաւոր օրինակ մը գաղափարել տալով, ճառին վերջը իր ձեռքով ասանկ գրած էր. «Այս է գիրք կատակի ուղղափառութեան հօր մերոյ սրբոյն Յովհաննու կաթողիկոսի Հայոց և իմաստասիրի Օձնեցւոյ։ Եւ ես Գրիգորիս նուաստս՝ նորին հաւատոյ որդի և աշակերտ՝ ձայնակից եմ՝ այսմ խոստովանութեան և աւանդման. և որք այլապէս դաւանեն քան զայսոսիկ և նորաձեւս առնեն՝ (նզովեալ լիցին)»։

Գրիգոր Տղայ կաթողիկոսն ալ կը գրուցէ. «Խնդրելի է՝ թէ յետ այսորիկ ով որ ի հարցն սրբոյ յայսոսիկ դիպուածեաւ. և թէ զՅովհաննէս ասեմք զիմաստասէրն՝ որ և աթոռակալ սրբոյ աթոռոյս, և նա այսպիսի հնարեցաւ չաւղայ ուղղափառութեան. և մերն այլ սուրբ նախնիք զնոքայն ընկալան խոստովանութիւն, և ձեռ-

նագրեցին անխախտելի մնալ գիրս, Գրիգոր վկայասէր և Բարսեղ հետևողներին, և միւս Գրիգորիս և Ներսէս՝ մերս հարք. և է յարկեղս գրոց մերոց՝ ընկալեալ ի նոցանէ»: Ուրիշ տեղ ալ «Երջանիկ և սուրբ հայրապետ կը կոչէ զինքը», և անոր խօսքերը՝ «հոգեշունչ բանք»:

Ենորհալին ալ Թէոդորիանէ յոյն աստուածաբանին հետ խօսած առենը՝ այսպէս կը գրուատէ զհամատատաէրն. «Հայոց կաթուղիկոս մը կար, կ'ըսէ, Յովհաննէս անունով, որ իր վարքովը և խօսքով սուրբ հարց զուգահատատար էր. ու արտաքին դիտութեանց և փիլիսոփայութեան ալ ոչ անտեղեակ. իսկ աստուածային վարքովը՝ թէ ոչ քան զամենեսին, այլ քան զբազումն զերազանց»: Կը միտքանի և Յովհաննէս կաթուղիկոս. «Հմուտ և տեղեակ գոլով նա, կ'ըսէ, բոլոր քերթողական չափագծաց՝ մասանց բանի և մասնականաց, այլ և վարժից սեռից՝ և որք ընդ գոյացութեամբ են սեռական տեսակարարութիւնք՝ մինչ ցանհատ վայր. և տարբերութեանցն ևս հանգամանաց, և պատահմանց անջատից և անանջատից՝ ոչ անտեղեակ: Դարձեալ և կրթական վարժից թէոնականաց՝ որ զարուեստին ծառայ սլաստուգս՝ առողջանալէս ներագրէ յարուեստաէրն... Սա ամենայն առաքինի քաջողջութեան գինքն տուեալ՝ աչխատասիրաբար կրթական չանիւ գինքն գիներ»:

ձառ ընդդէմ Պաւղիկեանց.—Աղջի երկու ճառերուն արժանի երկասիրութիւն մըն է նաև ասիկայ։ Պաւղիկեանք՝ հերետիկոսներ էին, հետևողք Պօղոսի Սամոսատացւոյ, և որոց հետևող երևեցաւ Մայրագոմեցւոյն վերոյիշեալ Սարգիս աշակերտը, ու Յուլիանիստաց, Ապողինարեանց, Մարկիոնեանց և Սաբելեանց ազանդները մէկի վերածելով՝ սկսաւ իր մոլորամիտ վարդապետութեանցը դէպ ստան աշակերտելու հանէ ըլլալ։ Անոնց խաբէութեանցը դէմ սրեց իւր գրիչը իմաստասէր հայրապետն Յովհան։ Կարծեմ մեզի մերձաւոր ժամանակաւ՝ նորազանդ հերձելոց մոլորութիւնքն գուշակօրէն նկատեր էր, որոնք եկեղեցի բարեկարգելու պատրուակաւ՝ իրենց ախտեղութեան ու կրից համարձակութիւն տուին։

«Ա՛հա գոռաւ, կ՚ըսէ Յովհան, Պօղիկեանց վրայ խօսելով, որոգայթ իրրև զվարմ հաւորսաց ձգեալ՝ ի մէջ ժողովրդեան ազգի իւրոյ, ըմբռնել զախմարս և զպարզամիտս՝ ի մարդկանէ, որք չարեաց՝ ի չարիս ելին. ի պատկերամարտութենէ՝ ի խաչամարտութիւն և՝ ի քրիստոսատելութիւն. և անտուտա յանապատուածութիւն և՝ ի դիւապաշտութիւն»։ Աշխարհութեան այս ծայրը հասած՝ սկսան արհամարհել և անգոսնել Քրիստոսի եկեղեցւոյն հաւատքը, և իրենց թիւր վարդապետութիւնքը՝ աւերք դրոց նուիրական խօսքերովը կ՚ուղէին ա-

պայուցանել։ Խաչին ընծայուած պաշտօնը կատարչութիւն կը սեպէին, պատկերաց յարգանքը՝ աւելորդապաշտութիւն, և այլն։ Ասոնց դէմ կը խօսի Խմաստասէրն, ու սուրբ գրոց խօսքերովը զանոնք կ'ըմբերանէ. կը ցուցընէ՝ սքանչելի զիտութեամբ հին կրօնական պատմութեանց, թէ որչափ կը զանազանին 'ի միմեանց՝ կռապաշտութիւնն՝ զոր կը մերժեն քրիստոնեայք, և անոնց ընդունած խաչի և պատկերաց պաշտօնն։

Յաղագս կարգաց ևկեղեցւոյ. — Երկու մասն կը բաժնուի այս ճառը. առջինին մէջ համառօտ մեկնաբանութիւն մը կ'ընէ ժամակարգութեան, զիշերային պաշտամանէն մինչև 'ի ճաշաժամն. իսկ երկրորդին մէջ կը բացատրէ՝ ճաշաժամէն մինչև ցիններորդ ժամ, կամ ցերեկոյեան ժամակարգութիւնը։ Համառօտութեանը մէջ դիզեցիկ, յստակ և կատարեալ երկասիրութիւն մըն է։ Անշուշտ այս ճառերուն համար կ'ըսէ Յովհաննէս կաթուղիկոս, «Յաւէտ իմն հմտագոյնս գրով դրոշմեալ տայ ևկեղեցւոյ Քրիստոսի զրոմանդակ կարգաւորութիւնս պաշտաման ժամուց, զեղեցիկ իմն յօրինուածով ճոխացուցեալ, և բացայայտեալ ևս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնս, 'ի մխիթարութիւն զղերց ևկեղեցւոյ։ Այլ և ճառս ևս ինքնահաճս՝ բանաստեղծս յարդարեալ զղջացուցիչս չար գործոց, և յար-

դորականը՝ պէտս ապաշխարութեան սա-
կի »։ Ասմունէլ ալ կը գրուցէ. « Սուրբ Ի-
մաստասէրն Յովհան կանոնական կարգօք
պայծառացոյց զեկեղեցիս »։ Ասոնց կար-
գէն և ասոնց նման գրուածներ են Յա-
դագս մեծի ուրբաթոյ միաշաբաթու ճառը, և Հա-
տուածք բանից՝ որ կը կոչուին Յաղագս կար-
գաց եկեղեցւոյ։

Շարականք. — Շարականներն յօրինո-
ղաց ցուցակին մէջ կը տեսնենք որ Իմաս-
տասէր Հայրապետիս կ'ընծայուին Աւագ
տօնից շարականներն. այսինքն Դաւթի
մարգարէին և Յակովբայ առաքելոյն, Ստե-
փանոսի նախավկային, գլխաւոր առաքե-
լոցն Պետրոսի և Պօղոսի և Որդւոց Որոտ-
ման շարականները։ Եւթէ իրեն ալ՝ եթէ
հաւանինք Իմաստասիրին ընծայել, իրեն
թէ ոճոյն, թէ հմուտքեանը և թէ բանա-
ստեղծութեան նախասիրնը ըրած չենք սե-
պուիր. բայց Դաւթի մարգարէին և Յա-
կովբայ առաքելոյն վրայ երգուածը՝ այն
աստիճանի օտար է, որ իրաւամբ գրու-
ցած է հմուտ բանասիրին մէկը՝ թէ և ոչ
Իմաստասիրին աչակնեալ մը կրնայ ըն-
ծայուիլ այնպիսի խակ և անոճ գրուքիւն։
Այս սխալման գլխաւոր պատճառ՝ կ'իրա-
կան պատմչին մէկ խօսքն եղած կ'երեւնայ,
որ կ'ըսէ. « Երգեաց չարական և զՀարց՝
Մեղաւ յամենայնի, որ մինչև ցայսօր պաշ-
տի յեկեղեցին Հայոց »։ Մատենագրութեան
արժանի է որ պատմիչն երգեաց կ'ըսէ և

ոչ թէ յօրինեաց. որով անշուշտ կ'ուզէ հասկըցընել թէ խափանուած էր այն շրջանին երգեցողութիւնը, և թէ Խմաստասէրը սահմանեց որ նորէն երգեցուի։ Նոյնը կը հաստատեն նաև Յայսմաւուրքի խօսքերը։ — Հռիփսիմեանց տօնին օրը երգուած Ալեկիպքն Աստուած համբարձի շրջանին յօրինուելն ալ՝ ոմանք ուզած են Խմաստասիրիս ընծայել. բայց այլք աւելի հաւանականաբար այն երգին հեղինակ կը համարին զՄանդակունի։

Խմաստասիրին մէկ նշանաւոր աշխատանքն ալ եղած է՝ հին Հարց և Ժողովոյ սահմանած կանոններն կարգի և դասաւորութեան վրայ առնուլ, և իր հայրապետական իշխանութեամբը՝ անոնց կարևոր հաստատութիւնը տալ. որպէս զի իւրաքանչիւր որ ըստ կամի կանոններ չհանէ, կամ արդէն սահմանուածները չվերցընէ։ Այս վախճանաւ՝ նոյն հաւաքմանէն առաջ մանաւանդ Ցիշատակարան մըն ալ աւելցուց, իմացընելով թէ ինչ վախճանաւ և դիտմամբ եղած է այս աշխատութիւնս։ Բայց Խմաստասէր հայրապետը իր դիտմանը չհասաւ. ժամանակ անցնելէն ետքը՝ ոտքէ և ձեռներէց ընդօրինակողք՝ եկամուտ և անհարազատ կանոններ մտուցին սուրբ առաքելոց և հայրապետաց անուամբ աւանդուած սահմանադրութեանց մէջ. և Օձնեցւոյն այս Ցիշատակարանն ալ իրենց օրինակացը մէջէն վերացին։

Իմաստասիրին բուն խօսքերն են. «Կամ-
ցայ զբովանդակ զառ՝ի նոցանէն կանոնական սահ-
մանեալ բան՝ ՚ի միում տեղոջ գեղեցկագործ մա-
տենիւ ՚ի հայրապետանոցի սուրբ աթանացուցա-
նէ. ուրախօր և զնա սաստուածային Հոգին վերա-
կարգեաց յաթոռ սրբոյն Գրիգորի, ՚ի կաթուղի-
կոսութիւն աշխարհիս Հայոց. Յովհաննէս՝ նուաս-
տագոյն յիմաստասիրականաց խմբից, և ՚ի բոլո-
րից մեկին մնացեալ ըստ մարմնոյ յաղագականաց:
Եւ ընկալեալ զայս ջան՝ նախկին, վասն կանոնա-
կանաց խոց զարմին, զի ըստ հրամայողական ա-
նուանն՝ առընթեր կայցեն և հրամանացն գումա-
րութիւնք. և թէ պարտ է սպասաւորաց բանին՝
սաստուածախօսունակ հարցն բանիւք ինքեան բա-
նիս: Երկրորդ, զի զոսումնասիրաց անձանց՝ ի-
մով աշխատութեամբ սիրով կամեցայ հանգու-
ցանել զբազմախոյզ խնդիրս: Քանզի գրեցաք ՚ի
մա ոչ միայն զկանոնական սահմանեալն նոցա
շարակարգութիւնս, այլ և զժամանակն և զպատ-
ճառն ՚ի սոյն յայս ՚ի ներքոյս ածեալ յաւելեալ,
ընդ նմին և զգլուխս անցնելոցդ համառօտեալ
բանիւք ՚ի սկզբան անդ նախակարգեցաք. զի ան-
աշխատաբար անդուստ զբանն յիւրում տեղոջն
գացէ խնդրողն»:

Ուրիշ այլ և այլ երկասիրութիւնք ալ
կը յիշատակուին Իմաստասիրիս անուամ-
բը, յորոց ոմանք կորսուած են, և այլք
երկբայականք: Աղջիւներեան կարգէն կը
համարուին՝ Ապաշխարութեան և վարուց
դպաստութեան վրայ ընտիր ճառեր, զորս՝
Յովհան կաթուղիկոս կ՚ուանգէ թէ չարա-
գրած ըլլայ, և որոնք մեր ձեռքը հասած
չեն:

Երկբայականաց կարգէն են՝ Եկեղեցւոյ Հիմնարկէից վրայ երկու ճառ. Հիմնարկեալ եւ Եկեղեցւոյ կոչուածները։ Այս ճառերէն առջինին մէջ կը խօսի Հեղինակն՝ տաճարաց հիմնարկութեան վրայ. երկրորդովն ալ՝ թէ նորաշէն Եկեղեցեաց մէջ ինչպէս տաճար կանգնելու է. և վայելուչ ոճով մը կը խօսի այն արարողութիւնքը կազմող խորհրդաւոր աղօթից և սաղմոսաց վրայ։ Երկբայականներէն կը սեպուի նաև սուրբ Եկեղեցւոյ վրայ ընդարձակ ճառ մը, յորում հին և նոր, առօրին և վերին Եկեղեցեաց բաղդատութիւնը կ'ընէ։

Այս ամէն ճառերն՝ Խմաստասիրին հարազատ երկասիրութեանցը հետ տպագրեցան ի Վենետիկ, 1853. ու եւթը նաև լատինական Թարգմանութեամբ ալ Յանուարեան արեւմտեայց։

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Դուին քաղքին աւագերիցուն որդին էր Ստեփանոս Սիւնեցի, որ Հայոց կաթուղիկոսարանին մէջ՝ ինչպէս կ'աւանդէ Ուռպելեան, իր նախնական ուսմունքն ընդունէր հոքը, երբ հասակը քիչ մ'առաջ՝ Մաքենեաց կոչուած հռչակաւոր կրօնաստանը գնաց, նոյն վանքին առաջնորդ՝ ուղղութեամբ և աստուածպաշտութեամբ նշանաւոր Սողոմոն վարդապետին քով։ Հոն երկար ժամանակ կրթուելէն հոքը՝ Սիւնեաց վարդապետարանը գնաց, առ Մովսէս եպիսկոպոս Սիւնեաց. որուն քովը նոյն վարդապետարանը շատ ծաղկած էր գիտութեամբ։ Այնպիսի հմուտ անձի մը առաջնորդութեամբ՝ քիչ առնուան մէջ կատարեալ անգիտութիւն առանալով աստուածային գիտութեանց, և պիսկոպոսին հրամանաւ բարձրնական աստիճանը նստաւ, և սուրբ գիրքը կը մեկնէր նոյն վարժարանին աշակերտաց։ Երբոր Մովսէսի մեռնելու օրերը մօտեցան, նոյն աթոռոյն հոգաբարձութիւնը իրեն յանձնեց։ Ստեփանոս ալ՝ Անանիա անունով մէկը՝ որ թէ վարքովը և թէ գիտութեամբ մտադրութեան արժանաւոր անձ մըն էր՝ հետը առնելով, Դուին գնաց առ կաթու-

զիկան և Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրել տուաւ ուղիղ։ Իսկ ինքն չուզեց ետ դառնալ, հապա հոն կաթուղիկոսարանին մէջ նստած՝ հին և նոր կտակարանաց մեկնութիւն կ'ընէր։

Նոյն առենները՝ Ամբատ Բագրատունի անունով իշխան մը՝ հաւատոյ խնդրոց վրայ հակաճառելով Սիւնեցւոյն հետ, չհաւանեցաւ անոր խօսքին. բայց միանգամայն չկարենալով դէմ դնել՝ անարգեց զՍտեփանոս, ու եաւէ եղաւ զինքը հալածելու. Ստեփանոս ալ Դուին քաղաքէն ելլելով՝ փախստական գնաց ի Կոստանդնուպոլիս. մէյնակնկոյ մը քով բնակեցաւ, որ արտաքին հմտութեանց ալ տեղեակ անձ մըն էր. և հոն յոյն և լատին լեզուները սորվեցաւ, և գիշեր ցորեկ գիտութեանց հմտանալու կը ջանար։ Ետքէն Կոստանդնուպոլիս դառնալով, կ'երթար ի տուրբն Սոփի, և հոն եկեղեցւոյն մատենադարանին մէջ գտնուած գրքերը կը կարդար։ Ա֊թէնք ալ գնաց, և հոն ըրաւ իրեն թարգմանութիւններն, որոնց վրայ նաթը պիտի խօսինք։

Երբոր Սիւնեցւոյն իմաստութեան համբաւը կայսեր ականջը հասաւ, կանչեց զինքը, ու հաւատոյ խնդրոց համար կը հարցընէր։ Պատասխան տուաւ Ստեփանոս. Հրաման տուր որ կայսերական մատենադարաններն բացուին իմ առջեւս, և ես խօսք կուտամ այնպիսի գրքեր գտնել ա-

Նոյնց մէջ՝ յորս ուղղափառական դաւա-
նութեանց էութիւնը ամփոփուած ըլլայ»։
Երբ թագաւորը հրամանը տուաւ, ոսկի
տուփի մը մէջ պահուած գիրք մը գտաւ
Սիւնեցին, ուղղափառ հաւատով վրայ գը-
րուած, ու թագաւորին առջևը բերաւ։
Կայսրը ուրախանալով, «Դուք Հայք ալ,
ըսաւ, այս հաւատքը կը դաւանիք»։ Եւ
երբ Սիւնեցին հաստատուն վկայութեամբ
հաւատարմացուց թէ նոյն հաւատքը ու-
նին Հայք, կայսրը պատուիրեց իրեն որ
Հռոմ երթայ, և մեծ եկեղեցւոյն մատե-
նադարանին մէջ ալ եթէ իրեք գիրք գըտ-
նելու ըլլայ նոյն ճշմարիտ հաւատոց ուղ-
ղութեանը վրայ ճառող, խոստացաւ բո-
լոր աշխարհքը՝ նոյն կրօնից աշակերտիլ
սարկել։ Սիւնեցին Հռոմ գնաց, ու առ-
ջի գտածին միաբան և համախորհուրդ ու-
րիշ երեք գիրք ալ գտաւ. այսինքն՝ սրբոյն
Կիւրղի Պարապմանց և Գանձուց գիրքը,
Աթանասի աղեքսանդրացւոյ և Եպիփա-
նու կիպրացւոյ երկասիրութիւնքը։ Այն
գրքերը հետն առնելով՝ կասկածեցաւ որ
եթէ դառնայ ի Կոստանդնուպոլիս՝ կայս-
րը իրեն տուած խոստումը պիտի չպահէ,
ուստի Հռոմէն դարձաւ ի Հայաստան,
և աշխարհը աւերեալ ու ապականած գը-
տաւ յԱրաբացւոց։ Կաթուղիկոսն ալ
վախճանելով, անոր յաջորդն եղեր էր
Դաւիթ, որ հայրապետական աթոռը վո-
խադրեր էր յԱրամօնս։ Սիւնեցին՝ թէ սըր-

բոյն Գերմանոսի թուղթը՝ որուն հայ թարգմանութիւնն ըրեր էր, և թէ մէկալ գրքերը կաթուղիկոսին ընծայեց. անիկայ ալ մեծապէս ուրախանալով՝ հրամայեց որ բերած թղթոյն պատասխանը ինքը տայ. Ստեփանոս ալ յանձն առաւ, ու բան առբան ամեն խնդիրները լուծեց։

Նոյն միջոցին Սիւնեաց աշխարհին կը տիրապետէր Բարկէն, որ Դաւիթ կաթուղիկոսին մարդիկ ղրկեց՝ որպէս զի հայրապետը՝ եպիսկոպոսական աթոռը և Սիւնեաց վերապահութիւնը յանձնէ Ստեփանոսի։ Դաւիթ ուրախութեամբ յանձն առաւ այն առաջարկութիւնը. ու մէկէն Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրելով զինքը՝ միանգամայն անոր յանձնեց եպիսկոպոսաց գլուխ կամ գահերէց կոչուելու պատիւը։ Ան պաշտամամբ իր վիճակը դարձաւ Ստեփանոս, ու մէկ տարի մը միայն, կամ ըստ ոմանց՝ ութ տարի նոյն իշխանութիւնը վարելով՝ անգութ մահուամբ մը մեռաւ. վասն զի անզգամ կին մը՝ անկարգ վարուցը համար յանդիմանուելով սուրբ հայրապետէն՝ անոր առանձնութեանը և քնոյ մէջ սրով սպաննեց զինքը։ Թանահատի կոչուած միաբանակեցյ վանքին մէջ թաղուեցաւ Սիւնեցին։

Միևնոյն երկասիրութիւնքը. — Ա. և այլ գրուածներ կը յիշատակուին Սիւնեցւոյն անուամբ, որոնց մեծ մասը թարգմանութիւնք են։ Ասոնց մէջ գլխաւոր կըր-

նանք սեպել՝ Ս. Գերմանոսի Կոստանդնուպոլսոյ հայրապետին թուղթը, որուն պատճառն այս է։ Մանփանոս առեն մը Յունաց եկեղեցիքը երթալէն կը խորշէր. Ս. Գերմանոս հայրապետն կանչից զինքը և պատճառը հարցուց. ու կասկածելով որ չըլլայ թէ այն խորութիւնը մտաց մոլորութենէ առաջ եկած ըլլայ, հաւատոյ դաւանութիւն մը ուղեց իրմէն։ Յանձն առաւ Մանփանոս, և գրով ուղեց տալ նոյն դաւանութիւնը. յորում՝ կը խոստովանէր իւր ուղիղ հաւատքը ըստ երից ժողովոցն՝ Նիկիոյ, Եփեսոսի և Կոստանդնուպոլսի. բայց Քաղկեդոնի ժողովոյն և անոր դաւանութեան խօսքը չէր ընէր։ Ան առեն Գերմանոս ուղեց համոզել զինքը՝ այն ժողովին ողջմտութեանը վրայ. և թէպէտ հաւանեցաւ Աբիւնեցին, բայց յանձն չէր առներ Յունաց հետ հաղորդիլ, պատճառ բերելով թէ քանի որ ազգը նոյն ուղղութեանը խեղամուռ եղած չէ, իրեն հալածանք և այլոց գայթակղութիւն կ՚ըլլայ։ Ան առեն Գերմանոս գրեց թուղթ մը առ Հայս՝ որուն սկզբնաւորութիւնն է. «Քրիստոս է խաղաղութիւն մեր». և իմաստալից ու յայտնի խօսքերով կը ցուցընէ Քաղկեդոնի ժողովոյն ուղղափառութիւնը. և թէ Յոյնք՝ երկու բնութիւն ի Քրիստոս ըսելով ուրիշ բան չեն հասկընար, բայց եթէ զմի անձն Քրիստոսի՝ որ ունի զերբաբարիտատութիւն և զերմարիտարդ-

կութիւն, և թէ Քրիստոսի աստուածու-
թիւնը և մարդկութիւնը ի միաւորման ի-
րեանց իրարու հետ չշփոթեցան. այլ եր-
կու բնութիւնքն ալ կատարեալ մնացին ի
մի անձն Քրիստոսի. որով մի և նոյն Քրիս-
տոս՝ կ'ըլլայ և է ճշմարիտ Աստուած ըստ
աստուածութեան, և ճշմարիտ մարդ՝ ըստ
մարդկութեան: Նոյն Թուղթը թարգմա-
նեց ի հայ Սիւնեցին, և բերաւ առ կա-
թուղիկոսն. և իրեն հրամանաւը գրեց նոյն
թղթին պատասխանը, ինչպէս վերն ալ յի-
շեցինք: Այս թղթին հայերէն օրինակը՝
ժամանակ անցնելէն ետքը՝ հակառակա-
սէր անձանց ձեռքն իյնալով խանգարե-
ցաւ, և անոր համար իրաւամբ կ'արհա-
մարհէ զայն Լամբրոնացի: Բայց նոյն իսկ
Լամբրոնացւոյն օրերը խնդիր ելաւ ազ-
գին մէջ՝ թէ արդեօք Սիւնեցւոյն պէս ի-
մաստուն և կիրթ միտք մը՝ կրնար այնպէ-
սի գրութիւն հրատարակել ընդդէմ Գեր-
մանոսի և եկեղեցւոյն Յունաց, որոց թէ
բարեկամութիւնը և թէ ձեռնտուութիւնը
վայելելը էր. ու գրչագրաց մէջ փնտռե-
լով՝ այն թղթին վաւերական օրինակը գը-
տան, որ բոլորովին կը տարբերէր ազգին
մէջ գտնուածէն. ինչպէս կը վկայէ Վա-
նական վարդապետն ալ, թէ «Ի գալ Աա-
փանոսի Սիւնեցւոյ՝ եառն Թուղթ յազգս
Հայոց. այլ ոչ որ պատասխանւոյ փոյթ
չարար. ինքն գրեաց, բայց մինչև յայն
տեղին թէ «Ներմանոզք այսոցիկ ի հան-

զերձեալն ունին զպատուն։ Իսկ զայն որ նախատինք է՝ այլք են դրեալ»։

Մօտերս ուրիշ երկու թուղթեր ալ գըտնուեցան յանուն Սիւնեցւոյն. մէկը գըրուած առ պատրիարքն Անտիոքայ, և մէկալը առ վարդապետս Աղուանից, որ համառօտ գրուած մըն է. իսկ առջինը ընդարձակ, յորում Հայոց եկեղեցւոյն գաւանութեան խօսքը ընկլէն եղբը, պաշտպան կ՚ելլէ նաև անոր ծիսական ուանդութեանցը և տօնախմբութեանց, ընդդէմ Յունաց. և՝ի հաւատարմութիւն իւր բանիցը այլ և այլ պատմութիւն մէջ կը բերէ, որոնք առաւել առասպելաց կերպարանք ունին քան թէ ճշմարտութեան։ Ասոնց նման ուրիշ երկու ճառեր ալ գտնուեցան, որոնց ամենուն հաւատարմութիւնը կրնանք տարակուսի տակ ձգել իրաւամբք։

Շարականք. — Ամանք մեր ազգային մատենագրութեան մէջ երկու Ստեփաննոս Սիւնեցի գնելով, առաջնոյն ընծայած են Աւագ օրհնութիւնքը՝ բաց՝ի վառ ձայնէն, որ Շնորհալւոյն երգածն է, և երկրորդիս կու տան խաչի շարականաց կարգին մէջ գտնուած Սրբութիւն սրբոց վեմ և իմաստուից երգը։ Բայց որովհետև ըստ պատմութեանց մի է Ստեփաննոս Սիւնեցին՝ քերթող և թարգմանիչ և գրական կոչեցեալ, բնականաբար այս շարականներն ալ՝ մեր Սիւնեցւոյն քերթողական հան-

ճարոյն արգասիքն են : Խօսքերնուս ատե-
զութիւնը կը հաւատարմացընէ և Ուսպե-
լեան . « Բաժանեաց , կ'ըսէ , և զութ ձայն-
սըն . և կարգեաց չարեաց չարականս՝ զյա-
րութեանս օրհնութիւնան . երգեաց և կոչդս
քաղցրահամս . յարմարեաց և զատուղ-
գին յինանցն , եօթն եղանակօք յոյժ խոր-
հրդաւոր » : Կը միաբանի և Կիրակոս .
« Ա.բար և երգս հոգևորս քաղցր եղանա-
կաւ , չարականս , կոչդս և երգս » :

Ա.զգային պատմագիրք ուրիշ այլ և այլ
երկասիրութիւնք ալ կ'ընծայեն Ա.իւնեց-
ւոյս , որոնք մեր ձեռքը հասած չեն . ինչ-
պէս Ա.բարածոց , Յովբայ , Դանիելի և Ե-
զեկիելի մարգարէութեանց մեկնութիւն-
ները : Մ.իայն այս վերջինիս հատուածնե-
րէն քանի մը կտոր բան մնացած է : Խոս-
րով Ա.նձևացեաց եպիսկոպոսն ալ կ'ա-
ւանդէ թէ եկեղեցական կարգաւորու-
թեանց մեկնութիւն մըն ալ շարադրած
ըլլայ , և անշուշտ անոր հատուածն է՝ որ
ճառընտրի մը մէջ կ'երևնայ այսպիսի խո-
րագրով . « Ատեփանոսի Ա.իւնեաց եպիս-
կոպոսի ասացեալ , վասն նախերգանի ա-
ղօթից որ 'ի մէջ դիշերի կատարի » : Կի-
րակոս ալ կը գրուցէ թէ սուրբ աւետա-
րանաց մեկնութիւն մը յօրինած ըլլայ , որ
գտնուիլ՝ մեզի անծանօթ երկասիրութիւն
է : Մ.իայն զանազան քերականական գրու-
թիւնք հասած են ձեռնուրնիս Ա.իւնեցւոյն
անուամբ , և անոնց համար է քերթող կո-

չուիլը։ Ստեփանոսի Թարգմանած գրոց մէջ մեզի ծանօթք և մեկնելիքն են Ս. Դիոնեսիոսի Արիոսպագացւոյ գրուածքն, Ս. Կիւրղի Պարապմանց գիրքն, Գր. Նիւսացւոյ Յաղագս Բնութեան մարդոյ գիրքն, Ղեւտական գրոց մեկնութիւն մը, զորոնք ամէնն ալ Թարգմաններ է՝ի Կոստանդնուպոլիս՝ Դաւիթ հիւպատ անուամբ ազգակըցի մը օգնութեամբ։

ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ

Ղեւոնդ պատմագրին թէպէտ ծննդեան և մահուան տարին որոշ չեն նշանակեր ժամանակագիրը, բայց յայտնի կ'երևնայ թէ ինչուան ութերորդ դարուն վերջերը ապրած ըլլայ, որով հետևաբար ականատես վկայ՝ պատմած վերջին դէպքերուն։

Ձեռնարկս հասած Ղեւոնդեայ գրոց դրչագիրներուն խորագիրն է. «Պատմութիւն յաղագս երևելոյն Մահմետի և յաջորդաց նորա»։ Բայց գրոցը մէջ Մահմետի ծննդեան և ոչ խօսքը կ'ըլլայ. և առջի բանն որ աչքիդ կը հանդիպի՝ անոր մահն է. որով Ղեւոնդեայ պատմութիւնը Մահմետի մահուընէն ետքը կը սկսի,

և սրբազան սեպուհ պատերազմէն՝ զոր Աղուպէքիր, Ոմար և Օսման խալիֆաները հրատարակեցին՝ իրենց դէմն չենեղող դէմ։

Բայց ասկէ, Ղևոնդ Համառօտ յիշատակութեամբ մը կ՚անցնի՝ Մահմետի անմիջական յաջորդ երեք խալիֆայից ժամանակ՝ Հայաստանի մէջ պատահած դէպքերուն վրայ։ Իր բուն պատմութիւնը կը սկսի Քրիստոսի 661 թուականէն, Ումմիա տանց առաջին խալիֆային՝ Մուավիէի իշխանութեան առնէն, որ իր թագաւորութեան աթոռը՝ Աբրահայէն յԱսորիս փոխադրեց, և իր ժամանակը Հայք բոլորովին Աբբասեանց լուծին տակ ընկան, և երդումն հպատակութեան տուին. և 662ին Գրիգոր Մամիկոնեանը առաջին իշխան եղաւ Հայոց, զոր Աբբասեանց խալիֆայն անուանեց։ Ղևոնդ ինչուան Քրիստոսի 788 թուականը կը հասցընէ իր պատմութիւնը, յորում Յովհաննես Հայաստանի կաթուղիկոս ընտրուեցաւ. որով 156 (կամ 128) տարուան պատմութիւն կ՚աւանդուի իր գրոցը մէջ։ Հոն կը լմընցընէ Ղևոնդ իր Պատմութիւնը, և գրչագիրը կը յաւելուն. «Կատարեցաւ վարդապետութիւն Ղևոնդի վանն ժամանակագրաց տանն Թորգոմայ, ի հրամանէ տեառն Շապհոյ Բագրատունւոյ»։

Ոճոյն նկատմամբ՝ շատ պարզ և հեռակ է, և գրեթէ հասարակաց խօսից

ոճէն չտարբերիր։ Տարակոյս չկայ թէ հին գերդ դարուն պատմչաց ոճը՝ Ղեւոնդեայ երիցուն դրքին մէջ չեսնուիր. բայց եթէ ուզենանք նկատել դինքն իբրև ուրեք դարու մատենագիր մը, մեզի հասար թէ ոճովը և թէ պատմագրելով՝ մեծագրութեան արժանի անձ մը կ'երեւնայ Ղեւոնդ. իր ժամանակին ազիտիցը մէջ կրթուած հանճար և սիրտ մը կը ցուցընէ։ Պատմութիւնը ճիշդ, ժամանակագրութիւնը ուղիղ՝ կարելի եղածին չափ, համառօտախօս և ստուգաբան։

Եւրոպական դիտութեանց օգտակար ծառայութիւն մը ընելու դիտմամբ՝ ասկէ քանի մը տարի առաջ՝ Շահնազարեան կարապետ վարդապետն գաղղիական թարգմանութեամբ հրատարակեց Ղեւոնդեայ պատմագրութիւնն ի Բարիզ։

ԴԱՐ Թ

ԶԱՔԱՐԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Քրիստոսի 854 թուականին երբ Յովհաննէս կաթուղիկոս վախճանեցաւ, Արմբատ իշխանաց իշխանն հրամայեց որ Շիրակայ Երազգաւորս առանաքաղքը եպիսկոպոսաց ժողովք մը ըլլալ՝ նոր հայրապետի ընտրութեան համար. և վիճակը ելաւ Զաքարիա անունով սոսկական անձի մը, զոր՝ մի և նոյն օրուան մէջ՝ ժամանակին կարճութենէն սուրհանդակ, քահանայ, եպիսկոպոս և կաթուղիկոս ձեռնադրեցին։

Այն առեններէն կոստանդնուպոլսոյ պատրիարքական աթոռը կը նստէր Փոտ. և սկսեր էր Յունաց իշխանութեան մէջ բնակող Հայերը հալածել, և նախատանօք վարուիլ անոնց հետ, Քաղկեդոնի ժողովը մերժելնուն համար։ Զաքարիա կա-

Թուղիկոս չէր գիտեր թէ ինչ հնարագի-
տութեամբը այն մեծ իշխանութեան հա-
սեր է փոա, սիրոյ թուղթ գրեց առնա,
միանգամայն իմացընելով թէ Հայք ինչ
պատճառաւ կը հակառակին Քաղկեդոնի
ժողովոյն, և աղաչեց որ ճշմարտութիւնը
ծանուցանէ իրենց։ Ցեղնիտեղը պատաս-
խանեց իրեն փոա, իմացընելով թէ ինչ-
պէս սուտ համբաւներ հասեր են Հայոց
ականջը. և որովհետև Ջաքարիա կաթու-
ղիկոս գրած էր թէ Հայք հերձուածապե-
տաց հետևողք չեն ամենևին, այլ սրբոյն
Գրիգորի Լուսաւորչի, փոա՝ անկէց առիթ
առնելով՝ կը ցուցընէ իր ու բոլոր եկեղե-
ցւոյն Յունաց նոյն սուրբ հօր վրայ ունե-
ցած մեծարանքը, և միանգամայն խրա-
տելով կ'ըսէ. «Ես վասն դի այդպիսի հրա-
շափառ վարդապետի աշակերտք էք, ոչ է
պարտ հետևողք լինել մեաց ձերոց, այլ
սուրբ և առաւածապաշտ դրոց հետևել»։

Ջաքարիա կաթուղիկոս երբոր փոայ
թուղթը կարդաց, զարմացաւ թէ ինչպէս
երկար առեն այնպիսի սխալ կարծեաց
մէջ մնացեր են Հայք, ու հետը առնելով
Նանա ասորի և Յովհան կամ Վահան և
պիսկոպոսը՝ երազդաւորս առանը դնաց
առ Աչոտ իշխան, և փոայ թուղթը տը-
ւաւ անոր։

Այն առեն Աչոտայ կամաւը և կաթու-
ղիկոսին հրամանատարութեամբը Շիրակա-
ւանի ժողովքը գումարեցաւ. յորում Վա-

հան երկար և լուսաւոր վարդապետու-
թեամբ ճառ մը խօսեցաւ՝ սուրբ Երրոր-
դութեան և Մարգելութեան խորհրդոց
վրայ։ Ետքը երբոր նոյն ժողովոյն մէջ
հնգետասան դլուխ բանից կամ վարդա-
պետութիւնք սահմանեցան, Վահան և-
պիսկոպոս միւսանդամ սկսաւ խօսիլ ժո-
ղովոյն կողմանէ, ցուցընելով երկուց բնու-
թեանց անճառ և անչափ միութիւնը ի
մի անձն Քրիստոսի։

Շիրակաւանի ժողովքէն քիչ ետքը՝ Սա-
հակ Մռուտ կամ Ալպիկուրէշ վարդապե-
տը, զոր Վարդան՝ Տայոց Աշխնը տեղոյն
եպիսկոպոս կ'ուանդէ, Զաքարիա կաթո-
ղիկոսին քով գալով, և իմանալով իրմէ
թէ Յունաց և Հայոց մէջ միաբանութիւն
եղեր է, շատ վշտացաւ. ու յանդիմանու-
թեան թուղթ մը գրեց առ Փոտ, Յունաց
եկեղեցին մոլորեալ ցուցընելով։ Բայց
այն թուղթը Կոստանդնուպոլիս չհասաւ։
Այս դէպքը՝ բոլորովին հակառակ կերպով
կ'ուանդէ Կիրակոս իբր թէ Փոտ մաս-
նաւոր թուղթ մը գրեց առ Աշոտ իշխան,
ու թղթոյն հետ Քրիստոսի անօրինական
խաչէն մաս մը դրկեց անոր. Աշոտ իշխա-
նին հրամանաւ Սահակ վարդապետ այն
թղթին պատասխանը գրեց, դեղեցիկ և
իմաստասիրական։ Ասողիկ ալ կ'ըսէ թէ
«գրեաց պատասխանի թղթոյն Փոտայ Յու-
նաց պատրիարքի, լի իմաստութեամբ և
գիտութեամբ»։

Վ.երը յիշուած թղթէն զատ՝ այլ և այլ ճառեր շարադրած է Զաքարիա կաթուղիկոս Քրիստոսի անօրինականացը վրայ, ընդհանրապէս վայելուչ ոճով և շարադրութեամբ, և յոյն եկեղեցւոյ վարդապետաց քիչ շատ հետևողութեամբ: Ասանկ են իր ճառերը Քրիստոսի Ծննդեան, Մկրտութեան, Գալստեան յերուսաղէմ, Տէրունական ընթրեաց, Զարչարանաց, Թաղման, Յաչի վրայ, ի սուրբ Եկեղեցին և ի Ննջումն սրբոց Կուսին:

ՆԱՆԱ ԱՍՈՐԻ

Ասորի սարկաւագապետ մ՚էր Նանա, որ իր բնակութիւնը Հայաստանի մէջ հաստատած էր: Բագարատ Տարօնոյ և Հայոց իշխանն խնդրեց իրմէ որ Յովհաննու աւետարանի մեկնութիւն մը շարադրէ: Նանա՝ ասորի դրոց մէջ ինչ որ հարկաւոր և պիտանի տեղեկութիւն գտաւ՝ նոյն սուրբ աւետարանին մեկնութեանը նկատմամբ, արաբացի լեզուով թարգմանեց, և Բագարատայ ընծայեց: Բայց քիչ առենէն Բագարատ Հազարայոց ձեռքն իյնելով, Նանայի գիրքն ալ Ամրատայ Բագրատունւոյն ձեռքն անցաւ, որ հրամայեց հայե-

րէն թարգմանել. իր Թուան Մարիամ Աբեղեայ տիկինն՝ նորէն թարգմանել կամ հայերէն շարադրութիւնը կոկել տուաւ։ Թարգմանչին անունն յայտնի չէ, որ ինքզինքը յետին ուսումնասիրաց մանուածոյ իբ թարգմանչաց կը կոչէ։

Շատ տարիներէ ետքը Հայոց ՈԳ Թուականին Կիրակոս անուամբ կրօնաւոր բանասէր մը՝ այս գիրքը փնտռելով գաւառ է Ամիդ կամ Տիգրանակերտ քաղաքին մէջ և օրինակը է. այն օրինակն է՝ ուր ձեռքն եղածն, Հայոց ՈԴ (1155) Թուին գրուած։

ՇԱՓՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Շապուհ Բագրատունի Աշոտոյ անթիպատրկի որդին էր։ Հայոց, կամ աւելի ճիշդ խօսելով, իր ժամանակին պատմութիւնը շարադրեց Շապուհ, ինչպէս որ կը վկայէ Յովհան կաթուղիկոս. բայց իր պատմութեան գիրքը՝ գեռ ինչուան մեր օրերը անհնուած չէ։ Յովհաննու կաթուղիկոսի խօսքերէն կ'երեւնայ՝ թէ աւելի Բագրատունեաց և անոնց ծագումն պատմութիւնն է գրած, ուստի դի հին ժամանակաց անցքերը աւանդելէն ետքը՝ համառօտ կերպով մը պիտի անցնիմ, կ'ըսէ, այն դէպ-

քերուն նկատմամբ՝ զորս Շապուհ Բագրատունին ատանգեր է, տիզնիտեղը պատմելով Սմբատայ սպարապետին որդւոյն՝ Աշոտոյ՝ պայազատելը, և թագաւորական հանգամանաց կարգը, Բուղա ոստիկանին գերի տարածներուն դարձը, և իւրաքանչիւր նախարարաց իրենց սեպհական իշխանութեան մէջ հաստատուիլը, և անոնց՝ թշնամեաց դէմ ըրած զանազան յաղթութիւնքը։ Ինչ մը նաբը՝ Գրիգոր Աբծրունեաց իշխանին սպանումը պատմելէն ետքը՝ կը յաւելու Յովհան կաթուղիկոս. «Բայց զմեացորդս բանիցս այսոցիկ՝ զօրութեանց և քաջութեանց և մրցարանաց և պատերազմաց և բազում՝ բարի օճանիւք, ահաւասիկ գրեալ է ի գիրս պատմութեանց Շապհոյ Բագրատունւոյ, բաւական քեզ կացուցանել տեղեկագոյն առնն բարեբաստութեան»։ այսինքն է Աշոտ Աբծրունեաց իշխանին վարուցը, որ մօր կողմանէ Աշոտոյ Բագրատունեաց առաջին թագաւորին՝ Թոռն էր։ Յովհաննու կաթուղիկոսին խօսքերէն յայտնի է որ Շապուհ երիցագոյն ըլլալով ժամանակաւ քան զինքն և ժամանակակից պատմած դէպքերուն՝ արժանահաւատ անձ մըն է։

Ասոր նկատմամբ կ'երևնայ թէ խնդճ եղած պիտի ըլլայ. որովհետև յայտնապէս կ'ըսէ Յովհան թէ քէպէտ պատմութեան առուգութիւնն անհակառակելի է, բայց «զրոյցոյին բաժանումն ապացու-

ցից՝ ոչ կարացեալ ըստ քերթողական հրա-
հանգացն համաւօտաբար ընձեռել, սա-
կայն ըստ իւրումն ժամանակի ընտանի
գոլով նորա զրուցացն ամենայնի, գեղեց-
բանիւ բաւական քեզ տայ պատճառս տե-
ղեկութեան »։

Յանուն Շապհոյ Բազրատունւոյ՝ պահոց վրայ գրուած ճառ մը կայ, որ անշուշտ ուրիշ համանուն անձի մը երկասիրութիւն է։

ՄԱՇՏՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Աչուտ և Ամբատ թագաւորաց օրերը ծաղ-
կեցաւ Մաշտոց վարդապետան, որ կոտէից
կամ Աղուանից գաւառին Եղիվարդ գե-
ղէն էր. քահանայի որդի, և տղայութեան
հասակէն աչակերտած՝ Մաքենոցաց վան-
քին մէջ գանուող Թէոդորոս անունով
միանձին մը, կամ նոյն վանաց առաջ-
նորդ՝ Սահականոս վարդապետին, ինչպէս
կ'աւանդէ Ուղղելեանն։ Տարիքը առնե-
լով՝ թէ իր խնամտութեամբը և թէ աւելի
առաքինական վարքովը անուանի եղաւ
Մաշտոց, և ինչուան Հայաստանեայց
Հայրապետական աթոռն ալ նստելու ար-
*ժանի։ Ցովհան կաթուղիկոս կ'աւանդէ թէ

անկէ առաջ Աբաս սպարապետն տեսնելով որ իր եղբօրորդին Սմբատ Բագրատունեաց վրայ թագաւորեց, Գէորգ կաթուղիկոսէն օծուելով, ասկէ վրէժն առնելու համար՝ ուղեց զԳէորգ ձգել չիշխանութենէ, ու անոր տեղ նստեցընել զՄաշտոց. ուստի և մասնաւոր թուղթ գրեց առ նոր: Մաշտոց՝ այնպիսի առաջարկութիւն մը թէ իր սրտին և թէ մտածմանցը հակառակ տեսնելով, բայց՝ ի բաց հրաժարեցաւ. ու չէ թէ միայն չուղեց համախոհ ըլլալ Աբասայ հետ, այլ նաև մասնաւոր խրատական թուղթ մը գրեց առ նա, յորդորելով որ այնպիսի վնասակար խորհուրդներէ ետ կենայ. կը ջատագովէր Գէորգ կաթուղիկոսը, իրեն գէմ եղած ամբաստանութեանց ստութիւնը և անիրաւութիւնը ցուցընելով: Երբ այն թուղթըն առաւ Աբաս, սաստիկ ամօթէն և ոչ իր մտերիմ համախոհիցը ցըցուց. և երբ իր կուսակիցներէն չատն աստուածաւաք պատիժներով պատուհասեցան, Աբաս անձամբ գնաց թողութիւն խնդրեց Գէորգ կաթուղիկոսէն, ու ետքը իր եղբօրորդւոյն՝ Սմբատ թագաւորին հետ ալ հաշտուեցաւ: Մաշտոցի՝ առ Աբաս գրած թղթին ամբողջ օրինակը մէջ կը բերէ Յովհան կաթուղիկոս իր Պատմագրութեանը մէջ: Ան կը կարդանք նաև առ Գրիգոր ուղղած թուղթը, զոր հետևեալ պատճառաւ չարագրած է Մաշտոց:

Քրիստոսի 894 թուականին՝ Հոկտեմբեր ամսոյն 13ին գիշերը՝ յանկարծական սա- սանութեամբ մը Դուին քաղքին մեծ մա- սը կործանեցաւ, և բնակչաց չատը մե- ռան։ Այն խեղճ գոյժը՝ մեծ տպաւորու- թիւն ըրաւ ուրիշ քաղաքաց մէջ բնակող Հայոց վրայ. և Մաշտոց վարդապետան ալ՝ որ նոյն ժամանակները Աևան կղզւոյն մէջ կը բնակէր, սրտաշարժ ու գեղեցիկ ոճով մխիթարութեան թուղթ մը գրեց այն սա- տիկ հարուածէն ազատող խեղճերուն։

Յետ վախճանի Գէորգ կաթուղիկոսի՝ ամենուն հաւանութեամբը անոր յաջորդ ընտրուեցաւ Մաշտոց, որ միայն եօթն ա- միս կրցաւ հայրապետական աթոռը նըս- տիլ։

Ուռպելեանը կ'աւանդէ թէ նոյն միջոց- ները այլ և այլ երկպառակութիւնք կային Հայոց, Վրաց, Աղուանից և Յունաց մէջ, հաւատոյ խնդրոց և եկեղեցւոյ լինն գա- սակարգութեանց վրայ. որոնց ամենուն լուծումը տուաւ, կ'ըսէ, Մաշտոց վարդա- պետ, այն թղթովը՝ զոր ի հրամանէ և ի խնդրոյ Գէորգեայ կաթուղիկոսի գրեց. բայց այս թուղթը մեր ձեռքը հասած չէ, ինչպէս նաև ոչ այն թուղթը զոր Յովհ. կաթուղիկոս կ'աւանդէ թէ գրած ըլլայ՝ երբ դեռ Աևան կղզւոյն մէջ էր, Մաշտոց առաջնոյ թագաւորութեանը ժամանակ, անոնց դէմ՝ որ ի Քաղկեդոն և ի Շիրա- կաւան դատապարտած ժողովոյ հակառակ

կը խօսէին ։ Ուռպելեանը պատմագրական երկասիրութիւն մըն ալ կ'աւանդէ Մաշտոցի անուամբ. վասն դի Թանահատի կոչուած վանքին մէջ գտնուղ միանձանց ճգնութիւնները ստորագրելէն ետքը կը յաւելու. Թէ «Ջայս ծանոյց մեզ պատմութիւն երանելոյն Մաշտոցի որ՝ի Սևան» ։ Այս պատուական ու փափաքելի երկասիրութիւնն ալ դեռ մեզի անծանօթ է. եթէ Ուռպելեանին ըսածն՝ Մաշտոցի վարք խմանալու չէ ։

Արթուրին՝ Մաշտոցի ճգնողական վարքին հետ մեծապէս կը դրուատէ գինքը նաև յուսումնասիրութեան. վասն դի կ'ըսէ. « Այլ և ուսումնական բանգիտութեամբն յոյժ հմտագոյն » ։ Սամուէլ ալ իր ժամանակագրութեանցը մէջ. « Մաշտոց ճգնաւորական հանդիսիւ և իմաստասիրական արհեստիւ պայծառանայր » ։

Ումանք ուղեցին կարծել Թէ սոյն Մաշտոց Հայրապետին երկասիրութիւնն ըլլայ՝ նաև ազգային եկեղեցական արարողութեանց հաւաքման գիրքը կամ ծիսարանը, որ սովորական անուամբ Մաշտոց կը կոչուի ։ Այս յայտնի սխալման գլխաւոր պատճառ եղած է նախ անուան նմանութիւնը. որովհետև այն ծիսարանին հեղինակ՝ սրբոյն Մեսրոպայ անունն ալ շատ անգամ Մաշտոց կը կոչուի. և երկրորդ՝ Ցայսմաւուրաց և Կիրակոս պատմչին խօսքերը, որոնք թերևս փոխանակ

ըսելու թէ ծխատանին մէջ քանի մը բան կարգաւորեց, կամ քանի մը սաղմոս և աղօթք աւելցուց, որ հաւանական կրնայ սեպուիլ, կ'աւանդեն թէ ինքը նշած ըլլայ այն աղօթքները ժողովոյ և կարդի դնող։ Ա. Հաւասիկ Կիրակոսի խօսքերը. «Սա կարգեաց զդիրս՝ որ ըստ անուան իւր Մաշտոց կոչի. ժողովեալ զամենայն կարգեալ աղօթս, և ընթերցուածս ի միասին յարմարեալ յաւելուածով յիւրմէ. որ ունի յինքեան զամենայն կարգս քրիստոնէութեան»։ Բայց իր խօսքին դէմ կ'ելլէ ընդհանուր աղբին աւանդութիւնը, և սուրբն Ներսէս Շնորհալի, որ առ Միջագետացիս գրած թղթոյն մէջ յայտնապէս կը գրուցէ, թէ սրբոյ սուտ և անաւղի է այս կարծիքը։

ՅՈՎՀԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Ա. յս անուամբ՝ Հայաստանի հայրապետական աթոռը նստողաց վիցկերորդն է Յովհաննէս, և ընդհանրապէս կը կոչուի Յովհան կաթուղիկոս կամ Պատմաբան։ Ընդհանակերտ աւանին մէջ ծնած էր Յովհան, Դուին քաղաքին մօտերը. բայց ոչ ծնողքն և ոչ ալ ծննդեանը ճիշդ տարին յայտնի է։ Ի խորին ծերութեան վախճա-

նեցաւ Փրիսասի 925 թուականին։ Իր ուսմունքը՝ Մաշտոց վարդապետին ձեռքին տակ ըրաւ, որոյ և աղգական էր, ետքը մասնաւոր բարեկամութեամբ մտերմացաւ Գէորգ կաթուղիկոսին ալ, ու անկէ և Մաշտոցէ, նաեւ նաստաւ ի հայրապետական աթոռն, Ա. Սմբատայ թագաւորութեան ժամանակ։

Իր Պատմագրութեանը երեւներորդ երկրորդ գլխոյն մէջ՝ այն պատուոյն հասնելուն պատմութիւնը կ'ընէ՝ կարգէ դուրս խոնարհութեամբ մը՝ մեծարանօք և գովեստիւ կը խօսի իրեն նախորդ Մաշտոց հայրապետին վրայ, ողբալով անոր վաղահաս մահը, զոր թէ Հայոց աշխարհին և թէ իր անձին համար աղետական դէպք մը կը համարի, որովհետև կ'ըսէ թէ՝ ի մանկութենէ, անոր հայրական խնամոցը յանձնուած ու աշակերտած էր։

Գիտցուիր թէ երբ կամ որ իշխանին խնդրովը և առաջարկութեամբ ձեռք զարկաւ իր Պատմագրութիւնը շարադրելու։ Ո՛մանք կարծած են թէ տասներորդ դա-

* Չկնի ապա՝ հէգս եա և Թշուառականս և պաղեալս ըստ հոգևոր արբուցմանս խրատուն Յովհաննէս, որ զոյն զայս գրեցի գիրքս, ոչ ըստ արժանեաց ածայ յանձն սրբութեան ... զի թէպէտ և յաշակերտութենէ առն սրբոյն Մաշտոցի, և ի մանկութենէ իմմէ, այլ և աղդակից հարազատութեան նորա ըստ մարմնոյ»։

բուն սկիզբները սկսած ըլլայ յօրինել իր երկասիրութիւնը, Հայրապետական աթոռը նստելէն եւոքը. բայց աւելի հաւանական կ'երեւնայ այլոց գրուցածը՝ որ կը համարին թէ մի և նոյն միջոցի երկասիրութիւն չէ ասիկայ. այլ մէկ մասը՝ 897 թուականէն առաջ շարադրուած է, մնացածները անկէ ետքը: Ա. յս կարծեաց առաջնորդեանը գլխաւոր պատճառ այն կը սեպեն, որ Բաղկեդոնի ժողովոյն վրայ խօսելու առիթները՝ գրքին առջի մասին մէջ, խիստ եւ ուժով լեզու մը կը բանեցընէ նոյն ժողովոյն դէմ, բայց անկէ ետքը լեզուն կը փոխէ. և թէ կրօնական համոզմամբ՝ թէ քաղաքական պատճառաւ, դիտնալով որ ինչուան յունական կայսերութիւնը վրանին ձեռք չդնէ՝ անկարելի է որ Հայաստանի խնդութեանց դարման մը ըլլայ, կը սկսի չափաւորել խօսքը, թէ նոյն ժողովոյն, և թէ անոր սահմանադրութեանցը հպատակող Յունաց նկատմամբ: Ինչ աստիճանի ստուգութիւն ուզենանք տալ այս ենթադրութեանս, այս յայտնի է որ Յովհան կաթուղիկոս գրեթէ ինչուան մահը աշխատեցաւ իր Պատմագրութեանը վրայ. որովհետև Քրիստոսի 925 թուականին մեռաւ, և իր պատմած դէպքերն ալ ինչուան 923 կամ 924 թուականը կը հասնին:

Յովհան կաթուղիկոսին պատմութիւնը և առնր նիւթը. —Չարիւր ութսունեւեօթը գլուխ

կը բաժնուի Յովհաննու պատմութիւնը։ Առջի երկուքին մէջ հեղինակը իր երկասիրութեան յատակագիծը կը դնէ, ու միանգամայն կ՚իմացընէ թէ իր վախճանն է աւելի համառօտութիւն մը՝ քան թէ բուն ընդարձակ պատմագրութիւն մը չարադրել։ Իր այս խոստումնըը կը պահէ՝ ինչուան այն ժամանակաց պատմութեանը մէջ՝ որոնց ականատես վկայ է։ Ժամանակին ու աղգային պատմչաց սովորութեանը համեմատ՝ Ղրհեղէնն կը սկսի իր Պատմութիւնը, և կ՚իմացընէ թէ պատմաձներուն գլխաւոր աղբերքը երկուք են. աշխարհաձնութեան համար՝ սուրբ գիրք, և պատմութեանց համար օտար և աղգային պատմիչք։ Բայց ընդհանրապէս աղգային պատմչաց կը հետևի, և գլխաւորաբար՝ Մովսէսի Խորենացւոյ, իրեն ժամանակաւ մերձաւոր դէպքերուն նկատմամբ՝ Շապհոյ Բագրատունւոյ և ուրիշ աղգային պատմչաց։ Բայց որովհետև միտքը դրած է այնպիսի վայելուչ ոճ և լեզու մը գործածել՝ ի պատմագրութեան՝ զոր Խորենացիէն եաքը ուրիշները գործածած չեն, իր այս ջանքը չափազանցութեան մէջ կը ձգէ գինքը. վասն զի ուղիղով զարգարուն ոճ մը գործածել, վայելչականէն անդին կ՚անցնի, այնպիսի լեզու մը բանեցընելով որ ըստ ինքեան այնչափ դովելի և հետևելի չէ, ոչ ըստ ոճոյն և ոչ ըստ լեզուին։ Բայց ասիկայ սրևելեան՝ և մա-

նաւանդ Յովհաննու ժամանակացը ընդհանուր թերութիւնն է։ Մեր ազգին սովորական դրչաց՝ մէկ չափաւորելի սովորութիւնն ալ հետաձգ է Յովհան, սուրբ գրոց խօսքերը յաճախ իր պատմութեան գրացը մէջ բերելով, յարմար կամ անյարմար վկայութիւնները չտալով։

Պատմութեանը Գ–Ի գլուխներուն մէջ՝ Յովհան կաթուղիկոս Հայոց ազգին սկզբնաւորելուն վրայ կը խօսի. Արիբաս կատինայի ու Խորենացւոյն հետևելով՝ Հայոց ազգը Յաբեթի ցեղէն առաջ եկած կը սեպէ։ Ութերորդ գլխոյն մէջ կը սկսի Հայկայ՝ պատմութիւնն բնել, և անոր օրինաւոր յաջորդացը, մինչև ի մեծն Աղեքսանդր, որ՝ ինչպէս պատմութիւնն կ'ուսանդէ, նկատ Հայաստանի ալ տիրեց։ Անկէ ետքը Արշակունեաց պատմութիւնը կը սկսի աւանդել, համառօտագոյն ոճով, և անոնց ինկնալը և մարդպանաց յաջորդելը, և անոնցմէ ետքը Հայաստանի վրայ իշխելը մերթ կիւրապաղատից և ոստիկանաց, դորս երբեմն Յունաց կայսերք կը դրկէին, և երբեմն Դամասկոսի և Պաղտատի խալիփաները։ Այս առթով կը ցուցընէ Բագրատունեաց ցեղին իշխանութիւնն ամանդ զօրանալը, ինչուան այն ժամանակ՝ յորում Աշոտ Ա. կամ Մեծն՝ անկախ իշխան և Հայոց թագաւոր ճանչցուցաւ խալիփային։

Դրբին Ժ–ԽԲ գլուխներուն մէջ կա-

ւանդէ Աշոտոյ առաջնոյ Թագաւորու-
թեան, անոր որդւոյն Սմբատայ, և այլն,
պատմութիւնը։ Յովհաննու կաթուղիկո-
սին երկասիրութեան այս մասը՝ աւելի ման-
րամասն և հետաքննական տեղեկութիւն
կը պարունակէ Բագրատունեաց և Ար-
ծրունեաց Թագաւորաց վրայ։ — Իր դէմքին
մէջ կը սկսի խօսիլ՝ Սմբատայ և Յուսիկ
մէջ ծագած գժտութիւններուն և տարա-
ձայնութեանց վրայ, որոնք այնչափ ա-
րիւնհեղութեանց պատճառ եղան։ Ար-
քային թշնամութիւնը կը լռէն, և ահաւորա-
գոյն ազէտը և պատերազմը Հայաստանի
մէջ կը սկսին երևնալ՝ ներքին անմիաբա-
նութեանց պատճառաւ. իշխան իշխանի
դէմ, նախարար նախարարի դէմ կ'ելլեն.
ժողովուրդը ալ մերթ մէկին մերթ մէկա-
լին կողմը բռնելով՝ իրարու ընդ թշնամեաց
կը պատերազմին։ Ահի կ'առնու Եուսուֆ
Հազարացի ոստիկանը՝ Հայոց ներքին ան-
միաբանութիւնը. ու Նոր անունով մէկը
Ատրպատականի վրայ կը դրկէ չատ զօր-
քով. ան ալ կու գայ ու Շահնշահ Աշո-
տին հետ երկար ու խիստ կերպով կը պա-
տերազմի, զինքը ստիպելու համար որ
խալիփային հնազանդութեան տակ մտնէ։
Աշոտ Աւան կղզին կը քաշուի, Գեղայ կո-
չուած բերդին մէջ. ինչուան որ Աշոտոյ
կուսակիցներէն մէկը Գորգ՝ կը պատե-
րազմի անոր դէմ, Նոքայ՝ Գուին քաղքին
մէջ դրած Բչր (Պէշիր) ոստիկանը կը սպան-

նէ, և Աբարացւոց Թշնամի գունդերը կը ցրուէ: Այն ժամանակն է՝ յորում Յովհան կաթուղիկոս Աշոտ Շահնշահին քով կ'երթայ, երկար աաեն նոյն իշխանին արքունեաց մէջ կը բնակի, և սիրոյ ու մեծարանաց նշաններ կ'ընդունի իրմէն: Անկէց Գադիկ Թագաւորին արքունիքը կ'անցնի, ու թէ իրմէն ու թէ անոր եղբօրմէն մեծ սիրով կ'ընդունուի: Նոյն ժամանակներըն՝ այս երեք իշխանաց վրայ ալ ըսպառնալիք կը հասնին, և Գեղայի մէջ եղած զօրքերը՝ Թշնամեաց ուժէն վախնալով անձնատուր կ'ըլլան: Աբարացւոց ըսպարապետը կը տիրէ բերդին, ու անանկով իր իշխանութեան տակը կ'իյնան մեծ ձակայ քաղաքներն, աւաններն ու երկիրներն:

Հոս կը դադրեցընէ իր պատմութիւնը Յովհաննէս կաթուղիկոս: Արդէն հասակն առած՝ ու իր մահը մերձակայ տեսնելով, խորհեցաւ պէս իր գրքին վերջաբան գլուխ մը կը դնէ, ողբալով այն աղէտը որ Հայաստանի վրայ ծանրացեր էին. բայց միանգամայն կը քաջալերէ՝ գուշակօրէն զրուցելով, թէ աաեն պիտի գայ՝ յորում մեր հայրենեաց աղետից վախճանը պիտի հասնի, քրիստոսական կրօնք յաղթանակեն, և հաւատացեալք իրենց Թշնամեացը վրայ զօրանան: Անկէ խօսքը առ Թագաւոր, իշխանս, պետս և հրամանատարս Հայաստանեայց կը դարձընէ խօս-

բը, իմացընելով իրենց թէ ինչ պատճա-
ռի համար և ինչ նպատակաւ այս Պատ-
մագրութիւնը գրելու ձեռք զարկաւ. կը
ցաւի այն ուրացութեանց վրայ՝ որոց ակա-
նատես կամ պատմիչ եղաւ, և Հայաստա-
նի իշխանացը՝ և անոնց հպատակաց՝ իմաս-
տուն խորհուրդներ և խրատներ կու տայ:
Ա.յս սրտաչարժ և ազդու վերջաբանով
կ'աւարտէ իր Պատմութեան գիրքը:

Կենացը վերջին տարիները Զորոյ վան-
քը քաշուեցաւ Յովհան, և հոն մեռաւ,
925 թուականին, քսանևեւթ տարի Հայոց
կաթուղիկոսական աթոռը նստելէն ետքը:
Իր յաջորդն եղաւ Ստեփանոս Բ, որ Հայ-
բասխական աթոռը Աղթամարայ կղզին
փոխադրեց: — Զննը գիտեր թէ արդեօք
ուրիշ գրուածք ալ չարադրած է Յովհան.
ազգային հեղինակը՝ իր Պատմագրութեա-
նէն զատ ուրիշ երկասիրութիւն չենք ի-
նատակեր իր անուամբը:

Մեծ յարգանօք կը խօսին նոյն ազգային
պատմիչը Յովհաննու կաթուղիկոսի թէ
կենացը և ուսմանց, և թէ այս Պատմա-
գրութեան վրայ. Թովմա արծրունի՝ «Ըս-
նեալ և ուսեալ էր, կ'ըսէ, առ ոտս սբր-
բոյն Մաշտոցի, նորին հրահանգեալ կըր-
թարանի ուսումնասիրութեան վարժիւք ա-
ռագացեալ. այր քաղցրաբարոյ և հեզա-
հայեաց»: Եւ Ցուստոփ ոստիկանին զօրա-
ցը ձեռքով՝ Հայաստանի մէջ եղած ան-
թիւ արիւնհեղութեանց վրայ խօսելով, կը

յաւելու. «Զոր այլ զօրաւոր և մեծահարուստ ոմն հռետոր մեծ՝ նախ քան զմեզ վերագրեաց և աւանդեաց ի գանձս արքունի»: Սամուէլ՝ գեղեցկաբան շարագրութիւն կը կոչէ անոր պատմութիւնը. Աստղիկ՝ ձարտասան և պատմագիր կ'անուանէ դինքը. Կիրակոս՝ գեղեցկայարմար պատմութիւն կը կոչէ: Տարակոյս չկայ որ ճարտասան պատմիչ մըն է Յովհան, և աւանդած դէպքերուն չատին ալ ականատես ըլլալով՝ այն ազէտքն տպաւորագոյն աղդեցութիւն ըրած են սրտին վրայ, և արժանի լեզու մը բանեցընելով՝ ի գութ կը շարժէ թէ լսողքը և թէ ընթերցողները: Բայց ճարտասանական արուեստը Յովհաննու գրչին տակ՝ սովորական սահմանէն դուրս ելած է. անոր համար իր յարգը մեծապէս կորսնցուցած. լեզուն ալ արուեստակութեան կերպարանք առած. այնով է որ՝ որչափ ալ գեղեցիկ երևնայ ոմանց իր կերպն և չարագրութեան ոճը, հետևելէն զգուշանալու է:

Իբրև պատմիչ՝ ընտիր բարեմասնութիւն մըն ալ ունի Յովհաննէս, որ մեր՝ մանաւանդ յետին պատմչաց մէջ՝ սակաւագիւտ յատկութիւն է, հաւատարմութիւնը. այնով է որ ամէն լսած դէպքերը չպատմեր. և եթէ պատմելու ալ ստիպուի՝ երաշխաւորութիւնը վրան չառնուր: Օրինակ իմն՝ երբոր Ամբատայ առաջնոյն մարմնոյն վրայ լոյս իջնելուն պատմութիւնը կ'ընէ, և

Քէ ինչպէս Քէ հաւատացեալք և Քէ ան-
հաւատք տեսած ըլլան այն ճառագայթա-
ւէտ պայծառութիւնը, կը յաւելու. « Եւ
որք ասէինն զայս՝ ստուգութեամբ իմն հա-
ւաստի դրանն առնէին. բայց մեք զայսո-
սիկ ի տեսողս անդր Թողացուցեալ, և
զորս աչք իսկ տեսեալ է մեր, ոչ դան-
դաղեսցուք պատմել »: Այս նկատմամբ
վար կը գտնէ Շասկոյ Բազրատունւոյն
պատմութիւնը, ինչպէս վերը տեսանք:

. Յովհաննու կաթուղիկոսի պատմութիւնը՝ վերջի տա-
րիներս (1841) տպագրեցաւ Յերուսաղէմ՝ Կոյն տարին
Փարիզ արքունական տպարանէն հրատարակուեցաւ ա-
նոր գաղղիական թարգմանութիւնը, զոր անուանի արևե-
լագէտն Սէն-Մարգէն երկասիրեր էր, ու իր մահուընէն
շատ տարի ետքը Ֆելիքս Լաժառ տպագրեց:

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ

Յովհաննու կաթուղիկոսի գրեթէ ժա-
մանակակից՝ կամ՝ անկէ քիչ կրտսերագոյն
է Թովմա Արծրունի: Ժամանակաւ որչափ-
ալ վերջաւոր՝ բայց ի հմտութեան մեծ
տարբերութիւն կը տեսնուի այս երկու
անձանց մէջ. որով և արժանապէս առա-
ջին կարգի պատմագիր կրնանք սեպել

զԱրծրունին, թէ որ քանի մը թերութիւն ներէն զգուշանար, մանաւանդ լեզուի խրթնութենէն։ Եղիշէ վարդապետին աչակերտ կը համարուէր Արծրունին. որով հետև իր պատմութեան խորագրոցը մէջ՝ նոյն վարդապետին աշակերտ կ'անուանի*. անոր համար քանի որ իր պատմութեան գիրքը գտնուած չէր, վերջերորդ դարու պատմիչ կը համարուէր Թովմաս. բայց հոգը երկասիրութիւնն երևան հանելով՝ յայտնապէս տեսնուեցաւ այն ենթադրութեան սխալ ըլլալը, թէ որ ուրիշ հոմանուն վարդապետի մը աշակերտ չուզենանք սեպել զինքը։

Տասներորդ դարուն սկիզբը Գագիկ Արծրունեաց տէր և վասպուրականի իշխանն՝ իւր հայրենատէր քաջագործութեամբն ամենուն աչքը իւր վրայ դարձուցեր էր. անոր յաղթական գինուց վրայ՝ և թշնամեաց հարստահարեալ ազգին վերանորոգութիւնը կը փափաքէին տեսնել. այն յոյսն և ակնկալութիւնն արդիւնաւորելու գնդեցիկ պարծանքն՝ իրեն վրայ առած էր Գագիկ։ Եւ որովհետև իր ղէնքերուն փառքը մինչև հեռաւոր ժամանակաց վրայ կ'ուզէր տարածել, և պատմութեանց մէջ՝ իրեն փառացն արձագան-

* « Պատմագիր վասն Արծրունեաց ազգին, զոր արարեալ է Թովմա վարդապետի՝ աշակերտի Ե. դիշայի »։

դը Թողուլ, Բագրատունեաց Սահակ իշխանին պէս՝ ուղեց որ իրեն ու իր փառասէր Արծրունեաց ցեղին պատմութիւնը Թողու ազգին. ու իր այս կամացը և փափաքին գործադրութիւնը յանձնեց Թովմայի. որուն արդէն իր հայրն ալ նոյնը յանձնած կ'երևի. վասն դի Թովմա իր յառաջաբանին ետքը կ'ըսէ առ Գրիգոր Արծրունեաց Տէր և Վասպուրականի իշխան, որ անչուշտ Դերենիկն է, « Ընկալեալ ըզհրաման պատուիրանի քո... ձեռն ի գործ արկի » և այլն: Իսկ Ս. գալրութեան վերջը՝ խօսքն առ Գագիկ կ'ուղղէ:

Ջսխալեցաւ Գագիկ իւր ընտրութեանը մէջ. վասն դի Թովմաս ոչ միայն ժամանակին հմտագոյն հանճարներէն մէկն կրնար սեպուիլ, այլ ինքն իսկ Արծրունեաց ազգէն ըլլալով, հին ու անցած փառքերը՝ հնութեան աւանդիցը և գրքերուն մէջ փնտռելու յարմարութիւն և անխոնջ յառաջադիմութիւն ունէր. ու ամեն բանէ աւելի հայրենասէր, կամ լաւ ևս ըսելով, ցեղասէր ոգի մը:

Բայց այն առաջարկութեան գործադրութեանը ամեն դժուարութիւնները իր աչքին առջևն էին: Հայոց պատմութիւններ, զանազան անձանց ու այլ և այլ ժամանակաց երկասիրութիւնք հասեր էին իր ձեռքը. բայց Արծրունեաց ցեղին վրայ լիակատար ու յագեցուցիչ գրուածք մը պակաս էր. իրեն հնութեամբը պատկա-

ռելի ցեղ մը. սակայն այն հնութիւնը ընդարձակ տապարէզ մը պիտի բռնար իր առջևը հետազօտութեանց, և հարկ էր պատմութեան մոռացութիւնը դարմանել, փառաց պարծանքը նորոգել, կամ ուրիշներէն յափշտակել։

Աբծրունին առաջնորդ առած է իրեն այս երկասիրութեանը մէջ, բաց յատուածային գրոց, մարդկութեան նախնական ստեղծմանը և ընդ ամենայն աշխարհ ցրուելուն՝ նաև արտաքին պատմիչներ. և մանաւանդ մէջ կը բերէ Եւսեբիոսի, Ագաթիկանոսի Բերոսոսի, Մանեթոնի, Աբիտենոսի Կեռսարացւոյ, Յուլիանոսի աղիկառնացւոյ, Փիլոնի աղեքսանդրացւոյ, և այլոց կարծիքները*։ Մանաւանդ կը ցուցընէ ինքզինքը նաև Հերոդոտեայ պատմութեանը, և անոր հետևողութեամբ կ'աւանդէ Պարսից պատմութեան այն մասը՝ որ Հայոց աղգին պատմութեան հետ վերաբերութիւն ունի։ Ազգային պատմչաց հետ ալ կը խորհըրդակցի Աբծրունին, և դիտաւորաբար

* « Օժանդակեալ՝ ի գրոց հնագէտ պատմութեանց մարգարէականաց, և նորոց վարդապետաց եկեղեցւոյ Քրիստոսի, և արտաքին վիպասացն՝ աշխատասէր և մտահարուստ արանց՝ որք գոյեկարար յանձնեցին մեզ յիւրոց հետևելոցս՝ զառողջ և զառանց խարդախութեան Հաշակ համեղագոյն և կարևորագոյն կերակրոց՝ յարբունս կատարելոյ գիտութեանն տանել հասուցանել զոտատիճասէրն »։

Մովսիսի խորենացւոյ. և Աբծրունեաց ցեղին պատմութիւնն ընելու ժամանակ կ'աւանդէ, թէ նոյն ցեղին սկզբնաւորութեան վրայ խօսած ըլլան Մամբրէ վ. երծանօղ և անոր եղբայրը Մովսէս և Թէոդորոս Քերթող։ Ա. յս երկու պատմիչները միայն առնուամբ ծանօթ են մեզի, և իրենց երկասիրութիւնները կորսուած են։

Սակայն անոնց գրուածոցը մէջ եղած տեղեկութիւնքը անբաւական կը սեպէ իւր առաջարկութեանը. ուստի «փոքր ինչ և դուզնաբեայ, կը կոչէ, զմեզայորդս յիշատակարանացն ի յառաջագոյն և հին պատմագրացն, զմեր բնիկ տերանց տոհմին Աբծրունեաց»։ Ա. յն պատճառաւ հարկ սեպած է ուրիշ բնութեանց տալ ինքզինքը, և մանաւանդ՝ ճարտար և ստուգախօս պատմագրանից համեմատ՝ այն դիպուածոց և քաղութեանց հանդիսարան գաւառներն ու քաղաքները քալել անձամբ. ու պատմութեանց մէջ մուծուած անցքերը՝ հոն անոնց հնաւանդ յիշատակարանաց մէջ փնտռել։ Ինքը Աբծրունին ալ կը վկայէ. «Որ ինչ ի սկզբանց անտի չինութեանց աշխարհիս Հայոց, ի Հայկայ աղեղնաւորէ և ի նորուն զարմից, և ցկաթոռ և վաւաշոտ Շամիրամն տիկին Ասորեստանեայց, և ի նմանէ յայլս. և յայլոց ևս յաւէտ ձեռակերտաբար և չինուածք յիւրաքանչիւրոցն յերկրիս մերում եղեն, մեր առ ամենայն անձամբ հասեալ և ա-

չօք տեսեալ։ Զկտեալ և ՚ի հեռաւոր աշխարհս, մինչև ցկղարշն և Շուչեթացիս, և առ լերամբն Կաւկասայ, և ՅԱհիլ, մինչև ՚ի մուտան ՚ի Գաղա, և ընդ Ցայաստան, և ընդ ամենայն հիւսիսականս և ընդ արևելս. ՚ի հնախոտս դնալով տեսաք զդպրած քաջաց և նախնեաց»։ Ուրիշ տեղ մըն ալ. «Իսկ Գուրգէն (արծրունի) օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ՚ի բազում քան թէ ՚ի սակաւ տեղիս. զոր ՚ի Տարօն և զոր ՅԱնձաւացիս և զոր ՅԱրդն, և զոր առաւել ամենայն ուրեք, որպէս ցուցանեն յիշատակարանքն՝ որք յառաջ քան զմեզ հոգացան»։

Ա.յսպէս կը վարուի ժամանակաւ իրմէ հեռու եղած դէպքերու նկատմամբ։ Իսկ ուր հարկ էր որ մերձաւոր պատմութեանց յիշատակութիւնն ընէ, հոն բաւական չի-տեպէր վեր ՚ի վերոյ քննութիւն մը, այլ անձամբ քննած է անոնց ստուգութիւնը և այնպէս աւանդած։ Իր պատմութեանը չատ դէպքերը կը հաւատարմացընէն այն խօսքը զոր կ՚ըսէ իր անձին համար. «Ոչ իբրև յայլոց համբաւուց տեղեկացեալ՝ ընծայեալ արձանացուցանեմ քեզ ստայօղ բանից պաճուճեալ առասպելս, այլ ակնատես և ականջալուր և իմով իսկ ձեռօք չօչափեալ, պատմեմ քեզ հաւաստապէս զեղելոցն զարմանս»։ Ա.յս խօսքիս ստուգութիւնը յայտնի կը ցուցընէ, երբոր Խութայ լեռնականներէն Յովսեփայ

Հաղարացւոյն մահը պատմելէն ետքը, « Ես ինքնին, կ'ըսէ, աչօք իմովք տեսի զայրն զոյն՝ որ Հարեալն էր գնա, (զՅովսէփ Հաղարացի), և՝ ի նմանէ առուգեցի վասն նորա »։

Աբծրունւոյն Պատմութեան նիւթը. — Բիւզանդայ նման չորս դարերէն բաժնած է Թումման իրեն այս պատմական գրուածը. և դիտաւոր դիտումնէն եղած է, ինչպէս ըսինք, Աբծրունեաց պատմութիւնը շարագրել. ասիկա էր նաև Գագիկ՝ Վասպուրականի իշխանին խնդիրքը։ Բայց Աբծրունին՝ մեր ազգին շատ պատմագրաց սովորութեանը Համեմատ՝ իր պատմութիւնը կը սկսի Ադամէն և Եւայէն, ու մարդկութեան բաժանմանէն. և որովհետև Հայկայ քաջութիւնները, և անոր Բելայ վրայ ըրած յաղթութիւնն ալ կը պատմէ, այն առթով նաև Խարխլացւոց և անոնց առասպելացը վրայ կը սկսի խօսիլ, հրմէ տարբար քննելով և ետանդելով քաղդէացւոց դրոյցքը, և թէ ինչէն կամ երբ սկսան անոնց պաշտամունքը։ Անկէց Աստեւանի թագաւորութեան վրայ խօսելու կ'անցնի, ու Զրադեշտի և Մանիթոպայ կամ Մանեթոպայ ուսմանց վրայ, և Զրադաշտէն՝ Զրուանայ որդւոցը՝ Որմզդի և Արմենի թագաւորելուն, Համեմատ այն առասպելաց զորս Եղնիկ և Եղիշէ կ'ատենդեն։ Պարսից կրօնիցը վրայ խօսելու ատեն՝ այն առասպելքն ալ կը յիշատակէ՝

զոր աւանդութեամբ կը պատմէին Շախ-
րիք կոչուած գիւղականքն, որոնք Ալպա-
ստան աշխարհը կը բնակին, կ'ըսէ, և յո-
րոց լսած է պատմութեան մէջ յիշատա-
կուած դէպքերը: Այն աւանդութեանց
յիշատակութենէն նոքը՝ Կիւրոսի պատ-
մութեանը կ'անցնի. և Ասորեստանեայց
ու Մարաց թագաւորութեան բարձումը
պատմելով, այն պատճառաւ Հայոց իշխա-
նութեան վեհանալուն և ընդարձակուելով
փառաւորուելուն խօսքը կ'ընէ: Յետոյ Պար-
սից տկարանալը և Աղեքսանդրի Մակե-
դոնացւոց աշխարհակալութիւնը պատմած
առեն, կը յիշէ Արծրունեաց ցեղին Ասուդ
նահապետը՝ Պարեհի նիզակակից, որ զե-
րի բռնուած՝ ի Յունաց՝ քաջութեան համար
Աղեքսանդրէն արուեցաւ առ Պաղոմէոս.
որ և տարաւ զնա յԵգիպտոս և իրեն զօ-
րավար ըրաւ: Աղեքսանդրէն ետև Արշա-
կունեաց թագաւորութեան կանգնիլը կը
պատմէ, Հայոց ալ նոր թագաւորութեան,
զոր և ինչուան վերջանալը՝ ի և դարու՝ կը
յիշէ. և իրարանչիւր թագաւորաց առեն
Արծրունեաց իշխանաց կամ անոնց երկրին
մէջ հանդիպածները՝ որչափ որ գտած է՝
կը յիշէ. բաւական ու նոր տեղեկութիւն-
ներ տալով Արշամայ, Երուանդայ, Ար-
տաշիսի՝ թագաւորաց առենին. նոյնպէս
ալ Տրդատէն ետև հանդիպած բաներուն,
անաչառապէս յիշելով և գտանելով Մե-
հրուժանայ և Շաւասպայ պէս ուրացող

Աբծրունեաց բրածնները։ Աբշակունեաց թագաւորութեան հետ կ'աւարտէ Թովմաս իր Ա. գլուխը։ Բ. գլուխը 400 տարուան պատմութիւն է, վարդանայ պատերազմէն մինչեւ ի գալ Բուզանդայի Հայոց նախարարները ջնջելու համար գերի տանելու. նախ կ'իմացընէ թէ վարդանայ նիզակակից Աբծրունեաց վահան նահապետին պատմութիւնն՝ եղիշէի գրոց մէջ չգտնուելուն պատճառն է՝ Բարսումա Աղուանից չարութիւնն, որ այն պատմութեան բնագիրը ձեռք բերելով՝ մէջէն հաներ ջնջեր էր իշխանին յիշատակը, որով հետեւ անոր յաջորդն Մերշապուհ իշխան՝ վռնտեր էր դաշնադաւոր ասորին իր երկրէն։ Ցետոյ կարգաւ կը յիշէ վահանայ Մամիկոնենոյ քաջագործութիւնքն ընդդէմ Պարսից. ասոնց պատերազմները Ջ և Է. դարուց մէջ ընդ կայսերաց Յունաց, Հերակլ կայսեր քաջութիւնները, Պարսից տկարանալը և յետոյ նուաճուիլն Յունաց. ասոնց զօրանալն, Մահմէտի նոր օրինագրութիւնը, և իր յաջորդաց աշխարհակալութիւնը. զորոնք համառօտիւ կը յիշէ, մինչեւ Ջափր (Գեաֆար) ամիրապետին տէրութիւնը, որ խիստ ոսոխական էր Հայոց. ասոնք ալ չդիմանալով՝ դէմ կ'ելլան. և յետոյ Սահակ Եզիպտացին Եւստաթ ասորիկանը. այս գործոց մէջ Աբծրունիք ալ մասնակից էին։ Հոս կ'աւարտէ Թովմաս Բ գլուխ.

բութիւնը, հետաքրքրական տեղեկութեամբ մը Սասնոյ լեռնցոց վրայօք։ Դիտելու արժանի է որ այս 400 տարուան կարևոր միջոցիս գրեթէ բնաւ չեն յիշուիր Արծրունեաց նահապետքն, և ոչ Ս. Սահակայ և Համազասպայ Արծրունի իշխանաց նահատակութիւնն, զոր կը վայլէր ոճով պատմել. թերևս գրած ալ ըլլայ Թովմաս և հիմայ գրքէն պակսած, ինչպէս որ պատմութեան սկիզբն և ուրիշ տեղ տեղ ալ Ս. գպրութեան մէջ յայտնապէս պակաս և կիսատ մնացած է, ինչուան հիմայ մեր ձեռքը հասած օրինակաց մէջ։

Գ. գպրութիւնն գրեթէ 30 տարուան պատմութիւն է, սկսեալ 'ի կիսոյ Թ դարու, որ և պատմչին տղայութեան տարին կ'ըլլայ. գլխաւոր և երկարագոյն մասն պատմածին առջի չորս հինգ տարուան դիպուածքն են. և են Բուզոյի պատերազմներն և կերպ կերպ հնարքներով Հայոց իշխաններըը բռնել և 'ի Բաբելոն խաւրելն։ Այս բաներս պատմած պիտի ըլլայ Բագրատունեաց պատմիչն Ղազարէ ալ, բայց անոր գրոց կորուստն աւելի ցանկալի կ'ընէ Արծրունեայն այս պատմածը որ կրնայ իր լուսագոյն և կենդանագոյն ոճով գրուած մասը սեպուիլ. յորում կը սկսի տարագրել ամիրապետին բարկութիւնը 'ի լանջն Սասնեցւոց և վասպուրականի Աշոտ իշխանին բրածը, զօրք ժողովելն և յանձնելն Բուզոյի. որ կու գայ նախ 'ի Խլաթ քա-

զաբ, հոն Ամբատ Մոկաց իշխանն՝ իրեն անձնատուր կ'ըլլայ. բայց ուրիշներն քաջութեամբ դէմ կը կենան իր զօրաց. ո՛մանք ալ բռնուելով կը նահատակուին, և նախ Ապուսահակ՝ Նախջաւանայ եպիսկոպոսին եղբայրն: Աշոտ Վասպուրականի իշխանն առջի բերան դէմ կը կենայ Բուզայի, յետոյ անոր խոստման վստահանալով՝ անձնատուր կ'ըլլայ իր Գրիգոր որդւովն: Նոյնպէս անձնատուր կ'ըլլայ Գուրգէն իշխանն ալ, բայց յետ կարճ դիմակալութեան Կորճայից լերանց մէջ. Զատգետոյն եղերքը. չատ բնական և վառվռուն նկարագրած է այս դիպուածս. նոյնպէս ալ յետոյ Ապուանիկ կամ Արցախոյ մէջ՝ անոնց իշխանին Ապումուսէի երկար պատերազմները և դիմակալութիւնը. ո՛րուն դէմ Բուզայի ճարն հատնելով դրնց ամրապնդուին և հրաման առած՝ որ բռնութիւն չընէ. այլ պատուով հրաւիրէ զքաջն երթալու առ ամիրապետն, ինչպէս որ ըրաւ Ապումուսէ ալ: Ուրիշ պատերազմներէ և կորճ վկայներ ալ նահատակէն ետև, Բուզայ իրեք տարուան մէջ բռնած իշխանները կը տանի առ ամիրապետն, իր տեղ կուսակալներ թողլով. որոց դէմ կը կենայ ուրիշ Գուրգէն (որ դի Ապուսպէղի) Աբծրունի իշխան մը. ինչուան որ յետ մեծ եօթն տարուան գերութեան իշխանաց Հայոց՝ ամիրապետն անոնցմէ սակարներ հաւաքել կը հանէ և

կը դարձնէ իրենց երկիրը, հաստատ կեցողներէն ոմանք կը նահատակէ, զոմանս ալ կը թողու բանտի մէջ մեռնելու. ասոնցմէ եղաւ Մերսեհ Բագրատունի Հայոց իշխանապետն, որ և անոր համար Խոստովանող կը կոչուի. որուն տեղ Բուղա Հայոց գլխաւոր թողեր էր անոր որդին Աշոտը, այն որ յետոյ ամիրապետին հաւանութեամբը ոչ միայն Հայոց իշխանապետ՝ այլ և թագաւոր եղաւ։

Գերութենէն դարձող իշխանաց մէջ առջիններէն եղաւ Գրիգոր Դերենիկ որդին Աշոտոյ, և յետոյ հայրն ալ. ասոնք երկուքն ալ հակառակելով կը կռուին Գուրգենի հետ նախիջեանութեան վրայ, ինչուան որ Գուրգէն Անձևացեաց երկիրն առնելով՝ մէկալ կողմերը կը թողու անոնց։ Աշոտ՝ ուրիշ տեղուանք ալ այլադգեաց ձեռքէն ազատելով, և իր ակամայ ուրացութիւնը ապաշխարելով՝ կը մեռնի տարիքը չառած։ Հոս կ'աւարտի Գ. դպրութիւնն ալ։

Դ՝ մէջ կը պատմէ Թոմաս իր ժամանակին ականատես պատմութիւնը, որոյ գլխաւորն է՝ յետ Գրիգորի Դերենկայ և անոր անդրանկին Աշոտոյ զործոց, ասոր մէջին եղբօր՝ Գագկայ՝ գործերն։ Գագիկ որ և Խաչիկ՝ ծնած էր յամին 879, և քան զԱշոտ ու իրենց կրտսեր եղբայր Գուրգենը՝ ամենայն բարեմասնութեամբ առաւելեալ էր, թէ մարմնաւոր ձրիւք և բաջութեամբ,

թէ իմաստութեամբ և հնարագիտութեամբ և թէ քաղաքական կարգաւորութեամբք և շինութեամբք. և ըստ նկարագրի պատմչին՝ մանգամայն դիւցազն է և աշխարհաշէն իշխան. և այսպիսի բարեմտանութեանց արժանաւոր վարձք կը սեպէ Աբծրունեաց թագաւոր և թագաւորութեան հնդկինակ ըլլալն. որ ուրիշ աչքով նայելով՝ փառասիրութեան և ապերախտութեան արդասիք կը սեպուի: Ասոն դի Գագիկ երկար աեեն անդուր և չարահնար ցուսուփ ոստիկանին վարպետութեամբ հակառակելէն ետև, անոր աչքը մտաւ, և իր Աբծրունեաց երկրին վրայ թագաւոր եղաւ, որով զատեց այն երկիրը Հայոց թագաւորութենէն, զոր իմաստութեամբ և քաջութեամբ կը կառավարէր իր քեռին Սմբատ Բագրատունի, որդի Ա. Աշոտոյ. աս երկուքն ալ շատ բարիք ըրած էին Գագկայ հօրը և իրեն ու եղբարցը՝ հօրեղբուն մեռնելէն ետև: Ասով Սմբատ իր մեծ օգնականը և յոյսը կորսընցուց, և յետոյ ոստիկանին ձեռքն ինկնալ և նահատակուիլ: Ա.յս խորհրդածութիւնները չիկրնար ընել մեր պատմիչն և ոչ մեզ զրկել իր դիւցազնը. թէպէտ և չիզլանար պ՝Սմբատ ալ մեծամէծ գովել ու անունն մարդ մ՝անուանել: Երկիրը խաղաղելէն ետև Գագկայ շինութիւնները կը սարսրզրէ պատմիչն՝ տեղտեղ բանաստեղծական

աչխուժիւ. Ա.ղթամար կղզւոյ մէջ Ս. Խաչ եկեղեցին, որ ինչուան հիմայ ալ կանգուն է՝ թէ և քանդակքն և նկարքն մաշած և թափած, և նոյն կղզւոյն ու Պատմոյ մէջ արքունի ապարանից չէնքերն, որ հիմայ բոլորովին անհետ եղած են վանայ ծովուն մէջ, ուր և ամբարտակ մը չիներ էր մեծամեծ քարերով։ Պատմելով Գագկայ վերջին քաջագործութիւններն որ ի Դուին՝ օգնական երթալով Աբասայ թագաւորի՝ որդւոյ Ամբատայ, և որ ընդդէմ Դևղկայ, մեր հեղինակն կ'ուզէ պատմութիւնը վերջացընել Գագկայ վրայ գովեստով մը, սկսելով իր արտաքին կերպարանքը նկարագրել, և անյնելով իր բարուց, քաջութեան և խնամատարութեան վրայ։ Անշուշտ ընծայականով մը, կամ խօսքն առ Գագիկ դարձընելով՝ աւարտած էր Թոմաս իր երկասիրութիւնը, ուրախութեամբ և փառօք կնքելով խօսքը. սակայն այս վերջաբանը մեզի հասած չէ. հոս կիսատ կը մնայ գիրքն. և թէպէտ գեռ ուրիշ բաներ կը կարդանք Ա.ծրուանոյն անուամբ հրատարակեալ դրոց մէջ, և ե դպրութիւն մ'ալ, բայց իրմէ եօթի դրոցի և չարունակողի գործ է այն. մանաւանդ կրկնութիւն ըլլալով Գագկայ և իր եղբօր Աշոտոյ պատմութեանն, մանաւանդ Գագկայ ցեղին վերջին պայազատին՝ Անեբերիմայ Ա.ծրունեաց յետին թագաւորին յիշատակն, և անոր ցեղէն իջած Ա.ծ-

դըլմանէ իչխանի ու ասոր որդւոց. որոնց դարձեալ ուրիշ յիշատակագիրք ալ՝ պատասուր շարունակութեամբ՝ ինչուան ի ԺԴ դար կը հասցընեն Արծրունեաց յիշատակները։

Արծրուեացւոյն ոճր. — Ըստ լեզուի մարքութեանտարակոյս չկայ որ Թովմաս պատմիչ ալ լաւ հայկաբան է, բայց տեղ տեղ ինչպէս իսկզբան ալ ըսինք՝ խրթնաբանութեամբն կամ պակաս ընտրութեամբ բանից՝ կը հետանայ ի յօտակութենէ. և ընդհանրապէս խիստ քան փափուկ կրնայ ըսուիլ. դլխաւոր պակասութիւնն ալ յայսմ մասին է իր դարուն քաղաքական աղդեցութեամբ առած եկամուտ ոճը, այսինքն արաբական պերճաբանութիւն մը կամ բռնութիւն բառից. որ թէ և չատ տեղ սաստկութիւն կու տան բացատրութեան՝ այլ ընթեր նախնեաց պարզութեան չնորհքը չունին։ Ի վերայ այսր ամենայնի դիտելով պատմութեան կարգաբանութիւնը, միակերպ պահած ոյժը, վաւերաւն և երբեմն բանաստեղծական նկարագրութիւնները, դիմացնիս դրած միտք գրաւող տեսարանները, կարիճ ոգի մը՝ որ բոլոր պատմածին և գրուածին վրայ կը փայլի իբրև անդրադարձութիւն մը հոգւոյ հեղինակին, բաւական անաչառ դատաստանները, և յաջողութիւնը կերպ կերպ իմաստներ և կրքեր կենդանագոյն ներկայացնելու. ասոնք զԹովմաս առաջին պատ-

միչ կ'ընծայեն մեզի յետոսկեդիր պատմչաց եւ դարուն և Ա.զուանից պատմչին, իրմէ վերջ եկողներէն ալ ամենէն գերազանց, յիշեալ ամենայն բարեմասնութիւնքը մեկտեղ առնելով։

Գիտնական և պատմական արժէքից զատ նալով, բաց ի պէսպէս յիշեալ դիպուածներէն երախտապարտ ենք իրեն մեր հին և կորուսեալ քանի մը հեղինակաց գործքերէն յիշատնեռուն, և քանի մ'ալ գործոց յիշատակութեանն համար. ինչպէս են Մովս. Խորենացւոյ պատմութեան Դպիրքը, անոր եղբօր Մամբրէի և Թէոդորոսի գրած Հայոց մեռացորդ պատմութիւնները, Ա.բրահամ Խոսռովանդին համառօտ պատմութիւնը վարդանանց, և այլն։ Ա.նոնցմէ ալ հին՝ Հայոց կամ գէթ Ա.յծրունեաց պատմութիւն մը, թերևս Ա.ղեքսանդրի Մակեդոնացւոյ առեն կամ քիչ վերջ գրուած, որոյ օրինակն կը գտնուէր ի հըռոմ չակաւոր գրատան Ա.ղեքսանդրիոյ եպիսկոպոսի, ուսկից բերել տուաւ Ա. Տիգրան Ա.րշակունի, խնդրելով ի Կղէոպատրայ թագուհւոյ։ Թովմա երկու տեղ կը յիշէ հին պատմագիր մ'ալ և հատուածներ կը բերէ, որք մարգարէական ոճով կէս ողբական և ապառնական խօսքեր են Պարսից կամ Ելիմացւոց վրայ. և բանասիրաց հետաքննութեան արժանի գրուխ մ'է այս։

Յարգի են մեզի նաև Թովմայի յիշած քանի մը պատերազմական և քաղաքա-

կան օրինաց առաքութիւններ, զորս ուրիշ տեղ չենք գիտեր։

Աստուածաբանական խնդրոց մէջ ալ կ'երեւի որ Թոմաս ոչ միայն բաւական հրմտութիւն ունէր, այլ և դատող և ոչ ծառայական միտք. և երբ պատմութեան կարեւոր դիպուածն կը պահանջէ կ'իջնայ քրնութեան և ընտրութեան. խստիւ կը յանդիմանէ զԱգաթարտ իշխան Տարօնոյ և Հայոց իշխանապետ, որ ուրացութեանը վրայ պատրուակ աւելցընելով ըսեր էր, թէ ակամայ ուրացութիւն մեղք չէ։ Այնուհետեւ և համարձակ կարծեաց մ'ալ կը հատնի՝ թէ Յրհեղէղի առեն Նոյի տապանին մէջ՝ Ս. Գրոց յիշած ութ անձանցմէ զատ ուրիշ անձինք ալ եղած ըլլան, ինչպէս տապանը չինողներէն ոմանք, և ճարտարապետան ու Նոյի մկ դուստրն, զոր ոմանց առանդութեան. և այս բանս կ'արդարացընէ Պետրոս առաքելոյն վկայութեամբ զոր ապրելոյն՝ի Յրհեղէղէն «ոգիք իրև ութ»։ Ընթերցողը՝ի հարկէ կը խորհըրդածեն թէ ինչ պէտք էր Թոմայի՝ Արծրունեաց պատմութեան առեն՝ այսպիսի խնդրոց մէջ մտնել. — իրաւացի է. Թոմաս՝ի սկզբան պատմութեանն ալ այսպիսի աւելորդաբանութիւն կ'ընէ նաև Նախայրհեղէղեան նահապետաց վրայ, մանաւանդ Կայէնի վրայ խնամտասիրելով։

Թոմա Արծրունի իր պատմութեան

պատրաստութիւնը սկսելէն ինչուան գըլխաւորելը՝ իբրև 40 տարի անցուցեր է. որովհետև Դրիզոր Դերենիկ՝ որոյ առաջարկութեամբ ձեռք զարկաւ պատմագրութեանը, մեռած է յամին 886, իսկ ինքն գրեթէ ինչուան 930ի հանդիպած բաները կը պատմէ։

Թովմայի Արծրունւոյ Պատմութիւնն առաջին անգամ տպագրեցաւ՝ ի Կոստանդնուպոլիս յամին 1852, Աղթամարայ մէջ գրուած օրինակէ մը, որ հիմայ՝ ի Պոլիս է, և ուսկից գաղափարած կ'երեւան ուրիշ տեղ մեզի ծանօթ օրինակք ալ։

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐՔ

1. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՅԵՆՑ. — Իններորդ դարուս մէջ կը յիշատակուի Յովհաննէս անունով բժիշկ մը, որ սրբոյն Դիոնեսիոսի պատմութիւնը գըրաձեռք՝ ի յունականէն փոխադրեալ՝ ի վ[խա]կանն (?) հայերէն Թարգմանեց մեր ՅԻԹ (Քրիստոսի 880) Թուականին։

2. Նոյնպես Բագրեւանդ գաւառին Ս. Ստեփանոսի վանուց ԴԱՒԻԹ վանահայրն, որուն համար այսպէս կը զրուցէ յիշատակարան մը. «Այս՝ ի պատմութենէ Շապհոյ Բագրատունւոյ, որ զոմն Աշոտոյ Ապուհիւպատ պատրկի, յանուն Դաւթի Բագրատունւոյ՝ որդւոյ Աշոտոյ իշխանաց իշխանի. զոր՝ ի ձեռն առեալ և ընկալեալ

յօժարութեամբ հօր Դաւթի՝ առաջնորդի վանից սրբոյն Սահփանոսի՝ ի Բագրեւանդ գաւառի, և յոյժ բերկրեալ՝ յաղագս հեռի գոլոյ ի առաքինէն և լի ճշմարտութեամբ, յաւէլ յինքեանէ զնաւս բանից աստուածայնոց »։

3. ՍՏԵՓԱՆՈՍ աշակերտ Մաշտոց կաթուղիկոսի, որ Մաշտոյ գիրք մը օրինակած է յամին 893, և վերջը իր վարդապետին՝ Մաշտոցի վարքը գրած. թերևս ան ալ պատճառ եղած է այս Մաշտոց վարդապետը կարծելու հեղինակ նոյն գրոց, որ կ՚ընծայուի Ս. Մեսրովպայ–Մաշտոցի։

4. Գուրգէն Արծրունի Անձևացեաց տէրն. իննեերորդ դարուս մէջ Աբգամեհի վկայաբանութիւնը Թարգմանել առաւ ի հայ. « Թարգմանեցաւ վկայաբանութիւն ծառայիս Աստուծոյ յասորի գրոց ի հայ, հրամանաւ աստուածապահ տեառն Գուրգենայ Արծրունւոյ Անձևացեաց տեառն, ՅԻԲ (873) թուականութեանս Հայոց. յօդնականութիւն անձին իւրոյ և ամուսնոյ իւրոյ Հեղինէի աստուածասիրի, և որդւոց իւրոց Տաճատայ և Աստմայ »։

ԴԱՐ Ա

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

Տասներորդ դարուն սկիզբները ծաղկեցաւ Անանիա, որ Նարեկայ վանքին առաջնորդն ըլլալուն համար՝ անոր անունէն կոչուեցաւ։ Թէպէտ և իր գրուածներէն բան մը ձեռնբերնիս հասած չէ, բայց աղգային պատմիչը մեծապէս կը գովէն դասնոնք. մէրթ՝ մեծ փիլիսոփա կոչելով զինքը, մէրթ՝ երևելի վարդապետ. իսկ Կիրակոս՝ այր անուանի և գիտնական, յուսաւորիչ եկեղեցւոյ, մտաւոր և հանճարեղ և աստուածայնոց գրոց մեկնող կ՚անուանէ։ Նոյն պատմիչը՝ նաև տոմարական արհեստից գիտակ կը համարի զԱնանիա, թերևս չփոթելով համանուն Շիրակացւոյն հետ։

Անանիայի Նարեկացւոյ գլխաւոր երկասիրութիւնն եղած է՝ Թոնդրակեցւոց մոլորութեանը դէմ գրուած մը, Անանիա

կաթուղիկոսին հրամանաւը չարագրած, որ գովութեամբ կը յիշատակուի թէ՛ ի Շնորհալւոյն և թէ՛ ի Մագիստրոսէ։ Կիրակոս կ'աւանդէ թէ առաքելական Թղթոց մեկնութիւն մըն ալ չարագրած է Անանիա դիւրիմաց բանիւք և հետեւողութեամբ եփրեմի, Ոսկեբերանի և Կիւրղի և ուրիշ վարդապետաց։ Կ'ըսէ դարձեալ նոյն պատմիչը, թէ աւետարանաց համեմատութիւն և խորհրդական և մատուռ տեսութիւնք չարագրած ըլլայ. և ճառ մը՝ ցուցընելու համար թէ ինչպէս ուղղափառ մտքով կ'երգեցուի սուրբ ատտուած մադթանքը խաչցարիւ։ Շողակաթի վրայ ճառ մը չարագրած է, կ'ըսէ, որ անշուշտ եկեղեցւոյ վրայ խօսած ճառն է՝ մեր ձեռքը հասած, խմատապիճ գրուած մը, բայց անուսմար բառերով և ոճերով լեցուն։

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՅԻ

Տաննեւրդ դարուն մատենագրական պատմութեանը պարծանք է իր հանճարովն և խմատութեամբ՝ մեծն Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսը. որ տղայ հասակէն ուսմանց և գիտութեանց եռեւէ եղաւ, և ետքը վերը յիշուած Անանիա Նա-

բեկացեալն եղբօրը գաւառ հետ տուա-
նանալով՝ երեք որդի ունեցաւ, Յովհան-
նէս, Ահակ և Դրիգոր, որոնց վրայ ետ-
քը պիտի խօսինք։ Ժամանակ անցնելէն
վերջը հրաժարեցաւ յաշխարհէ, ու վանք
մը քաշուեցաւ. և քանի մը տարիէն Ան-
ձևացաց գաւառին եպիսկոպոս ընտրուե-
ցաւ։ Իր եպիսկոպոսութեանը ժամանակ
չարագրեց հետագայ գրուածները։

Ժամագրոց մեկնութիւն. — Հայաստա-
նեայց եկեղեցւոյ հասարակաց աղօթիցը
ընտիր և սրտեռանդն մեկնութիւն մըն է,
որուն յառաջաբանին մէջ այս պատճառը
կու տայ. «Թէ որ իշխանաց և թագաւորաց
առջև խօսելու առաննիս ամենայն զգու-
շութիւն, մտադրութիւն և արթնութիւն
կ'ընենք, որպէս զի չըլլայ թէ անվայել
կերպ կամ՝ խօսք մը տեսնուի վրանիս և
մեր բերնին մէջ, ևս առաւել նոյն զգու-
շութիւնը պիտի բաննցընենք թագաւո-
րին թագաւորաց՝ Աստուծոյ հետ խօսա-
կցելու ժամանակնիս. և այս վախճանաւ
յօրինեցի նոյն սուրբ աղօթից մեկնու-
թիւնը»։ Աւելի ազիտաց համար չարագրե-
ցի, կ'ըսէ, այս երկասիրութիւնը. ուստի
և կ'ազաչէ որ չըլլայ թէ գիտունք արհա-
մարհեն այն գրուածը՝ որ իրենց օգտակար
ըլլալու դիտմամբ գրուած չէ. այլ պար-
զապէս անոնց համար՝ որ կ'ազօթեն ա-
ռանց նոյն աղօթից ոյժը և խօսքերուն զօ-
րութիւնը հասկընալու։

Որչափ պարզ՝ այնչափ ալ ընտիր է այս մեկնութիւնը. համառօտ՝ բայց առանց կարեւորը դուրս թողլու։ Աստուածասէր հոգի և կիրթ միտք մը կը ցուցընէ խոսրով այս երկասիրութեան մէջ. եկեղեցական գրոց և իմաստից ալ ընդարձակ հմտութիւն. անոր համար շատ անգամ եկեղեցւոյ յոյն վարդապետաց խօսքերը մէջ կը բերէ։

Ոյն ոճով ու սրտով գրուած է, և Մեկնութիւն խորհրդոյ սրբոյ պատարագիս, թէպէտ և առանց ունենալու այն հմտութիւնն ու լեզուն՝ զոր Լամբրոնացին բանեցուցած է համանուն երկասիրութեանը մէջ։ Ինչպէս առջի գրուածքին, ասանկ ալ ասոր շարադրութեանը մէջ ուրիշ վախճան ունեցած չէ սուրբ հայրապետս, բայց միայն իր պաշտաման պարտքը անթերի կատարել. « Ոչ եթէ անձինս վառք ստանալու համար էր, կ'ըսէ, որ այս գրուածքիս ձեռք զարկի, այլ որովհետեւ եպիսկոպոսութեան սահման ունիմ, և շատերուն քով ամենամեծ ազիւութիւն տեսայ, անոր համար հարկ սեպեցի այս գրուածքս ընել, իմանալով թէ անկարելի էր միայն խօսքով անոր կարեւոր դարմանը մատուցանել »։

Մեր քովը գտնուած գրչագրաց մէջ յիշատակարան մը կայ՝ խոսրովու որդւոյն Յահակայ ձեռքովը գրուած, որ իր հօրը երկասիրած Պատարագի մեկնութիւնը դաղափարելով կ'ատանդէ այսպէս.

ՀԸՆԴՀԱՆ Աստուածոյ եղև մեհենութիւն այսմ գրոց՝ ի ձեռն խոսրովայ Անձևացեաց եպիսկոպոսի, յոյժ հետևողի պատուիրանացն Աստուածոյ. զոր մեզ և գովել անձամբ է, զի մի՛ գայթակղեսջիք ի նոյն, վասն զոյց նորին հայր իմ ըստ մարմնոյ. որոյ չեմ արժանի կոչիլ որդի և ոչ վարձկան, ըստ գրեցելոյն. այլ՝ ի գրելոցդ՝ լեցին հաստատ խնդրուածք վասն նորա, որք սրտի մտօք ունին զնիցեն. որք և աղօթիւք փոխադարձել պարտին ընդ տուեցելոյս. և հաստարակաց տուողն Աստուած՝ և ձեզ հայցողացդ ձիրեացն զիւրաքանչիւր պարգև: Այլ յոյժ ամաչեցեալ և տարակայ գտանիմ, ես Գրիգոր պարտաւոր պատուիրանաց տուրըն գրոց: Արդ առաջին տուրըն գրոցս այսորիկ գծագրութիւն եղև ձեռամբ Սահակայ՝ որդւոյ տեառն խոսրովու, այս տուրըն գրոցս մեհենոյն ՑՂԹ Թուականութեանս Հայոց:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսին որդին էր տուրըն Գրիգոր, որ 951 Թուականին ծնաւ, ու մանկութեան հասակին Ուշտունեաց գաւառին մէջ եղած Նարեկայ վանքին առաջնորդ Անանիա վարդապետին խնամատուն խնամոցը յանձնեւցաւ: Հոն իւր վարուցը սրբութեամբն ու անարատ քաղաքավարութեամբ՝ մարմնաւոր հրեշտակ մը երևցաւ. իսկ դիտու-

թեամբն ու խնամատարեալքը՝ ժամանակին ամենէն անուանի հանճարներէն մէկն Անանկ որ քսանևվեց տարուան առոյգ հասակին՝ թագաւորներ իրենց տարակուսանացը լուծումը կը խնդրէին իրմէ։ Բայց հանճարն ու սրբութիւնը իրեն դէմ յայտ ժամանակին տգէտ ու ինքնահաւան դլուխները, որոնք ինչուան Անի քաղաքը գնացին՝ կաթուղիկոսին առջևը գինքն ամբաստանելու, իր միաբանակեր եռանդը՝ յանցանք սեպելով։ Կ'աւանդեն թէ կաթուղիկոսն ալ քանի մը վարդապետաց հետ խորհուրդ ընելով, նուիրակներ ղրկեց անոր, ու գինքը դատաստանի կանչեց։ Խնացաւ Գրիգոր անոնց գալառեան դիտումը, ու սիրով ընդունելութիւն ընելով՝ ուրբաթ օր մը զանոնք կերակուրի հրաւիրուց, և խորոված ազաւնի դրաւ առջևնին։ Երբ անոնք մէկ կողմանէ իրենց ծուռ կարծեացը վրայ հաստատուելով, մէկալ կողմանէ կը գայթակղէին վրան, ու օրուանը պահք ըլլալը կ'իմացընէին, Նահրեկացին ներումն խնդրեց անոնցմէ զործած վրիպակին համար, ու խորոված ազաւիներուն դառնալով՝ հրամայեց որ ելլեն երթան. որոնք մէկէնիմէկ ողջունալով՝ թռան։ Անով չարախօսաց բերանը կարկեցաւ, ու սրբոյն արժանաւոր համբաւը ալ աւելի չատցաւ։

Անկէց ետքը ինքգինքը բոլորովին նահանձնական կենաց ու գրաւորական գոր-

բազմանց տուաւ Գրիգոր. ու իր մեծ և անզուգական հանճարը երկինից ու երկրի արժանաւոր նիւթերու նուիրելով՝ իբր 60 տարուան փոխանցաւ առ Աստուած, ու Նարեկայ վանքին մէջ թաղուեցաւ, ուր ինչուան հիմա աւանդութեամբ կը ցուցնեն իւր տապր և նուիրական շիրիմը։

Նարեկացւոյն երկասիրութիւնները. — Նա բեկացւոյն բազմապատիկ երկասիրութեանցը մէջ նշանաւորներէն կրնան սեպուիլ իր ճառերը. որոնց մէջ առաջին է, Ապարանից խաչին պատմութիւնը. — Վասիլ ու Կոստանդ Հարաւատ եղբարց կայսերաց ժամանակ՝ Մոկաց աշխարհէն ազնուական անձ մը՝ գնաց նոյն ինքնակալաց գուռը գինուորելու. այս մարդս եղբօրորդի ըլլալով Դաւթի՝ Մոկաց հաշտկաւար և աթանչելապօթ եպիսկոպոսին, անոր տապանին հողէն կաոր մը քովը պահած էր իբրև ի մխիթարութիւն, և անկէց այլ և այլ հրաշքներ կ'ըլլային։ Բայց ինքնակալքն այս բանս իմանալով, այլ աւելի պատուելոյին գինքը. ու եաքէն իմանալով թէ անոր Աստիանոս քեռորդին՝ նոյն աթանչելապօթ Դաւթին՝ աթոռոյն վրայ նստած է, ուզեցին անոր գերեզմանին ընծաներ դրկել։ Բայց Մոկաց ազնուականը հրաման ուզեց ինքնակալներէն, որ դրկէ իմանայ թէ իր ազգայնոցը՝ աւելի որ ընծայն հաճոյական կ'անցնի. և լսեց թէ շատ փափաքելի է անոնց՝ կա-

նաց փայտին մէկ երեսին մասն ունենալը։ Թագաւորը պանչացան անոր բարեպաշտութեանը վրայ. ու կենաց փայտին վրայ աւելցուցին՝ Քրիստոսի տեառն մեր ոտնակոխ ժամանակ սփռած գլխակին մաս մը, նոյնպէս ի փշեղէն պսակէն, ի սպեղէն, բևեռներէն և ի խոտաձաղոցն։ Այս ամէն պարգևները՝ նոյն ազնուականն անձամբ Մոկաց գաւառը տանելով՝ յանձնեց իր Յակոբանոս քեռորդւոյն. ու մեծահանդէս փառօք՝ նախ Գաւքի հանգստարանին քով ամփոփելով, ետքն սրբոյն Յովհաննու կարապետին տաճարին մէջ դրին. ու վերջէն ալ՝ աւագ ուրբաթի օր մը՝ սուրբ Աստուածամօր եկեղեցին փոխադրեցին։ Այն վերջին ու հանդիսական փոխադրութեանը ներկայ գտնուեցան՝ երեք թագաւորք՝ արծրունի Հարաւտաք՝ Աննեքերիմ, Գուրգեն և Աշոտ։

Նոյն հանդիսին ստորագրութիւնն ըստ Նարեկացի այն գրուածքին մէջ՝ որ սովորաբար Պատանիից խայի պատմութիւն կը կոչուի, և ըստ ձեռագրաց «Յիշատակագրութիւն պատմառնութեան ամենազօր նշանի աստուածեան խաչին որ . . . ի ստորին կողմանց կայից աշխարհի տղգացն Յունաց՝ բերեալ հանգուցաւ ի սահմանս վայրից գաւառին Մոկաց, ի չինուած բնակութեան ուխտին սրբութեան՝ որ կոչի Պարանք»։ Այս պատմութեան շարայա-

բութիւն յօրինած է նաև սուրբ Թաչին վրայ հերքող մը, որ լի է ընտիր խմաստիւք և գեղեցիկ խօսքերով. բայց մինչ նարեկեան հանճարոյ արժանաւոր գեղեցկութեամբ մը, որ այլոց համար թերևս այնչափ յարմար կամ գովելի չըլլայ ի նմա նողութիւն։

Թաչին գովեստին կամ ներբողին հետ մէկտեղ շարադրած է նաև սուրբ Ստեփաննոս Տարօնի հռչակաւոր ներբողը՝ որ սովորաբար ճառին սկզբնաւորութեամբը Գտմարք խմբից կը կոչուի։ Ինչպէս առջի երկու ճառերը, այս երրորդս ալ նոյն Ստեփաննոս եպիսկոպոսին խնդրանօքը յօրինեցաւ։ Եւ ասոնց ամենուն գրութեան ժամանակը՝ յառաջ է քան զգրութիւն Ագաթամատոյց գրքին, այսինքն նէ՛ւ և ՆԹԱ թուականութեանց միջոց։

Այս ճառերուն գրութենէն ետքը՝ ընծայական մ՚ալ շարադրած է Նարեկացին՝ առ խնդրող բանիցն Ստեփանոս եպիսկոպոս, յորում այս խօսքերը կը կարդանք. «Ագռանացուցի սմին անջինջ յիշատակ՝ զանուն տեառնչալի ձերումդ կոչման, տէր Ստեփանոս, լերինդ Մոկաց հզօր դիտապետ. որպէս զի մնասցին յաբակայ ի սոյն համառօտագիծ մատենի՝ յաւուրս անթիւս և յամս հազարաւորս իմով սակաւամատենեայ խմաստիւ։ Ես գրիզոր՝ յետին վարժապետաց և կրտսեր բանասիրաց, որդի դասեր եղբօր՝ հօր Անա-

Նիայի հոգեզարդ և մտավարժ վիլիսո-
փայի, և ըստ վարուց մաքրութեան կրօ-
նից զովելոյ և հռչակելոյ. և ընծայեցի
քումդ եկեղեցեաց՝ զայս նուէր բարեաց
բանից ցանկալեաց։ . . . Յիշատակեացես...
զիս և զեղբայրն իմ՝ զանդրանիկ զՅով-
հաննէս ցանկալի անուն՝ի միում կարգի,
որ զիտականն է և հանճարեղ խմաստա-
սէր քան զիս առաւել՝ի յամենայնի»։

Ա.յս յիշատակարանին մէջ՝ Նարեկա-
ցին կերպով մը ազատութիւն կու տայ իւ-
րաքանչիւր վանականաց՝ որ իր պատմու-
թեանը և ճառերուն մէջ՝ պակաս երևցած
մասերն ու խօսքերը լրացընէն. և այս
բանս համարձակութիւն տուած է քանի
մը յանդուգն կամ անզգոյշ գաղափարո-
ղաց՝ անանկ բաներ ալ մէջը խառնել՝ որ
կրնան անհատարմութեան կասկած տալ,
այնպիսի դէպքեր ու խօսք յիշատակելով
զորս Գրիգոր չէր կրնար գրել, իր ժամա-
նակէն եւթը հանդիսած ըլլալնուն հա-
մար։

Ձառ՝ի գովեստ Աստուածոյ. — Թէ առա-
քելոց և թէ եօթանասուն աշակերտաց
վրայ յօրինած ներբողական ճառը՝ Աղօ-
թամատոյց գրքին չարագրութենէն առաջ
յօրինած է Նարեկացին։ Ա.յս կարծեաց
առուգութիւնը յայտնապէս կ'երևնայ նոյն
աղօթից գրոց այս խօսքէն. «Զորոց զգո-
վեսան արժանաւորութեան՝ ըստ խմում
կարի յայլում բանի պաշտեցի» (ՀՒ. 2։)

Գովեստ՝ ի սուրբն Յակոբ Մծբնայ հայրապետ. — Այս ճառին խմաստներն ու զուրցուածքի կերպը կը հաւատարմացընեն թէ Նարեկացւոյն երկասիրութիւնն ըլլայ. բայց թէ ինչ պատճառաւ չարագրած է այս ճառս, ոչ ինքը և ոչ ուրիշներն յայտնի բան մը աւանդած են։ Ոմանք կը համարին թէ սուրբն Գրիգոր Աւաքելոց վրայ գովեստ մը յօրինելէն ետքը՝ ուզած ըլլայ նաև հայրապետաց վրայ նկրտոզ մը շարագրել, անոնց խմբէն նիւթ առնելով զսուրբ հայրապետն Մծբնայ։ Ոմանք ալ կ'ըսեն թէ որովհետև Ոշտունեաց գաւառին մէջ կը բնակէր Նարեկացին, ուստի և ուզած է գրաւառել այն մեծ հայրապետը՝ որ նախ անիծեց այն երկիրներն ու ետքը օրհնեց։

Բայց այս ճառին գրութեան բուն դիտաւորը պատճառը՝ սրբոյն Յակոբայ պատմութեանը մէջ փնտռելու է։ Որովհետև Պարուգէ ճգնաւորին աշակերտներէն մէկը՝ Մաղաքիա՝ կ'ուանդէ, թէ՝ ի Հայոց ոմանք սրբոյն Յակոբայ նշխարաց մէկ մասը խնդրելով՝ տարին Աղձենեաց գաւառին մօտ տեղ մը գրին։ Ուրիշ հին պատմագիր մ'ալ կ'ըսէ, թէ Հայերը՝ Մծբնացւոյն մահին կոճը առնելով՝ Աղձենեաց գաւառը հասան, երկաթահանք կոչուած բլուրը. և երբ անկէց լեռնէն վար դէպ՝ի Ոշտունեաց երկիրը կ'իջնային այն պատուական նշխարքը, անշարժ մնացին. և տեսիլքով

հրաման ընդունեցան որ հոն հանգուցա-
նեն. ուր փառաւոր եկեղեցի չինեցին՝ և
տեղը յիշով Մոգս ըսուեցաւ: Ժամանակ
անցնելէն ետքը՝ այն տեղը գնաց Աբծրու-
նեաց ցեղէն Հայոց թագաւոր մը, և հոն
փառաւոր եկեղեցի՝ և քահանայից և կրօ-
նաւորաց բնակութեան տեղ և վանք չի-
նեց: Վարդան պատմիչն ալ կ'ըսէ թէ Նա-
բեկայ վանքին մէջ կը պահուէր սրբոյն
Յակոբայ ճկոյթ մատը, և Ընճաքիսարայ
վրայ վանք մը կար նոյն սրբոյն անուամբը:

Այս պատմութիւններէն կրնանք գու-
շակել ճառիս դրութեան պատճառը, և
թէ Նարեկացին ուզած ըլլայ պատուել ա-
նոր սրբազան յիշատակը այն տեղւոյն մէջ՝ ուր գեռ կենդանի էր սրբոյն անունը
և մեծարելի: Հաւանական կ'երեւնայ կար-
ծելը թէ Նարեկացւոյն ժամանակ եղած
ըլլայ այն արծրունի թագաւորը՝ որ յիշա-
տակուած լեռը գնաց, և փառաւոր եկե-
ղեցի և վանք չինեց. և անոր նուաճա-
տեաց առքիւը՝ խօսքեր է սուրբն Գրի-
գոր այս ճառս: Թերևս այս կարծեաց ըս-
տուգութիւնը կ'ակնարկեն նոյն ճառին հե-
տևեալ խօսքերը. «Հիմնեցուցեալ զայս
քար գովեստի ի չինուած յարկի քումդ
հանգստի՝ դաւանարանի այս բարի հո-
վուի»:

Երգարգոյի մեկնութիւն. — Նարեկացւոյն
երկասիրութեանցը մէջ ժամանակաւ ա-
ռաջին կը համարուի այս մեկնութեան գիր-

քը՝ ըստ հաւանագոյն կարծեաց, վասն դի քահանայեց տարուան հասակին՝ երբ նոր ընդունած էր քահանայական աստիճանը, Գուրգէն արծրունի՝ Անձևացեաց թագաւորին խնդրանքը չարագրած է յետ չատ հրաժարելու. վասն դի, կ'ըսէր, մեծն Գրիգոր Նիւսացին իսկ չէր համարձակեր այսպիսի խորհուրդ գրոց մեկնութեան ձեռք զարնել, որչափ ունայն եմ՝ որ ոչ անոր գիտութիւնն ունիմ և ոչ ալ աստուածազգեցիկ միտքը։ Բայց եթէ նոյն սրբոյն Գրիգորի մեկնութեան չաւղացը հետևելով՝ չարագրեց պարզ, համառօտ և ընտիր մեկնաբանութիւն մը, ինչպէս որ առաջարկողը ուզեր էր։ Ապա՝ իր համառօտախօսութեանը մէջ ալ անանկ ընտիր ոճ մ'ունի՝ որ նոյն իսկ եւրոպացի բանասէրք՝ որոնք կամ ազգային բնիկ լեզուով և կամ թարգմանութիւնը կարդացած են, սքանչացեր են վրան. և դաղղիացի աստուածաբան մը՝ Գուլիէլմոս Վիֆռուա կ'ըսէ թէ երգերգոց գրոց այսպիսի ընտիր մեկնութիւն մը ուրիշ ազգի մը մէջ տեսնուած չէ։ Ասոյն պարզութեանը գլխաւոր պատճառն այն եղած է՝ որ Նարեկացին ուզած է գիւրիմաց ընել նոյն սուրբ գրքին իմաստները կարգացող հասարակ անձանց և կանանց անգամ, որոնք եկեղեցւոյ մէջ այս գիրքը լսելով գայթակղած էին, և կամ ուրիշ մարքեր ու իմաստներ կու տային այն խօսքերուն՝ որոնք կըր-

նան բոլորովին հոգևորապէս ալ մեկնուիլ։

Աղօթք կամ Նարեկ. — Հոչակաւոր ու մեր ազգին մէջ ընդհանրապէս ծանօթ և Նարեկացւոյն սրտին և գրչին արժանաւոր երկասիրութիւն մը։ Պղտիկ գիրքիկը ալ կը կոչուի այս գերազանց երկասիրութիւնը. և իրեն տրուած մեծութեամբն հանդերձ՝ անանկ զարմանալի գեղեցկութիւն և ոճոյ քաղցրութիւն ունի՝ որ ոչ միայն ազգային, այլ նաև շատ օտար բանասէրը միաձայն վկայած են թէ այսպիսի գրուած մը ուրիշ ազգաց մէջ գեռ երևցած չէ. այնչափ գեղեցիկ ու զմայլեցուցիչ է բանաստեղծական հիւսուածին ոճը, իմաստները այնչափ վսեմ և անակնկալ, ու պերճախօսութիւնը առատ։

Իննսունևհինգ գլուխ բաժնուած են այս աղօթքները, զորս ինքն ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ՝ կը կոչէ. ասոնցմէ գուրս է այն յիշատակարանը՝ որ գրքին վերջը գրուած է, և յորում իր ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ հարազատ եղբայրը զՁուխանէ՛ն՝ մէջ կը բերէ իբրև դործակից ի յօրինուած աղօթագրոցս։ Բայց որովհետև թէ ընդհանուր ազգին ասանդութիւնը և թէ նոյն իսկ սրբոյն խօսքերը՝ յայտնապէս կը ցուցընեն զինքը միայն հեղինակ, ասոր համար հաւանական կ'երևնայ կարծելը թէ այս օգնականութիւնը՝ պարզ խորհրդակցութեանը՝ կամ սուրբ գրոց քանի

մը անդուանքը քննելուն համար զուրցուած ըլլայ : « Ա.յս պզտիկ մատենին մէջ, կ'ըսէ նոր բանասէրնիրէն մէկը, բանական ա-րուեստն ընդ աստուածայնոյն կը միաւորէ սուրբ Նարեկացին. տեսական աստուածա-բանութիւնն խորհրդականին հետ, սուրբ գրոց պատմողական առածը՝ մեկնողակա-նին հետ, աղօթից հոգին՝ բանաստեղծա-կանին հետ. սիրոյ հետ վախը, զղջման հետ յոյսը, Աստուծոյ բարութիւնը՝ մարդ-կան չարութեան հետ. համառօտ ըսենք՝ զԱստուած ընդ մարդոյ » :

Ա.յսպիսի ընտիր երկասիրութիւն մը՝ պարմանք չէ որ իր արժանաւոր յարգն ալ գտած ըլլայ մեր ազգէն, գրեթէ ամենայն հոգեսիրաց ձեռքը ընտիր աղօթից գիրք մը ըլլալով, անոր համար ալ չատ անգամ ապագրուած է այլ և այլ տեղուանք, և որոնց մէջ նախընծայ է 'ի Մարսիլիա տը-պագրուածը 'ի 1673. իսկ 'ի Կոստանդնու-պոլիս տպագրուածներուն մէջ ընտրելա-գոյն կրնայ սեպուիլ 1790ին եղածը, զոր Մուրատեան Կաստար ամիրային՝ Հայա-ստանի վանքերէն ընտիր ձրչագիրներ ժողվելով՝ անոնց համեմատութեամբ տը-պագրել տուած է :

Նարեկացւոյն խրթին ոճը և մթին դուր-ցուածքի կերպը՝ յորդորեց զՅակոբ Նա-հեան պատրաստքը անոր լուծումը և մեկ-նութիւնը չարագրել : Իր այս աշխատասի-րութեանը մէջ գաղափար ունեցայ՝ հին

առեններըը չարագրուած լուծմանց գիրք մը, վրիպակաւ Սարգսի Շնորհալւոյ կամ Լամբրոնացւոյն ընծայուած. որ ընդհակառակն Ի. դարու մէջ երեւցած աննշան մարդու մը երկասիրութիւն էր: Լամբրոնացին՝ որովհետեւ սուրբ պատարագի խորհրդոյն մէջ գործածուած երկու նարեկեան աղօթից մեկնութիւնն ըրած էր, կարծուեցաւ թէ բոլոր Նարեկ գրոց մեկնութիւնը չարագրած ըլլայ:

Ասկէց զատ կայ ուրիշ լուծմանց գիրք մըն ալ՝ առնլի համառօտ ոճով, և վերոյիշեալ ընդարձակէն քաղուած. յարգն ալ՝ անոր ունեցածին նման:

Այս լուծմանց անբաւականութիւնը տեսնելով նոր ժամանակաց բանասէրներէն մէկը, Հ. Գաբրիէլ Վ. Աւետիքեան. ընդարձակ մեկնութիւն մը չարագրեց թէ՛ աղօթամատոյց գրոց և թէ՛ ճառերուն, ընտիր տեսութիւններով և հմուտ ստուգաբանութեամբ, որ ազդին մէջ իր արժանաւոր ընդունելութիւնը գտաւ՝ այլ և այլ անգամ տպագրուելով:

Նարեկացւոյն մանր երկասիրութիւնները. — Բաց ի վերոյիշեալ գրքերէն՝ այլ և այլ մանր երկասիրութիւններ ալ ունի Նարեկացին, գանձեր, մեղեդիք և տաղեր. որոնց մէջ յայտնի կ՚երեւնայ իր բանաստեղծական հոգին, հանճարն ու աչխոյժը: Գանձերը իրեք են թուով, այսինքն՝ Գանթատ Հոգւոյն սրբոյ, ի սուրբ խաչն և յեր-

կեղեցի։ Իսկ տաղերն ու մեղեդիքը՝ քահանէն աւելի մեր ձեռքը հասած տպագրածքն իր Մատենագրութեանցը մէջ։ — Թուղթ մը կճաւայ վանից առաջնորդին, զգուշացընելով յաղանդոյն Թոնդրակեցւոց։

Նարեկացւոյն անհաւասար գրուածները. — Այս գրուածներէն դուրս կը յիշուի յանուն Նարեկացւոյն՝ Ցովբայ գրոցը մէջ եղած Ով է դա խօսքին մեկնութիւնը։ Ասոր հարազատութիւնը իրաւամբ տարակուսական է, ոչ միայն բոլորովին ոճոյ տարբերութեանը համար, այլ նաև անով որ պատմչաց մէջ մէկը չկայ որ այս բանս յիշատակէ. ուստի և հաւանական կ'երևնայ կարծելը թէ հարի գարերուն մէջ երևցած Գրիգոր անունով մէկու մը գործ ըլլայ։ Ասկէ զատ՝ գտնուեցաւ նաև ուրիշ գրուած մը այսպիսի մակագրութեամբ «Հօրն և երջանիկ քահանայապետին Գրիգորի Նարեկացւոյ խրատք վասն աղօթից և վասն արտասուաց, յուսոյ և սիրոյ»։ Ասիկայ մասամբ թէպէտ և բոլորովին արհամարհելի երկասիրութիւն մը չէ, բայց այլք աւելի հմուտ եմք եփրեմի սուրբ հօրն կ'ընծայեն. և այս անուամբ տպագրուած է նոյն ճառը՝ Կոստանդնուպոլիս։

Նաև ան պատրիարքին տպագրութեանը մէջ կայ նաև հոգևորական խրատ մը որ Հրաճեաց հաւատոյ կը կոչուի, և ուսկից իրմէն առաջ ալ Ներսէս գերմանացին

վկայութիւն կը բերէ իր Աբամեան Գանձարանին մէջ, և Նարեկացւոյ երկասիրութիւն կը համարի։ Մեր տեսած գրչագրաց մէջ այս հրահանգին վերնագիրն է. «Սրբոյ վարդապետի յոբնեբանեան մեծ նաւարի Գրիգորի՝ համառօտիւք բանք խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ նորին հարազատի վարդանայ դիւանապետի»։ Այս վերնագրին մէջ որովհետև Նարեկացւոյն անունը չիգտնուիր, հաւանական կ'երևնայ թէ ուրիշ համանուն Գրիգորի մը երկասիրութիւն ըլլայ, որ հայերէն լեզուի կարգաւորեալ հմտութիւն, և աստուածաբանական իմաստից ալ ներհուն և քաջալարժ տեղեկութիւն ունեցեր է։ Ամենք ալ կարծեցին թէ Գրիգորի Սկևռացւոյ կամ Լամբրոնացւոյ աշխատասիրածն ըլլայ։ Նարեկացւոյն չըլլալուն գլխաւոր ապացոյցն ալ այն կ'երևնայ՝ որ Վարդան անուամբ՝ եղբայր չունէր Նարեկացին, այլ ըստ աւանդելոյ պատմութեան՝ իրեք եղբարք էին աստնք, Ահակ, Յովհաննէս և Գրիգոր։

Ա՛յս գարուս մէջ Հայոց հայրապետական ա-Թոռոյն վրայ նստաւ Խաչիկ Խոնդզիոյ, որ Շի-րակ գաւառին մէջ այլ եւ այլ հոյակապ եւ գեղեց-կակերտ տաճարներ շինելէն եաքը՝ փառաւոր գրատուն մըն ալ կանգնեց, ուր հին հատաքեց այլ եւ այլ արտաքին եւ վարդապետական գրքերու բազմութիւն մը։

Կը յիշատակուի գործեալ այս գարուս մէջ Դաւիթ անուամբ վանահայր մը, որուն երկասի-րութիւն կը սեպուի Պահոց վրայ գրուած մը այս վերնագրով. « Հարցմունք երկուց փիլիսոփայից ընդ միմեանս »։

Ա՛յս առիթներս կը յիշատակուին քանի մը վարդապետք, ինչպէս Պետրոս՝ ՌՀնիի գրոց կո-չուած. Մովսէս Տարոնացի, Սարգիս, Սիմէոն, որ Թեղեա Մոկաց եպիսկոպոսն է, եւ որուն կ'ըն-ծայուի Սբ. Նշանի արբոյ շարականը. Դաւիթ Մա-նուէլ, Դաւիթ Եպիսկոպոս Մոկաց, եւ այլն։ Բայց ա-ռանց ամենուն ալ մատենագրական երկասիրու-թեանցը վրայ մանաւանդ յիշատակութիւն չկայ։

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂՆԻԿ

Յովհաննու Ասողնիկ. — Մեր ազգին գըլխաւոր պատմագիրներէն մէկը սեպուած է Ստեփանոս, որ՝ ի Տարօն ծնած ըլլալուն համար՝ Տարօնեցի ալ կը կոչուի, և ուրիշներէն ալ Ասողիկ կամ Ասողնիկ, երաժըշտական արուեստի և երգոց մէջ ունեցած հմտութեանը պատճառաւ։ Կ'երևնայ տասներորդ դարուն վերջերը և մեռատանը բորգին սկիզբը երևցած Ասողնիկ. որովհետև իր պատմութիւնը կը հասցընէ մինչև ի 1004 թուականն Քրիստոսի. Ա. Գագիկ թագաւորին հրամանաւը շարադրած։ Մեր ուրիշ պատմչաց պէս՝ յարարչագործութենէ կամ յԱդամայ կը սկսի իր պատմութիւնը, հետևելով մանաւանդ Եւսեբիոսի՝ հին աւանդները մէջ բերելուն ժամանակ, և Մովսէսի Խորենացւոյ՝ ազգային պատմութեանց մէջ, զոր և շատ տեղ գրեթէ գաղափարելով կ'ընդօրինակէ։ Իրեք գիրը բաժնուած է իր այս գործը. և երրորդ մասը կրնայ սեպուիլ բուն Ստեփանոսի երկասիրութիւն. որովհետև ընդհանրապէս իւր ժամանակին անցքերը կ'աւանդէ, զորս չէր կրնար ուրիշ պատմիչներէ քաղել. և այս պատճառաւ երրորդ գրոց խօսքերն է Ստեփանոսի Տա-

յօնկեցոյ պատմութիւն ժամանակաց, ինքնա-
խօսութիւն. մինչդեռ առջի երկու գրքերը
Պատմութիւն ժամանակաց կը մակագրին։

Պատմութիւնն և իր նիւթը. — Ինչպէս
հիմայ ալ յիշեցինք՝ մեր ուրիշ շատ պատ-
մչաց պէս, բայց անոնցմէ շատէն պա-
կաս կարգաբանութեամբ և հմտութեամբ
արարչագործութենէն կը սկսի իր պատմու-
թիւնը Աստղնիկ, և առաջին գլխոյն մէջ խո-
րագրեալ ծագմանը, անոնց ցեղէն ելած
թագաւորութեանց և յաջորդութեան և
ժամանակագրութեան վրայ կը խօսի։ Ան-
կէ ետքը Եգիպտոսի վրայ Պտղոմեանց ցե-
ղէն նստող թագաւորաց վրայ, ու վերջը
նորէն Հրէից գառնալով, կրկին հին ժա-
մանակաց վրայ կը սկսի խօսիլ, Ասորւոց՝
Մարաց ու Պարսից թագաւորութեանցը
վրայ. ետքէն Պարթեւաց ծագմանը վրայ
ճառելով, կը հասցընէ խօսքը մեր Արշա-
կունի թագաւորաց վրայ։ Ա.յս մասին մէջ
ինչպէս ըսինք, գլխաւորաբար առաջնորդ
բռնած է իրեն զՄովսէս Խորենացի, թէ-
պէտ ինքը՝ ի պատմագրելն ինդիրը հե-
տեւող կը ցուցընէ Ագաթանգղոսի, Խո-
րենացւոյ, Եղիշէի, Փարպեցւոյն, Բիւ-
զանդայ, Աբեղոսի, Ղեւոնդեայ երիցու,
Եապհոյ Բագրատունւոյ և Յովհաննու
Հայոց կաթուղիկոսի։ Վաղարշակայ թա-
գաւորութեանը օրերէն մինչև ի Տրդա-
տայ մանկութիւնը հասցընելով պատմու-
թիւնը, առաջին գիրքը կը լմընցընէ. իսկ

երկրորդ գիրքը Տրդատէն կը սկսի, և կը հասցընէ մինչև ի Յովհան Իմաստասէր, և անկէց ալ մինչև ի Թագաւորութիւն Աշոտոյ Բագրատունւոյ։ Մասնաւոր գրքով մը կը խօսի նաև Սասանեան Պարսից Թագաւորաց վրայ, անոնց Արտաշիր Թագաւորէն սկսելով, ու կը հասցընէ մինչև ի Յազկերտ որդի Կաւատայ, Թոռն Խոսրովու։ Եւ որովհետև Խոսրովու մահուընէն քիչ առաջ՝ երևցեր էր Մահմէտ, և իրմով Հագարացւոց իշխանութիւնն ու ցեղապետութիւնը, ուստի այս երկրորդ գրոց չորրորդ գլուխը անոնց վրայ կը ճառէ, մասնաւոր խորագրով. Ամիր-ապ-մոմմինիք Ցաձկայ, և որ ինչ յառաջս նոցա գործեցան. և Մահմետէն սկսելով՝ կը հասցընէ մինչև ի Մրուան և յԱբդուլա, և անով կը լմընցընէ երկրորդ գիրքը։

Աշոտոյ Թագաւորութեամբը կը սկսի Ասողնիկ Գ. գիրքը, որ ինչպէս առաջ ալ ըսինք, իր պատմութեանը գլխաւորագոյն և էական մասն է. վասն զի ընդհանրապէս իր ժամանակին և կամ իրեն մերձաւոր դէպքերու վրայ կը խօսի՝ բաւական հմտութեամբ և ոճով. որով ազգային պատմութեան վրայ՝ բաւական գոհացուցիչ լոյս մը կը ծագէ, նորանոր դէպքեր աւանդելով, և կամ այլոց պատմածը աւելի կերպով լուսաւորելով։ Այս պատճառաւ պիտի ըլլայ անշուշտ՝ որ իրմէ հաքը եկող պատմչաց գովեստին արժանի եղած է. ո-

բանց մէջ Լաստիվերացին՝ յիշելով Գա-
դիկ Ա. Շահնշահի ատեն ծագած վարդա-
պետները, զլխաւոր կը սեպէ անոնց մէջ
այս «Ստեփանոս տարօնացին՝ որ զաշխար-
հապատում դիրսն շարագրեաց, սքանչե-
լի յօրինուածովք, սկսեալ ի մարդն ա-
ռաջին. և գայ բովանդակէ զպատմութիւն
իւր ի վախճան Գագկայ, ուստի որոյ պատ-
մութիւնս է»։

Ոմանք կ'ուզեն թէ Ասողնիկ՝ երկ-
միա մարգարէին գրոցը մեկնութիւն մըն
ալ շարադրած ըլլայ. և իրենց կարծեացը
երաշխաւոր կը սեպեն Մագիստրոսի հե-
տեւեալ խօսքերը, զոր իր Թղթերէն մէ-
կուն մէջ գրած է առ Գէորգ վարդապետ.
«Ուստի որոյ բանս հայցէ ի քէն զմեկնու-
թիւն երեմիայի մարգարէի, զոր գրեալն
է Ասողնկայ՝ երջանիկ ծայրագոյն ծերոյ՝
չնորհել մեզ»։ Այս երկասիրութիւնը ին-
չուան հիմայ երեւցած չէ. և ուրիշ համա-
նուն մեկնութիւն մը կայ՝ զոր գրչագիրը
Մխիթարայ Գետակացւոյ կամ Գոշի կ'ըն-
ծայեն, և որ ատուգիւ հետգինակ է երե-
միայ մարգարէին մեկնութեան։

Ա յս գարուս մէջ կը յիշուին, Մ ու շ ե ղ Բ ա գ ր ա տ ո ւ ն ի, որ կարուց Թագաւոր կ՚երևնայ, ու Աշոտոյ Երկաթիեղբայրը, որով տասներորդ գարուն առ ջի կիսուն մէջ կ՚երևնայ: Անանուն վարդապետ մը՝ իւր ինդիրքովը Արիստակեայ, Եւտիքեայ, Նեստորականայ ու Քաղկեդոնականայ դէմ գրուած մը շարադրած է, այսպիսի սկզբնաւորութեամբ. « Ո՛վ քաջ բանասիրաց, տեր իմ Մուշեղ Բագրատունի, պերճաբանիդ և հանճարեղ գունակայեալդ առ Ծայրագոյն խորոց խոհեմագոյն, քան զործնականին և աւետականին գրոց սաորոգութեանց »:

Նո՛ր Թուականին գրուած մատեան մը մէջ ալ կը յիշատակուի Առամ անձնացի, տասներորդ գարուն առջի քառորդին մէջ ապրած, որուն հրամանաւը՝ Արքաեպիս Մաղաքեայ գէրն « բազայայտեաց զսուրբ պատարիսն »:

Դարձեալ Ցաճաք անունով կրօնաւոր վարդապետ մը, որ իբրեն աստէնանակից Թովմայի մը հարցմանցը պատասխան կուտայ: Ա յս հարցմանցը վերջը՝ հետևեալ խօսքերը կը կարդանք. « Կիւրեղ Երուսաղէմի վկայէ և Յովհան Բիւզանդացի և Եղիշա կողբացի, որով և զանգիագ ոչ բացայայտեցաք »: Թերևս ղեղիկ և ղեղիչ շփոթելով:

ԴԱՐ ԺԱ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈԶԵՌՆ

Մեռաւ ան երջորդ դարուն սկիզբները, Խաչիկ Բ. կաթուղիկոսին օրերը ծագկեցաւ Յովհաննէս վարդապետ Կոզեռն Տարօնացի, զոր գովութեամբ կը յիշատակէ Մ. Ուռհայեցին, և կ'ըսէ. «տակաւ բանիւ և մեծ դիտութեամբ բացայայտեր զգիտութիւն գրոց սրբոց». և կը պատմէ թէ Հայոց ՆԶԵ թուականին՝ արեգական մեծ և սաստիկ խաւարում մը պատահեցաւ. Պետրոս կաթուղիկոս և Յովհաննէս թագաւոր՝ զԳրիգոր Մագիստրոս և ուրիշ ազնուական և դիտուն անձինք և քահանաներ ղրկեցին առ Կոզեռն վարդապետ, որպէս զի այն նշանին մեկնութիւնը տայ, և իրենց վարանեալ միտքը հանդարտեցընէ։ Երբ զանոնք տեսաւ Յովհաննէս վարդապետ, հառաչեց ու սկսաւ բարձրաձայն

լալ. երբ անոնք ալ աւելի չփոթեցան, մեկնեց թէ ինչպէս Փրիսկոսի խաչելութեան հազարերորդ թուականը լեցուելով՝ սատանայ պիտի արձակուի ի չքնայից, և բոլոր աշխարհս տակնուվրայ պիտի ընէ. թագաւորք՝ թագաւորաց, և ազգք ազգայ վրայ պիտի ելլեն, և բազմապատիկ թշուառութիւնք պիտի հասնին Հայաստանի վրայ: Նոյն Ուռհայեցի պատմագիրը, որ այս դէպքս կ'աւանդէ, Հայաստանի վրայ եկած այլ և այլ ազէտքն աշքով տեսնելէն և զանոնք ողբալէն ետքը, կը յաւելու. «Զոր խօսեցաւ ի մերում ժամանակիս սուրբ վարդապետն Հայոց Յովհաննէս՝ որ ասի Կողմն. սա խօսեցաւ բազում բանք, որպէս զմարգարէութիւն ի վերայ այսմ ժամանակիս, և խափանելոյ աստուածպաշտութեան յամենայն մըտաց, և թուլանալոյ հաւատոց. և զայս ասաց ի նոյն գիրքս յառաջ ժամանակաց»:

Յատկութիւնը կը գրուի Կողմեան վարդապետին համար, թէ «գՀաւատոց գիրս գրեաց». բայց այսպիսի գրուած մը դեռ ձեռքերնիս հասած չէ: Ուրիշ գրքի մ'ալ, այսինքն տումարական արուեստի և թուականաց և չրջանաց վրայ գրածէն՝ ի խնդրոյ Անանիայ եպիսկոպոսի Աշխկերտցւոյ, միայն հատուած մը հասած է մեզի,

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Պահլաւունեաց տոհմէն վատակ նահա-
տակին որդին էր Գրիգոր Մագիստրոս,
որ իւր հօրը մահուընէն ետքը ուրիշ նախ-
արարաց հետ մխաբանեցաւ, ու Գագիկ
Բ Բագրատունին թագաւորեցուց Հայոց
վրայ։ Բայց ետքը վատ Սարգսի քսու-
թեամբը Գրիգորի հետ թշնամացաւ թա-
գաւորը. որով ստիպուեցաւ Մագիստրոս
Աբարաւանի աշխարհը թողլով՝ Տարօնոյ
գաւառը առանձնանալ. և հոն սկսաւ վան-
քեր շինել, և սրբոյ Կարապետին ժամա-
տունը։ Բայց նորէն հալածուելով ի Գագ-
կայ, այն շինութիւններն իւր Հրահատ
գործակալին յանձնեց, ու ինքը գնաց ի
Բիւզանդիոն։ Կայսերական քաղաքին մէջ
իւր արժանաւոր պատիւն ու մեծարանքը
գտաւ. ու բայ ի Յունաց գլխաւոր պաշ-
տօնակալներէն՝ ծանօթացաւ նաև այլազ-
գի Մանուէլ և Աբրահիմ իշխանաւորաց
հետ։

Կոստանդին և Մոնոմախոս կայսերաց
առջևն ալ իւր հաւատարմութեամբը նշա-
նաւոր երևնալով, և անոնց սահմաննե-
րուն մէջ քաղութիւններ գործելով Մա-
գիստրոս և դուքս կոչուեցաւ։ Այս պա-
տիւներն ու ընդունելութիւնները՝ ալ ա-

տիւներն ու ընդունելութիւնները՝ ալ ա-
ւելի հաստատեցին Գագիկ թագաւորը իր
կարծեացը մէջ, և սկսաւ իրեն՝ ի մտնիչ
նայիլ անոր վրայ, և ինչուան յանդիմա-
նութեան թուղթ մըն ալ գրեց առ Գրի-
գոր։ Բայց Մագիստրոս իր ճարտար և
իմաստուն գրիչը չարժեց ինքզինքը պաշտ-
պանելու համար. որով թագաւորը առանց
բոլորովին իր կարծիքը անոր վրայ փո-
խելու՝ առջի առելութենէն ինջաւ։

Երբոր Յոյնք մտանութեամբ Անի քա-
ղաքը յափշտակեցին, Մագիստրոս կոս-
տանդնուպոլիս գնաց, ուր էր այն ատենը
Գագիկ թագաւորը, որպէս զի իրեն օգնա-
կան ըլլայ՝ կործանման վերահաս վտանգի
մէջ եղող Հայոց աշխարհին թագաւորու-
թիւնը կանգնելու։ Բայց տեսնելով թէ
իր փափաքանաց և ջանքին գործադրու-
թիւնը անկարելի է, ինքն ալ Յունաց ձեռքն
յանձնեց իր հայրենի ամրոցները՝ Բջնի,
Կայեան և Կայծան, ու փոխարէն՝ Մէջա-
գետաց աշխարհին մէջ քաղաքներ ու գիւ-
ղեր առնելով՝ հոն քաշուեցաւ. և Թոռ-
նիկ Մամիկոնեանին յանձնեց Տարօնոյ
մէջ ունեցած իշխանութիւնն։

Անկէց ետքը իր կեանքը բոլորովին բա-
րեպաշտական ու մատենագրական պա-
րապմանց տալով, իր արդիւնաւոր օրերը
կնքեց յամի 1058։

Ա. յաչափ ընդհանուր և համառօտ կեր-
պով մը՝ Մագիստրոսի քաղաքական կե-

նաց ընթացքը յիշատակելէն ետքը, անցնինք նկատել դինքը իբրև մատենագիր։

Ա. յս մասին՝ նոյն իսկ իրեն քաղաքական ընթացքը վար դարնող մատենագիրք՝ մեծ դժուարեամբ կը խօսին իր վրայ։ Նոր հալին՝ որ թէ ժամանակաւ և թէ ազգակցութեամբ մերձաւոր էր իրեն, ասանկ կը զրուցէ իր վիպասանութեանը մէջ.

« Տէսականաւէն Ճոխացեալ
Եւ Երկիւղէն զարդարեալ.
Յունականին ներհուն եղեալ,
Յոբնիմաստիցըն մոգացեալ.
Ջաստուածաշունչ տառ վերծանեալ,
Օր ըստ օրէ 'ի նոյն կըրթեալ »։

Լաստիվերացին ալ կը վկայէ թէ « Ա. յր իմաստուն էր, և խելամուտ յոյժ աստուածային գրոց՝ որպէս թէ ոչ այլ ոք »։ Ինքն իսկ Մագիստրոս իւր Թղթոցը մէջ երբոր հարկ կ'ըլլայ իւր անձին վրայ խօսիլ, կը յիշատակէ իւր ուսումնասիրութիւնը և անպարապութիւնը յուսումնական վաստակոց։ « Եւ զի բազում աշխատութեամբ խոնջեալ և տագնապեալ, մինչ տակաւին յիմումն անտիական ելով տիս, հազիւ հազ մակացու այսմ եղեալ, սուղ ինչ էակացն հասեալ, ըստ որում են Ա. բարացւոց և Փաղդէացւոց և Յունաց, ոչ դանդաղեցայց քննութեամբ զիմորձ առնուլ »։ Ուրիշ անգամ մըն ալ՝ Հագարա-

ցաց Աբրահիմ ամիրային գրելով, կը դրու-
ցէ պանծանօք. «Մեք զամենայն մտաեանս
որ միանդամ յաշխարհի՝ ընթերցեալ, ոչ
անաեզնակք եմք եթէ Քաղդէացւոցն ան-
վաեւրական պատմութեանն, և եթէ Հել-
լենացւոցն, եթէ Կապադովկացւոցն, եթէ
Եթովպացւոց, եթէ Պարսից և այլոց բազ-
մաց, զորս ոչ եմք բաւական զբոլորն յայտ-
նի կացուցանել»։

Ներսիսի Շնորհալւոյն վարուցը կենա-
դիր մը, որ ժամանակաւ ալ մերձաւոր էր
Մագիստրոսի, ասանկ կը խօսի իրեն վը-
րայ. «Ցոյժ խմաստուն և հանճարեղ, և
ներքին և արտաքին ուսմամբ ներակըր-
թեալ վարժմամբ ի մանկական սիոց՝ հայ-
կական և յունական դպրութեամբ, մինչև
հասեալ ի հռետորական ատիճան փիլի-
սոփայութեան. որ և ուղևորեալ ի թա-
գաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս
յանդիման լինէր թագաւորին. և պա-
տուեալ յինքնակալէն և ի մեծամեծաց
պալատանն՝ ըստ արժանեաց քաջատոհ-
մութեանն և ըստ մեծիմաստ դիտութեանն
և հանճարոյն. քանզի ընդ խմաստունն
Յունաց աւուրս բազումս ի հարց և ի փորձ
դժուարալոյծ բանից մաքառեալ ըստ փի-
լիսոփայական սարասի, և ըստ եկեղեցա-
կան օրինաց և կարգի յաղթէր բնաւից.
տկարագոյն զամենեսեան երևեցուցանէր
անճշմարիտ դիտութիւնն. հզօր գոլով նո-
րա ի պատասխանիս, և հանճարեղ և խո-
հական ի դարձուածս բանից»։

Ա.յլ և այլ աշակերտներ ունեցաւ Մա-
դիատրոս, որոնց մէջ անուամբ մեզի ծա-
նօթ եղողներն են Բարսեղ և Եղիսէ, որ
ժամանակ անցնելէն ետքը եպիսկոպոսու-
թեան աստիճանի ալ հասան, ինչպէս նաև
իւր որդին ալ Գրիգոր պահլաւունի կամ
Վկայասէր, իր հօրը անմիջական խնամոյը
տակ թէ բարեպաշտութեան և թէ ուսու-
մնական հրահանգաց մէջ կրթուելով՝ կա-
թուղիկոսական աթոռը նստաւ։

Մադիատրոսի թէ արձակ և թէ ոտա-
նաւոր գրուածոցը մէջ իրաւամբ գլխաւոր
տեղ մը կը գրաւեն

Թուղթերը, որոնք ութսունի չափ են, և
որոնց մէջ երեսյաց խմաստից գեղեցկու-
թիւններն և դիցաբանական պիտութիւ-
նը՝ յայտնի կը ցուցընեն մատենագրին
հանճարն և հմտութիւնը, և հայ միտք մը՝
եղլադական դիտութեամբ անաճ և մեծ-
ցած։ Բայց որովհետև Խրիզանդիոն՝ ուր
երկար տաեն կեցաւ Մադիատրոս՝ հին Ա-
թէնքը չէր, անոր համար ալ իր գրուածո-
ցը մէջ յայտնապէս կը տեսնուի՝ դիտու-
թեանց կողմանէ ապականեալ աշխարհի
մը գաղափար։ Ա.սկէց է իր թղթերուն
մէջ երեսյաց թէ խմաստից և թէ շարա-
գրութեան խրթնութիւնը, կիրթ ախորժա-
կաց կանոններուն հակառակ. որովհետև
զանազան անգամ ու մտագրութեամբ
կարդալնէս ետքը՝ դեռ մութ աշխարհի
մը մէջ կը գտնենք ինքզինքնիս. և Մա-

դիստրոսի հանճարը գուշած ժամանակին համ ալ՝ պակասութիւն մը կը տեսնենք վրան՝ և որտերնիս առաջ չերթար գրուատել։ Այս խրթնութեան մէկ պատճառն ալ իր գրոց լաւ և ընտիր օրինակներ չունենալն է. մէկ գլխաւոր պատճառն ալ՝ այլ և այլ ու բազմապատիկ նիւթոց վրայ գրուած ըլլալն է։ Ուստի Մագիստրոսի թղթոցը վրայ չխօսած՝ կրնանք այլ և այլ դատակարգութիւն բաժնել զանոնք. այսինքն վարդապետական, իմաստասիրական և բնաւանեկան թղթեր։ Առնց մէջ ամենէն աւելի դիւրիմաց են վարդապետականներն, որոնց մէջ ժամանակաւ երիցագոյն կը սեպուի այն թուղթը՝ զոր գրած է առ կաթուղիկոսն Ասորւոց. երբոր ինքն Միջագետաց կողմերը դպրութեան իշխանութիւն կը վարէր, հոն համարձակութիւն առնող Թոնդրակեցի և Մանիքեցի աղանդաւորները իր տէրութենէն հալածեր էր, անոնք ալ Ամիթ կամ Տիգրանակերտ քաղաքը գնացին, ու տեղւոյն Ասորւոց կաթուղիկոսին ապաւինելով, զանգատ ըրին իրեն այն կարծեցեալ բռնաւորական կերպերուն վրայ՝ զոր իրենց դէմ բանեցուցեր էր Մագիստրոս։ Կաթուղիկոսն ալ չկարենալով որոշել թէ յորում էր անոնց վարդապետութեան ծագութիւնը, և իրենց խօսքերէն դիրենք անմեղ ենթադրելով՝ մեղադրանաց և զանգատի թուղթ մը գրեց առ Մագիստրոս։ Այս թղթիս պատաս-

խանն է Մագիստրոսի չարագրածը, յորում տեղնիսեղը պատասխան տալով անոր մեղադրանացը, կը ծանուցանէ թէ ինչ իրաւացի պատճառներ ունէր զանոնք հալածելու, և կը ցուցընէ թէ ինչ բանի մէջ օտարաձայն են անոնք յուղիղ վարդապետութենէ ևկեղեցւոյ, և թէ այն պատճառաւ հարկ է որ ինքն ալ եւս ընդայ զանոնք մերժելու, և անոնց խաբէական խօսքերուն հրապուրանացը մէջ չկոնալու։

Մատգրութեան արժանաւոր են դարձեալ և այն երկու թուղթերը զոր գրած է առ Աբրհիմ ամիրայ Հադարացի, որուն մայրը հայկազն էր՝ սիսականն ցեղէն. և այն պատճառաւ ընտանի ըլլալով իրեն քրիստոնէութեան օրէնքը, աւելի կերպով մը կը փափաքէր տեղեկութիւն առնուլ։ Ասոնի քրիստոնէական կրօնից վրայ ունեցած դիտաւոր տարակոյսները տասուերկու գլուխ բաժնելով՝ թուղթ մը գրեց առ Մագիստրոս, անոնց լուծումը իրմէն խնդրելով։ Մագիստրոս ալ աջանչելի վարդապետութեամբ անոր ամեն տարակոյսներուն մեկնութիւնը տալով՝ անանկ անդիմադրելի ցցուց քարոզութեան ստուգութիւնը, որ Հադարացին զարմանալով՝ մասնաւոր թղթով մը խնդրեց իրմէ՝ որ դարձեալ գրէ նոյն նիւթոց վրայ, և քանի մը խօսք ալ խնամութեան վրայ աւելցընէ. զոր և մեծագործութեամբ կա-

տարեց իշխանը։ Ա.յս երկու թղթոց մէջ, ինչպէս նաև առջինին, խորունկ փիլիսոփայութիւն, իմաստուն աստուածաբանութիւն և կենդանի հաւատք կ'երևեայ, որոնք մեծ պարծանք են այնպիսի քաղաքական գրաղմանց մէջ իր կեանքը և սիրտը մաշող իշխանի մը, ինչպէս էր Մագիստրոս։ Շարագրութեան կողմանէ ալ՝ աստոց մէջ այն ոճոյ մթին խրթնութիւնը չիգործածեր։

Իմաստասիրական թղթոց մէջ գլխաւորներէն են, այն թուղթը՝ զոր գրած է, առ Եփրեմ Բշնոյ եպիսկոպոս, իրեն ընծայ գրկած նռանցը համար, և առ Մաժիկոնեանն՝ կարմրախայտ ձկանց ընծայից առթիւը. որոնց մէջ բառերու խրթնութիւնն և խաղերը՝ ինչուան իմաստակութեան կը տանին զՀեղինակը։ Քանի մը թղթեր ալ ունի՝ անանկ խառն և խրթին բառերով և իմաստիւք լցուած, որոնց մեկնութիւնը թերևս ոչ ոք պիտի կարենայ գտնել։ Անանկ են այն թղթերը՝ զոր գրած է առ Վահրամ Վ. նաև որդին իւր. և մին՝ զոր իր աշակերտաց մէջ ծուլագունից ուղղած է, և զոր հանճարեղը անգամ և հմուտգոյնք չէին կրնար ըստ արժանւոյն հասկընալ։ Անշուշտ կամաւ այնպիսի խըրթին ոճ մը բանեցուցեր է, որպէս զի ծոյլերը մեկզի ձգեն իրենց թուլութիւնը, և ջանան հասկընալ իրենց ուղղած թուղթը, յորում իրենց վարդապետին հանճարը

կ՚երևնար։ Ա.ոնց կարդէն կրնայ սեպուիլ նաև այն թուղթը որուն սկզբնաւորութիւնն է. «Գամագտական դեղանամ», և որոյ սկզբնատառն իր անունը կը կապէն։

Վարդապետական թղթոց մէջ գերազանցներէն կրնանք սեպել այն թուղթը զոր գրած է առ Պետրոս կաթուղիկոս Գետադարձ, որ իմացուցած էր իրեն թէ Գադիկ եաևէ է որ զբեղ ձեռք ձգէ և սպանել տայ։ Կաթուղիկոսին այս թղթին՝ ընդարձակ պատասխան մը կու տայ Մաշտոցը, և յորում նոր Դաւիթ մը կը նկատնէր դինքը՝ ի վիշտս, հեզութեամբ, անոխակալութեամբ և առատաձեռնութեամբ սրանչելի, Աստուծոյ կամացը նուիրուելով։ Ա.որ նման է նաև այն թուղթը՝ զոր գրած է առ առաջնորդն Սեւանայ Արդիս, մինչդեռ Գադիկ թագաւոր կը հալածէր զինքը. գարձեալ՝ առ Յովհաննէս Սիւնեաց արքեպիսկոպոս, ի պատասխանի ա.նոր մէկ մխիթարական թղթին զոր գրած էր իր հօրեղբօրը՝ Վահրամայ՝ մարտիրոսական վկայութեամբ նահատակուելուն պատճառաւ։

Մաշտոցոսի քերականական գրուածոցը մէջ՝ գլխաւոր և միակ երկասիրութիւն կրնանք սեպել Հին քերականին մեկնութիւնը, զոր համառօտ գրուածքին մէջ չատ անգամ կը յիշատակէ երդնակցին, և նախադրութեանը մէջ ատանկ կը գրուցէ. «Բայց ցուցից ձեզ և զայս. զի մի յա-

ւելորդս և յանպէտս թուիցի աշխատու-
թիւնս մեր։ Վասն դի մեծապատիւ իշ-
խանն Մագիստրոս՝ որդի Վասակայ մար-
տիրոսի, և հայր կաթուղիկոսին տեառն
Գրիգորիսի՝ տէր Վահրամ կոչեցելոյ, աշ-
խատասէր էր ի հաւաքումն մեկնութեանս
սորա, և մինչ առ մեզ ժամանակ այնու
վարժէին վարդապետք մեր դաշակերտեալ-
սըն »։ Եւ էրէն անոր պակասութիւնը, և
թէ ինչ պատճառաւ այս գործը չկարգրե-
լուն ձեռք զարկաւ՝ կը նշանակէ. զոր իբ
վրայ խօսելու առիւնիս պիտի նշանա-
կենք։

Քերդողական գրուածներ. — Ջանազան
նիւթոց վրայ այլ և այլ բանաստեղծական
գրուածներ շարագրած է Մագիստրոս. և
ասոնց մէջ գլխաւոր կը սեպուին

Թուղթերն, բայց անոնցմէ՝ զոր մերը յի-
շատակեցինք, և որոնց մէջ առաջին կը
սեպուի առ անանուն ոմն գրածը՝ որուն
սկզբնաւորութիւնն է.

« Լուաք թէ եկըն պատըն Պազակ
Վարդանաւարըն պիսակ ».

ասոր ինչ արուեստով յօրինուած ըլլա-
լուն վրայ՝ այսպիսի բացատրութիւն մը
կ'ուզեցինք հնդինակը. « Ամէն առ ընթեր-
ցիր զարհեստ ոտանաւորացդ. դիւցազ-
նական է տաղդ, քաջ դործեալ և տաղ
պատգուն, օգուն և զեղուն, եռակի վան-
կօք շարակայեալ, լի, հոյծ, կատարուն,

չարժուն. ոչ վիժեալ գծի, ոչ նուազեալ յօդի, ոչ փոփոխեալ տառիւ. կարեկցաբար առ իս ձգելով զձայնակիցն ստուգաբանութեամբ. և չարակայացուցեալ չրթելով կամ՝ ճողոպրելով»: Բացատրութիւն մը՝ որ նկատելի է այսօրուան համար:

Երկրորդ ոտանաւոր գրուածն է Ներսէս Շնորհալւոյ առաջի խաչի տաղաչափական, որ կը սկսի. «Օրհնեալ ես փայտ կենաց, բարեբանեալ երկրպագեալ» որուն մէջ բանաստեղծական հանճար, ու այլ և այլ ընտիր գրուածք կան:

Երրորդ, այն առեղծուածները Հայաստանի կաթուղիկոսական աթոռը նստող Պետրոս Գետադարձ Հայրապետին՝ խաչանշան գաւազանի մը հետ ընծայած ոտանաւոր մը, այս սկզբնաւորութեամբ.

«Ընծայեմ քեզ տարեկան
Նորոյ հասեալ ձեզ բարութեան»:

Այս քերթուածէն ետքը՝ արձակ շարադրութեամբ տեղեկութիւն մը կը յաւելու վիպասանական քերթութեան կամ հազնեցութեան վրայ:

Առնցմէ շատ աւելի ընդարձակ ու մտագրութեան արժանաւոր գրուած մըն է՝ հազարտողեան ոտանաւորը, աստուածաշունչ հին և նոր գրոց պատմութիւնը բանաստեղծական չափու վրայ առած, զոր շարագրած է ըստ խնդրոյ Մանուէլի հա-

գարացոյ. որուն հետ ծանօթացեր էր ի Բիւզանդիոն, որ և հռետորական արուեստի հմուտ անձն էր, ուստի և ոյժ ընդուաց՝ ինչպէս նաև հայկականին ալ տեղեակ. և իրեն քաջարուեստ տաղաչափութեանը համար՝ մեծ պատիւ գտած թէ Եգիպտոսի ամիրային, թէ Պաղտատու ամիրապետէն և թէ Ճունաց կայսերէն: Քրիստոնէական կրօնից ալ տեղեակ, և անոր վարդապետութեանը վրայ սքանչացած էր. միայն արհամարհելի կ'երեւնար իրեն թէ հին և թէ նոր կտակարանին պարզ և անզարդ ոճը, և կը գովէր իրենց ղուրանին կամ օրինաց գրքին ընտիր լեզուն և գեղեցիկ տաղաչափութիւնը: Մագիստրոս ուզելով հասկըցընել անոր թէ տաղաչափութիւնը մարգկային գիւտ է, աստուածային սքանչելիքն անոր կարօտութիւն չունին, խոստացաւ որ թէ հին և թէ նոր կտակարանը իրեք օրուան մէջ ոտանաւորի վրայ առնու, միայն թէ Հագարացին ալ խոստանայ որ եթէ յաջողի իր այս գործառնութեանը մէջ, թողու իւր հաւատքը և քրիստոնէական կրօնից աշակերտի: Խօսք առաւ իրմէ, և աստուածային ընորհաց վրայ վըստահացած՝ իրեք օրուան մէջ հազար տուն ոտանաւորի բովանդակեց հին և նոր կտակարանի պատմութիւնը և ընծայեց Մանուէլի: Ան ալ զարմացաւ Մագիստրոսի հանճարոյն վրայ, և տուած խօսքին մէջ կենալով՝ քրիստոնէութիւնը ընդու-

նեցաւ։ Ասիկայ է այն քերթուածիքը՝ ո-
րուն սկզբնաւորութիւնն է, « Մեծ են
գործք Աստուծոյ »։

Ա.յս ինքնագիր երկասիրութիւններէն
զատ՝ շատ թարգմանութիւններ ալ ըրած
է Մագիստրոս, և որոնք իրեն գլխաւոր
պարապմունքն եղած են. թէպէտ այս աշ-
խատասիրութեանց մեծ մասը կորսուած
են. ինքը կը վկայէ թէ « Ոչ եմք զգաց-
եալ ՚ի թարգմանութենէ, և զբազում
մատեանս՝ զորս ոչ եմք գտեալ ՚ի մեր լե-
զուս, զերկուս մատեանն Պղատոնի՝ զը-
Տիմէոսի Տրամաբանութիւնն և զՓիդով-
նի, յորս բոլոր ճառն նախագիտականին
այն պարփակեալ կայ, և զայլս բազումս
յիմաստասիրացն։ Իւրաքանչիւր մա-
տենաբս այս մեծագոյն է քան զտարեւոր
աօնականս. . . Բայց և զերկրաչափականն
զԵվկլիդեսին սկսայ թարգմանել։ Եւ եթէ
տակաւին կամեսցի Տէր յերկարանալ մեզ
՚ի կենցաղումս, բազում հոգս յանձին
կալեալ զինեցեալսն բոլոր Յունաց և Յա-
սուոց՝ թարգմանել ոչ դանդաղեցայց։
Եւ կարօտիմք քեզ մերձ ելոյ մեզ օգնա-
կանութեան այսպիսւոյ իրողութեանց. ա-
պա թէ ոչ՝ աղօթիւք օգնեսցես մեզ. . .
Բայց և գտեալ մեր իսկ է ՚ի Հայ լեզու
գրեալ թարգմանչացն զգիր Ղևոնդիոս-
բոսի՝ զոր Դաւիթ յիշատակէ, կարի յոյժ
աքանչելի և հրաշալի բանաստեղծութիւն,
մանաւանդ բոլոր իմաստասիրական բա-

նից. գտեալ եմ և զկալիմաքոսի և զԱնդրոնիկեայն ի հայ լեզու »։

Ա.յս յիշատակուած գրքերէն՝ միայն Պղատոնի գիրքը՝ զոր Մագիստրոս Տիմէի և Փեդոնի տրամախօսութիւն կը կոչէ, հասած է մեր ձեռքը. յորում նախ բնութեան և բնական իրաց վրայ կը խօսի, հին հեթանոս իմաստասիրաց կարծիքները ժէջ բերելով. երկրորդ՝ օրինաց վրայ ընդհանրապէս, և երրորդ՝ յաղագս օրէնսդրութեանց. տասուերկու գիրք, այլ և այլ անձանց հետ տրամախօսելով։

Ոմանք կարծեցին թէ այս գրքին թարգմանութեան ժամանակը՝ երիցադոյն է քան զՄագիստրոս, և թերևս ինչուան հինգերորդ դարու երկասիրութիւն, կրասեր՝ կամ երկրորդ թարգմանչաց ձեռքովը եղած. և թէ թերևս հաւանականաբար մի և նոյն անձն է՝ որ փիլոնի և Պղատոնի իմաստասիրական գրքերը թարգմանած ըլլայ։ Եւկլիդեսի երկրաչափութենէն քիչ բան ձեռնուընիս հասած է. իսկ մնկալ գրքերը՝ զորս կը յիշատակէ Մագիստրոս, այսինքն Ղոմպիւդորոս, Կալլիմաքոս և Անդրոնիկէ իմաստասիրաց գրքերը՝ կորսուած, կամ դեռ մեր ձեռքը հասած չեն։

Մագիստրոսի գրուածքներէն քանի մը թղթեր և ուսանուածներ միայն հրատարակուած են ծաղկաքաղ գրոց կամ օրագրաց մէջ։

Մագիստրոսի ժամանակակից գրաւոր անձանց մէջ գլխաւորներէն են,

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱՌԱՐՁ կաթուղիկոս, որ ընտիպ կը թղթակցէր Մագիստրոսի հետ, և մեծ մասն ունեցաւ անոր քաղաքական կեանքի ընթացքին մէջ. չատ ալ հետաքրքրական եղաւ թէ պզին թէ օտարաց: Իր նախնական ուսմանց հրահանգը Տրապիզոնի վանքին մէջ առաւ Պետրոս, մատենագիրը և աւանդաբէնն կը հաստատուի նաեւ թէ ոչ միայն սրբազան գիտութեանց, այլ արտաքին իմաստասիրութեանց և չափաբերականին մէջ անուանի եղած ըլլայ: Բայց մեր ձեռքը հասած երկասիրութիւնքը թէպէտ և քիչ, բայց չեն կրնար առիթ ըլլալ այն վճռական գովեստներուն՝ որոնց արժանի եղած է: Այս գրուածներէն են ութ ձայնի վրայ առած մաթթոսաց և հանգամանաւոր շարականները, և քանի մը շարականներ՝ որ ընդհանուր անուամբ Մաշտոց կը կոչուին, և որոնց մէջ վայելուչ շարադրութեան և ոճոյ հետ հաւասար կը գտնուին բանաստեղծական հանճար և աշխոյժ: Կ'աւանդի գործեալ թէ այլ և այլ գեղեցիկ ճառեր ալ շարադրած ըլլայ Գէտադարձ, որոնք մեր ձեռքը հասած չեն:

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ.—Մագիստրոսի ժամանակակից էր սա և Սանահնի վանաց միաբան. Գէտադարձ հայրապետին խնդիրքովը՝ Պօղոս առաքելոյն չորեքտասան թղթոց մեկնութիւնը շարադրեց, հաւաքելով ի բանից Ոսկեբերանի, ևվրկմի և կիւրղի: Այս բանս իրենց պատմութեան գրոցը մէջ կ'աւանդեն Կիրակոս և Վարդան. Կիրակոս կ'ըսէ թէ «Անանիա վարդապետ,

սորա ասէն ՚ի մի հաւաքեալ ՚ի մեկնութիւն ըզբանին Եփրեմի, և Յովհաննու Ոսկեբերանի և Կիւրղի և այլոցն, արարեալ համառօտ վասն դիւրահասութեան ընթերցողաց: Ապար և խորհրդական և մեծաւոր տեսութիւն և համեմատութիւն աւետարանացն օրինակ: Գրեաց և լուսաւոր խնացուածս վասն խորհրդական սըրբասացութեանն՝ որ յԱկեղեցիս ուղղափառաց խաչելարիւ ասի, և զնեբրզիան շղակաթին»: Իսկ Վարդան. «Եւ նախ քան զառաս Անանիա՝ որ զԱռաքեալն համառօտեաց՝ հրամմանաւ կաթողիկոսին Պետրոսի, Սանահնեցին»: Բայց ո՞րովհետև այս գրուածքին գրչագրաց մէջ՝ որ մեր ձեռքը հասած են, Անանիայի անունը չգիտցուիր, ոմանք անոր երկասիրութիւն ըլլալուն վրայ կը տարակուսին:

Երկրորդ գիրքը՝ զոր ՚ի խնդրոյ Գէտադարձ Հայրապետին շարագրեց Սանահնեցին, ու անոր յաջորդ Խաչիկ կաթողիկոսին նուիրեց, ընդդիմագրութեան գիրք մին է՝ ընդդէմ Յունաց, այսպիսի մակագրով, «Անանիայի վարդապետի Հայոց՝ բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց· զոր գրեաց հրամմանաւ տեառն Պետրոսի Հայոց վերադիտողի»: Եւ կը խօսի այն պանագան խնդրոյ վրայ՝ որոնք Յունաց և Հայոց մէջ հակաճառութեան նիւթ եղած են· այսինքն, անխառիր ընդ միմեանս հաղորդութիւնը վրայ, մեծի հինգշաբաթիոն վրայ, անոնց դէմ՝ որ ապականացուս կը համարին զմարմին Քրիստոսի· նէքրնիացեալ՝ ներու դէմ, պատկերաց պաշտաման վրայ, Քաղկեդոնի ժողովին վրայ, Վարդավառին վրայ, չորս աթոռներուն, մեռոնին, բաղարջին, Քրիստոսի ծննդեան ծնին, և երից սրբասացութեանց համար՝ զոր Հայոց եկեղեցին կ՚երգէ ՚ի դէմս Որդւոյ: Կիրակոս պատմիչ միայն այս վերջին նիւթը

կը յիշատակէ՝ երբոր կը գրուէր Թէ, « Գրեաց և լուսաւոր իմացուածս վասն խորհրդական սքրամատուցութեանն՝ որ յհակեղեցիս ուղղափառաց խաչեցարիւս ասի »: Շարադրութեան ոճը դեղեցիկ է և զարդարուն, և Ճարտասանական ազնուր զուգուածներըը յաճախ ափսոս որ հակառակութեան նիւթ եղող, և արդէն ազգին մէջ այլ և այլ տարաձայնութեանց և երկպառակութեան խընդրոյ վրայ խօսելուն առեն՝ սէաք եղած զգուշութիւնը և անկողմնասիրութիւնը չցուցընէր:

Կիրակոս՝ երբորդ երկասիրութիւն մըն ալ կ'ընծայէ Սանահնեցւոյն, խորհրդական և մատուր տեսութիւն մը և համեմատութիւն աւետարանչաց՝ որուն գրչագիրը դեռ չեռուբնիս հասած չէ: Նոյնպէս ալ Հոդակաթի ներբողեան մը, որ թերևս մեր քովը գտնուածն է, և որուն վերնագիրն է. « Երանելոյ հօր Անանիայի հոգեվարժ փիլիսոփայի՝ ներբողեան, ասացեալ ի սուրբ կաթուղիկէն՝ որ է ի Նոր քաղաք՝ որ այժմ կոչի Վաղարշապատ »: Թէպէտ և այս գրուածքը՝ ուրիշ համանուն վարդապետի մը կ'ընծայուի յոմանց, ինչպէս նաև ուրիշ քանի մը գրուածներ, որոնց միայն խորագիրները կը գնենք հոս.

Ա. Անանիայի վարդապետի խրատ հոգեշահ, Թէ որպէս կարասցէ զմիաս որոշել յերկրաւորացս:

Բ. Խրատք քահանայից:

Գ. Ի խորհուրդ Յունհաննու մարգարէի:

Դ. Ի խորհուրդ կատարման սուրբ առաքելոյն Պետրոսի:

Ե. Ի խաչելութիւնն Պետրոսի:

Զ. Յաղագս Յովհաննու Մկրտչի:

ՍԱՐԳԻՍ ՍԵՒԱՆԵՑԻ. — Մատիսարոսի գրէ խաւոր Թղթակիցներէն ու մաերիմներէն մէկն էր

նաև Սարգիս վարդապետ՝ Սևան կղզւոյն առաջնորդը, գիտնական ու լեզուագէտ անձ մը, որուն խմաստութեանն ու գիտութեան վկայութիւնը կու տայ Մագիստրոս Հեսեւեալ խօսքերով. «Ջ՚ինչ արգիօք հղօրդ Հռէտոր և ատուածային տէրենա. մի և ատեցեալ՝ ի գիր՝ ի մէնջ կամ թէ արհամարհեալ. զի միանգամ և երկիցս ոչ տատապատանի, որ միշտ կարօտեալ եմ բանի քումմ և գրի։ Վանդի հղօր էս՝ ի պուէտիկոտական մատնագրութեան. և սիրելի ինձ ոչ այլ ինչ՝ էթէ ոչ այնպիսի ինչ լսել կամ տեսլ»։ Ուրիշ թղթի մը մէջ ալ իր թարգմանութեանց և գրաւորական վաստակոց վրայ խօսելու առիթը կ՚ըսէ. «Կարօտիմք քեզ՝ մերձ ելոյ մեզ օգնականութեան այսպիսւոմ իրողութեանց»։

Սևանեցւոյս համար կ՚ուզեմք թէ այլ և այլ Ճառեր և թարգմանութիւն և մեկնութիւններ երկասիրած ըլլայ. սակայն անոնցմէ բան մը ձեռնրնիս հասած չէ. միայն Սարգիս վարդապետի մակգրութեամբ Ճառ մը կայ ննջեցելոց վրայ՝ ի յունականէն թարգմանուած՝ ի հայ՝ հանդերձ ժամանաւոր յիշատակարանով մը, զոր ամենք Սևանեցւոյն կ՚ընծայեն։

Ասոր նման անուանի եղած են նաև ուրիշ քանի մը վարդապետներ, ինչպէս Խնամի վանաց առաջնորդ Սամուէլ Վրդապետը, Գէորգ անուամբ վարդապետ մը, Տիփրան Պաղեսաւանի. որոց և ոչ մէկ գրաւոր երկասիրութիւնը ձեռնրնիս անցած է։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ

Ա.յս գարուս մատենագրաց մէջ նշանաւոր կրնայ սեպուիլ Արիստակէս Լաստիվերտցի՝ իր պատմական երկասիրութեամբը։ Իր վարուցը վրայ կենսագրական տեղեկութիւն մը չունինք ամենևին. միայն իր գրուածքէն և պատմադրելու ոճէն կ'երևնայ թէ եկեղեցական էր, և թէ բաւական ընդարձակ հմտութիւն ունէր աստուածաչունչ գրոց։ Այս գիտութիւնը ուզած է ցուցընել նաև պատմագրութեանը մէջ, և անով գրուածքը՝ մեծապէս իր յարգը կորսընցուցած. վասն զի թէպէտ յաչխարհի ամենայն ինչ յԱստուծոյ կը սահմանուի, բայց զայդ իսկ՝ պատմութեան յայտնապէս ցուցընելու համար՝ մասնաւոր իմաստասիրական տեսութիւն մը պէտք է, ու մտածութեանց ընդարձակութիւն և խորութիւն, և ոչ եթէ յաճախ մարգարէից խօսքերը կրկնել։

Լաստիվերտցւոյն պատմութեան նիւթը.— Հայաստանի թշուառ ժամանակացը ակառնաւս, ականջալուր և աստուածատուժ վիպագիրն է Արիստակէս։ Անգութ և անողորմ թշնամիք՝ մեր աշխարհին նիւթական և բարոյական խեղճութիւնը իրենց նպաստաւոր դանելով, զանիկայ յաւելն-

տակելու և կամ՝ աւերմամբ ոտնակոխ ընելու համար՝ ամէն չարութեան ձեռք զարնելու պատրաստուեր էին։ Ուստի իրաւամբ կ՚աստիվերացին իւր պատմութեանը նախերգանացը մէջէն կը սկսի ողբալ ազգը, և անոր գլխուն գալիք ապագայ թշուառութեանց աղէտքը կը նկատէ. «Փառք մեր, կ՚ըսէ, գարձան յապականութիւն. շունչ՝ ի մեզ ոչ մնաց, գօրացաւ մահ և եկուլ. ամենեցուն յարձակեցան՝ ի մեզ ձեռք. ՝ի սրբելեաց քակտեալք՝ գրոս ոչ սուր սատակեաց, ցրուեցաք գօրէն ասեղաց մոլորական կոչեցելոց»։

Այս տխուր նախերգանքէն ետքը կը սկսի կ՚աստիվերացին իւր պատմութիւնը։ Կը յիշատակէ Դաւթի կիւրապաղատին թագաւորութիւնը, այն աշխարհակէն, մեծապարգև և ազգասաւէր իշխանին, որուն սահնը հանգստութիւն և խաղաղութիւն կը գանէր Հայոց աշխարհը։ Կը յիշատակէ դարձեալ Սմբատայ ու Գուրգենայ եղբօր՝ Աշոտոյ Բագրատունւոյ՝ թագաւորութեանը ժամանակը, որ՝ ի պատեբազմունս հզօր և յաղթող ըլլալով՝ ՝ի խաղաղութեան պահեց Հայոց աշխարհը։ Բայց մահուընէն ետքը անոր որդիքը Սմբատ Յովհաննէս և Աշոտ՝ հակառակելով իրարու սահմանաց և իշխանութեան վրայ, Ափխազաց Գորգի թագաւորին դիմեցին. Գորգի անոնց մէջ ուզելով խաղաղութիւն ընել՝ ձեռքն ու զէնքը երկընցուց

Հայաստանի վրայ. Յունաց կայսրն ալ իրեն դէմ եկաւ, և այն պատճառաւ իրա-րու հետ պատերազմներ ունեցան, որոնց վրան ու աւերմունքը Հայաստան կրեց։

Անկէ ետքը Արիստակէս՝ Բիւզանդիոնի այլ և այլ թագաւորաց յաջորդութեան շարը կը դնէ իր պատմութեանը մէջ, և այն վերաբերութիւններն՝ զորս անոնց հետ ունեցաւ Հայաստան։ Այն ատենուան ազգային պատմութեան անցիքը մէջ նշա-նաւոր է Անի քաղաքին վաճառումը առ Յոյնս, որով Գագիկ Բ թագաւորը զրկուե-ցաւ արքունական գահէն, ու արտասուե-լով ազգին ազէտիքը վրայ՝ թէ կեանքը և թէ բովանդակ թագաւորութիւնը կորսըն-ցուց։ Այս վաճառման գլխաւոր պատճա-ռը՝ մեր քանի մը իշխանաց անմիաբանու-թիւնն էր, ու երիցու մը արծաթասէր շա-հախնդրութիւնը։ Այն ցաւալի դէպքը սրտաշարժ դրչով մը և հայրենասէր ար-ցունքով կ'աւանդէ Լաստիվերտցին. կը յիշատակէ Անի թագաւորանիստ քաղա-քը իր ամէն չինուածոյն ու կազմու-թեանց վայելչութեամբ. իսկ ետքը «Թա-գաւորն անկեալ՝ ի պատուոյ, իբրև զգե-րի կալանաւոր նստի՝ ի հեռաւորեակ տե-ղիս . . . Հայրապետական աթոռն ամայա-ցեալ՝ ցուցանի տխուր դիմօք, իբրև զկին նորահարսն սիակեալ յայրութեան . . . յողբս փոխեցաւ մեզ ամենայն»։

Անկէ Հայաստան անտերունչ վիճա-

կի մը մէջ՝ համարձակութիւն կու տար իր չորս կողմը բնակող և իրեն կորստեանը սպասող թշնամիներուն։ Անոնց ձեռքովը Բասենոյ գետափին ու Սմբատայ լերան ու Արծնի մէջ սոսկալի ու դժնդակ կոտորածներ կ'ըլլան. կը զարնուի կարս քաղաքը. վրայ կը հասնի Ալփասլան՝ արիւնարբու և մահաչունչ սուլդանը, կը խորտակէ՝ կը տապալէ Մանազկերտ քաղաքը. ու անլուր կոտորածք և աւարառութիւնք կ'ըլլան Խորձեանի ու Հանձէթի, Դերջանայ ու Եկեղեաց մէջ, որոնց տխուր պատմութիւնները՝ մատենադրին սիրտը առաջ չերթար նշանակելու. վասն զի կ'ըսէ «Հատկիմ արտասուօք, փղձկի սիրտ իմ, և յիմարին միտք և զդողանի Հարկանին ձեռքս»։

Սակայն և այնպէս հայրենեացը խնդճութեանը ուրիշ ցաւալի դէպքերն ալ յիշատակելու չգանդաղիր։ Անի քաղաքը՝ որ նոյն ժամանակաց գլխաւոր շահաստանն էր, իբ փառքովն ու մեծութեամբը՝ յաղթողաց ձեռքը անգթութեան և չարութեան խաղալիկ մը կ'ըլլայ. և անոր գլուխը եկած ցաւալի դէպքերը կ'աւանդէ Լաստիվերացին։ Սիկայ է իբ պատմագրութեան գլխաւոր մասը, զոր գեղեցիկ և սրտաշարժ ոճով և բանաստեղծականութեամբ կը սարքէ. և անով կը լմընցնէ իբ երկասիրութիւնը։

Ամանք Լաստիվերացւոյն գրուածքը՝ ողբոց պատմութիւն ուղեր են կոչել։ Ցարա-

կոյս չկայ որ այս մասին մէջ չափէն անդին անցած է հեղինակը, որով թերևս ընթերցողաց սիրտը չարժելու տեղ՝ տաղտկութեան պատճառ ըլլայ։ Կ՚երևնայ թէ մատենագիրը այն հանճարներէն է՝ որոնք տխրութեան հակաժէտ կ՚ըլլան. բայց և այլոց վրայ ոչ նուազ ազդեցութիւն մը պիտի ընէին անշուշտ իւր ժամանակացը տխուր և եղերական դէպքերը։

Աբիտակէս վարդապետի անուամբ, որ մեր հեղինակն կը կարծուի, կան ընթերցուածոց մեկնութեան ճառք կամ հատուածք բանից, վայելուչ շարագրութեամբ։

Լատինվերացոյն Պատմութիւնն տպագրուած է Վ. Ղազար վենետկոյ, յամին 1814։ Գաղղիերէն թարգմանութիւն մ՚ալ Վ. Բարիզ 1864, Բրիւսոմ հայագիտին ձեռամբ։

ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ

Մեհտասաներորդ դարուն մատենագրաց մէջ թէ բարեպաշտութեամբ և թէ ուսումնասիրութեամբ անուանի հանդիսացաւ Մագիստրոսին որդին Գրիգոր Վկայասէր, որուն առջի անունը Վահրամ էր։ Հօրը աչքին և խնամոց տակ կրթուելով՝ թէ

հօրը և թէ հայրենեաց և եկեղեցւոյ արժանաւոր երեւցաւ։ Ուսմանցը հրահանգը կատարելէն ետքը՝ աշխարհք մտաւ, և ըստ աշխարհի առաքինութեամբքը մեծ համբաւ ստանալով, Բիւզանդիոնի կայսրէն զանազան պատիւներ առաւ, ու դուքս պատուանունով՝ իւր հօրը իշխանական աթոռը նստաւ։ Բայց քանի մը տարի անցնելէն ետքը՝ ամէն երկրաւոր մեծութիւններէ հրաժարելով, ինքզինքը միայնակեացական կենաց առանձնութեան տուաւ, սրտին ու հոգւոյն խաղաղութիւնը փընտռելով։ Սակայն իր ամէն ջանքովն ալ ինքզինքը չկրցաւ ծածկել անոնցմէ՝ որոնց արդէն հասեր էր իր առաքինութեան և սրբութեան վարուց համբաւը. ուստի Խաչիկ կաթուղիկոսին մահուընէն ետքը՝ անոր արժանաւոր յաջորդ մը փնտռելու ատեն՝ ամէնուն աչքը ասոր վրայ դարձաւ, ու մեծ աղաչանքով նստուցին զինքը հայրապետական աթոռոյն վրայ, ու կոչեցին Գրիգոր երկրորդ։

Այլ և այլ եկեղեցական բարեկարգութիւններ ընելէն ետքը՝ ինքզինքը գրաւոր զրազմանց տուաւ Գրիգոր, թէ անձամբ և թէ այլոց ձեռքով թարգմանութիւններ ընելով, և կամ սկզբնագիր երկասիրութիւնք շնորհելով ազգին. անոր համար է որ Շնորհալին՝ անոր հոգւոյ և եկեղեցական արդիւնքը նշանակելէն ետքը՝ կը գրուցէ.

« Երկրորդ Մեսրովպ մեզ երևեալ
Զգիրըս բազումս թարգմանեալ.
Եւ ի Յունաց և յԱսորւոց
Ճառըս սրբոց վերաբերեալ »։

Իր դրաւոր երկասիրութեանցը մէջ դլխաւոր եղան սրբոց վկայաբանութիւններն, զորս թարգմանեց և կարգի դրաւ, և ա-նոնց չատերուն ոտնները հաստատեց, և այն պատճառաւ վկայասէր կոչուեցաւ։

Վարդան պատմիչ կ'աւանդէ թէ վկայասէր հայրապետը տարիի մը չափ կաթուղիկոսական աթոռոյն վրայ նստելէն ետքը ի Ջամնդաւ, նոյն աթոռոյն անսչութեան հոգը թողուց Լօռեցի Գէորգ վարդապետին, և ինքը թարգմանութեանց համար անցաւ ի Կոստանդնուպոլիս, անկէց այլ և այլ գրքեր հետն առնելով՝ երբոր կ'ուղէր երուսադէմ երթալ, հովը հակառակ ըլլալով՝ ստիպուեցաւ ելլել յեգիպտոս. և հին անապատաւորաց բնակութեան տեղւանքը պտըտելով, իր սրտին փափաքը և ուխտը կատարեց։ Մեծ պատիւ գտաւ եգիպտոսի սուլտանէն. և հոն բնակող Հայերը՝ երեսուն հազար հոգիէն աւելի՝ իր քովը ժողվուեցան և ինքն Գրիգոր ա-նոնց համար վանք չինեց, և վրանին գըլխաւոր դրաւ իր մերձաւոր ազգականը՝ գԳրիգորիս, զոր վ. արդան՝ վկայասիրին եղբօրորդին կը կոչէ, և Ուռհայեցին՝ քեռորդի։ Կիրակոս կ'աւանդէ թէ եգիպտա-

սի մէջ վախճանած ըլլայ Վկայասէր. իսկ ուրիշ պատմիչք կը զրուցեն թէ գարձաւ ի Հայաստան, և Տորոս լերան սահմաններն կամ Եփրատ գետին քով եղած կարմիր վանքը գառնալով հոն կնքեց իր բազմարդիւն կեանքը։

Վկայափրիճ երկասիրութիւնները. — Վկայասիրին երկասիրութեանցը՝ կամ իր ձանիւք և հրամանաւ եղած գրաւոր արձանց մէջ, գլխաւոր կը սեպուի Գործոց Առաքելոց մեկնութիւն մը, որուն ինքնագիր ձեռագրին մէջ ատենկ կը պատմէ Գրիգոր. « Տուկիծ կայսեր որդւոյն Միքայելի թագաւորութեան ու Կոմմայի պատրիարքութեանը ժամանակ՝ կատարձնեալոյս քաղաքը գնացի. և հոն չատ եւս էլ՝ ինդալով՝ Յովհաննու Ոսկեբերան հայրապետին չարագրած գործոց առաքելոց գերահրաշ մեկնութիւնը ձեռքս անցաւ։ Հոն Աիրակոս անուամբ հմուտ հեղոտրի մը հանդիպելով, որ թէ հայկական և թէ յունական ուսմամբ անուանի էր, առատ վարձք տալով իրեն՝ այս ցանկալի գիրքը թարգմանել տուի։ Եւ ինչպէս նահապետքն Մովսէս օրինաց տախտակները՝ անանկ ուրախութեամբ այս նուիրական գիրքը հետս առած՝ չատ աշխատութեամբ Լիբիոյ և ասիական ծոցոյն հանատարածը անցայ, և Հոգւոյն սրբոյ խնամքովը՝ Աեմայ բաժնին մէջ Տորոսի սարոտը եղող սրբոց հրեշտակաբնակ

կայարանը հասայ, և գտայ հոն՝ Կիրակոս Հոգիշնորհ պիտնականը՝ որ իմ ըստհոգւոյ որդիս է, և մեր փոխանորդին Գէորգեայ աշակերտը։ Ասիկայ իրեն համութեամբը՝ առջի թարգմանչին ունեցած անհարազատ ոճերն ու խորթութիւնները՝ մեր ազգին դիւրալուր և յարմարական ոճի մը վերածելոյ չատ աշխատութեամբ»։

Այս յիշատակարանը կը դնուի այն գործոց մեկնութեան մէջ՝ որ ընդհանուր անուամբ խմբագիր կը կոչուի, Յովսեբիանէ և Եփրեմէ քաղուած ըլլալուն համար. և այս անուամբ ալ տպագրած է ի Վենետիկ յամի 1839։

Սակայն ոմանք կը կարծեն թէ այս խմբագիր մեկնութիւնը կրնաներ է ժամանակաւ քան զՎկայաւէն, որովհետև Շնորհալոյն ու Լամբրոնացւոյն խօսքերէն ալ այլ և այլ հատուածներ մէջ բերուած կը տեսնուին, և ընդհակառակին մէջ կը յիշատակուի Տէր Յովհաննէս արքայեղբայրն Հեթմոյ Ա., և թէ անոր հրամանաւը ձեռք գարնուած ըլլայ այս երկասիրութեան։ Ասոր հետևական կ'երևնայ թէ ասոր ընդարձակ մեկնութիւնն էր զոր թարգմանել տուաւ Վկայաւէր, և վրան ժամանակ անցնելէն ետքը՝ ուրիշ մը նոյնը համառօտեց՝ սրբոյն Եփրեմի և ուրիշ վարդապետաց խօսքերէն ալ այլ և այլ հատուածներ աւելցընելով։

Վկայաւիրին կ'ընծայուին յիշատակա-

բանաց սուրբ վկայութեամբը՝ Պրոկղի՝ սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին վրայ չարագրած նեբրոդին թարգմանութիւնը, Ոսնլուսայի կարգը, սրբոյն Եփրեմի՝ Յովհաննու Մկրտչին վկայութեանը և Հերովդիադայ կաբասմանը վրայ գրած ճառը, ինչպէս իրենց խորագիրներէն և յիշատակարաններէն կը հասկըցուի։ Իրեն աշխատասիրութեամբը եղած են դարձեալ սբբոց այլ և այլ վկայաբանութիւններ, և յանուանէ՝ սրբոյն Գէորգեայ վարքը, նըմանապէս Եւդոքսիայ և Յուլիտայ վկայաբանութիւնները։

Վկայասիրին երկասիրութիւնն է նաև սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի վարուց պատմութիւնը, ինչպէս յիշատակարանին մէջ կը պատմէ ինքն Վկայասէր Թէ Քրիստոսի 1104 թուականին (ՇԾԴ.) Ալէքս Կոմնենոս կայսեր իշխանութեանը ժամանակ՝ այլ և այլ հալածանքներէ չատ նեղուելով՝ Անաւ լեռը քաշուեր է, և հոն սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի վարքը թարգմաներ. «Ի ձեռն առն մի՝ որում անուն էր Թէոփիլոս՝ ազգաւ յոյն. և ապա եառու վերստին արձակեցեալ զամ ի տաբարան և ի յօտարաձայն բարից և բառից առաջին թարգմանութեանն՝ ըստ բերթողական իմաստից, միայնոյ տոհելով ի ձեռն Աստիճոսի քահանայի, որ անեալ և վարժեալ էր ընդ ամերով ձեռամբ»։

Վ. Կայսաէրին վրայ խօսելու առիթներ՝ տեսանք
թէ՝ ի Թարգմանուեցեան և թէ՝ ի գիր՝ մեծապէս
ձեռնտու եղած է իրեն ԿԻՐԱԿՈՍ անունով վար-
դապետ մը, որ՝ ինչպէս վերը յիշատակեցինք,
Վ. Կայսաէրին փոխանորդ Գէորգ վարդապետին ա-
շակերտն էր, և Հայերէն լեզուի հմուտ ու տե-
ղեակ. անոր համար Վ. Կայսաէրն ալ ուրիշներուն
Թարգմանած երկասիրութիւնքը՝ ասոր դարձեալ
աչքէ անցընել կու տար: Նոյն աշխատասիրու-
թիւնն ըրաւ Կիրակոս նաև Ոսկեբերանի՝ Յով-
հաննու աւետարանչին մեկնութեանը վրայ: Ա-
ղի սա ինքն Կիրակոս վարդապետ՝ Ոսկեբերան
հայրապետին այս աքանչելի գրուածը տեսնելով՝
Վ. Կայսաէրէն խնդրեց որ Թարգմանել տայ՝ ի հայ:
Վ. Կայսաէրն ալ հարազատ յունական սկզբնա-
գիրը քովը չունենալով՝ ասոր լեզուով եղած
Թարգմանութիւնը դաւս, և նոյն լեզուին տե-
ղեակ Անդրէաս անունով քահանայի մը որ հայ-
կական լեզուի ալ բաւական հմտութիւն ունէր՝
յանձնեց որ նոյն գիրքը Թարգմանէ: Բայց Կի-
րակոս տեսնելով Թէ ասոր լեզուէն մեր լեզուին
դարձնելը դժուարին, ու «շաղփաղփ և պլա-
տարազ» կ'ըլլայ, ինչպէս ինքը կ'ըսէ յառաջա-
բանին մէջ, Վ. Կայսաէրին աղաչեց որ նորէն Թարգմա-
նել տայ զայն՝ ի յունէ: Անիկայ ալ Կիրակոսի
Թախանձանաց երեսացի ըլլալը տեսնելով՝ ընդ-
հատել տուաւ Անդրէի ձեռքով եղած Թարգ-
մանութիւնը, և նոյն Կիրակոսը ղրկեց՝ ի Մէյ-
գետս Թէոպիսեայ յոյն հռետորին, որ նոյնպէս
տեղեակ էր հայ լեզուի, և առաջ վարձք ընդ-
հատելով երեն՝ Թարգմանել կու տար նոյն գիրքը:
Բայց որովհետև նոյն միջոցներուն պատահեցաւ
Վ. Կայսաէրին երջանիկ փոխուիլը, Կիրակոս այն օգ-
տակար աշխատասիրութիւնը խափանել չուզեաւ.

այլ նոյնպէս շատ ծախքով շարունակել տուաւ ու աւարտել նոյն Ճառերը, որոնց ամբողջ Թիւը յիսուն և հինգ է. որովհետև անոնց մէջ երեսուն և իրեք Ճառը շատ աշխատութեամբ գտած էր՝ Թարգմանելու 'ի նախնեաց, ուստի մնացածներուը նորէն Թարգմանել տուաւ, և անոնց մէջ առջի տասնմէրեք Ճառերը Թարգմանուած են յաստոր ընդուն, իսկ մնացած քսանը 'ի յոյնէ: Ցիշատակարանին մէջ կը գրուցէ Կիրակոս Թէ « բոլոր գակ գիրքն էր ընդ Թարգմանած 'ի հայս. և 'ի ծուլութենէ և յանփոյթ առնելոյ այլքն կորուսեալ եղեալ էին յօրինակս հինս ուր և կայր. և այս զոր գտաք՝ յախմար և 'ի ագէտ խառնուած 'ղգպրութեոյ այլոյլած և Թիւրած էր բանէն և տառքըն, և աւելն և պակաս՝ անօգուտ 'ի կարգալոյ և յիմանալոյ »:

Կիրակոսի նման վարդապետից և օգնական էր նաև Վկայասիրն նաև ՄԱՏԹԷՈՍ, որուն գլխաւոր երկասիրութիւնն եղաւ Յովհաննու Ոսկեբերանին վարուցը Թարգմանութիւնը:

Նոյն ժամանակներն ծաղկած է նաև ԳԻՈՐԳ վարդապետ, որ քազմրուռոյց վարդապետութիւն ունենալուն համար, ինչպես կ'ըսէ վարդան, Մեծրէի կոչուեցաւ: Վասպուրական գաւառին Աղաիթ կոչուած գեղը ծնած էր Գէորգ, և հոն կրթուածովելով՝ Դրազարկի սուրբ ուխտը նորոգեց: Ցետոյ սարի կրթութեան կենդանի վարելէն ետքը՝ հօթանասնամեայ վախճանեցաւ բարի հանգուստով և արդութեամբ, « և Թաղեցաւ 'ի գաւառն Աղաւարզոյ, 'ի մեծ յանապատն որ Դրազարկ կոչի », կ'ըսէ Մ. Ոռհայեցի:

Աղուանից եղաւ գարձեալ և ԹԷՈԴՈՐՈՍ վար-

դապետ՝ Ջահան գաւառին Հոնի քաղաքին եկե-
ղեցւոյն փակակալը, որ ալէլուքը՝ քաղցրաձայն
եղանակաւ նուագելուն համար Ալէլուիկ կոչուե-
ցաւ. և եղբը ինչուան կաթուղիկոսութեան ա-
թոռն ալ գրաւեց: Վասն զի անշուշտ իրեն կը վե-
րաբերին Ուռհայեցւոյն այս խօսքերը. « Կառու-
ցանեն յամենա կաթուղիկոսութեան Հայոց զա-
թեոդորս, զղրան եպիսկոպոսն սեառն Սարգսի
Հայոց կաթուղիկոսի՝ զնեձ երաժիշտն Ձայնաւո-
րաց՝ որ մականուն ասի Ալէլուիկ »: Դարձեալ
« Յայսմ ամի (ՇԽԹ) մեռաւ մեծ երաժիշտն և
սիւնն սրբոյ եկեղեցւոյ աւէր Թորոս կաթուղիկոս
Հայոց, և թաղեցաւ ի Հոնին՝ մօտ ի աւէր Սար-
գիս »: Կ'աւանդեն ոմանք թէ յորս աւետարանչաց
մեկնութիւն մը շարադրած ըլլայ Ալէլուիկ »:

Ժամանակակից է ասոնց նաև՝ ՍԻՍԻՆՈՍ կամ
ՍԻՍԻՆՈՍ վարդապետ սեբաստացի, որ իր հայրե-
նեացը՝ իրենց վկայական մատուռովը և աբանի-
լեաք պարծանք եղող Քառասուն մանկանց վրայ
ընտիր և գեղեցիկ նեբբոզեան մը շարադրած է:

Ակելբրդ կը սեպենք յիշել նաև ՔՈՕՂՈՍ ՏԻ-
ՐՈՆեցի, որ Տարօնոյ Ղազարու վանքը կը նստէր
և վերը յիշատակուած Թէոպհասէ յոյն կրօնա-
ւորին գէմ գրուածք մը հրատարակեց լի հոգւով
հակառակութեան: Եւ այն հոգին իրեն պար-
ծանք սեպելով, Հոգւոյն սրբոյ տուրք կը սե-
պէր ըսելով համարձակութեամբ, թէ Որպէս
տուեալ է ի Հոգւոյն ումեմն այսպիսի և ումեմն
այնպիսի շնորհք, և ինձ տուեալ է այսպիսի բա-
նակուսութիւն: Եւ թէպէտ Մխիթար կաթո-
ղիկոսին առեն գրամարուած Ժողովքի մը մէջ՝ ազ-
գը միաբանութեամբ մերժից Տարօնեցւոյն այս
գրուածքը, բայց շատ ժամանակէ ետք ալ իրեն

համախոհ տպագրիչ մը գտաւ ՚ի Կոստանդնուպոլիս յամի 1732։ — Ակն զատ և լատագոյն գործ մ՚ալ ունի Պօղոս, վ. Էրզ-Ջռ-ում-ի Եպիսկոպոս Եղեզեցւոյ, այսինքն պատմագիր Տօնից, Ժամակարգութեանց, Ընթերցուածոց, Ծիսից, և այլն. ուստի կից կ՚առնուն նոյն նիւթոց վրայ դրուած յետագայ մեկնիչք։

ԴԱՐ ԺԲ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ

ԺԲ դարը՝ որ մեր հայկական դպրութեան համար իրաւամբք գեղեցիկ Արծաթի դար կ'ըսուի, կ'ընծայէ մեզի նախ զՅովհաննէս Սարկաւագ վարդապետ, հայրենեաց Արցախու փառիսոս դաւառէն, իր ուսումնական և բարոյական կրթութեանը խնամատար ծնողաց դաւակ. ծնած իբրև ի կէս ԺԱ. դարու և վախճանած յամի 1129։

Սարկաւագայ հայրը՝ որ քահանայական դասուն կը վերաբերէր, և որդւոյն ազատ յառաջադիմութեանը վրայ մեծ յոյս ունէր, իրենց գիտութեամբը և սրբասէր կարգերով համբաւուած Սանահնի և Հաղբատայ վանորէից մէջ աշակերտել կուտար. հոն կ'անցընէր Սարկաւագ իր ման-

կութեան առջի տարիները . ու կը տրնէր՝ ինչպէս ինքն ալ կը վկայէ , « զօր ամենայն և զիշերն բովանդակ՝ առ Ք. համատ ցան- գութեամբ , նաև սիրովն որ առ Հանճար »։

Այդ փափարին արժանաւոր Հանճար ալ ունենալով , իր ժամանակին ու հայե- րէն գպրութեանց գլխաւոր պարծանքնե- րէն մէկն եղաւ Սարկաւագ . որով իրա- ւամբք իւր վրայ սքանչացողներէն մէկն կը կոչէ զինքը « Մեծիմաստ գիտութեամբ քան զյոլով և Հանճարեղ յամենայնի և մտահարուստ . . . յոյժ իմաստուն և ա- տուածային շնորհօք զարգարեալ »։

Իւր գլխաւոր արդիւնքներէն մէկն ե- ղաւ՝ հայկական տումարը նորոգելու հա- մար ունեցած աշխատանքը . իրմէն առաջ Մովսէս Եղիվարդեցի և ուրիշներն ջանա- ցեր էին այս բանին . բայց իրենց ջանքն անկատար կամ անգործ մնացած էր։ Սար- կաւագ կրկին աշխատեցաւ . որովհետև ուրիշներուն չհաւնած տումարը շարժական ըլլալով՝ այլ և այլ չփոթութեանց պատ- ճառ կ'ըլլար . և ուղեց հաստատուն տո- մարի մը կարգաւորութիւն ընել , և այս է Սարկաւագապիր կոչուածը , որ չկրցաւ ազգին մէջ հաստատութիւն գտնել։

Ուսանող սիրովը վառուած՝ ուղեց իւր օրինակաւն ու ջանքով կիրթ սխրժակ , ուղիղ և ճշմարիտ գիտութիւն խոթել Հայա- տանի մէջ . և այս բանիս համար մանա- ւոր խնամք ունէր մանկանց դաստիարա-

կութեանը վրայ, խրատներով անոնց և. ուղղը վառելով, և իր զօրաւոր խօսքերովը հասկըցընելով թէ իմաստութեան գանձուն հաւասարապատիւ բան չկայ։

Հաղթաւոյ առաջնորդ ալ եղաւ Սարկաւագ, և այն մեծ վանքին ուսմանց յառաջադիմութեանը դլխաւոր արդիւնքն իրեն կրնայ սեպուիլ։ Նկրքին բարեկարգութեանն համար ալ չատ աշխատեցաւ անոյշ սրտովն ու լեզուովը և հայրագութ խանդադատանօքը։

Ա.յս իր բարեմասնութեանցն համար՝ պատուական էր ամենուն առջևը, և ինչուան իշխանք և թագաւորք մեծարելին անոր հանճարը, աքանչացան արդութիւնը վրայ. և Դաւիթ Վրաց թագաւորին համար կ'ուանդեն թէ ամեն անգամ որ կը տեսնէր զՍարկաւագ՝ նախատինք չէր համարեր արքունի թագով զարդարուած դլուխը խոնարհեցընել անոր առջին և օրհնութիւնը խնդրել։

Սարկաւագայ երկասիրութիւնքը. — Սարկաւագ վարդապետին անունը կրող երկասիրութիւնքն որչափ ալ չատ ինքնուն դեղեցիկ են, բայց իր իմաստութեանը և անխոնջ փութոյն քանի մը երախայրիքն պիտի ըլլան անշուշտ. վասն զի հաւանական կ'երևնայ թէ իր գրուածներէն չատը կորսուած են, և որոնց մէջ դլխաւոր է

Պատմութիւնք՝ զոր կը յիշատակեն Կիրակոս, Վարդան, Մխիթար այրիվանեցի,

և քանի մը ընտիր հատուածներն իւր ժամանակագրութեանը մէջ կը բերէ Սամուէլ անեցի։ Կ'երևնայ թէ այս պատմութեան գիրքը երկու մաս բաժնուած էր. մէյմը Սէլճուգեանց ու Տուղրիլեանց, և Ալփասլանայ ու իր յաջորդացը վրայ. մէյմըն ալ Ալփասլանայ որդւոյն Մէլիքշահի գործքերը, որուն մահուամբը դադրեցուցած կ'երևնայ Սարկաւագ իւր պատմութիւնը։

Ա. յս կարծեաց ստուգութեանը կ'երաշխաւորեն՝ իրմէ քիչ ժամանակաւ կրտսեր՝ ու իրեն պատմութեան գիրքը կարգացող հետևեալ պատմագիրներն։ Կիրակոս կ'ըսէ. « Մինչև ցՄէլիքշահ սուլթանն՝ գրեալ էր զպատճառս տիրելոյ նոցա մեծիմաստ վարդապետն որ Սարկաւագ կոչիւր »։ Սամուէլ. « Իսկ յետ նոցա (Ալփրմուճինեանցն) Սկիւթացւոցն առնուլ զրանակալութիւնն, այսպիսի պատճառաւ բնթերցաք, գրեալ վարդապետին մեծի՝ որ Սարկաւագ վերակոչի անուանեալ. զի ասէ թէ Պարսից և Մարաց զմիմեանցք եղանելով՝ տուրևառիկ փոխոխութեամբ մինչև ցաւուրս մեր։ Յայսոսիկ նշանակաւ գրոյ եցոյց մեզ իմաստասէրն մինչև ցՄէլիք շահն, զոր յիւրում տեղւոջն գրեցից սորին ձևանաւութեամբ. իսկ զՀօրն նորա ժամանակ՝ զաբխունախանձին Ալփասլանայ, և զնորին հօրն և զհաւուց, զոր Տուղրու (Տուղրիլ) Բէկ և Մահմուտ, և Սարչուկ (Սէլճուգ)

Կիրակոս Արկաւազայ համար կ'ասէ՝ դէ թէ « գրեաց և օրինակս ստոյգ գրոց », և կ'ուզէ անչուշտ ակնարկել նոյն վարդապետին Հաղբատայ վանուցը մէջ գտած հին սաղմոսագրոց օրինակ մը՝ թարգման՝ շաց ժամանակ և անոնց մէկուն ձեռքովը գրուած : Որովհետև ատեն անցնելէն ետ՝ քը՝ անոնց թարգմանածէն գտա ուրիշ նոր թարգմանութիւն մըն ալ երեւցեր էր ազգին մէջ, աննկատար և աղաւաղ. որով չփոթութիւն կար, և բուն ստոյգ և հաւատացեալ օրինակը գտնելու համար աչխատանք կը քաշէին : Արկաւազ գտաւ բուն և իսկական թարգմանութիւնն և ազգին մէջ հրատարակեց * :

Աստուածաբանական գրուածներ ալ ունի Արկաւազ, մանաւանդ այն խնդրոց վրայ որ Յունաց և Հայոց մէջ վիճի նիւթ էին, իր կարուկ և զօրաւոր ոճովն, բայց կ'երեւայ թէ ատոնց մէջ օտար ձեռք մը տած է :

* « Ահա Ճանապարհ արարեալ (Յովհաննէս Գառնեցին է որ կը պատմէ), գնացի ՚ի մայրաքաղաքն մերոսացն ՚ի Հաղբատ, և գտի Թարգմանչացն գրած սաղմոս. զոր առեալ տուբր վարդապետին՝ Արկաւազ կոչեցեալ, այն որ զսոմոսն երեւեցոյց զհին Հային, և նա սերմանեաց զայս ուղիղ և զուղղագրեալ սաղմոս, որ ոմանց այլ և այլ երեւի ՚ի սա » :

Սարկաւագայ աշակերտաց մէջ կը յիշատակուին ԵՐԵՄԻԱՆ՝ որ Անդրէի ալ կը կոչուէր, ՍԱՄՈՒԷԼ, ԵՒԷՆ և ԱՆԱՆԻԱ։

Առանցմէ զատ նաև ՍԱՐԳԻՍ վարդապետ ԿՈՒՆԴ կոչուած, Աբարատեան գաւառէն, զոր Ժամանակակիցք «աշխատասէր և արի մշակ տեառն կը կոչեն, հմուտ և հանճարեղ խմաստիւք հոգւոյն»։ Ղուկաս և Յովհաննէս աւետարանագրաց մեկնութիւնը շարագրած է Սարգիս՝ իւր ծերութեանը հասակին, կամ Սարկաւագայ Թուականին 63 տարւոյն մէջ։ Ինքն հէղինակը մանաւանդ յիշատակարանով մը կ՚ուսանիլ թէ Եփրեմի, Կիւրղի աղէքսանդրացւոյ, Սեբիանոսի սեբնեցւոյ և Իգնատիոսի և Յովհաննու Ոսկեբերանի և Գրիգորի աստուածաբանի և Եւսեբիանոս և Նարեկացւոյն և Սարկաւագայ և Անանիայի և Նանայի համանուն երկասիրութիւնց հետևողութեամբը շարագրած է այս գիրքը, ընդհանրապէս ընծիր ոճով և լեզուով։

ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՆՈՒԿ

Առեփանոս Մանուկ, որ մանկութեան հասակէն խմաստութեամբն և արդութեամբ համբաւաւոր, աշխատիլ հրաժարելով, Շուղր անապատին կարմիր վանքն առանձնացեալ էր, իր խմաստութեամբն ալ աւելի մեծանուն հանդիսանալով, տեղւոյն ծերունի վարդապետացն հրամանաւ՝ բեմին

վրայ կ'ելլէր, ու սուրբ Հաւատոյ ճշմարտութիւնը աքանչելի վարդապետութեամբ կը քարոզէր ամենեցուն։ Նոյն ատենի վարդապետներէն ոմանք լսելով Թէ Սահիանոս անանկ տարաժամ հասակի մը մէջ քարոզութեան սկսեր է, դժկամակեցան որ ութեւտասնամեայ պատանի մը այնպիսի մեծ պաշտաման ձեռք զարկեր է, թէպէտ և յաչող հանճարով և գիտութեամբ։ Իրաւացի սեպեց անոնց դանգատը Բարսեղ կաթուղիկոս, և ուղեց անձամբ լսել անոր քարոզութիւնը, որուն վրայ այնչափ հասակաւոր հանճարներ զարմանալէն չէին դադրեր. և երբ լսեց՝ ոչ միայն իրաւունք տուաւ այլոց խօսքերուն, այլ անձամբ հանեց իր մատանին ու ձեռքի գաւազանը անոր տալով հրամայեց որ չարունակէ այն պաշտօնը՝ զոր յոգուստ փրկութեան հոգւոց այնչափ յաջողութեամբ սկսեր էր։ Երկրորդ օրն ալ կիրակի հանդիսելով՝ Գող Վասիլն իշխանութեան և հրամանացը տակ եղող գաւառներուն եպիսկոպոս ձեռնադրեց դինքը, ու կարմիր վանքին առաջնորդութիւնը անոր յանձնեց։

Երբոր Գրիգոր Վկայասէր մեռաւ, տա ինքն Սահիանոս Մանուկ անոր արձանակոնը չարագրեց, և անոր աքանչելի սրբութեանը և անարատ վարուց արժանաւոր գովաբան երևցաւ։ Մինչև որ ոչ այս և ոչ իր ուրիշ երկասիրութեանց մէկը

ձեռնէրնիս հասած է. միայն պատմութիւնն և իր աշակերտներն իր վրայի համբաւը կ՚արդարացընեն։

Այս աշակերտացը մէջ գլխաւոր են Գրիգոր Պահլաւունի և իր հարազատը Ներսէս Շնորհալի, և Յարդիս և Իգնատիոս վարդապետք։

ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ

Բարսեղ կաթուղիկոսին մահուընէն ետքը՝ իրեն մանաւոր հրամանաւը և կարգադրութեամբ՝ նոյն հայրապետական աթոռոյն վրայ նստուցին զԳրիգոր կամ զԳրիգորիս պահլաւունի՝ որ Վկայասիրին քեռորդի Ալպիրատ իշխանին որդին էր, և Ներսիսի Շնորհալւոյ երէց եղբայրը։ Ասիկայ իր ազգութեանը հասակէն նախ Վկայասիրին ու ետքը Մեհրհանոսի աշակերտելով, թէ առաքինութեամբը և թէ իմաստութեամբ անանկ մեծ համբաւ ունեցաւ, որ քանահմայ հասակին հայրապետական աթոռը նստելու արժանի երեւցաւ. և ինչպէս կը վկայէ Շնորհալին «Ցոյժ հրաշափառազոյն բանիւ և գործով քան զրազումս յաթոռակալացն գտաւ նախնեաց, ի մաքրութիւն հոգւոյ ըստ հրոյ

գոլով զուգամանութեան, յիմաստս բա-
նի և՛ի չարագրութիւնս գրոց ծայրագոյնս,
և՛ի խորհուրդ հանճարոյ՝ ըստ տէրունեան
խրատուս բարիոք խորագիտութեամբ»։
Ամմուէլ ժամանակագիրն ալ կը յաւե-
լու. «Յաղագս աստուածային շնորհի ընդ-
կալելոյ, և սրբական և մաքուր վարուցն
պատուեալ վիճակաւորութեամբ ոչ միայն
՛ի մերոյ ազգէս, այլ և յօտարասեր թա-
գաւորաց և իշխանաց և պատրիարգացն։
Ա՛ս չոգաւ՛ի քաղաքն սուրբ Յերուսաղէմ...
և անդ ծանուցեալ և իմացեալ զառա-
տահաս ծաւալումն աստուածային շնորհին
՛ի վերայ հայրապետին ազգին Հռոմէայե-
ցւոց, իշխողք աշխարհացն որ փոանգք
կոչին, և ընդ վայելչազգեաց և պատչա-
ճազեղ տեսիլ մարմնոյն՝ ծանեան և գնո-
դոյն գեղեցկութիւն, և՛ի բանս հաւա-
տոյ զճշմարտութիւն ամենեքեան, զոր պայ-
ծառ և կանոնական կարգաւ և քանոնով
վարդապետական ճոխութեամբ բարբա-
ռէր. ուրախացան հաճելութեամբ, և ա-
ռաւել սէր հաստատեցին ընդ հայրապե-
տին և ընդ ազգս մեր»։

Մեծ ջանքով եաւէտ եղաւ Գրիգոր հայ-
կական գրականութեան ծաղկելուն, և վը-
կայասիրին օրինակին հետևելով՝ իր ժա-
մանակին անուանի վարդապետացը այլ
և այլ երկասիրութիւն յանձնեց։ Ա-
մմուէլ երէց՝ իր հրամանաւը Քրոնիկոնը
կամ ժամանակագրութիւնը չարագրեց.

Իշնատիոս վարդապետ՝ Ղուկասու աւետարանչին մեկնութիւնը, Շնորհալին՝ իր այլ և այլ գրուածները, և Հաւանական կարծեօք նաև Սարգիս վարդապետ՝ կաթուղիկեայց թղթերուն մեկնութիւնը։

Ինքը Գրիգորիս ալ՝ հայրապետական պաշտօնէութենէ զատ գրաւորական երկասիրութենանց ալ պարապելու ատեն կը գանէր։ Իրենն է Աւետեաց շաբաթներ խորհուրդն անձատ, և Յաղկապարդի երկրորդման օրը երգուածը Մեծաւորաց այս խորհուրդ. Լուսաւորչի վրայ ալ ընտիր մեղեդի մը ի յիւր արևու արև։ Վկայասիրին նման՝ սրբոց վկայաբանութիւններն ալ կարգի վրայ առնելու աշխատեցաւ. և սահմանեց որ անոնց ամեն մէկուն տօնին նախընթաց օրը՝ անոնց վարքը կարգացուին. անոր համար ալ է որ ոմանք զինքը փոքր վկայասէր կոչեցին, ոմանք ալ այս երկուքին գրուածները իրարու հետ չփոթելով՝ մէկին երկասիրածը մէկալին ընծայեցին։ Սիրակոս ասոր համար կ՚ըսէ՝ ինչ որ այլք Վկայասիրին համար զուրցած են. «Սկսաւ թարգմանութիւն առնել աստուածային գրոց. և բազում գիրս ետ թարգմանել ի հայ լեզու՝ զորս ինքեամբ և զորս այլոց ձեռամբ»։

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Այն ընտիր և սիրելի տոհմին՝ որ արդէն ընծայած էր Հայաստան եկեղեցւոյ և գպրութեանց զՄաշխարոս և զՎկայասեր և զԳրիգորիոս, սերունդ էր սուրբն Ներսէս Կլայեցւի, իրաւամբ Շնորհալի կոչուած իւր վարքով, խօսքով և գրչովը։ Մաշխարոսի դստեր՝ Ասպիրատ որդւոյն զաւակ էր Ներսէս, և կրտսեր եղբայր Գրիգորիս Պահլաւունի կաթուղիկոսի. բայց թէ իր հարազատաց և թէ իր տոհմին մէջ անզուգական կրնայ սեպուիլ Շնորհալին։

Երկոտասաներորդ դարուն սկիզբը ծնաւ Ներսէս, (1102), և տղայութեան հասակէն Գրիգորի վկայասիրի արթուն և բարեպաշտ խնամոցը տակ մնացած. եաթն ալ Սեաւ լերան վրայ եղած Կարմիր վանից առաջնորդ՝ Սահակաստան Գիանաւորին աշակերտեցաւ, իրեն ուսումնակից ունենալով իր երէց եղբայրը ուզիղնաստիս և զԱարգիս։

Սրբութեամբն և իմաստութեամբ՝ իրեն հանճարոյն և կոչմանը արժանաւոր յառաջադիմութիւն ցուցընելով, իւր երէց եղբայրը Գրիգորիս երբ կաթուղիկոսական սթոռ նստաւ, քահանայ ձեռնադրեց

զինքը, ու հայրապետական աթոռը Հռոմ կրկին փոխադրելէն ետքը՝ եպիսկոպոս ալ օծեց։

Ձսխալեցաւ Գրիգորիս իւր ընտրութեանը մէջ. վասն զի Ներսէս իւր վիճակին բարձրութեանը համեմատ՝ ամէն առաքինութիւն և կարևոր բարեմասնութիւն ցոյց իւր վրայ. և ոչ միայն իւր հայրապետացը, այլ նաև Յունաց և Հռոմայեցւոց, և ինչուան այլազգաց առջև ահաւոր և համբաւաւոր եղաւ։ Ասոր երբ Գրիգորիս տարիքն առնելով՝ հայրապետական հոգոց ծանրութենէն ուզեց հրաժարիլ, արժանաւոր յաջորդ ճանչցաւ և ներկայացուց զՆերսէսի։ Փութ տանը ջանաց սա հրաժարիլ և թաքսահամբ փախչիլ այն պատուէն՝ առ որ կը կոչէին զինքը իւր սրբութիւնն և ժողովրդեան միաբան ձայնակցութիւնն. հարկ եղաւ որ հնազանդի անոնց, և երկնքէն եկած անձայն հրամանի մը։ Ան տանն Գրիգորիս հայրապետական զգեստներն անոր հագցընելով, կաթուղիկոսական կրկին գօտը գլուխը դրաւ, ու գաւազանն ալ ձեռքը տալով՝ նստուց այն աթոռին վրայ, ուսկից ինքը կ'իջնէր, ու ամենէն առաջ ինքը ողջունց զնա երկրպագութեամբ կաթուղիկոս ամենայն Հայոց։ Իրեն հետևեցան հոն գըլնուող բազմաթիւ եպիսկոպոսունք, վանահարք, երիցունք և ժողովուրդք։ Ան բազմութեան առջև՝ առաջին անգամ իր-

թև Հայրապետ՝ բացաւ իր ատաուածուսոյց բերանը սուրբն Ներսէս, ու զեղնցիկ ա-տենախօսութեամբ ցրցուց հովուական պաշտաման ծանրութիւնը, ուսկից ինքն իրաւամբ կը հրաժարէր, այնչափ հեռու տեսնելով ինքզինքը այն սրբութենէն որ իրմէ կը պահանջուէր։ 1165ին հանդիպեցաւ այս դէպքը, ու իրեք ամիս ետքը վախճանեցաւ Գրիգորիս։

Եղբօրը մահուան գոյժը հրատարակեց Ներսէս ամենայն Հայկազանց՝ ընդհանրական թղթով մը, յիշատակելով ա-նոր փոխուիլը առ Աստուած, և իր՝ ա-նոր աթոռը և իշխանութիւնը ժառանգելը. և որովհետև, կ'ըսէ, անկարելի է ինձի ըստ փափաքանացս ամէն մէկկերուդ հետ խօսիլ, և իմացընել իմ բաղձանքս՝ ինչպէս որ կ'ախորժիմ տեսնել զձեզ անխոտոր աստուածային ճանապարհաց ուղղութեանը մէջ, ուստի եպիսկոպոսաց գովելի սովորութեանը համեմատ՝ ուղեցի խրատել զամենքդ։ Աւագ հաւատոյ դաւանութիւն մը կը դնէ, ու ետքը այլ և այլ վիճականերու պատշաճական՝ սքանչելի և հայրագութ խրատներ։ Նախ խօսքը կրօնաւորաց կ'ուղղէ, զանոնք երկնից աստղաց նմանցընելով. ետքը վանաց առաջնորդներու՝ աչք կոչելով իրենց խնամոց յանձնուած միաբան եղբայրութեանց մասին. ապա առ եպիսկոպոսունս, զորս մերթ գլուխ, մերթ տէր և տնտես կոչե-

լոմ կը յորդորէ յանպակաս կատարումն իրենց պարտուցը. եւթը առ քահանայս, զորս Քրիստոսի ժողովրդեան ծնողքը կը համարի։ Ասոնք կարգաւ զգուշութեան դէղեցիկ խրատներ ու պատուէրներ կ'աւանդէ առ իշխանս, առ դինուորս, առ քաղաքականս, առ երկրագործս եւ առ ժողովրդականս, եւ յետոյ առ կանայս։ Վայելուչ եւ ընտիր հայկաբան լեզու մը գործածած է Շնորհալին այս գրուածքիս մէջ, եւ կարելի եղածին չափ պարզ ու դիւրահաս։

Այն ժամանակները կարեւոր խնդիր մը կը յուզուէր Բիւզանդիոնի արքունեացը եւ Հայոց մէջ, կրօնական միութիւն մը հաստատելու համար երկու եկեղեցեաց հետ։ Այս խնդրոյն մէջ մտած է նաեւ Շնորհալին, ու բարենպատակ վախճանին հասնելու համար այլ եւ այլ թղթեր ալ գրած, որոնք ամէնքը Պատմաւոր խնդրոյ միաբանութեան կը կոչուին։ Յունաց Ալեքս իշխանը՝ որ Կիւրեղ Մանուէլ կայսեր փեսայն էր, Շնորհալւոյն հետ անօթութիւն մը ընելով ի Կիլիկիա, երկար խօսակցութիւն եղաւ մէջերնին այս կարեւոր խնդրոյն վրայ. ու եւթը իշխանը ազատից որ բերնով խօսած ներբ ի գիր անցընէ, և առանկով սկսան թղթակցութիւնքն։ Ի Շնորհալւոյն գրուած թղթերը՝ թէ ի գիմաց եղբօրը և թէ իր կողմէն ասոնք են.

1. Թուղթ առ մեծ իշխանն Ալեքս՝ փեսայ կայսեր, Հայոց ՈԺԴ (1165) Թուականին

գրուած, այսպիսի սկզբնաւորութեամբ. «Բանիւք գուշնաբեայ իմն խօսելով». յորում նախ համառօտիւ Հայաստանեայց եկեղեցւոյ հաւատոյ դաւանութիւնը կ'ընէ, ու ետքը Յունաց կողմանէ առարկուած այլ և այլ տարակոյսներուն պատասխանը կու տայ յաղագս կարգաց եկեղեցւոյ և սոնից։ Այս թուղթը ընդունելով Ալեքս, երբ իրեն իշխանութեան համար սահմանուած աւետը լմընցաւ՝ իկոնաստգնուպոլիս գառնալով՝ Մանուէլ կայսեր ներկայացուց այն թուղթը. որ զարմացաւ, կ'ըսէ պատմիչը, տեսնելով այն խօսքերուն մէջ պարունակուած խմաստից զօրութիւնը. անոր համար փութաց արձակել պալատին ներքինեաց մէկը, և թուղթ մը տուաւ անոր ձեռքը, ուղղեալ առ Գրիգոր կաթուղիկոս, որպէս զի հրաման և հաւանութիւն տայ իւր եղբօրը՝ երթալու ի Բիւզանդիոն առ ինքնակալն։

2. Թուղթ առ կայսրն Մանուէլ, պատասխանն առ Գրիգորիս կաթուղիկոս գրուած թղթին, որ այն աւուրն վախճանած էր։ Շնորհալին ծանուցանելով իւր եղբօրը մահը, կ'իմացընէ թէ հայրապետական զգբաղմանց յաճախութիւնը չներելիրեն թագաւորին փափաքը կատարել։ Բայց կ'իմացընէ իւր կատարեալ հաճութիւնը առաջարկուած միաբանութեան համար, ու այս թղթին մէջ ալ Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութեանցը և աւանդու-

թեանց վրայ խօսելով՝ կը լմընցընէ դիրը, յիչեցընելով թէ ինչպէս Յանացողաց հաւրեւրապատիկ կը պաղաբերեն աւետարանական սերմանց արգասիք սէրն ու խաղաղութիւնն։ Կայսրն ընդունելով այս թուղթը, և միչտ զարմանալով նամակագրին իմաստուն խօսքերուն վրայ, ինքն ալ ուրիշ գիր մը գրեց, ու Թէոդորիանէ ճարտար իմաստասիրին ձեռքը տուաւ, որպէս զի թուղթին պակասը բերնով լեցընէ։

3. Ի յն ատեն Շնորհալին ուրիշ երկրորդ թուղթ մը գրեց առ Մանուէլ կայսր, և ո՛րովհետև Յոյնք թէ կայսեր թղթովը և թէ Թէոդորիանեայ ձեռքով այլ և այլ տարակոյսներ հաներ էին Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեանն ու կարգաց համար, հարկ կ՚ըլլար Շնորհալւոյն այս նիւթերուն վրայ դարձեալ գրել, ի խնդրոյ նոյն Թէոդորիանեայ։

4. Դարձեալ առ կայսրն երրորդ համառօտ թուղթ մը, յորում կը ցուցընէ Շնորհալին թէ Հայերը ինչ մտքով մի բնութիւն կը դաւանին ի Քրիստոս, ըստ վարդապետութեան սրբոյն Կիւրղի։

5. Նոյն խնդրոյն վրայ դարձեալ թուղթ մը առ Միքայէլ պատրիարքն Յունաց, ընտիր ու գեղեցիկ չարադրութեամբ։

6. Եւ որովհետև այս միութեան խընդիրն ըստ արժանւոյն ի գործ դնելու համար՝ հարկ էր նաև ընդհանուր Հայաստա-

Նեայց Հաճուբիւնն ընդունիլ, այս պատճառաւ Շնորհալին թուղթ մը գրեց առ եպիսկոպոսունս և վարդապետս Հայոց, Աղուանից աշխարհէն մինչև ի Կեսարիա և յարեւմտեան կողմանս, որպէս զի եպիսկոպոսունք և վարդապետք և վանահարք միաբանելով՝ քննեն ի ցունաց առաջարկուած միութեան խնդիրը, և անանկ պատասխանեն։ Բայց երանելին այն թղթոյն պատասխանը չընդունած, նոյն տարին փոխեցաւ առ Քրիստոս (1172) յամսեանն օգոստոսի։ Ձոր լսելով կայսրն հառաչեց ու ըսաւ. «Մեծ ու արիւն ըղգայարան մը վերցուեցաւ այսօր Աստուծոյ եկեղեցիէն. Հայաստանեայք զրկուեցան իրենց կրկին Լուսաւորչէն»։

Թէ Ընդհանրականն և թէ Միաբանութեան թղթերն շատ անգամ տպագրուած են. առաջինն նաև թարգմանեալ ի լատին լեզու և տպագրեալ ի Վենետիկ ի Ղազար. յամին 1839, և ուրիշ գործքերով ժէկտեղ՝ ի 1853։

Շնորհալւոյն երկասիրութիւնքը. — Ոչ միայն իրրև հայրապետ եկեղեցւոյ մեծարգոյ և սիրելի է Շնորհալւոյն անունը, այլ իրրև ընտիր մատենագիր մըն ալ դըպրութեանց պատմութեանը մէջ նշանաւոր տեղ գրաւած է։ Իրեն աթոռոյն և նախնեացը արժանաւոր է՝ երբոր պաշտամանը և հոգւոց փրկութեան նախանձովը վառուած՝ թուղթեր կը շարադրէ, և իր վիճակին ամեն կողմերը կը տարածէ իր

փրկարար վարդապետութիւնն ու քաղցր և հաճոյական լեզուն. երբոր եկեղեցւոյ բեմերուն վրայէն սուրբ աւետարանաց մեկնութիւնը կ'ընէ. և երբ հայրապետական հոգերէն ու 'ի մտածմանց ծանրացեալ մտքին՝ ախորժական պարապմունք մը հնարելու համար՝ հոգևոր երգեր, քերթուածներ և ինչուան հանելուկներ կը շարադրէ:

Այս երկասիրութեանց վրայ խօսելու համար՝ երկու դաս բաժնենք զանոնք. ոմանք արձակ, և ոմանք ալ ոտանաւոր գրուածներ:

Արձակ գրուածոց մէջ գլխաւորներէն կրնան սեպուիլ իւր զանազան թուղթերը. և որոնց մէջ առ ընդհանուր հայասեր ազին և առ Յոյնս գրուածին վրայ խօսեցանք: Հիմայ մնացածներուն համառօտիւ յիշատակենք:

Գիր շրջաբերական 'ի կողմանս արևելից 'ի կարս. — Շնորհալւոյն հայրապետութեանը ժամանակ՝ կարս քաղաքին Աբրահամ եպիսկոպոսը վախճանելով, քաղաքացւոց առաջարկութեամբ և բարի վկայութեամբ անոր յաջորդ ընդրուելուցա խաչատուր անուն քահանայ մը: Շնորհալին քննելով անոր վարքը, և իմանալով արժանաւորութիւնը, եպիսկոպոս ձեռնադրեց զինքը. ու իր վիճակը դրկելու առնէր՝ մտանաւոր շրջաբերական գիր մը տուաւ ձեռքը, օրհնութեան նամակ մը. որուն

մէջ կ'իմացընէ Նորընտիր այցելուին գալուստը. և հայրագութ սրտին և խոհական իմաստութեանը արժանաւոր խրատներ կու տայ քաղաքացւոց, թէ անոր և թէ իրարու հետ վարուելու համար։

Բան մխիթարութեան առ վտանգեալս մաղմնով. — Շնորհալւոյն հայրապետութեան օրերուն՝ դժնդակ ուրկութեան մատ մը երևցաւ բոլոր Կիլիկիա քաղաքին մէջ. ու բնակչաց մէջ ճարակելով՝ առողջ մը նացողները չէ թէ միայն լոկ նախապատհասութեան համար սկսան հեռու կենալ անոնցմէ, հապա նաև այն հիւանդութիւնը աստուածային պատուհաս մը սեպելով՝ սկսան նախատել ու արհամարհել բռնուածները։ Անոնք ալ ցաւագին ու վշտահար սրտով գանգատանաց նամակ մը գրեցին առ Ներսէս, խմացընելով իրենց խեղճ վիճակը։ Ընդունեցաւ Շնորհալին անոնց թուղթը, ու իրեն հայրագութ սրտին բնական սիրովն ու գթով՝ այն խեղճութեան և թշուառութեան վրայ արտասուօք լեցուեցաւ, և սրտաշարժ գրչով ու լեզուով մխիթարութեան նամակ մը գրեց անոնց։

Յաղագս Աբեղդնացւոց դարձի. — Սամոսատիա քաղաքին Թորոս քորեպիսկոպոսը՝ իր քահանայակիցներովն և իշխանաց համախոհութեամբ Թուղթ մը գրեց առ Ներսէս, ծանուցանելով թէ ինչպէս իրենց քաղաքին մէջ բնակող Աբեղդիք՝ իրենց

հնթանոս կրօնքէն հրաժարելով, կը փա-
փաքին քրիստոնէական հմմարտութեան
հետեւիլ. Ներսէս պատասխանը գրից, ի-
մացընելով թէ ինչպէս այդ Աբեւորդիքը
եկան մինչեւ առ ինքն ալ, և նոյն խնդիրքն
ըրին։ Այն առաջարկութեան վրայ՝ մեծ
ուրախութիւն ունեցաւ Ներսէս. որով-
հետեւ Աբեւորդիք՝ ազգաւ հայ էին, ու ի-
րենց մէջ սովորութիւն եղած էր իրրեւ
Աստուծոյ պաշտօն մատուցանել արեւու
և բարւոյ ծառոց. և թէպէտ սուրբ Լու-
սաւորիչը իւր քարոզութեանն առեն չատ
աշխատեցաւ զանոնք ի հաւատս ածելու
համար, բայց բոլորովին վախճանին չկրցաւ
հասնիլ. որովհետեւ անոնք հաստատուն
մնացին իրենց մոլորութեանը մէջ։ Բայց
կ'երեւնայ թէ առեն անցնելէն ետքը՝ մեր-
ձակայ քրիստոնեայ ժողովուրդներէն ալ
այլ և այլ աւանդութիւններ առնելով,
կամաւորէն թիւրութեանց հետ՝ քանի մը
քրիստոնէական պաշտամունք ալ խառն
կը յարգէին։ Շնորհալին այս թղթին
մէջ ուրախութիւնը և սրտին գոհութիւնը
յայտնելէն ետքը, զանոնք աչակերտելու
և բնդունելու կերպը կը սորվեցընէ։

Աւ Պօղոս քահանայ հայկագն. — Շատ
անգամ առիթ ունեցանք յիշելու թէ ինչ-
պէս Շնորհալւոյն և իւր նախորդին ժամա-
նակ՝ թէ ի Յունաց և թէ ի Հայոց բանա-
կցութիւնք կ'ըլլային, և հաւատոց միաբա-
նութեան փափաք մը ու ջանք կ'երեւնար։

Նոյն ատեններըը՝ Պօղոս անունով Հայկազն քահանայ մը որ՝ի Կոստանդնուպօլիս կը բնակէր, ու ազգութիւնը ուրանալով՝ հռոմայցած էր, կը բամբասէր մեր ազգը. և ձեռքէն եկած ամեն հնարքը կը բանեցընէր այն միաբանութեան խորհուրդը ընդունայնացընելու համար. և իր կնոջ պարգեւները կ'իմացընէր՝ի Հայաստան եղող իր մէկ համախոհ գործակցին՝ որ Ամուէլ կը կոչուէր: Իմացաւ Ներսէս անոր այս ընթացքը, և յանդիմանողական գրով մը ուղիղ դիրքը յուղղութիւն բերել:

Ա. Ժպիրն ոմն. — Ա. յս վերնագրով և բնաբ թուղթ ունի Շնորհալին առ ոմն ժպիրն և յանդուգն, որ ինչպէս կ'երևնայ, սրբոյն միաբանասէր և աստուածահաճոյ Ջանից հակառակելով, բաւական չէր սեպեր անոր դէմ՝ի ծածուկ մնդրևնայել, այլ իր մտածմունքն և թշնամանքը կը համարձակէր մինչև առ սուբըն Հայրապետ յանդիմանողական և նախատալից գրով: Հեզութեամբ, բայց այսպիսի լրութիւն մը չանչանչանչանչ ու ժողովեամբ գրուած են Ներսիսի այս թուղթերը:

Ա. Մանիքեանս ոմն. — Մանիքեանս անունով մէկը խնդրած էր՝ի Շնորհալւոյն որ Դաւիթ Անյաղթի Սահմանաց գրքին վերջին գլխոյն մեկնութիւնը իրեն շնորհէ. Ներսէս կատարեց անոր խնդիրքը, և համաօտ նամակաւ իրեն ձեռքը հասուց:

Ա. երջանիկ վարդապետն Գէորգ, իրեք համաօտ թուղթեր:

Հրաշագեղ նկարող. — Եկեղեցւոյ գըլխաւոր վարդապետ մը, Աբիսագացին, իր երկնասլաց և գերազոյն հանճարը գործածեր էր ի գրաւառել այն երկնաւոր զօրութիւնքը՝ որ պաշտօնեայք են աստուածութեան, և միանգամայն պահապանք մարդկային հոգւոց։ Նոյն նիւթին վրայ գրեց նաև Շնորհալին գեղեցիկ նկարագիր մը, Աբիսագացւոյն հետևելով, և չատ անգամ անոր խմաստները մէջ բերելով։ Ակնկատ է՝ Շնորհալւոյն միայն աս գըրուածին մէջ երևցած յունարանութիւնն ու խրթնութիւնը։ Նկարողն գաղ՝ ոտանաւոր գովեստ մըն ալ չարագրած է Շնորհալին, ու երկուքն ալ ի Հռոմկլայ երկասիրած, Հայոց ՈԺՍ. թուականին, իր եղբօրը Գրիգորիս կաթուղիկոսին խնդրանօքը։

Մեկնութիւն Բարձրացուցեալ. — Գաւիթ Անյաղթին վրայ խօսելու առենիս յիշատակեցինք թէ սուրբ Խաչին վրայ ներբողմը չարագրած է. «Բարձրացուցէք զձեր աստուած մեր» սկզբնաւորութեամբ։ Բայց որովհետև Գաւթի ոճը իր խրթնութեամբը չատերուն անիմանալի եղած էր, ուստի Հաղբատայ վանից առաջնորդ Վարդան վարդապետ խնդրեց ի Շնորհալւոյն որ այն ճառին մեկնութիւնն ընէ. և թէ ինչ առթով եղած է անոր գրութիւնը։ Շնորհալին ալ կատարեց անոր խնդիրը։

Մեկնութիւն Մատթէի. — Մատթէոս ա-

Աստարանապրին մեկնութեանն ալ ձեռք զարկած էր Շնորհալին՝ իւր կենաց վերջի տարիները, և չկրցաւ գլխաւորել, կէս մը օրհասին վրայ հասնելովը, կէս մըն ալ իւր հայրապետական հոգոց պատճառաւ։ Ընդհանրապէս Ռակկերանի հետևող եղած է սուրբն՝ իւր այս աշխատասիրութեանը մէջ. բայց տեղ տեղ ալ անոր համառօտախօսութիւնը ընդարձակելով զինչիկ ոճով և վարդապետութեամբ։ Ինքը հաստուցած էր մինչև աւետարանչին այն խօսքը, « Մի համարիք եթէ ևկի լուծանել զօրէնս ». յետոյ առաջ տարաւ և աւարտեց Երզնկացին։

Մեկնորիւն կաթողիկեայց. — Նոյնպիսի ոճով և լեզուով, բայց աւելի համառօտութեամբ մեկնած է Շնորհալին նաև ևօթն կաթուղիկեայց Թղթերը, հետևելով Ռակկերանի, Կիւրղի, Բարսղի, Գրիգորեանց և այլոց վարդապետաց։ Գաղափարողաց մէկը աստնկ կը դրուատէ Շնորհալւոյն այս գրուածքը. « Որ՝ի սրբազանից առաջնորդաց՝ հայրապետական արժանապեալ շնորհի, և վարդապետական վիճակեալ աշխարհին՝ տէր Ներսէս, մականուամբ Կլայեցի, համասիրացն հետևելով պարուց, երկասիրաբար ընթերցմամբ աշխատեալ՝ի մատեանս հոգևկիր արանցն, աստուածազան գլխաւորաց առաքելոցն դասուց, մանրամասն խոհզմամբ եդեալ առընթեր գլուծումն տեսութեան ասացե-

լոցն, զեղեցկանկար բառիւք, համառօտ յարմարութեամբ. ըստ կարգի զերջանկացն դասուց պուետիկոսաց սրբոց, ի հրահանգ կրթութեան եկեղեցւոյ պաշտամանն»*:

Շնորհալւոյն մանր երկասիրութիւնները. — Ասոնց մէջ առաջին կրնայ անպուիլ իրաւամբ իւր անսակին մէջ անհամեմատ «Հաւատով խոստովանիմ» զերազանց աղօթքը. քանի՜ հոգիներ ասուն օրուան նոյնչափ ժամուց համար՝ ամէն հասակի ու պիտոյից յարմար աղօթք մը:

Շնորհալւոյն երկասիրածն է նաև Սբրբոյն Մարգսի վկայաբանութիւնը: Հայրապատակ ուխտին առաջնորդ Գէորգ վար-

* Ուրիշ յիշատակագիր մըն ալ կ'ուսանդէ թէ Գրիգորիս կաթուղիկոսը, զոր «մեծ դիանական և վեհափայլ առաջնորդ» կը կոչէ, մանաւանդ նամակով ու թախանձանօք հրաւիրեց ի Հռոմ կլայ՝ Ցերացու Սահմանոս անունով ծերունի քահանայ մը, որուն խնամութեան և փութոյն վրայ մեծ համարում կը ցուցընէր կաթուղիկոսը: Ծերունին իւր հոգևոր պիտոյքը հրամանին չկարենալով դէմ կենալ, յանձն առաւ այն ճանապարհորդութիւնը, հետը առնելով նաև Յակոբ անունով Ճարտար ընդօրինակողը. հոն տեսնելով Շնորհալւոյն աշխատասիրութեամբ մեկնուած կաթուղիկեայ թղթերը, հրամայեց Յակոբայ որ անոնց գաղափարը առնէ: Եւ այդ օրինակը կը գտնուի Մխիթարեանց մատենադարանը ի Վենետիկ:

պապետը թուղթ մը գրեց առ Ներսէս, փափաքելով սրբոյն Սարգսի հարազատ վկայաբանութիւնն ունենալ։ Ան ալ Միխայէլ անունով ասորի քահանայի մը յանձնեց, որպէս զի ասորական բնագրէն Թարգմանէ՛ի հայ. բայց որովհետև թարգմանիչը՝ հայկական լեզուի հարկաւոր հմտութիւնը չունէր, անոր համար Շնորհալին՝ անոր անհարթ ոճը մաքուր և ընտիր հայերէնի վերածեց, իւր եպիսկոպոսութեանը ժամանակ։

Նոյն աշխատանքն ունեցաւ նաև Ոսկեբերանի ներբողին վրայ, զոր խօսած էր ի պատիւ սրբոյ Լուսաւորչին. և զոր կ՛ակնարկեն՝ Շնորհալւոյն ինքնագիր յիշատակարանին հետևեալ խօսքերը. «ի Թուականիս ՇԶ՝ թարգմանեցաւ ճառս ի յունականէն ի մերս, ի ձեռն Աբրահամու զրամատիկոսի, ի հին և յոյժ օրինակաց. իսկ յարմարեցաւ ըստ բանից դպրութեան և բառից՝ յիմոյ նուաստութեան Ներսիսի, հրամանաւ տեառն իմոյ և հարազատի՝ Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի»։

Թրատ ժամերգութիւնք. Շնորհալւոյն ժամանակ եկեղեցական արարողութեանց մէջ այլ և այլ նորաձևութիւններ ու սխալմունք մտած էին, զորս հարկ էր ուղղել։ Եւ որովհետև Աբեղայից ու Թեղենաց վանքերուն մէջ աւելի հաւատարմութեամբ կը պահուէին այն արարողութիւնք, Շնոր-

հալին հմտացաւ անոնց, ու ըստ այնմ իրենց առջի ձևին վերադնելով՝ մանաւոր խրատ մըն ալ աւանդեց անոնց զգուշաւոր պահպանութեանն համար։

Շնորհալի բերող. — Ոչ միայն արձակ, այլ նաև դանազան քերթողական երկասիրութիւններ թողուցած է մեզի Շնորհալին։ Բանաստեղծութիւնը՝ որ քիչ յարգ ու յաջողութիւն գտած է մեր հին գրականութեանց պատմութեան մէջ, Ներսէսի գրչովը աւելի ծանօթացած ու հաստատուն կանոնի մը մէջ մտնելու բազդն ունեցեր է. և թէպէտ աչքառիչ ու խանդը, որոնցմով քերթողական լեզուն սրատաչարժ ու ազդու կ'ըլլայ, նուազ է՛ի Շնորհալին քան թէ՛ի Կարեկացին և՛ի Մագխտոց, բայց լեզուի դեղեցկութիւնը, իմաստից փափկութիւնն և հաստատուն կանոն մը՝ աւելի կը տեսնուի իր գրուածոցը մէջ։ Մեծ ու գլխաւոր թերութիւն մը՝ յանգի միակերպութիւնն է, զոր յԱբբացւոց սովրելով՝ սկսած էր գործածել նաև Մագխտոց. բայց աւելի նմանաձայնութիւն և միակերպութիւն մը տուաւ անոր Շնորհալին, և անով թերևս քիչ մը տաղտկալի ըրաւ իր ոճը։ Սակայն և այնպէս պէտք է որ յարգի սեպուին Ներսէսի այս գրուածները. վասն զի իրեն ժամանակը՝ բանաստեղծութեան դար չէր. ու երբ բոլոր աշխարհը՝ գինուց և աշխարհակալութեանց գրազած՝ արհամարհոտ մոռացութեան մը դատապարտած

*էր զբնաւր , անոր ձայնը նուաղ՝ բայց ա-
խորժական եղանակով Հայաստանի մէջ
կը հնչէցընէր Շնորհալին . ու կը լսեցընէր
աստուածային պաշտամանց մէջ՝ իրեն սի-
րելի շարականներովը , ու՛ի ժողովրդեան՝
շարադրած ընտիր վիպասանութիւննե-
րովն , ողբերովը , ու զանազան՝ սրտի ու
մտաց հետ խօսող՝ երգերով և տաղաչա-
փութեամբք . ինչուան Հռոմկլայի բերդին
պահպանութիւնն ընդդէմ պինուորը , պատե-
րազմի փողոց ահաւոր ձայներէն լռելով ,
ու հայրենեաց ապահովութեանը համար
հսկելու սոխպուած գիշերային ժամերը՝
անոր շարադրած աստուածազգեցիկ եր-
գերովը կ՚անցընէին՝ :*

*Այս քերթողական երկասիրութեանց
մէջ ամենէն նշանաւորն է ,*

*Եղեսիոյ ողբը . — Եգեսիա՝ Միջագետաց
հնահաստան քաղաքը , Աբգարու թագաւո-
րութեանն աթոռը , և Քրիստոսի անձե-
ռագործ դաստառակին պատճառաւ նուի-
րական սրբավայրը , 1144 թուականին՝ Հա-
զարացւոց Զանգի ամիրային պինուցը չկա-*

* « Արար նա երգս և ուսոյց իսկ այնոցիկ ողբ
պահէին զբերդն (Հռոմկլայու) . զի փոխանակ
վայրապար ձայնից զայն ասացեն . որոյ սկիզբն
է՝ի սաղմոսէն Դաւթի . Ցիշեցի՝ի գիշերի զանուն
քոյ տէր . և այսպէս խորհրդաբար ըստ կարգի ,
Ջարթնիք փառք իմ . որ այժմ ասի յեկեղեցի՝՝ի
ժամ գիշերային պաշտաման » : Կիրակոս պատմ.:

բենալով դիմանալ, ստիպուեր էր իր ան-
կախութեանն ու հաւատոց ՝ի շնամին՝ իր
պարտպացը մէջ ընդունիլ։ Ա՛հաւոր և դը-
ժընդակ կոտորած ու աւերմունք մը՝ կա-
բպետ ու հետեւանք եղաւ այս յաղթու-
թեանը. բնակչաց շատը՝ անգութ և ան-
յագ սուսերաց մատնուեցան, նկեղեցիք
կործանեցան, ու քաղաքը աւարեցաւ։
Ա՛յս սրտաճմլիկ լուրը հասաւ մինչև ՝ի
Հայաստան, և անոնց ՝ի շնաւատութեան
աղէտը՝ ՝ի գութ և ՝ի կարեկցութիւն շար-
ժեց զամենքը. յորոց Ա՛պիրատ իշխանն՝
Շնորհալոյ եղբօրորդին՝ փափաքելով այն
ցաւալից կործանման ու ՝ի շնամեաց ան-
գթութեան տխուր յիշատակը կենդանի
պահել ապագայից մտքին ու սրտին մէջ,
խնդրեց ՝ի Ներսէսէ որ իրեն բանաստեղ-
ծական աշխոյժը բանեցընէ այս նիւթին
վրայ։ Ա՛նոր խնդրանացն արդասիք է ե-
դեսիոյ ողբը, 1053 տուն քերթուած։

Երեք տպագրութիւն ունեցած է այս քերթուածս. մէկն ՝ի Մատրաս (1810) և երկու անգամ ՝ի Փարիզ, ա-ռաջինը հանդերձ ծանօթութեամբք. (1827, 1829)։

Յիառս որդի. — Հին և նոր կտակարանի համառօտ պատմութիւն մը կրնայ սեպուիլ այս ընտիր և սրտաշարժ ոտանաւոր քեր-թողական երկասիրութիւնը, երեք մասն բաժնուած, և ընդհանրապէս զղջական աղօթքի և մաղթանաց ձեւով և լեզուով շարադրուած։ Կամաւ քերթողաբար գրած

է այս երկասիրութիւնս Շնորհալին, որ պէս զի ընթերցողաց ձանձրութեան առիթ չտայ. այլ մանաւանդ զուարճութեամբ կարդալոս, և այն՝ իրենց հոգևոր պըտղովը: Հայոց Ո (1151) թուականին չարադրուած է այս գիրքս, և յիշատակարանին մէջ կը յիշատակէ հեղինակը իր ծնողքը և վասիլ եղբայրը, և զոյգն իր Մարիամ ու անոր վահրամ որդին: Երոպացի հայերէնագիտաց մէկը, Յակոբ Վիլղ, մատնած արդարև ատառաժային կը կոչէ այս գիրքը:

Նման երկասիրութիւն մըն է նաև Բան հաւատոյ կոչուածը: Հայոց վերջհարիւր թուականին՝ երբ Յունաց իշխանութիւնը կը տկարանար, ու անոր հակառակամարտ Հագարացւոց զօրութիւն մը բոլոր աշխարհի կը տիրապետէր, այն նեղութեան ժամանակ Գրիգորիս կաթուղիկոս Պռվը զղեկէն ելլելով՝ Հռոմկլայի ամրոցը կ'ապաւինէր, իրեն ընկերակից ունենալով զեղբայրը՝ Շնորհալին: Ա.յն առանձնութեանը մէջ չարադրեր է Ներսէս այս խրատական ու ջերմեռանդ գրուածը, նուիրելով դարձեալ իր եղբարցը և ծնողաց համատոհմից յիշատակին:

Յաղագս երկնից և զարդուց նոցա. — Մը խիթար անունով բժշկապետ ու աստեղագէտ մը, որ է ինքն Հերացին, խնդրեց ի Ներսիսէ որ երկնաւոր զարդուց վրայ ո. տանաւոր քերթուածիւն մը յօրինէ: Ա.յս

վախճանաւ գրուած են երկու չափաբե-
րական գրուածներն, յորոց երկրորդին
առնց սկզբնագիրքն կը յօդեն, « Մխի-
թար բժիշկ, ընկալ՛ի Ներսիսէ զայս բան »:

Վիպասանութիւն. — Հայոց համառօտ
պատմութիւնը, ուխտաեան առանաւորի
վրայ առնուած, հեղինակին մանկութեա-
նը գրուածքն է. անոր համար ոչ ուրիշ
քերթողական երկասիրութենանցն աշխոյ-
ժը և ոչ ալ արուեստն կ'երևայ ասոր մէջ.
թէպէտ և իրրև պատմութիւն՝ ունի իրեն
մասնաւոր արժէքն ու պատուականու-
թիւնը:

Շնորհալին ունի նաև ուրիշ այլ և այլ
մանր առանաւոր գրուածներ, որոնց միայն
անուանց յիշատակութեամբը զոհ կ'ըլ-
լանք. և են « Իմ եղական » և « Մխչա
էիդ », զոր գարձեալ՛ի խնդրոյ Հերացւոյն
երգած է. « Ներրող սրբոյ խաչին », որ
Անյաղթին՝ նոյն նիւթին վրայ գրած ճա-
ոին առանաւոր յարմարութիւնն է. « Մաղ-
թանք առ սուրբ հրեշտակս », ի խնդրոյ
Գրիգորիսի կաթուղիկոսի. « Ի Աղթմոն,
ցիշատակարան գրոցն Աղթմոնի », այլ և
այլ տաղեր, թուղթեր, խրատներ, ու Հա-
նելուկներ:

Առնցմէ դուրս են Շարականները, ո-
րոնց վրայ զատ պիտի խօսինք:

ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Գրիգորի կաթուղիկոսի պահլաւունւոյ և Ներսիսի Շնորհալւոյ և Սարգիս վարդապետին աշակերտակիցն էր Իգնատիոս, որ փառօք իւր ուսումնական ընթացքը կատարելով կարմիր վանքին մէջ, Սեաւ լերան Շափիր անապատը կամ վանքը առանձնացաւ։ Ու երբ խոնարհութեամբ կը ջանար ինքզինքը այն լռութեան մէջ ծածկել, Պահլաւունի կաթուղիկոսին հետաքրքրութիւնը զտան զինքը, և անոր հմուտ, վարժ և աստուածաբան գրչին յանձնեց Ղուկասու աւետարանչին մեկնութիւն մը շարադրել։ Իր մտայ չափաւորութիւնը և խօսքին անբասականութիւնը մէջ բերելով՝ հրաժարեցաւ Իգնատիոս. և երբ հայրապետը իր ամէն ջանքովն և յորդորանքներովը չկրցաւ զինքը համոզել, օր մը անսպասելի մէջ տեսաւ Իգնատիոս լուսաւոր և գեղեցիկ տուն մը՝ յորում ժողովուած էին ամենայն վարդապետք, և ուրից որ ինքն ալ մտնէ մէջերնին. բայց անոնք կ'արգելուին ու չեն թողուր, որովհետև չուզեցիր, կ'ըսէին, աւետարանի մեկնութեան թարգմանութիւնը յանձն առնուլ, հոս մեզի հետ մնան և բաժին չունենաս։ Այս տեսլեքէն ինքնի-

բեն եկաւ Իգնատիոս. ու իր տկարութիւնը Աստուծոյ առջեւը դնելով՝ իրմէ զօրութիւն խնդրեց. և 1146ին սկսաւ այս գրքոյկը շարադրել։

Վարպետ գրուածքի մը ամեն կարևոր հանգամանքները պահած է Իգնատիոս իր երկասիրութեանը մէջ. ընտիր ոճ, գեղցիկ լեզու և մեծ հմտութիւն սրբազան գրոց։ Այս վերջինիս նկատմամբ՝ որ աստուածաբանական և մեկնողական գրքի մը համար ամենահարկաւոր է, ջանացած է Իգնատիոս յոյն եկեղեցւոյ հարց գրուածոցը կատարեալ հմտութեամբ ձեռք զարնել այս գրուածքին, մանաւանդ Ոսկեբերանի։ Մէջին ոճ մը բռնած է հեղինակը. ոչ խիստ երկայն՝ որ բառիչ չաուութեան մէջ իմաստները կորսուին, և ոչ այնչափ համառօտ՝ որ սուրբ գրոց մեկնութեան հարկաւոր տեղուանքն անբացատրելի մընան։ Աւելի է իրեն յատուկ ճարտարութիւնը. որով շատ անգամ այլոց երկայն բարակ բացատրածները՝ ինքը համառօտիքիչ խօսքի մէջ ամփոփելով կը գրուցէ. և երբեմն ալ անանկ վայելուչ կերպով կ'ընդլայնէ իր խօսքերն՝ որ ամենևին տաղտկութիւն չիբերեր ընթերցողին վրայ։ Լեզուի նկատմամբ ալ՝ ընտիր և գեղցիկ շարադրութիւն մը ունի, պարզ և հաճոյական։

Այս գրուածքս կրկին անգամ տպագրուած է ի Կոստանդնուպոլիս ի 1735 և ի 1824։

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Իգնատիոսի և անոր ընկերացը ար-
կերակից էր Սարգիս, անոնց հետ մկ-
տեղ կրթուած Ստեփանոսի ձեռացը և
խնամքին տակ՝ ի կարմիր վանս: Հասակն
առնելէն ետքը՝ առանձնութեան սիրող
ըլլալով՝ Անաւ լերան վրայ եղող Քարա-
չիթաւ վանքը քաշուեցաւ: Հոն բոլորո-
վին հոգևոր և ուսումնական կենաց նուի-
րելով ինքզինքը, սրբոց Հարց գրոց ըն-
թերցմանը պարապեցաւ, և մանաւանդ
Ոսկերբերանի հրաշալի ճառերուն: Այն
ընթերցմունքը՝ փափաք մը ներշնչեց իր սրբ-
սին մէջ՝ նոյնպիսի ոճով ու արուեստով՝ կա-
թուղիկեայց կոչուած եօթն առաքելական
Թղթոց մեկնութիւնն ընելու. և իր այս յօ-
ժարութեանն դլխաւոր պատճառն այն ե-
ղաւ որ նման երկասիրութիւն մը չէր գը-
տած ազգային մատենագրութեանը մէջ:

Մեկնողական դրքի մը ամեն կարևոր
յատկութիւններն ունի Սարգսի այս գը-
րուածքը. ողջամիտ վարդապետութիւն,
եռանդուն լեզու և սուր քննադատու-
թիւն, որոնցմով արժանապէս յարդ գը-
տած է: Ընդհանրապէս հետևող է Դրի-
դորի աստուածաբանի, Կիւրղի, Բարսղի
և Եփրեմի, և ատոնցմէ ամենէն աւելի

սրբոյն Ոսկեբերանի։ Այս նմանողութիւնը՝ որ ըստ ինքեան գովելի է, ունի նաև իրեն թերութիւնները. անչուշտ մեծապէս սրանչանալով անոր հանճարոյն և սրանչելի դրչին վրայ, և չկարենալով ասոր նման ելեղ մը գործածել, հարկ սեպեր է Սարգիս շատ տեղ նոյն ինքն Ոսկեբերանի զուարցուածքներն, ճարտասանական ձևերն և աչխոյժը, երբեմն նաև չարագրութիւնն ալ եղանակը գործածել։ Սակէց է այն նմանութիւնը որ այս երկու դրիչներուն մէջ կը տեսնուի։

Իրրև մաեռնագիր՝ ընդհանրապէս այն դիղեցիկ յատկութիւնները ունի, թէպէտ և նուազ աստիճանաւ, որ բոլոր աչխարհի սիրելի և զարմանալի գրած են Ոսկեբերան հայրապետին երկասիրութիւնը։ Պերճախօս լեզու մը կը բանեցընէ, ու իր օրինակագրին պէս՝ ամեն հնարք և ջանք կը գործածէ՝ մարգկային սրտից մէջ արժանացած կրիրն անհետ ընելու. անոր հակառակ՝ անոյշ ու փափուկ լեզու մը կը բանեցընէ առաքինութիւնը գրուատելու համար։ Իր գլխաւոր պակասութիւնը թերեւս չափազանց երկարաբանութիւնն է. և շատ ուելի մեծ պատիւ բրած կ'ըլլար թէ իրեն և թէ հայկական մատենագրութեան, թէ որ ասոր մէջ ալ ուղենար՝ կամ կարենար Ոսկեբերանի հետևիլ։ Անշուշտ այս պակասութիւնս ինքն ալ խմանալով՝ ծերութեան տեսնը, յամին 1166, համա-

ուսուցիչն մ՚ալ գրեց նոյն մեկնութեան գրոց։

Այսկէ զատ է ուրիշ նման երկասիրութիւն մ՚ալ՝ կարապետ անունով վարդապետի մը ձեռքով եղած, ամենահամառօտ ոճով. որուն սկզբնատառքը իւր անունը կը յօդեն, և որ տպագրած է ի Կոստանդնուպոլիս (1714) բուն Յարգսի ընդարձակ երկասիրութեանը հետ մէկտեղ։

Յարգսի կ՚ընծայուի և նոյնայս մարգարէութեան մեկնութիւն մը՝ որ մեզի անծանօթ է։ Դարձեալ գրուածք մը կայ Անաջաւորաց պահոց վրայօք՝ ի խնգրոյ Գրիգորի Պահլաւունւոյ գրուած ի Յարգսէ։

Լեզուն՝ որչափ ալ ուզենայ մէկը նուազացընել, կամ անոր հակառակ բարձրացընել, մեզի կ՚երևնայ թէ ընտիր լեզու մըն է, և իր գարուն ամեն որոշիչ յատկութիւններն ունի։ Ոչ հինգերորդ գարու ոսկեղէն լեզուն, և ոչ ալ անկման գարուց ոճոյն հետքը կամ նշմարանքը կ՚երևնայ այս մատենագրութեան մէջ. մանաւանդ թէ ինչպէս երկատասաներորդ գարուս ուրիշ մատենագրաց չատը՝ աւելի առջինին մօտ է իր ոճովը, քան թէ երկրորդին։ Բայց որովհետև մի և նոյն ժամանակը՝ այլ և այլ տարբեր ազդեցութիւն կ՚ընէ զանազան հանճարներու վրայ, ուստի և զարմանք չէ որ այս նկատմամբ աւելի տարին մատենագիր է Յարգիս՝ քան զԽդնատիոս և քան ուրիշ իր աշակերտակիցները։

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Ընտիր ու սիրելի անուն և հանճար մը, սրտագին ու լեզուով անուանի անձ մը. թէ պէտ և իւր այնքան բարեմասնութեամբըն ալ՝ քիչ անգամ մխիթարութեան, այլ շատ հեզ վշտաց և նեղութեանց համբեր բած։

Ներսէս Լամբրոնացին, 1153ին ծնած է, բարեպաշտ և ազնուական տոհմէ. Հայրը Հին Լամբրոնի իշխանն էր, որ դեռ դՆերսէս չտասցած՝ իւր բարեպաշտ մուսանոյն Շահանդխտոյ հետ, որ էր եղբօրդուստր Ն. Շնորհալւոյ, Աստուծոյ ուխտ բրած էր՝ անոր սեղանոյն նուիրել իւր որդին։ Բայց զաւակն ունենալէն ետքը՝ անոր գեղեցիկ և վայելուչ կերպարանքը տեսնելով, կը սորջանային ծնողքը իրենց ուխտին վրայ, ու այնպիսի կոյտառ ու զուարթ մանկութեան մը տուած յոյսերէն չէին ուզեր զրկել զաշխարհ։ Սակայն տղուն մահառիթ հիւանդութեամբը զգաստացած՝ դարձեալ Աստուծոյ նուիրեցին։

Մանուկ հասակէն Սմբատ, ասիկայ էր Լամբրոնացւոյն մկրտութեան անունը,— իւր ազագայ սրբութեան և գիտութեան

հաւատոյ ապացոյցները կու տար։ Իշխանք և թագաւորք իրենց ամեն հրապուրանքներովն ալ՝ չէին կրնար Աստուծոյ ճամբէն դինքը դարձընել. այլ իր ծնողաց վարդապետութենն ու իշխանութիւնն արհամարհելով՝ Սկևռայ վանքը կը թաչուէր, ու հոն առաքինութեամբը՝ հոգին, միտքն ալ ուսմամբ կը զարդարէր. ու քիչ առեն մէջ զարմանալի յաջողամտութեամբ՝ յոյն, լատին ու եգիպտական լեզուները կը սորվէր։

Այնի՝ իր հօրը մեռնելէն ետքը՝ անոր մասնաւոր կտակաւն ու առանձին կամքով Ներսէս Սկևռայ վանքին առաջնորդ պիտի ըլլար. բայց անիկայ հրաժարեցաւ այն պատուէն, ու նոյն իսկ քահանայական աստիճանը դրնէկ բանի իրեն ընդունել տուաւ Շնորհալին. որ աստուածային ոգւով նկատելով անոր Աստուծոյ սեզանոյն ապաստարութեամբը աղքին ընելիք բարիքը, բանադատեց դինքն առ այն, առանց մտիկ ընելու անոր ընդդիմադարձութեանցը. ու փախստեանն ու առանձնութեան սեղուանէն դինքը դանելով, Աստուծոյ ընտիր պաշտօնեայ մը ու աղքին մխիթարութեան առիթ մը ընծայեց։ Իր անունն ալ օծութեան հետ տուաւ անոր։

Քանուերեք տարուան հասակին Տարսոն քաղաքին եպիսկոպոսութեան աստիճանն ընդունեցաւ Ներսէս, և Սկևռայ

վանից առաջնորդութիւնը. և անով արդէն առացած համբաւն՝ ալ աւելի մեծցաւ։

Սակայն իր գիտութիւնն ու արդութիւնը, և մանաւանդ միաբանական հոգին, իրեն դէմ հանից ժամանակին ազգ և ինքնահաւան մարդիկը, որ սրբոյն նախանձուն ու եռանդեանը մէջ ազգային և կեղեցւոյն անկումը կամ իրաւանցը բռնաբարութիւն կը կարծէին. և ժողովրդեան առջև դինքն ամբաստանելով ալ դոհ չըլլալով՝ ինչուան թագաւորական արքունիքն ալ իրենց ձայնը հասուցին, և կ'ուզէին զինքը ետ իր պաշտամանէն դրկել և քէ անոր աստուածային օծութեամբ լեցուած լեզուն լռեցնել։ Զնոսա վեցաւ Ներսէս. իր խղճին մէջ անմեղը՝ հակառակորդաց նախանձուն և աւելութեանը հարուածներէն չվախցաւ։ Այս իրեն դէմ եղած ամբաստանութիւններն, և արդարակրիւ պատասխաններն առաւ առ իշխողն Լեւոն. թուղթ մը՝ յորում սրբոյն աստուածային նախանձը, անմեղութիւնն ու հանճարը միանգամայն կը տեսնուի. գրուած մը՝ յորում ամբաստանելը կը սիրուի, և իրեն հակառակորդացը չարութիւնն աւելի աւելի կ'երևայ։

Այդ աստուածազեղիկ նախանձը՝ մեկալ կողմանէ ալ արդեօք չէր ըլլար իրեն՝ ազգային իրաւանց անարատ պահպանութեանը խնամատար ըլլալու. և այդ պատճառաւ ինչուան Անտիոք և Բիւզան-

դիոն ճանապարհորդութիւններ ըրած է, և այլ և այլ օգտակար ծառայութիւններ մատուցած ազգային եկեղեցւոյ ու հայրենեաց, զորոնք հրապարակել զուարճամբ եկեղեցւոյ պատմութեանը կը վերաբերի։

Քառասնեվեց տարուան հասակին հանդիպեցաւ Լամբրոնացւոյ երջանիկ փոխումը։

Լամբրոնացւոյն երկասիրութիւնները. — Լամբրոնացւոյն գրաւոր երկասիրութեանցը մէջ նշանաւորներէն մէկն է Մեկնաբանութիւնը։ Շնորհալւոյ և Գրիգորի Տղայի վարուցը մէջ տեսանք որ այն առիթներն մեծ խնդիր մը սկսեր էր յուզուիլ Հայաստանի մէջ. մէկ կողմանէ յունական եկեղեցին կը ջանար կրօնական միութիւն մը հաստատել՝ արդէն իրեն հին դարերէ ի վեր ծանօթ և այլ և այլ բնաւորի յարաբերութիւններ ունեցող Հայաստանեայց եկեղեցւոյն հետ. մէկալ կողմանէ ալ խաչակիրք իրենց արևելքի մէջ ըրած արշաւանքներով սկսեր էին Հայաստանի ծանօթանալ։ Այս ծանօթութիւնն ու վարերութիւնն ունէին իրենց հակառակորդը, որոնք, ինչպէս ըսինք, կը վախնային որ չըլլայ թէ ազգային հաւատքը զոր միայն ուղիղ կը կարծէին, ուրիշ կարծեցեալ մոլորական վարդապետութեանց զոհ ըլլայ։ Այս խնդրոյս լուծումն ու ամփոփում կամ կամաւ ազիտացելոց միտքը լուսաւորելու համար՝ սահմանեցաւ Տարսոնի ժողովը գումարել։

Հայաստանեայց եկեղեցւոյն՝ զոր այն-
չափ սուրբ և աստուածամերձ անձինք փա-
ռաւորած էին, առջի փառքը յիշելէն ետ-
քը, իբր օրերուն վիճակը արտասուաց ու
ցաւոց արժանի կը գտնէ Լամբրոնացին։
Աստուծոյ տունը՝ սուրբ եկեղեցին՝ աղո-
ւմնեան տաճարին կը նմանցընէ, որուն
պայծառութիւնն, մեծութիւնն ու գեղեց-
կութիւնը՝ բանաւորկուն Նաբուգոդոնո-
սորի ու Ֆաղդէացւոց պէս, վեր ի վայր
ընելու կ'աչխատի. և որչափ ալ աստուա-
ծահիմն չէնքը չիկրնար կործանել, սակայն
սրով և հրով կ'աւերէ։ Այս աւերման ու
խանգարման պատճառ՝ սիրոյ պակասութիւ-
նը կը գտնէ Լամբրոնացին. ազգին՝ յայ-
լոյ քրիստոնէից խորչելովը և անոնցմէ
ուծանալով՝ Աստուծմէ հեռանալը կը ցու-
ցընէ. և ասոր գարմանը՝ գարձեալ սիրոյ
ու միաբանութեան մէջ կը գտնէ։ Ո՛րչափ
գարմանալի է Լամբրոնացին իր այս խո-
սակցութեանը մէջ. Աստուծոյ ու ազգին
սէրը՝ հաւասար իր սիրտը կը տոչորեն.
Աստուծոյ փառացը առաւելութեամբը՝
իր ազգին բարոյական ապագայն հաս-
տատուն գործել կը ջանայ։ Այս փափաքն
առաջ տանելու համար՝ ինչուան իր ազ-
գին նզովին ալ աչք կ'առնէ։ Մեր ամ-
բողջ հայերէն մատենագրութեան մէջ՝
այս ճառին նման սրտով, ուժով և գի-
տութեամբ գրուածք մը քիչ կը գտնուի.
անոր համար Եւրոպացի խնամատուններէն

մէկը « Թէ որ Դեմոսթենէս , կ'ըսէ , նոյն առիթներուն մէջ գտնուած ըլլար , ինչ որ այս՝ սուրբս , և անոր հաւատացեալ ճշմարտութիւնը ճանչցած ըլլար , իրմէ տարբեր լեզու պիտի չգործածէր » : Ուրիշ մըն ալ Կիկերոնի կը նմանցընէ զինքը , ոչ զՀռոմ՝ այլ զեկեղեցի Աստուծոյ իր թշնամեացը ձեռքէն թափելու համար :

Մեկնութիւն պատարագի . — Քանեւէորս տարուան հասակին՝ այս ընտիր , իմաստուն և բազմահմուտ մատեանը երկասիրեց Լամբրոնացին , երբոր Տօրոս ըլերանց առանձնութեանը մէջ՝ աչխարհքի զբաղմունքներէն ու փառքէն հրաժարած , հոգւոյ անդորրութեամբը կը գտայէր : Հայաստան՝ որ քաղաքական այժն ու զօրութիւնը կորսնցընելով , օր օրուան վրայ կը վատթարանար , կարգէ դուրս զեղծմունքներ մտուցած էր ինչուան սուրբ սեղանոյն նուիրական պաշտամանց և պատարագին խորհրդոց և զոհին մէջ : Հարկ էր այս զեղծմունքը վերցընել . բայց արդէն արմատացած և հիննալու սկսած սովորութեանց հետ կռուելու համար՝ Լամբրոնացւոյն պէս կարիճ ախոյեանի մը կարօտ էր ազգն : Այդ ընտիր ախոյեանն , որ միայն Աստուծոյ փառքն ու երկիւղը իրեն չարժառիթ և նպատակ ունէր , այս գրուածքովս երիտասարդ հասակին մէջ գտաւոր կը նստի ծերոց , ու իր վրայ կ'առնէ անոնց նախապաշարմանցը հետ

կռուիլ, մտաց խաւարը լուսաւորել, ու աստուածային ուղիղ ճամբուն մէջ առաջնորդել։

Սակայն այս աստուածահաճոյ ջանքովն ալ՝ յայտնի կը տեսնէր իրեն դէմ ելլելիք հակառակութիւնները ալ։ Անանկ աստեղի մը հանդիպած էր՝ յորում ոչ միայն ազգին բարւոյն վրայ մտածելը՝ այլ նաև անոր վրայ արցունք թափելն ալ կ'արգելուին։ «Եւ ոչ ողբալոյ տան Թոյլ, կ'ըսէր հառաչելով. զախ ի բերան եդեալ խփեն զքաւագովայ ճշմարտութեան զլեզուս, կամ այպանելով երդիծանեն, կամ սաստիւ կռփահարեն, միայն զի մի՛ ի ստութիւն սուտ երևեսցին»։ Բայց Աստուծոյ քաջահաւատ պաշտօնեային արհամարհեց այդ ամէն բռնութիւնները. և ընտրելի սեպեց այն երանութիւնը՝ զոր տէրն «Հատոյց փոխարէն նախատանացն. և աղաւորժելի վասն նորին՝ մարդկան չարախօսութիւն»։ Եւ այս վախճանաւ չարագրեց Պատարագի մեկնութեան գիրքը, յորում հզօր հանճարով, զօրաւոր լեզուով, աննախանձ սրտով և ծայրալիր հմտութեամբ կռուեցաւ ամէն նախապաշարմանց դէմ, ցըցուց ամէն զեղծմանց ապօրինաւորութիւնը, և ճշմարտին Աստուծոյ սեղանոյն վրայ՝ յաղթանակեց զճշմարտութիւն։ Եւ այն գրքին՝ և անոր մէջ ամփոփուած ի մասից կարօտ ազգին՝ նուիրեց իր աշխատութիւնը. ու մէկ երկու անգամ ին-

չուան եպիսկոպոսաց տեսանը Հանից որ կարդան, քննեն, ու իրեն սիրտը մրկող կրակովը՝ զէթ իրենք ալ ջերմանան. սակայն և ոչ ընթերցման կամ ունկնդրութեան արժանի եղաւ, ինչպէս գանգատելով կ'ըսէ վերջաբանին մէջ։

Ա. յն ժամանակները, 1187ին այլազգիք երուսաղեմի տիրեցին, և անօրինական տեղեաց սպասաւորք՝ նկեղեցականք և իշխանք գերեցան։ Ա. յս համբաւը ինչուան արեւմուտք հասնելով, ամենայն աղգք թագաւորներով և իշխաններով, Հռոմայ հայրապետին հրամանաւ խաչակրութեան մը յորդորուեցան, և անթիւ բազմութիւն նաւերով հասան եղան ի Պաղեստինա։ Ա. յն միջոցին Լևոն Ռուբինեանց պայազատն գրկեց զԱմբրոնացին ի Հռոմկլայ առ Գրիգոր կաթուղիկոս. ճամբուն վրայ՝ Մարաշ քաղաքէն անդին վրանին վազեցին Թուրքմէնք, և Ներսէսի ուղեկից կրօնաւորներն ու աշխարհականներէն գրեթէ քանի հոգի սպաննեցին, ու իրենց ստացուածոց հետ յափշտակեցին նաև Պատարագի մեկնութեան գիրքը. որուն վրայ անչափ տրտմութիւն ունեցաւ հեղինակը, որովհետև հատասարը չունէր։ Բայց քանի մը տարիէն նորը Յահան գտաւին մէջ գտնուեցաւ, և գնոց առնուելով՝ նորէն Լամբրոնացւոյն ձեռքը հասաւ։ Ցայս ինքը Ներսէս կ'աւանդէ իւր յիշատակարանին մէջ։

Մեկնողականք. — Աստուածաշունչ այլ և այլ գրոց մեկնաբանութիւններ շարադրած է Լամբրոնացին. ինչպէս Սաղմոսի, Սողոմոնի երեք գրոցը՝ Առակաց, Ժողովողի և Իմաստութեան. և երկուտասան փոքր մարգարէից: Աստնց մէջ ալ՝ որ ընդհանրապէս հեղինակին երիտասարդական հասակին արդիւնքն են, յայտնապէս կ'երեւնայ իր հմտութիւնն և հանճարը: Բայց որովհետեւ ընդհանուր հաւատացելոց համար յօրինուած չեն այս մեկնութիւնները, այլ մասնաւոր կերպով մը ներանձնական կենաց փափաքող միանձանց հոգեւոր օգուտը դիտելով, որոնց խնդրանօքն ալ շարադրուած են, ուստի աւելի խորհրդականը քան թէ նկարագրական իմաստանելով մեկնաբանուած են:

Ճառք. — Հինգ այլ և այլ ճառեր կ'ընծայուին Լամբրոնացւոյն. ի Համբարձումն Քրիստոսի, ի Գալուստ Հոգւոյն սրբոյ, ի փոխումն Կուսին, յԱնառակ որդին, և ի Տնտեսն: Աստնց մէջ առջի երկուքը ընդհանրապէս կը սեպուին իրաւամբք թէ լեզուին գեղեցկութեամբը և թէ ճարտասանական ուժով:

Թղթերուն մէջ ալ անուանի է առ Լևոն իշխանն գրածը, զոր առաջ յիշատակեցինք:

Ունի Լամբրոնացին քանի մը կտոր մանր քերթողական գրուածներ ալ. բայց անոնց ոճը այնչափ հեռու է իր արձակ գրուածոց

ոճէն, որ յայտնապէս կը տեսնուի թէ հռովմայեցի ճարտասանին պէս միայն խօսելու ուժով և գեղեցիկ ու համոզիչ լեզուով ծնած էր Լամբրոնացին, քան թէ քերթողաբանելու։ Ա.յս գրուածքն են՝ քանի մը չարականներ, ու Ներսիսի Շնորհալւոյ վրայ գրուած վիպասանութիւն մը, և ուրիշ մանր քերդուածներ, որոնց մէջ ալ կը վայլի իր հոգեսիրութեան եռանդը։

Յիշեալ ամենայն գրուածքն ալ զանազան անգամ և տեղ տպուած են. իսկ առանձնաբանութիւնն Թարգմանուած ալ է իտալերէն և տպեալ ի Ս. Ղազար, յամին 1812։

Ա.յս հռչակաւոր մատենագրաց հետ՝ երկրորդաբար անուանի եղած են այս գրուածքն ալ.

ԳՐԻԳՈՐ ԳԱՆՁԱԿԵՑԻ կամ Թոքակերի որդի, որուն կարգէ դուրս ուսումնասիրութեանը վրայ հետևեալ դէպքը կը պատմէ Կիրակոս։ Օր մը, կ'ըսէ, այրի մը մէջ առանձնացաւ, ուր բազմութիւնք գրոց կային, և հետն ալ ուրիշ շատ ընկերակիցներ ունէր։ Անոնք այրէն դուրս ելան, ու մոռացմամբ զինքը հոն ձգեցին, կարծելով թէ անիկայ իրենցմէ առաջ ելած ըլլայ. ու գուրը փակելով՝ ելան գնացին։ Գրիգոր՝ առանց ամենևին խմանալու՝ հոն գրոց ընթերցման պարապեցաւ։ Վ.րան օրեր անցնելէն ետքը՝ հարկաւոր բանի մը համար նորէն ելան այրը գնացին, ու զինքը հոն տեսնելով աքանչացան, կը հարցընէին

Թէ ինչպէս առանց ուտելու խմելու կրցաւ ա-
պրիլ այնչափ օր. անիկայ գրքերը յուշընկերով կ'ը-
սէր. «Առանք եղան իմ կերակուրս և ըմպելիս»:

Վարդան պատմիչը կը զրուցէ Թէ Սարկաւագ
վարդապետին մահուընէն տարի մը ետքը հանդի-
պեցաւ ասոր մահը:

ԴԱՒԻԹ ԳԱՆՁԱԿԵՑԻ վարդապետ Ալա-
կայ որդի: Սա ԱղքայուԹիւն կոչուած քահա-
նայի մը ինդրանքէ՝ կանոնական սահմանադրու-
Թիւններ գրեց, որոնց համար կիրակոս կ'ըսէ Թէ
գեղեցկայարմար ու պիտանաւոր երկասիրուԹիւնք ըլ-
լան, ու Վարդան՝ Թէ գիւրահաս կանոններ էին:
Մեր ձեռքն հասած 97 կամ 98 կանոններն՝ ասոնց
դառաստանը չեն արդարացներ:

ԳՐԻԳՈՐ ԻՄԱՅՏԱՒԻՐ, որ Մաշտոց Ցե-
սուանց անապատին միաբաններէն էր, և իր ըն-
կերակիցներէն այս պատուոյ անուամբը մեծա-
րուած: Իր անուանին ձեռնարկիս աղօԹից գիրք
մը հասած է՝ զոր հեղինակը Գիր+ Ըսէց Ն Գեղեց
կը կոչէ, պարզ և ժիջակ ոճով մը, ՇՂԸ (1149)
Թուականին յօրինուած:

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ

Մատթէոսի Ուռհայեցւոյն վրայ գիտցածնիս՝ իւր երկասիրութեանը երկրորդ և երրորդ մասերուն յառաջաբաններուն մէջ տուած տեղեկութիւններն են։ Ինքզինքը Ուռհայեցի կը կոչէ, այսինքն բնակիչ կամ մանաւանդ ծնունդ Ուռհայ (Եդեսիոյ), և իւր այն քաղաքին մէջ ծնած ըլլալը յայտնապէս կ'աւանդէ։ Ուրիշ տեղ ալ ինքզինքը վաներէց կը կոչէ։ Ծննդեանն ու մահուան տարին անստոյգ է. այս միայն յայտնի է որ իւր կեանքը 1136էն առաջ անցած է. որովհետև այն թուականին կը լմընցընէ իւր դիրքը։ Ջամչեան վարդապետը իւր Հայոց պատմագրութեանը մէջ կը համարի թէ 1144ին, Ասորոց աթաբէկներուն իշխան հռչակաւոր Նուրէտտինի հօրը Զանկիին ձեռքով եղած եդեսիոյ կոտորածին մէջ՝ մեռած ըլլայ նաև Մատթէոս 'ի խորին ծերութեան։ Բայց այս կարծեաց ստուգութեան երաշխաւորութիւնը կը պակսի։ Կ'երևնայ թէ կենաց մեծ մասը անցուցած ըլլայ Յեդեսիա. որովհետև այն քաղաքին մէջ հաստատեց և կարգի վրայ առաւ ժամանակագրութեան նիւթը, որուն միայն երկու առաջին մասանցը վրայ տասնըհինգ տարի

աշխատեցաւ։ Իւր մէկ խօսքէն կ'երևնայ թէ կենացը վերջի տարիները կոմագենի հիւսիսակողման Բեհսուն քաղաքը քաշուած ըլլայ, որ Մարաշու պէս՝ Պօտուէն (Բալդուինոս) անունով լատին իշխանի մը ձեռաց տակ էր։ Որովհետև կ'աւանդէ թէ երբ Ա՛մր–Գազի եկաւ պաշարեց զԲհեսուն, 1136ին, հոն էր և ինքն Ալեհայեցին. և զՊօտուէն՝ կոմսն մեր կը կոչէ, անշուշտ անոր իշխանութեան հպատակ ըլլալը ուղելով հասկըցընել։

Իւր հայրենի քաղաքը՝ յորում էր այն վանքը որուն առաջնորդութեան պաշտօնը կը վարէր, պատմական հետազօտութեանց համար ընդարձակ դաշտ մը կրնար սեպուիլ։ Եդեսիա՝ Միջագետաց հին և հռչակաւոր քաղաքը՝ արևմտեան Ասիոյ ծաղկած մեծամեծ տէրութեանցը մէջ, և յունական ու արևելեան աշխարհաց սահմանները կ'իյնար. արևելքէն սահմանակից ունէր Պարսից աշխարհը, հիւսիսէն ըզՀայաստան, հարաւէն խալիփայից իշխանութիւնը, արևմուտքէն զԱսորիս, զՊազատին Բիւզանդիոյ կայսերաց ընդարձակ երկիրներն։ Իւր չորս դին կատարեցան այն մեծ յեղափոխութիւնները՝ որոց արևելից այս մասը վկայ եղաւ։ Հին առեններէն վաճառան մը սեպուած էր այն քաղաքը ասորի, յոյն և հայ դպրութեանց։ Հաւանական կ'երևնայ թէ երկուսասաներորդ դարուն սկիզբները՝ յորում

Մատթէոս գրեց, դէռ բոլորովին անհետացած չէր այն նախկին ուսումնական ախորժակը։

Շատ անգամ կը յիշատակէ Մատթէոս թէ իւր պատմութիւնը գրելու համար՝ ա-կանջալուր աւանդութեանց և իրմէ ա-ռաջ եղող պատմագրաց դիմած ըլլայ։ Բայց թէ ո՛վ են այս պատմագիրները, ա-մենևին չըսեր մեզի. ոչ անուն մը կը յի-շէ, և ոչ գրուած մը յանուանէ մէջ կը բերէ։ Ժամանակակից հայ մատենագրաց մէջ ալ չկայ մէկը որ նոյն դիպուածոց վը-րայ գրած ըլլալով՝ կարենանք իրենց գը-րուածքը Մատթէոսի երկասիրութեանը հետ համեմատել։ Նոյն իսկ յետագայ պատմիչք՝ կարծես թէ մեծ պիտանաւո-րութիւն մը չեն ուզեր տալ իր գրուած-քին. բայ 'ի Սմբատ Գունդստապլէն, որ երեքտասաներորդ դարու պատմիչ է, և իւր ժամանակագրութեանը առաջին մա-սին մէջ զՄատթէոս կը համառօտէ, ա-ռանց ամենևին իւր առաջնորդին անունը տալու։

Այս լռութեան հաւանական պատճառը այն կ'երևի որ Մատթէոս գլխաւորաբար արևմտեան Հայոց ու սահմանակից օտար գաւառաց պատմութիւնը գրեց. իսկ իր-մէն ետքը երևցող պատմիչք՝ ինչպէս Կի-րակոս և Վարդան, Սանահնի՝ Հաղբա-տայ և Գետիկայ, արևելեան Հայոց հռչա-կաւոր դպրոցներու աշակերտք, գլխաւո-

բասկէս մեծ Հայոց վրայ կը գրեն՝ որով և Մատթէոսի հետ նոյն տեղւոյն վրայ չէին կրնար հանդիպիլ։ Մատթէոս՝ պարզ ժամանակագիր, բաւական կը համարի ամբաստանագրել այն անցքերը՝ զորս կամ ծերունեաց խօսքերէն և աւանդական հմտութենէն, և կամ իւր ձեռքն եղած գրքերուն մէջէն ժողվեց։ Իւր հմտութիւնը, ինչպէս ինքն ալ անկեղծաբար կը խոստովանի, չափաւոր է. ոչ իւր ազգին հնախօսութիւնը կը ճանչնայ, և ոչ անոնց վրայ գրող ազգային հեղինակները։ Երբ իւր գրոցը առաջին գլխոյն մէջ Եգեսիպ հիմնարկութեանը վրայ կը խօսի, չեմ գիտեր ո՛ր աւանդութենէ առած՝ Տիգրանայ կ՚ընծայէ զայն, առանց բանալու թէ Հայոց վրայ իշխող երեք Տիգրաններէն քանիերորդն է ասիկայ։ Յետագայ գլխոց մէջ՝ մինչև յերկրորդ մասն, բոլորովին կը շփոթէ Հագրատունեաց ժամանակագրութիւնը, թէ և ժամանակաւ անոնց չատ մօտ է։ Որով յայտնի կ՚երևնայ թէ և ոչ Շապհոյ Հագրատունւոյ, Յովհաննու կաթուղիկոսի և Ստեփանոսի Ասողկան գրուածները ծանօթ են իրեն։ Կրօնական գիտութիւնն ալ՝ սուրբ գրոց բառական հասկացողութենէն անդին չանցնիր, ուսկից ըստէպ վկայութիւններ մէջ կը բերէ։ Անծանօթ են իրեն Յունաց եկեղեցւոյն սուրբ հարքը՝ որ իր հայրենակից հին վարդապետացն այնչափ ընտանի էին։

Իր կեանքը այն տեղուանքը անցուցած ըլլալով՝ ուր աստրի դպրութիւնք երբեմն ծաղկած էին, կրնար կարծուիլ թէ բաւական օգտուած ըլլայ այն լեզուին յիշատակարաններէն։ Սակայն Մատթէոսէն առաքը եկող երկու աստրի, Մխայէլ ու Գրիգոր Ալուլփարաճ պատմիչներէն դատելով՝ կը տեսնուի, թէ աստրական դպրոցը ուրշափ կը տարբերէր հայկականէն, թէ կրօնական զաղափարներովը, թէ ազգային նախապաշարմամբք և թէ պատմական դէպքերը կշռադատելու կողմանէ։ Մատթէոս և Ալուլփարաճ՝ երկու ամենևին իրարու հակառակ հոգւով լցուած են. ա՛ռիթ չպակսիր որ առջինը՝ Աստուծոյ ծանր նախատինքներ չտայ. երկրորդն ալ՝ ամեն անգամ որ կրնայ՝ դՀայերը կը բամբասէ ու կը չարախօսէ։ Այս ներհակութենէն կրնանք հետևցընել թէ իրարու հետ հաղորդակցութիւն չունէին։

Նոյնը կրնանք ըսել եթէ Բիւզանդացի տարեգրաց հետ դՄատթէոս բաղդատենք։ Իր տուած տեղեկութիւնները՝ մեղի հասած տարեգիրներէն այնչափ կը տարբերին՝ որ կարծես թէ ուրիշ աղբիւրներէ քաղած ըլլայ։ Օրինակի համար, եթէ Նիկեփորայ, Փոկասու և Զմշկիկի թագաւորութեան վրայ՝ Լևոն սարկաւագին պատմութեանը հետ դՄատթէոս բաղդատենք, թէպէտ և հիմնական դիպուածոց մէջ յոյն պատմչին հետ զուգընթաց է, բայց տար-

բեր յիշատակարաններու վրայ աշխատած կ'երեւնայ։ Ա.յդ բաղդատութիւնը կեդրեւնոսի, Զաքարեայ, Աննա Կոմնենի հետ ընելով, նոյն առնմանութիւնները կը գըտնենք, որ ոչ միայն այս ժամանակագրաց ու Մատթէոսի հետ ունեցած ծանօթութեանց տարբերութենէ առաջ կու գան, հապա նաեւ իրենց տեսութեան տարբեր կիտէն։ Թէ որ անոնք կոստանդնուպոլսոյ արքունեացն ու կայսերութեան արեւմտեան գաւառներն յուզող խռովութեանց վրայ աւելի լաւ տեղեկութեամբ կը գրեն, չկայ մէջերնին մէկն որ ասիական գաւառաց վերաբերեալ բաները՝ Մատթէոսէն լաւ գիտնայ. ինքը կրնայ զանոնք սրբագրել և լրացընելու օգնել։

Ա.յսպէս ահա հոգ տանելով աւանդել մեզի Զմիկիկի առ Ա.ջոտ գրած թուղթը որ բիւզանդական պատմութեան ամենէն աւելի աղնիւ յիշատակարաններէն մէկն է, այսօրուան օրս այն կայսեր Ա.սորւոց մէջ բռնած ընթացքը կը հասկընանք այն մանր տեղեկութիւններով՝ զորս փուճ տեղ պիտի փնտռէինք Լեւոն սարկաւագին պատմութեանը մէջ։ Ա.յս թղթիս՝ որ Բագրատունեաց դիւանէն հանած կ'երեւնայ, վաւերականութեանը վրայ տարակոյս չկայ։ Վասն զի նոյն իսկ մէջը գտնուած սխալները կը ցուցընեն թէ յոյն բնագրի մը վրայէ թարգմանուած է՝ ի հայ։ Մատթէոս՝ ուրիշ պատմական բան մըն ալ պահած

է. և այս է Գագիկ Բ թագաւորին կոստանդնուպոլսոյ Սուրբ Սոփիայ մեծ եկեղեցւոյն մէջ խօսած ճառը, կոստանդին Դուկաս կայսեր և Յունաց կղերին առջև, հայ և բիւզանդական եկեղեցւոյ մէջ եղած հաւատոյ վէճերուն վրայ։ Անտարակոյս այս ճառը նախ հայերէն գրուած է, բայց յունարէն թարգմանուած ու խօսուած, որով սկզբնագիրը կ'ըլլայ զոր Մատթէոս մեզի կը հասցընէ։ — Անկախ չկարենալով ստուգել Մատթէոսի աղբիւրները, եթէ կարծիք մը հարկ ըլլար ընել, պէտք էր ըսել թէ ինքը ոչ ասորի և ոչ բիւզանդացի պատմիչներ նայած ըլլալով, հարկաւ ուրիշն իրեն ժամանակակից հայկական յիշատակարաններ ու գրքեր պէտք է որ գործածած ըլլայ, որ այս օրուան օրս կորսուած են կամ ինչուան մեր ձեռքը չհասած։

Ժամանակագրութեան ոճն այլ կերպի կը ցուցընէ թէ հեղինակն իւր ազգային գպրութեան անհմուտ է. ոչ միայն անոր ոսկի դարուն օրինակագրացը անծանօթ, հապա նոյն իսկ ութերորդ, իններորդ և տասներորդ դարուն մատենագիրներէն ալ անբաւ հետաւորութիւն ունի։ Ոչ Արծրունեաց պատմիչ Թովմա արծրունւոյն ճոխաբան, պաճուճեալ ու մթախոս կերպն ունի, ոչ Յովհաննու կաթուղիկոսի արուեստակեալ ու բառադարձ վայելչաբանութիւնը և հռետորական ձևերը, և ոչ

Աստղնկան հանճարեղ չափաւորութիւնը։ Առանց ամենևին արուեստի՝ իր ժամանակին գրեթէ խօսուած լեզուովը կը գրէ։ Հայոց մատենագրութեան ու ազգութեան վառթարանալուն առնելը գրուած ըլլալով՝ իր ժամանակակցաց գաղափարներն ու նախապաշարմունքներն ունի։ Միամիտ է ու դիւրահաւան, իր տեսութեանցը մէջ անհաղորդական ու սահմանաւոր, թէպէտ և կեանքը անանկ քաղաքի մը մէջ անցուցած է որ ամեն քաղաքական ու մատենագրական ազդեցութեանց բաց էր։

Իր ժամանակցացը պէս ոսոխ Քաղկեդոնի ժողովոյն, թէ և անոր հետ երկու բնութիւն կը դաւանի ի Քրիստոս. ցուցնոց դէմ ունեցած կրօնական հակակրութիւնը՝ ցասմամբ վրանին կը թափէ։ Ոչ ինչ պակաս բուռն է նաև այլազգեաց առաքութիւնն ալ։ Ձիմնայեր նաև Փառանկաց, որ Հայաստանի գաւառացը մէկ մասին կ'իշխէին։ Թէ որ այս կիրքը բան մը կրնայ արգարացընել՝ միայն հայրենասիրութիւնն է որով վառուած է. այն դգացմունքը՝ որուն չափազանցութիւնը շնչող պատճառին վհանձնութենէն ու անշահասիրութենէն ներումն կը գտնէ։ Բայց այս պակասութիւններն կերպով մը իրենց փոխարինութիւնն ունին։ Իր պատմագրութիւնն որ վարժ արուեստի մը փափկութիւն չընդունիր, յղկած ոճէ մը աւելի ճշմարիտ և ազդու գործելով՝ իւր ազգին մտաւոր

և բարոյական վիճակը մեզի կը ներկայացնէ։ Պատմագրելու այս անհարթ կերպին մէջ, և այն բարբարոս և աղմկայոյզ ժամանակին՝ ուր որ այս կերպս կը գործաւէր, ներդաշնակութիւն մը կայ. կարծես թէ անհմուտ ձեռքէ ելած պատմութիւններն՝ բուն իսկ նիւթին գեղեցկութիւնն աւելի դուրս կը ցայտեցընեն։ Ի՜նչ ցաւալի տեսարան՝ անմեղ ժողովուրդ մը տեսնել՝ որ քրիստոնէական համակամութեամբ այլազգեաց անողորմ սրոյն տակ կ'իյնայ կը մեռնի հազարաւորը մէկտեղ։ Ի՜նչ յօժարակամ անձնանուիրութիւն է՝ զոր Տաւրոսի Հայոց վրայ կը տեսնենք, որ Խաչակրաց հասնելու առնը՝ խոնարհեալ խաչին վրէժը խնդրողներուն գալուստը կ'ողջունեն. կ'երթան անոնց օգնելու տուն խստութեանը մէջ, և անոնց հետ պատերազմին ամեն վտանգներուն մասնակից կ'ըլլան։ Ի՜նչպէս մեծ է Մատթէոս իր հայրենասիրութեանը մէջ, երբ իր բնական զգացմունքն՝ առելութեան ու կրից ամբոխմամբը չինուաստացըներ։ Ո՛ր չափ կը սիրէ իր հայրենիքը, և կը փառաւորէ Հայոց քաջութիւնը՝ որ իրենց աշխարհը պաշտպանեցին։ Ի՜նչ ճարտասան պարզութեամբ կը պատմէ այն հնգետասանամեայ դիւցազին մահը, որ հայրենի տունը կը թողու, կը վազէ սուրը ձեռքը այլազգեաց անհամար խումբերուն մէջ կ'իյնայ՝ հալածելու. անդին այս ցաւա-

լի տեսարանին վրայ՝ պատանւոյն ծերու-
նի պապուն բազուկները կը ջլատին, և
սուրը գետին կ'իյնայ։ Վասմ է նաև պե-
դի խոնարհ հովուի մը՝ տէր Քրիստափոր
երիցուն մահը, որ պաշարեալ յանկարծ
յայլազգեաց՝ կ'աճապարէ իւր հօտը եկե-
ղեցւոյն մէջ կը ժողվէ. որուն թէպէտ չորս
կողմը առեր են թշնամիք, սուրը խոր հուր-
դը կը կատարէ, հացն ու գինին կը բաշ-
խէ հաւատացելոց, որոնք մէկիկ մէկիկ
բարբարոսաց սրոյն սպանդ կ'երթան. մին-
չև որ տէր Քրիստափոր և իր երկու որ-
դիքը Թորոս ու Սահփան՝ մինակ մնացած՝
իւրաքու վերջին համբոյրը կու տան, ու այն
վսեմ ու հանդիսաւոր գրկախառնութե-
նէն ետքը՝ երեքն ալ մէկտեղ կը վազեն
տաճարին սեմոցը վրայ, մարտիրոսական
պսակն ընդունելու։ Ի՞նչպէս սիրտ չար-
ժող ոճով մը կը խօսի՝ Բագրատունեաց
ազնուական ու մեծ ցեղին վերջի Գագիկ
Ա Թագաւորին վրայ. այն հոյակապ Թա-
գաւորին՝ որ իր գիտութեամբն ու քաջա-
սրտութեամբ անուանի, իրենները կը
մատնուի, իր հարցը ժառանգութենէն կը
դրկուի, ու աբսորանաց և թշուառութեան
մէջ կեանքը կ'անցընէ, և արտասուելի
դաւաճանութեամբ մը կը լմընցընէ։

Վ կրը յիշուած մատենագրական կրթու-
թեանն պէտք է ընծայել հեղինակին միւս
երեք հատորները, յորոց մեծաւոր մշակու-
թեամբ մը կրնար դգուշանալ. ինչպէս չա-

փաղանգութեան սէրը, բացագանչութեան հակամիտութիւնը, նոյն դարձուածոց յոգնեցուցիչ կրկնութիւնը, կարևոր պարագայից մէջ ցուցած վերջի աստիճանի ապահովութիւնը, և անդին նուազ հարկաւոր վրայ երկարաբանելը։

Ժամանակագրութեան չարայարողը ԴՐԻԴՈՐ՝ իւր աշակերտը եղած պիտի ըլլայ, թէ որ Յունաց դէմ ցուցած ատելութեանը նայինք, զոր ի Մատթէոսէ ժառանգած կ'երևի։ Ինքզինքն երբ կը կոչէ, բայց կ'երևնայ թէ իւր հայրենակցացը մէջ երևելի աստիճան մը ունէր. վասն զի կը տեսնեմք զինքը՝ որ Գեսնոյ մեծամեծացն ու կառավարչին կը դիմէ, երբ 1137ին քաղաքացիք այլազգիներէն պաշարուելով՝ Թողուցին զԳեսուն. Դրիդոր կը յորդորէ որ իրենց պարիսպները պաշպանեն, և անոնց հետ հոն կը փոխուի։ Յունաց կայսեր կրկին ասպատակութիւնքն Ասորիս և ի Կիլիկիա, Ջանդիին փառաց ձեռքէն Եդեսիան առնուլը, Իկոնիոյ սուլթաններուն՝ Ռուբինեանց հետ մերթ բնաւմութեան և մերթ բարեկամական վերաբերութիւնքն, Կապադովկիոյ Էմիրներուն և Ջանշմէնտի տանը հետ եղած պատերազմները, Քուրդքն՝ գաղղիացի իշխանական ցեղին մարիլը, Թաչակրաց Նուրէտտինի դէմ ձեռնարկութիւնքն, Վրաց Թագաւորաց Հայաստանի մէջ Անի և Դուին քաղաքաց դէմ ըրածները, Գրի-

գորի ժամանակագրութեան գլխաւոր նիւթերն են։ Գրութեան ոճն ալ Մատթէոսինէն ոչ ինչ ընդհատ ստորին է և ոամկական։

Մատթէոսի Պատմութիւնը գաղղիարէն լեզուաւ թարգմանած՝ շատ ծանօթութեամբք հրատարակեց ի Բարիզ՝ Տիւբրիէ Հայագէտն, յամին 1838։

ՍԱՄՈՒԷԼ ԵՐԷՑ

Ուոհայեցւոյն ժամանակակից կ'երևնայ նաև Սամուէլ երէց, որ Անուոյ կաթուղիկէին աշխարհիկ երիցանց դասակարգութեանն ըլլալով, Անեցի ալ կը կոչուի։ Ինքզինքը աշակերտած կ'ասանդէ Գէորգ անունով վարդապետի մը, որ հաւանական նաբար Մղրիկն է. ուրիշներն ալ՝ և մասնաւորապէս վարդան պատմիչ, Յովհաննու Սարկաւագայ աշակերտ կը համարին զինքը։

Սամուելի գլխաւոր՝ և մեր ձեռքը հասած երկասիրութիւնն է ժամանակագրութիւնը կամ Գաւազանքը, զոր Պահլաւունի Գրիգոր կաթուղիկոսին խնդրանօքը յօրինած է և իրեն ընծայած*։ Առանկ մեծ

* ժամանակագրութեան գրոցը խորագիրն է. «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ»։

և կարևոր երկասիրութեան մը համար՝ ի մասնաւորեալ իրեն օգնական և ձեռնտու առած է Սամուէլ ուրիշ աղգայ մէջ արդէն գտնուած և մեծարգոյ համանուն երկասիրութիւններն, և մասնաւորաբար եւսեբիոսի և Թորննացւոյն աշխատասիրածները։ Ինքը հեղինակն ալ այս բանս կը խոստովանի յընծայական նամակին առ կաթուղիկոսն. « Ջանայի, կ'ըսէ, զամենազեղեցիկ զաստուածաբեալ զպատմութիւնս Եւսեբեայ՝ կրկին գրելով, որպէս զցայտումն արևուս՝ որ ի մթին տեղիս ցայտէ և լուսաւորէ »։ Ուրիշ տեղ մըն ալ. « Մոռացեալ զագիտութիւն և զանուսումնութիւն իմ, ի թախանձելոյ քոյ, սրբազեղացդ Գրիգոր, յաղթեցայ ի սիրոյ կամացդ ձերոց առ ի գրել զոր կամեցար. և այժմ օժանդակեալ ի Հոգւոյն սրբոյ՝ ժողովեցից ի սոցանէ կարճ ի կարճոյ զախորժակս ձեր՝ գրանիկ հանդէս, միայն զճշմարտութեանն գնալով զհետ. և ի յորմէ՝ առաւել զերկոքումբք թևակոխեցուք, ձեռնտու ունելով զնոսա, զիւսեբի ասեմ, և զՄովսէս Խորենացի »։

Իսկ երբ հին օրինակագրաց գրուածները կը սպառին, և հարկ կ'ըլլայ որ Ա.նեցին ինքիմէ սկսի չարունակել, այն առեն տարակոյսը դինքը կը պատէ. « Մինչև ցայսոսիկ ժամանեալ վայր՝ անկասկած հեռւմամբ, առաջնորդ ունելով զհաւաստապատում գիրս պատառաջասացեալ վարդա-

պետացն. իսկ յայսմ հետէ՝ի տեզւոջէ՝ ուր պիտոյացաւ այլ ինչ յաւելուլ՝ի շարադրութիւնս մեր, աշխատութիւն և տարակուսանք անկաւ յաղագս անմիաբան գրելոյ պատմագրացն. ումն առաւել և ումն նուազ շարագրելով, և կամ թէ ոչ բնաւ: Սակայն մեք զինախոսիցն զոճ պահելով, սկսցուք բան կարի զհետ ճշդրտութեան հետևելով, և զառաջին ամն Տրդատայ դուզել երրորդ ամին Դիոկղետիանոսի՝ ըստ Մովսէսի Հայոց պատմագրի»:

Սամուէլի ժամանակագրութիւնը կը սկսի ՅԱդամայ, ու կը հասնի ինչուան իր օրերը, կամ Քրիստոսի 1179 թուականը: Սակայն իրմէ ետքը ոմանք չարայարած են իր պատմութիւնը, նոյն ոճն ու համառոտութիւնը պահելով: Ցոր կը վկայէ գաղափարողաց մէկը հետևեալ խօսքերով. «Աստանօր զտեղի առնել կացին շարադրութիւնք գեղեցկարանին Սամուէլի. զոր բազում երկասիրութեամբ հոգ տարեալ ստուգագրութեան, և ճշգրտիւ հատուցեալ մինչև յիւրն ժամանակ: Եւ վասն զի պատմագրութեանց սահման է՝ զանցեալն և զներկայէն ճառել, իսկ յառաջիկայն ոչ գոյ հնար անցանել. այլ թէպէտ յայսմ հետէ մտանէ կանոն իշխանութեան Հայոց՝ի շարադրութիւնս ազիւսակիս, սակայն սխալ յոլով տեսանի կանոնացս. վասն զի յայսմ հետէ այլոյ ուրուք է շարադրութիւնս, և զրեթէ Քրիստոսի ծնընդ-

դեռևին ամբ և թուականն Հայոց միայն գոյ անսխալ »։ Այս խօսքերէն ետքը՝ Հայոց Շիւ թուականէն սկսելով՝ կը շարունակէ ժամանակագրական աղիւսակը ինչուան ՉԻԱ. *թուականը։ Ուրիշ յետին գրոց ալ դանազան յաւելուածներ ընելով անոր ժամանակագրական աղիւսակաց՝ ինչուան* ՌՃԼԱ. *և* ՌՃԽԵ *թուականներն հասուցած են։ Ասիկայ յիշուելու առներ ընդարձակող Յամռևի կը կոչուի գրոց մէջ. և տուած տեղեկութիւններն ընդհանրապէս կարևոր են, մանաւանդ Կիլիկեցի Թագաւորաց առևն պատահած անցքերուն։*

Ասկէ գրեթէ յիսուն տարի առաջ՝ անուանի Ֆրանսեսրն Մայ՝ որ այն առևն Միլանու մատենադարանին տեսուչը էր, Եւսեբեայ Քրոնիկոևն հրատարակելու առևն՝ լատիներէն թարգմանեց նաև Յամռևի երիցու ժամանակագրութիւնը, և տպագրեց կրկին, Հռմը՝ ի Մեղան (1818), երկրորդ անգամ՝ ի Հռոմ (1839)։

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ

Երկոտասաներորդ դարուն մէջ կը ծաղկէր ի Հայս Մխիթար անուամբ հռչակաւոր բժշկապետ մը, որ Հեր քաղաքը ծնած ըլլալուն համար՝ ընդհանրապէս Հերացի կը կոչուի։ Տղայութենէն Աբաբացւոց

Պարսից և Հելլենացւոց իմաստութեամբքը վարժած, կատարեալ հմտութիւն ունէր նաև փիլիսոփայական և աստղաբաշխական դիտութեանց։ Սրբոյն Ներսիսի Շնորհալւոյն մտերիմն էր, որ և ցաղագս երկնից և զարդուց նորա կոչուած ընտիր քերթուածը՝ իրեն ընծայած է. ինչպէս նաև ցաղագս Աստուծոյ և արարածոց քերթուիւնը, որուն սկզբնատառքը կը յօդեն, «Մխիթար բժիշկ, ընկալ ի Ներսիսէ զայս բան»։

Գրիգոր Տղայ կաթուղիկոսին ալ մեծ մտերիմն էր Մխիթար, ու անոր յորդորելովն ու խնդիրքովը՝ համառօտ բժշկական գիրք մը շարադրեց, որ Թարգմանաբար հաւաքուած է յոյն, պարսիկ և արաբացի բժշկաց գրուածներէն։ Գրքին անունը Ջերմանց մխիթարուիւն գրած է հեղինակը, ու այնպիսի անուանակոչութեան պատճառն ալ ինքը կու տայ. «Ջի սա, կ'ըսէ, մխիթարէ զբժիշկն՝ ուսմամբ, իսկ զհիւանդն՝ առողջութեամբ»։ Երկայն ու բուեսաին դիտութեանը արժանի ոճով մը կը խօսի երեք ազգ ջերմանց վրայ, զորոնք սասնկ իրարմէ կը զանազանէ. բորբուսային և անթորթոս, սուր և երկարօրեայ, նոպայով և անոպայ։ Երբ այս հիւանդութեանց նըկատմամբ այլ և այլ բժշկաց կարծիքները մէջ կը բերէ, անոնց անուանքն ալ շատ անգամ կը յիշատակէ. որոնց մէջ գլխաւորներն են Գաղենոս, Հիպոկրատ՝ զոր ինքը Բագարատ կը կոչէ, Սահակ՝ հայ-

կաղն բժիշկ, փոլոս, Մատայի, Մասր Հուէն, Մահամմատ Զաքարիա, Որիբազ, Դէվճանիս, Սապիթ-Կուբան, և այլն։

Գրոցը սկզբնաւորութեանը յառաջաբանին մէջ կը պատմէ նոյն երկասիրութիւնը շարադրելուն պատճառը. կ'ասէ, դէ թէ ինչպէս ի մանկութենէ խմասուքեան և բժշկական արուեստից սիրող եղած ըլլայ, ու Պարսից, Յունաց և Արաբացւոց դպրութեամբը վարժուած։ Անոնց բժշկական գրքերը կարդալով «տեսի, կ'ըսէ, զի ունէին զարուեստ բժշկութեան լի և կատարեալ ըստ առաջին խմաստնոցն. այսինքն գնախագիտութիւն՝ որ է խմաստ և վարդապետութիւն բժշկական արուեստից։ և ի Հայք բնաւ ոչ գտի զվարդապետութիւն և զիմաստ նախագիտութեանն, այլ զտատածումն միայն. և այս ոչ ըստ կարգի և լի, այլ համառօտ և ծաղկաքաղ ասէի և անտի հաւաքեալ, յայլ և այլ գրչաց և մտաց այլայլած»։

Ա.յսպիսի ողջախիկ գիտութեան մը պակասութիւնը դարմանելու համար՝ ուզեց Մխիթար այս գիրքս շարադրել. և իբեն կարողութենէն վեր սեպելով բովանդակ բժշկութեան արուեստին վրայ գրելը, միայն երեք ազգ ջերմանց վրայ ուզեց համառօտիւ՝ նախագիտութեան և ստացման կամ դարմանելու եղանակին վրայ՝ պէտք եղած տեղեկութիւնները տալ. «զոր չարեցաք և հաստատեցաք, կ'ըսէ,

ըստ կարգի հին և նոր վարդապետացն» :
Բայց մեր բժշկարանաց մէջ ուրիշ հիւանդութեանց վրայ ալ կարճ գրուածներ կամ հատուածներ կան Մխիթարայ անուամբ :

ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ

Նկրտելի Շնորհալւոյն վասիլ եղբօրը որդին էր Գրիգոր Տղայ, որ մանկութեան հասակէն իւր հօրեղբօրը խնամատուն առաջնորդութեանը տակ՝ հմտացաւ ասուածային և արտաքին գիտութեանց, ու կաթուղիկոսարանին մէջ եղող Կոստանդին յոյն քահանայէն ալ տեղեկացաւ հելլենական գրութեանց. կ'երևնայ թէ հոմուտ էր նաև եբրայական լեզուի, եթէ առ Ցուսէորդին գրած թուղթերուն մէջի խօսքերը իրեն վրայ ուղենանք հասկընալ :

Շնորհալւոյն յուղարկաւորութեան հանդիսին ներկայ գտնուելու համար՝ Հռոմկլայ եկած ըլլալով, հոն գումարուած ամեն եպիսկոպոսաց ընդ հանուր հաւանութեամբ անոր յաջորդ ընտրեցաւ. վասն զի անոր ըստ մարմնոյ մերձաւորը՝ ժառանգ և հետեւող անուան նաև անոր լուսաւորչայր առաքինութեանցը. և իր ընտրութեամբը՝

ազգին այնպիսի հօտաւէտ մը դրկմանը ցաւը մեղմել ուզեցին։

Ա.յն արժանաւոր ընտրութիւնը՝ ուրախացուց նաև զկայսրն Բիւզանդիոյ Կիր Մանուէլ, որ մասնաւոր մխիթարութեան թուղթ մը գրելով առ կաթուղիկոսն, կը յորդորէր զինքը որ հօրեղբօրը Յանիւքն սկսած յոյն և հայ ազգաց միաբանութեան խորհուրդն առաջ տանի։ Անիկայ էր նաև Գրիգորի բազձանքը. բայց կը վարանէր թէ ինչպէս պիտի կարենայ ամբողջ ազգի մը հաւանութիւնն առնուլ այնպիսի օգտակար խորհրդոյ մը գործադրութեանը։ Ա.յս վախճանաւ Ընորհալին՝ Անփափանոս անունով վարդապետ մը արևելք դրկած էր միութեան հակառակող եպիսկոպոսաց հետ խօսելու, և անոր մեծ օգտակարութիւնը հասկըցնելով՝ հաւանութիւնն առնելու։ Անփափանոս՝ կայսեցւոյն մահուընէն ետքը՝ առաջնորդաց հաւանութեան գիրը բերաւ ու անոր յաջորդին յանձնեց. որով սիրտ առաւ հայրապետը, ու սկսաւ կայսեր ու Ցունաց Միքայէլ հայրապետին հետ թղթակցիլ. և երկու ազգաց հաւատոյ մասանցը մէջ ունեցած զանազանութեանց մեկնութիւնը տալով կամ ուղղելով, կաթուղիկոսը Հռոմկլայ ժողովոյ Հայոց, Ա.զուանից ու վրաց եպիսկոպոսունքն ու առաջնորդները և վանահարքը։ Ա.յն գումարմանը մէջ Ներսէս Լամբրոնացին իւր ազգու և դեղեցիկ առենաբա-

սութիւնն ըրաւ, չատերուն մտաց տարա-
կոյսը լուծնց, զայլս իրենց ուղղութեանը
մէջ հաստատելով։ Ժողովոյն լմընալէն
ետքը՝ ամեն գումարեալ եպիսկոպոսուն-
քը իրենց հաւատոյ խոստովանութիւնը
գրեցին, և անոր տակը դրին իրենց սահ-
մադրութիւնը և դրկեցին առ կայսրն։
Բայց նոյն միջոցին Միքայէլ կայսեր մահը
և ուրիշ քաղաքական յեղափոխութիւնք
վրայ հասնելով, միաբանութեան խորհըր-
դոյն գործադրութեանը արգելք եղան։

Լատինացւոց հետ ալ սիրով և ընտա-
նութեամբ էր Գրիգոր. և այն պատճա-
ռաւ Լուսիոս Գ Հռոմայ քահանայապե-
տին ալ Թուղթ գրեց, անոնց եկեղեցա-
կան պաշտամանց կարգաւորութեան վեր-
քը խնդրելով։ Լուսիոս կատարեց անոր
խնդիրքը, ու ի պատիւ՝ հայրապետական
խոյր, եմիփորոն և պալիում դրկեց՝ կոն-
դակաւ մը, զոր Լամբրոնացին Թարգմա-
նեց։

Այն տարիները Հագարացիք նորէն ե-
րուսաղեմի սերեցին. Գերմանիոյ կայսրը
Փրեդերիկոս Ա՝ խաչակրաց համբով մը ա-
բեւելք անցաւ, նոյն քաղաքը նորէն քրիս-
տոնէից զարձնելու։ Ռուբինեանց պայա-
զատն Լևոն Բ երբ լսեց անոր գալուստը,
կաթուղիկոսին հետ մէկտեղ կայսրը դի-
մաւորելու փութաց. և թէպէտ մեռած
զտան զինքը, բայց իրեն իշխաններէն մե-
ծարուելով զարձան իրենց աթոռը՝ Հռոմ-

կլայ. և հոն հանդիպեցաւ կաթուղիկոսին մահը՝ իւր վաթսուն տարուան հասակին (1195)։

Գրիգորի Տղայի երկասիրութիւններէն՝ միայն մէկ քանի թուղթերը ձեռագրնիս հասած են։ Ասոնց մէջ գլխաւորներն են Ա. կիս Մաճառէ կայսր՝ ի Կոստանդնուպոլիս, ցուցաց եկեղեցւոյն Հայոց հետ ընելիք միաբանութեան խնդրոյն համար, որուն սկզբնաւորութիւնը շնորհալւոյն ատենէն եղած էր։ Շնորհակալ կ'ըլլայ կայսեր այն մխիթարական թղթոյն համար՝ զոր սրբոյն Ներսէսի մահուանը առթիւ գրած էր իրեն. կը խոստանայ առաջ տանել միաբանութեան խնդրոյն նկատմամբ եղած ձեռնարկութիւնը, թէպէտ և ի'նքն ալ ժամանակի առջևը կը դնէ նաև մեծամեծ դժուարութիւններն, և թէ անկարելի է որ Հայք ծիսականաց մէջ փոփոխութիւն ընդունին, ինչպէս կը պահանջէին Յոյնք։

Ա. նոյն ինքն կիս Մաճառէ, յորում կը յայտնէ կայսեր թէ կը փափաքին Հայք որ ի գործ դրուի այն միաբանութիւնը՝ զոր թէ թագաւորը և թէ երկու ազգաց օգուտը կը պահանջէր. և թէ մտադիր չանձն կ'առնու դայն նաև ազգային ընդհանուր եկեղեցական ժողովը՝ զոր ինքը գումարած էր, և որուն ըերնէն հաւատոյ խոստովանութեան ընդարձակ թուղթ մը կը հրատարակէ։

Ա. Միքայէլ պատրիարք Հռոմոյ՝ ի կոս-
տանդնուպոլիս. դարձեալ նոյն խնդրոյն
վրայ, և Հայոց ազգային ընդհանուր ժո-
ղովոյն հաւանութեամբը: Այս թղթին վեր-
ջերը խօսք կ՚ըլլայ հաւատոյ դաւանու-
թեան վրայ՝ զոր առաջ տուած էին առ
կայսրն. և կը բովանդակէ համառօտ քա-
ղուած մը նոյն յայտարարութեան:

Ա. Հադրատացիս, և առանձին առ Գրի-
գոր Տուտէորդի, որ իր խելքովը ուղելով
ազգին ու եկեղեցւոյն իրաւանցը պաշտ-
պանութիւն ընել, դէմ եղած էր կաթու-
ղիկոսին և Յունաց, ու անոնց հաւատոցը
դաւանութեան վրայ այլ և այլ տգիտա-
կան խօսքեր ըրած, ու անարգական խօս-
քերով նախատած Հռոմկլայի ժողովը:
Սպառնալիք ալ ըրած էր կաթուղիկոսը
իր իշխանութենէն ձգելու: Հանդարտ
ոգւով՝ բայց լի սիրով և աստուածաբա-
նական հմտութեամբ պատասխան տուած
է իրեն Գրիգոր Տղայ, յորդորելով զինքն
՝ի զգաստութիւն: Պերճախօսութեան ըն-
տիր օրինակ մը կրնայ ըլլալ այս թուղթս:

Ա. վարդապետս հիւսիսոյ, որոնք կամ
տգիտութեամբ և կամ նախապաշարմամբ
դէմ կը կենային միաբանութեան, ու նոյն
ձեռնարկին պատճառ և համամիտ եղող
կաթուղիկոսը՝ իրաւունք և պարտք կը սե-
պէին քննամանել: Ասոնց ուղղուած է
Գրիգորի Տղայոյ այս թուղթը, որ ժամա-
նակաւ երիցագոյն է քան զգրութիւն Բըզ-

թոյն առ Յուսէորդին։ Ընդարձակ ու աս-
տուածային ոգւով վառուած կը խօսի այս
թղթիս մէջ սուրբ հայրապետս, յորդորե-
լով զվարդապետսն՝ որ ամէն բանէ աւելի
նախամեծար համարին զսէր և զմիաբա-
նութիւն։

Ա.յս թղթերուն մէջ ընտիր, հարթ և
ընդհանրապէս հայկաբան ոճ մը կը բանե-
ցընէ Ցզոյն, և կը ջանայ Շնորհալւոյն հե-
տևողը երևնալ թէ գրչովն և թէ սրտո-
վը։ Միայն թէ Շնորհալւոյն վսեմութիւնը
և քերթողաբան ոճը կը պակսի ասոր քով
Ցզոյն թղթոցը մէջ ընաբելագոյն է առ
Հաղբատացիս գրածը։

Գրիգորի կաթուղիկոսի կ'ընծայուին ու-
րիշ երկու թղթեր ալ. մէկը առ Լուսիոս
հայրապետ Հռոմայ, զոր կը յիշատակէ
Լամբրոնացին. իսկ զմիւսը կը յիշէ նոյն
ինքն կաթուղիկոսն՝ կայսեր գրած թղթոյն
մէջ, զոր առ նա ուղղած էր անմիջապէս
Շնորհալւոյն մահուընէն ետքը։ Բայց այս
երկու թուղթերն ալ դեռ մեր ձեռքը հա-
սած չեն։

Ողբ Երուսաղէմի. Գրիգոր Ցզոյ իր օ-
րերը հանդիպած Երուսաղէմի առումը
յայտզգեաց՝ ողբական քերդուածով մը
ատանգեց, հեեւելով և յայսմ իր հօրեղ-
բօր Շնորհալւոյ ողբոցն՝ յառումն Եդե-
սիոյ. նոյն չափով ոտանաւորի ալ գրած է։
Բայց ինչպէս յարձակ գրութիւնն՝ ասոր
մէջ ալ վար կը մնայ քան զՇնորհալին,

թէ և հինեւէն ունանք աւելի բանաստեղծ սեպհեր են գտա, գուցէ ուրիշ գրուածոց համար՝ որ մեզի ծանօթ չեն։

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

Լամբրոնացւոյն օրերը կը ծաղկէր Մեծ Հայաստանի մէջ Մխիթար անունով վարդապետ մը, որ Գոշ կոչուեցաւ՝ ժօրուացը ուշ աճելուն պատճառաւ։ Գանձակ քաղաքէն էր և ընտիր ծնողաց զաւակ, որոնք արբազան ուսմանց նուիրեցին զինքը. և երբոր տարիքն առաւ՝ կուսակրօն քահանայ ձեռնադրեցին։ — Շատ տարի քահանայական պաշտամունքը կատարելէն վերջ՝ փափաքելով կատարեալ հմտութեան սուրբ գրոց, և անոնց մէջ թաքուն մնացած ճշմարտութեանց, հանդիպեցաւ Տաւուշեցի Յովհան վարդապետին՝ որ նոյն ժամանակին մէջ գիտութեամբը համբաւաւոր անձ մը սեպուած էր։ Անկէց Մխիթար անունով վարդապետի մը քով մըտաւ, եաթը ուրիշներուն ալ, և վարդապետական անուն և պատիւ առացաւ ա-նոնց քով։ Բայց ինքը անով գոհ չըլլալով, դէպ ’ի արեւմուտք գնաց, Անաւ լերան վրայ բնակող վարդապետներուն քով. և

առանց իմացընելու թէ ինքն ալ վարդապետական իշխանութիւն ունի, շատ օգուտ քաղեց անոնցմէ. ու դարձաւ ի Կարին, անկէ ալ իւր աշխարհը. ուր իմաստութեամբը մեծ համբաւ առանալով, շատերը կու գային իրեն աշակերտելու. և ինչպէս Կիրակոս պատմիչը կը վկայէ, ամենայն ոք կը փափաքէր տեսնել զինքը, և իր խօսքը մտիկ ընել: Այնչափ մեծ էր իր անունը՝ որ շատ վարդապետներ իրենց մեծութեան աստիճանը ծածկելով, աշակերտի պէս կու գային անոր քովը որ մտիկ ընեն. եւթը իրմէն հրաման առնելով՝ նոքն ալ վարդապետութեան աստիճանը կ'ընդունէին: Եւ թէպէտ շատ էին իր անուանի աշակերտքը, բայց անոնց մէջ ամենէն աւելի նշանաւորներն էին Թորոս անուանով մէկը, որուն հայրը հայկազն էր և մայրը ասորի, որ առաքինի և ուսումնական կնիկ մը անցընելով, խոր ծերութեամբ վախճանեցաւ ու ի Հաղբատ թաղուեցաւ. և Վանական Յովհաննէս վարդապետ, որուն վրայ առանձին պիտի խօսինք:

Մխիթար՝ որուն քովն աշակերտած էր Գոչ՝ երբոր լսեց անոր իմաստութեան համբաւը, և թէ կրկին դարձեր է իւր հայրենիքը, եկաւ անոր քովն, ու իրենց հին սիրովը միաբանելով, կեցան Գետիկ վանքին մէջ, զոր նոյն ինքն Գոչ մեծացուցած և փառաւոր շիներ տուեր էր Հաղբատայ մօտ,

կայենոյ կամ կայենական դաւանին մէջ։ Երբոր նոյն վանքը կործանեցաւ սաստիկ երկրաշարժով մը, Մխիթար ուրիշ վանք մը շինեց նոյն Գետիկ անուամբ՝ Ցանճուտայ ձոր բսուած տեղը, իւանէ մեծ իշխանին հրամանաւն ու օգնութեամբ։ Ուրիշ շատերն ալ օգնական եղան իրեն, և մասնաւորաբար Խաչենոյ իշխանը Վախթանկ և անոր կինը, և Զաքարէ Սպասալար՝ եղբայրն իւանէի։

Այս Զաքարէ Սպասալարը՝ մանաւոր սէր և մեծարանք կը ցուցընէր Գոշ վարդապետին, և իրեն խոստովանութեան հայր ընտրած էր զինքը։ Այն օրերը Հայաստանի արևելքի կողմի վանքերուն մէջ շատ անսակ չփոթութիւններ ծագած էին, եպիսկոպոսական ու կաթուղիկոսական աթոռոց օրինաւոր յաջորդութեանն համար։ Այս պատճառաւ Զաքարէ իշխանը հրամայեց որ ժողովք մը գումարուի Այնի Շիրակայ, ու հոն ժողովեցան նոյն վարդապետներն ու եպիսկոպոսունքը՝ որ առաջ գումարուած էին ի Լօռի։ Բայց Մխիթար վարդապետը իր ծերութիւնն ու հիւանդութիւնը պատճառ բերելով՝ հրաժարեցաւ ժողովոյն ներկայ գտնուելէն. այլ թուղթ մը գրեց առ իշխանն Զաքարէ, թէ ինչ որ վարդապետը նոյն ժողովոյն մէջ վճռեն, ես ալ կ'ընդունիմ ու կը հաւանիմ անոնց սահմանածին։ Երբոր ժողովը գումարեցաւ, Զաքարէ ստիպեց զվարդա-

պետս որ իր խնդրուածոցը հաւանին. և Սակայ ժողովրդեան մէջ սահմանուածներուն ընդունելի ըլլալը՝ թղթով ալ իրեն ձեռքը յանձնեն: Երբ անոնք նեղը մտան, ամենքը մէկ բերան գրուցեցին. «Այդ բանը անկարելի է որ մենք կարենանք ընել առանց մեծի վարդապետին Մխիթարայ»: Այն ատենը Զաքարէ հանեց այն թուղթը զոր ընդունած էր ի Գոշէն. եպիսկոպոսներէն ունէր հաւանեցան. ուրիշներն ալ չհամոզուելով՝ Սպասալարէն ժամանակ ուզեցին որ իրենք ալ կարենան գրել առ Մխիթար, և խնդրել որ անձամբ յանձն առնու ներկայ գտնուիլ այն գումարման: Այն թղթին մէջ կ'աղաչէին որ ամենայն նեղութիւն և դժուարութիւն յանձն առնելով՝ գայ ի ժողովն. ու եթէ, կ'ըսէին, ճամբու մէջ մահ հանդիպի քեզի՝ անունդ հին սուրբ հայրապետաց կարգը կը դնենք. միայն թէ դու յանձն առնուս գալ մեզի:

Մխիթար վարդապետ անոնց թուղթը կարդալով՝ իմացաւ յայտնապէս թէ առանց իրեն անկարելի պիտի ըլլայ անոնց համոզուիլը. ուստի Գետակայ վանքէն ելլելով՝ Անի քաղաքը եկաւ: Բայց քաղքին դռնէն ներս չմտած՝ Զաքարէ մարդիկ ղրկեց որպէս զի ժողովքի չգացած՝ իրեն երթայ. և թէպետ Մխիթար չուզեց մտիկ ընել, բայց իշխանը բռնութեամբ ձիուն երասանակէն բռնելով՝ Զաքարէի տարաւ դինքը: Գումարուած վարդապետներն երբ

այս բանս լսեցին, շատ խռովեցան. և մէկէն ներսէս անունով վարդապետ մը ըրկեցին առ Մխիթար, որպէս զի Զաքարէի տունը չմտած՝ իրենց դայ: Հասաւ ներսէս, ու տեսաւ որ անիկայ Սպասալարին դռնէն ներս մտնելու վրայ էր. ու չկարենալով ինքն ալ մտնել, անոր ետևէն ձայնեց, ու ժողովոյն ազաչանքը ծանոյց անոր: Բայց երբ չկրցաւ դինքը ետ դարձնել, անոր ու Զաքարէի վրայ շատ բան խօսեցաւ, ու մեծ չխոթութիւն ձգեց ժողովրին մէջ: Իսկ Զաքարէ հարցուց Մխիթարայ կարծիքը. ու երբ տեսաւ թէ անիկայ դէմ չկնցաւ, ալ չուզեց ժողովոյն հանութեանը մնալ, հրաման ըրկեց ժողովը գումարողներուն որ ամէնքը իրենց տեղը դառնան. Մխիթար ալ մասնաւոր թղթով յորդորեց զիրենք որ Սպասալարին խօսքը մտիկ ընեն, և իւրաքանչիւր որ իւր վանքը դառնայ:

Այս երկայն դէպքը պատմեցինք, ցուցընելու համար թէ որչափ մեծ էր և պատկառելի Մխիթարայ անունը թէ եկեղեցականաց և թէ աշխարհական իշխանաց առջև: Ժամանակակից պատմիչք շատ կը գովեն զինքը. և Կիրակոս՝ հռչակաւոր և մեծխոհատ գիտուներամբ կը կոչէ. ուրիշ տեղ մըն ալ՝ այր խոհատուն և վարդապետական ուսմամբ հռչակեալ: Վարդան պատմիչն ալ՝ սքանչելի գիտուներամբ կը կոչէ զՄխիթար:

Ի Գ.Նարիկ կամ Ի Հաղբատ Հանդիպե-
ցաւ Մխիթարայ Գոշի մահը, Հայոց ՈԿԲ
(1215) Թուականին։

Գոշի երկասիրութեանցը մէջ նշանա-
ւոր է

Դատաստանագիրքը, զոր խաչէնոյ վա-
տանի իշխանին ու Հղուանից Յաեփանոս
եպիսկոպոսին խնդրանօքը յօրինեց Հայոց
ՈԼԳ (1184) Թուականին։ Այս գործոյն
չարագրութեանը պատմութիւնը ինքը Մը-
խիթար կ'ընէ համառօտիւ յիշատակարա-
նին մէջ, հետեւեալ խօսքերով. «Զհանար-
կութիւն մեզ յայսմ իրողութեան եղև Ի
Թուականութեանս Հայոց ՈԼԳ, և շրջա-
նին երթալոյ Ի բաց ճԱ, որ կոչի փոքր.
իսկ հոռովին Նե. յամս անիշխանութեան
Թագաւորութեան մերոյ, Ի վաղնջուց Ի
ժամանակի մնացելոց սակաւ իշխանաց
Ի կողմանս խաչենոյ, ընդ ժամանակս ա-
նուանելոյ Հասանայ որդւոյ Վախտան-
գայ կրօնաւորելոյ, և որդւոյ նորա Վախ-
տանկայ, Ի գլխին որ կոչի Հաթերք, գըլ-
խաւորի այլոց իշխանաց։ Եւ կողմանցս
Կիլիկիայ՝ մեծի իշխանին Ռոբենի, յամի
յորում մեռաւ յաղթող Թագաւորն Վրաց
Գէորգէ. Ի հայրապետութեան տեառն
Գրիգորի Հայոց մեծաց, և Ի դիտապե-
տութեան տեառն Յաեփանոսի տանն Հ-
ղուանից յաշխարհին Աւանայ, Ի նահան-
գին որ կոչի մայրաթաղաքին Գանձակայ,
յանապատ և յեղբայրանոցս անուանեալ

Պասնոյ, սկզբնաւորեալ ՚ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաչէն. ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոց, ձեռնատուութեամբ հօր Յովսեփայ և եղբօր Պաւղոսի յորդորմամբ յառաջարկութիւնս։ Բայց զծագրութիւն յիշատակիս՚ի նախագրութիւն գրոցս դասատանի եղև, զի կատարած սորա՚ի ձեռն մեր միանգամ ոչ է, որպէս ասացեալ է կանխաւ զպատճառն։ Եւ արդ որքան է կար, անկանիմք հիւսել զկնի զիրս դասատանի. ընդ որս և զայս ևս մաղթեմք, . . . եթէ հաճոյ ոմանց թուի յօրինակէ աստի փոխել զիրս դասատանի», և այլն։

Ա.յս գրուածքին մէջ՝ ընտիր և հմուտ ոճ մը կը գործածէ Գոշ, անանկ որ կ՚երևնայ թէ չատ խորունկ ուսումն և հետևաբար տեղեկութիւն ստացած է օրինաց, և անով կրցեր է այսպիսի գեղեցիկ երկասիրութիւն մը արտադրել։ Նախ իբրև յառաջաբանական տեղեկութիւնք՝ տասնըմէկ գլուխք բանի կան, որոնց մէջ տեղնիտեղը կը բացատրէ գրուածքին վաճառնը, և իրեն ինչ ոճ բռնելը նոյն աշխատասիրութեան մէջ։

Ա.յս տասնըմէկ գլխէն զատ՝ երկու հատիկ յիսունըմէկ գլուխ կը կազմեն Դասատանաց գիրքը ու կանոններն, մասնաւոր ցանկով մը՝ որ նոյնպէս Գոշի աշխատասիրութիւնն է։ Իր օրէնքները սահ-

մանելու համար՝ ջանացած է Մխիթար՝ աստուածային ու քաղաքական օրէնքներն իրարու հետ միաբանել. այն ինչ անաչառ քաղուած մը կը տեսնուի այս գիրքս տուրը գրոց, առաքելական կանոնաց և ժողովոց տահմանադրութեանցը, և այլ և այլ ազգաց կանոններուն, համառօտ ու վայելուչ ոճով մը։

Ձեռագրաց մէջ երբեմն համառօտած ալ կը գտնուի այս գիրքս, ըստ պիտոյից տեղւոյն. ինչպէս Անոյ գաղթականն ալ՝ ի Լեհս՝ թարգմաներ են թախծութբէն և Լատիներէն. եղբինս տպագրեցաւ մեսերս ի Վիեննա։

Առակք. — Հարիւր իննսունի չափ առակներ ալ չարագրած է Մխիթար, և իրաւամբ այս գործարին արուեստին մէջ անուն ստացած ու Հայոց եղծվրոսը կոչուած։ Իրաւ է որ իւր առակացը մէջ՝ ոչ յոյն քերթողին հանճարն ու փիլիսոփայութիւնը կայ, և ոչ ալ փեդրոս՝ լատին առակախօսին վայելուչ դուրցուածքը. բայց անանկով ալ աննշան երկասիրութիւն մը չէ, մանաւանդ լեզուին նկատմամբ։ Գիտերն ալ շատ անգամ հասարակ են, ու առանց նորութիւն մը ունենալու, որոնցմով անհամեմատ հաճոյ կրնային ըլլալ իւր առակները։

Առակաց կրկին տպագրութիւն եղած է ի Վենետիկ. նախ 1790ին, և ապա ի 1842, որ թէ տպագրութեամբն և թէ ընթերցուածոց ուղղութեամբը ընտրելագոյն է քան զառաջինն։

Մկնհոտիւն Երեմիայ. — Կիրակոս պատմիչը Մխիթարայ աշխատասիրութեանցը վրայ խօսելով, այսպէս կը գրուցէ. «Եթող նա յարձան և յիշատակ գերեզմանի՝ զիրս խնամատարհս յօգուտ խնամոտասիրաց, համառօտմարգարէութեանն Երեմիայի գեղեցկագիր կարգօք»։ Այս Երեմիայի մկնոտիւնը ոմանք ուղեցին Ասողնկայ ընծայել, ինչպէս առաջ յիշատակեցինք, բայց գրուածքին ոճն ու լեզուն աւելի կը հաւատարմացընեն անոնց կարծիքը որոնք Մխիթարայ կ'ընծայեն։ Համառօտ՝ բայց ընդհանրապէս ընտիր երկասիրութիւն մըն է ասիկայ. և ինքը գրիչը կը վկայէ՝ թէ այլ և այլ պատճառներու համար ստիպուած ըլլայ՝ սակաւաբան ոճ մը գործածել։

Աղօթք. — Մխիթարայ անուանքը այլ և այլ ընտիր ու ջերմեռանդն աղօթքներ կան, պատարագի մատուցման ժամանակ գուրգուրելու համար։ Դարձեալ խրատական գրուածք նոյն տուրը խորհրդոյ սպասաւորելու համար, զոր կը յիշէ և Կիրակոս «(գրեաց) առաջ ինչ կանոնս վասն ըսպասաւորելոյ մարմնոյ և արեան տեառն, թէ որպէս պատշաճ իցէ կամ օրպիսի կարգօք»։

Կ'աւանդէ դարձեալ Կիրակոս թէ Մխիթար շարադրած ըլլայ նաև զանազան խրատական թուղթեր, և գիրք մը Յայտարա-

յուրիւն ուղղափառ Հաւատոյ կոչուած, ՚ի խնդրոյ Զաքարէ մեծ զօրավարին և անոր իւանէ եղբօրը։ Որիչ գիրք մըն ալ՝ որուն մակագիրն էր. «Ողբ ՚ի վերայ բնութեանս՝ ՚ի դիմաց Ադամայ առ որդիս իւր, և ՚ի դիմաց Եւայի առ դստերս իւր»։

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՕՆԱՑԻ

Մխիթարայ Գոշի ժամանակակից էր նաև Տարօնացի Խաչատուր վարդապետն, որ Գուգարայ աշխարհին մէջ եղած Հաղարծնի վանքին առաջնորդն էր. «Այր սուրբ և առաքինի, ասանկ կը վկայէ անոր վրայ Կիրակոս, և գիտութեամբ հըրաչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստիւ»։ Հաղարծնի վանից ուխտը՝ որ իրմէն առաջ չատ խանդարած ու աւերուած էր, թէ հինութեամբը և թէ բարեկարգութեամբ պայծառացոյց։ Մեծ պատիւ գըտաւ վրաց Գորգի Թագաւորէն։ Պատմիչը կ՚աւանդէ թէ ինքը ըներած ըլլայ խաղը արևելքի կողմերը, այսինքն վերին կամ մեծ Հայաստանի մէջ. ու իրմէն առաջ եղող իմաստուն երաժշտաց երգերը՝ որ մոռցուեր կամ բոլորովին այլակերպուած էին, գրեց ու չատերուն սովրե-

ցուց։ Հաղարծնի վանքին մէջ մեռնելով, եկեղեցւոյն արեւմտեան կողմը թաղուեցաւ։

Գանձարանաց ու տաղարաններու մէջ այլ և այլ երգեր ու գանձեր կը գտնուին խաչատրոյ անուամբը, և որոց չատին սկզբնատառը իւր անունը կը յօդէն։ Բայց ատոնց մէջ ամենէն աւելի գեղեցիկն ու մտագրութեան արժանաւորը՝ խորհուրդ խորին երգն է, որ կ'երգուի քահանային դպեստաւորուելուն ժամանակ՝ սուրբ պատարագը մատուցանելու համար։ Այս երգիս յօրինման պատճառը հետեւեալ դէպքն եղած է. Ջաքարէ սպասալար իշխանը տեսնելով որ պատարագի մատուցման արարողութեանց մէջ շատ կամահաճոյ նորութիւններ մտած են, մասնաւոր ժողովքով մը ուզեց այն անկարգութիւնները վերցընել։ Երբ իւր վախճանին հասաւ, հրամայեց որ դուրսը բացօթեայ տեղ մը՝ սուրբ խորհրդոյն պաշտամանը համար վայելուչ խորան մը կանգնելով, հանդիսաւոր պատարագ մատուցուի՝ եկեղեցւոյ հին և հարազատ արարողութեամբը։ Այս առթով չարադրեց խաչատուր վերը յիշուած ծանօթ երգը։

Տաղարանաց մէջ յիշատակուած երգերը հեռւէաներն են, յորոց ժամանք խաչատրոյ կեչառէացւոյն են անշուշտ. բայց զանազանելը դժուարին ըլլալով՝ ամենը մեկէն հարկ սեպեցինք նշանակել։

Խայտաճեղճ յորովայնէ. — Յովհաննու կապաստեան.

Խանդաղալից սրտիւ. — Քառասուն մանկանց.

Խանդաղակաթ սրտիւ. — Բեթղեհեմի մանկանց.

Խաչ կենաց նշան յաղթութեան. — Վարագայ խաչի.

Խաչաբարձ արհի պանծալի. — Բարսղի.

Խաչաքարոզ խաչելոյն. — Ոսկեբերանի.

Խաչի քո Քրիստոս երկիր պագանեմք. — Գիւտ խաչի.

Խնամք խորհրդոյն, գուժ արարչական. — Յարութեան.

Խնամք սիրոյ խնդիր փրկութեան. — Ծնեղեան.

Խնդա խորան Ադամոծոյ բանին. — Ծնեղեան.

Խնդա Սիան խորան խորհրդոյ. — Ծաղկազարդի.

Խնդա ամաչար, մայր սեառն Ցիսուսի. — Ծննդեան.

Խնդահրաւէր դասք. — Ծննդեան.

Խնդահրաւէր մանկունքը Սիոնի. — Սրբոյն Թէոդորոսի և Գէորգեայ.

Խնդութեան ձայն, բարբառ աւետեաց. — Աւետեաց.

Խնդութեան ձայն բեթլեհեմական. — Ցեառնընդառաջին.

Խնդութեան ոճն այսօր կատարեմք. — Կիրակամուտ.

Խնդութեան քարոզ՝ բարբառ կենդանի. — Սահեփանոսի.

Խնկաբեր ծառ, ծաղիկ անթառամ. — Ծնընդեան.

Խոնարհեալ բանին Աստուծոյ. — Մարտիրոսաց.

Խոնարհիմք հոգւոյն հեզութեամբ. — Լուսաւորչի.

Խոստովանիմք զքեզ միածին. — Ոսկեբանց.

Խորան փառացն Աստուծոյ. — Ծննդեան.

Խորան քեզ ողբայ. — Վահանայ Գողթնացւոյ.

Խորհուրդ անշարժ հայրաշարժ. — Թադէի և Բարդուղիմէոսի.

Խորհուրդ անքննին անճառ. — Դաւթի և Յակոբայ.

Խորհուրդ ընտրեալ յառաջ գուշակեալ. — Խաչի.

Խորհուրդ հրաւիրմամբ քոյոյ. — Յովհաննու Երուսաղէմացւոյ.

Խորհուրդ հանգամանեան. — Թադէոսի.

Խորհուրդ յառաջ քան զնկղբանէ. — Ղազարու.

Խորհուրդ հրաւիրեալ կամաց. — Յարութեան.

Խորհուրդ սոսկալի անխմանալի. — Աւագ ուրբաթու.

Խորհուրդ որ ծածկեալ էր. — Աւագ ուրբաթու.

Խորհրդաբար պատուեալ պատկերին. — Սարգսի.

Խորհրդազգած քոյ մարդեղութեանդ. — Աւաքելոց.
Խօսք անքնին, անճառ անհասին. — Յովհ. և Յակոբայ.
Խրատատեալ կանոն օրինի. — Ղեւոնդեանց.
Խրատ մարդասիրին. — Ինոկենտի:

ԴԱՒԻԹ ՔՈՐԱՅԵՑԻ. Երկոտասանեւորդ դարուն մէջ ծաղկեցաւ՝ ի Հայաստան Դաւիթ Քոբայրեցի կամ Քոբաբերդի, Հաղբատայ վանքին միաբաններէն, որ Զաքարէ սպասալարին գումարած ժողովականացը մէկն էր, և կ'երեւայ թէ անոր բարի դիմանցն ու քանից հակառակող ներէն: Անշուշտ զայս կ'ուզէ ակնարկել Լամբրոնացին հետեւեալ խօսքերով՝ զոր գրած է առ Լեւոն Թագաւոր. « ԶԱնեցւոյն պատուի դուք էք լսել, և զՔորոյ գեղոյն, և անդ Տուաէորդին և Քոբայրեցին, և այլք խրեանց տեսոքն և կենակիցք »: Քոբայրեցւոյն անուամբը կը գտնուին Գրիգոր Սասունցեաններուն Ճառից լուծմունքը, և Համառօտ երկասիրութիւն մը այս վերնագրով. « Թէ ընդրութիւն յաւետարանն Մատթէի՝ ի պէտս առնաբանութեան Դաւթի վարդապետի »: Յովհաննէս Քոբայրեցի մըն ալ կը յիշատակուի իր անուամբ, ուսկից վկայութեան խօսքեր մէջ կը բերէ Վանական վարդապետ. բայց ամբողջ գրուածը ձեռքը նիւ հասած չէ:

Այս գարուս վերջերը երեւցած է նաեւ ՍԱՄՈՒԷԼ, անունով ծերունի մը, Սկեւռայ վանքին միաբան նէրէն, և այն պատճառաւ Սկեւռացի կոչուած:

Այսր միակ երկասիրութիւնը՝ Լամբրոնացւոյն վարուցը համառօտ պատմութիւնն է, զոր անոր չարագրած Սալմոսի մեկնութեան եռակը ասէլ ըլլայ: Ընտանի և մտերիմ էր սրբոյն, ինչպէս նաև իւր երկու վանահիւքն ալ Գրիգոր և Ներսէս:

ԴԱՒԻԹ ՎԱՐԴԱՊԵՏ, հեղինակ մեկնութեան Եսայեայ մարգարէի, որ Թերևս ըլլայ առանց ա-նուան յիշատակեալն 'ի Գէորգայ Սկևռացւոյ՝ իւր Եսայեայ մեկնութեան մէջ:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ և իւր աշակերտն ԵՓՐԵՄ, որ «աշխատասէր Ժողովեաց զբանս մեկնըչացն 'ի մի, յեռ սրբոյն Ներսէսի» Շնորհալւոյ, և Մատթէի աւետարանին մեկնութիւն մը գրեց:

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԻՐԱՁՈՒ վարդապետ, Վարագայ կամ անոր մօտ Խաչի վանաց առաջնորդն, մեծահամբաւ սրբութեամբ և իմաստութեամբ. զոր՝ Թէպէտ և շատ ծեր էր՝ Թախանձանօք հրաւիրեց և 'ի Հռոմկլայ բերել տուաւ Գրիգոր Ա պիրատ կաթուղիկոսն. գովութեամբ կը յիշէ զսա նաև Ս. Ներսէս Լամբրոնացին. բայց յաջնուանէ գրաւոր գործ մը չյիշուիր Ստեփանոսի:

ԴԱՐԺԳ

ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՅԻ

Այս մատենագրութեան անկման դարուն մէջ ժամանակաւ երիցագոյն կը սեպուի Գրիգոր Տարօնացի, Սկեւռայ վիճակին։ Լամբրոնացւոյն մտերիմն ու սիրելին եղած է Գրիգոր, և անոր հետևելու ջանացող թէ՛ ի սրբութեան վարուց և թէ՛ ի մատենագրութեան։

Այլ և այլ երկասիրութիւններ չարադրած է, յորոց ոմանք իւր իսկ անուամբը կը յիշատակուին, և այլք անծանօթ մնացած, նոյն անուամբ այլ և այլ հեղինակներ ըլլալուն համար։ Կան նաև այնպիսի երկասիրութիւններ՝ որոց միայն յիշատակը կ'աւանդի դրոց մէջ, և միայն քանի մը հատուածներ հասած են մեր ձեռքը։

Ցայսմ երկասիրութեանց կարգէն են

Ներքոդնան մը ի սուրբն Ներսէս Լամբրոնացի, զոր անոր Ներսէս քեռորդւոյն խնդրանօքը շարագրած է, անմահացընելով այն մեծ ու նշանաւոր անձին վարքն ու առաքինութիւնները։ Իբրև հնեւտորականութիւն գրուածք մը՝ իւր ժամանակին համար բաւական նշանաւոր երկասիրութիւն կըրնայ սեպուիլ, բայց առանց նախագիծ գաղափար սեպուելու պատիւն ունենալու։ Սիրան ու ճարտասանական հոգւոյն յատկութիւնները յայտնի կ'երեւնան, բայց կը պակսին կարգն ու կանոն՝ որ ճարտասանին խօսքերուն ոյժը կրկին կ'աւելցընեն։

Ձառ. — Ցիշատակուած ներքոդէն զատ՝ քանի մը ուրիշ ճառեր ալ կը գտնուին Սկեւռացւոյն անուամբը. այսինքն Քրիստոսի յարութեան վրայ ճառ մը, և ուրիշ մըն ալ Եւսայի մարգարէին «Ցէր ո՞ հաւատաց» խօսքին վրայ։ Իրեն կ'ընծայուին ոմանք կարծելօք Եւագրի՝ Լուսաւոր պատճառ կոչուած գրոց մեկնութիւնը, որուն միայն մէկ քանի պատառիկքը հասած են մեր ձեռքը։ Տարբեր է այս գրուածքս Եւագրի գրոցը համառօտ լուծմանէն, որ անանուն երկասիրութիւն մըն է և վերջին դարուց արժանի։

Շարականաց ցուցակներուն մէջ Սկեւռացւոյն կ'ընծայուի Յովհաննու Կարապետին վրայ երգուածը, որուն սկզբնաւորութիւնն է «Արեգականն արդարութեան»։ Հնդինակին պատիւ ընելու բա-

ականութիւն ունեցող երգ մըն է ասիկայ, թէպէտ չերևնայ մէջը այն բանաստեղծական ոգին՝ զոր կռմիտաս ցուցած է Հոխխոխմանց չարականին մէջ, և ոչ այն ընտիր լեզուն՝ որ ընդհանրապէս յատուկ է շատ չարականներու։

Ոմանք Սկևռացւոյն կ'ընծայեն այն Հաւատոյ հրաւիրագր, զոր այլք ուզած են Նարեկացւոյն սեպել, և որուն վրայ արդէն խօսած ենք նոյն տուրը մատենագրին ուրիշ երկասիրութեանցը հետ։

Ծանօթ են իր անուամբ և քանի մը ջերմ հառնդական աղօթք։

ԳԷՈՐԳ ՍԿԵՒՌԱՑԻ

Նոյն տաեններէն Սկևռայ վանքին մէջ կը ծաղկէր Գէորգ անունով վարդապետ մը, վերը յիշատակուած Գրիգորի Սկևռացւոյն քեռորդին, որ Լամբրոն գղեկին մէջ ծնած ըլլալուն համար՝ երբեմն Լամբրոնացի ալ կոչուած է։ Երբոր Լամբրոնացին Հռոմկլայ գնաց, հետն էր նաև Գէորգ վարդապետ. և ծերունի Յամուէլ վարդապետը, որ նոյն Սկևռայ վանքին միաբաններէն էր, մեծ գովութեամբ կը խօսի վրան։

Գէորգեայ հարազատ երկասիրութիւն-
ներն կը սեպուին,

Եւայեայ մեկնութիւն մը, զոր Հայոց Հե-
թում Թագաւորին առաջարկութեամբն և
խնդրանօք յօրինեց, առաջնորդ ունենա-
լով իրեն զԵփրեմ Խորին ասորի, զՊօսկե-
բերան և զԿիւրեղ աղեքսանդրացի։ Յըս-
տակ ոճով և լեզուով գրութիւն մըն է ա-
սիկայ. և յառաջաբանին մէջ կ'ասանդէ
թէ եղան ուրիշներ ալ որ իրմէ առաջ
ձեռք զարկին այս նիւթիս վրայ գրելու։

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ

Գրիգորի և Գէորգեայ Սկեւռացեաց ժա-
մանակ ծաղկեցաւ ի Հայաստան Մխիթար
անուամբ քահանայ մը՝ որ Անեայ կաթո-
ղիկէին երիցանցը մէկն ըլլալուն համար՝
Անեցի կոչուած է։ Անոր անուամբը այլ
և այլ պատմական երկասիրութիւններ կը
յիշատակուին մեր պատմչաց մէջ, յորոց
և ոչ մէկն մեր ձեռքը հասած է։ Ա.յս գը-
րուածոց մէջ գլխաւորներն են

Հնախօսական Պատմութիւն մը Հայոց,
Պարսից, Վրաց և Աղուանից վրայ։
Վարդան պատմիչ՝ Վրաց սկզբնաւորու-
թեան վրայ խօսելուն առեն, Թորգոմէն

ինչուան Աբաս՝ որ Աֆխազաց վրայ քա-
գաւորեց, կը յաւելու. «Այս ըստ Մխի-
թարայ երիցուն ասիցն»։ Պատմութեանը
մէջ ալ անոր գրքէն հատուած մը մէջ բե-
րելով, կը գրուցէ. «Իսկ պատուական և-
րէցն Մխիթար Անեցի՝ այսպէս ասէ. Յո-
լով աշխատ եղէ գտանել զորպէսն սուլ-
տանացն որ՝ի Թուրքաց, և գտի այսպէս».
և այլն։ Աֆսոս որ այսպիսի պատմական
գանձ մը կորսուած է մեր օրերը։

Նոյն վարդան պատմիչ կ'աւանդէ թէ
արեւու և լուսնի խաւարման վրայ գիրք
մը շարադրած ըլլայ Անեցին՝ ոճիւ անու-
նով պարսկի մը գրքէն, որ կ'ըսէր թէ յու-
նարենէն թարգմանուած է՝ի պարսիկ, և
թէ Յոյնք ենովքայ մարգարէութենէն ու-
նէին. յորում կ'աւանդուէր թէ արեգակը
քնութեամբ չխաւարիր, այլ անոր խա-
ւարման պատճառը լուսինն է։ Բոլորա-
ծիր աղիւսակներ ալ ծրագրեց, աստեղա-
բաշխութեան այս երեւոյթը ուսումնական
լեզուով մեկնելու համար։ Այս գրուածքս
ալ կորսուած է հիմայ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Ա.յս տեսննեբս Հայաստանի կաթուղիկոսական աթոռը նստաւ Կոստանդին Ա. կաթուղիկոս Բարձրբերդցի, որուն համար կ'ուանդեն աղբային պատմագիրք թէ ևօթն այլ և այլ թղթեր գրած ըլլայ առ զանազանս։

1. Ա.ռ քահանայապետն Հռովմայ Գրիգոր Թ։

2. Ա.ռ Իննովկենտիոս Դ., չնորհակալ ըլլալով քահանայապետին ղրկած ընծայից համար։

3. Հայաստանի բոլոր առաջնորդաց, իշխաններուն և ժողովրդոց ուղղած մխիթարական և քաջալերիչ գիր մը, զոր ղրկեց վարդան վարդապետին ձեռքով։

4. Դարձեալ ուրիշ թուղթ մը անոնց, պաշտօնական կերպով ծանուցանելով ամենուն թէ երեք տարի յառաջ մեծ ժողով մը գումարուեցաւ՝ի Սիս, և հոն՝ սըրբոց հարց աւանդութեանց համեմատ՝ քսանևևօթն գլուխք կանոնաց սահմանուեցան։

5. Դարձեալ օրհնութեան գիր մը անոնց՝ որ իբրև կանոնական ընդունած էին իւր առջի թուղթը։

6. Մեծ կամ վերին Հայոց բնակիչնե-

րուն, Հոգւոյն սրբոյ բղխմանը խնդրոյն վրայ։

7. Ա. քահանայապետն Հռոմայ, ծանուցանելով թէ ինչպէս ընդունելի է Հայաստանի մէջ նոյն խնդիրը։

Ի Հռոմ գրկած թղթերուն՝ լատին թարգմանութիւնը ինչուան մեր օրերը պահուած են քահանայապետական կնդակագրոց մէջ. մէկ դաւանութեան թղթոյ մը հայերէն բնագիրն ալ կը պահուի Վատիկան, գրեալ առ Խննովկենտիոս Դ, ի պատասխանի թղթոյն զոր բերեր էր Պալին նուիրակն Տիմանէ՝ առ Հնթուամ թագաւոր և առ կաթուղիկոսն։

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Կոստանդին կաթուղիկոսին օրերը ծաղկեցաւ Յովհաննէս Վանական Տաւուշեցի վարդապետը, որ ինչպէս առաջ ալ յիշատակեցինք, Մխիթարայ Գոշի գլխաւոր աշակերտներէն մէկն էր. և կը վկայէ Կիրակոս՝ թէ իր ժամանակին ամենէն ազնուական վարդապետն ըլլալով, շատերը ուսման պատճառաւ իրմէն չէին հեռանար. և ոչ միայն վարքովն, այլ նաև խօս-

բերուն լսողութեամբը ամենքը կ'օգտէին. անոր կեանքն ու ամեն չարժումը՝ տեսողաց համար անդիր օրէնք էին։ Եւ զայս ոչ միայն իբրև ականջալուր կը զրուցէ Կիրակոս, այլ նաև ականատես. որով հետև երկար ժամանակ աշակերտեցաւ իրեն, Տաւուշ բերդին սահմաններն եղող անապատին մէջ։

Ժամանակ անցնելէն ետքը իւր հայրենիքը դարձաւ Վանական. ու մնաջէն փառաւոր վանք մը շինեց և բազմախորան հոյակապ եկեղեցի մը՝ որ Խորանաշատ անուանեցաւ։ Վերջը իւր աշակերտներն հետն առնելով, որոնց մէջ էր նաև Կիրակոս Գանձակեցի, Վ. ահրամայ երկրին սահմաններըը գնաց, ու կը բնակէր մնձ այրի մը մէջ՝ որ իր ամրութեամբը դղեակի մը կը նմանէր։ Հոն եկեղեցի մը շինած էր Վանական ու միանձանց բնակարան։ Երբ որ Թաթարաց իշխանը զարկաւ այն կողմերը, մօտ գեղերուն և աւաններուն բնակիչքը հոնանեղը ժողվուեցան իրենց կանամբքը և որդւովք։ Թաթարք եկան այրին չորս կողմն առին, ու հոն ամրացողներն կը սպիպէին որ դուրս ելլեն։ Երբ տագնապն ու վախը մէկ կողմանէ, և սովն սաստկութիւնը մէկալ կողմանէ սկսաւ դիրենք չարչարել, Վանական վարդապետն հետը առաւ Մարկոս ու Յոսէփ նէս աշակերտները, ու Թաթարաց զբաղաւորին գնաց։ Մեծ սիրով ընդունեցաւ

զինքն իշխանը. Հարցուց ու իմացաւ իրմէ վ. Սհրամ իշխանին ուր գտնուիլը, և հրամայեց վ. անականին որ յորդորէ այրին մէջ եղողներն՝ անվախ դուրս ելլելու։ Երբ անոնք վարդապետին խօսքերէն համոզուելով, այրէն ելան, թշնամիք անոնց ամէն ունեցածը չունեցածը վրանին յուզելով, ամէն բաներնին յափշտակեցին, ու զիրենք ալ հնոտ տեղ մը դրկեցին զոր գերեաց համար սահմաններ էին, չատերն ալ ծախեցին։ Ա.սոնցմէ էր և վ. անական, զոր յիսուն դահեկանով գնեցին քրիստոնեայք. ինքն ալ ելաւ խորանաշատի վանքը գնաց՝ աշակերտացը հետ մէկտեղ, ուր աղքին և հայրենեացը վրայ եկած աղէտքն ու թշուառութիւնը գրի վրայ կ՚առնուր։

Կոստանդին կաթուղիկոս Ա.սոյ մէջ գումարած ժողովքէն ետքը, նոյն ժողովոյն սահմանադրութիւններն ու կանոնները մատնաւոր թղթով ծանոյց ամեն գլխաւոր եպիսկոպոսաց և վարդապետաց, որ իրենց գրաղմանցը կամ հնոտաւորութեան պատճառաւ չէին կրցած նոյն ժողովոյն ներկայ գտնուիլ։ Ա.սոնցմէ ոմանք չուզեցին հաւանիլ ժողովոյն կանոնացը, ուրիշներն ալ համոզուելով յանձն առին. ասոնց մէջ էր նաև վ. անական վարդապետը։

Ա.յն օրերը ուրիշ եկեղեցական խնդիր մըն ալ ծագեցաւ. և ուրիշ շատ անգամ յուզուած՝ ու առանց կարևոր քննութեան մերժուած խնդիրը՝ վ. անական իրեն ի-

Հաստութեամբն և ազգին մէջ ստացած արժանաւոր համարմամբը լրջնցուց։ Ա-ս մտադրութեան արժանի դէպքս՝ ասանկ կը նշանակէ վարդան. « Ի Զ թուին չարժեցաւ խնդիր ի մէջ պապէն Հռոմայ, և գրեաց յազգս ամենայն քրիստոնէից, և թէ պարտ է զամենասուրբ Հոգին աստուած խոստովանիլ՝ ի Հօրէ և յՈրդւոյ բղխեալ։ Եւ չեղև հաճոյ Ա-սորւոց և Յունաց և վրաց, բայց ի Հայոց, որք քննեցին զդաւանութիւն առաջնոց սրբոցն՝ ի ձեռն աստուածամերձ վարդապետին վանականին, և գտին համախոհ երևելի անց փառաւորաց, Ա-թանասի, Գրիգորի Ա-ստուածաբանի, Գրիգորի Նիւսացւոյ, Գրիգորի Լուսաւորչին և այլոց սրբոց »։ Եւ որովհետև գիտէր վանական թէ ազգին մէջ կրնային դեռ ևս գտնուիլ այնպիսի անձինք որ ասանկ նորաձայն երևցած վարդապետութենէ մը խորչին, երկայն ճառ մը գրեց, յայտնելով թէ ինչու համար պէտք է զսուրբ Հոգին խոստովանիլ և դաւանիլ բղխեալ ի Հօրէ և յՈրդւոյ։ Ա-յս գրած ճառը կը կարդանք Կիրակոսի պատմագրութեանը մէջ հետևեալ խորագրով. « Խրատ դաւանութեան վանական վարդապետին »։

Խորանաշատի մէջ եղաւ վանականի մահը նոյն Զ թուականին, ուր քովը կանչելով իւր ամէն աշակերտներն՝ յորդորից զիրենք հաւատոց դանձը անարատ պա-

հել, ու վախճանեցաւ, մեծ սգոյ և տրտմութեան պատճառ ըլլալով իր բազմաթիւ աշակերտացը. «Չհարիւրապատիկն առէն թողուլ, կ'ըսէ Վարդան, զանուն քաջութեան յաշակերտս իւր, և ի գիրս գանձուց եկեղեցւոյ, զոր ամբարեալ ի շնորհացն աստուծոյ և ի յատակ մտաց ծննդականաց»:

Իրմէն ետքը վանքին առաջնորդութեան պաշտօնը յանձնուեցաւ անոր եղբօրորդւոյն Պօղոս անունով քահանայի մը. իսկ վարդապետական ուսումը Գրիգորիս վարդապետին որ Վանականին աշակերտն ու ազգականն էր:

Վանականի գրուածները. — Վանականի գրուածոցը մէջ կը յիշատակուի

Յովթայ մեկնութիւն մը, որ ծաղկաքաղ հաւաքմունք մըն է Խիւքիոսի և Գաւթի Քոբայրեցւոյն համանուն երկասիրութիւններէն: Ուսանողքը մէջ կը յիշատակուին Ստեփանոսի, Եփրեմի և այլոց ոմանց հնդիւնակաց անուանք, որոց գրութիւններէն մեծապէս օգտուած կ'երեւնայ Վանական: Այսպէս զանազան ոճ ու գրուածքի կերպ ունեցող մատենագրաց աստարութիւնը փնտռելէն ետքը, զարմանք չէ որ Վանական չէ կրցած միակերպ ոճ մը պահել այս աշխատասիրութեանը մէջ, այլ բնդհանրապէս խառնակ և չփոթ ոճ գրութեան և լեզուի:

Այսոր նման գրուածք մըն է նաև Ութա-

խացիր պահակ կոչից բռնուած չարաբանին տեսութիւնը, զոր Պետրոս անունով մէկու մը խնդրանօքը չարագրեց։

Վարդապետական գրուածոցը մէջ նշանաւոր է այն ճառը՝ զոր սուրբ Հոգւոյն բղխմանը վրայ չարագրեց, ինչպէս վերը յիշատակեցինք։ Յօնաստատեան կոչուած գրոց մէջ ալ քանի մը մանր երկասիրութիւնք կ'ընծայուին Վանականի, որոնց հարազատութիւնը կրնայ տարակոյս վերցընել։ Անոնց կարգէն են ճառ մը հետևեալ բնաբանով, «Հայեաց՝ի քեզ, դուխ լինիցի քան ծածուկ՝ի սրտի քում»։— Խորհրդաւոր համեմատութիւն մը հին և նոր կտակարանաց. — զանազան նիւթերու վերաբայ այլ և այլ հարցմունք ու պատասխանիք։ — Յարձագիր վրայ տումարական գրբուած մը՝ յորում Հայոց և ուրիշ ազգաց ամիանները խօսքը կ'ըլլայ։

Պատմութիւն. — Վանականի երկասիրութեանցը մէջ գլխաւոր, և յետագային հետաքննութեանը արժանաւոր նիւթ և ճարակ պիտի ըլլար Պատմութիւնը, որ դժբաղդաբար մեր ձեռքը հասած չէ, և որուն կորուստը՝ մեծ կորուստ մը պէտք է սեպուի թէ ազգային մատենագրութեան և թէ պատմութեան։ Թէ Վարդան և թէ Կիրակոս կ'ուանդնեն որ երբ Վանական՝ դիները գերող Թաթարներուն ձեռքէն ազատելով՝ իւր խորանաշատ վանքը քաշուեցաւ, իր և ազգին գլխէն անցած ա-

մեն աղէտալի դէպքերը գրի վրայ առաւ։ «Հայոց ՈՁԵ թուականէն (1236) կ'ըսէ Վարդան, մինչև ի ՉԻԴ (1265) յորում այժմ կը գտնուիմք, ինչ որ բրին Նեստաղաց ազգը՝ այն ամեն իշխաններուն և իշխանութեանց վրայ, որ մեծ ծովուն ասդիի կողմը կ'ինկան, Պարսից, Աղուանից, Հայոց, Վրաց և Հոռոմոց աշխարհին վրայ, յորս կը բնակին Հայք, Ասորիք, Յոյնք, Տաճիկք և Թուրքմանք, տեղնիտեղը պատմած է մեր փառաւորեալ հայրը Վանական վարդապետ»։ Կիրակոսի խօսքերէն հաւանական կ'երևնայ թէ այս գրքիս մէջ ի Սիս գումարուած ժողովոյն պատմութիւնն ալ բրած է։

Նոյն պատմիչները մեծապէս կը գովեն նաև Վանականի գրասէր ուսումնասիրութիւնը, և թէ ամեն ջանք կ'ընէր որ չըլլայ թէ նախնեաց երկասիրութիւններէն բան մը կորսուի. ու յանուանէ կը յիշատակեն Երզնկայէն մէջ ժողոված գրոց բազմութիւնը. տեղ մըն ալ չափազանցութեամբ խօսելով՝ Եղբայրասէր Պաղտեայ կը նմանցընեն զինքը, «բազում գրեանս հաւաքեալ յազգաց և ի լեզուաց»։

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Արևելեան Հայոց և Աղուանից աշխարհին սահմանակից քաղաքներէն մէկուն մէջ ծնած է Վարդան, մանկութեան հասակէն վանական վարդապետին աշակերտած, և անոր ուրիշ աշակերտացը մէջ հռչակաւոր և սիրելի իր վարդապետին։ Ուխտի համար երուսաղէմ ըրած ճանապարհորդութենանը ժամանակ Կիւլիկիա հանդիպեցաւ, և իրեն հանճարոյն և զգօնութենանը արժանաւոր պատիւը գտաւ թէ Հեթում Թագաւորէն և թէ Կոստանդին կաթուղիկոսէն. ու հայրապետին ըստիպողական թախանձանօքը հինգ տարի կնցաւ անոր քով, կաթուղիկոսարանին կարևոր գործառնութենանցն օժանդակելու համար. և երբ Կոստանդին նոյն վարդանայ ձեռքովը իր մէկ շրջաբերական թուղթը ղրկից առ արևելեայս, մասնաւոր գովեստներով կը դրուատէր ղվարդապետն այն թուղթին մէջ, «արդիւնական վարդապետ անուանելով զնա, և նախանամութեան մասնաւոր պարգև մը», զոր և իւր սիրտն ու խօսքը կ'անուանէ յաժենայնի։ Թղթոյն հետ մէկտեղ արևելք տարաւ վարդան նաև Սոսդ ժողովոյն կանոնները, որուն ինքն ալ ներկայ գտնուած

էր Կիւլիկիոյ եպիսկոպոսաց և վանահարց հետ։

Կաթուղիկոսին գլխաւոր վախճանն էր Սոյ ժողովոյն սահմանադրութեանցն ու կամաց հակառակողքը համոզել, և անոնց միջ հաւանութեան գիր կամ խօսք առնուլ։ Ջոր կատարեց վարդան՝ կաթուղիկոսին կամացն ու բաղձանացը համեմատ. և հոն ժամանակ մը կենալով հայրապետին քով՝ թարգմանեց ասորւոց Մխայել պատրիարքին ընդհանուր պատմութիւնն, իրեն օգնական ունենալով Իշոխ անունով ասորի քահանայ մը։

Կիւլիկիայէն դառնալէն ետքը՝ կայենոյ ձորոյն մէջ եղած Անդրէի վանքը առանձնացաւ, և հոն շարադրեց իր գլխաւոր երկասիրութիւնքը, որոնց վրայ ետքը պիտի խօսինք։ Անկէ ետքը Վիրապին վանքը նստած է, և աշկերտներ սովրեցուցած. նոյն պաշտօնը կատարած է նաև Աղմոսավանից ու Թեղենեաց վանքին մէջ։

Վարդանայ կենացը գլխաւոր պարագաներէն մէկն է Հուլաղու խանին հետ ըրած տեսութիւնը, որուն մանրամասն ստորագրութիւնը կ'ընէ իր պատմութեան գրոցը մէջ։ Ինքը խանը, չգիտցուիր ինչ պատճառաւ, իր քովը կանչեց զվարդան, Շնորհաւոր, կամ ըստ այլոց Սարվանի որդի Շահպատոի ձեռքով, ու հետը Սարգիս ու Գրիգոր անունով վարդապետներն ու Տփխեաց աւագ քահանայն։ Հոն իրենց

մէ առաջ հասած էր նաև Հայոց Հեթում թագաւորը ու վրաց Դաւիթ արքայն, և Անտիոքայ լատին իշխանը, և Պարսից չատ ազատագրի մարդիկ։ Հուլաղու մեծ սիրով և մարդասիրութեամբ պատուեց զՎարդան. և անոր գինի օրհնել տուաւ, ու ձեռքէն առաւ խմեց ու իր աղօթքը խնդրեց։ Այլ և այլ հետաքրքրական հարցմունքներ ըրաւ, ու պատասխաններն ընդունեցաւ, զոր կը յիշատակէ պատմագիրը իւր գրուածին մէջ։

Թանէն ետ դառնալու ժամանակ՝ աւազակաց հանդիպեցաւ, և իւր գիրքը ինկաւ անոնց ձեռքը, զոր ետքը նորէն ստացաւ*։ Կենացը վերջի տարիներն Հաղբատայ վանքին մէջ անցուց, ուր չարագրեց Երգոց երգոյն մեկնութիւնն, և հոն մեռնելով թաղուեցաւ յամի 1271։

Պատմութեան գիրքը. — Վարդանայ գրքրուածոցը մէջ ամենէն աւելի նշանաւորն ու մտադրութեան արժանի՝ Պատմութեանը գիրքն է։ Հետաքրքիր գրուած մը, մանաւանդ իւր ժամանակացը դէպքերուն համար, և իւր առնուան գիտութեան վիճակէն բարձր երկասիրութիւն մը։

* «Ցաւուրս յայս՝ ի մեզաց խնդ անկաւ գըրքունկս այս ի ձեռս հարամեաց, տղայոք մեր. և յողորմութենէն Քրիստոսի ապրեցան տղայքն առ ժամն. և յետ ամի և կիսոյ գիրքս ի վաճառ բերեալ և գնեալ ի տանէ եղբօր մերոյ միոյ՝ Մալէր կոչեցելոյ»։

Հեղինակին դիտաւոր նպատակն եղած է այս գրուածքին մէջ՝ ազգային ժամանակակից պատմութիւն մը չարտգրել համառօտ ոճով. բայց ուզեր է ազգին սկիզբէն սկսիլ, և անով ալ գոհ չեղած՝ ուրիշ զանազան ազգաց պատմութիւններն ալ իրենին հետ խառներ ու աւանդեր է։

Նոր համար արարչագործութենէ կը սկսի իր գրուածքը, և կը հասցընէ ինչուան Սենաարայ աշտարակաշինութիւնը, անկէց՝ ի Նբրովթ և՝ ի բաժանումն ազգաց։ Յաբեթայ վրայ խօսելուն առեն, Հայկայ և Հայկազանց իշխանութեան վրայ ալ կը խօսի, մինչև՝ ի Վահէ, այնպիսի համառօտ ոճով՝ որ միայն անուանց ցուցակ կըրնայ սեպուիլ։ Եթբե նորէն աստուածաշունչ պատմութեան կը դառնայ, համեմատութեամբ ընդարձակ ոճով մը աւանդելով Աբրահամու կոչմանէն մինչև՝ ի Քրիստոս, այլ և այլ ժամանակակից պատմութեանց համառօտ յիշատակութեամբքը։

Կ՚անցնի ապա Աբշակունեաց պատմութեանը, բաւական հմտութեամբ և նոր պարագաներով աւանդել այն դէպքերը, զոր յայլոց պատմչաց գիտեմք, և կը հասցընէ մինչև իր ժամանակը։

Վեցհազար տարուան պատմութիւն է, զոր կ՚աւանդէ վարդան։ Այնչափ ընդարձակ ժամանակի պատմութիւն՝ այնպիսի համառօտ գրուածի մը մէջ՝ կամ խիստ ճարտարութիւն և կամ գիտութեան պա-

կասութիւն կ'ենթադրէ. և հարկ է ըսել Վարդանայ համար թէ այս երկրորդ թեթութեան մէջ ինկած է։ Անոր համար է որ շատ անգամ պարզապէս անուանց ցուցակ մըն է իր գիրքը, և ոչ յագեցուցիչ պատմութիւն։ Ժամանակագրութեան մէջ ալ ունեցած անզգուշութիւնը, որ պատմութեան կարևոր աչքն է, խիստ սահմանաւոր է. անոր համար թագաւորաց և իշխանութեանց ժամանակներն իրարու հետ կը խառնէ, կամ անխոհեմ կ'աւանդէ, մինչդեռ երկայն դարերու տարբերութիւն կայ մէջերնին։ Իւր համառօտախօսութեանը դէմ ալ՝ երբեմն երկայնաբանութեան մէջ կ'իյնայ, ու այնպիսի դէպքեր ու աւանդութիւններ մէջ կը բերէ, որոնց հաւատալը՝ իւր խմաստութեանն և համբաւոյն կրնան վնասակար ըլլալ, դիւրահաւանութեան ու պարզմտութեան յանցանք դնելով վրան։

Սակայն այս թերութեամբըն ալ՝ թէ ազգային պատմութեան և թէ եւրոպական դիտութեանց համար՝ ունի իւր արժէքը Վարդան. մանաւանդ իւր ժամանակին հնաբանական դիպուածոցը համար, զորոնք՝ ի լրոյ կամ՝ ի տեսոյ աւանդած է։

Թէպէտև յայտնի չէ թէ երբ սկսած է հաւաքել իւր այս համառօտութիւնը, բայց 1265ին լմընցուցած է, Հուլաղու խանին երթալէն առաջ. իսկ անկէ առաջ եղած երեսուն տարիներուն պատմութիւնը հա-

մառօտիւ նշանակած է. որովհետեւ արդէն վանական և Կիրակոս մանաւանդ գրքով աւանդած էին այն ժամանակաց դէպքերը*։ Անկէ ետքը կը յիշատակէ խաներին մահը, ու Եգիպտացւոց Կիլիկիա զարնելը, և Կոստանդին կաթուղիկոսին մահը ողբալով՝ կը լմընցնէ իւր գիրքը։

Մկնեռդական գրուածներ. — Իւր հոգեսէր եռանդեանը և սուրբ գրոց քաջվարժ համուխեանն արժանաւոր այլ և այլ մկնաբանական գրուածներ ալ շարադրած է վարդան, որոց մէջ ժամանակաւ երիցագոյն կը սեպուի

Դանիէլի մկնեռբիւնը. — Ի խնդրոյ եղբարց, յորում հետևած է, ըստ իրեն վկայութեանը՝ Եփրեմի, Հիւպոլիտեայ և Ստեփանոսի սիւնեցւոյ, համառօտ և ամփոփ ոճով։

Սաղմոսի մկնեռբիւն. — Հաղբատու Յովհաննէս եպիսկոպոսին խնդրանօքը՝ սաղմոսը մկնաբանելու ձեռք զարկաւ վարդան, և ամբրոնացիէն աւելի համառօտ ոճ մը բռնելով, և ընդհանրապէս հետևելով

* Ինքը վարդան ալ իւր գրոցը մէջ կը նշանակէ. « Զոր մեք ոչ համարձակեցաք երկբինել կամ բազմաբանել՝ այլ համառօտ բերել միայն զթիւ ժամանակին, և նշանաւոր իրաց և գործոց յիշատակօք՝ ի լուծին մերոյ գործառնութեանս, յօլով ժամանակօք սկսեալ և Թէրէի Թոդեալ՝ պատկառելով՝ ի գրոցդն պատուոյ »։

թէ իրեն և թէ ուրիշ հին մեկնչաց. այս ինքն Աթանասի, Բարսղի, Եպիփանու, Եփրեմի, և այլոց։ Գործածած լեզուն ալ խիստ սաստիկ՝ ու գրեթէ ռամկականին կը մօտենայ։

Մեկնութիւն Հեգամատևիկ. — Հաղբատայ Համազասպ եպիսկոպոսին ու Սանահնի վանից Գրիգոր վարդապետին խնդրանօքը շարագրեց Վարդան այս գրուածքը Հայոց ՉԻ (1261) թուականին։ Իրմէն առաջ եղող վարդապետաց՝ որ նոյն նիւթին վրայ խօսեցան, գրուածոցը բովանդակութիւն կամ քաղուած կրնայ սեպուիլ այս երկասիրութիւնս։ Ցունական հարց դասակարգութեանը հետ կը յիշատակուի նաև մերն Եղիշէ, ու անոր Աբրահամոց մեկնութենէն քանի մը հատուած մէջ կը բերէ, և ասոնք միայն մեր ձեռքը հասած են այն ընտիր և գեղեցիկ գրուածքէն։ Այլ և այլ քաղուածներ ալ մէջ կը բերէ Բարսղի, Եփրեմի, Գրիգորի աստուածաբանի, Պիսիդեայ, Նիւսացւոյն Մարգարգամութեան գրքէն, Մակաբայեցւոց գրուածներէն. տեղ տեղ ալ՝ի Յուսաւորչէ, Դաւիթ փիլիսոփայէն, Փիլոնի գրուածներէն, Թովմայի արձրունւոյ գրքէն, և այլն։

Մեկնութիւն երգոց երգոյն. — Իրեն աշակերտակից Կիրակոս վարդապետին խընդրանօքը յօրինած է այս գիրքս Վարդան 1265 թուականին, Կոստանդին կաթուղիկոսին ու Հեթում թագաւորութեան և

Յովհաննու արքեպիսկոպոսութեան առնելը, Հաղբատայ վանքին մէջ։

Ա. Կիրակոս ուղղեալ ընծայականին մէջ, որուն առաջնորդութեամբը և ինչ կերպով այս գրուածքին ձեռք զարնելը կ'ազանդէ վարգան. « Յորոց և զու ճա- նաչիս՝ տէրունական իր և անուն, հա- րազատ եղբայր մեր Կիրակոս, բարու- նեաց պետ և քաղցուածնի կիրք մեր, և մեծ մասն յուսոյն ի սուրբ եկեղեցի. որ և քումմ ըղձիցն կցորդել հրամայեցեր ի բան և ի գիր, գՀաւատոյ Ցեառն տալով, չնորհօք նորա կարել մեզ զմեսացեալն յեր- գոյ երգոյն ի Գրիգորէ Նիւսացւոյ, որ մեծն է և աղբիւր եկեղեցւոյ ընուլ, ա- ռաջնորդութեամբ Որոգինեայ, համառօ- տել և գԳրիգորին ի սկզբանէ, որ ի վեր գտանի քան զկարն մեր յոյժ »։

Նկրթող ի սուրբ Լուսաւորիչն. — Ի խընդ- րոյ Համազասպայ՝ որ Հաղբատայ առաջ- նորդ եղաւ յետ Յովհաննու եպիսկոպո- սին։

Մանր կամ անհարազատ գրուածներ. — *Ա.յլ և այլ մանր և անհարազատ գրուած- ներ ալ կ'երևնան վարգանայ անուամբը, որոնք քիչ կամ բոլորովին անարժանք են մատագրութեան և մասնաւոր քննութեան։* Ասոնց կարգէն է

Դասաւորիւն հաւատոյ, երկու տեսակ. մէկն ընդարձակ, իսկ միւսն համառօտ։

Համառօտ գրուած մը այսպիսի խորա-

գրով. Բանք յաղագս երկոտասան ականց, նմանապիսիւք երկոտասան առաքելոց։

Քերականի մեկնութիւն. — Աննչան գրուածք մը, իբրև ի ձեռագրէ Հնթմոյ թադաւորի։

Մանր գրուածոց կարգը կրնան սեպուիլ քանի մը շարականներ ալ որ Վարդանայ կ'ընծայուին. ինչպէս ի պատիւ Յովակիմայ և Աննայի երգուած «Ուր նախնոյց» շարականը, զոր ի Հռոմկլայ՝ Հնթում թագաւորին և Կոստանդին կաթուղիկոսին քովը եղած ատենը երգած կ'երևնայ. ողբովհեան մէջը մանաւանդ մաղթանք կան Հայոց թագաւորին և հայրապետին կենդանութեանը համար։ «Ի յանսահման ծովէն» ի պատիւ երկոտասան առաքելոց, և «Որք զարդարեցին» Թարգմանչաց վրայ։ Սարգիս անունով մէկու մը ձեռնարկած ալ Աբրահամ ծաղիկ շարականին մեկնութիւնը շարադրած է վայելուչ ոճով։

Առակք. — Վարդանայ անուամբը Առակաց գիրք մըն ալ կը գտնուի, որոց թիւը Աղուանացրոց մէջ ինչուան հարիւր քառասունի կը հասնի։ Հաւանական կ'երևնայ թէ Մխիթարայ Գոշի և այլոց առակներէն հաւաքուած երկասիրութիւն մըն է ասիկայ, որուն վրայ իւր քովէն ալ քանի մը առակներ յարմարցընելով հեղինակը՝ ամբողջ գիրք մը ձևացած է։ Բաւական հանճարեղ գիւտեր և զուրցուածքի կեր-

պեր կը բովանդակէն այս առակները, առանց զարմանալի զրուցատրի մը սեպուելու։

Երկու անգամ տպագրուած են այս առակներն այլ և այլ տեղուանք, և երրորդ մանական տպագրութիւնն ալ եղած է ի Բարիզ, հանդերձ գաղղիական թարգմանութեամբ (1825)։

Աշխարհագրութիւն. — Սոյն անուամբ գարձեալ ուրիշ երկասիրութիւն մըն ալ կը գտնուի վարդանայ ընծայուած, որուն վրայ այսպիսի խորագիր մը կը գնեն գրչագիրք. «Աշխարհագրութիւն նորոգ թարգմանչին և երկրորդ լուսաւորչին, վարդանայ վարդապետի»։ Աւելի Հայաստանի աշխարհագրութիւն՝ կամ քաղաքաց անուանակոչութիւն կրնայ սեպուիլ այս գրուածս, զոր գաղղիական թարգմանութեամբ ծանօթացուցած արևմտեայք՝ Անն-Մարդէն։ Անկէ զատ ուրիշ տպագրութիւն մըն ալ եղած է մատենկանս ի կոստանդնուպոլիս 1728ին։

Վարդանայ պատմութեան գրոցը երկու տպագրութիւն եղաւ մատաւնիներս. մէկ մը ի Մոսկուա, երկրորդ ի Վենետիկ՝ հմուտ և ընտիր ծանօթութեամբք։ Վերջին տպագրութեանս յառաջաբանին հետևեալը՝ բաց ի վարդանայ պատմագրողէ, ուրիշ մէկ կամ երկու համանուն վարդապետներ ալ կը յիշատակէ, և թէ այս երեքին գրուածներն վերիպակաւ իրարու ընծայուած են։ Այս երկուքն են՝ վարդան Բարձրբերդցի, որ մերիններն տասնըվեց տարի կրասեր է ժամանակաւ, և որ Երէրոյք վերջն կը կոչուի ի Ղազարայ Ջահկեցւոյ և որուն կ'ընծայէ

Զոքէց սահմանաց հայոց ձեռնարէն մը, Ասորեր, Պարսիկ եւ Թուրքեր։ Եւ թէ այս վերջիններս՝ երբորդին աշխատասիրութիւններն են։ — Վարդանայ Պատմութիւնը ռուսերէն ալ թարգմանեալ և ծանօթութեամբը հրատարակեց ի Մոսկուա՝ բանասէրն Պ. Մկրտիչ Էմինեան, յամի 1861։

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

Վանական վարդապետին աշակերտ ու Վարդանայ ուսմնակից էր Կիրակոս Գանձակեցի։ Գետակայ վանքին մէջ բրած էր իր ուսումը, որչափ որ կը ներէր խառնակ ժամանակը՝ յորում ապրեցաւ, և վարդապետաց ուսման և դիտութեան չափը։ Այս կարծիքս կը հաւաստացընէ իրեն Պատմութեան դիրքը, որ կիրակոսի միակ երկասիրութիւնն է՝ մեր ձեռքը հասած։ Իբրև մատենագիր՝ չունի այն կարգաբան ոճը՝ զոր իր վարդապետն և ուսմնակիցն աւելի կերպով մը գործածած են իրենց գրուածոցը մէջ. և ոչ ալ այն հմտութիւնը՝ զոր կը ցուցընէ Վարդան իր տիեզերական պատմութեանը մէջ. դարձեալ և ոչ բանադատ քննութիւն՝ որ անհրաժեշտ պարտաւորութիւն մըն է՝ անցեալ և ժամանակակից դիպուածներն ապագայից աւանդելու աշխատութիւնը վրան առնող մատենագրի համար։

Կիրակոսի առեն՝ հայերէն դպրութիւնը ազգային քաղաքականութեան հետ իրենց մահաւիթ ճգնաժամին հասած էին. կործանման մօտ եղող և չորս կողմանէ՝ ի թշնամեաց հարստահարեալ իշխանութիւն մը՝ չէր կրնար ոչ բարեկարգ վարժարաններ և ոչ ալ ուսուցիչներ երևցընել. և անոնց պակասութիւնը հարկ էր որ զգալի ըլլար ժամանակին բանասիրացը մըտքին, դպրութեանը և գրչին վրայ։

Աւողջ քննադատութիւն մը կը պակսի Կիրակոսի պատմութեանը մէջ, երբոր ա նանկ դէպքեր կ'աւանդէ ու հաւատարմացընել կը ջանայ, որոնց առուգութեանց գոյութիւնը դժուարին, ու երբեմն ինչուան անկարելի է. երբոր իրմէ առաջ եղող պատմչաց հետևելու տեղ՝ շատ անգամ անոնց գրուածոցը անհեղնակ՝ տարբեր պարագաներ և յիշատակներ կ'աւանդէ։ Եղուն ալ՝ իւր ժամանակին, ըսենք նաև թէ պատմած խեղճ դիպուածոցը՝ արժանաւոր է։

Պատմութեան նիւթը *. — Գրիչը ձեռք կ'առնու Կիրակոս պատմագրելու անանկ

* Վերնագիրը այսպէս կը նշանակուի գրչագրաց մէջ. « Համառօտ պատմութիւն ժամանակաց՝ ի սկզբան Գրիգորէ՝ մինչև՝ ի յետին աւուրս Թուացեալ։ Ընդարեալ Կիրակոսէ՝ մեծ և ընտրեալ վարդապետէ՝ ի մեծահռչակ տուրբ ուխտն Գեղակայ »։

թչուառ առենի մը մէջ, յորում « սէր ցա-
մաքեալ, անգթութիւն տիրեալ, աստուած-
պաշտութիւն նուազեալ եւ անհաւատու-
թիւն բարձրացեալ. սեղանք եւ պատա-
րագք լռեալ, եւ քահանայք անողորմ ի
սուր արկեալք. կանայք եւ մանկունք գե-
րեալք, եւ արք գառնամահ լեալ »: Ա.յս-
պիսի սրտով գրուած յառաջաբանութենէ
մը ետքը, կը սկսի իր Պատմագրութիւնը
այսպիսի վերնագրով. « Համառօտ պատ-
մութիւն և ցոյցք անուանց սրբոյն Գրի-
գորի, և որք յետ նորա յաջորդեցին յա-
թոռն »: Եւ այս վերնագիրը կը հաւատար-
մացընէ իրեն գրուածքին առաջին մասը.
վասն զի սրբոյն Գրիգորի, անոր որդւոյն
և թոռանցը պատմութիւնը կ'ընէ համա-
ռօտ ոճով, քաղելով իրմէ առաջ եղող
պատմագրաց գրուածքը, և մանաւանդ
Բիւզանդայ, և այլոց: Եւ թէպէտ քաղա-
քական այլ և այլ անցքեր ալ կը յիշա-
տակէ, և ոչ միայն ազգային՝ այլ նաև
Բիւզանդեան կայսերաց, Պարսից, Աբա-
բացւոց և Մահմետի և իրեն կրօնից և
աշխարհակալութեանց անցքերը, սակայն
գրեթէ միշտ երկրորդաբար, աւելի ուշե-
լով ճանչցընել և մեծարել տալ Հայա-
ստան եկեղեցւոյ իրեն փառաւոր պարծան-
քը: Վասն զի ուր համառօտիւ և վեր ի
վերոյ յիշատակութեամբ գոհ կ'ըլլայ քա-
ղաքական նշանաւոր անցից, աւելի ման-
րամասն՝ գրոցը տանելուն չափ՝ կը խօսի

եկեղեցական դիպուածոց, անձանց և գրա-
ւոր երկասիրութեանց վրայ : Այսպէս
Շնորհալւոյն առ Յոյնս գրած երկար հա-
ւատոյ դաւանութիւնը՝ ամբողջ կ'ընդօրի-
նակէ :

Ասանկ են ընդհանրապէս Կիրակոսի
պատմութեանց առաջին տասը գլուխները։
Բայց երբոր իրեն մերձաւոր ու ժամանա-
կակից դէպքերու վրայ կը սկսի խօսիլ,
առջի համառօտախօսութիւնը կը թողու,
ու ոճով կ'աւանդէ այն դիպուածները՝ ո-
րոնք Հայաստանի պատմութեան մէջ տը-
խուր տեղ մը գրաւած են. վասն զի հայ-
բենեաց կործանման և աւերելուն ման-
րամասն պարագաներն են : Սակայն ա-
ռաջ Աղուանից աղգին վրայ համառօտ
տեղեկութիւն մը կը դնէ *, և պատճառն
ալ ինքը մէջ կը բերէ. վասն զի զանոնք
« ազգային և հաւատակից Հայոց » կը կոչէ.
« մանաւանդ զի և առաջնորդք նոցա հա-
յալեզուք, հայերենախօսք յոլովք էին. թա-
գաւորքն՝ հնազանդք թագաւորին Հայոց,
ընդ ձեռամբ նոցա լնալք. և եպիսկոպոսքն՝
ձեռնադրեալք ի սրբոյն Գրիգորէ և յա-
ջթոռակալաց նորա » : Ու անոնց եկեղե-
ցական և ազգային համառօտ պատմու-
թիւնը՝ կը հասցընէ մինչև իր օրերը :

Անկէց Թաթարաց ազգին վրայ կը սկսի

* Համառօտ հիւսուածք պատմութեան կող-
մանցն Աղուանից, ընդ ներգոյս զուցատարաբար » :

խօսիլ, անոնց ըրած պատերազմունքը, յաղթութիւնները, Հայոց և Հայաստանի հետ ունեցած յարաբերութիւնները, Գանձակ, Շամքոր, Լօռի քաղաքաց աւերումը, Անւոյ, կարսայ հիմնայատակ քանդիլը, Թաթարաց Հայաստանի մէջ բռնանալը, ծանր հարկահանութեամբ բոլորովին ադքատութեան և խեղճութեան մէջ ձգելները, և այլն։ Ասոնք են Գանձակեցւոյն Պատմութեան գլխաւոր դիպուածոց նիւթերը։

Այս նկատմամբ հետաքրքրական է իրեն երկասիրութիւնը։ Թաթարաց վրայ նոյն իսկ Եւրոպացի ազգաց մէջ գտնուած տեղեկութիւններն այնչափ ցրիւ և առաս-պելախառն են, որ այսպիսի մատենագրի մը գրուածքը իրաւամբք իրեն արժանաւոր յարգը կը գտնէ անոնց առջևը*։

Թէպէտ շատ տեղ կարգէ դուրս դիւրահաւան պարզամտութիւն մը կ'երևցընէ Կիրակոս, բայց ընդհանրապէս իր ատուգահոսութիւնն ալ չենք կրնար մերժել։

* Կիրակոսի պատմութեան գիրքը տպագրուած է նախ՝ ի Մոսկուա 1858ին, Լազարեանց վարժարանի ուսուցիչ Գ. Յովհաննիսեանց Ոսկանի ջանքովը, և՝ ի Ս. Պետերբուրգ 1864ին հանդերձ ծանօթութեամբք։ Իսկ իւր գրուածոց հետաքրքրական մասունքը թարգմանուած են գաղղիարէն Պրոսէ և Տիւբրիէ արևելագիտաց ձեռքով, և հրատարակուած՝ ի Բեզրսպուրկ և՝ ի Բարիզ Ասիական օրագրաց մէջ, և առանձին ալ։

մանաւանդ իրեն ժամանակակից դիպուա-
ծոց նկատմամբ, զորոնք չէ դանդաղած
մանր քննել։ Ինքն ալ կը վկայէ իւր ան-
ձին համար, երբոր Լևոնի թագաւորու-
թեան վրայ խօսելու առենը կը գրուցէ.
« Մինչև ցայս վայր էր պատմութիւնս եր-
կոք աշխատութեան հատաբեալ ի նախա-
դրոց. իսկ որ առաջի կայս մեզ տապարիզ
պատմութեանս, է՛ որ ականջալուր և է՛
որ ականատես »։ Դարձեալ Հեթում ա-
ռաջնոյն ճանապարհորդութեան դարձը
նշանակելով, կ՚ըսէ. « Բաղում և այլ ինչ
պատմէր թագաւորն խնամատարէր՝ գիժա-
կան ազգացն, զոր թողաք մեք. զի մի ա-
ւելորդ համարիցցի »։ Ուրիշ տեղ մըն ալ
Հուլաւու թաթար զանին պաղատատ քա-
ղաքը առնելը նշանակելով, կ՚ըսէ. « Զայս
ամենայն պատմեաց մեզ իշխանն Հասան,
զոր Պռօշ անուանէին, որդին Վասակայ
բարեսպաշտի, . . . որ ականատես և ա-
կանջալուր էր իրացս »։

Մեծին Վարդանայ օրերը Հայաստանի մէջ ե-
ւեցաւ ՎԱՐԽԱՄ կամ ՎԱՐԴԱՆ անունով վար-
դապետ մը, որ աւելի իր մեռած պակասութեամբը
և հակառակաւէր գործովքն անուն հանեց։ Ան-
ժամանակներն Հռոմէական քահանայապետին ու
Կոստանդնի կաթուղիկոսին մէջ թլփատկութեան
պէս կ՚ըլլային. և թէպէտ ազգին մէջ շատերը կը
գանուէին որ կաթուղիկոսին առ արեւմտեայս ցու-

ցած մահբռնութեանը վրայ գոհ կեր, բայց գըտ-
նուեցան ոմանք ալ որ այլ և այլ պատճառնե-
րով դէմ կը կենային, ու չէին ուզեր որ գործա-
գրուի այն միաբանութեան խորհուրդը, ուակիլց
Թէ եկեղեցւոյ և Թէ ազգին մեծամեծ բարիքնե-
րու յոյս ունէր Կոսմանդին։ Ասոնցմէ էր և Վար-
խաման, որ տեսնելով Հռոմմայ հայրապետին նուի-
րակին Թղթերը առ Կոսմանդին կաթուղիկոս,
ինքիրմէ՝ իբրև՝ ի գիմաց կաթուղիկոսին Թուղթ
մը գրեց առ Հենրիա Թագաւոր. յորում արև-
մտեան եկեղեցւոյն վրայ հնգետասան մոլորու-
Թիւն բարդելով, տասակալն ոճով մը և անզգոյշ
բացատրութեամբը կը խօսի։ Որով ազգին մէջ
ամենեւին հետևող չունեցաւ մանաւանդ Թէ իւր
կռւսակից և համամիտ կարծուածներն ալ հեռա-
ցան իրմէ։

Կ՚ուսանողն Թէ ժամանակ անցնելէն ետքը՝ որ-
գիտութեամբ և մոլորութեամբ լեցուն գրուածք
մ՚ալ հրատարակեց Վարխամ, զոր Մխիթար կա-
թուղիկոսն ալ կը յիշէ առ Խնովկինախոս Հռով-
մայ հայրապետ գրած Թղթին մէջ, ու կը մերժէ
Թէ հեղինակը և Թէ անոր գրուածքը. « Ան-
յն ա-
ռենները, կ՚ըսէ, Սեաւ լերան վրայ կը բնակէր
Վարխամ անուանով հակառակաբար ու անծանօթ
մարդ մը, որ նուիրակին գէմ անկարգ, մոլորա-
միտ ու սխմաբ գրուածքներ հրատարակեց։
Բայց այն խօսքերը հաձոյ չէղան ոչ Թագաւորին
և ոչ կաթուղիկոսին, և մեծապէս արհամարհուած
են մեր քովը. և ուր որ գտնուին՝ կրակի կու-
տանք »։

Վարխամայ նման անձ մ՚էր նաև Մխիթար Սկեւ-
ռացի քահանայն Թէ գիտութեամբն և Թէ հոգեով-
որ նոյնպէս Հռոմմայ հայրապետին նուիրակին
խօսքերը լսելով՝ սրբոյն Պետրոսի առաքելոյն և

անոր յաջորդացը իշխանութեանը վրայ, ուզեց դէմ դնել, և իւր գրիչն ու լեզուն՝ նոյն իսկ սըրբոյն Պետրոսի առաքելապետին դէմ սրեց:

Կիրակոսի պատմչին ժամանակակից և գրեթէ հայրենակից ալ է ԿԻՐԱԿՈՍ ԱՐԵՒԵԼՑԻ վարդապետան, հեղինակ կամ հաւաքող Յայսմաւուրք գրոց, որոյ համար կ'ըսէ ինքն. «Ի միասին հաւաքեցի զըմեն սրբոցն Աստուծոյ ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց. գրեցի և պատմութիւնս նոցա, որոց ոչ էր եղեալ՝ ի գիրս Յայսմաւուրացն, և խառնեցի ընդ նախակարգն... Եւ եղև իրակութիւնս այս՝ ի Թուին ՁԻԸ, յաշխարհիս Կիլիկեցւոց, ՝ի Սիս մայրաքաղաքի, ՝ի Թագաւորութեան Հեթմոյ, և յառաջին ամի իշխանութեան որդւոյ նորին Լեւոնի, ՝ի վաթսուն և վեց ամի կենաց պանդխտութեան մերոյ: Եւ Ճառքն որ յաւելաք մեք ընդ հինն խառնեալ՝ հարիւր եօթանասուն»:

ՅՈՎՀԱՆ ԵՐԶՆԿԱՑԻ

Յովհաննու երզնկացւոյն ծնած տարին, ինչպէս մահուանը թուականն ալ՝ խիստ յայտնի չէ. միայն հաւանական կ'երեւնայ թէ ծնած ըլլայ 1250 թուականին, և մեռած՝ ի 1326: Ա.յլ և այլ անուամբք կոչուած է՝ ի գիրս այս վարդապետիս. մերթ

Երզնկացի կամ Երզնկայեցի, այն քաղաքը ծնած ըլլալուն համար. մերթ Պրուզ՝ որ կապոյտ աչուի ըսել է. երբեմն Ղործորեցի, որովհետև երկայն ատեն բնակեցաւ Ղործորու կոչուած սուրբ Աստուածածնի վանքին մէջ, որ Աբուազ գաւառին մէջ կ'ըլլայ. տեղ մըն ալ՝ Յովհաննէս Երզնկացի՝ մականուն Մաշածին՝ կոչուած, անդիտելի պատճառաւ։

Նոյն ատեններըը Երզնկայի քաղաքական իշխանութիւնը՝ Յովհաննէս պարոնին ձեռքն էր, իսկ հոգևորականը՝ իր հօրը Սարգիս արքեպիսկոպոսին, երկուքն ալ աշխարհաշէն, ուսումնասէր և ուսմանց եւեւէ խնդրներուն ձեռնտուութիւն ընող անձինք։ Երզնկացին իր ուսմանցն առջի ընթացքը՝ Սեպուհ լերանը քով սրբոյն Մինասայ կոչուած անապատին մէջ ըրաւ. եաքէն չրջակայքն եղող վանքերուն մէջ իր փնտռած ուսմունքն և գիտութիւնը խնդրելով ու վախճանին չհասնելով, ստիպուեցաւ հեռաւոր տեղուանք ճանապարհորդութեան ելլել։

Այն ժամանակներն Հայաստանի մէջ մեծ անուն հանած էր իւր իմաստութեամբն և գիտութեամբը վ արդան վարդապետն, որ իւր օգտակար կենաց վերջի տարիները առանձնացեր էր Հայոց ու Վրաց սահմաններուն մօտ Հաղբատ ու Սանահին վանաց մէջտեղ՝ կայենոյ ձոր ըսուած տեղը. և հոն եղող պզտի վանքին մէջ քաշուելով՝

քովը յաճախող աշակերտաց դաս կու տար։ Յովհաննէս ալ հոն գնաց, ու հա ւանական կը կարծուի թէ ինչուան վար դան վարդապետին մահը անոր քով կե ցաւ։

Յովհաննու երկնակայ դառնալէն տարի մը առքը՝ նշանաւոր դիպուած մը հանդի պեցաւ. գրեթէ 700 տարի առաջ փլած Թիլն աւանին մէջ գտնուեցաւ Հայաստա նի մեծ հայրապետին սրբոյն Ներսէսի մար մինը, ու Սարգիս արքեպիսկոպոսին ձեռ քով փոխադրեցաւ մաս մը յերկնակայ, մաս մըն ալ Տիրաշէն ըսուած վանքը, Գայլ գետին երկու ափունքը։ Այս դիւտիս և փոխադրութեան ոչ միայն ականատես կը կարծուի երկնակային, այլ կ'երեւնայ թէ ինքը չարագրած է նոյն հրաշալի դէպքին պատմութիւնը։ Որովհետեւ կ'ուսանդուի թէ այն փոխադրութեան ժամանակ՝ Սար գիս եպիսկոպոս ականատես ու իրենց իմաստութեամբը նշանաւոր եղող ան ձինքներէն մէկուն հրամայեց որ ոչ մի այն պատմութիւնն ընեն, այլ նաեւ ճառ մըն ալ գրուցուի. և կը կարծուի՝ բանա սիրաց թէ այս պարտքս կատարողն երկնա կային եղաւ։ Անկէ դատ գեղեցիկ չարա կան մըն ալ երգեց՝ի պատիւ սրբոյն Ներ սիսի, յորում կը յիշատակուի նաեւ անոր մարմնոյն փոխադրութիւնը։ Վասն Դ. Հայոց Թագաւորը լսելով սրբոյն Ներսիսի նշխա րաց դիւտն, հրամայեր էր եկեղեցի մը շի

նել անոր պատուոյն. և այն ևկեղեցւոյն նուաիրատուաց և օծման հանդիսին առթիւ ը չարադրեց այս չարականս։

Կ՚երևնայ թէ այն դէպքէն քանի մը տարի ետքը Երզնկացին իր հայրենի քաղաքէն հեռացած չէ, ինչպէս Սարգիս արքեպիսկոպոսին ու անոր որդւոյն անպարտ մահը, որ 1276 թուականին հանգիպեցաւ։ Անկէ չորս տարի ետքը՝ սրբոյն Գրիգորի վանքին միաբաններն՝ իրենց միաբանութեանը նոր կարգ մը տալու համար խընդրեցին՝ի Յովհաննէ որ կանոններգրէ. ինքն ալ կատարեց անոնց խնդիրքը, և գրեց «Կանոնք և սահման միաբանութեան եղբարց որ առատաձային սիրով միաբանեցան յեղբայրութիւն միմեանց յիշնկա»։

Յաջորդ տարին Երզնկացին ուղեց ճանապարհորդութիւն մ՚ընել յԵրուսաղէմ, թէպէտ և յայտնի չէ իր այս փափաքը կատարած ըլլալը։ Ասիկա միայն դիտենք որ Կիլիկիայէն անցաւ, որպէս զի հոնտեղը թագաւորին ու հայրապետին ջանքով պայծառացած դիտութեանց ճաշակն առնու։ Յակոբ կաթուղիկոս սիրով ընդունեցաւ զինքը, և իր ուսումնարանին վրակեցուկարգեց։

Երզնկացւոյն համբաւը լսուեցաւ նաև արքունեաց մէջ, և Լևոն թագաւորէն այլ և այլ մեծարանաց ու սիրոյ նշաններ տեսաւ։ Ռուբինեան թագաւորը՝ եւրոպական ազգաց հետևողութեամբը՝ սրբոյն վէր-

ոայ անուամբ ասպետական կարգ մը հաս-
տատեր էին. Երզնկացւոյն Կիլիկիա գըտ-
նուած ժամանակը՝ Լեւոն Թագաւորին եր-
կու որդիքն՝ Հեթում՝ ու Թորոս պատանե-
կութեան ու կտրճութեան հասակը հասնե-
լով՝ Զիաւոր ընտրուեցան, ուրիշ քանի մը
իշխանազանց ու արքունի պաշտօնէից որ-
դւոցը հետ մէկտեղ։ Ա.յս հանդիսին մէջ
հրաւիրուեցաւ Երզնկացին՝ տեղնական
ճառ մը խօսելու, որ մեր ձեռքը հասած չէ,
բայց կը գտուի յԱՀմիածին։ Լեւոնի ան-
դրանիկ որդին ու Թագաւորութեան ժա-
ռանգը՝ Հեթում՝ սէր կապեց վրան. իշ-
խաններն ու եպիսկոպոսունք ճանչցան ու
յարգեցին անոր հանճարը, ու անոնց յոր-
դորելովն ու խնդրանօքը այլ և այլ երկա-
սիրութիւններ չարադրած է, ինչպէս ետ-
քը պիտի տեսնենք։

Երզնկացին իր ծերութեանը տարինե-
րը՝ Հայաստանի Ա.րտազ գաւառին տուրք
Ա.ստուածածնի կամ Թադէի վանքը քա-
շուեցաւ, որուն համար աւանդութիւնը
կ'ըսէ՝ թէ տուրքն Թադէոս առաքեալ չի-
նած ըլլայ։ Վանահայրը Զաքարիա եպիս-
կոպոս՝ մեծ սիրով ընդունեցաւ դինքը, և
երկուքը միաբան աղգային յառաջադիմու-
թեան համար կ'աշխատէին։

Ա.յն ժամանակներն երկու նշանաւոր
դիպուածներ հանդիպեցան մեր աղգին
մէջ։ Պատմութենէ գիտենք թէ Կիլիկիոյ
Հայոց Թագաւորներն ուզեցին միաբանու-

թիւն ընել լատին եկեղեցւոյ հետ. և այս վախճանաւ Գրիգոր Ա. Նաւարզեցի ժողովք մը գումարեց ի Սիս, և հոն հրաւիրեց ուրիշ զանազան վարդապետաց հետ նաև զՅաքարիա և զերզնկացին. բայց երբոր ժողովքը չգումարուած՝ կաթուղիկոսին կենաց վախճանը հասաւ, ասոնք ժողովքի չգնացին։ Ա. Նաւարզեցւոյն յաջորդեց Կոստանդին, ուր նախորդին հրաւէրքը կըրկնեց. բայց Երզնկացին չուզեց տեղէն շարժիլ. վասն զի տեսաւ որ Ստեփանոս Ա. սպասելէն կը հակառակէր այն խնդրոց՝ որոնց համար սիտի ըլլար ժողովին գումարումը. ու թէ կաթուղիկոսին և թէ Յաքարիայի իմացուցած էր իւր միտքը։ Յաքարիա շատ ջանաց զինքը համոզել. բայց երբոր անկարելի եղաւ, լաւ համարեցան որ հեռուանց թղթով յայտնեն իրենց կաթուղիկոսին հետ համաձայնութիւնը, և փուճ տեղը այլ և այլ երկպառակութեանց յառաջելու պատճառ չըլլան։

Տասը տարի անցնելէն ետքը՝ երբոր Օշին թագաւորին հրամանաւը Ատանայի ժողովքը գումարուեցաւ, Երզնկացին առանց իր ծերութեանը նայելու՝ յանձն առաւ վերջին անգամ մըն ալ Կիլիկիա երթալու, և հոն սահմանուած կանոններուն հաւանելով՝ որոնցմով Սսայ ժողովքը կը հաստատուէր, գարձաւ յԱ. լուսաւ։

Ուրիշ կրօնական նշանաւոր դիպուած մըն ալ եղաւ՝ լատին քարոզչաց առաջին

անգամ Հայաստան գալը, որպէս զի Հայոց՝ իրենց լեզուն ընտանի ընեն, ու իրենք ալ հայերէնը սովրին. և այն յարաբերութեամբ՝ կրօնական միութեան և համաձայնութեան աշխատին: Այն ժամանակը եղաւ Ներսէս Լամբրոնացի (Միաբանողաց) կամ Հայաշատիններուն երևնալը: Երզնկացին և Ջաքարիա սիրալիր ընդունելութիւն ըրին անոնց, և Յովհաննէս՝ թէպէտ արդէն տարիքն առած ու մոքովն յոգնած, եաևէ եղաւ լատինական լեզուն սովրելու, ու թարգմանեց Թովմայի ազանինացւոյն Աստուածաբանութեան մէկ մասը:

Երզնկացւոյն կենաց վերջի տարիները մեծ երկրաշարժ մ'եղաւ Արտազ գաւառին մէջ ու Թադէի վանքը կործանեցաւ. Ջաքարիա նորէն չհնեց այն վանքը, ու չթողուց որ Երզնկացին հեռանայ իր քովէն. որ և հաւանական կ'երևնայ թէ հոն կնքած ըլլայ իր բազմարդիւն կեանքը:

Երզնկացւոյն երկասիրութիւնք.—Երզնկացւոյն երկասիրութեանցը մէջ գլխաւոր՝ եաևնէն աւելի մտազրութեան արժանաւորը կը սեպուի

Մխիթարիւ Գներակաւի, զոր շարադրեց ի խնդրոյ Յակոբայ կաթուղիկոսի: Այս գրուածին յօրինման պատմութիւնը՝ իր ինքնագիր յիշատակարանէն լսենք. «Երբոր, կ'ըսէ, Հայոց ՉԼԸ (1289) թուականին ուղեցինք երուսաղէմ երթալ՝ Քրիստոսի տեառն փրկագործ անօրինականը տես-

նելու, Հայոց Կիլիկիա երկիրը գնացինք... և ժամանակ մը կեցանք Յակոբ կաթուղիկոսին քով, որ կը պատուէր զուսումնասէր. և հրամայեց որ իւր աշակերտացը քերականութեան դաս տանք. և մեզի ա֊ֆորժելի և հաճոյ երևցաւ այս խնդիրը։ Եւ ըսբը խնդրեց մեզմէ անոր մեկնութեա֊նը պարզութիւն գրել, և ընդունել այն պա֊կասը՝ զոր մեկնողներուն վերլուծական խօսքերը թողուցեր էին։ Քանի մը ժամա֊նակ անկատար մնաց այս գործը, մեր ան֊պարապ ըլլալուն պատճառաւ, և տեղոյ հանգստութիւն չունենալնուս։ Յետոյ և֊կեղեցւոյ վարդապետներէն հեղահոգի և առաքինասէր անձ մը՝ Յովհաննէս անու֊նով, որ Տարօնոյ սուրբ կարապետ եկե֊ղեցւոյն մէջ երկար ժամանակ սպասաւո֊րած էր, ու ժառանգաւորաց՝ աստուածա֊շունչ գրոց վրայէն դասախօսութիւն կ'ը֊նէր ու մեկնութիւն կու տար, նոյն բանը խնդրեց մեզմէ աղաչանքով ու թախան֊ձանաց թղթով։ Մեր քովը եղող ուսու֊մնասէրքն ալ փափաքելով այս բանիս, կը փութացուցանէին զմեզ։ Եւ մենք թէ֊պէտ իրաւացի պատճառ ունէինք առջև֊նին դնելու մեր անձին տկարութիւնը ու խօսքի անբաւականութիւնը, գժուարին կեանքն ու մեր վրայ հասած նեղութիւն֊ներն, որով խնդրողաց յօժարութիւնը ան֊գործ կը մնար, սակայն Աստուծոյ ողոր֊մութեան շնորհքը գթալով մեր վրայ, հա֊

սուց զմեզ մեր սուրբ Լուսաւորչին հան-
գրստեան լեռը։ . . . Բայց զայս ալ յաւե-
լում ըսել ձեզի, որպէս զի աւելորդ և
անպէտ չերևնայ մեր աշխատութիւնը,
վասն զի Մագիստրոս մեծապատիւ իշ-
խանը՝ աշխատած էր այս գրքին մեկնու-
թիւն մը շարագրելու. և մինչև մեր ժա-
մանակը՝ անոր վրայ կը սորվեցընէին վար-
դապետք իրենց աշակերտացը։ Ուրեմն
ինչ հարկ կար որ ուրիշները մեզմէ այս
բանս խնդրեն, և մենք ալ յօժարամիտ
ձեռք զարնենք այս գործիս։ Ասոի հարկ
է որ նախ առաջիններուն պակասութիւնը
ըսեմ։ Վասն զի հմուտ Մագիստրոս ի-
րեք մեկնիչներու խօսքը մէկմէկու քով
դրած էր. Դաւիթ փիլիսոփային, Մովսէս
քերթողին, և ուրիշ իմաստնոյ մը՝ որուն
անունը գրուած չէր. և ինքն ալ իր կող-
մանէ այլ և այլ յաւելուածներ ըրած էր...
բայց մեկնիչներու խօսքը իրարու հետ չէր
խառնած, և ոչ ալ ամեն մէկուն մեկնու-
թիւնը դիմացը և ուղիղ նշանակած։ Կային
ուրիշ մեկնիչներ ալ՝ որոնք Մագիստրոսի
ձեռքը հասած չէին, և շատ տեղ առանց
մեկնութեան թողուած. երբեմն ալ երկու
իրեք անգամ դրուած՝ իրեք մեկնիչնե-
րուն ալ, և շարագրութեան կարգին մէջ
չայտնի չէր թէ ո՛րը առաջնոյն էր, ո՛րը ե-
րկրորդին. որով շատ տեղ լուծմունքը պա-
կաս ըլլալով՝ տարակոյս կը վերցընէր։ Ա-
նոր համար մենք ըստ ժամանակին հոգ

ունենալով՝ քերականին մեկնութիւնները ժողվելու, դառնք ամեն մեկուսը առանձին յօրինուած և մեկ գիրք ձևացած . . . յորում կարդալի փիլիսոփային և Մովսիսի քերթողին և ուրիշ իրենք մեկնիչներու գրուածը, որոնք անուն չունէին. ասոնց մեջ կար նաև Բարսղի մեկնութիւնը. Դերջանայ անապատին մեջ ալ Համամ վարդապետին մեկնութիւնը գտայ. և օգնականութիւն առի Արիստակեսի բառգրքէն։ Ասոնց ամենուն, և ուրիշ իմաստուններուն խօսքը մեջ բերելով, այս մեկնութիւնս չարադրեցի »։

Երզնկացւոյն այս խօսքերէն յայտնի կ'երևնայ, ինչպէս իրօք ալ անանկ է, որ երկու տեսակ յօրինած է քերականի մեկնութեան. մեկը՝ լոկ պարզաբանութիւն է Դիոնեսիոսի Թրակացւոյն քերականութեանը, Մագիստրոսի ու Եսայի վարդապետին մեկնութեանցը համաձայն, զոր յօրինեց ի խնդրոյ անոնց՝ որ ի Սեպուհ լեառն կ'աշակերտէին իրեն, իսկ երկրորդը աւելի ընդարձակ՝ ըստ խնդրոյ Ցակոբայ կաթուղիկոսի։

Քանը յապագա երկայնաբան շարժմանց. — Երզնկացին ի դարձին ի Կիւլիկիոյ գնաց ի Տփխիս, վրաց մայրաքաղաքը, ուր բաց ի տեղացի իշխաններէն՝ կը գտնուէին այն ժամանակը նաև Հայոց հին իշխանազանց ճնացօրդք. օր մը Քարիմատենց Մեկ իշխանին չինած եկեղեցւոյն մէջ ներբող մը

Խօսեցաւ Յովհաննէս, յորում երկնային զարդուց աղուոր առորագրութիւնն ըրաւ։ Ովեկայ որդին վախճանի՝ չատ զարմանալով այն սքանչելի գրուցուածքին վրայ, երղնկացւոյն աղաչեց որ առանձին գըրուած մը չարագրէ երկինէ վրայ։ Տըփխեաց Յովհաննէս եպիսկոպոսն ալ իր կողմանէ չատ վրայ տուաւ. այն առեն չարագրեց երղնկացին «Յաղագս երկնային չարժմանց» գրուածքը, ժամանակին աստեղաբաշխական գիտութեանը յարմար։ Ապոց անունով իշխան մը նոյն գըրուածքը կարդալով, աղաչեց որ նոյն գեղեցիկ նիւթոյն վրայ կրկին գրէ երղնկացւոյն՝ քերթողական լեզուաւ. Յովհաննէս՝ հազար տող ոտանաւորով երկինէ նկարագիրն ըրաւ և ընծայեց իշխանին։

Ներքոյ՝ի տարբ Լուսաւորիչն. — Վրաց աշխարհէն նորէն իր հայրենիքը դարձաւ երղնկացին, և իր ծննդեանը քազքին 1287ին կրած կործանմանը ժամանակ կ'երևնայ թէ անկէ չատ հեռու չէր. այլ մօտակայ վանքերուն մէկուն մէջ առանձնացած։ Անկէ տարի մը ետքը՝ Սալհոյ լեռանը վրայ եղող սրբոյն Գրիգորի վանքին մէջ իր սերճախօս լեզուն հանդիսացաւ։ Վասն զի գովելի սովորութիւն մը ունէին վանքին միաբանքը՝ որ տարուէ տարի այդ սրբավայրը յաճախող ուխտաւորաց և անթիւ բազմութեան առջև՝ մասնաւոր ներբողիւ մը կը պատուէին զսուրբ

Լուսաւորիչն։ Նոյն տարին ներբողելոյն ունելի պատիւ մը ընելու համար՝ Զերզնկացին աղաչեցին որ իր ճարտասան և սրբատաշարժ լեզուն բանեցընէ՝ սրբոյն Գրիգորի անմահական յիշատակին ունելի պատիւ մը ընծայելու։ Յանձն առաւ Յովհաննէս, և չարագրեց այն ընտիր և աքանչելի ներբողը որ կը սկսի, «Յարաղուարճ խընդութեամբ բերկրեալ»։ ուր Լուսաւորչայ հետ իւր հայրենի գեղեցիկ գաւառին սիրուն ալ վառուած, և բնութեան աղուոր տեսարաններով մխրճ գմայլած, բանաստեղծութեան և ճարտասանութեան շընորհքով զանոնք կը նկարագրէ, մանաւանդ Սեպուհ լեռն և Մանեայ այրքն և բոլոր Դարանաղեաց լեռները։

Մկնեցւոյ Մատթէի. — Կիլիկիա եղած ատեն գաւառ սրբոյն Գրիգոր Նարեկացւոյ սկսած Մատթէի ունեցարանին մկնեցութիւնը, որ ինչուան ԼԹ-ներորդ գլուխը մկներ ու անկատար թողուցեր էր։ Իր մէ գրեթէ 150 տարի ետքը Երզնկացին յորդորելոյ չարունակել զայն, ինչպէս ինքն իսկ կը պատմէ յիշատակարանին մէջ։ «Եւ ասոր գրութիւնն եղաւ, կ'ըսէ, Փրկտոսի 1316 թուականին»։ Շնորհալւոյն նման ոճ մը բանիլ չկանացած է Երզնկացին թէ ըստ աստուածաբանութեան և թէ ըստ քերականութեան. սակայն այնչափ չկրնար ալ և նմանողութեան փափաքով՝ յայտնապէս կը տես-

նուի թէ որչափ կը դանագանին՝ի միմեանց այս երկու հանճարներն։

Խրատական երկասիրութիւնք. — Ամբողջ խրատական գիրք մը շարագրած է Երզնկացին, յորում սրբոց առաքելոց և հայրապետաց ու վարդապետաց խօսքերովը զգուշացուցիչ խրատներ կու տայ պարզ ու դիւրիմաց ոճով՝ բոլոր հաւատացելոց հասկացողութեանը յարմար։ Աղօթք մըն ալ կայ իւր անունովը, և համառօտ խօսքեր ժամանակագրութեան վրայ։

Բանաստեղծական քանի մը գրուածք ալ ունի Երզնկացին, որոց մէջ գլխաւոր է վերը յիշուած հազարտունեան քերթուածը երկնային զարդուց վրայ։ Ուրիշ քերթուած մըն ալ՝ որոյ սկզբնատառքն այս խօսքերը կը յօգեն. «Յովհաննէս վարդապետի ծործորեցւոյ եղեալ՝ի չափ մերոյին տառից՝ ոտանաւոր»։

Երկրորդն է խրատական և մաղթողական գրուած մը՝ զոր՝ի խնդրոյ Յակոբայ Մանկտաւագի Երզնկացւոյ յօրիներ է։

Երրորդն է այբուբենի վրայ չորս զանազան տեսակ գրուածներ, խրատական ոճով ու անանկ լեզուով մը որ աչխարհիկ խօսից կը մօտենայ։

Քնարերգականք. — Երզնկացւոյն քնարերգական քերթուածները երկու դասակարգութիւն կրնանք բաժնել, ՝ի Տաղս և ՝ի Շարականս։ Առնց մէջ աւելի կերպով մը կը փայլի Երզնկացւոյն բանաստեղծա-

կան հանճարն ու եռանգը. մանաւանդ ջրօրհնեաց հանդիսին համար չինած տաղերուն մէջ, որ են «Յամենայն ժամ օրհնեմք», և «Այսօր ձայնն հայրական»։ Դարձեալ սրբոյ Կուսին փոխանակը վրայ տաղ մը՝ որոյ սկզբնաւորութիւնն է «Առաջնաճաշակ պտղոյն»։

Շարականաց մէջ իր անուանիրը կը յիշատակուին՝ ի պատիւ սրբոյ Յուսաւորչին երգուածը, «Լերինք ամենայն», բանաստեղծական հանճարով ու բնաիր լեզուով յօրինուած, զոր ամանք խորհնացուցն կ'ընծայեն։ Նոյն սրբոյն վրայ այբուբենական շարական մը, «Այսօր զուարճացեալ»։ Դարձեալ սրբոյն Ներսիսի Հայրապետին նչխարացը յայտնութեան վրայ, «Որ ըզլոյսն անճառ» սկզբնաւորութեամբ, որոյ վրան արդէն խօսեցանք. ու՝ ի պատիւ խոտաճարակաց երգուածը «Յաւուրս վերջին ժամանակի». որուն սկզբնատառքը կը յօգնեն՝ «Յովհաննիսի է երգս»։

Թարգմանութեանցը վրայ առանձին խօսելու առիթ պիտի ունենանք։

Երջանկացեալն աշակերտակից էր նաև ՆԵՐՍԷՍ ՏԱՐՈՆԵՑԻ անունով վարդապետ մը, որ նոյն գաւառին մէջ եղող Ղազարոս վանքը կրօնաւորած էր։ Ականաւոր Թէ և յուշեալն գործունէութեանց և առաքինութեան գրոց ուղղութեամբ վարժ էր, բայց լսելով մեծին Վարդանայ խնամառութիւնը, գնաց անոր քով, և սորվեցաւ իրմէ. բայց գրաւոր երկասիրութիւն մը չձգուցաւ։

Իրեք գլխաւոր աշակերտ ունեցաւ այս Ներսէսս, որ էին ՅՈՎՀԱՆ ԱՐՃԻՇԵՑԻ, ԵՍԱՅԻ ՆՉԵՑԻ և ՄԻԻԹԱՐ ՍԱՍՈՒՆՑԻ։ Ընձեղեցին անուանի եղաւ իր գիտութեանց սիրովը և արդութեան համբաւով. գրոց մէջ երբեմն Պապին ալ կոչուած է, որովհետև կ'աւանդի Թէ աստուածընդունակ սարի ուրիշ բան կերած չըլլայ՝ բայց միայն Թրջած ոսկի։ Իրեն աշխատասիրածն է Պատարագի Համառօտ մեկնութիւն մը, զոր քաղելով համառօտած է խոսրովու անձևացեալն և Լամբրոնացեալն խօսքերէն։ Այս գրուածքին վրայ՝ ընդհանուր տեղեկութիւն մը տուած ենք՝ խոսրովու վրայ գրած տեղին։ Երկու անգամ տպագրուած ալ է այս գիրքս՝ Կոստանդնուպոլիս 1717ին և 1799ին-1810ին ալ երրորդ տպագրութիւն մը եղած է՝ Մատրաս։

ՍՄԲԱՏ ՊԱՏՄԻՉ

Ամբատ Գունդստապլ՝ այսինքն Սպարապետ պատմչի անունը թէպէտ և բաւական առեն է ի վեր ծանօթ էր բանասիրաց, բայց ոչ նոյնպէս իւր երկասիրութիւնը. միայն տասն կամ տասնուհինգ տարի առաջ սկսաւ գրչագիր մէկ օրինակը երևնալ ու ձեռք ձեռք անցնիլ. որուն վրայ կրկին տպագրութիւնը եղան գրեթէ մի և նոյն միջոցի մէջ. մէկն ի Փարիզ և միւսն ի Մոսկուա*:

Հեղինակն ինքնին իսկ կը վկայէ որ Ս. Հեթում թագաւորին եղբայրն էր, պաշտաման անուամբն Գունդստապլ կոչուած. որ և յամի 1248 իր թագաւոր եղբօր կողմանէ դեսպան գնաց առ Գիւուդ խան Թաթարաց։ Հեթում պատմիչը մանրամասնաբար կ'առանձնէ այս դեսպանութեան պատճառը. 1253 թուականին, կ'ըսէ, Հայոց Հեթում թագաւորը անձամբ ուղևց երթալ առ ինքնակալն Թաթարաց, որպէս զի ա-

* Առջինը աշխատասիրութեամբ Կ. վարդապետի Շահնազարեանց, և երկրորդը Ոսկանայ Գ. Յովհաննիսեանց (1858)։ Գաղղիաբէն ալ թարգմանեց և հրատարակեց Վ. Կ. Լանգլուա ի Բնդբսպուրկ, 1862ին։

նոր չնորհքն ու սէրը աւելի յաջողութեամբ կարենայ ձեռք ձգել, ու խաղաղութեան պայմաններ դնէ անոր հետ։ Բայց առաջ ղրկեց Հայոց թագաւորութեան Գունդըստապլը, զԱինիբաղտ*, որպէս զի հրաման առնելով՝ կարենայ ապահով կերպով երթալ. անոր համար՝ սա դնաց առ ինքնակալն Թաթարաց, ու իրեք չորս տարիէն ետը դարձաւ ի Հայաստան, պատմելու ինչ որ տեսաւ ու լսեց։

Այս հրեշտակութեան դէպքը ինքը Սմբատ ալ կ'ուզէ իւր Պատմութեան գրոցը մէջ հետևեալ խօսքերով. « Ի թուին ՈՂ ի գնացի ես Սմբատ Գունդստապլս ի Թաթարն, և ի թուին ՈՂԹ դարձայ առ իմ եղբայրն Հեթում թագաւորն ». Լևոն Բ թագաւորին ալ սիրելի էր ու մտերիմ։ Վասն զի տեղ մը նոյն թագաւորին հայմար կը վկայէ, թէ « Ուր իմանայր թէ գոյայր իմաստուն և գիտուն, և աջող ի գործ կամ ի դիւնաւորութիւն, կամ ի խօսս և ի պատասխանիս, յղէր և կոչէր խոստմամբ և հանգուցանէր պարգևօք. յորոց մի ևս եմ, Սմբատ սպարապետ՝ թարգմանող տառիս »։

Իւր պաշտաման և սրտին արժանաւոր այլ և այլ քաջագործութիւններ ըրած է

* Անանկ կը կոչուի Հեթում պատմչի գալլիական ու լատին թարգմանութեան մէջ Սմբատայ անունը։

Սմբատ, և որոնց յիշատակութիւնը կ'ընէ իրեն այս համառօտ պատմագրութեանը մէջ. այսպէս ալ երբ Փէկ խոսրով սուլտանն հնձելազօրք ժողվելով՝ Լամբրոնի տիրոջը Կոստանդնի առաջնորդութեամբ մտաւ 'ի Կիլիկիա, Կոստանդին թագաւորահայրն ու Սմբատ մտան 'ի Տարսոն, զոր սուլտանն պաշարած էր, Սմբատ իրեններովը պատերազմեցաւ անոր հետ, ու երկարատև կռիւներով, ու եւրոպական ճարտար դինուց օժանդակութեամբ՝ յաղթեց անոր*։

Ա. յսպիսի քաջութեամբ ու պատերազմաց վտանգներու մէջ կնքեց Սմբատ իւր կեանքը փառօք, որուն հանդամանքը լիուլի կ'աւանդէ ժամանակակից վարդապետը։ 1275 թուին գուժկանք հասան առ Լեւոն Գ., թէ Եգիպտացւոց ամիրայն անթիւ զօրքով նորէն Կիլիկիոյ վրայ կ'արշաւէ. Լեւոն ժողվեց մէկէն իւր զօրքերը, ու վեց գունդ բաժնելով, մէկը ինքն առաւ, ու երկրորդը՝ իր ծերունի հօրեղբօրը՝ Սմբատայ սպարապետի ձեռքը տուաւ, ու պատուիրեց որ քիչ զօրքով Եգիպտացւոց դէմ ելլէ, մինչդեռ ինքը զօրաց բազմութիւնը դարանի մէջ դրած էր, ու անծանօթ ճանապարհաւ Եգիպտացւոց զօրքին հասնելով անցաւ 'ի ծածուկ։ Երբոր սկսան

* « Շատ մեռան յերկուց կողմանց, կ'ըսէ Սմբատ, բայց 'ի դրացէ հարիւրապատիկք. զի ունէաք ընդ նեղբս աղէկ Փռանկի ջարխուօրք »։

Եգիպտացիք Կիլիկիոյ սահմաններուն վրայ վազել, անոնց առաջը ելաւ Մրատ իր զնդովը։ Եգիպտացիք՝ կարծեցին թէ միայն այնչափ է Լեւոնի զօրքը, ու սիրտ առած՝ յարձակմունքն սկսան. բայց մէկէն՝ի մէկ դարանամուտքը անոնց չորս կողմը պաշարեցին. ինքը Լեւոնն ալ հասաւ եւ անոնք, ու եգիպտացիները մէջերնին առնելով՝ չատերը կոտորեցին. ու այնչափ չատ իւնդան անոնցմէ, որ դիականց լեռնակոյտը արգելք կ'ըլլար ապրելոց փախստին։ Իսկ երբ ամիրայն հնարք դտնելով՝ սակաւաթիւ զօրքով իր կեանքը ապրեցընել կը մտածէր, եւեւէն պնդեցաւ Մրատ. բայց ձիուն սատիկ արշաւանացն առնն՝ ծառի մը զարնուելցաւ ոտքը, ու վատնդեցաւ. այն վիրացը սատկութենէն ու հասակին ծանրութենէն՝ ալ չկրցաւ շարունակել ընթացքը, ու գառնալով՝ի բանակն՝ քանի մը օրէն մեռաւ (1275)։

Իւր կենացը 67 կամ 68 տարուան հասակին հանդիպեցաւ Մրատայ մահը. ոբովհետեւ 1208 Թուականին կը նշանակէ իրեն ծննդեանը տարին։

Մրատայ պատմութիւնը. — Աւելի հասառօտ ժամանակագրութիւն մը կրնանք սեպել Մրատայ այս երկասիրութիւնը քան թէ բուն պատմութիւն։ Կ'երեւնայ թէ հեղինակիս դիտաւորութիւնն ալ այս եղած է, որովհետեւ խորագրին մէջ յայտնապէս կը նշանակուի. « Պատմութիւն

ցունաց 'ի Կոստանդնուպոլիս և Հայոց Մեծաց, ըստ կարդի ժամանակաց »։ Կը սկսի Հայոց Ն (Ֆրխատոսի 951) թուականէն, Գագկայ Բագրատունւոյ իշխանութեան ժամանակէն, և կը հասցընէ մինչև 'ի ՁԶ (1331)։ գրեթէ չորսհարիւր տարուան միջոցի մէջ 'ի Հայաստան և 'ի Բիւզանդիոն հանդիպած դէպքերու համառօտ յիշատակութիւն։ Բայց որովհետև իր մահը 1273ին եղաւ, յայտնի է որ վերջին վաթսուն տարուան պատմութեանց համառօտութիւնը՝ ուրիշի ձեռքով եղած է։

Հարկ չէ ըսելը թէ այսպիսի երկասիրութեան մէջ ընդունայն է փնտռել կարգաբան լեզու և ոճ մը. ատիկայ հեղինակին նպատակէն, կրնանք ըսել թէ նաև կարողութենէն վեր ձեռնարկութիւն մըն էր։ Բայց իրրև ժամանակագիր՝ ունի իրեն յատկութիւններն, որոնցմով թէ ազգային և թէ օտար բանասիրութեան տալիքը իր չարգն ալ։ Ռուբինեանց իշխանութեան վրայ խօսող՝ քիչ մտնենագիր ունինք. և աւելի քիչ՝ որ Սմբատայ պէս ժամանակագրութիւնը պատմութեան հետ խառնեն. և սա է իրեն մեծ և գլխաւոր արդիւնքը, որով արդի եւրոպական ստուդատր գիտութեան առջև՝ աւելի պատուական կը սեպուի իր երկասիրութիւնը, քան ուրիշ շատ պատմագրաց գրուածները, որոնք ժամանակագրութեան մտադրութիւն չընելով ընդհանուր պատմու-

թեան մէջ լուսաւորելու և բացատրելու տեղ՝ աւելի մթութիւն և երկբայութիւն կը ձգեն, և կարծեաց երկպառակ անհամաձայնութիւն։

Իսկ Սմբատայ լեզուն՝ երեքտասանեակորդ դարու աշխարհիկ բարբառն է։ Թարգմանչաց վայելուչ և հայկաբան ոճը՝ դարէ դար իւր դեղեցկութիւնը կորսընցընելով, հոս գրեթէ չիջեւափառ կը նուազի։ Քաղաքական վիճակին պէս գրաւորական լեզուն ալ բոլորովին կերպարանափոխ եղած՝ ուրիշ դար մը կը կազմէ, որ ազգային գերութեան չղթայից տխուր արձագանգը կը լսեցընէ, և աւելի նոր մատենագրութեան կը վերաբերի, ուր որ պիտի տեսնենք զայն, հոս կնքելով խօսքերնիս մեր հին հայկական դպրութեանց վրայ։

ՅԱԽԵԼՈՒԱԾ

ԳԼՈՒԽ ՄԸ

ՄԱՆՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

ԲԱՐՍԵՂ, կաթուղիկոս, որուն համար կ'ա-
նդէ Ուռհայեցի. « Սուրբ հայրապետան Բար-
սեղ, որ էր երջանիկ և հայր խոստովանուԹեան
Գաղտոյնին, աստուածաշնորհ և բանական յոյժ,
երկիւղած յԱստուծոյ և առաքինի ի պահս և
յաղօԹս. հմուտ հին և նոր կտակարանացն Աս-
տուածոյ, բարեխօս և օգնական ամենայն զրիկեցոյ.
զայս ողբերգական բանք գրեաց վասն մահու նո-
բա »: Թէպէտ և գրած ողբերէն բան մը չկըշ-
տակեր :

ԳԱԳԻԿ Բ Թագաւոր. Աշտոյ որդին, ու
Բագրատունեաց վերջին տարաբաղդ Թագաւորը:
Մեռաւսանհերորդ գարուն կէսերը՝ երբ կոստան-
դին Տուկին կայսրը Սեւնէքերիմ վասպուրակա-
նի Թագաւորին որդիքը՝ զԱտոմ և զԱբուսահլ
իր քովը կանչեց, զանոնք Յունաց գաւառնու-
Թեանը գործընկերու համար, անոնք կայսեր պա-
տասխան տուին, կ'ըսէ Ուռհայեցին. « Մենք ա-
ռանց Գագկայ՝ Աշտոյ որդւոյն՝ չենք կրնար բան

մը ընել. վասն զի անիկայ քաջ մարդ մըն է, ու թագաւոր, և մեր փեսայն. զկնի ու զանիկայ Հոռ կանչէ »: Կայսրը չուզեց կանչել. վասն զի « այր հզօր էր, կ'ըսէ պատմիչը, յիմաստասիրական ջոհան, և անյաղթ 'ի պատերազմի. զի սա 'ի տուրքն Սոփի 'ի յամբիոնն Նաէր ընդ ամենայն վարդապետան Հոռոմոց »: Բայց երբ առիւծուելով կանչեց զինքը, ու կայսեր առջևը երևցաւ Գագիկ, իրեն խիստ ուժգնութեան և գիտութեանը վրայ վըստահ՝ խօսեցաւ անոր հետ ու կ'ըսէր. « Ես այր թագաւոր եմ և որդի թագաւորաց Հայոց, և ամենայն Հայք հնազանդին հրամանաց իմոց, և ամենայն կռակարանացն Աստուծոյ՝ հնոյն և նորոյն հմուտ եմ. և ամենայն Հայք վկայեն բանից իմոց, զի հաւատար վարդապետացն ընդունին զիս. և ահա ես խօսեցայ այսօր ընդ Հռոմոց վասն հաւատոյ ազգին Հայոց »: Ու գրեց դաւանութեան գիր մը, զոր առաւ թագաւորին ու պատրիարքին: Կը վկայէ պատմիչը թէ « խօսեցաւ յանդիման . . . Ցուիծին և 'ի մէջ ամենայն հռետոր վարդապետաց սանն Յունաց 'ի քաղաքին Կոստանդնուպոլիս. և յոյժ հաճեալ թագաւորն Ցուիծի և ամենայն խիստասէրքն որ նաեւին 'ի Ճեմարանին, և հիանային ընդ կորովութիւն բանից և ընդ հաստատութիւն ընդհանուր... վասն զի ամենայն դասք վարդապետացն Հռոմոց ոչ կարացին արտա և կամ բիծ երկբայութեան գտանել հերձուածոյ 'ի հաւատոյ խոստովանութիւնս՝ զորս գրով Հռոմոց խօսեցաւ Գագիկ արքայ Հայոց »:

ԹՈՐՈՍ, պարոն Կիլիկիոյ. Ռուբինեանց Լեւոն մեծ պարոնին որդին էր Թորոս, ու հօրը գերեկից՝ ի Կոստանդնուպոլիս. ուսկից ազատելով, տիրապետեց քաջութեամբ Կիլիկիոյ, Խաւարնոյ և Ասորւոց մեկ մասին: Ժամանակակից պատմիչներն շատ կը գովեն անոր քաջութիւնն և հնարագէտ կենցաղակրթութիւնը. իսկ վախճամ անոր գրաւորական արդիւնքն ալ կը գրուատէ՝ հեւեւեալ խօսքերով.

« Ասուածային գրքով վարժեալ
Եւ յիմաստից արուեստ մրեալ.
Աչն հոգի սա ընկալեալ,
Մարգարէի հաւասարեալ.
Որոյ գրժուար բանըս լուծեալ
Որ գրաւնի այժըմ գրեալ:

ՄԵՍՐՈՎՊ Երէց. հեղինակ ժ. դարու, վայոց Ձոր գաւառին Հողոցիմք գեղէն, վախանայ Տաթեւեցւոյ խնդրանաքը շարադրեց Մեծին Ներսիսի վարքը, ծաղկաքաղ ընելով « յԱրեւելից գրոց՝ ի Հայոց մեացորդացն պատմութեանց », ինչպես ինքը կ'ըսէ յիշատակարանին մէջ: Տպուած է՝ի Մատրաս 1773ին, և՝ի Վենետիկ 1853ին՝ Սոփերաց Չ. հատորին մէջ:

ՅԱԿՈԲ գիտնական. Սամուէլի ընդարձակողը ասոր համար կ'ուանդէ. « Այր սուրբ և առաքինի և յոյժ գիտնական, որ արար զգուժմունս նուրբ գրեանցն դժուարալոյծ բանիցն »:

ՅԱԿՈԲ Քարափնեցի կամ Սանահնեցի. մե-

տասանեւրորդ դարուն մէջ, Կոստանդին Տուկիծ կայսեր ժամանակակից, Վասպուրականի Սեւ Նեքերիմ Թագաւորին որդւոյը հետ գնաց ի Կոստանդնուպոլիս, հաւատոյ խնդիրներու համար. ու աւելի Յունաց համախոհ երեւնալու պատճառաւ՝ անհաճոյ եղաւ ազգին, ու անանց իրաւանցը պաշտպան Գագիկ Թագաւորին: Ուռհայեցին հետեւեալ խօսքերով զինքը կը դրուատէ. « Յամի ՇԼԴ մեռաւ վարդապետն Հայոց Յակոբ Քարափնեցի, որ յորջորջեալ կոչէր Սանահնեից, այր հզօր, կորովի: Սորա հասեալ ի վերայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ, ուսեալ և հասեալ սորա ի վերայ հռետորական իմաստութեանցն, և տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանց. սա էր յաշակերտաց մեծին Դէոսկորոսի հօրն Սանահնի: Եւ այս Յակոբոս էր որ խօսեցաւ ի Կոստանդնուպոլիս . . : Եւ յայսմ ժամանակի էր ի քաղաքն Ուռհայ, և ծերութեամբ քաղաքավարեալ զկեանս իւր. և գաւով նենգութեամբ լուծեալ եղև ի կենաց. վասն զի գոռնէին զնա մեռեալ ի մահիճս իւր, առանց հեծութեան և ցաւոց . . . և մեծաւ հանդիսիւ Թաղեցին զնա ի գուռն սուրբ եկեղեցւոյ իւրոյ »:

ՈՒԽՏԱՆԷՍ, եպիսկոպոս Ուռհայի, որ Վրաց ազգին ի Հայոց բաժանման պատմութիւնը գրած է: «Յայնմ հետէ, կ'ըսէ Կիրակոս, բարձաւ ձեռնադրութիւն Վրաց որ ի Հայոց, զի սկսան ըզՅունաց Թեւակոխել. զայս ամենայն սուտգուշութեամբ ուսուցանէ քեզ Ուխտանէս եպիսկոպոսն.

զի նա զամենայն լիով գրեաց, զԹուղթեան և զպատասխանեան, և զքաջուԹիւն Պետրոսի և պիսկոպոսի՝ որ պատգամաւոր էր տեառն Աբբահամու առ Կիւրիոն. զոր Վիրք վասն հաւատոյն կուԹեան նորա Գայլ կոչէցին զնա »: Յետ նոսա Ռուպէլեանն ալ Վրաց բաժանումը պատմելու առնը կը զրուցէ. « Զպատճառս բանիցն քաջայայտեցից սակաւուք, որպէս հաւատոյ ուսանք 'ի սրբոյն Ոխտանիսէ Սերաստացւոյ եպիսկոպոսէ »: Ան պատմիչս եռքի տարիներս գտուեցաւ, և Թարգմանեցաւ մատամբ 'ի գաղղիերէն և ռուսերէն. բայց մեզ մասն դեռ գտուած չէ:

ՍԱՀԱԿԱԴՈՒԽՏ, քոյր Յետիհանոսի Սիւնեցւոյ, որուն համար կը զրուցէ Ռուպէլեան. « Էր սորա քոյր մի, 'ի մանկուԹենէ ստացեալ զվարս կուսուԹեան, և առանձնացեալ 'ի ձորակին Գառնոյ, յայրի մինջ, և անտանելի վարս ՃգնուԹեան կրէր յանձին. որոյ անուն Սահակադուխտ: Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին. որ և 'ի ներքոյ վարադուրի նստեալ ուսուցանէր զբազումս. և արար կցորդս և մեղեդիս քաղցր եղանակաւ, յորոց մի Սբ. Հոգւոյն Մաքիմ, որ իւրով անուամբն է յօրինեալ »:

ՅԱՄՈՒԻԼ, կամբջաձորեցի. տասներորդ դարուն վերջերը, Սարգիս կաԹուղիկոսին ու Բագրատունեաց Գագիկ Ա Շահնշահի ժամանակ ծաղկեցաւ Յամուէլ, ինչպէս կ'ուանդէ Լաստիվերտցի. « Էին յայնմ ժամանակի վարդապետք Սարգիս և Տիրան անուն և Ցենովք, որ կաԹուղիկո-

սարանին էին վարդապետք, և Սամուէլ՝ որ Կամրջայն Ձորոյ վանաց առաջնորդութեամբ հովուէր»: Առնիկ ալ կը գրէ. «Զկնի նորա (Պօղկաբոսի) խնամատարն Սամուէլ, բազմաշնորհ՝ ի գիտութիւնս գրոց սրբոց և յերգս երաժշտութեանց»: Սամուէլի կ'ընծայուի Տճոռոպճառոչուած գիրքը, զոր շարագրած էր՝ ի խնդրոյ Անանիայի Արշարունեաց եպիսկոպոսի:

ՎԱՀՐԱՄ. այս անուամբ պատմագիր մը կը յիշատակէ Վարդան, և կը կոչէ զնա որդի Տիգրանայ, իսկ ուրիշ մ'ալ Տիգրանակերտցի կը կոչէ:

ՎԱՀՐԱՄ վարդապետ. բայց՝ ի քանի մը ընտիր և մեկնական Ճառերէն Վահրամ՝ Ընդհալելոյ վիպասանականին շարայարութիւն ընելու դիտմամբ յօրինած է 770 տող ոտանաւոր. սկսելով՝ ի Ռուբենէ կը հասցընէ մինչև՝ ի Լևոն որդի Ա Հեթմոյ, որուն խնդրանօք ձեռք զարկաւ այս գրուածքին, և որ դեռ ևս կենդանի էր գրուածքին շարագրութեան աւարտելուն ժամանակ: Հեղինակին հետևեալ յառաջաբանական խօսքերը բաւականին աւելի կը յայտնեն իւր դիտումը և ձեռնարկութեան պատճառը.

«Տէր Ներսիսի լուսազարդեալ
Հայրապետին զայս բան գրեալ,
Ըզպատմութիւնս Հայոց առեալ
Ոտանաւոր տաղիւ չափեալ...
Զոր ընթերցեալ եւ ծանուցեալ
Լեւոն արքայն Հայոց օծեալ,

Նաւասաուելեանս իմ հրամայեալ
ի սուրբ հօրէն առնուլ զարձեալ.
Որ մինչ ի մեզ եղեւ հասեալ.
Նահապետաց մերոց կացեալ՝
Գործք եւ կամ բանք վկայասանեալ.
Ի սուգագոյն արանց պատմեալ.
Եւ զոր աչօք մերովք տեսեալ
Եւ ականջօք յայլոց լուեալ.
Չսոյն ինձ գրել բանիւ չափեալ,
Ա՛ռ ի լինել գիւբաւ յայտնեալ:
Աչք եւ վահրամ Բաբուն ձայնեալ,
Եւ խմաստիւք ուշացուցեալ,
Նաւասածայեն բանիւք վարժեալ
Եւ ի յարգիւնան ոչ ժամանեալ.
Ի յալքայէ յայս հարկեցեալ,
Եղէ մշոջ սարաբերեալ...
Փոքր ինչ յառաջ անգր ընթացեալ,
Ի նախնեաց զուցաց առեալ,
Համառօտիւք ըզնոյն գրեալ
Մինչեւ ի մերս ժամանեալ»:

ՄԱՏԵՆԱԴԻՐՔ

ՈՐՈՑ ԳՐՈՒԱԾՔԸ ՉՅԻՇԱՏԱԿՈՒԻՐ

Աթանաս. — «Հայրապետան Հայոց Ժողովեաց զիմաստունս որ էին ի Ժամանակին. յորս էր և Աթանաս ի վանուց սուրբ Կարապետին. և կարգեցին Թուական Հայոց, յորոց ուղղեցին զղաաիին Հայոց»: ԿԻՐԱԿՈՍ:

Անանիա. տես Եփրեմ:

Գագիկ, Թագաւոր Կարուց. — «Էր յայսմ աւուրքս (Կոստանդին Տուկիծ կայսեր), Գագիկ արքայ որդի Աբասայ կարսացւոյ, այր խմաստասէր և լսեալ ամենայն ընդհանրապէ ի փիլիսոփայական նաց և ի հաեատրականաց արուեստից, որ և ընդ վարդապետս Հոռոմոց Ճեմէր. և յորժամ մտանէր ի Կոստանդնուպոլիս՝ ի յամբիոնն նըստէր ի մէջ սրբոյն Սոփի. և բազմապակ գիտէր գՀին և զնոր կտակարանն Աստուծոյ. և էր յոյժ Հարստարաբան»: ՈՒՌՀԱՑԵՑԻ:

Գէորգ վարդապետ. — «Մեհաւ Պօղոս կաթուղիկոսն (ՃԽ) որ ի Մարաշ, զոր եդեալ էր

Փիլարտոսն. և սուրբ և մեծ գիանակային Հայոց Գէորգ վարդապետն, և Թաղէոսյաւ 'ի կամբջաձորն առ Սամուէլ վարդապետի», կ'ըսէ վարդան: Իսկ Ուռհայեցին Ուռձեցի կը կոչէ զԳէորգ, և հետևեալ խօսքերով զինքը կը դրուատէ. «Յայսմ ամի (Շխ) մեռանէր վարդապետն Հայոց Գէորգ, որ կոչեցաւ Ուռձեցի, որ էր լուսաւորիչ ազգին Հայոց, և աղբիւր մշակնիկաբուխ վտակաց, և լեզու հրեղէն հրոյն ներկեալ: Սա ուսմամբ աստուածային վարդապետութեամբն զարդարեաց զարևելից աշխարհն, զի լցեալ էր աստուածային շնորհաք. և էր հաւասարեալ գիտութեամբն իւրով առաջին աստուածախօս սուրբ Հայրապետացն. ասեմ Գրիգորի աստուածաբանի և Յովհան Ոսկեբերանի, Բարսեղի և այլ նմանեաց սոցա: Սա ոքանչելի վարուք կատարեաց զընթացս իւր, և էր ամաց հարիւրից. և Թաղէոսյաւ 'ի մեծ անապատն 'ի Կամբէնեաձոր, մօտ 'ի գերեզման Սամուէլի վարդապետի և Խաչկայ, որ էր երաժիշտ 'ի վերայ ձայնաւորը եղանակաց. և եղև սուգ... զի զրկեալ եղեն յայնպիսի լուսաւոր վարդապետէ»:

ԳՐԻԳՈՐ ՄՈՆՈՆԻԿ. — «Էին 'ի ժամանակին յայնմիկ վարդապետք երևելիք. Մխիթար՝ որ Գոշն կոչիւր... Գրիգոր՝ զոր Մոնոնիկ կոչէին՝ 'ի կեչառուաց»: ԿԻՐԱԿՈՍ:

Չաքարէ Սպասալարին գումարած ժողովականաց մէկն էր Մոնոնիկ»

ԳՐԻԳՈՐ ՏՈՒՏԷՈՐԴԻ. — «Յաւուրս իշ-

խանուրեթեան Ջաքարիայ և յաւաջնորդութեան Սանահնին Գրիգոր վարդապետին՝ որդւոյն Տուտայ, որ էր այր երևելի »։ ԿԻՐԱԿՈՍ։

ԳՐԻԳՈՐ որդի Վասակայ։ — Գէորգ կաթուղիկոսին օրերը երբ Հայոց նախարարքը բռնազոյն գերութենէն դարձան, անոնց մէջ կը յիշատակէ Ստեփանոս Ուրբերանեան նաև զԳրիգոր որդի Վասակայ։ « Յելանել, կ'ըսէ, նախարարաց Հայոց յերեսաց ամիրային (Ահմատայ որդւոյ Հալեթայ), միայ առնմա միայն Մուշեղ Մոկաց իշխանացն, այր քաջայայտ և բարձրագահ։ և ընդ նմա Գրիգոր՝ որդի Վասակայ, (իշխան Վասպուրականի)։ և սա նմանապէս խմաստութեամբ առլցեալ, հոյակապ և անուանի՛ ի մէջ հայկականացս, և ցանկալի լսողացս և ուրախարար տեսողաց։ Սա առաւելեաց յամենայն հոգածութիւնս, ի գիւտս իմաստութեան ուսումնասիրութեան, և յայլն ամենայնի քան զչարս և զչաւս իւր »։

ԴԱՒԻԹ։ *տես* Եփրեմ։

ԵՂԻԱ։ — « Էին ի ժամանակին յայնմիկ (ԹՐ դար) վարդապետք երևելիք։։։։ Եղիա, ի Հաւուց Թառէ, որ գեղեցիկ կարգաւորեաց վկարգ վանից իւրոց »։ ԿԻՐԱԿՈՍ։

ԵՓՐԵՄ։ — « Յայմ ժամանակիս (Ը դար) էին վարդապետք աշխարհս Հայոց ընտրեալք Եփրեմ, Ընտասան, Խաչիկ և Դաւիթ Հառմայեցին »։ ԿԻՐԱԿՈՍ։

ԹԷՈԴՈՐՈՍ· — Ուռպէլեան կը դրէ Կոմ-
միտաս կաթուղիկոսին համար՝ թէ Սիւնեաց քեր-
թողին Մաթուսաղայի համբաւոյն վրայ զարմա-
ցած «Ցղէ... զիւր ձեռաստն համբակն, զոր
մեծափափաք սիրով ինուցանէր սրբութեամբ,
զԹէոդորոս եղբօրորդի իւր· զոր առեալ նորա մե-
ծաւ զգուշութեամբ ուսոյց և հասոյց ՚ի գլուխ
կատարման գիտութեան, զարդարեալ առաքա-
նաւն և գործնականաւն»: Ու երբ իշխաններն
ու Եզը կաթուղիկոս կը տիպէին զՄաթուսա-
ղա՝ որ Հերակլ կայսեր գումարած Կարնոյ ժո-
ղովոյն ներկայ գտնուի, Մաթուսաղա չուզեց եր-
թալ, ու իր տեղը ղրկեց զԹէոդորոս, վստահա-
նալով իւր աշակերտին գիտութեան և իմաստու-
թեան վրայ, ու այսպէս գրեց· «Ցուղարկեցաւ
մեր աշակերտդ Թէոդորոս· այդ բաւականացայ»:
Ու երբոր Ոշտուենաց իշխանը Թէոդորոս՝ մեղա-
դրելով յանդիմանեց զԵզը կաթուղիկոս, զՄա-
թուսաղա և զՅովհան Մայրագոմեցի հետը չբե-
րելուն համար, Եզը պատասխանեց· «Ամենե-
քին ասացին թէ մինչ Մաթուսաղայի աշակերտս
Թէոդորոս ՚ի հետ է, ոչ է կարիս մեզ այլ ոք·
դա բաւական է»: Եւ յիրաւի, Թէոդորոս իրեն
համբաւոյն և գիտութեանը արժանաւոր լեզուով
մը՝ ջանաց համոզել և անոնց երկիւղը փարատել,
որ կը կասկածէին հաւատոց Ճշմարտութեան մէջ
մտցրիլ՝ Յունաց հետևելնուն համար:

ԹՈՐՈՍ· — «Երկուք ամենք յաշակերտաց
(Մխիթարայ Գոշի) որք իմաստնագոյնք էին
քան զայլս, որք կարող էին և զայլս օգտեցու-

ցանել. առաջնոյն Թորոս անուն, ի սահմանացն Մելիտինոյ Հայոց. հայր նորա հայկական և մայրն ասորի, այր հեզ և խոնարհ ... որ կայ Թաղեաւ ի հռչակաւոր վանքն ի Հաղբատ, ի գլուխ վանացն, ի գերեզմանս եպիսկոպոսացն և վարդապետաց »։ ԿԻՐԱԿՈՍ։

ԹՈՐՈՍ *վարդապետ.* — *կիրակոս՝ հետեւեալ առաջին Թագաւորին առ Մամգոյ խան Թաթարաց ճանապարհորդութիւնը աւանդելու առեն՝ կը յիշատակէ. « Ընդ նմա խակ եկեալ էր և Թորոս քահանայ կուսակրօն, և կարապետ որ գրան երէց էր արքային, հեզ բարուք և գիտնական »։*

ԽԱՉԻԿ. *տես Եփրեմ։*

ՄԱՐՏԻՐՈՍ. — « *Կոչեաց (Մխիթար Գոշ) զբնակիչս ուխտի վանաց նոր Գետակայ, որք ընդ նմա ժուժկալեալ էին յամենայն աշխատութիւնս վանից և եկեղեցւոյ. օրհնեաց զնոսա և զաշակերտս իւրեանց յանուն առաքելոց և զմի ոմն ի նոցանէ ընտրեալ՝ Մարտիրոս անուն, որ աշակերտեալ էր նմա և ընտանի էր, կացոյց զնա առաջնորդ նոցա, մանուկ սիրտք, բայց կատարեալ իմաստութեամբ. պէս քաղցրաձայն յերգս պաշտաման, և առատաձիրս ընծայութեան, և արագ ի գրչութիւն։ Նմա հրամայեաց իշխել նոցա. և գրեաց կտակաւ առ մեծ հազարապետն Իւանէ ... և յանձնեաց ի նա զվանս և զառաջնորդն* »։ ԿԻՐԱԿՈՍ։

ՅԱԿՈԲ վարդապետ. զոր Կոստանդին կաթուղիկոս զղկեց առ Հեթում Թագաւոր, որ դնացեր էր 'ի մեծ Հայս. « Առաքեաց զմեծ վարդապետն Յակոբ, զայր բանաւոր և խմաստուն, զոր առաքեալ էին յառաջագոյն վասն սիրոյ և միաբանութեան առ Թագաւորն Յունաց Յովհաննէս... խմաստախոհ բանիւք ստուգածայնին գրոյ ընդդիմացան հարցաքննութեան Ժողովոյն Յունաց... խոհեմ բանիւք եցոյց գրովք յերկուց միացեալ ըՔրիստոս, ստուգած և մարգ կատարեալ երկոքունքը... զամենայն ստուգած խմաստ բանիւք և գրոյ վկայութեամբ հաստատեալ՝ չինեաց զմիաս նոցա 'ի սէր և 'ի միաբանութիւն ընդ ազգս մեր, և գարձաւ 'ի նոցանէ պատուով »: ԿԻՐԱԿՈՍ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գառնեցի. — « Այր ոմն առաքինի և զարմանալի վարուք, գործով պատուական Առուածոյ և լծաբարձ 'ի մանկութենէ, արժանացեալ քահանայական պատուոյ, կոչեցեալ, Յովհաննէս անուն 'ի գիւղաքաղաքէն Գառնոյ, ուր զարմանալի տարեալքն է Տրդատայ, 'ի տեղի ուխտին Այրիվանից: Սա 'ի մանկացն սիոց արհամարհեաց զամենայն ինչ զկնեցաղայս, լքեալ զազգս և զտուն, յանապատ աեղիս բնակեր. սիրեր առանձին լինել և անդադար պէս խոսել ընդ Առուածոյ. տուեալ զինքն ազգի ազգի ճգնութեան պահոց և ապրեցից »: Առնէր են Կիրակոսի խոսքերը, որ նոյն վարդապետին աստուածահաճոյ քաղաքավարութեան նկարագիրն ընելեն եսքը՝ կը յաւելու. Ժողովրդեան

ձեռքը կու տար, կ'ըսէ, «զնորհրդական բանս ալօթիկ», որմէնցմով անշուշտ իր անուամբը յիշատակուած պիտի ըլլար եւ սիրատարփ ալօթքները կ'ուզէ ակնարկել։ — Գառնեցին երախտաւոր է նաեւ Սալմոսաց ընտիր օրինակ մը հրատարակելուն համար։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Տաւուշեցի։ — «Եւ հանդիպեցաւ (Մխիթար Գոշ) Յովհաննիսի վարդապետի Տաւուշեցի անուանեալ, որ 'ի ժամանակն յայնմիկ երեւելի էր գիտութեամբ. զառաջինն յաշխարհականաց կեանս կացեալ սակաւ ինչ, և մեռեալ ամուսնոյն, կրօնաւորութեան հեռեւեալ, և հասու եղեալ՝ աստուածայնոց գրոց պարապեալ։ . . . Սա բազում իրս կարգաւորեաց կարգաց և կրօնից քրիստոնէից»։ ԿԻՐԱՒՈՍ։

ՅՈՎՍԷՓ։ — Կիրակոս՝ Բարսղի հայրապետին յաջորդ Գրիգորիս կաթուղիկոսին օրով ծագած վարդապետաց մէջ կը յիշատակէ նաեւ Յովսէփ անունով եպիսկոպոս մը, զոր կը կոչէ «այր երեւելի 'ի կողմն Ասիոքու», ուր բազմաթիւ ազգայինք ցրուած էին այն ժամանակները։

ՆԵՐՍԷՍ ԻՃԽԱՆ։ — Մեսրոպանեւրորդ գրուն կիսուն ծագած էր «Տէր Ներսէս՝ 'ի Բագրեւանդ գաւառէ, իշխան Հայոց, և սա էր այր կորովի և յոյժ հանճարեղ, բանիբուն խմաստասէր, ուսեալ 'ի մեծն Աբգինա։ Հասեալ ամենայն շնորհաց աստուածեղէն կատարանացն, և կա-

բոլ էր կալ ՚ի գիմի ամենայն իմաստնոցն Հռոմոյ, հզօր գիտութեամբ և զարմանալի առնութեամբ, նմանեալ Գագկայ և այլոց իմաստասիրաց Հայոց »: ՈՒՌՀԱՑԵՑԻ:

ՍԱՄՈՒԷԼ. — « Յայնժամ գրեաց (Վասիլ կայսր) առ Յովհաննէս արքայն Հայոց, զի առաքեսցէ զնոսա (զվարդապետս Հայոց) առ ինքն ՚ի Կոստանդնուպոլիս, զի ՚ի նոցանէ գիտասցէ զճշմարիտ պատճառն և զուղղորդ զատիկն. իսկ նոքա ոչ առին յանձն գնալ, այլ Թղթովք գեղեցկաշար բանիւք հաստացուցին զԹագաւորն ամենայն իրբն քննութեամբ... մեծաւ խնդրուածովք ետ բերել (կայսրն Վասիլ) առ ինքն զՀայոց վարդապետան զՍամուէլ, զայր կորովի և յաղթող, և կացուցանէր զնա յաւետն խօսել ընդ վարդապետացն Յունաց... և հաճոյ լինէր Թագաւորին ամենայն բանքն նորա... և ածէր զՎուսի զվարդապետ Եբրայեցւոց... այր Հաւատարեան և հզօր, և սկսանէր խօսել զարուեստ տոմարին... և գովէր զբանքն Սամուէլի Հայոց վարդապետի. իսկ Թագաւորն... զվարդապետան Հայոց յոչ ղարկեալ մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց »: ՈՒՌՀԱՑԵՑԻ:

ՍՈՂՈՄՈՆ. — « Ցետ վախճանելոյն Յովաբայ Հայրապետին՝ զՍողոմոն ածեալ կացուցանեն յաթոռ սրբութեանն. սա.... բազում աւաքենաչան երկոց զանձն առեալ ՚ի մեծ ուխտն Մաքենոցաց, այլ և վարժեալ ևս էր ՚ի փիլոսոփայական արուեստս, և առաւել ևս հմուտ

լեալ փոալտուԹեան կրԹանաց » : ՅՈՎՀԱՆ ԿԱ-ԹՈՒՂԻԿՈՍ :

ՍՏԵՓԱՆՈՍ · — « *Յայսմ ժամանակի (Թը-ւին ՄԻԲ) էր Սաեփանոս գրան երէց, որ բա-նէբուն Ճանաչէր · հաս ամենայն խմաստասէրա-կան և գրամարտիկոս արուեստից՝ հանդերձ հո-գևորական առաքինուԹեամբ* » : ԿԻՐԱԿՈՍ :

Նոյն խօսքերով կը գրուատէ զնա և Սամուէլ, որոշելով 'ի համանուն Սիւնեաց եպիսկոպոսէն :

ՏՈՒՐՔԻԿ · — « *Էին 'ի ժամանակին յայնմիկ (ՃԲ գար) վարդապետք երևելիք · · · Տուրքիկ 'ի Թեզենեաց, որ բարիոք կարգաւորեաց զվանքն* » : ԿԻՐԱԿՈՍ :

ՅԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

Ա. բգար Թադաւոր · 74
Աբրահամ կամ Աբէլ Թարգմանիչ · (Դար Ե) 193
Աբրահամ կաթուղիկոս Ա, Աղբաթանեցի · (Դար Զ) 305
Աբրահամ Մամիկոնէից էպ · (Դար Ե) 295
Ագաթանգեղոս · (Դար Դ) 99
Աթանաս · 634
Ազան Արծրունի · (Դար Ե) 191, 281
Այանիա Թարգմանիչ · (Դար Ե) 193
Այանիա Կարեկացի · (Դար Ժ) 430
Այանիա Շիրակացի · (Դար Է) 548
Այանիա Սանահնեցի · (Դար ԺԱ) 470
Այսաստաս · 634
Այգրէաս Թարգմանիչ · (Դար Ե) 193
Ալիկուբէչ կամ Սահակ Մռուտ · (Դար Թ) 394
Առաքել Սեբաստաց Տարօնեցի · (Դար Ժ և ԺԱ) 449
Առոմ Այձևացի · (Դար Ժ) 453
Արիստակէս Գրիչ · (Դար ԺԳ) 613
Արիստակէս Լաստիվերցի · (Դար ԺԱ) 474
Արիստակէս վարդապետ · (Դար ԺԲ) 573
Արձան Արծրունի Թարգմանիչ · (Դար Ե) 191
Արտաւազդ Ա · 73
Արտաւազդ Մազազունեաց տէր · (Դար Ժ) 453
Արտէմէս · (Դար Դ) 81

Բարդածան Եգեսացի. 79
Բարսեղ կաթուղիկոս. 627
Բիւզանդ Փաստոս. (Դար Դ) 132
Գագիկ Ա Թագաւոր. 627
Գագիկ, Թագաւոր Կարուց. 634
Գէորգ Սկեւռացի. (Դար ԺԳ) 576
Գէորգ վարդապետ. (Դար ԺԱ) 473
Գէորգ վարդապետ Մեղրիկ. (Դար ԺԱ) 485
Գէորգ վարդապետ Ոստձեցի. 634
Գիւտ կաթուղիկոս. (Դար Ե) 192, 214
Գնեհ եպ. Դերջանայ. (Դար Ե) 176, 191
Գուրգէն Արծրունի. (Դար Թ) 429
Գրիգոր Արշարունի. (Դար Է) 363
Գրիգոր Երէց՝ չարայարող պատմութեան Ուռհայեցւոյն. (Դար ԺԲ) 546
Գրիգոր Թոքակերի որդի. (Դար ԺԲ) 554
Գրիգոր Խնամատաէր Յեսուանց. (Դար ԺԲ) 535
Գրիգոր Լուսաւորիչ. (Դար Դ) 94
Գրիգոր Մագիստրոս. (Դար ԺԱ) 456
Գրիգոր Մամիկոնի. 635
Գրիգոր Նարեկացի. (Դար Ժ) 434
Գրիգոր որդի Վասակայ. 636
Գրիգոր Սկեւռացի. (Դար ԺԳ) 554
Գրիգոր–Վահրամ Վկայասէր. (Դար ԺԱ) 478
Գրիգոր Տղայ. (Դար ԺԲ) 553
Գրիգոր Տուտէորդի. (Դար ԺԲ) 635
Գրիգորաւուր վարդապետ. (Դար Է) 314, 315
Գրիգորիս կաթուղիկոս Պահլաւունի. (Դար ԺԲ) 497
Դանիէլ Թարգմանիչ. (Դար Ե) 191
Դաւիթ Ալաւկայ որդի. (Դար ԺԲ) 553
Դաւիթ Անյաղթ. (Դար Ե) 192, 206
Դաւիթ Բագրեւանդացի. (Դար Է) 346
Դաւիթ Մաշկոտն. (Դար Ժ) 448
Դաւիթ Մոկաց եպիսկոպոս. (Դար Ժ) 448

Դաւիթ վանահայր · (Դար Ժ) 448
Դաւիթ վանահայր յիշատակագիր · (Դար Թ) 428
Դաւիթ վարդապետ Հռոմայեցի · 636
Դաւիթ վարդապետ մեհենիչ Եսայեայ · (Դար ԺԲ) 575
Դաւիթ Քոթայրեցի · (Դար ԺԲ) 572
Եղնիկ Երէց · (Դար Է) 311
Եղնիկ Կողբացի · (Դար Ե) 188, 195
Եղբ կաթուղիկոս · (Դար Է) 311
Եղբաս Անգեղացի Թարգմանիչ · (Դար Ե) 193
Եղիա վարդապետ Հաւուցթառեցի · 636
Եղիշէ վարդապետ · (Դար Ե) 192· 225
Ենովք Թարգմանիչ · (Դար Ե) 191
Եսայի Նչեցի · 618
Երեմիա Անձրևիկ · (Դար ԺԲ) 495
Երեմիա Թարգմանիչ · (Դար Ե) 193
Եփրեմ վարդապետ · 636
Զաքարիա կաթուղիկոս · (Դար Թ) 392
Չէնոբ Գլակ · (Դար Դ) 124
Թադիկ Թարգմանիչ · (Դար Ե) 191
Թաղէոս Թարգմանիչ · (Դար Ե) 193
Թէոդորոս աշակերտ Մաթուսաղայի · (Դար Է) 637
Թէոդորոս վարդապետ Ալախօսիկ · (Դար ԺԱ) 485
Թէոդորոս քերթող՝ պատմիչ Արծրունեաց · (Դար Ե) 415
Թէոդորոս Քռթենաւոր · (Դար Է) 339
Թոմմա Արծրունի · (Դար Թ) 411
Թոմմա վարդապետ · (Դար Ժ) 455
Թորոս աշակերտ Մխ · Գոշի · 637
Թորոս, պարոն Կիլիկիոյ · 629
Թորոս վարդապետ · 638
Իգնատիոս մեհենիչ · (Դար ԺԲ) 520
Իսայեաւոր Տարօնացի · (Դար ԺԲ) 569

Խաչիկ կամ Խաչատուր Թարգմանիչ. (Դար Ե) 193
Խաչիկ կաթուղիկոս. (Դար ժ) 448
Խաչիկ վարդապետ. 636
Խոռհրուա. 80
Խոսրով Անձևացի. (Դար ժ) 451
Կիրակոս Ակռեցի. (Դար ԺԳ) 604
Կիրակոս պատմիչ Գանձակեցի. (Դար ԺԳ) 597
Կիրակոս վարդապետ. (Դար ԺԱ) 484
Կիւրիոն կաթուղիկոս Վրաց. (Դար Չ) 305
Կոմիտաս կաթուղիկոս. (Դար Չ) 308
Կոստանդին Ա կաթուղիկոս. (Դար ԺԳ) 579
Կորիւն. (Դար Ե) 188, 201
Ղազար Փարպեցի. (Դար Ե) 192, 280
Ղազարիկ կամ Ղազրիկ Թարգմանիչ. (Դար Ե) 192
Ղերուբնա. 82
Ղեւոնդ Երէց պատմիչ. (Դար Ը) 389
Ղեւոնդ Վանանդեցի՝ Թարգմանիչ. (Դար Ե) 186
Մանթուսաղա եպիսկոպոս Սիւնեաց. (Դար Է) 512
Մաժան. 77
Մամբրէ Վերծանող. (Դար Ե) 192, 277
Մաշտոց կաթուղիկոս. (Դար Թ) 398
Մաամէդոս Թարգմանիչ վարուց Յովհ. Ոսկեբ. Դար ԺԱ) 483
Մաամէդոս Ռշտունեցի. (Դար ԺԲ) 556
Մարիքասս Կասենա. 63
Մարտիրոս առաջնորդ Գեհակայ. 638
Մեսրովպ Երէց. (Դար ժ) 629
Մեսրովպ վարդապետ՝ մեծն. (Դար Ե) 172
Մխիթար Անեցի. (Դար ԺԳ) 577
Մխիթար Գոշ. (Դար ԺԲ) 559
Մխիթար Հերացի. (Դար ԺԲ) 550
Մխիթար Սասունցի. 618
Մխիթար Սկևռացի. (Դար ԺԳ) 605

Մովսէս Խորենացի. (Դար Ե) 192, 243
Մովսէս կթ. Եղիվարդեցի. (Դար Չ) 302
Մովսէս Կազանկատուացի. (Դար Ի) 329
Մովսէս Սիւնեցի. (Դար Ի) 362
Մովսէս Տարօնացի. (Դար ժ) 448
Մուշեղ Խագբատունի. (Դար ժ) 453
Մուշէ Տարօնեցի. (Դար Ե) 188
Յակոբ գիանական. 629
Յակոբ վարդապետ. 639
Յակոբ Քարափնեցի կամ Սանահնեցի. (Դար ԺԱ) 629
Յովհաննէս Ընձէիցեցի կամ Ոսկիակէր. (Դար ԺԳ) 618
Յովհաննէս Իժիչկ. (Դար Թ) 428
Յովհաննէս Գառնեցի. (Դար ԺԳ) 639
Յովհաննէս Եկեղեցացի՝ Թարգմանիչ. (Դար Ե) 189
Յովհաննէս Թարգմանիչ. (Դար Ե) 193
Յովհաննէս խմաստասէր Օձնեցի. (Դար Ը) 368
Յովհաննէս Խոսրովանող՝ Թարգմանիչ. (Դար Ե) 186
Յովհաննէս կաթուղիկոս Պասմիչ. (Դար Թ) 402
Յովհաննէս Կոգեան վարդապետ. (Դար ԺԱ) 454
Յովհաննէս Մամիկոնեան. (Դար Ի) 316
Յովհաննէս Մայրագոմեցի. (Դար Ի) 315
Յովհաննէս Մանդակունի. (Դար Ե) 192, 218
Յովհաննէս Սարկաւագ վարդապետ. (Դար ԺԲ) 488
Յովհաննէս վարդապետ Տաւուշեցի. (Դար ԺԲ) 640
Յովհաննէս Թարգմանիչ. (Դար Ե) 177, 193
Յովսէփ Եպիսկոպոս. 640
Յովսէփ Թարգմանիչ 'ի Վայոց Ձորոյ. (Դար Ե) 186
Յովսէփ Պաղնացի. (Դար Ե) 189

Նահա ասորի · (Դար Թ) 395
Ներսէս Իշխան · (Դար ԺԱ) 640
Ներսէս Լամբրոնացի · (Դար ԺԲ) 525
Ներսէս Շնորհալի · (Դար ԺԲ) 500
Ներսէս Պարթև · (Դար Դ) 129
Ներսէս Տարօնեցի · (Դար ԺԳ) 618
Շապուհ Բագրատունի · (Դար Թ) 396
Ոսկիանէս · (Դար Ժ) 307, 630
Ուղիւզ կամ Ուլնպոս քուրմ · 78
Պետրոս Գետադարձ · (Դար ԺԱ) 470
Պետրոս վարդապետ մեկնիչ գրոց · (Դար Ժ) 448
Պետրոս Քէրթող եպիսկոպոս Սիւնեաց · (Դար Ը) 297
Պրոկղեսիոս կամ Պարոյր · (Դար Դ) 130
Պօղոս Տարօնեցի · (Դար ԺԱ) 486
Սահակ Թարգմանիչ · (Դար Ե) 193
Սահակ Գ. կաթուղիկոս · (Դար Է) 566
Սահակ Մ.ռուս · ա · Ակիկոբեչ ·
Սահակ Պարթև · (Դար Ե) 165
Սահակադուխտ · (Դար Ը) 631
Սամուէլ Երէց · (Դար ԺԲ) 547
Սամուէլ Կամրջաձորեցի · (Դար Ժ) 631
Սամուէլ Սկեւռացի (Դար ԺԲ) 572
Սամուէլ վանահայր Խնտաի · (Դար ԺԱ) 473
Սամուէլ վարդապետ · 641
Սարգիս Կոնդ վարդապետ · (Դար ԺԲ) 493
Սարգիս Շնորհալի · (Դար ԺԲ) 522
Սարգիս Սեւանեցի · (Դար ԺԱ) 472
Սարգիս վարդապետ · (Դար Ժ) 448
Սեբէոս եպիսկոպոս · (Դար Է) 321
Սիսիանոս վարդապետ · (Դար ԺԱ) 486
Սմբատ Պատմիչ · (Դար ԺԳ) 619
Տոդոմն կաթուղիկոս · (Դար Ը) 641
Տեփանոս դրան երէց · (Դար Ը) 642
Տեփանոս Մանուկ · (Դար ԺԲ) 495

Սահմանաց յիշատակագիրը · (Դար Թ) 429
Սահմանաց Սիւնեցի · (Դար Ը) 381
Սահմանաց վարդապետ · (Դար Ժ) 448
Սահմանաց Տիրացու · (Դար ԺԲ) 575
Վահրամ պատմագիր · 632
Վահրամ վարդապետ · (Դար ԺԴ) 632
Վաղարշակ · 73
Վանական վարդապետ · (Դար ԺԳ) 580
Վարդան վարդապետ · (Դար ԺԳ) 587
Վարխամ կամ Վարդան վարդապետ · (Դար ԺԴ) 602
Վարոս · (Դար Ե) 195
Վրոյր · 76
Ցաճատ վարդապետ · (Դար Ժ) 453
Տիգրան Պահլաւունի · (Դար ԺԱ) 473
Տիրայր Խորճենացի · (Դար Ե) 188
Տուրքիկ վարդապետ · (Դար ԺԲ) 642
Փիլոն Տիրակացի · (Դար Է) 365

